





ՊԼՏՄՈՒԹԵԱՆՑ

ՀԼՄԸՌՈՏՈՒԹԻՒՆ

ԴՊՐԱՏԱՆ ՏՂՈՑ

ՀԱՄԱՐ



Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր

ԿՏԱԿԱՐԱՆ

4-35

1209

1418-ԱԿ



54

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԵԿԸՐԸՆԻ

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ

Հ. ԵՓՐԵՄ ԱՅ ՎԱՐԳԵՊԵՏԻ

Ս Ե Թ

Printed in Turkey

ՄԻՒԹԱՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



2004

9200-57

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

1844

22

1851


22

52-003E

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

ԱՆՉԱՄԲ փորձ եղած ու աչքով
տեսած կրկնայեմ, որ մեր ազգին մէջ վար-
պեաները սորվեցընելու՝ և ազաբը սորվելու
բաւական ջանք ու օխորժակ ունին. բայց
քիչ աշխատանքով և քիչ ժամանակ կոր-
սուցընելով սորվելու յարմար ամէն ուսման
գասասեօրները չունին: Եւ գիտնալով որ
ուսմանց մէջ հարկաւոր ազոց սորվելու մէկ
բանն ալ պատմութիւնն է, անոր համար
հիմա մեզի ալ յորդոր մը եկաւ աշխարհքիս
պատմութիւնները համառօտ ոճով շինե-
լու հարցմամբ պատասխանով որ օրինակ ըլ-
լայ ազոց՝ թէ ինչպէս յարմար կերպով պիտի
հարցընեն ու պատասխանեն սորված պատ-
մութիւննին: Եւ որովհետեւ մեր հաւան-
քին հիմը, և պատմութիւններուն մէջ ալ
աւելի հարկաւոր գիտնալու՝ մէջէն շատ

խրատ ասնելու պատմութիւնն Աստուածաշունչն է, ի՞նչ հին ու նոր կրօնականներ, ասոր համար առաջ ասոր ձեռք զարկինք. մէկ քանի հարկաւոր գիտելիքներ ալ ամէն մէկ մասին ետեւն աւելցուցինք, ու ետքը Նրուսաղէմին կործանմանը վրայ քիչ մը բան խօսեցանք. անկէ վերջն ալ ամէն մէկ դասին համար մէյմէկ խրատական իմաստներ գրինք. և ետքը գրքին ցանկը՝ եղած դիպուածներուն ժամանակովը:



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԵԿԸՐԸՆԻՆ

ՎՐԱՅ



Հ. Հին ու նոր կտակարանն ըսելով ինչ կիսմանս .

Պ. Կտակարանն՝ կտակի կամ դաշինքի գիրք ըսել է : Հին կրտսի ան կտակարանը որ կրիստի Աստուծոյ Մովսէս մարգարէին ձեռքով տուած Հին օրէնքներուն վրայ : Իսկ Նոր Կտակարանն կրտսի Քրիստոսի ձեռքովը մեզի տրուած օրէնքներուն գիրքը :

Հ. Կտակարաններուն հեղինակը ո՞վ է .

Պ. Աստուած է , որ ասն տուաւ Մովսէս մարգարէին ու իր ուրիշ ծառաներուն որ գրեցին . անոր համար Աստուծոյ ձեռքովը տուաւ կրտսի , որ ըսել է : Հոգւոյն օրոյ ազգելովը գրուած : Մարտի Գիրքն ալ կրտսի՝ որովհետեւ Աստուծոյ գիրքն է , ու մէջի ամէն բանը իրաւ ու աղէկ է , ամէն մարդու սուրբ ըլլալու ալ պատճառ :

Տ . Աստուածաշունչը կարգալու ասեն ինչ զգուշութիւն պէտք է ընել .

Պ . Որովհետև ամէն մէջի պատմութիւնները Աստուծոյ ազդելովը առանց սուտի մը գրած են , մէջի խրատներն ալ բոլոր Աստուծոյ տուած խրատներն են , անոր համար երկիւղածութիւն ու մեծ պատուով պէտք է կարգալ : Ուր որ մէկուն խելքը չհասնիր կամ մէջէն սխալ բան կիսանայ , պէտք է գիտցողի մը հարցընէ ու սուրբ հարց և եկեղեցւոյ ընդունած մեկնիչներուն մէջը նայի , և չարութեամբ աղէկը գէշի չմեկնէ : Ինչպէս որ սուրբ Օգոստինոսն ալ կրսէ . « Թէ որ մէջէն բան մը քու խելքէդ վեր երևնայ , պէտք չէ որ ըսես թէ գիրքը չինողը սխալ բան կրսէ , հապա գիտցիր որ կամ կարգացած օրինակդ սխալ է , կամ սխալ թարգմանուեր է , կամ թէ դու չես հասկընար » :

Տ . Հին կտակարանը քանի՞ գիրք կըբաժնուի .

Պ . Քառսունու հինգ . Մովսէս մարգարէին գրած հինգ գրքերը , այսինքն Ծնունդք , Աւք , Ղևտականք , Թիւք , Երկրորդ օրէնք , Յեսու օրդի՛նաւեայ , Դատաւօրք , Հռութ , չորս գիրք Թագաւորութեանց , երկու գիրք Մնացորդաց , երկրորդ Եզր , Նէեմի , Եսթեր , Յուդիթ , Տորիթ , երկու Մակարայեցիք , Սաղմոս Դաւթի , Աւակք Սողմոնի , Ժողովող , Երգ երգոց , Իմաստութիւն , Յոր , հինգ մեծ մարգարէները՝ այսինքն Եսայի , Երեմիա , Բարուք , Դանիէլ , Եղեկիէլ . ասսուերկու փոքր մարգարէները՝

այսինքն Ովսէէ, Ամովս, Միքիա, Յովէէ,
Եբդիու, Յովնան, Կաւուժ, Ամբակուժ,
Սովոնիա, Անդէոս, Չաքարիա, Մաղաքիա,
և Սիրաքայ գիրքը ¹ :

Հ. Կոր կտակարանը քանի՞ գիրք կը բաժ-
նուի .

Պ. Քսանրեօթը. չորս աւետարանիչք,
այսինքն Մատթէոս, Մարկոս, Ղուկաս,
Յովհաննէս. Գործք առաքելոց, Կաթողի-
կեայց եօթը թուղթերը, այսինքն Յակովբու-
մէկ, Պետրոս առաքելոյն երկուք, Յովհան-
նէս աւետարանչինը իրէք, Յուդային մէկ .
Պօղոս առաքելոյն տասնըչորս թուղթերը,
որ դրեց Հռոմայեցւոց, երկու թուղթ Կորնթ-
թացւոց, Գաղատացւոց, Եփեսացւոց, Փիլի-
պեցւոց, Կողոսացւոց, երկու թուղթ Թե-
սաղոնիկեցւոց, Եբրայեցւոց, երկու թուղթ
Տիմոթէոսի, Տիտոսի, Փիլիմոնի, և Յայա-
նութեան գիրքն որ Յովհաննէս աւետարա-
նիչը գրեց :

Հ. Հին կտակարանը ի՞նչ լեզուով գը-
րուեցաւ .

Պ. Հրէից լեզուով. միայն Գանիէլի,
Տոբիթայ և Յուդիթայ գրքերուն համար
կըսեն թէ քաղգէարէն գրուած են, որ
հրէից լեզուէն քիչ մը օտարեր է. իսկ եր-
կրորդ Մակաբայեցին ու Սողոմոնի Իմաս-
տութեան գիրքը՝ սուրբն Հերոնիմոս կըսէ
թէ յունարէն գրուեցան :

¹ Աստուծոյ շաքիտն նաև առաջին Եւր, եր-
րորդ Մովսէսայեցիք :

Հ . Կոր կաակարանը ինչ լեզուով գրուեցաւ .

Պ . Հոռմերէն . Տիայն Մատթէոսի աւետարանը ու Պօղոս առաքելոյն Եբրայեցոց գրած թուղթը շատերը կրկարծեն որ Հրէից լեզուով գրուած ըլլան :

Հ . Հին կաակարանին հին ու երևելի թարգմանութիւնները որոնք են .

Պ . Երևելի է հայերէն թարգմանութիւնը, յունարէնը, լատիներէնը, քաղղէարէնը ասորերէնը, արաբացին : Յունարէն քանի մը անգամ թարգմանած է, որոնցմէ խիստ ազեկը Եօնանից ըսուած թարգմանութիւնն է, որ Պաղովէոս Փիլոսոփոս անունով Եգիպտոսի թագաւորին հրամանովը եօթանասուներկու հրեայ Ռաբբիներ հրաշարի կեպով թարգմանեցին, Քրիստոսէ 273 տարի առաջ :

Հ . Հայերէն մեր Աստուածաշունչը ո՞վ թարգմանեց, և ո՞ր լեզուէն .

Պ . Հինգերորդ դարուն մէջ, Քրիստոսի 410 թուականին, մեր սուրբ թարգմանիչները Սահակ ու Մեսրոպ իրենց աշխատներովը թարգմանեցին հին կաակարանը Եօթանասնից թարգմանութենէն, ու նոր կրկաակարանն ալ նոյնպէս յոյն բնագրէն . աչքէ անցրնելով նաև Հրէից, Ասորոց ու Արաբացոց թարգմանութիւնները : Աս մեր թարգմանութեանը նման ազեկ թարգմանութիւն մէկ լեզուի մը մէջ չկայ . ինչպէս որ կրօնային օտարազգիք ալ, որոնք որ հայերէն սորվեր ու մեր Աստուածաշունչը կար

դայեր են : Այբրոզ ըսուած երևելի հողան-
աայի հեղինակը համարձակեցաւ ըսելու՝ որ
հայերէն թարգմանութիւնը թագուէ է
ամէն ուրիշ ազգ՝ բուն թարգմանութիւնը :

Հ . Ատփներէն Աստուածաշունչը ո՞վ
թարգմանեց .

Պ . Ատփնայիք թէ և առաջուց Աթա-
նասնից թարգմանութենէն թարգմանածը
ունեին , բայց սուրբն Հերոնիմոս ուղեւով
որ աւելի օգեկ ըլլայ՝ նորէն թարգմանեց
հրէից լեզուէն . որ ԱՅ՝ՎՊՊ ըսուեցաւ , և
եկեղեցւոյ մէջ կը գործածեն . որուն մէջ
չստակեղ Աթանասնից թարգմանութենէն
կըտարբերի :

Հ . Աստուածաշունչի պատմութիւնը քա-
նի գար կըրթուի .

Պ . Ա . Ե . Թ . Աշխարհքիս ստեղծմանէ ին-
չուան ջրհեղեղ 1656 տարի :

Բ . Ջրհեղեղէն ինչուան Աբրահամու կո-
չումը 2114 տարին :

Գ . Անկէ ինչուան Իսրայէլացւոց Ադիպ-
սէ ելելը 2544 տարին :

Դ . Անկէ ինչուան Հրէից թագաւորութե-
սկիզբը 2962 տարին :

Ե . Անկէ ինչուան Հրէից Բաբելոն գերի
երթալը 3446 տարին :

Զ . Անկէ ինչուան Յիսուսի ծնունդը աշ-
խարհքիս 4053 տարին :

Հին կառկարանին պատմութիւնը մենք
ալ առ վերի ըսած վեց գարերուն վրայ վեց
մաս կըրթանեմք :

Առջի մասը՝ նահապետաց ատենը, ինչուան Ջրհեղեղ, 1656 տարուան պատմութիւն :

Երկրորդ մասը՝ Ջրհեղեղէն ետքը եղած նահապետաց ատենը, ինչուան Արրահամու կոչումը, 458 տարուան պատմութիւն :

Երրորդը՝ անկէ ետքը եղած նահապետաց ատենը, ինչուան Հրէից Եգիպտոսէ ելլելը, 430 տարուան պատմութիւն :

Չորրորդը՝ Մովսէս մարգարէէն սկսած Դատաւորաց ատենը, ինչուան Սաւուզ թագաւորը, 418 տարի :

Հինգերորդը՝ Սաւուզէն ինչուան Բարիւնի դերութիւնը, 484 տարուան պատմութիւն :

Վեցերորդը՝ Իշխանութեան կամ քահանայութեան ատենը, որ կըսկըսի Բարիւնի դերութենէն, ինչուան Յիսուսի ծնունդը՝ 607 տարուան պատմութիւն : Բոլորը կըլլայ 4053 տարի աշխարհքիս ստեղծմանէն ՚ի վեր :

Աոր կաահարանին պատմութիւնն ալ չորս մաս կըրաժնենք .

ա. Սուրբ Աստուածածնայ աւետմանէն, ինչուան Յիսուսի մկրտութիւնը :

բ. Յիսուսի մկրտութենէն, ինչուան Յիսուսի փառաւորսպէս Երուսաղէմ մանելը :

գ. Յիսուսի Երուսաղէմ մանելէն ինչուան Հոգւոյն սրբոյ գալուստը :

դ. Հոգւոյն սրբոյ գալուստենէն ինչուան Պետրոս Պօղոսի գլխատումը : Աս նոր կաահարանին պատմութիւնը 74 տարուան միջոց է :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆԻՆ ԿՏԸ ԿԸՐԸՆԻՆ



ՄԱՍՆ Ա.

ՆԱՆԱՊԵՏԱՅ ԴԱՐԸ,

ԶՐՀԵՂԵՂԵՆ ԸՌԱԶ.



1.

Աւարտութիւն տեղծութիւն:

Հ. Լ. Ը. Խ. Ա. Բ. Տ. Վ. Ս. Ո՛վ ստեղծեց, ու ինչ կերպով.

Պ. Աստուած վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու երկիրս իր ամէն մէջի բաներովը: Թէ և կրնար իր ամենահարողու թեամբը մէկ վայրկենի մէջ ստեղծել ամէնը մէկէն, բայց ուզելով խնայրնել որ ինքն ամէն բան խորհրդով կրնէ ու կարգով, անոր համար ամէն օր մէյմէկ բան ըրաւ: Ուստի նախ և առաջ ստեղծեց երկինքն ու երկիրս և հրեշտակները. ետքը լոյսն ստեղծեց, ու

դիշերը ցորեկն որոշեց . և ան Լիառ աշխարհքիս ստեղծմանն առաջին օրը :

Երկրորդ օրը հասաառութիւնն ըրաւ , ու երկընքի ջրերն երկրիս ջրերէն զառեց :

Երրորդ օրը ծովը ցամաքէն բաժնեց , ու հրաման տուաւ որ դեախնը խոտեր , ծաղկընէր ու ամէն կերպ պաղոյ ծառեր բուռչընէ :

Չորրորդ օրն արևը լուսինն ու աստղերն ստեղծեց , ու անոնցմով ժամանակ , օր , տարի որոշեց :

Հինգերորդ օրը՝ ձկներն ու թռչուններն ըրաւ , ու օրհնեց զանոնք որ ածին ու շառնան , օգոյն և ջրին մէջ սփռուին :

Վեցերորդ օրն ամէն ցեղ չորքոտանիներ ու անասուններ , ամէն բանէն ետքն ալ մարդն ստեղծեց իրեն նման ու անունը Եգամ դրաւ :

Հ . Աստուած Եգամն ինչ կերպով ըստեղծեց .

Պ . Աստուած միայն Եշե՛՛ ըսելով ամէն բան ստեղծեց . երկինքը , երկիրս , ծովը , աստղերը , արևը , տեսակ տեսակ կենդանիները , թռչունները , ձուկերը , և ամէն տեսակ ծառերը ծաղկընէրը : Բայց երբոր կարգը մարդուն եկաւ՝ բոլորովին ստեղծելու կերպը փոխեց . սկսաւ խորհուրդ ընել . կրնէ « Բստեղծենք մարդը՝ մեր կերպարանքով և մեզի նման » : Ասով խմայընէլ ուղեց Երրորդութի խորհուրդը : Ասանկ մտաւոր ստեղծուած ի մը մարմինն ալ արժան սեպելով որ չընէ մինակ խօսքով , հող առաւ ու մարդ շի

նեց, և աւելի զարմանալու կերպով ալ հոգին ստեղծեց: Ուրիշ բաներու համար՝ առ դիէն ան դիէն ելին կըսէր. բայց մարդուն հոգին ինքն իրմէ փչեց: Այսչափ տարբերութիւնները անոր համար ըրաւ որ իմացընէ թէ ուրիշ արարածները ամէնը մէկէն առած՝ մարդէն շատ վար և տարբեր բաներ են:

Հ. Ամէն աշխարհքիս բաները ստեղծելէն ետքը Աստուած ինչ ըրաւ.

Պ. Եօթներորդ օրը գաղթեցաւ իր ամէն գործքերէն ու օրհնեց ան օրը, որն որ ետքը պատուիրեց որ իրեն նաւիրենք՝ Եօթն անուանելով, որ հանգիստ ըսել է. անոր աւեր ետքը Վերակի օրը գրուեցաւ ի յիշատակ Վրխատոսի յարութեանը:

2.

Ադամայ մեղան ու պարտախիւզ:

Հ. Աստուած իր ստեղծած բաներուն ինչ կարգ ու կանոն գրաւ.

Պ. Անբան արարածներուն հրաման ալու որ իրեն գրած կարգովը փոփոխուելով ամէնքն ալ իրենց տեսակը պահեն. իսկ մարդը գրաւ մէկ աղուոր ու զուարճալի պարտեղի մէջ մէջ որ Գրեթէ կըսուի: Անոր մէջը ամէն տեսակ պաղատու ծառերէն զատ երկու ծառ ալ կային. մէկուն անունը Ծառ կենաց. մէկայլինը՝ Ծառ փորձելու էան Բարոյ և շարի. ուստի Ադամայ ալ ապրասպրեց որ ակրէ աշխարհքիս ամէն բաներուն, և ուղա-

ծին պէս կառավարէ . միայն արգելեց իրեն որ գիտութեան ծառին ստղէն չուակ , թէ չէ՝ գիտնայ որ կերածին պէս կըմեանի :

Հ . Ինչո՞ւ արգելեց Աստուած Ազամայ որ գիտութեան ծառին ստղէն չուակ .

Պ . Որովհետեւ Աստուած զմարդը իրեն նըման ստեղծեց բանական և ինքնիշխան , ու ամէն բան անոր ձեռքը թողուց որ վայելէ և ուրախանայ , անոր համար ուղեց որ մէկ սղախի բանի մը մէջ հնազանդելով Աստուծոյ , ու իրեն կամքին դէմ ընելով իմացընէ որ թէպէտ ազատ ստեղծուած է , բայց հաւատարիմ է իր ստեղծողին , ու կըճանչնայ որ ան ամէն բարիքը Աստուծմէ առեր է :

Հ . Ազամ հնազանդեցա՞ւ Աստուծոյ հըրամանին .

Պ . Քանի որ մինակ էր՝ չկերաւ . բայց երբ որ Աստուած Եւան անոր ընկեր տուաւ , Եւային յորդորելովը կերաւ ան ծառին ստղէն :

Հ . Եւան ինչպէս ստեղծուեցաւ .

Պ . Ազամ երբոր դրախտին մէջը պառկեր քուն կըլար , առաւ Աստուած անոր մէկ կողը , ու անկէ շինեց Եւան , ու տուաւ Ազամայ որ անոր ընկեր , օգնական ու կին ըլլայ :

Հ . Եւան շիմացա՞ւ Աստուծոյ հրամանը չուակելու գիտութեան ծառին ստղէն .

Պ . Ազամ զուրցած էր անոր . բայց սատանան օձի կերպարանք առած , որ ամէն կենդանիներէն խորամանկ է , և կաւ Եւային խաբարբեւելով ըսաւ . թէ որ ուտե՞ք ան ծառէն՝ Աստուծոյ պէս կըլարք , բարին ու չա-

բը կը ճանչնայք : Եւ ան աս խոստամունքիս չեմ
տեսնել լով պողոսն աղուորու թիւնն ալ՝ հաւ-
նեցաւ , փրցուց Ագամին ալ տուաւ ու մէկ-
տեղ կերամ :

Հ . Ագամ ու Եւայ իրենց բրամ անհնա-
զանգութեանը համար ինչպէս պատժուե-
ցան :

Պ . Նախ մէկէն՝ ի մէկ կորսընցուցին իրենց
անմեղութիւնը , ու խանաչով թէ մերկ են՝
սկսան ամբշնալ , և թուղի տէրեներով իրենք
զիրենք ծածկեցին , ու ծառերու մէջ պա-
հուրակեցան : Աստուած ուզելով որ զըջումի
գան , հարցուց թէ Ո՞ր էք . անոնք զըջալու-
տեղ՝ մերկ ըլլալնին պատճառ կրբերէին . ու
եբրոր նորէն հարցուց , թէ « Չըլլայ թէ ան
արգելած պողէն կերած ըլլաք ? » . ան ատեն
Ագամ յանցանքը Եւային վրայ ձգեց , Եւան
ալ օձին , ասանկով չըջացին . անոր համար
Աստուած ալ առաջ օձը պատժեց որ ամէն
կենդանիներէն ալ անխիժամ ըլլայ , փորուն
վրայ բալէ , ու հող ուտէ , ու կինը իրեն գլու-
խը ձգմէ , օձն ալ կնոջ կրունկը խածնելու
ջանայ : Եւային ալ պատժիժ գրաւ որ ցաւով
աղայ բերէ , ու երկիր իշխէ անոր վրայ :
Ագամին ալ պատժիժ՝ որ իր հացը ճակատին
բրտինքովը գանէ , ու մեռնի հող գառնայ :
Ետքը Աստուած երկուքին ալ կաշիէ զգեստ
հագցուց , ու գրախաէն գուրս հանեց , որ
գետին բանին ու ապրին . ու քերտէններուն
ալ հրաման տուաւ որ բոցեղէն սրով ար-
գելեն կենաց ծառին մօտենալու :

6029 / 209
9200-57

Կայեն, Աբէլ:

Հ. Ազամ գրաստեն ելլէլէն ետքը ինչ նոր խեղճութեան հանգիսեցաւ .

Պ. Ազամ երկու տղայ ունեցաւ . առջինին անունը Կայեն էր, երկրորդին Աբէլ: Կայենը երկրագործ եղաւ, Աբէլը հովիւ . Կայենը Աստուծոյ զոհ ըրաւ իր երկրին պտուղներէն, Աբէլն ալ զոհ ըրաւ իրեն ոչխարներուն առջինեկները ու գերերը, անոր համար Աստուած Աբէլինը ընդունեցաւ, բայց Կայենին տուածին չհասնեցաւ: Աս բանիս վրայ Կայեն շատ արամեցաւ: Աստուած իրեն ըսաւ որ դու սրտանց չտուիր, անոր համար չընդունեցայ: Բայց Կայեն սաստիկ նախանձեցաւ եղբորը վրայ . որ մը խաբէլով զինքը գաշար տարաւ, ու հոն զարկաւ մեռցուց: Աս բանս մեծ ցաւ եղաւ Ազամոյ, երբոր տեսաւ իր անհնազանդութեան պատիժը սիրելի անմեղ որդւոյն վրայ հասած իր առջինեկ որդւոյն ձեռքով:

Հ. Կայեն եզրադրաստպանութեանը համար ինչ պատիժ քաշեց .

Պ. Աստուած կուզէր որ զղջումի գայ . անոր համար չգլխացողի մը պէս հարցուց թե ո՞ր է Աբէլը . բայց Կայեն զղջալու տեղ լըրութեամբ պատասխանեց, թե Աս իրեն պահտպանն էմ: Անոր համար Աստուած ալ պատիժ տուաւ իրեն, որ աս դիս ան գին

120002

բարբարական ստորախ. շատ աշխատի, ու երկիրը իրեն ստուշ չտայ. բայց Վայեն չճետեկցաւ Ազամայ օրինակին ու ետքն ալ չգըջացաւ. և անանկ յուտահատած ապրեցաւ՝ ինչուան որ Ղամէք իր թուր մէկ անտառի մը մէջ վայրի կենդանի կարծելով զինքը՝ նետով զարկաւ մեռցուց :

Հ. Աստուած ինչով մխիթարեց Ազամայ սիրտը՝ որ Աբելին մահուամբ վշտացած էր.

Պ. Անոր տեղը ուրիշ զաւակ մը տուաւ Սեթ անուեով, որ Աստուծոյ ալ շատ սիրելի եղաւ իրեն որդիքներովը, անոր համար ալ Սեթայ ցեղը Ուրտի + Աֆֆֆֆֆ) ըսուեցան :

Հ. Սեթայ ցեղին մէջ որոնք եղան երեւելի .

Պ. Մէյմը Ենովս Սեթայ որդին, որ սկըտաւ կատարեալ աստուածալաշտութիւն սորվեցընել. Ենովք՝ որ Աստուծոյ շատ սիրելի ըլլալուն սղ սղ աշխարհքէս վերացաւ իրեքհարիւր վաթսուեռհինգ տարուան . Մաթուսաղան՝ որ ցեց տարի ապրեցաւ, որուն չափ երկայն ապրող մարդ չեղաւ աշխարհքիս վրայ :

Հ. Վայենին զաւկըները ինչպէս անուանեցան, ու մէջերնին ինչ երեւելի մարդիկ եղան .

Պ. Ուրտի + Տարտիան ըսուեցան, և մէջերնին տալի նշանաւորն եղաւ Վայեն՝ որ քաղաք շինեց և անունը դրաւ Ենոք, որ էր իր առջի որդւոյն անունը : Ղամէքայ մէկ որդին Յուբայ երաժշտութիւն գտաւ. մէկալ որդին Թորէլ գարրնութիւն գտաւ, և ասոնց քոյրն ալ 'Նոյեմա՝ կտաւ գործել սկսաւ :

Հ. Արդիք Աստուծոյ իրենց արդէկու թեա-
նը մէջ սրչափ ասե՛ն մնացին .

Պ. Քանի որ խնամութիւն չէին ընէր Ար-
դիք մարդկան ըսուածներուն հեա՛ Աստու-
ծոյ սիրելի էին . բայց երբոր աս զգուշու-
թիւնը մէկդի թողլով սկսան խնամենալ ա-
նոնց հեա . բողոքովն գէշցան : Ան ասե՛նն
էր որ երևելի հսկաները ծնան անոնց խնա-
մութենէն :

4.

ՋԵՆՆԵՆ :

Հ. Արդիք Աստուծոյ գէշութեան ետե՛կ
ըլլա՛նուն համար ինչ պատիժաւին Աս-
տուծմէ .

Պ. Աստուած թէպէտ ամենը մէկէն կրը-
նար յանկարծ ընջել . բայց իր ողորմու-
թեամբը, հարիւր տարի առաջ խնացուց՝ թէ
սրդողած է և կուզէ պատժել . ու երբոր
չգըջացին, ջրհեղեղով կորսնցուց բոլոր աշ-
խարհքիս մարդիկը . ողջ պահելով միայն
'Նոյ նահապեալը իրեն ընտանիքովը :

Հ. Աստուած ինչ կերպով խնացուց մար-
դիկներուն, թէ իրենց մեղքին համար կու-
զէր ջրհեղեղ ընել .

Պ. 'Նոյ նահապեալին հրաման տուաւ որ
հարիւր տարուան մէջ մէկ տապան մը չի-
նէ՛ որուն երկայնքն ըլլայ իրէք հարիւր կան-
գուն, լայնքը յիսուն կանգուն, բարձրու-
թիւնն ալ երեսուն . իրէք յարկ, մէջք բա-

Ժամանակք, բովէն ալ գուռ մը, առ նաւը
չինելու առէն ամէնքը իմացան, բայց կը-
խնային Նոյ նահապետին վրան, ու չէին
հաւտար :

Հ. Զրհնդեղ ինչպէս եղաւ :

Պ. Նոյ նահապետը Աստուծոյ հրամա-
նովը ամէն առտակ «-բէ ըսուած կենդանի-
ներէն կօթնական զոյգ, և «ն-բէ ըսուած-
ներէն երկերկու զոյգ աասլանը մացուց՝ ի-
րենց պէտք եղած պաշարովը. մասա ինքն
ալ աասլանին մէջ իր իրեք որդիքներովը ու
իրենց կնիկներով, ամէնը ութ հոգի. Աս-
տուած ալ գուռը վրաներնէն գոցեց : Եօթն
օր անցնելէն ետքը սկսաւ երկնքէն սաստիկ
անձրև գալ, գեանէն ալ չորս դիէն սկսաւ
ջուր ելլալ քառասուն օր միակերպ, ինչուան
ջուրը բարձր լեռներէն ալ տասնուհինգ
կանգուն վեր բարձրացաւ ու խղճեց բոլոր
մարդիկներն ու կենդանիները, որ տասա-
նէն գուրս մնացած էին :

Յ.

Առտուծոյ ինձեզ Նոյ նահապետին վրայ :

Հ. Նոյ նահապետը որչափ առէն տասա-
նին մէջ փակուած կեցաւ .

Պ. Տարի մը ամբողջ, վն դի ինչուան հա-
րիւր յիսուն օր ջուրը բարձրացած մնաց .
ինչուան օր ամէն մարմինները ջրին երեսը
կեցած՝ փասեցան ջնջուեցան : Իսկ թէ որ
ջուրը շուտ մը ցամբէր, անոնք գեանին ե-

բեսը տարածուած՝ իրենց գէշ հոտովը բո-
լոր օգը կատարականէին : Հինգ ամիսէն ետքը
Աստուած հով մը հանեց օր սկսաւ ջուրը
ցամքիլ . երբոր եօթը ամիս եղաւ՝ նստաւ
տասրանը Հայաստանու Արարառ կամ Մա-
սիս ըսուած լեռան վրայ . և տասնումէկե-
րորդ ամսուն ասջի օրը լեռներուն գլուխ-
ները սկսան երկնալ . քառասուն օր ալ անց-
նելէն ետքը՝ Նոյ նահապետը տապանին սպա-
տուհանը բացաւ ու ադաւաւ մը թռչուց ,
որ գնաց ու ալ չգարձաւ . ան ասենը՝ Նոյ
աղաւնի մը թողուց օր խմանայ թէ ջուրը ցամ-
քէր է . բայց աղաւնին կենալու տեղ չգրա-
նալով ետ գարձաւ , Նոյ ալ ձեռքը երկրնցուց՝
ներս առաւ : Եօթը օրէն նորէն թողուց
աղաւնին , որ իրիկուան գէմ գարձաւ եկաւ
տասրանը՝ ձիթենիի ճիւղ մը առած բերանը .
անցաւ եօթը օր ալ՝ նորէն իրիկեց աղաւնին ,
որ գնաց ու մէյմալ չգարձաւ : Ան ասեն
Նոյ տասրանին վրան բացաւ ու անանկ մէկ-
քանի օր ալ սպասեց ինչուան որ աղէկ մը
ցամքեցաւ գեախնը , ու Աստուծմէ հրաման
առաւ , երաւ դուրս , ու ամէն անասուն
ները ու թռչուններն ալ թողուց որ ելեն :

Հ . Նոյ նահապետ տապանէն ելելուն
պէս իր ասջի գործքը ո՞րն եղաւ .

Պ . Մէկէն ընկաւ Աստուծոյ ասջե շնոր-
հակալ եղաւ , ու հետը ունեցած սուրբ կեն-
դանիներէն զոհ ըրաւ , որ Աստուծոյ շատ
հաճոյ անցնելով՝ օրհնեց զինքը որ շաանայ
ու իշխէ աշխարհքիս ամէն բաներուն վրայ :

Հ . Աստուած ինչ գաջինք գրաւ Նոյին

հեա՝ առապանէն ելլելէն ետքը , և ի՛նչ նոր
բանի հրաման տուաւ .

Պ. Գիտնալով մարդուս բնութեան տկա-
րութիւնը որ սղտիկուց գէշութիւն կըսի-
րէ , անոր համար Աստուած ուխտ ըրաւ որ
մէյմալ ջրհեղեղ չընէ . և իր ուխտին նշան
տուաւ ծիրանի դօտին , որ երբոր երևնայ
յիշենք Աստուծոյ գթութիւնն ու յուսանք
որ չպատժեր զմեզ , հասպա կըսուի : որ զըզ-
ջանք ու թողութիւն առնենք ըրածնէրնուս
վրայ : Նոր տուած հրամանն ալ աս էր որ
ջրհեղեղով երկիրս գէշնալով՝ մարդիկնե-
րուն բնութիւնն ալ տկարացաւ , անոր հա-
մար ասըստից որ անկէ ետքը մարդիկ միս
ալ կարենան ուտել՝ ուրիշ ուտելիքներու
պէս :



6.

ԳԻՏԵԼԻՔ

Հ. Ազամ գրախափին մէջ ո՞րչափ կեցաւ .

Պ. Ասոր վրայ շատ կարծիք կայ . ոմանք կրտսեն թէ երեսուն տարի կեցաւ , ոմանք իրեք տարի , ոմանք քառասուն օր , ոմանք ութը օր , ոմանք վեց օր , ոմանք իրեք օր , ոմանք ալ թէ և ոչ մէկ օր : Խիստ շատը հաւանական չէ , վասն զի « Աճեցէք և բազմացարուք » ըսեր էր Աստուած . ինչո՞ւ չչաացան : Մէկ օրն ալ նոյնպէս հաւանական չէ . վասն զի աչքերնին բացին չբացին՝ դեռ մէկ պտուղ մը չկերած և գրախափն չորս դին չպտտած՝ դժուար կերևնայ մէկէն անանկ մեծ հրամանին դէմ ընել : Ճշմարտանման է քառասուն օր կամ քիչ մը աւելի միջոց :

Հ. Աստուած ինչո՞ւ համար Ազամայ ու բոլոր աշխարհքիս սաստիկ պատիժ տուաւ .

Պ. Մեզի իմացընեւու համար որ շատ մեծ մեղք է Աստուծոյ չհնազանդիլն ու իրեն կամքին դէմ կենալը :

Հ. Աստուած Ազամ ու Եւան պատժելու ստենն գթութեան նշան մը ցրցո՞ւց .

Պ. Չէ թէ միայն նշան մը , հապա իր աստուածային անչափ գթութիւնը հոն յայտնի երևցուց : Նախ հարցընեւոյ՛ ու ստենն

տալով որ զղջան : Եսքը երբոր չըրջօղին ,
պատիժը տալու ատեն իմացուց որ ինքը
միշտ բարութեամբ կը յաղթէ մարդկային
չարութեանը , ու սատանան խաղք ընել
կուզէ . անոր համար սպառնացաւ օձին որ
Եւան (ի սուրբ Աստուածածինը) ճզմէ
սատանային գլուխը : Ասով Ազամայ սիրան
ալ մոխիթարեց , իմացընելով թէ ինքն որ
հոգւով նման է Ասաուծոյ՝ ատեն կուգայ
որ Աստուած ալ մարմնով իրեն նման կըլլայ
ու զինքն ալ մեռնելէն կազատէ :

Հ . Զբհեղեղէն առաջ քաղաքական կա-
ռավարութիւն ինչպէս էր .

Պ . Ամեն մէկ նահապետ իրենց ատենը
կը կառավարէին : Եւ շատ ասրելով շատ ալ
տղաքներ թոռներ ունենալով , մէյմէկ սղախ
թագաւոր կը ձևանային , որ իրենք իրենց
քաղաք կըլինէին , ու իրենց ընտանեացը
կարգ կանոն կը դնէին :

Հ . Իրախառ աշխարհքիս որ կողմն էր .

Պ . Աստուածաշունչին պատմութենէն
յայտնի է որ գրախառ Հայաստանի մէջն էր :
Նախ ան խօսքէն որ կըսէ Աստուածաշուն-
չը . * Եւ անկեաց Աստուած զգրախտան յԵ-
գեմ ընգ արևելա " . որ ըսել է թէ գրախ-
առ Արարիայի , Մովսէսի պտրտած անդե-
րուն արևելեան կողմն էր՝ որ Հայաստանու
գին կիյնայ : Երկրորդ՝ որ գրախտին մէջի
եղած գեաերուն երկուքը՝ Տիգրիս ու Եփ-
րատ՝ Հայաստանի մէջ քովէ քով կեցած են
ինչուան հիմա : Ասոնցմէ զատ , ան գեաե-
ուն մօտ անդերուն պարարտութիւն , գեղեց-

կութիւնը, անտեղի հոտաւէտ ծաղկընե-
րուն անթիւ տեսակները, որ ինչուան հի-
մա կրբուսնին ու տեսնողները կըզմայլեցը-
նեն, և յայտնի կըցուցընեն՝ որ առաջուց
մասնաւոր Աստուծմէ օրհնած տեղ մը է-
ղած է :





Մ Ա Ս Ն Բ

Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ա Յ Գ Ե Ր Ը

Զ Բ Հ Ե Ղ Ե Ղ Կ Ն Ե Տ Տ Ի

7.

Նոյ նահապետին որդիքը :

Հ. ՆՈՅԻՆ որդւոց անունը ինչ է, և ինչ մասնաւոր դործք կըստամուտի իրենց վրայ :

Պ. Անուննին Սեմ, Բամ, Յարեթ է : Ասոնց հայրը Նոյ այգի անկեց ու մեկ անգամ մը շատկեկ խմելով գլուխը զարկաւ, ու երբոր իր տանը մեջ մերկ պառկեր էր՝ գիտուածով Բամը տեսաւ՝ ու գնաց ծիծաղելով պատմեց եղբարցը • անոնք լսելուն պէս լաթ մը առին ու ետ ետ երթալով գնացին գոցեցին հայրերնին աւանց տեսնելու : Երբոր արթնցաւ Նոյ ու խնայաւ եղածը, անխճեց Բամը որ ծառայըլլայ մեկալ երկու եղբարցը, և օրհնեց Սեմը որ իշխէ անոր վրայ, և Յարեթն ալ՝ որ Սեմայ հետ բնակի :

Հ . Նոյ նահապետ ջրհեղեղէն ետքը որ-
չափ ատեն սպրեցաւ .

Պ . Իրեքհարիւր յիսուն տարի . հինգ հա-
րիւր տարուան էր երբոր տապանը սկսաւ
շինեւ , վեցհարիւր տարուան էր ջրհեղեղին
ատենը , ինըհարիւր յիսուն տարուան մե-
ռաւ :

Հ . Սեմ , Քամ , Յարեթ ջրհեղեղէն ետքը
մէկէն զտառեցան մէկմէկէ .

Պ . Երբոր այնչափ շատցան որ աւ մէկ-
տեղ չէին կրնար բնակիլ , արևելքէն ասդիս
անդին երթաւ սկսան . բայց երբոր ճամբուն
վրայ հանդիպեցան Սենաարայ մեծ դաշտին ,
քիչ մը ատեն աւ հոն կեցան Բարիլոնի աշտա-
րակը շինելու մտքով . ու երբոր չյաջողեցաւ
խորհուրդնին , բոլորովին ցրուած բաժնուե-
ցան մէկմէկէ :

Հ . Ինչ բանի համար կուղէին մարդիկ
շինեւ Բարիլոնի աշտարակը .

Պ . Երբոր տեսան Սենաարայ դաշտը մեծ
ու ընդարձակ , մաքերնին հստատու թէ խոր-
հուրդ մը ինկաւ իրենց կարողութիւնը ցու-
ցնելու , ու իրենց յիշատակը ձգելու յա-
ւիտեան աշխարհքիս վրայ . ստոր համար
սկսան շինեւ քաղաքի չափ մեծ աշտարակ
մը , որուն բարձրուիը կուղէին հասցնել
ինչուան երկինք : Իսկ շինուածքին նիւթ կը-
գործածէին քարի տեղ եփած աղիւս . և
կրով շաղախի տեղ կուտը , ինչու որ անտե-
ղուանքը քար դժուար կրգտնուէր :

Հ . Ինչ արդեւք եղաւ որ աշտարակ շի-
նելու խորհուրդը չիկրցան առաջ տանիլ .

Պ . Ատուած տեսաւ որ մտքերնին չար է ,
 ու գիտնալով որ ամէն մարդ մէկտեղ մէկ լե-
 զու ու մէկ ազգ ըլլալով ուրիշ շատ անկար-
 գուծիներ ալ կընեն , յանկարծ լեզունին
 շքիօծեց , խառնակեց , անանկ որ մէկմէկու
 ըսածը չէին հասկընար . ասանկով խռովու-
 թիւն ինկաւ մէջերնին , ու սողիս անգին ցը-
 րուեցան գնացին : Անոր համար ան տեղին
 անունն ալ Բարիլոն գրին՝ որ խառնակու-
 թիւն ըսել է , որ առաջ Սենասը կըսուէր :

Հ . Ո՞վ գլուխ կեցեր էր աշտարակ շինե-
 լու խորհուրդը առաջ տանելու համար , ու
 շինուածքին նիւթը ուսկից կը գտնէին .

Պ . Ներքովթ անունով Քամայ թոռանը
 որդին կարիճ՝ ու աղէկ սիրտ վաստակիլ գիտ-
 ցող մարդ մը՝ ամէնուն գլուխ կեցեր՝ բանը
 առաջ կը տանէր : Բայց լեզուները շքիօծե-
 լէն ետքը ճար չեղաւ զանոնք միարանելու .
 անոր համար ինքը իրեններովը մինակ մնաց ,
 ու կիլիսէր անոնց :

8.

Սէճայ որդիքը Ինչո՞ւն Աբրահամ :

Հ . Սեմը Նոյ նահապետէն օրհնուելով
 ինչ բարիք դտաւ Ատուածմէ .

Պ . Ա՞՞ծ անոր ցեղէն ընտրեց առաւ իրեն
 սիրելի ազգ մը՝ որոնց վրայ մասնաւոր գուծ
 խնամք ցուցընելով կը հոգար :

Հ . Սիրելի Ա՛յ ըսուած ազգը ո՞րն է .

Պ . Հրէից կամ Երրայեցւոց ազգն էր , ո .

րոնց յայանեց Աճ իր ամէն կամքը, ու օրէնք-
ներ դրաւ վրանին՝ որոնք կուզէր որ մար-
դիկ պահեն, և անոնցմով արժանի եղան
Աստուծոյ ժողովուրդ կոչուիլ, և շԲ.րիա-
տոս իրենց մէջը ընդունիլ:

Հ. Աճ երբ ընտրեց Եբրայեցիները ու
զատեց ուրիշ ազգերէն.

Պ. Չորս հարիւր յիսունըութը տարի
ջրհեղեղէն ետքը հայր Աբրահամու ասեներ,
որ Սեմէն սկսած տասներմէկերորդն էր: Վն
զի Սեմոյ տղան Արփաքսադ էր, Արփաք-
սադին տղան Կայնան, Կայնանայ տղան Սա-
ղա, Սաղային տղան Եբեք՝ որուն անունով
ազգը ըսուեցաւ Եբրայեցի. Եբեքայ տղան
Փաղէկ, Փաղէկայ տղան Ռադաւ, Ռադաւայ
տղան Սերուք, Սերուքայ տղան Նաբովր,
Նաբովրի տղան Թարա: Աս Թարան իրեք
որդի ունեցաւ. Աբրահամ, Նաբովր, Առան.
Առան մեռաւ ու Թողուց տղայ մը Ղովա
անունով: Աբրահամ ու Նաբովր ալ կար-
գուեցան. Աբրահամու կնոջ անունը Սարա
էր, Նաբովրինը Մեղքա: Ետքը Թարա ա-
ռաւ իրեն երկու որդիքը Աբրահամ ու Նա-
բովր, և մեռած որդւոյն տղան Ղովաը, ու
Քաղդէացւոց երկրէն ելաւ քանանացւոց
երկիրը երթալու համար: Ետքը եկան ըը-
նտիկեցան Խառան ըսուած տեղը, ու հոն
մեռաւ Թարա Աբրահամու հայրը: Աս
տեղս ու աս ասենիս ընտրեց Աստուած Աբ-
րահամը իրեն ժողովուրդ ընելու համար:

ԳՒՏԵԼԻՔ

Հ. Աշտարակին վրայ դրսի պատմիչները գիտնալու ինչ հարկաւոր բան կրխօսին .

Պ. Ասիս ձե ին վրայ ամէնը համաձայն չեն խօսիր. ոմանք կըօր էր կըսեն, ոմանք ալ քառակուսի : Աոյնպէս բարձրուէր համար ալ ոմանք ինչուան մըն մը ելէր էր կըսեն, ուրիչները ինչուան 12000 դերկ կը հանեն : Սուրբն Հերոնիմոս չորս մըն բարձրութիւն կուտայ : Իսկ Հրեայք չափը անցընելով ուղեցին որ քսանըկօթը մըն բարձրութիւն ունենայ :

Հ. Աշտարակին շինելուն ու փլելուն վրայ դրսի պատմիչներուն մէջ ինչ կարծիք կայ .

Պ. Շինելուն պատճառ կուտան՝ թէ ուրիշ ասան ջրհեղեղէն աղատելու համար էր : Իսկ փլելուն համար կըսեն թէ Աստուած մէկ սաստիկ փոթօրիկ մը հանեց, ու հիմնալատակ կործանեց :

Հ. Զրհեղեղէն առաջ մարդիկ ո՛րչափ էրկայն կապրէին, և ինչո՞ւ ետքէն կարճըլլաւ կեանքերնին :

Պ. Զրհեղեղէն առաջ սովորաբար ինը հարիւր տարիի չափ կապրէին, ինչպէս որ Ազամ ինըհարիւր երեսուն տարի ապրեցաւ. ասոր նման ուրիչներն ալ քիչ մը ա-

ւե լի քիչ մը պակաս . բայց Աստուած տեսաւ որ մարդիկ շատ ապրելով զինքը բոլորովին կրմնանան, և ըրած չարութիւննին ալ խիստ չափը կանցընէ, 'Նոյ նահապետին ջրհեղեղէն առաջ խմացուց' որ մարդուս տարիքն ալ պիտի կարճեցընէ, անանկ որ շատ շատ՝ ապրին հարիւր քսան տարի : Անոր համար ջրհեղեղով գետնին ուժն ալ տկարցուց, խոտեղէնները գեշցան : Բայց առ մարդկան տարիքին կարճընալը Թողուց Աստուած որ բնական կերպով ըլլայ կամաց կամաց . վասն զի 'Նոյին Թոռները հինգ հարիւր տարիի չափ ապրեցան, և անոնց որդիքը չորս հարիւր և իրեք հարիւր տարի : Եւ ջրհեղեղէն հինգ հարիւր տարի ետքը Աբրահամու ատենը՝ հազիւ երկու հարիւր տարի կապրէին, անկէ մէկ երկու հարիւր տարի ալ ետքը՝ հարիւր կամ հարիւր քսան տարի ապրողքիչ կը գլորանուէր, ինչպէս որ ըսեր էր Աստուած : Անկէ ետքը ինչուան հիմա չորս հազար տարուան միջոց միշտ նոյնպէս հարիւր քսան տարուընէ վեր ապրող խիստ դժուար կը գտնուի : Իսկ ասկէ իրեք հազար տարի առաջ Դաւիթ մարդարէն Սաղմնսին մէջ կըսէ իր ատենին համար՝ Թէ եօթանասունէն անդին առողջ հանգիստ կեանք չըլլար . ինչպէս որ հիմա ծերերը փորձով նոյն խօսքը կը հաստատեն :

10.


Հ . Աեզունները խառնուելէն առաջ մարդիկ ինչ լեզուով կը խօսէին .

Պ. Հայերէն . ինչպէս որ հաւանական կերպով կըստուգուի Աճաշունչին սլաւաճումնէն . վասն զի 'նոյ նահապետը երբոր ստապանէն ելաւ Մասիս լեռնէն իջաւ , հոն Հայաստան բնակեցաւ . ու երբոր մարգիկ շտոցան , ու ելան Հայաստանէն ասդիս անդին երթալու համար , և Սենաարայ գաշտին մէջ երբոր լեզունին խառնուեցաւ , միայն Հայաստանու բնակիչներուն լեզուն՝ որոնք ակզերնէն չէին շարժած՝ մնաց առջի լեզունին՝ առանց խառնուելու : Այսչափէն յայանի կրքնանք գուշակել որ երբոր Հայկ նահապետը Հայաստանէն ելելուն վրայ զգլալով նորէն ետ գարձաւ , ինչպէս որ չախորժեցաւ ուրիշ տեղուանքէն ու իր առջի բնակութիւնը եկաւ , ասանկ ալ չախորժելով իր արուած լեզուէն , և տեսնելով որ բոլոր առջի բնակիչները իրենց առջի լեզունին կըխօսին , ինքն ալ նորէն սկսաւ հայերէն լեզուով խօսիլ . մէյմը՝ իրեն հօրը լեզուով խօսելու փափաքով , մէյմ՝ ալ որպէս զի շահի բնակիչներուն սիրաբ ու տիրէ անոնց վրայ , որոնք բնական կերպով կատէին անանկ նորելուկ լեզու մը որ սլաւաճոյ համար Աստուած տուեր էր : Աս սլաւաճութիւնը չգիտնալով Եւրոպացիք , և չկրնալով ալ ուրիշ ազգի մը աս առջի լեզուն յարմարցընէլ մէկ կերպով մը , ընդհանրապէս կըկարծեն թէ Երբայեցւոյ լեզուն եղած ըլլայ . բայց յայանի է որ կըսխալին :

Հ . Սեմ , Քամ , Յարէթ մէջերնին ինչպէս բաժնեցին երկիրը .

Պ. Ատուածաշունչին մէջի ազգերուն ա-
նունները աշխարհքներուն անուններուն նը-
մանցընեւ լով կրնայ ըսուիլ թէ Յարեթին
որդիքը Եւրոպա ու փոքր Ասիա բնակեցան.
Սեմայ որդիքը Ասիայի մէջ արևելեան կող-
մերը . Քամայ որդիքը Ափրիկէ, Փիւնիկէ ու
Պաղեստին :





ՄԱՍՆ Գ .

Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ա Յ Դ Ա Ր Ը

ԻՆՉՈՒԱՆ ԵԳԻՊՅՈՍԷ ԵԼԼԵԼՆԻՆ

Հայր Աբրահամու Ղովթայ հետ ըրած գրծերը :

Հ . Ինչո՞ւ համար Աստուած կանչեց Աբրահամը , և ան ալ ո՞ւր գնաց .

Պ . Աբրահամու հաւատարմութիւնը համար ուղեց Աստուած որ զատ ազգ ընէ զինքը . ուստի երբոր Աբրահամ եօթանասուներհինգ տարուան էր , Այ հրամանովը ելաւ խաւանէն՝ Ղովան ալ հետը՝ Եկաւ Քանանացւոց երկիրը ինչուան Սեւքէմ՝ բարձր կաղնի ծառին քովը . հոն Աստուած երևցաւ ու ըսաւ թէ քու զաւկրներուդ սխալ ամամ առ երկիրներս . անկէ ելաւ Բեթէլ գնաց , անկէ ալ անապատ : Ան ասե՛նները սասախկ սով եղաւ Քանանացւոց երկիրը . անոր համար ելաւ գնաց Աբրահամ Եգիպտոս :

Հ . Աբրահամ Եգիպտոսի մէջ ո՞րչափ առնէ կեցաւ .

Պ. Քիչ կեցաւ. վասն զի ինքը վախնալով որ չըլլայ թէ Սարային համար զինքը մեռցնեն, ով որ կըհարցընէր՝ քոյրս է կըսէր. ա նոր համար Փարաւոնը զՍարան իրեն կին առաւ, և աս բանիս համար Ատուծմէ սաստիկ պատժուեցաւ: Ան ատենը իմացաւ Փարաւոն Աբրահամու ըրած խաբէութիւնը ու իրեն շատ ընծաներ ալ տուաւ առջի առածնէրէն զատ, ու ըսաւ որ Ղովաին հեա մէկտեղ ելլեն երթան:

Հ. Աբրահամ երբոր Եդիպոսուն էլաւ Ղովոայ հեա, ուր գնաց.

Պ. Դարձաւ առջի անապատը Բեթէլէն մտա՝ ուր որ առաջ Ատուծոյ սեղան շիներ էր. բայց որովհեաե բաներնին խիստ շացեր էր, մէկտեղ չէին կրնար կենալ, անով կռիւ ալ կըլար Աբրահամու ու Ղովոայ հովիւներուն մէջ. անոր համար Աբրահամու խորհրդով բաժնուեցան մէկմէկէ, ու Ղովա Յորդանան գետին կողմերուն աղէկուէր համար Սոգոմ քաղաքը գնաց նստեցաւ, ուր որ գերի բռնուեցաւ: Եւ Աբրահամ ըսաւ Ատուծած որ ելլէ սորաի բոլոր Քանանացւոց երկիրը՝ որ իրեն տալ կուզէ. Աբրահամ ալ ելաւ գնաց Քերքոնի մէջ Մամբրէի կողմի ծառին քով բնակեցաւ ու հոն Ատուծոյ սեղան շինեց:

Հ. Ղովա ինչ պատճառաւ գերի գնաց Սոգոմ քաղաքէն, և ինչպէս աղաակցաւ.

Պ. Ան ատենները չորս թագաւորի մէկ եղած՝ հինգ թագաւորի գէմ պատերազմ բացին Ազոխց ձորին մէջ, ու Սոգոմացիք յաղ-

Թուեցան և Թագաւորնին նաւթի ջրհորի մէջ պահուրակեցաւ . Թշնամիները Ղովան ալ առին գերի տարին : Երբոր լսեց Աբրահամ, իրեք հարիւր տասնըութը հօգի իր ծառաները առաւ գնաց, վաղեց Թշնամիներուն վրայ՝ զարկաւ, ազատեց Ղովար իր ամէն բաներովը և Ժողովուրդն ալ մէկտեղ : Ան ատեն Սոգոմայ Թագաւորը շնորհակալ եղաւ Աբրահամին ու կուղէր աւարը իրեն թողուլ . յանձն չառաւ Աբրահամու ըսաւ, չըլլայ որ ըսես թէ ես հարստացուցի Աբրահամը . վասն զի ինքը բոլորովին Աստուծոյ ասպաւինած էր : Եւ Սէլքիսեգեկ Սաղեմայ Թագաւորն ալ որովհետեւ քահանայ Աստուծոյ էր՝ օրհնեց Աբրահամը . Աբրահամ ալ առած բաներէն անոր տասանորդ տուաւ :

12.

Աբրահամն գործեց Ղովար գերեւելին
գործելուն երես :

Հ . Աբրահամ իր բոլոր յոյսը Այ վրայ դրած ըլլալուն համար Աստուծոյ մէկնչ վարձք ընդունեցաւ .

Պ . Ա՛՞ժ տեսիլքով իրեն խոստացաւ որ ինքը վերակացու ըլլայ անոր, ու երկնքի աստղերուն չափ իրեն որդիքը շտացնէ . և աս խոստմունքներուս կատարուելուն նշան՝ հրաման տուաւ Ա՛՞ժ որ Աբրահամ մէկ զոհ մը ընէ . ան զոհը ընելու ատեն ահա

ւոր կերպով մը խմացուց իրեն ետքի ըլլալէր-
ները :

Տ. Սարային ամուլ ըլլալուն համար Աբ-
րահամ չէր տարակուսէր Աստուծոյ խոստ-
մունքներուն վրայ :

Պ. Ոչ երբէք . վասն զի ինքը կըհաւատար
կատարեալ սրտով որ ԱՃ իր ուղածը կընէ՝
առանց խմացընելու ատենը և ինչպէս
ընելէքը , և կըստատէր կատարուելուն . թէ
պէտ և ինչուան ան ատենը դեռ աղայ չու-
նէր , որովհետև Սարա ամուլ էր : Բայց Սա-
րային ուղեւորը Ագար աղախինէն աղայ
մը ունեցաւ խմայել անունով : Աս Ագարը
դեռ աղան չծնած՝ սկսաւ հստարտանալ Սա-
րային վրայ . Սարան ալ սկսաւ Ագարը նեղը
խոթել , ան ալ առջինին պէս հնազանդելու
տեղ ելաւ փախաւ . բայց ԱՃ ճամբէն ետ
գարձուց զինքը՝ որ երթայ հնազանդի Սա-
րային : Երբոր տասուիրէք տարուան էր խ-
մայել , ԱՃ յայանեց Աբրահամու որ Սա-
րայէն աղայ մը ունենայ՝ որուն պիտի տայ
ան խոստացած երկիրները . իր Աբրամ ա-
նունն ալ Աբրահամ կոչուի ըսաւ , Սարան
ալ՝ Սարրա . և իրեն Աստուծոյ ժողովուրդ
ըլլալուն նշան առաւ . թլփատութիւնը :

Տ. Ղովորդերունն ազատելէն ետքը միշտ
Սողոմայ մէջ բնակեցաւ .

Պ. Չէ . վն զի Սողոմաքաղաքը քիչ ատենէն
կործանեցաւ :

Տ. Ինչո՞ւ համար Սողոմ կործանեցաւ .

Պ. Սողոմացւոց մեղքերուն շատութեանը
համար : Բայց ուղեւոր ԱՃ իրեն անչափ ո-

զորմու իր խմայրն եւ մեզի, որ մը ցորեկը երբոր
Աբրահամ իր տանը գրան առջև նստեր էր,
իրեք հոգի կանցնէին ան ճամբէն, աւսնելուն
սէս Աբրահամ գիմացնին ելաւ. հանգչեցուց
զիրենք, ոտուրնին լուաց ու կերակուր հա-
նեց. անոնք ալ ստամեցին իրեն թէ Սար-
րան գալ տարի առ օրս աղայ կունենայ :
Սարրա գրան ետեւէն լսեց ու ծիծաղեցաւ
իննքսուն տարուան ստաւաւ ըլլալուն հա-
մար : Ետքը երբոր ելան որ երթան, ստա-
մեցին Աբրահամու թէ Սողոմը կործանելու
կերթան . Աբրահամ լսածին սէս, գուժը
շարժեցաւ ու աղաչեց որ յիտուն արդար
թէ որ մէջը գանուի՝ չկործանեն . երբոր
մտիկ ըրին աղաչանքին՝ կամաց կամաց ար-
գարներուն համբանքը քիչցուց, ինչուան
խօսք առաւ որ տասը արդար թէ որ գըտ-
նուի՝ ազատեն քաղաքը . բայց չգըտնուե-
ցաւ :

15.

Սողոմ Գոմորայ կործանուել :

Հ . Ի՞նչ կերպով կործանեցին հրեշտակ-
ները Սողոմ ու Գոմոր քաղաքները .

Պ . Երկու հրեշտակ իրիկուան դէմ մտան
քաղաքը՝ Ղովտայ գրան առջևէն կանցնէին .
Ղովա տեսածին սէս՝ շատ աղաչմանքով ներս
հրամցուց զանոնք՝ երկու օտարական մարդ
կարծելով, ոտուրնին լուաց ու կերակուր
հանեց : Քիչ մը անցաւ, եկան քաղաքացիքը

կուզէին Ղովակէն ան օտարականները որ չար-
չարեն . Ղովա չտուաւ : Երբոր շատ նեղը
խաթեցին , ձեռքերնէն ազատելու համար՝
անոնց տեղը խոստացաւ տալու իրեն երկու
աղջիկները . բայց անոնք իրենց ուզածէն
եւ չէին կենար : Ան ատեն հրեշտակները
Ղովաը ներս քաշեցին , ու տանը դուռը կոր-
որնցընէլ աուին որ կրփնաբաւին ու չէին
գաներ : Ետքը Ղովայ հասկըցուցին հրեշ-
տակները իրենց ինչ բանի հաւար եկածնին ,
լսին որ իրեն նշանած փեսաներուն ալ խնա-
ցընէ որ մեկանը գան . բայց անոնք երբոր լսե-
ցին՝ ծիծաղեցան Ղովայ դիւրահաւանուէր
վրայ ու տեղերնէն չջարժեցան : Երբոր առ-
ւօտ եղաւ՝ առին Ղովաը , կինը ու երկու աղ-
ջիկները , քաղքէն դուրս հանեցին ու ապրա-
սրեցին որ չըլլայ թէ գառնան ետնին
նային , մեկ տեղ մըն ալ չկեցած շատակ լեռը
ելէն : Արևը ծագելուն պէս սկսաւ սաս-
տիկ կրակով խառնած ծծու մրէ անձրև գալ
Սոգոմ Գոմորայ վրայ : Ղովայ կինն ալ
Այ հրամանին գէմ ընելով ետին նայեցաւ
ու մեկէն աղէ արձան կարեցաւ : Ղովա վախ-
նալով որ չըլլայ թէ լեռն ալ հասնի կրակը ,
ուզեց որ մօտ քաղաքներուն մէկը փախչի .
հրեշտակներն ալ իրեն ուղեւուն համար հան-
տարին զինքը . տսով ազատ մնաց ան քաղա-
քը աս պատճէն , և անոր համար անունը
Սեգոմը ըսուեցաւ : Ահա ասանկով չորս
քաղաք մեկանը երկնքէ թափած կրակով
մոխիր դարձան իրենց մեղքերուն համար :

Հ . Ղովա Սեգոմը քաղաքը ճրջափ տուն
կեցաւ .

Պ. Խիստ քիչ . վն զի սրտին վախեն մեկէն անկէ ալ ելաւ գնաց մօտ տեղ այրի մը մէջ բնակեցաւ : Ղովա երկու որդիք ունեցաւ , Մովսէր և Ամոն . ասոնցմէ եղան Մովսէրացիք և Ամոնացիք : Հոս կըլմըննայ Ղովոսայ վրայ եղած պատմութիւնը :

Հ . Հայրն Աբրահամ ինչպէս խնայաւ Սոդոմայ այրիքը , ու անկէ ետքը ինչ ըրաւ .

Պ. Աստուծանցնայեցաւ գէտ ՚ի Սոդոմ գոմոր , տեսաւ որ ծուխը երկինքը պատեր էր՝ ցաւեցաւ : Ետքը ելաւ գնաց գէտ ՚ի հարաւ Գերարայ ըսուած տեղը , ու հոն Սառային համար ամէն հարցընողին՝ քոյրս է՝ կըսէր : Անոր համար Աբիմէլէք ան տեղին թագաւորը՝ Սառան իրեն կին աւնել ու շեցբայց Աճ տեսիլքով երեցաւ անոր ու ասորս պրբեց որ չգոչի Աբրահամին կնոջը : Ան ալ կանչեց Աբրահամը , գանգատեցաւ սուտ դուրցելուն վրայ , ու շատ պարզեներ տալով թողուց՝ որ ուր կուղեն երթան : Բայց երթալէն առաջ Աբրահամ աղօթք ըրաւ Աբիմէլէքայ համար ու աղատեց Այ տուած պատժէն , որ իրեն պատճառաւ Աբիմէլէքայ մարդիկներէն մէկու մ'ալ տղայ չէր ըլլար :

14.

Իսահակ :

Հ . Սառան որդի ունեցաւ .

Պ. Երբոր հասաւ Այ խոստացած ատենը՝ տղայ մը ունեցաւ և անունը դրաւ Իսահակ .

և կաթէն կորած օրը մեծ ուրախուի ըրաւ Աբրահամ :

Հ . Իսահակ Սառային հարազատ տղան ըլլալով , Իսմայէլին վնաս մը եղաւ .

Պ . Իսահակայ պառճառաւ Իսմայէլ ըսկըսաւ արհամարհուիլ՝ չէ թէ խորթ որդի ըլլալուն համար , հասրա որովհետև Իսահակին հետ կիյնար , անոր գէշ օրինակ կուտար . անոր համար Սառան ուզեց որ հեռացընէ Իսմայէլը իր քովէն : Եւ թէպէտ Աբրահամ չէր ուզէր , բայց Աստուած իմացուց Աբրահամու որ Սառային ուզածը աղէկ բան է : Ան ատենը մէկէն Աբրահամ հնազանդեցաւ Սառային խօսքին : Ելաւ առաւօտանց հաց ու ջուր տուաւ Ագարայ , տղան ալ հետը ճամբայ դրաւ : Ագար ճամբան կորսնցուցած՝ երգման ջրհորին քովերը կը պարտէր , ինչուան ջուրն ալ հասաւ , ինքն ալ յուսահատած՝ թողուց տղան մէկ ծառի մը ասակ , ու դնաց քիչ մը հեռու նստեցաւ՝ որ չտեսնէ տղուն մեռնիլը : Աստուած լսեց տղուն լալու ձայնը , ու ջուր բղխեցուց ան տեղուանքէն , և խոստացաւ ալ որ մեծ աղբընէ Իսմայէլը :

Հ . Երգման ջրհորը ո՛ւր տեղուանք կիյնայ .

Պ . Գերարայ Փղաօսցոց երկիրը՝ Աբիմեէլէքին թագաւորութեան տակը : Աս ջրհորը Աբրահամ բացեր էր ու Աբիմեէլէքին մարդիկը առեր էին ձեռքէն : Երբոր Աբիմեէլէք նորէն դաշինք դրաւ Աբրահամու հետ , աս ջրհորն ալ նորէն կտառաւ , անմեղադիր ընկելով ինքզինքը թէ չէր խնայած : Աբրա-

համալ ծառեր անկեց ան ջրհորին քովերը,
ու հոն Աստուծոյ աղօթք կրնէր :

Հ. Աբրահամ Իսմայէլը դուրս ընկէն
ետեալ ուրիշ միշտ չքաշէց Իսահակայ սրտ
ճառաւը :

Պ. Երբոր բոլորովին հանգստութե՛ մէջ
կրկարժէր ինքզինքը՝ տեանկտով որ իր վրայ
կը կատարուի Այ խոստումը, յանկարծ մէկ
գիշեր մը մեծ ցաւալի գխուամ մը հանդի-
պեցաւ : Հրաման տուաւ Աստուած Աբրա-
համու որ Իսահակը ողջակէզ ընէ : Աբրահամ
բնաւ շտարակուսեցաւ . առաւօսը կանուխ
էլաւ, փայտ կտարեց, էշով մը և երկու ծա-
ռայով ճամբայ ելաւ գնաց իրեք օր հեռու .
ու երբոր տեսաւ Աստուծոյ ցրցուցած տեղը,
ծառաները թողուց, փայտերը շաղկեցուց Բ-
սահակայ կանակը, ինքն ալ կրակ և դանակ
առաւ ու գնացին . տղան տարակուսած կը-
հարցընէր թէ ո՞ւր է ողջակէզ ընելու սջխա-
րը . Աստուած սպարաստած է՝ ըսաւ Աբրա-
համ : Երբոր հասան տեղը, կտակեց Իսա-
հակը, քաշեց դանակը, կուղէր մօրթեւ . կե-
ցիր, ըսաւ Աստուած . ու Սարեկայ ծառին
վրայէն կախուած սջխար մը ցցուց անոր
տեղը՝ որ ողջակէզ ըրաւ : Աստուած ալ
օրհնեց Աբրահամը ասանկ միամիտ հնազան-
դութե՛ր համար :

Սասնայի հանը, Իսահայի Իսրայիլից :

Հ. Ո՛ւր անդ է քանի՞ տարուան մեռաւ Սասնա :

Պ. Քեբրոնի մէջ Քանանացւոց երկիրը հարիւր քսանըկօթը տարուան :

Հ. Ո՛ւր թաղեցաւ Սասնա :

Պ. Քեբրոն Քանանացւոց երկիրը Մամբրէին գիմացը երկու այրին մեկուն մէջ, որն որ Աբրահամ գիմացի ազարակօղը մեկանդ դնեց չորս հարիւր ստուերի Սահաա քեասցիին աղուն Եփրոնին ձեռքէն : Աստուածաշունչը կանանց մէջէն միայն Սասնային տարիքը, մեռնիլը ու թաղուիլը կրչիշէ՝ եկեղեցւոյ օրինակ ըլլալուն համար . ինչպէս Իսահակ ալ Քրիստոսի օրինակ էր :

Հ. Իսահակ երբ կարդուեցաւ, և ինչպէս :

Պ. Սասնային մեռնելէն իրեք տարի ետքը : Տեսնելով Աբրահամ որ ինքն ալ ծերացած է՝ հարիւր քսասուն տարուան, կանչեց Եղիազարը՝ իրեն հաւասարիմ ծառան, ու երդում ընել տալով որ քեասցի կին չառնէ իրեն որդւոյն, ասոր ուղտով շատ ընծաներով, սակիէ արծըթէ զարդերով իրկեց որ երթայ իր հայրենիքը՝ Միջագետքէն Իսահակայ կին առնէ ու բերէ : Երբոր անիկայ տարակոյս կը հանէր թէ չգալու ըլլայ նէ՛ ինչ ընեմ. Աբրահամ հաստատուն յուսով ըսաւ, թէ Ա՛յ հրեշտակը կառաջնոր-

գէ քեզի . բայց թէ որ չգայ , աղատ ըլլաս
 երգումէդ : Գնաց Եղիազար՝ Նաբովոյ քաղ-
 քին գուրսի գին ջոհորին քովը նստաւ : Աղա-
 չեց Աստուծոյ որ երբ քաղքէն կուգան աղ-
 ջիկները սափորներով ջուր առնելու , որ
 աղջիկն որ ընտրուած է աս բանիս՝ Եղիա-
 զար թէ որ խմելու ջուր ուզէ անկէ՝ անի-
 կայ ինքիբեհն ուղտերուն ալ խոնջընէ : Աս բանս
 մտածելու ասեհն եկաւ Ռեբեկայ Աբրահա-
 մու եղբորը՝ Նաբովոյ աղուն Բաթուէլին
 աղջիկը , ու Եղիազարայ խօսք դրածին պէս
 բրաւ : Ան ասեհն Եղիազար հարցուց իմացաւ
 ո՞վ ըլլալը , ու հանեց ձեռուրները ոսկիէ
 տարանջաններ դրաւ , ականջներն ալ ոս-
 կիէ օղեր անցուց : Երբոր Աբրահան տեսաւ
 անոնք ու լսեց եղածը , եկաւ տուն հրաձ-
 ցուց . ուղտերուն խոտ տուաւ , իրենց ալ
 ռաուրնին լուաց ու կերակուր հանեց . բայց
 Եղիազար չուզէց ուտել ինչուան որ խօսքը
 չկատեն : Ետքը ստամեց եղած դիպուա-
 ծը . անոնք ալ Այբանն է աս ըսելով մէ-
 կէն հաւանեցան : Եղիազարն ալ ան ասեհը
 հանեց ոսկիէ արծրթէ ամաններ ու լոթեր
 և ընծայ տուաւ Բաթուէլի , Ռեբեկային մօրը ,
 Աբրահայ եղբորը ու իրեն , և ասանկով կե-
 բան խմեցին ու հանգչեցան : Առաւօտը մէ-
 կէն երթալ կուզէր Եղիազար , անոնք սափ-
 պեցին որ աստք օր ալ կենայ աղջիկը , ետքը
 խօսքը որոշելու համար Ռեբեկայի հարցու-
 ցին , և անոր ուղեւովը մէկէն բաժնուեցան
 գնացին Ռեբեկա և իր աղախինները ուղտե-
 րու վրայ նստած : Երբոր մտակցան Տեպեան

ջրհոր ըսուած տեղին, ան ասե՛նը խաճակ
եղեր դաշտին մէջ կըստարտէր. մէկզմէկ տե-
սան հեռուէն, և Ռեբեկա երբոր իմացաւ
թէ գէտ 'ի իրենց եկողը խաճակն է, վրան
լաթ առաւ՝ վար իջաւ, ու անանկ գնաց :
Ասանկով խաճակը երբ քառասուն տա-
րուան էր՝ իրեն կին առաւ Ռեբեկան ու մօ-
րը մահուան սուգն ալ սրտէն վարաւեցաւ :

16.

Աբրահամեւ ճահճ, և խահալայ աղօթող քաջ
անէնաւը :

Հ. խաճակայ կարգուէլէն ետքը Աբրա-
համ որչափ ասե՛ն ասրեցաւ .

Պ. Երեսունընչինգ տարի . և աս մի-
ջոցիս մէջ Բեաուրա անունով կին մը ա-
ռաւ և անկէ վեց որդի ալ ունեցաւ ծերա-
ցած ասե՛նը Այ մասնաւոր ինամքով, բայց
չթողուց անոնց որ խաճակայ հեւ իրեն
ճառանգ ըլլան. մեռնէլէն առաջ անոնց
մէյմէկ քիչ բան տուաւ ու ճամբեց : Ինքը
մեռաւ հարիւր եօթանասունընչինգ տա-
րուան, և խաճակ ու խամայէլ մէկտեղ թա-
ղեցին Սառային քովի այրին մէջ, Մամբրէի
կաղնի ծառին գիմացը :

Հ. խաճակ ո՛ւր կըքնակէր .

Պ. Քանանացւոց երկիրը Աբրահամու
կեցած տեղը, ինչուանորմեծ սովի մըստա-
ճառաւ ելաւ ճամբայ Եգիպտոս երթալու
համար : Բայց Աճ արդէլէց որ ան երկրէն

գուրս չելէ, որն որ իր հօրը խոստացեր էր
ու իրենց հուզէր տալ: Անոր համար դնաց
Գերարայ փղտացւոց Աբիմէլէք Թագաւո-
րին քով. հոն երկար ասեն կենալէն ետքը՝
դարձաւ նորէն առջի տեղը:

Հ. Իսահակ փղտացւոց երկրին մէջ ինչ
նեղուի քաշեց.

Պ. Առջի նեղուիը եղաւ իր սրտագողը որ
քաշեց Ռեբեկայի համար. ուստի ամէն
հարցընողին քոյրս է կրտէր. բայց Աբիմէլէք
դիպուածով իմացաւ ու նեղացաւ Իսահա-
կայ երկրիս խօսքին վրայ, և ապապրեց
ամէնուն որ դիանան, ու չըլլայ թէ փասս մը
հասցընեն անոնց: Ասեն անցաւ՝ շատ հա-
րատացաւ Իսահակ, սկսան նախանձիլ Փղը-
տացիները, ու Իսահակայ հօրը փորած ջրը-
հորները ամէնն ալ լեցուցին. ետքը Իսահակ
նորէն բացաւ: Աս բաներուս համար Աբի-
մէլէք ալ Իսահակայ ըսաւ որ ելէ երթայ ան
տեղէն:

Հ. Իսահակ Աբիմէլէքին քովէն երթալէն
ետե ինչ մասնաւոր գործք ունի յիշուած.

Պ. Գերարայի ձորին մէջ ուր որ կրնա-
կեր, ջրհոր մը բացաւ ինքիրեն բխած ջրոյ,
ու անուը դրաւ Ջրհոր, անոր համար որ
Գերարայի հովիւները կռիւ կրնէին՝ ան ջրը-
հորը մերն է ըսելով: Ուրիշ ջրհոր մըն ալ
բացաւ, անուանեց Թշախ-ի-ն նորէն կռիւ
ընէնուն համար. ուրիշ մըն ալ բացաւ ու
անուանեց Ադուր-ի-ն, որուն համար
կռիւ չեղաւ: Ետքը դնաց Երգման ջրհորին
քով. հոն Այ սեղան շինեց, զո՛հ ըրաւ, ու

օրհնուեցաւ Աստուծմէ : Հոն ալ ջրհոր մը
փորեց ու ջուր չելլալուն համար անունը
ԵՐԻՄԻԱ գրաւ : Աս ատեններս եկաւ իրեն
քով Արիմեէք թագաւորը, Ոքոզաթ ու Փի-
քոզ իրեն իշխաններով մեկտեղ գաշինք դնե-
լու : Իսահակ անոնց սեղան ըրաւ ու մեկ-
տեղ բարեկամուէ ուխտ ըրին գնացին :

17.

Յ-ի-բ . Ե-ս-ս :

Հ . Իսահակ կարգուելուն պէս աղայ
ունեցաւ .

Պ . Ռեբեկա ամուլ ըլլալուն համար քսան
ատրի ետքը աղաչելով Աստուծմէ երկու-
րեակ աղտք ունեցաւ . որոնք երկու աղդ-
կընչանակէին ու մեծը պղտիկին պիտի ծա-
ռայէր : Եսաւ էր մեծը՝ մաղոս թխագոյն և
բնուիւր խիստ, և պղտիկը Յակոբ՝ հեղահոգի :

Հ . Եսաւայ ու Յակոբայ բնաւորուինին
նչ օգուտ կամ ինաս հասուցին իրենց .

Պ . Եսաւ տաքդուխ կարիճ մը ըլլալով,
անգրանկուէն և հօրը օրհնութէն զրկուե-
ցաւ . Յակոբ հանգարտ մտածող ընտանի
բարք ունենալուն՝ ամէն բանի մէջ յաջողուի
գտաւ :

Հ . Եսաւ ինչպէս իր անգրանկութիւնը
կորսընցուց .

Պ . Մէկ օր մը Յակոբ ոսպէ ապուրեփեր
էր . Եսաւ սաստիկ անօթի դաշտէն դարձած
տեսաւ, ուզեց : Յակոբ ալ ըսաւ . Թէ որ

անգրանկուիդ ինծի տաս, կեր: Եսաւ մէկէն
առանց առաջը ետեր մտածելու, Անգրան-
կուէն ինչ կէքէ՝ քեզի ըլլայ, ըսաւ: Յակօբ
երգում ուղեց: Եսաւ մէկէն երգում ալ
ըսաւ ու նստաւ կերաւ խմեց ու գնաց: Ա-
նոր համար Եսաւ Եզով ըսուեցաւ:

Հ. Իսահակ հաւանեցաւ Յակօբայ ու
Եսաւայ ըրած անգրանկուէ փոփոխուէր.

Պ. Ինքը ջիւանաւում անգրանկուէ օրհ-
նուին ալ Յակօբայ տուաւ. վասն զի Եսաւ
որսորդ ըլլաւում երբեմն երբեմն աղէկ որսեր
կրնէր ու կրկերցրնէր հօրը. անոր համար
Իսահակն ալ Եսաւը կրտիրէր: Իսկ Ռեբեկա
մայրերնին ալ Յակօբը կրտիրէր: Իսահակ երբ-
որ շատ ծերացաւ՝ ուղեց որ Եսաւը օրհնէ.
կանչեց ըսաւ որ երթայ մէկ աղէկ որս մը ընէ
էփէ ու բերէ, որ ինքն ուտէ ու ետքի օրհնու-
թիւր տայ իրեն: Մէկէն որսաւու գնաց Եսաւ:
Իմացաւ բանը Ռեբեկա. խրկեց Յակօբը՝ որ
շուտ մը դաշտէն երկու գիրուկ ուլ բերէ,
որ ինքը էփէ ու տայ իրեն որ տանի ու օրհ-
նութիւնը ինքն առնէ: Յակօբ սկսաւ վախ-
նալ թէ չըլլայ որ իմացուի ու ինքը անէծք
առնէ օրհնութեան տեղը. մայրը: Իմ վրաս
ըլլայ, ըսաւ, անէծքը, դու խօսքիս մասիկ
ըրէ: Երբոր գնաց բերաւ. Ռեբեկա է-
փեց շուտ մը. Եսաւայ նոր զգեստն որ իր
քովը պահէր էր անոր հագցուց. ու ընն
մորթն ալ թնկրուն ու վզին վրայ յարմար-
ցուց, ձեռքը տուաւ կերակուրը որ տանի:
Իսահակ ձայնը լսածին պէս սկսաւ տարա-
կուսիլ, հարցրնէլ զարմանաւում թէ ինչ շուտ

բերաւ . քովը կանչեց . ձեռքերն երբ բռնեց նայեցաւ . մինակ ձայնը ճանչցաւ թէ Յակոբինն էր . բայց երբոր մտեցաւ՝ Եսաւայ լաւ թերուն հօտը տաւաւ, ու առանց տարակուսի անդրանկուէ օրհնու թիւնը տուաւ՝ շատ խոր հըրդաւոր խօսքերով . և թէ եղբօրը վրայ իշխէ : Ասանկով ելաւ գնաց Յակոբ : Ետեկն Եսաւ ալ բերաւ իրեն բանած որոր . սօքանիս վրայ խիստ զարմացաւ Իսահակ , հարցուց , խնայաւ , բայց Աստուծոյ մասնաւոր խնամքովը՝ որով արդարացի խաբէու թիւնը առաջ գնաց , առած օրհնու թիւնը ալ աւելի հաստատեց : Ան ատենը ակննելով Եսաւ որ անդրանկու թեան հետ օրհնու թիւնն ալ կորսընցուց , սկսաւ լալ ու խնդրել որ զինքն ալ օրհնէ : Իսահակ չուզեց օրհնել . երբոր խիստ շատ թախանձեց՝ ան ատենը մէկ քանի խօսք ալ իրեն ըսաւ :

Հ . Եսաւ երկու անգամ խաբուելուն համար Յակոբին բան մը ըրաւ .

Պ . Սաստիկ ոխ պահեց ու կրօնասէր Իսահակայ մահուանը՝ որ ինքն ալ Յակոբը մեռցրնէ :

18.

Յ-Ի-Բ-ոյ երթ-ուլ Լ-Բ-ան-ոյ +-ով :

Հ . Յակոբ անդանկուէ օրհնու թիւնը անելէն ետքը Եսաւայ հետ ինչպէս վարուեցաւ .

Պ . Ռերեկա խնամալով Եսաւայ միտքը՝

ուզեց Յակոբը հեռացընել: Եւ որովհետեւ
Եսաւ երկու կին առեր էր քետացի և խևացի,
որոնք շատ նեղութիւն կուտային իրեն ու
Խաւահայ, սա պատրուակաւ գնաց ազա-
ջեց Խաւահայ որ Յակոբ երթայ Միջա-
գետք Խառան, ու հոն կարդուի: Յակոբն
աւյորդորեց որ երթայ Լաբանայ իրեն եզ-
բորը քով հեռանայ Եսաւէն: Ան ատեն Խ-
աւահայ կանչեց Յակոբը, որհնեց նորէն՝ ու
Խառան խրկեց:

Հ. Եսաւ երբոր լսեց Յակոբայ Խառան
երթալը՝ ինչ ըրաւ .

Պ. Իմացաւ որ իր ծնողքը չեն ուզեր քա-
նանացոց հեռ խնամութիւն ընել, գնաց նոր
կին մ' ալ առաւ Իսմայէլի մէկ ազջիկը:

Հ. Յակոբայ Խառան երթալու ատեն նոր
բան մը հանդիպեցաւ .

Պ. Ճամբան գիշերը վրայ հասնելով, առաւ-
քար մը իրեն բարձ ըրաւ ու պառկեցաւ:
Բնոյն մէջ կրակոսներ սանդուխ մը կեցու-
ցած գեանէն ինչուան երկինք, որուն վրայ
հրեշտակները կելէին ու կիջնէին . ծայրն
ալ Աստուած կեցած՝ Աբրահամու ըրած
խոստմունքները կը հաստատուէր: Աջացաւ
Յակոբ, ու ելաւ ան բարձ ըրած քարը անկեց՝
ձէթով օծեց . ու ան տեղին անունը Բէթէլ
այսինքն Տոն Արարիչ, զրաւ . և թէ որ ողջ
դառնայ, ամէն ունեցածէն տասանորդ տալ
խոստացաւ:

Հ. Յակոբ ինչ անսակ մարդասիրութիւն
գտաւ Լաբանէն .

Պ. Երբոր Խառանին զխնաց ջրհորի մը

քով մտակցաւ Յակոբ, տեսաւ հոն հովիւներ
որ կրտսպանէին ջրհորին բերնին քարք վերցը-
նելու, ոչխարները խնցրնելու համար. երբ-
որ սկսաւ հարցնել անոնց, Ռաբէլ Ա. ար-
բանայ աղջիկը վրայ հասաւ հորը ոչխարնե-
րով. Յակոբ վերցուց քարք ու խնցուց անոր
ոչխարներուն, ետքը պագտուեցաւ ու լա-
ցաւ: Գնաց Ռաբէլ պատմեց հորը, ան ալ
եկաւ տուն հրամցուց: Երբոր խնացաւ որ
կուզէ երկար առեն հոն կենալ, ամիսի մը
չափ անցնելէն ետեւ, « Չեմ ուզեր որ, ըսաւ
Արբան, առանց վարձուց աշխատիս ինձի.
որովհետեւ աղքատեանս ես »: Յակոբ ալ եօթը
տարուան աշխատանքին փոխարէն Ռաբէլը
ուզեց: Հասաւ օրը, հարանիք ըրին, ու գիշե-
րը մութակող Ախա մէկալ մեծ աղջիկը տուեր
էր. և ջրէլիս իր աղախինն ալ անոր նա-
միշտ: Առաւօտանց երբոր խնացուեցաւ
խարէութիւնը, Արբան սուս պատճառ բե-
րաւ թէ ան երկիրը սովորութիւն չէ կար-
գել աղախիք մեծէն առաջ: Աւստի եօթը
տարի ալ անոր համար ծառայեց՝ ու առաւ-
որուն նամիշտ ալ տուաւ Բաղան:

Հ. Յակոբ քանի՜ աղայ ունեցաւ խառանի
մէջ.

Գ. Տասներմէկ մանչ, մէկ աղջիկ: Որով-
հետեւ Ախա այնչափ սիրելի չէր Յակոբայ, Առ-
աւաւած գլխացաւ անոր ու առաւ վեց մանչ.
Ռաբէն, Շմառն, Ղեի, Յուդա, Իսաքար
և Չարոզոն. մէկ աղջիկ մ' ալ Գինա: Ռա-
բէլն ալ շատ տրամած ըլլալով իր ամուլը
ըլուն համար, Բաղա աղախինը տուաւ Յա-

կորայ, ուսկից ունեցաւ Գանը ու Նեփ-
թաղիսը: Ահան ալ իր աղափիինը առւաւ և
ունեցաւ Գաղը ու Ասերը: Ամենէն ետ-
քը լսելով Աստուած Ռաբէլին աղաչանքին,
առւաւ իրեն Յովսէփը:

19.

Յ-Ի-Բ-այ, Լ-Բ-անէն Բ-Ժ-ն-Ի-Լ-Ը :

Հ. Յակոբ Լարանայ քով բոլոր սրչափ
ասեն կեցաւ .

Պ. Քսան տարի . վն զի տասնըչորս տա-
րիէն Ռաբէլը առնելէն ետքը երբոր Յակոբ
ուզեց երթալ, Լարան ըսաւ թէ « Քու
դալովդ իմ առնա օրհնուեցաւ, կեցիր
հոս և ինչ վարձք կուզես քեզի տամ » :
Ան ասենը Յակոբ . « Այսչափ ասեն բան
մը ինձի չես առած, ըսաւ, թէ որ կուզես
կենամ, միայն հօտին մէջէն ամէն խաւաւափկ
ոջխարնէրը միշտ խնս ըլլան » : Հաւանեցաւ
Լարան ու մէկէն զտակց բոլոր ճերմակներն,
ու իրեն աղօցը ձեռքը առւաւ որ իրեք օրուան
ճամբայ հեռու արածէն որ Յակոբ ճերմակ
ներուն ծնած խաւաւափկներն ալ չառնէ :
Տեսաւ Յակոբ որ Լարան խարդախութիւն
կրնէ, ինքն ալ Աստուծոյ խրատուած, ծա-
ռի դալար ճիւղեր առաւ, որոնց վրայի կա-
նաչները ակզ ակզ կեղևելով գոյնզգոյն կերև-
նար . անոնք ոջխարնէրը ջուր խմելու ասեն
աւազանին մէջ կը դնէր որ ակունելով կը-
խրաէին ու խաւաւափկ կը ծնանէին, ինքն ալ

անտէք բոլոր մէկդի կըզատէր . և վեց տարուան մէջ Յակոբ այնչափ հարստացաւ՝ որ Լարան սկսաւ վրան նախանձիլ ու ծուռ նայիլ : Օր մը Յակոբ խնացուց Ախային ու Ռաբէլին իրենց հօրը արտունջը , և թէ ինքք աեսիցք աեսեր է որ Աստուած՝ « Ելիւր ասկէ գնա քու հօրդ տունը կըսէ » : Մէկէն հաւնեցան անտէք ալ . ուստի առաւ ընտանիքը , տղաքը , ու ամէն ունեցածը՝ ելաւ ճամբայ : Ռաբէլն ալ իր հօրը կուռքերը գողցաւ մէկ տեղ առաւ :

Հ . Լարան ինչպէս ձայն չհանեց Յակոբայ իրմէ բաժնուելուն վայ .

Պ . Ան ատենը Լարան ուրիշ տեղ սշխար խուզելու գացած ըլլալով՝ իրեք օրէն ետեխնացաւ , և սաստիկ նեղացաւ , ու իրեն մարդիկներովը եօթը օրուան ճամբայ ինչուան Գաղտադու լեռը ետեւէն վազեց հասաւ : Գիշերը Աստուած երևցաւ Լարանու , և ապրասպրեց որ ղէն մը չհասցընէ Յակոբայ . անոր համար մինակ յանդիմանեց գաղտուկ փախչելը , և կուռքերը գողնալը : Յակոբ գաղտուկ փախչելուն համար « Ախայայ , ըսաւ , որ չըլլայ թէ արդէ լին ղիս . իսկ գողութիւնը թէ որ մէկը բրած է՝ պատժուի ըսաւ » : Լարան շատ փրնտուեց չգտաւ . վասն զի Ռաբէլ ուղտին կանակը դրեր ու վրան նստեր էր : Ան ատենը աղէկ մը գանդատեցաւ Յակոբ՝ որ այնչափ իրեն տունը աշխատեր է սիրով , ու մէկ պարգև մը չէ ընդունած , և հիմայ ալ ղինքը գող բռնելու համար բոլոր տակնուվայ ըրաւ : Ամբցաւ Լարան և ու-

զէց որ դաջինք դնեն մէջերնին . քար մը արնէ
կէց Յակոբ, և ուրիշ շատ քարեր ալ գիղկելով
սղաթի լեռ մը շինեցին . վրան նստան կերան
խմեցին , և անունը դրին Բշար Վայոփեան :
Ետքը սիրով ստադաուելով մէկ մէկէ բաժ-
նուեցան :

20.

Յօդ Գ. Բանան հասնիլը :

Հ . Յակոբայ Արբանէն բաժնուելէն ետքը
ինչ նոր բան հանգիսեցաւ .

Պ . Ճամբան մէկ օր մը սկսաւ իր առջին
շարուած հրեշտակներու բանակ , որ եկեր
էին սաշտապանելու իրեն . բայց ինքը գիտ-
նալով որ պէտք չէ անհող կենալ , « Աս-
տուած կողմէ ըսելով » , մարդ խրկեց Սէիր
ըսուած տեղը իր Եսաւ եղբայրը բարևելու :
Ետքը լսեց որ չորս հարիւր հողով Եսաւ
իրեն առջևը կելէ , շատ վախցաւ . իր մար-
դիկը երկու բանակ բաժնեց որպէս զի թէ
որ մէկը ջարդուի՝ դոնէ մէկտալը ազատի . և
շատ ընծաներ ալ խումբ խումբ առջևէն
խրկեց՝ որ « Յակոբայ քու ծառայիդ է »
ըսելով տան . ինքն ալ սկսաւ Այ աղօթել
որ վրկէ զինքը : Ան գիշերը Այ հրեշտակը
իրեն հետ կուուեցաւ , ու յաղթուելուն հա-
մար ազգրին ասակի ջիզը թմրեցուց օր ցաւէն
թողու . ետքը ըսաւ ալ թէ թող ել թամ . բայց
Յակոբ ինչուան որ չօրհնեց զինքը չթողուց .
ան ասեն հրեշտակը անունն ալ փոխեց Բ-
շարիլ ըստ Արտաճառի գրաւ : Յակոբ ալ ան

տեղւոյն անունը Տէրի Աստուծոյ բառ :

Հ . Յակոբ Աստուայ ինչպէս հանդիպեցաւ .

Պ . Երբոր մտիկցաւ՝ իրեք բաժնեց իր բնասանիքը . առաջ երկու աղանիսնը իրենց աղոցմով, Ղիան իրեններովը, ետեւն Ռաֆէլը և Յովսէփը . և ինքն անոնցմէ առաջ անցաւ՝ եօթն անգամ երկրաւարագութի ըրաւ, անոնք ալ մէկտեղ, ինչուան Աստուայ դուժը շարժեցաւ ու լալով պագտուեցաւ : Ասաւ ուզեց մէկտեղ երթալ կամ իրեն մարդիկներէն օգնական աալ . Յակոբ շնորհակալ եղաւ . մանր աղաքը՝ անասունները պատճառ բերելով, կամաց կամաց կըհասնիմ ըսաւ ինչուան Սէիր :

Հ . Յակոբ Միջագետէն դառնալէն ետե ուր դնաց բնակեցաւ, և ինչ նոր վիշա քաշեց .

Պ . Սիկիմ քաղաքին դիմացը բնակեցաւ, Սիւքեմայ հօրմէն Ամովրէն հարիւր ոչխարի գնելով խորան ըսուած տեղը : Օր մը Ղինա իր աղջիկը գնաց քաղաքը պաշտելու . Սիւքեմ Ամովր իշխանին աղան տեսաւ աղջիկը ու չարչրիկեց, և իրեն կնիկ առնելու մտքով առաւ տուն տարաւ : Հայրը Ամովր եկաւ Յակոբայ հետ խօսեցաւ՝ յորդորելով որ իրենք ալ միշտ հոն կենան և ուրիշ հետ խնամութի ալ ընեն : Սիւքեմն ալ կըխոստանար ինչ օժիտ որ ուզեն : Բայց Յակոբ ու աղաքը շատ նեղացած ըլլալով, Էմաւսն ու Ղէի որ մէկ մօրէ Ղինաին եղբայրներն էին՝ խարդախու-

Թեամբ ըսին թէ տէտք է որ մեզի պէս թըլ-
փատիք որ սա բանիդ հաւանինք : Անոնք
յանձն առին , գնացին քաղաքացիներն ալ
յորդորեցին ըսելով թէ հարուստ են , բոլոր
ունեցածներն ալ մերը կըլլայ . ասանկով ա-
մէնքն ալ թըլփատուեցան : Արքայդ որը որ
ամէնքը ջախ մէջ էին , Շմաւոն ու Ղևի
սրբով մասն քաղաքը ջարդեցին ամէն էրիկ
մարդիկը , բոլոր քաղաքն ալ կողոպտեցին ,
կ'ները անասուններն ալ առին Գինա քու-
րերնին ալ մեկտեղ ու դարձան : Շատ նե-
ղացաւ Յակոբ վրանին , վախցաւ ալ որ չըլ-
լայ թէ քանանացիները ու փերեզացիները
դան զիրենք ջարդեն սա բանիս համար :

Ը . Յակոբ Միջագետքէն դառնալէն ետքը
չգնաց հօրը աունը .

Պ . Սիկիմին բնակիչները ջարդելէն ետե ,
Աստուած հրաման առաւ որ Բեթէլ եր-
թայ ու հոն Այ սեղան շինէ , ուր որ առաջ
սանդուխը աեսեր էր : Ան առնել Յակոբ
իրեն հեա եղողներուն ասըստընց որ քովեր-
նին եղած կռասաղաշտական բաները թողուն
որոնք ամէնն ալ Սիկիմ բեեկնի ծառին տա-
կը թաղեց , ու գնաց Բեթէլ : Հոն մեռաւ
Գերսոյն Ռեբեկայի դայեակը , անոր հա-
մար հոն տեղի կազնիին անունը կոչելի « ֆ »
դրաւ : Անկէ ելաւ և երբոր Ափրաթա չի
Բեթղէհէմ կրմանէր , Ռայքէլ Բենիամինը
ծնանկաւ առնն մեռաւ , հոն ճարտուն վրայ
թաղուեցաւ . Յակոբ ալ արձան կանգնեց
որ կրտսի Ալիմն շէրֆն Ռոսէլայ : Ետքն
և կաւ վերքոն հօրը աունը ուր որ Արրա-

Համ ալ կեցեր էր , ու գտաւ դեռ ողջ զԻսահակ , որ մեռաւ հարիւր ութսուն տարուան , և Յակոբ Եսաւ մեկտեղ թաղեցին .
Յակոբ 'հին բնակեցաւ անկէ ետև . բայց Եսաւ ելաւ Սէիր գնաց ' ան ակզը երկուքին ալ չօգտելուն համար :

21.

Յ-Էնէ՛ք , ի՛նչ է՛ք ի՛նչ :

Հ . Յակոբայ տասուերիւ տղաքը միշտ մեկտեղ կեցան .

Պ . Թէ որ նախանձու կիրքը չըլար ' խազազ մեկտեղ կրկենացին : Բայց որովհետև հայրերնին Յովսէփը աւելի կրտիրէր , ինչուան իրեն համար ազու որ ծաղկեայ լաթ ալ շինէր էր : Աս պատճառ եղաւ իրենց մեկ-մեկէ բաժնուելու և շատնելու թիւններ քաշելու :

Հ . Յակոբայ Յովսէփը ուրիշներէն աւելի սիրելը անկարգ բան չէր .

Պ . Չէ , վն զի աղէկութեանը համար կրտիրէր , ինչպէս Աստուած ալ խնացուց ասանկ երազով մը . կրտեանէր Յովսէփ գաշախ մը մէջ որ ինքը եղբայրներուն հետ ցորենի որայ կրկապէին , և իր կտպած որան ելաւ կայնեցաւ ու մեկաշնոնցը անոր երկրպագութիւն կրնէին : Մէկ ուրիշ մըն ալ տեսաւ որ արեր լուսնկան ու ասանդմկ ասաղերը իրեն երկրպագութիւն կրնէին : Երբ որ լսեցին ասոնք եղբայրները , խմանալով

երազին միտքը, այնչափ վառուեցաւ նա-
խանձնին, որ կարելի ըլլար մեռցնել կու-
ղէին :

Հ. Յովսէփայ Եղբարքը սաստիկ նախան-
ձելով իրեն վրայ ինչ կրցան ընել :

Պ. Անդամ մը Եղբայրները գնացեր էին
Սիւքեմ ոչխարները արածելու . շատ օրեր
անցնելէն ետեւ, Յակոբ խրկեց Յովսէփը
աւետելու թէ ինչպէս են. Յովսէփ մտորած
ստորակելու ատեն, հանգիստեցաւ ճամբան
մէկու մը որ ըսաւ թէ Գովթայիմ գացած
են : Գնաց Յովսէփ գտաւ Եղբայրները . եր-
բոր աւսան անոնք հեռուէն, խորհուրդ
ըրին որ սղաննեն . բայց Ռուբէն ապրեցը-
նել ուղելով ըսաւ թէ արիւն չընեն, հապա-
ջը հորեր կային անակզուանքը՝ անոնց մէ-
կուն մէջը ձգեն : Երբոր իրենք նստեր կերա-
կուր կուտէին՝ աւսան հեռուէն որ Գաղտա-
ղէն խամայէլացի վաճառականներ Եգիպտոս
կերթան, աւսակ աւսակ խուճկեր կըտանին,
Յուդային խորհրդով հանեցին հորէն ծա-
խեցին անոնց քսան դահեկանի : Ռուբէն
գնաց որ հորէն հանէ փախցնէ ու չքանե-
լով սկսաւ յուսահատած լալ : Ետքը անոր
լաթը այծի արիւնի մէջ թաթխած տարին
Յակոբայ ըսելով թէ ասանկ գտանք որ գա-
ղանը պատուեր էր : Յակոբ երբոր աւսաւ՝
պատուեց իր լաթերը, արամուծեան լաթ
հագաւ ու կուլար, կողբար . եկան քովը
ամէն ընտանիքը՝ ճար չեղաւ մխիթարելու,
ցաւէս կըմեռնիմ կըսեր :

Յուշե՛ք, քանի որ երբեք :

Հ . Իսմայէլացիները ինչ ըրին Յովսէփը .

Պ . Տարին Եդիպտոս ծախեցին Պետափրէս փարաւոն թագաւորին դաճապեալին : Պետափրէս տեսնելով որ Յովսէփ խելացի ու հաւատարիմ տանրեօթը տարուան կարիճ մըն է , և Ղստուած ալ անոր հեան է , իր տանը ամէն կտուալարուծիւնը անոր յանձնեց :

Հ . Ո՞րչափ տակն կեցաւ Յովսէփ Պետափրէս դաճապեալին քով .

Պ . Բիչ տակն . վասն զի Պետափրէսի կինը անոր վրայ աչք ձգելով կուզէր որ իրեն հետ անկարգութիւն ընէ . բայց անիկայ մտիկ չէր ընէր : Օր մը մինակ գտնելով երբ որ քղանցքէն բռնած նեղը կը ձգէր , Յովսէփ հանեց վերարկուն փախաւ . կինն ալ սկսաւ կանչուըռաւել՝ յանցանքը անոր վրայ ձգելով . ու երբոր Պետափրէս տուն գարձաւ , սուտերով հաւանեցուց որ Յովսէփը անկարգութիւն կուզէր ընել , ու երբոր ևս կանչուըռաւեցի , կըսէ , փախաւ քովէս : Բարկացաւ դաճապեալը . ու բանտ դրաւ Յովսէփը :

Հ . Բանտին մէջ Յովսէփայ ինչ նոր բան հանդիպեցաւ .

Պ . Ան օրերը լծիբին տակաւապեալը ու մատակարարը Յովսէփին կեցած բանտը դը-

բոււնացան . և մէկ գիշեր մը երկուքն ալ երազ
տեսան : Արկրորդ օրը Յովսէփ անանկըով
որ երեւոնին կախեր են՝ խնայաւ պատճա-
ռը , հարցուց երազը ու ըսաւ , թէ Աստու-
ծով ևս կըմեկնեմ երազնիդ : Ան ասեն
պատմեց տակառապեալը . « Տեսայ որ , ըսաւ ,
որթ մը իրէք կանաչ ճիւղ և խաղող ունէր ,
ևս ճղմելով դաւաթիմէջ փարաւոնին տաւ » :
« Իրէք օրէն , ըսաւ Յովսէփ , առջի պաշտօնիդ
պիտի հասնիս՝ որ դաւաթով գինին փարա-
ւոնին տաս » : Այլ աղաչեց որ երբոր ազատի ,
յիշէ ղներն ալ փարաւոնին առջև որ յան-
ցանք չունի : Մատակարարն ալ տեսնելով
որ աղէկ մեկնեց . « Աս ալ տեսայ որ , ըսաւ ,
իրէք աղնիւ ալիւրի տման դըխուս վրայ դրած
էր . վրայինին մէջը աղնիւ թփրական կե-
րակուրներ՝ որ թըռչունները կուտէին մե-
ջէն » : Պատասխանեց Յովսէփ . « Իրէք օրէն
փարաւոն դըւխտ կտրէ պիտի և մար-
մինդ ալ փայտէ պիտի կախէ որ թռչուն-
ները դան ուտեն » : Իրէք օրէն փարաւոնին
ծննդեան օրը ըլլալով , կատարուեցաւ
Յովսէփայ ըսածը . բայց տակառապեալ
մտացաւ Յովսէփը յիշելու :

Հ . Յովսէփ ինչպէս բանակէն խալսե-
ցաւ .

Պ . Արկու տարի բանալը կենալէն ետքը ,
փարաւոն երազ մը տեսաւ . գեաթին մէջէն
եօթը գիրուկ կովեր ելան կարածէին , ու-
րիշ եօթը վատոյժ կովեր ալ ելան , արա-
ծելու ասեն առջինները կլէցին : Արթըն-
ցաւ և նորէն բնացաւ , տեսաւ որ մէկ ար-

մասէն եօթը պարարտ ցորենի հասկեր ելան, ետքը եօթն ալ ցամաք հասկեր ելան ու առջինները կլլեցին: Փարաւոն տակնու վրայ եղած չէր գանէր մէկը՝ որ տեղն ՚ի տեղը մեկնէ: յանկարծ տակառապեալին միտքը ինկաւ, սրտամեց թագաւորին Յովսէփայ համար: Ան տակնը նոր լաթեր հագուցին ու Փարաւոնին առջև հանեցին, մեկնեց թէ երկու երազն ալ մէկ բան կրցուցնեն: «Եօթը գէր կովերը և եօթը պարարտ ցորենի հասկերը եօթը առատութեան տարի է ըսաւ՝ որ գալու է, և եօթը վատոյժ կովերը և եօթը ցամքած հասկերը եօթը սովի տարիներ են որ ետևէն յաջորդելու են: Աստուած աս բանս ցցուց ըսաւ՝ որ մէկ խելացի մարդ մը գանես, որ առատութեան տակնը ժողովէ ցորենները ու պահէ սովին տակնին համար»: Ասով չէ թէ միայն բանտէն խալըսեցաւ, հարցա նաև Փարաւոնին հրամանով իրեն երկրորդը եղաւ. վասն զի «Քեզմէ խելացի մարդ չկայ, ըսաւ Փարաւոն, որ աս կարգերը ընէ»: Ասկէ ետքը վառաւոր հագուստով, մասնիով, սակի զարդերով թագաւորական կառքի մէջ նստուցին, ու բոլոր քաղաքը պաշտօնացին՝ որ ամենքը խնայան թէ Եգիպտոսի տէրն է: Ետքը Յովսէփայ անունը փամփթումբանէ դրաւ և Արեգ քաղաքին քրմին աղջիկը իրեն կին առաւ, ուսկից երկու տղայ ունեցաւ՝ Մանասէ, Եփրեմ: Աս տակն Յովսէփէ երեսուն տարուան էր:

Յ-Է-Է-Է-Է-Է Դ-Դ-Դ-Դ-Դ-Դ-Դ-Դ-Դ-Դ :

Հ . Յովսէփի դատաւոր ըլլալով ինչ օգուտ
ըրաւ .

Պ . Բոլոր ժողովրդեան մահուանէ ազա-
տելու պատճառ եղաւ , և թագաւորին ալ
մեծ հարստութեան . վասն զի ամէն գեախն
ներք՝ անասունները նաև մարդիկը ստակի
տեղ գերի առաւ , որ անկէ ետև սկսան ա-
մէնքը գեախն բանիլ գերիի տէս , ու վաս-
տակածնուն մէկ մասը թագաւորին տալ :

Հ . Եգիպտոսի սովը ինչուան ո՛ր տարա-
ծուեցաւ .

Պ . Ամէն ան կողմի աշխարհքները , ին-
չուան Յակոբ ալ սովէն նեղացած խրկեց
տղաքը Եգիպտոս՝ որ ցորեն գնեն :

Հ . Յովսէփայ եղբարքը կրբոր առջի ան-
գամ՝ տեանուեցան իրեն , ինչպէս վարուե-
ցաւ անոնց հետ .

Պ . Երբոր անոնք եկան առջևը ինկան
երկրպագութիւն ըրին , մէկէն ճանչցաւ .
բայց չճանչնալ ձեացուց , ու սկսաւ բարկա-
նալ « Արտես էք ըսաւ , եկեր էք որ քաղաքս
աչքէ անցընէք ու մասնիչ ըլլաք » : Անոնք
« Չէ , կրսէին , ցորեն գնելու եկեր ենք » . ու
կրպատմէին ով ըլլալնին . և թէ տասուեր-
կու եղբարք են , պզտիկը հօրերնուն քոյն է ,
և մէկը մեռած է : Յովսէփի աս բաներս ըսե-
լով , ալ աւելի վրայ տուաւ թէ « Գէշ մարդիկ

էք . թէ չէ , ըսաւ , ձեզմէ մէկը խրկեցէք որ
ձեր սղտի եղբայրը բերէ : Ասանկով ամէնն
ալ բանաը դրաւ : Իրեք օրէն ետե իբր թէ
խղճալով հրաման տուաւ որ մինակ մէկը
մնայ , մէկալնոնք ցօրեննին տանին ու 'ի
գարծին սղտի եղբայրնին ալ բերեն , որ ի-
րենց հաւասայ : Աիրով յանձն առին , ու
կարծելով որ Յովսէփ չհասկընար , որով-
հետեւ թարգմանով կըխօսէր , սկսան ըսել
թէ : Աս նեղու թիւնը կըբաշենք Յովսէփաց
ըրածներնուս համար . որչափ կաղաչէր ու
մտիկ չըրինք : Ռուբէնն ալ կըսէր՝ թէ : Աս
ձեզի չըսի . խեղճ տղուն արիւնը մի մըտ-
նէք : Աս խօսքերուս վրայ Յովսէփայ սիրաը
փղձկելով , մէկդի քաշուեցաւ ու լացաւ :
Ետքը նօրէն եկաւ հրամայեց որ Էմաւոնը
կապեն ու պահեն : Իրենց ամանները լեցը-
նել տուաւ , և գաղտուկ ապտալեց որ ա-
մէնուն ցօրենին դինն ալ իրենց ամանին մէջը
դնեն : Անկէ զատ ճամբուն համար կերա-
կուր ալ տուաւ ու խրկեց :

Հ . Ամաններնուն մէջի ստակները ինչ
կերպով յայտնուեցան .

Պ . Ճամբան իջևան մը հասնելով , ոմանք
քուրձերնին բացին՝ իշուն կերակուր տալու
համար . տեսան ստակնին ու զարմացան , և
Ասաուծոյ բանն է ըսելով գնացին տեղն
'ի տեղը սրասմեցին Յակօբայ : Աւ հոն մէ-
կալներն ալ իրենց տարած ստակնին դանե-
լով , տաստիկ վախի մէջ ինկան :

Հ . Յակօբ թողնւց Բենիամինը տանելու .

Պ . Առջի բերանը այրած սրտով սկսաւ

ըսել թէ « Զ իս զաւկրներէս զսկեցիք . Յովսէփը չկայ, Էմուանը չկայ, Բենիամինս ալ կուզէք առնել . սա ամէն խեղճութիւնները իմ վրան մի կուգան » : Ան ասերը Ռուբէն պատասխան տուաւ թէ « Իմերկու աղաս սպաննէ թէ որ Բենիամինը չգարձընեմ » : Չէ, կրտէր Յակոբ, չըլար . ասոր եղբայրը մեռած է . թէ որ սա ալ մէկ փորձանքի մը հանգսի, իմ ծերութիւնս անմխիթար գերեզմանը կըմըննէ » : Բայց սովը օրէ օր սատոկանալով՝ սէտք եղաւ նորէն երթալ . Յուզանըստ . « Հայր դիտնաս որ խօսք տուեր ենք Բենիամինը հետերնիս տանելու » : Յակոբ կրտէր « Ինչու ըսիք թէ ուրիշ եղբայր ալ ունիք » : « Մեզնէ զը ձգեց, ըսին, հարցուց թէ հայրերնիդ ո՞րք է . ուրիշ եղբայր ունիք . ո՞վ դիտեր որ ան ալ աւտնել կուզէ » : Ետքը Յուզանորէն երաշխաւոր ըլլալով՝ հաղիւ հաւանեցուց : Յակոբ ալ ըսաւ որ իրենց երկրին բերքերէն ընծայ ասնին, առջի ստակնին ալ հեաերնին առնեն : Ասանկով Յակոբ օրհնեց ու ճամբայ գրաւ :

24.

ՅԻՆՆԻԻՆ ԵՂԲԱՅՐ ԵՄԻՆՆԻՆ ԻՆՆԻՆ :

Տ . Երկրորդ անգամ Յովսէփ եղբայրները Բենյակէս ընդունեցաւ .

Պ . Երբոր Բենիամինը հետերնին Եգիպտոս հասան, Յովսէփ հրամայեց իր տանը

վերակացուն՝ որ տուն ասնի զանոնք ու կերակուր սրտարաստէ, որ մէկտեղ հաց ուտեն: Բայց անոնք կարծելով թէ ստակին համար կերթան սրտաստիսան տալու, սկըսան ան մարդուն առջև զիրենք արդարացընել. ու հիմա, ըսին, անկէ զսա ուրիշ ստակ ալ բերինք: Մարդը սիրա տուաւ անանց թէ սա « Աստուծոյ բանն է, հոգ մընեք » . ետքը Շմաւոն եղբայրնին ալ արձըկեց տուն բերաւ: Ետքը երբոր Յովսէփ եկաւ ամենքը երկրպագութիւն ըրին, ու ինքն ալ սիրով առաւ բերած ընծանին. հարցուց հօրերնուն ինչպէս ըլլալը, ու ըսաւ թէ Աստուծմէ օրհնած մարդ մըն է անիկայ: Ետքը Բենիամինի վրայ նայելով, հարցուց. « Ա՞ս է ձեր սղտիկ եղբայրը. Աստուած քեզի ողորմորդի », ըսաւ, և անտեղը Յովսէփայ սիրալէցուեցաւ, արցունքը չկրցաւ բռնել, ելաւ մինաւոր տեղ մը գնաց լալու համար: Ետքը ամենը մէկտեղ կարգով իր հետը հացինասեցուց, ու սեղանին վրայ աւելի սրտախ ցըցուց Բենիամինի: Ետքը Յովսէփ վերակացուն ապսպրեց որ ցորենին ամանները աղէկ մը լեցընէ ու նորէն ստակները քուրձերուն բերանը գնէ կապէ. նաև իր արծըթէ գաւաթը Բենիամինին ամանին մէջը գնէ: Ասանկով առաւօտանց կանուխ ճամբեց:

Հ. Բենիամինին քուրձի արծըթէ գաւաթը ինչ կերպով յայանուեցաւ .

Պ. Յովսէփ եղբայրներէն բաժնուելէն ետքը, վերակացուն ետևնուն խորիկեց՝ որ երեսնին սայ՝ արծըթէ գաւաթը գողնալ

նին, երբոր ընցին անոնք, խոսովեցան ու սկսան ըսել՝ « Այդպէս բան չենք ըրած, չենք գիտեր. ինչպէս կարելի է որ մենք արժաթ կամ ոսկի գողնանք, որ մեր քուրձին մէջ գտած ստակնիս ալ նորէն ետ գարձուցինք: Եւ ըսին վասահումեամբ թէ որուն քովէն որ ելլէ ան դաւաթը՝ սպաննուի, և ամէնքս ալ գերի ըլլանք: Ան տակն վերապացուն ալ սկսաւ կարգով նայիլ փրնտուել ու գտաւ Բենիամինին ամանին մէջէն: Պաղեցան մնացին ամէնքը և յուսահատած լաթերին սկսան սրատրուակել, և գլուխնին կախած ետ գարձան:

Հ. Երբորդ անգամ Յովսեփայ եղբայրներուն առջև երևնալը ինչ կերպով եղաւ.

Պ. Երբոր եկան Յովսեփայ առջևը՝ սկսաւ զիբենք յանդիմանել: Ան տակնը Յուդա շուտ մը օտքը ինկաւ ըսելով. « Ալ սպաստախան չունինք. Աստուած մեզբերնիս երեսնիս տուաւ, ահա ամէնքս հրամանոցդ գերի ենք:» Յովսեփ՝ « Չէ ըսաւ, որուն քովէն որ դաւաթը ելաւ միայն ան իմ գերիս ըլլայ. դուք ազատ ելէք գնացէք:» Աս խօսքէս քիչ սիրտ առաւ Յուդա, ու թողու թիւն ու զելով սկսաւ սրտամեկ թէ ինչպէս հօրը ծերութեան սիրական զաւակն է Բենամինը, և շատ դժուարութեամբ թողուցեր է բաժնուիլ իրմէն, ըսելով թէ « Տաքէլ ինձի միայն երկու զաւակ բերաւ. մէկը ըսիք թէ գաղանը բղբքակց, հիմա թէ որ աս ալ առնէք՝ իրեն փորձանք մը հանգիստելու ըլլայ, ցաւէս կը մեռնիմ: Անոր համար ըսաւ Յուդա՝ ես աս

աղին երաշխաւոր եղայ, ուստի ես սիրով
դերի կըլլամ հրամանոցդ, որ ինքը ազատ հօրը
երթայ. թէ չէ՝ ինչ երեսով ես հօրս առջևը
ելլեմ, անոր կսկիծը տեսնեմ: Յովսէփ ալ
չկրցաւ ինքզինքը բռնել. օտար մարդիկը քո-
վէն դուրս հանել տուաւ, մէկէն լալով կան-
չէլ սկսաւ, « Ես Յովսէփն եմ, իրաւջընէ
խ հայրս սոք է »: Եղբայրներն որ լսեցին՝ պա-
ղեցան, մնացին: Յովսէփ նորէն մօտ կան-
չեց ու ըսաւ. « Ես Յովսէփ ձեր եղբայրն եմ՝
որ ծախեցիք. բայց մի վախնաք, Աստուած
աս ճամբովս զիս օկը ըրաւ. Եգիպտոսի որ
ձեզ կերակրեմ, և դեռ սովին երկրորդ տարին
է »: Սիրով ու լալով հետերնին պագտուե-
ցաւ ու ապրտպրեց որ շուտով երթան իր
հօրը ըսեն՝ թէ « Աստուած Յովսէփը Ե-
գիպտոսոց վրայ իշխան է ըրեր, և շուտ ինքն
ալ անով տեղով ելլէ գայ, որ զինքը աս սո-
վիս ատենը կերակրեմ »:

Հ. Թագաւորը շնորհաւ Յովսէփայ եղ-
բայրներուն յայտնուիլը.

Պ. Իմացաւ ու շատ ուրախացաւ, և Յով-
սէփայ ապրտպրեց որ հայրը բերել աայ:
Յովսէփ ալ սայլէր խրկեց, ու ամենուն երկ-
երկօւ պատմութեան տուաւ, և թենխամինին
հինգ պատմութեան և իրէքհարիւր ալ դա-
հեկան. և հօրն ալ նոյնպէս, աստը բեռ ալ
Եգիպտոսի ազնիւ բաներէն, ուրիշ աստը
բեռ ալ հօրը ճամբու պաշար: Եւ ասան-
կով ճամբայ դրաւ:

Յ-ի-հ-յ, Ե-գ-ի-դ-դ-ս-ս է-ը-Լ-Լ և- շ-ի-ճ-մ-ի-Լ-Լ :

Հ. Յակոբ երբոր լսեց Յովսէփայ ողջ ըլլալը ինչ ըրաւ .

Պ. Առջի բերանը սասանիկ շփոթեցաւ , պաղեցաւ ու չհաւատաց . ինչուան որ ականի ՚ի ակզը նորէն պատմեցին , ու զցուցին Յովսէփայ խրկած բաները : Ան սակն սիրտը վառուեցաւ ու ըսաւ . « Ասկէց աւելի ալ ինչ մեծ բարիք կրնամ ունենալ որ իմ Յովսէփըս ողջ է . կերթամ սիրով՝ որ չմեռած ականեմ զինքը » : Ըռածով պատրաստուեցաւ իր աղաքներովը և թուներովը եօթանասունուհինգ հոգի , և ճամբայ ելաւ :

Հ. Յակոբ ինչպէս գնաց Եգիպտոս որ Աստուած ըսեր էր թէ Քանանու երկրէն գուրս չելլեն .

Պ. Ինքն ալ տարակուսեր էր ասոր համար . բայց երբոր հասաւ երդման ջրհորին քով , Աստուծոյ զոհ մատուցոր խմացընէ խրկամքը : Աստուած երեցաւ , ու ըսաւ՝ որ Եգիպտոս երթայ , Յովսէփայ քով մեանի . հոն իր ազգը շաանան՝ ու ետքը նորէն կտ դաանան :

Հ. Ա՛ր ականուեցաւ Յակոբ Յովսէփայ .

Պ. Յակոբ խրկեց Յուդան , Յովսէփայ ըսելու որ գոյ Ռամեսսա ըսուած ակզը . որ Քեսեմ ալ կըսուէի : Հոն մեկզմեկ ականելնուն պէս՝ ըսելով պաղատուեցան , և կըսէր Յակոբ թէ « Մեանիմ երթամ որդի՛ որ ըզքեզ ողջ ականայ » :

Հ. Յովսէփայ եղբարքը Փարաւոնի հետ
տեսնուեցան .

Պ. Նախ չորս հինգ հոգի առաւ Յովսէփ
հանեց Փարաւոնի առջև՝ առաջուց խրատե-
լով որ էթէ հարցնէ Փարաւոն ինչ գործքի
տէրը լինին, հովիւ էնք բսեն. այնպէս ըրին
ու եղիպտացիներէն զառգեակեմայ մէջ բնա-
կելու հրաման առին : Փարաւոն՝ հայրերնին
ալ ուղեց տեսնել . ու երբոր դնաց Յակոբ,
ինչպէս ըլլալը ու տարիքը հարցուց Փարա-
ւոն : Ետքը Յովսէփայ հրաման տուաւ որ
անոնցմէ իրեն ոչխարներուն ալ վերահայու-
դնէ :

Հ. Յակոբ Եղիպտոս քանի՛ տարի ապրե-
ցաւ .

Պ. Տասնըեօթը տարի : Երբոր լըմնացաւ
առ տարիները, Յովսէփը կանչեց՝ երգուն-
ցնէլով ապստրեց որ իրեն հայրենական
դերեզմանը դնէ : Անկէ ետեւ մէկ հեղ մըն ալ
խնայուցին Յովսէփայ թէ հայրը ծանրացեր
է . բերաւ երկու որդիքը Մանասէ ու Եփ-
րեմ, որ իր վերջի օրհնութիւնը ապ : Յա-
կոբ ալ աղաքը դիրկը առաւ պագաւ, « Իմ որ-
դւոցս կարգը ասանք ալ սեպուխն ըսաւ » : Ետ-
քը Յովսէփ չոքեցուց զանոնք առջևը որ օրհ-
նէ : Յակոբ օրհնելու ատեն՝ աջ ձեռքը Եփ-
րեմի վրայ դրաւ՝ ու ձախը Մանասէին .
Յովսէփ դիպուածով կարծելով շտկել ու-
ղեց . բայց Յակոբ դիտեմ ըսաւ, երկուքն ալ
օրհնած ըլլան, բայց Եփրեմը Մանասէէն վեր-
ըլլայ : Եւ Սիկիմը, որուն մարդիկը ջարդեր
էին, Յովսէփայ տուաւ : Ետքը կանչեց, մէ-

կալ որդիքն ալ առջեր ու ամէն մէկը զատ զատ օրհնեց՝ վրանին մարգարէութիւններ խօսելով: Եւ Յուդային օրհնութեանը մէջ յայտնի գուշակեց անոր ցեղին մէջը հաստատուելու Իսրայէլացոց թագաւորութիւնը, և Մեսիային գալուստը: Եւ մեռաւ հարիւր քառասունութ թաւրուան:

Հ. Յակորայ մարմինը մեկէն տարին Քա նանացոց երկիրը թաղելու:

Պ. Նախ զմուտել տուալ Յովսէփ, որ Եգիպտացիք պատուոյ համար կրնէին, ու եօ թանասուն օր սուգ ընէլէն ետե, Քարաւանին հրամանովը իր եղբայրները ու շատ իշխաններ հեաւրնին կառքերով և ձիաւորներով իխտ փառաւոր հանգէսով դնացին Յորդանանին անդի գին, եօթը օր ալ հան սուգ ըրին, որ ամէն Քանանացիք կրսէին. Մեծ սուգ ունին Եգիպտացիք: Անկէ տարին Մամբրէին գիմոցը իրենց հայրենական գերեզմանը թաղեցին:

26.

Յովսէփի մահը, հրէի + - - - - - Լիտա:

Հ. Յակորայ մեռնելէն ետե Յովսէփին աչքով կրնայէր եղբարցը վրայ:

Պ. Անանկ իբրև թէ բան մը ըրած չըլլային: Բայց իր եղբարքը վախցան որ չըլլայ թէ վրանին ռի պահելով վրէժ առնէ, և կան Յովսէփայ ըսին թէ « հայրերնիս տալըս պրբեց որ իր կողմանէ հրամանոցը ըսեմք:

որ մեզի թողու թիւն տաս . ուստի մենք հի-
մա քեզմէ կրինդրենք ներուսն ըսելով "Յով-
սեփայ ոտքը ինկան քու ծառագ ենք ըսին :
Յովսեփայ սիրար լեցուեցաւ՝ սկսաւ լալ .
ու մտի թարելով ըսաւ . « Մի վախնաք և սալ
Աստուծոյ ծառան եմ . իրաւի որ դուք ին-
ծի չարիք ընել ուղեցիք , բայց Աստուած չարք
'ի բարին դարձուց " . ուրիշ սա տեսակ խօս-
քերով սրտերնին առաւ՝ բոլորովին անյի-
շաչար ըլլալով . ու խաղաղութեամբ հան-
գիստ կատարէին :

Հ . Յովսեփի ինչուան էրբ մնաց իր սր-
տուոյն մէջ .

Պ . Ինչուան էտքը , և մեռաւ հարիւր տա-
ւոր տարուան՝ կտակ ընելով մնացած եղբայր-
ներուն որ Եգիպտոսէ ելելու ասեմնին իր
ոսկորներն ալ տանին :

Հ . Իսրայէլացիք ինչ վիճակ ունեցան
Յովսեփայ մեռնելէն էտքը .

Պ . Վաթառն տարիի չափ հանգիստ ան-
ցրնելով , օրէ օր կը շատնային : Փարաւոն ա-
նունով թագաւոր մը՝ տեսաւ որ կը շա-
նան կուժովան Իսրայէլացիք , վախցաւ թէ
օր մը իրեն թշնամիներուն հետ մէկ եղած՝
կը պատերազմին իրեն հետ ու կերթան Ե-
գիպտոսէն . անոր համար սկսաւ շարչարել
զանոնք , քաղաք շինել տալ , Փիդանը , Ռամե-
սէն , ու Ռիւ կամ Արեգը . բայց որչափ Ե-
գիպտացիները զԻսրայէլացիքը կը ասանջէին ,
անոնք այնչափ կը շատնային :

Հ . Չարչարելէն զատ ինչ հնարքներ
մտածեց Փարաւոն՝ Իսրայէլացիքը քիչցընե-
լու համար .

Պ. Երկու անոնց դայեակներուն Սեփով
բայ ու փուայ գաղաուկ հրամայեց՝ որ ար-
զայ առնելու տակն մանչ ծնածները խողեն:
Բայց դայեակները Թագաւորէն աւելի Աս-
տուծակ վախնալով, չկատարեցին աս հրա-
մանը: Աստուած ալ օրհնեց զիրենք՝ որ բա-
ներնին կըյաջողէր, կը հարսանային: Ետքը
երբոր Թագաւորը օրդողեցաւ անոնց, պա-
տասխան տուին՝ թէ «Երբայեցիք դայեակը
չհասած աղան կըբերեն»: Ինքն ալ նեղացած
հրաման հանեց՝ որ անկէ ետքը բոլոր Իս-
րայէլացոց մանչ ծնած աղաքը գեաը ձգեն:

27.

Մ•Է•Է•:

Հ. Փարաւոնի աղաքը գեաը ձգելու հրա-
մանէն կըցաւ մարդ խալըսիլ:

Պ. Ղեկին ցեղէն՝ Ամրամ անուետով մար-
դու մը աղան աղատեցաւ աս կերպով: Երբ-
որ ծնաւ աղան՝ իրեք ամիս գաղաուկ պա-
հէլէն ետէ՝ վախնալով որ օր մը յանկարծ
կիմացուի, խսիրէ հիւսած սնտուկ մը առին
կարածիւթով ձեփեցին, ու աղան մէջը
գրած գոցած՝ գեաը ձգեցին: Տղուն քրոջն
ալ սիրաը չգիմանալով քովէն չէր զատուէր՝
որ տեսնէ թէ ինչ կըլլայ: Ան տակնը Փարա-
ւոն Թագաւորին աղջիկը իր նաժիշաներովը
անգին գեաին քովերը ելէր Ժուռ կուգար.
տեսաւ աս սնտուկը՝ շուտ մը հանեւ տը-
ւաւ՝ տեսաւ աղան որ կուլար, գութը շար-

Տեցաւ : Տղուն քոյրը քովը մօտեցաւ . « Այ ուզե՛ն ըսաւ որ Եբրայեցի կաթ տուող կնիկ մը կանչե՛մ որ տղան պահէ » . ան ալ՝ Կանչէ ըսաւ : Աղջիկը գնաց տղուն մօտը բերաւ . որ առաւ տղան Փարաւոնի աղջկանը ծախքովը մեծցուց ու տարաւ իրեն տուաւ : Փարաւոնին աղջիկն ալ ուրիշ զաւակ չունենալով իրեն որդեգիր ըրաւ , և անունը Մովսէս դրաւ , որ ըսել է Տէ՛ն հանձ : Ու Եգիպտացոց խնամաութիւնները անոր սորվեցընել տուաւ :

Հ . Մովսէս ինչուան էր կեցաւ Փարաւոնին պալատը .

Պ . Եբրոք քառսուն տարուան եղաւ , ականելով իր եղբայրը քաշած վիշտը , գնաց զիրենք միմեծարելու : Եւ մէկ հեղ մը տեսաւ որ Եգիպտացի մը Եբրայեցոցմէ մէկը բանէր կրճե՛ծ էր , աստուածային նախանձով վառուեցաւ սիրտը՝ չորս դին նայեցաւ որ մարդ չկայ , հոն մէկէն սպաննեց զԵգիպտացին՝ ու աւազին մէջը թաղեց : Մէկաւ որը նորէն տեսաւ որ երկու Եբրայեցի կախկրնէին , ուղեց հաշակցնել . « Մարդիկ ըսաւ՝ դուք մէկմէկու եղբայր էք՝ ինչո՞ւ կախ կրնէք » : Ան ասե՛նր անիրաւութիւնողը ըսաւ . « Քեզ ո՞վ դրաւ դատաւոր մեր վրայ , իս ալ սպաննե՛լ կուզես երեկուան Եգիպտացոյն պէս » : Չարմացաւ մնաց Մովսէս՝ թէ ինչ պէս յայնուեր է : Եւ խնամաւոր որ Փարաւոն զնիքը կրկրնաւ , ելաւ Մագիանացոց երկիրը փախաւ՝ որ Կարմիր ծովուն մէկաւ գին է՝ Սինա լեռանը մօտ :

Հ. Մովսէս երբոր փախաւ Մաղխանացոց երկիրը ո՞ւր կրնակէր .

Պ. Նախ դնաց ջրհորի մը քով նստած երբ որ կրնաածէր , ան ատենը Մաղխանացոց քուրմին եօթը աղջիկները եկան ջուր քաշելու ոչխարներուն համար . և ուրիշ հովիւներ թող չէին տար . տեսաւ Մովսէս վարնակց հովիւները ու ջուր քաշեց անոնց համար . որ խմցուցին ոչխարներուն ու դարձան : Հաագուէլ հայրերնին շուտ դառնալնուն պատճառը խմանալով , մէկէն տուն բերել տուաւ Մովսէսը որ իրեն կերակուր մը ընէ : Եւ հոն մնաց Մովսէս ինչուան որ Աստուած զինքը ետ կանչեց . ու Սեփովրա անոր աղջիկը կին տաւ , ուսկից երկու որդիք ունեցաւ՝ Գերսամ ու Եղիազար :

28.

Մովսէսի առաջնորդ ընդհանրութիւն :

Հ. Ի՞նչ բանի համար , ու ի՞նչ կերպով կանչեց Աստուած Մովսէսը Մաղխանացոց երկրէն .

Պ. Երբոր մեռաւ Փարաւոն և ուրիշ մը նստաւ , որ ալ աւելի կըջարջարէր Եբրայեցիքը . Մովսէսի ելլելէն քառսուն տարի ետքը Աստուած իր անհուն ողորմութեամբը Իսրայէլացոց հառաչանքը լսելով , ուղեց որ Մովսէսի ձեռքովը զանոնք ազատէ : Ուստի որ մը Մովսէս ոչխարները արածելու ատեն Քորեբ լեռան վրայ , յանկարծ տեսաւ որ

մօրենի ծառ մը կրակ կարած կրվաւեր, ու
չէր այրէր: Մովսէս սկսաւ առաջ երթալ
մօտիկնալ՝ որ առ հրաշքս աղէկ մը տեսնէ.
ան առեկնը մօրենիէն ձայն եկաւ. «Մովսէս
Մովսէս՝ հոս մի մօտենար, կօշիկներդ հա-
նէ, վասն զի կայնամ տեղդ սուրբ դեպին
է»: Մովսէս ալ զարհուրած չէր ալ կրնար
նայիլ: Ետքը Աստուած յայանեց իր կամքը
անոր, և թէ Ժողովոցին աղաչանքը լսէր է,
և կուզէ որ ինքն երթայ հանէ զանոնք Ե-
գիպտոսէն:

Հ. Մովսէս յանձն առան Իսրայէլացի-
ները Եգիպտոսէն հանելու հրամանը.

Պ. Ըստ գժուարութի: Առջի բերանը
իր անկարող ըլլալը յայանեց: Աստուած՝
«Ես քեզի կօզնեմ, ըսաւ: Հապա թէ որ
անուէրդ հարցնեն ինչ ըսեմ, ըսաւ Մով-
սէս»: Պատասխանեց Աստուած. «Որ էն իրը-
կեց ըսէ. և անոնցմէ խօսքի տէր մարդիկներ
հետոյ առ՝ Փարաւոնի առջևը ելիր ու ըսէ.
մեր տէր Աստուածը մեզ կրկանչէ որ իրեք
օրուան ճամբայ դէպ ՚ի անապատը երթանք,
զոհ ընենք: Գիտեմ, ըսաւ Աստուած, չու-
ղեր թողուլ բայց ևս զինքը չարաչար կրագա-
թեմ՝ ինչուան որ թողու»: Ան առեկն Մով-
սէս. «Հապա թէ որ Իսրայէլացիք չհա-
տան, ինչ ընեմ ըսաւ: Չեւքի գաւազանդ
գեափնը ձգէ», ըսաւ Աստուած. ձգելուն
պէս օձ գարձաւ՝ որ Մովսէս սկսաւ վախ-
նալ: Երբոր Աստուծոյ հրամանովը պոչէն
բռնեց, նորէն գաւազան եղաւ: Ետև Աս-
տուած. «Չեւքդ ծոցդ խոթէ, ըսաւ. Մով-

սէս երբոր խոթեցու հանեց՝ ահաաւ որբորտ
աած էր. Աստուած «Նորէն ծոցդ գիր» ը-
սաւ. դնելուն պէս՝ բորը վրայէն դնաց: Թե
որ նորէն չհաւատան, ետեէն աս ալ ըրէ՝ ը-
սաւ. գեաէն ջուր առ՝ գեաինը լեցուր, ջուրը
արխն կըգառնայ: Երբոր Մովսէս նորէն
եա կեցաւ՝ համարձակ խօսիլ չունենալուն
համար, «Ես ոյժ կուտամ՝ ըսաւ Աստուած
քեզի խօսելու»: Մովսէս երբոր սկսաւ նորէն
հրաժարիլ, ան ատենը Աստուած սասաիկ
որդողեցաւ՝ ու Ահարոնը իրեն եղբայրն ալ
ընկերատուու. «Անաղէկ խօսք ունի բերանը,
դուն իմ կողմանէս կըլլաս ըսաւ, ան ալ
ժողովագեան»: Ասանկով Քորեբ լեռնէն
աուն դարձաւ, աներոջը մնաք բարով ը-
սաւ, տղաքը կինը մեկտեղ՝ գաւաղանն ալ
ձեռքը՝ ճամբայ ելաւ:

29.

ԵՓԻՊՏՈՒԻ ՀԱՐՈՒԾՆԵՐԸ:

Հ. Մովսէս ինչ յաջողութեամբ կատա-
րեց Աստուծոյ հրամանը Եգիպտոս երթա-
լու.

Պ. Երբոր ճամբայ ելաւ, Աստուծոյ հրա-
մանով Ահարոն եղբայրը զխնաւորեց զին-
քը. սիրով պագաուեցան ու մեկտեղ գնա-
ցին, ան Աստուծոյ առած հրաշքները խ-
րայեւացոց առջև ընելով հաւտացուցին՝
թե կուզէ զիրենք փրկել Աստուած: Ետքը
երկուքն ալ մեկտեղ Փարաւոնի առջևը ե-

լան, ըսին . Աստուած կըսէ որ թողուս իր
ժողովուրդը որ երթան իրեն ամնախմբու-
թիւն ընեն : Փարաւոն բարկացաւ . « Չե՛մ
ճանչնար ան Աստուածը » ըսաւ . ու սկսաւ
աւելնել որ խոթել խորայէլացիները որ զբա-
ղին ու փութուանէ՛ բաներ չմտածեն :

Հ . Երբոր Մովսէսին գալուն պատճառաւ
խորայէլացիք սկսան ամնախմբուիլ՝ ի՛նչ կրնէին .

Պ . Մոռնալով ԱՅ խտածունչը որ քիչ
ատենէն կը փրկուին , սկսան գանդափել
Մովսէսի Ահարոնի դէմ : Բայց Աստուած
Մովսէսի նորէն սիրտ տուաւ , որ երթաց
աղէկ մը խորայէլացոց հասկըցընէ՛ ըսէ թէ
համբերեն քիչ մը որ ԱՅ Աբրահամու խա-
հակայ ըրած խտածունչը վայելեն . ու ին-
քըն ալ Ահարոնի հետ նորէն Փարաւոնի եր-
թան ըսեն որ թողու , թէ չէ չարաչար կը-
պատժէ զանոնք , ու իր ժողովուրդը անկէ
կըհանէ : Բայց Փարաւոն գաւազանին օձ
գառնալը կախարդու թիւն կարծեց տեսնե-
լով որ իր կախարդներն ալ ըրին . թէպէտ
Մովսէսի գաւազանը մէկալներունը կլլեց :

Հ . Փարաւոնին խտասրտութիւնը Աս-
տուած ինչո՞վ կակոյտց .

Պ . Տասը կերպ սատախկ պատիժներով .
ամէն մէկ պատիժը տալու ատեն կըցուցը-
նէր իրեն արդար գատաստանին անհղու-
թիւնը , և զատ զատ ամէն մէկը օրերով ու-
չացընելովը կխմացընէր իր երկայնամիտ համ-
բերութիւնը :

Հ . Եգիպտացոց առջի պատիժը ի՛նչպէս
եղաւ .

Պ . Առաւօտանց փարաւոն գեափն եզեր-
քը ելեր կեցեր էր . Մովսէս Ա.Յ հրամա-
նովը գնաց դիմացի կողմէն . « Որովհեաւ չես
թողուր իսրայէլացիները՝ ամէն տեղի ջրերը
արիւն գառնան ըսաւ , ձկներն ալ սասկիին » .
ու զարկաւ գաւազանովը ջրին՝ ու արիւն
դարձան բոլոր Եգիպտոսի ջրերը : Ասդին
անդին փոսեր կը բանային Եգիպտացիները
ու ջուր չէին գանկր եօթը օր : Բայց աս
բանս կախարդներն ալ փորձեցին՝ ըրին , ա-
նոր համար խտացաւ փարաւոնին սկառ :

Հ . Ո՞րն է երկրորդ պատիժը .

Պ . Աստուծոյ հրամանովը նորէն գնաց
Մովսէս ու ըսաւ փարաւոնին . « Որովհեաւ
չես թողուր՝ գեափն դորակը ելլեն ու բո-
լոր քաղաքը լեցուին » : Ետքը Ահարոն Մով-
սէսի գաւազանը երկնցուց գէպի Եգիպ-
տոսի ջրերուն ու լեճերուն վրայ , ու այն-
չափ դորս բիեց անոնցմէ՝ որ բոլոր Եգիպ-
տացոց աները եկան լեցուեցան , և բոլոր
անոնց պառկելու մահիճներուն վրայ , թո-
նիրներուն ու կերտկուրներուն վրայ կը-
վխտային : Աս բանս կախարդներն ալ ըրին .
բայց փարաւոն ազաչեց Մովսէսի որ ա-
ղօթքով աս պատիժս վերցընեն , որ ղերենք
թողու : Մովսէս ալ փարաւոնի ցուցընելով
թէ ինքը աս բաներս կախարդութեամբ
չնէր , հարցուց՝ թէ Ե՞րբ կուզես որ դադրի-
փարաւոն ալ վաղը ըսաւ : Ու Մովսէս ա-
ղօթք ընելուն պէս , մէկալ օրը սասկեցան ան
դորակը , ու բոլոր երկիրը հոտեցուցին :
Բայց փարաւոն խաբին վրայ չկեցաւ :

Հ . Ո՞րն է երբորդ սպառի՞ժը .

Պ . Հրամայեց Աստուած Մովսէսի՛ որ Ահարոն գաւազանովը գէտնի հողը զարնէ . ահանկ որ բարձր ըլլոր Եգիպտոս մունով ծածկուեցաւ : Փարաւոնի կախարդներն ալ ընել ուզեցին՝ ու երբոր չկրցան, ըսին թէ Աստուծոյ ձեռքը կայ աս բանիդ մէջը : Բայց անով ալ Փարաւոնի սիրտը չհակոցաւ :

Հ . Ո՞րն է չորբորդ սպառի՞ժը .

Պ . « Գնա , ըսաւ Աստուած Մովսէսի , ու ըսէ որ թողու , թէ չէ՛ բոլոր երկիրը շահածանձով լեցուի , որն որ Գեսեմ Երբայեցոց կեցած տեղը չըլայ » : Ինչպէս որ ըսաւ՝ եղաւ , ու կ՛ծելով շատ մարդ և անասուն մեռցուց : Փարաւոն չցիմացաւ՝ Մովսէսն ու Ահարոնը կանչեց՝ ըսաւ . « Գնացէք ձեր Աստուծոյ զոհ՝ ըրէք իմ երկրիս մէջ » . « Չըլար . ըսաւ Մովսէս , որ Եգիպտացոց առջև ան կենդանիները զոհ ընենք՝ որոնց մորթելը սղծութիւն կրսեպեն ու մեղ կրքարկո՞ւնն . հասաւ սէտք է որ իրեք օրուան ճամբայ հեռու տեղ երթանք » : « Գացէք՝ ըսաւ , միայն թէ շատ չհեռանաք , աղօթք ալ ըրէք որ շահածանձը անցնի » : Աղօթքին ուժովը անշաւ . բայց Փարաւոն իտարը չպահեց :

Հ . Ո՞րն է հինգերորդ սպառի՞ժը .

Պ . Եգիպտացոց ամէն կենդանիները մէկէն ջարդուեցան . բայց երբոր խնայաւ Փարաւոն թէ Իսրայէլացոց զէն մը չէ եղեր , դժուարը գալով նորէն շնորհուց :

Եփեմիայի հարսանիքը :

Հ . Ո՞րն է վեցերորդ պատիժն .

Պ . Աստուած հրամայեց Մովսէսի ու Ահարոնի , որ փարաւոնի առջևը ելլեն , ու ասիով ասք մտխիւր առած գէտ 'ի Երկնիք ցանկն : Ասով մարդիկներուն և մնացած անասուններուն վայ անանկ խոցեր ու բըշտած ուռեցքներ ելան , որ չէին կրնար դիմանալ : Աս խոցերս փարաւոնի կախարդներն ալ ունենալով՝ չկրցան Մովսէսի գիմացը ելլել :

Հ . Ո՞րն է եօթներորդ պատիժը .

Պ . Աստուած տեսնելով որ փարաւոնի սիրտը չկակոցաւ՝ նորէն Մովսէսը խրկեց , որ ըսէ , « Գիտնաս որ վաղը չտեսնուած կարկուտ պիտի թափեմ Եգիպտոսի մէջ . ուստի , ըսաւ , դուրս աւելի՛ն որ ունիք՝ ներս առէք » : Մէկալ օրը եկաւ կարկուտը կրակով խառնած , ու ամէն բան մտխիւր դարձուց . և ով որ Մովսէսի մտիկ չըրաւ , զանոնք կարկուտը ստաննեց : Սոսկացաւ Փարաւոն , կանչեց Մովսէսը որ կարկուտը գաղթեցնէ , և թող կուտամ ըսաւ . բայց երբոր գաղթեցաւ , ինքն ալ խօսքէն ետ գործաւ :

Հ . Ո՞րն է ութերորդ պատիժը .

Պ . Ստրանացաւ Մովսէս սաստիկ մարտի բերելու . երբոր լսեցին փարաւոնի քովը եղած Եգիպտացիները , սկսան դանգա-

տիւ իրեն՝ թէ ինչո՞ւ չթողուր որ երթան
իրենց Աստուածը պաշտեն . « Չէս ականեր
կրակին որ Եգիպտոսը կորսուելու վրայ է » :
Փարաւոնն կանչեց հարցուց թէ Գնացող
ները որո՞նք են : Մովսէս ալ պատասխան
տուաւ թէ Մենք ամենքս ամեն ունեցածնիս
ալ մեկտել : Միայն երկիմարդիկը երթան , Ը-
սաւ Փարաւոնն : Մովսէս ալ երբոր դուրս
ելաւ , Աստուծոյ հրամանովը ձեռքը դէպ 'ի
երկինք երկնցընեւուն պէս՝ հարաւային կող-
մէն սաստիկ հով մը ելաւ , մէկ օր մը և գի-
շեր մը փչեց ու մարտիով Եգիպտոսոց եր-
կիրը ծածկեց , որ կերան չօրցուցին կարկու-
տէն մնացածները : Ետքը Փարաւոնին մեղայ
ըսելովը՝ Մովսէս Աստուծոյ աղաչեց՝ հով
մը հանեց՝ որ ան մարտիը բոլոր տարաւ
Կարմիր ծովը թափեց . բայց ետքը նորէն
Խորայեւոյցիները չթողուց Փարաւոնն :

Հ . Ի՞նչպէս իններորդ պատիժը .

Պ . Մովսէս նորէն Աստուծոյ հրամանո-
վը ձեռքը դէպ 'ի երկինք երկնցուց ու սաս-
կալի թանձր մութ պատեց բոլոր Եգիպտոս-
ոց երկիրը , և իրեք օր ամենեին մէկզմէկ
չէին կրնար տեսնել , ինչուան ճրագն ալ
լոյս չէր տար : Աւստի ան իրեք օրը ամէն
մարդ պառկած կեցաւ : Բայց Գետեմեր-
կիրը աս պատիժէս ազատ էր : Փարաւոնն
նորէն Մովսէսը կանչեց , և հրաման տուաւ
որ երթան , միայն անասուննին թողուն :
Մովսէս չըլլար ըսաւ , կճղակ մըն ալ չէնք
թողուր : Ան ասե՛նը Փարաւոնն սրգողեցաւ
Մովսէսի . Մէյժ , ալ առջև չերևնաս ըսաւ ,

Թէ չէ՛ կրտսաննեմ զքեզ : Մովսէս ըսա-
ծիդ պէս ըլլայ ըսաւ ու գնաց : Ան ատեն
Աստուած Մովսէսի ըսաւ Թէ մէկ պատիժ
մըն ալ մնաց տալու՝ որ փարաւոն զձեզ թո-
ղու :

51.

Եգիպտոսի Գամելիոսի հարուածը :

Հ . Ի՞նչ կերպով եղաւ տասներորդ պա-
տիժը .

Պ . Աստուած օրերով առաջ Մովսէսի
ձեռքով ապրտայրեց Իէլացոց որ իրենց բա-
րեկամ և դրացի Եգիպտացիներէն ոսկիէ
արծթէ զարդեր և ուրիշ սուղ հագուստ-
ներ փոխ ուղէն , որ Եգիպտոսէ ելլելու ա-
տեն հեռերնին տանին . որ վճարուի իրենց
չարաչօր աշխատանքը : Ետքը նորէն հրա-
մայեց Աստուած որ Իէլացիքը տան գլուխ
մէյմէկ արու մէկ տարուան ոչխար առնեն
պահէն՝ և նիսան ամսուն տանըչորսին իրի-
կուան գէմ մորթեն ու ամբողջ խորուէլով
ան գիշերը արտորնօք ճամբորդի պէս՝ կօ-
շիկնին հագած , գաւազան ձեռուրնին՝ բա-
զարջով , ու եղեգով կի՛ լեղի աղցանով ու-
տեն , որուն յիշատակն ալ ընեն ամէն տա-
րի , անունը գնելով Պատքա կի՛ Պատեք ,
հայերէն Զապիկ : Ուրիշ օրէնքներ ալ տա-
լէն ետեւ , զգուշութեան համար ապրտ-
այրեց որ ան մորթած ոչխարին արիւննէն
ամէն տանը գրան վերի շէմին վրայ քսեն ,
որ Եգիպտացիները պատժող հրէշտակը

տեսնէ ու Իսրայէլացիներուն զէն մը չհաս-
ցընէ : Ան օրը կէս գիշերուն յանկարծ բո-
լոր Ազխագացոց առաջինեկ տղաքը մեռան ,
նաև անբան կենդանիներուն ալ . անանկ որ
ան գիշերը ամէն աուն մեռել կար . բոլոր
Ազխագոս խառվեցաւ : Գիշերանց հրաման
տուաւ Փարաւոն որ երթան . ամէն Ազխագ-
տայիներն ալ վախցած կարտորցընէին : Ա-
սանկով երկու հարիւր տասնըհինգ տարի Ա-
զխագոս կենալէն ետքը , արտորնօք սգասա-
ւը բերաննին Ճամբայ ելան . ու շաղուած
պլիւրնին ալ չխանդած՝ լաթի մէջ փաթ-
տած կանակնին զարկին , և իրենց բաներուն
հետ՝ փոխ առած ոսկիէ ու արծթէ բա-
ներն ալ մէկտեղ տարին :

Հ . Ազխագացոց անդբանիկներուն ջար-
դուելուն յիշատակ ինչ նշան տուաւ Աս-
տուած Արրայեցւոց .

Պ . Ազղսպրեց որ անկէ ետև միշտ արու-
առջինեկները երեն քնծայեն , ազուն տեղ
զոհ քնելով Աստուծոյ կով մը կամ ոչխար
մը կամ երկու տասրակ կամ երկու աղաւ-
նի . նաև անբաններուն վրայ ալ առ օրէն-
քը գրաւ . և թէ որ անտուրբ կենդանի է տե-
ղը սուրբ կենդանի տան :

Հ . Իսրայէլացիք Ազխագոսէ ելոս ա-
տեննին ողջափ հողի էին .

Պ . Վեցհարիւր հազար էրիկ մարդ՝ մանր
աղոցմև ու կնիկներէ զատ , ուրիշ շատ մար-
դիկ ալ հետեւին :

Հ . Ինչացոց Ճամբայ ցուցընող ո՞վ էր .

Պ . Բարձր օգուն մէջ կեցած ցորեկը

սեան պէս ամպ մը, ու գիշերը կրակէ լուսաւոր սիւն մը: Անանկ որ գիշեր ցորեկ գէպ ՚ի ուր որ կըջարժէր կերթար առ սիւնը, բանակն ալ անոր ետեւէն կերթար:

Հ. Եգիպտացոց աասը պատիճները Փարաւոնին սիրտը չջարժեցին պաշտելու ճըլմարիտ Աստուածը.

Պ. Իրեն խառասրտութեանը մէջ կեցաւ ինչուան մահը. անոր համար մէկ քանի օրէն ետե՛ւ երբոր Իէլացիք Կարմիր ծովուն քովերը հասեր էին, Փարաւոնին միտքը փոխուեցաւ. « Աշիւ, ինչո՞ւ թողուցի՞նք, ըսաւ, որ մեզի աղէկ կըժառայէին, շուտ մը ետեւէն ինկաւ բոլոր զօրքովը՝ երկուհարիւր յիսուն հազար, ու վեցհարիւր ալ պատերազմական կառքեր, ձիաւորներ, զէնքեր մէկտեղ: Երբոր հեռուէն տեսան Իէլացիք, սաստիկ վախէն իրար անցած սկսան Մովսէսի գէմ գանդապիլ թէ շատ աղէկ էր Եգիպտացոց ծառայութիւնը, քան թէ անապատին մէջ մեռնիլ: Մովսէս աղօթքով Աստուծոյ լուսաւորուած սիրտ կուտար: Երբոր Եգիպտացիները մտեցան, ամպէ սիւնը Խորայէլացոց ետեւին անցաւ, չթողուց որ խառնուին, ու սաստիկ մուծ եղաւ ան գիշերը: Ետքը Մովսէս Աստուծոյ հրամանովը ջրին զարկածին պէս՝ սաստիկ հարաւային հով մը փչեւով երկու բաժնուեցան ջրերը և պարսպի պէս երկու գիւն գիզուեցան, ու Խորայէլացիք բոլոր գիշերը մէջէն անցան: Երբոր Եգիպտացիք ալ անոնց ետեւէն ծովին մէջ բացուած Քամբան մտան,

Աստուած իրենց սիրտը սաստիկ վախ մը չփո-
թուցիւն մը ձգեց որ կասուեցան մնացին :
Ետ դառնանք փախչինք ըսելնուն չմնաց ,
Մովսէս Աստուծոյ հրամանովը ձեռքը ծո-
վուն վրայ երկնցուց ու մէկէն 'ի մէկ բոլոր
ծովին բաժնուած ջուրը քովէ քով եկաւ , և
բովանդակ Եդիպոսացիները ծածկեց , խըղ-
դեց . և բոլոր մարմինները ծովուն եզերքը
լեցուեցան : Աս տեսնելով Իսրայէլացիք
սկսան վախնալ Աստուծմէ ու Մովսէսէն .
ու երիկ մարգիկը և կնիկ մարգիկը երկու դաս
եղած , մէկուն դասադլուխ Մովսէս , մե-
կալին Մովսէսին քոյրը Մարիամ՝ սկսան
նուագարաններով փառք սալ Աստուծոյ
ու երգել :



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ . Արբաճամ ինչպէս քոյր ըսաւ Սա-
ռային համար .

Պ . Հրէից սովորութիւն է ազգականին
քոյր ըսել : Սառան ալ որ Ղըվտայ քոյրն՝ էր
Արբաճամու քոյր ալ կրնար ըսուիլ :

Հ . Ո՞վ էր Մելքիսեդէկ .

Պ . Սուրբ Թագաւոր մըն էր քանանա-
ցւոց երկիրը Ե՛նժի մէջ . և կոյս ու քահանայ
ըլջալովք Քրիստոսի օրինակ էր :

Հ . Արբաճամին աւ Սառային անունը Ա՞ծ
ինչո՞ւ փոխեց .

Պ . Արբամ հրէարէն մեծ հայր ըսել է .
իսկ Արբաճամ շատ ազգերու հայր : Ա-
սանկ ալ Սարա տիրուհի իմ կրնշանակէ . իսկ
Սարրա՝ ամենուն տիրուհին : Արովհետեւ
Քրիստոսին աշխարհ գալովք , իրենք ամէն
ազգերուն ծնող պիտի ըլլային :

Հ . Հրեշտակը ինչո՞ւ կուի ըրաւ Յակո-
բայ հետ .

Պ . Իրեն սիրտ տալու հմբ որ հրեշտակի
յաղթելէն ետքը , Եսաւէն ամենեկին չվախ-
նայ :

Հ . Յակոբ իր Մանասէ ու Եփրեմ Թառ-
ները օրհնելու ատեն ինչո՞ւ աջ ձեռքը Ե-
փրեմին վրայ դրաւ .

Պ . Վասն զի մօրդարէական հոգւով ի-

մացաւ թէ Եփրեմն ցեղէն պիտի ըլլային
Ինչացոց տասը ցեղին թփրնէրը : Երկրորդ
որ Եփրեմն ցեղը Մանասէին ցեղէն պա-
տուար ու շատուար պիտի ըլլար : Երկրորդ
Եփրեմն ցեղէն պիտի ծնանէր Զեսու՝ Քնի
օրինակը :

Հ . Փարաւոնի հրամանը որ բրեր էր Իս-
րայէլացոց մանչ տղաքը մեռցնելու համար ,
առաջ գնաց .

Պ . Հաւանական կարծիք է թէ Եգիպ-
տացոց սիրար չգիտացաւ ասանկ անգթու-
թեան , ու քիչ ասեմէն գաղբեցուցին . կ՛մ-
ան թփրն որ փարաւոն Ամենովիտ կրտուէր՝
մեռնելուն պէս՝ անոր հրամանն ալ հետը
վերջացաւ , երբոր Մովսէս չորս տարուան
էր :

Հ . Մովսէս՝ Աստուծոց հրամանին գէմ-
կենալը , ու մէկէն յանձ չառնելը աղէկ
բան էր .

Պ . Չէ , վասն զի անհնազանդութիւն էր
բրածը , չմտածելով թէ Աստուած էր հրա-
մայտը , ուստի իրեն պէտք եղած ոյժն ալ
կրնար տալ : Անոր համար Աստուած ալ վրան
նեղացաւ :

Հ . Ի՞նչ իրաւունքով Ինչացիք կողոպ-
տեցին Եգիպտացիները .

Պ . Աստուած ամենուն արք՝ արգար դա-
տատանով անանկ որոշեց ու հրամայեց
իրենց՝ առանց վարձքի քաշած աշխատանաց
ու չարչարանաց աեղը : Արովհետեւ Եգիպտա-
ցիք ինքիրենուն չէին տար՝ բռնի տալ ար-
ւաւ :



Մ Ա Ս Ն Գ .

ԴԱՏԱԿՈՐԱՅ ԴԱՐԸ,

ՄՈՎՍԵՍԻՆ ԻՆՉՈՒՆՆ ՍՅՒՈՒՂ,



35 .

Ի-հայեւոյոց ճ-մբարդոսի-նը :

Հ . ԻՍՐԱՅԷԼԱՅԻՔ Փարսուսինն ձեռքէն խաշակէն ետե ազատ ու հանդիստ մնացին .

Պ . Չէ . վասն զի կարմիր ծովէն ելելէն ետե Սուր անասաափն մեջը իրեք օր ճամբայ րբին , ու խմելու ջուր չէին գտնէր : Հասան Մեռա, հոն ալ ջուրը չեղի էր . անոր համար սկսան արանջալ : Մովսէս Աստուծոյ գիմեց . Աստուած ալ փայտ մը ցցուց որ ջրին մեջը գնելով կանուշիար : Աստուած հոն խրատեց ժողովուրդը՝ պատուիրանքներ առաւ որ պահեն, ու ինքն ալ զանոնք հօգայ : Եւ իբր ելան Ազիմ՝ ե կան՝ ուր որ տասուերկու անոյշ ջրի աղբիւր կար ու եօթանասուն արմաւենի . հոն քիչ մը կենալէն ետքը գնացին

Մին անասաաւր . և հոն ալ կերակուրի նե-
ղութիւն սկսան քաշել :

Հ . Խորայէլացիք անասաաօին մէջ ուսկից
գասան կերակուր .

Պ . Երբոր մէկ բերան կըստանջային Մովսէ-
սի ու Ահարոնի վրայ , Եզիպատոսի միտը հացը
յիշելով և փափաքելով որ հոն մեռած ըլլայ-
ին . անոնք ալ սկսան խնայելն թէ Աստու-
ծոյ դէմ է ըրածնին : Ետքը Աստուծոյ կող-
մանէ խօսք առին որ իրիկուան դէմ միս
ուտեն , և մէկալ առաւօտ հաց . և ան միջո-
ցին Աստուծոյ փառքը երեցաւ ամպին մէ-
ջէն : Ետքը իրիկուան անհամար լորամօրգի
եկան իջան բանակին վրայ . և առաւօտը ե-
լան տեսան որ ցօղին հեռ եղեամբ պէս ձեր-
մակ գինձի նման բան մը իջեր է , զարմանա-
լով սկսան երբայեցելէն ըսել Ման հո- ,
որ ըսել է , Աս ինչ է : Ասկէ անուեր մնաց
Մանանա : Եւ Աստուծոյ գիէն Մովսէս ա-
պըստրեց որ ամէն առաւ մէկ օրուան ու-
տելու համար հացիտեղ անկէց ժողվեն արևը
չծագած . վասն զի արև տեսածին պէս մէ-
կէն կըհալէր : Եւ ուրբաթ օրերը շաբաթ օ-
րուանն ալ մէկտեղ ժողվեն : Բայց թէ որ
ուրիշ օրուան պահէին կորգնոտեր : Եւ մէկ
օրուան համար քիչ ժողվողին չէր պակսեր ,
չառ ժողվողին ալ չէր աւելնար : Եղան
ոմանք որ պահեցին մէկալ օրուան ալ , և բո-
լոր որգնոտեցաւ . Մովսէս ալ նեղացաւ ա-
նոնց վրայ : Ոմանք ալ շաբաթ օրը ելան ժող-
վելու չգասան , Աստուած ալ բարկացաւ ու
ապըստրեց որ շաբաթը սուրբ պահեն :

Հ . Մանանան ինչպէս կուտէին .

Պ . Առաջ ալիւրի պէս կը ծեծէին , ետքը շաղուէլով կեփէին , խորխոխի համ կը լլար : Քառասուն տարի ասով ապրեցան Իսրայէլացիք : Աստուծոյ հրամանովը աս մանանայէն ոսկիէ սափորով պահեցին , ու ետքը Աստուծոյ տապանակին մէջ դրին , իրեն բարերարութեանը յիշատակ :

Հ . Սին անապատէն ուր գնացին Իսրայէլացիք , և հոն ինչ նոր գիտուած հանգիստեցաւ .

Պ . Ռափիգիմ գնացին . և հոն նորէն ջուր չգտնելով , այնչափ սաստիկ Մովսէսի գէմ արանջացին՝ որ քարկոծել կուզէին : Մովսէս Աստուծոյ գիմեց . Աստուած հրամայեց որ քանի մը հոգի ծերերէն հետը առած երթայ գիմացը Քորեբ լեռը , գաւազանով ապառաժ քարին զարնէ . և ասանկով ջուր բխեցուց : Մովսէս ան տեղին անունը փորձութիւն դրաւ . որովհետեւ Իսրայէլացիք ուղեցին իմանալ թէ Աստուած իրենց հետ է : Աս Ռափիգիմ ըստւած տեղը առաջինը եղան որ պատերազմի ելան Իսրայէլացոց գէմ Ամաղեկացիք : Մովսէս հրաման տուաւ Նաւեայ որդւոյն Յեսուայ՝ Եփրեմայ ցեղէն , որ առաւօտը կորիճ՝ մարդիկ հետը առնէ՝ Ամաղեկացոց գէմ պատերազմի ելէ : Ինքն ալ գաւազանը ձեռքը Ահարոնի ու Ովրի հետ լեռան վրայ ելաւ . թեւերը վեր բռնած աղօթք որ կընէր , Իսրայէլացիները կը յաղթէին . երբոր յոգնելով վար կիջեցնէր , Ամաղեկացիները վրայ կելէին : Ան ա-

տենը քարի մը վրայ նստեցուցին Մովսէսը և
Երկու հողմէն Ահարոն և Ավր թեկերը վեր կը-
բռնէին, և անանկ ինչուան իրիկուն բաղկա-
տարած կենալով բոլոր Ամաղեկացիները
Զարգուեցան, և այբը Աստուած ըսաւ Մով-
սէսի որ աս յաղթութեան յիշատակը գրէ,
և Յետուայ ալ ըսէ որ Աստուած Ամաղեկը
բոլորովն ջնջել կուզէ: Մովսէս ալ հան սե-
ղան մը վնեց՝ անունը գրաւ Տէ օդօ-էն Իմ:

54.

Ճօճօդօ-Ինն:

Հ. Իսրայէլացոց ճամբորդութեան ատեն
դատաստաննին ո՞վ կըսեսնէր:

Պ. Ինչուան Ռափիղիմ մինակ Մովսէս:
Հոն Մովսէսի աները Յոթոր, անոր կինը ու-
Երկու տղաքը առած և կաւ բարեկէտ և Իս-
րայէլացոց ուրախակից ըլլալու: Մովսէս
պագաուեցաւ և սիրով ընդունեցաւ ու պատ-
մեց ամէն բան: Արոնց վրայ Յոթոր զարմա-
ցաւ ու զո՛հ ըրաւ Աստուծոյ, ու ամէն ծե-
րերն ալ անոնց հետ սեղանի նստան: Ար-
կրորդ օրը Յոթոր տեսաւ Մովսէսի մինակ
դատաստան կարելն, ու չհաւնելով խրատ
տուաւ որ ընարէ իրեն ընկեր խելացի, ար-
գար, խոնարհ, աստուածասպառ ժարդիկ,
ու դատաւոր գնէ հազարին մէկ հոգի, հա-
րիւրին մէկ, յիսունին մէկ, տասնին մէկ,
որ սղօ իկ դասերը հոգան, ու մեծը իրեն
խոցընեն: Ատքը Յոթոր գարձաւ իւր տեղը:

Մովսէս ալ անկէ ետև անոր ըսածին պէս կրնէր :

Հ. Իսրայէլացիք Ռափիդիմէն ո՛ւր գնացին .

Պ. Սինա լեռանը գիմացը, Եգիպտոսէ ելլէլէն իրէք ամիս ետքը : Հոն Մովսէս Սինա լեռը ելաւ, և Աստուած յայանեց Մովսէսին՝ թէ կուզէ գաշինք գնել հեաերնին որ պահեն, ու իրեն ժողովուրդը ըսան : Մովսէս իջաւ լեռնէն, առ բանս պատմեց ծերերուն, և ամէնքն ալ հաւնեցան : Երբոր Մովսէս ժողովրդեան պատասխանը Աստուծոյ աւարաւ, ըսաւ Աստուած, թէ ամպէ սիւնին մէջէն կրխօսխմքեղի հեա որ իրենք ալ լսեն : Եւ հրամայեց որ երկու օր պատրաստուին : Լաթերնին լուանան որ երբորդ օրը Աստուած Սինա լեռը պիտի իջնայ : Լեռանը չորս դին ալ սահման դնել տուաւ որ անկէ անդին չանցնին թէ մարդ թէ կենդանի՝ քանի որ Աստուած հոն է, որ չմեռնին : Միայն Մովսէսն ու Ահարոնը մօտ կանչեց : Երբորդ օրը առաւօտանց Սինա լեռը ամպով ծածկած կըրուկեր կըմխար . սաստիկ փողնի ձայներով կայծակներ կրնէր կըդռուար : Ժողովուրդը սարսափած շարուած կեցան . և Աստուած ահաւոր ձայնով ան ամպերուն մէջէն տաօր պատուիրանքները ըսաւ Մովսէսի :

Հ. Աստուծոյ խօսիլը Սինա լեռանը վըրայէն Իսրայէլացիք ինչ սրտով մտիկ ըրին .

Պ. Սաստիկ վախով ետ քաշուեցան, ու խօսիլը դադրեւուն պէս՝ Մովսէսին աղաչեցին որ ուրիշ ատեն իրմէ լսեն պէտք եղածը :

որ չըլայ թէ մեռնին: Մովսէս ալ ըսաւ թէ
Աստուած իր վախը սրաւերնուդ մէջ անկելու
համար ըրաւ: Ետքը ինքը ամպին մէջ մտաւ՝
ուրիշ օրէնքներ ալ ըսեց ու դարձաւ պատմեց,
գիր անցուց. ետև տասուերկու քար շարեց
լեռան ծայրը, սեղան շինեց, ու վրան հորթ
ըսէ ընել տուաւ, և արիւնը ժողովրդէան վրայ
սրակեց՝ դրած դաշինքին նշան:

Հ. Մովսէս միշտ մինակ կերթար Սինա
լեռը.

Պ. Առջի օրէնքները առնելէն ետքը Աստու-
ծոյ հրամանովը գնացին մէկտեղ Ահարոն,
Նաբադ, Աբիուդ և եօթանասուն ալ ծեր.
ու Աստուծոյ կեցած տեղը տեսան՝ որուն
գեղինը աղիւսի պէս շափիւղայ քարէ կերև-
նար: Ետքը նորէն առանձին Յեսուայ հեռ
գնաց քարէ տախտակներու վրայ պատուի-
րանքները դրած բերելու համար: Վեց օրէն
ետև Աստուած մինակ Մովսէսը՝ ալ առաջ
կանչեց, որ կրակի գունով երևցած ամպե-
րու մէջ կեցաւ քառասուն օր:

33 .

Ուրիշ հոգեւ:

Հ. Ան քառասուն օրն որ Մովսէս գնացեր
էր Սինա լեռը, Իսրայէլացիք ինչ ըրին.

Պ. Մովսէսին ու շանալուն վրայնեղացած
գնացին Ահարոնին ըսին թէ « Աստուած
ներ շինէ որ մեզի առաջնորդ ըլլան »: Ահա-
րոն « Բերէք ըսաւ կնիկներնուդ՝ զուկրներ.

նուդ ոսկի օղերը” . ու անոնցմէ հորթ մը
թափեց , առջևը սեղան շինեց , ու « Ապր
տօնը կատարեցէք ” ըսաւ : Ուստի եկան առ-
ջևը զո՛հ ըրին , կերան խմեցին ու բախու թք ,
ու ելան պար բռնեցին :

Հ . Աստուած Իէլացոց հորթ պաշտելուն
համար ի՛նչ պատիժ տուաւ .

Պ . Ուղեց ջնջել ամէնքը մէկէն , ու լեռան
վրայ Մովսէսին խնացուց որ կուզէ մեծ աղօ-
քներ ժիայն զինքը : Բայց Մովսէս շատ աղա-
չանքով Աստուծոյ բարկութիւնը իջեցուց :
Ետքը Աստուծոյ գրած երկու քարէ տափ-
տակներն առած լեռնէն իջնալու ատեն՝
Յետու պատերազմի ձայն կը լսէր : Չէ , ըսաւ
Մովսէս , գինովներու ձայն է : Եւ երբոր
մօտեցաւ ու տեսաւ հորթն ու պարը , ա-
նանկ բարկացաւ որ ձեռքի քարերը գեափնը
զարկաւ ջարդեց : Այրեց ան հորթը , խար-
տոցեց , ջրին մէջ ցանեց ու ժողովրդեան
խմցուց . Ահարոնի ալ սրգողեցաւ որ գէմ
չէր կեցած անոնց : Ետքը բանակին գուռը
կեցած ըսաւ . « Աստուծոյ կողմեղողը իմ քո-
վըս գայ ” : Մէկէն ժողովեցան Ղևեայ ցեղը :
Ան ստեն « Աստուծոյ հրամանն է ըսաւ որ
սուրերնիդ առնէք՝ մէկ անգամ ստորաիք բա-
նակին մէջն ու ջարդէք , աղօական բարե-
կամ շնայելով ” : Ասանկով իրեք հազար մարդ
սպաննուեցաւ : Աս բանիս համար Աստուած
ալ քահանայութիւնը Ղևտացոց տուաւ . և
Ահարոնը քահանայատեա :

Հ . Հորթ պաշտելու յանցանքն ի՛նչպէս
ներեց Աստուած Իօրայէլացոց .

Պ. Մովսէսի աղաչանքովը, որ կըսէր՝
« Թէ որ չներկս անոնց, զիս ալ երեսէ ձգէ » :
Ատառւած ալ ներկեց ու ապրասպրեց որ սուգ
մտնեն, զարգարուն լաթերնին փոխեն, ին-
չուան որ նորէն Ատառւծոյ հրամանը լսեն :
Եւ իր խորանն ալ Ատառւծոյ հրամանովը բա-
նակէն դուրս հանեց՝ որ ըսուեցաւ Խորան
Վայն-Են. ով որ կուզէր Ատառւծոյ բան մը
հարցնել, հոն կերթար :

Հ. Մովսէս Ատառւծոյ հետ ինչպէս կը
խօսէր .

Պ. Ամպին մէջէն Ատառւծոյ ձայնը միայն
լսելով, ու երբոր բանակէն դուրս հանեց իր
խորանը, խօսելու ասեն ամպէ սիւնը խո-
րանին դուրս կիջնէր՝ ու մէջէն բարեկա-
մի սէս մեկտեղ կրխօսէին . և Ժողովուրդն
իրենց ակզը կեցած երկրպագութիւն կընե-
ին : Բայց անգամ մը Մովսէս ուզեց՝ որ բուն
զԱտառւած ականէ : Ատառւած ըսաւ իրեն թէ
« Զխօսեանողը կըմեռնի » . բայց զինքը սիրե-
լուն համար՝ գրաւ մէկ քարի մը ձեղքի առջև՝
որ Ատառւած անցնելու ասեն՝ ետևէն քիչ
մը սետաւ :

Հ. Տասը պատուիրանքին քարերը Մով-
սէս շնորոպեց .

Պ. Ատառւծոյ հրամանովը նորէն երկու
քարէ տախտակ շինեց, ելաւ Սինա լեռը,
ու նորէն գրեց՝ քառասուն որ հոն ծով կենա-
լով : Ետքը երբոր կիջնէր՝ անանկ փառաւո-
րուած էր երեսը՝ որ Ժողովուրդը քոնէ եր-
թալու վախցան . թէպէտ ինքը չէր խնայեր :
Մովսէս կանչեց՝ պատմեց Ատառւծոյ ըսած .

ները . և անկէ ետքը ժողովրդեան հետ խօսելու որ կըլլար , երեսը քոյ կըժամկէր . ու երբոր Աստուծոյ կերթար , կըվերցընէր :

56 .

Իւրայեւացոյ ծէ-երը :

Հ . Աստուծոյ սպընսպրած օրէնքներն ու կարգերը բոլոր կըցան պահէլ .

Պ . Առջի բերան չէին կրնար . վասն զի շատ բաներ կար շինելու : Ուստի Մովսէս նախ հրաման տուաւ որ ամէնքը ընծայ բերեն Աստուծոյ : Երբոր սիրով բերին աղէկ հագուստներ , զարգարանքներ , ոսկիէ արծըթէ ամաններ , աղնիւ քարեր , և ուրիշ սուղ բաներ , առ ամէնը տուաւ Բեսէլէլին և Եղիսբին , որ իրեն ըսածին պէս շինեցին նոր խորան վկայութեան մը վրանի ձևով իրեն ամէն բանովը : Անկէ ետքը ուր որ կենային , առ խորան վկայութեանը բանակին մէջ տեղը կըզընէին , որուն մէջն էր տասպանակն ալ :

Հ . Տասպանակը ինչ բան է .

Պ . Մնաուկ մըն էր կարծր վայտէ՝ ներսէն դրսէն ոսկի պատած , վրայի խուփը մէկ կտոր թափծու ոսկի որ Բե-...-ն կըսուէր : Արան երկու ոսկիէ Գերոբ գիմացէ գիմաց թեկրով տասպանակը կըժամ կէին : Մէջը գրին պատուիրանքներուն երկու քարերը , ոսկիէ ամանով մանանան , ետքը Ահարոնին ծաղկած գաւազանն ալ . քովերն ալ ուրիշ սեղաններ ոսկիով պատած : Ուրիշ փառաւոր հագուստ-

ներ ալ Ահարոնին ու զհաաջիններուն հազ-
ներու՝ սրաշածն ընելու ստե՛ն: Ասոնք ամենք
Մովսէս օժեց սուրբ եղով: Ասանկ ամեն բան
կարգի զնե լէն ետքը, ամուէ սիւնը խորանին
վրայ իջաւ. ու երբոր կրվէրնար առջնէն
կերթար, ճամբայ կրնէին:

Հ. Տապանակին քովի սեղանները ինչ
բանի համար էին.

Պ. Մէկը կըսուէր Սէշան առաջագոյնն էան,
որուն վրայ ստասուերկու բազարջ հայ միշտ
կար. մէկալը Սէշան ինչո՞յ՝ վրան ընծաները
կըգրուէին: Խորանէն գուրս ու բիշ սեղան մը
կար ողջակիզի, զոհի համար, ամեն գործիք-
ներով: Ուրիշ մեծ սակիէ աշտանակ մըն ալ
կար եօթը կանթեղով որ բոլոր գիշերը կը-
վասէր:

Հ. Աստուծոյ օրէնքը չպահպոյին Խորայե
լոցիք ինչ պատիժ կուտային.

Պ. Շատ անգամ ինքն Աստուած կըզատ-
ժէր խմայընելով թէ ան օրէնքները ճիշդ
պահել պէտք է: Ինչպէս որ օրէնք էր թէ
ողջակիզին սեղանին վրայի կրակը միշտ վա-
ռած պահուի, ու բուրվասին մէջ միշտ ան
կրակէն բանեցընեն: Նարագ ու Աբիուգ Ա-
հարոնին մեծ որդիքը աս օրէնքը բանի տեղ
չսեպելով, անգամ մը իրենց բուրվասներուն
մէջ ուրիշ կրակ դրին. ան ստե՛նը յանկարծ սե-
ղանէն կրակ ելաւ ու երեց մեռցուց զանոնք:
Ուրիշ անգամ ալ Խորայե լոցիները մեծ մեծ
պատիժներ Աստուծ մէ ընդունեցան: Իրենք
ալ երբոր իրենց մէջ օրէնքի գէմբան կրուե-
նէին, կերթային Մովսէսի կխմայընէին ու

ընողը կը քարկոծէին . առանկա՛վ մեծ վախ
ինկաւ մէջէրնին ու սկսան զգուշանալ ա-
մէնքն ալ :

Հ . Օրէնքի գէ՛մ ընողին ի՛նչ պատիժ կու-
տային Իսրայէլացիք .

Պ . Անգամ մը հօր կողմանէ եգիպտացի
մարդ մը՝ մէկու մը հետ կախ ընելով , անոր
Իսրայէլացի անունը հայհոյեց . մէկէն քովի
եղողները բռնեցին Մովսէսի առջև տարին .
որ Աստուծոյ հրամանովը բաւ՝ թէ ան մար-
դը բանակէն դուրս հանեն ու հայհոյու-
թիւն լսողները ձեռուրնին անոր գլխուն
վրայ գրած , իրենց վկայ ըլլալուն նշան , ա-
նանկ քարկոծեն : Աւրիշ մարդ մըն ալ որ ե-
լեր շաբաթ օրը փայտ կը ժողվէր , երբոր Մով-
սէսի առջև բերին , Աստուծոյ հրամանովը
քարկոծել տուաւ :

Լ՛ցր՝մարգիտն , -- Մարտիտն պարտիտն :

Հ . Իսրայէլացիք Սինա լեռնէն ո՛ր դնա-
ցին և ի՛նչ նոր գիպուած եղաւ մէջէրնին .

Պ . Մէկ տարիի չափ հոն կենալէն ետև ,
իրեք օր ճամբայ ըրին գէտի Փառանու ա-
նապատը : Հասարակ ժողովուրդը սկսան
տրանջալ միս ուղել , միտքերնին բերելով
Եգիպտոսի ձկները , ձմերուկը , սոխն ու
սխտորը : Ան ստանը Մովսէս ինկած Աստու-
ծոյ առջև , կազաչէր որ զինքը մեռցնէ .
« Չեմ կրնար , կըսէր , այսչափ ժողովուրդը

մինակ հոգւոյն : Աստուած եօթանասուն հոգի ընտրեւաւուաւ , ու Մովսէսի մտորարեալն հոգիէն անոնց աւրաժնեց որ իրեն օգնական ըլլան : Անոնցմէ երկուքը Ելզադ ու Մովգադ մնացին բանակը ու կրմտորդարեանային . երբոր Մովսէսի խնայուցին , Յեսուն ըսաւ որ արգիլէ : « Ի՞նչ կրեսա , ըսաւ Մովսէս . սէր է թէ բոլոր ժողովուրդը մտորարէ ըլլային » :

Հ . Իտրայեւացոց միս ուտելու փափաքը Աստուած ի՛նչպէս անցուց .

Պ . Ապրտարեց որ սլաւարաստուին վաղը միս ուտելու ինչուան որ կշտանան : Արզարմանար Մովսէս թէ այնչափ ժողովուրդին որոնց միայն կարիճները վեցհարիւր հազար հոգի են , ինչպէս ամիս մը միս կըրուէ : Աստուած ծովու գիէն սաստիկ հով մը հանեց՝ որ բերաւ գիղեց լորամարդի՝ երկու կանգուն բարձր բոլոր բանակին մէջն ու չորս գին՝ ինչուան օրուան ճամբայ հեռու . անանկ որ երկու օրմէկ գիշեր ամէնքը վրան թափեցան ժողվեցին : Էն քիչ ժողվողը տասը քոս ժողվեց . ամէնքն ալ ապխտեցին ու սկսան ուտել : Քանի որ չէին հասցուցած . Աստուած իր բարկութիւնն ալ վրանին թափեց . կրակ մը բորբոքեցաւ մէջերնին որ չարաչար տանջելով շատ մտորմեացուց , ինչուան որ Մովսէսին աղօթքովը գաղթեցաւ . անոր համար ան տեղին անունը Հրայեւաց , և Գեբեղմանոյ յանիւնի ըսուեցաւ : Ետքը անկէ եւան Ասերովթ եկան . ուր բորտացաւ Մարիամ Մովսէսի քոյրը :

Հ. Մարիամ Մովսէսի քոյրը ինչո՞ւ բարասեցաւ .

Պ. Մովսէսի կինն որ Եթովպացի էր՝ տեսաւ որ Մովսէս Աստուծոյ սիրելի եղաւ, սկսաւ սպարճենալ. Մարիամ չգիմանալով առ բանիս, Ահարոն եղբայրը հեառ առած սկսան Մովսէսը վար զարնել. ըսելով « Միթէ Աստուած միայն Մովսէսի՞ հետ կըխօսի, մեզի հետ ալ խօսեր է » : Մովսէս խիստ հեզ ըլլալով ամենեկին դէմ չըրուցեց : Բայց Աստուած բարկացաւ, իրեքը մէկէն խորանը կանչեց՝ ու ամպէ սիւնէն ըսաւ իրենց, « Գիանաք որ ուրիշ մարդարէներու հետ տեսիլքով կըխօսիմ, բայց Մովսէսի հետ՝ որ իմ հաւատարիմ ծառաս է, բերնէ բերան կըըրուցեմ. ինքը իմ Աստուծային փառքս ալ տեսեր է . դուք ինչպէս չվախոյսք բամահրեցիք զինքը » : Դուրս ելլալնուհն պէս մէկէն բորտակցաւ Մարիամ. անտակներ Ահարոն գնաց ազաչեց Մովսէսի. Մովսէս երբոր խնդրեց Աստուծմէ, հրամայեց Աստուած՝ որ Մարիամ եօթը օր բանակէն դուրս կենայ : Աս պատճառաւ ժողովուրդը ճամբայ չելաւ՝ սպասեց եօթը օր :

58.

ԼԵՐԵՆԷԷՐԸ — ԿՐԻԻ ԴՈՒՄՆ ԱԷԻՐՆԷ :

Հ. Ասերովթէն ո՞ւր գնացին Իսրայէլացիք .

Պ. Փառանու անապատը, հոն Մովսէս

խմացուց թէ աւեակաց երկիրը մօտեցան .
անոնք ալ ուզեցին որ առաջուց մարդ խըր
կեն խմանան ինչպէս տեղ ըլլալը :

Հ . Մովսէս հաւնեցաւ Իւլացոց ուղա-
ծին որ իրենցմէ առաջ լրտես խրկեն աւե-
ակաց երկիրը .

Պ . Աստուծոյ հրամանովը տասուերկու
ցեղէն մէյմէկ մարդ ընտրեց որ երթան նային,
ու ան տեղի ստուղներէն ալ հետերնին բե-
րեն : Քառասուն որ գնացին ուշացան . ու
երբոր դարձան բերին հետերնին նուա ,
թուղ ու մէկ խաւողի կուղ մը անանկ մեծ
ու ծանր՝ որ փայտի մը անցուցած երկու
հօգի կը վերցընէին : Եւ սլաամեցին թէ
շատ բարեբեր երկիր է , բայց մարդիկն ալ
շատ զորաւոր են , քաղաքնին մեծ՝ ամուր-
ժողովուրդը լուրով աս բաներս՝ վախցան :
Քաղէք Յուդայի ցեղէն ու Յեսուն սիրտ
կուտային և մեկաշնոնք կը վախցընէին , ըսե-
լով՝ թէ « Ան երկրին մարդիկներուն քով
մենք մտրտիս կերևնայինք » : Ան դիշերը իրար
անցած ամենքն սկսան տրանջալ Մովսէսի
Ահարոնի դէմ և ըսել՝ թէ « Ալ աղէկ էր Ե-
դիպտոս կամ հոս մեանէինք , քան թէ հոն
երթանք ու անոնցմէ տղոցմով կնիկներով
ջարդուինք » :

Հ . Երբոր Իսրայէլացիք վախցան մտնա-
լու աւեակաց երկիրը , ինչ ըրին .

Պ . Սկսան խորհուրդ ընել որ իրենց ա-
ռաջնորդ մը դնեն ու նորէն Եդիպտոս
դառնան : Ան ատեն Մովսէս ու Ահարոն
ինկան առջնին կազաչէին որ դադրին . Յե-

սուն ու Քաղէրն ալ լաթերնին պատուած
կրօնորդորէին որ Աստուծոյ յուսան , որ կը
պատերազմի իրենց աւելը : Ժողովուրդը կատ
ղած վրանին վաղեցին որ քարկածէն զերէնք
ան ատենը յանկարծ Աստուծոյ փառքը Է
րեցաւ . վկայութեան խորանին վրայ ու ըսաւ
Մովսէսի , « Թող ալ սպաննեմ ատոնք՝ ու
քեզ ալ աւելի շատցնեմ մեծցնեմ » : Մով
սէս շատ ազաչելով որ իր երկայնատու
թեամբը աս անգամ ալ ներէ , իջեցուց
Աստուծոյ քարկութիւնը : Բայց Աստուած
սպաննացաւ որ ան Եգիպտոսէ ելող մար
դիկը՝ քան ասորուանէն վեր , մէկը աւե
տեաց երկիրը չմանէ՝ Զեսուէն ու Քաղէ
րէն զատ : Անոր համար ճամբանին փոխել
տուաւ գէպ ՚ի Կարմիր ծովը որ քառսուն
տարի անապատին մէջ ստըտելով ամէնքն
ալ մեռնին :

Հ . Ինչացիք երբոր ըսեցին թէ քառսուն
տարի ճամբայ ընելով պիտի ջարդուին , ինչ
ըրին .

Պ . Ըստ զոջացին ըրածնէրնուն վրայ ,
ու մէկալ օրը առաւօտանց Մովսէսի ըսին
որ « Ելլենք լեռը ու պատերազմելով առաջ
երթանք » : Մի ընէք ըսաւ Մովսէս , Աս
տուած հեռերնիդ չէ : Անոնք մտիկ ջըրին՝
ելան լեռը : Ան ատենը Ամաղէկացիք ու Քա
նանացիք ալ գէմ ելան , անոնցմէ շատը մե
ռուցին , մնացածն ալ նորէն բանակը գար
ձան :

Հ . Մովսէս քառասուն տարի Իսրայէ
լացոյ ճամբորդութեան ատեն ինչ ըրաւ .

Պ . Աստուծակ շատ ծէսեր ու դատաւան ընելու օրէնքներ առաւ՝ որ Ղևաացոց ու Երկրորդ օրինաց գրքերուն մէջ գրած են : Մէկ կողմանէ ալ ժողովրդեան անկարգութիւնները գաղթեցնել կը ջանար որ ազատին պատժուէին :

Հ . Ղևաացոց ցեղն ալ պատժոյ արժանի գործք ըրին քառասուն տարուան մէջ .

Պ . Անոնք ալ կը յարմարէին ուրիշներուն . ինչպէս մէկ անգամ մը Կորխ Ղևեաց ցեղէն , Դաթան և Աբիրոն Ռուբենի ցեղէն , ուրիշ երկու հարիւր յիսուն հոգի ալ խօսքի տէր մարդիկ մէկ եղած՝ Մովսէսի ու Ահարոնի գէմ ելան թէ « Ինչո՞ւ դուք Աստուծոյ ժողովրդեանը կիշխէք » : Մովսէս աղաչելով կըսէր թէ « Աստուած իր ուզածը ընարեց » . Կորխին ալ կըսէր թէ « Արիջ ցեղերուն դժուարը պիտի գար աս բանիս համար , չէ թէ քեզի ու քու ցեղիդ որ Աստուած ընարէր իրեն աւեր է » : Ետքը ըսաւ անոնց որ վաղը բուրվառնին առած խորանը գան ու հոն Աստուած իր կամքը յայտնէ : Մարդ իրիկեց որ Դաթան ու Աբիրոնն ալ գան : Անոնք , « Աչու ընիս հանես չենք գար ըսին , հերիք չէ՞ քեզի որ մեզ կաթ ու մեզք բխած Եգիպտացոց երկրէն հանեցիր որ սպաննես անապատիս մէջ , ու հիմա կըսորդողիս ալ մեզի » : Մովսէս աս բանիս նեղացաւ ու ըսաւ նոյն . « Տո՛ւ աս ապերախաններուն աղօթքը մի ընդունիր » : Առաւօտանց Կորխը երկու հարիւր յիսունն ալ հետը , Մովսէս ու Ահարոնն ալ բուրվառնեքով

խորանին գուռը եկան . հոն երեցաւ Աստու-
ծոյ փառքը , ու ըսաւ Մովսէսի՝ թէ « Մէկ
դի կեցէք որ ջարդեմ բոլոր ժողովուրդը » :
Անոնք ինկան երեսնուն վրայ ու կաղաչէին
որ մէկ մարդու համար զամէնքը չպատժէ :
Աստուած նորէն հրաման տուաւ որ ա-
մէնքն ալ ան իրեք ապստամբներէն զատուին :
Ան առնն Մովսէս ըսաւ ժողովրդեան թէ
« Այնքան ըլլայ որ Աստուած զինքը խըրկէր է ,
թէ որ ողջ ողջ անոնք գեափնը անցնին » :
Աս խօսքս ըսելու առնն գեափնը պատու-
ցաւ , ու կորխը , Դաթանն ու Էփրոնը
ողջ ողջ անով տեղով մէջը տաւ : Երկու
հարիւր յիսուն հոգիին վրայ ալ կրակ իջաւ
երեց . անոնց սղնձէ բուրվառները Աստու-
ծոյ հրամանով հալեց Մովսէս՝ ու ողջակէ-
զի սեղանին վրայ անցուց որ յիշեն ու մէյ
մին ալ Ահարոնին զաւկրներէն զատ մարդ
Աստուծոյ աւջե խաւնկ չծխէ :

59.

Ահարոնին գաւառնին ծաւիւլը , +ուրէն
ըսէր Բիւիւլը , ունիէն զի :

Հ . Խորայեւրացիք կորխայ պատիժն որ
տեսան ինչ բրին .

Պ . Աւջի բերանը խիստ սարսափելով
կրար անցան . բայց մեկաւ որը վաղեցին
Մովսէսի ու Ահարոնի վրայ՝ դուք պատ-
ճառ եղաք ըսելով : Անոնք մեկէն խորանը

փախան, ամպն ալ զիրենք ծածկեց: Աստուած նորէն ուզեց ջնջել ժողովուրդը. ինկան Աստուծոյ առջև աղաչելու, Մովսէս ըսաւ Ահարոնին՝ թէ « Առ բուրվաւր, գնա՛ ժողովուրդին մեզքը քաւէ »: Ինչուան որ գնաց՝ տասնըչորս հազար եօթըհարիւր հոգի մեռան:

Հ. Իէլացոց մէջ քահանայութեան համար եղած արտունջը ի՞նչպէս վերցուեցաւ.

Պ. Ապրսպրեց Աստուած որ տասուերկու ցեղն ալ մէյմէկ դաւազանի վրայ դրեն անունին, և վկայութեան խորանը գնեն. որուն դաւազանն որ ծաղկի՛ ան է Աստուծոյ ընտրածը: Մէկալ օրը ական ու ժողովուրդեան ալ ցցուցին որ մինակ Ահարոնինը ծաղկերու ընկոյզ ալ տուեր է, որ Աստուծոյ հրամանովը տապանակին մէջ պահեցին. ժողովուրդն ալ զարհուրած ճար կը խնդրէին չի ջարդուելու: Մովսէս ալ կարգ դրաւ որ խորանին մէջ միայն Ահարոն իր աղաքներովը ծառայեն, մէկալ Ղևաոցիները իրենց գործքը ընեն. մնացած մարդիկն ալ դրսէն զևաոցոց ծառայեն:

Հ. Աւետեաց երկիրը ջնանելու պատժոյն սակը Մովսէս ալ կրակւպուէր.

Պ. Չէ. բայց շատ տարիէն ետքը, երբոր նորէն Սին անտապասը եկան, Կարէս ըսաւ ականքը բանակին գրին. հոն Մարիամ մեռնեւէն ետքը, ժողովուրդը ջրի համար սկսան տրանջաւ. « Երանի՛ թէ մենք ալ մեռած ըլլայինք՝ կրսէին »: Մովսէս Աստուծոյ հրամանովը ժողովրդեան հեռ գիմացի լէռը գնաց՝

ապառաժէն ջուր հանելու, ու տարակուսած՝ քարին վրայ ելաւ ըսելով թէ՛ Առքարէս ձեզի ջուր սխախ հանենք՝, ու գաւազանով երկու հեղ զարկածին պէս սկսաւ աւասա ջուր գալ: Բայց Աստուած յա բանիս համար բարկացաւ Մովսէսի և Ահարոնի, ու ըսաւ՝ որ Աւետեաց երկիրը չմանեն: Ասոր համար ան ջրին անունն ալ Զօր Բաճիսանաց ըսուեցաւ:

Հ. Իսրայէլացիք կողեռէն ո՛ր գնացին.

Պ. Ուղեցին անցնիչ Ազոտայ երկրէն, անոր համար մարդ իրկեց Մովսէս՝ ըսելով որ մէկ բանի մը զնա չենք բներ, միայն ճամբայ աուէք: Անոնք վախցան՝ թող չաուին, կողեռն պատերազմի ելլէլ, անոր համար գարձան հովք լեռը եկան:

Հ. Ահարոն երբ մեռաւ.

Պ. Ազխպատսէ ելլէլէն քառասներորդ ատրին, հովք լեռան տակը. հոն Աստուած Մովսէսի ըսաւ որ Ահարոնը հովք լեռը ասնի՛ քահանայապետական լաթերը հանէ Աղիազար աղին հաղցրնէ, ասանկով հարիւր քսան ու իրէք տարուան մեռաւ ու հոն թաղուեցաւ: Արեւուն որ ալ մահուանը վրայ սուգ առին:

Հ. Ահարոնին մեռնելէն ետքը Իսրայէլացոց ինչ նոր գխպուած հանդիպեցաւ.

Պ. Քանանացիք վրանին պատերազմի ելան ու Իսրայէլացիներէն գերի առին. անոնք ալ ուխտ ըրին Աստուծոյ, թէ որ մասնէ Քանանացին իրենց ձեռքը, նղովեն, Աստուած ըսեց իրենց աղաչանքին. յաղթեցին

Քանանացիներուն աւան տեղին անունը
'Եշէ' գրին : Ետքը երբոր հովր լեւնէն Սեւ
մանայ գնացին, ճամբուն նեղութեանն ձան-
ձրացած նորէն սկսան աժդոհալ Մովսէսի
դէմ, ըսելով թէ « Գաներ ենք անշահ մա-
նանայէն, ինչո՞ւ հանեցիր զմեզ Եգիպտոս-
սէն » : Աստուած ալ թիւնաւոր օձեր խրկեց
վրանին որ կըսարանէին զամենքը . սկսան ա-
ղաչել Մովսէսի որ աղօթք ընէ իրենց հա-
մար : Մովսէս Աստուծոյ հրամանով սղնձէ
օձ մը շինեց՝ ձողի վրայ բարձր կայնեցուց . ով
որ անոր կընայէր՝ կըբժշկուէր :

40 .

Բաղամ :

Հ . Իսրայէլացիք երբոր աւեակաց երկրին
մտեցան . ինչ սրամձառաւ ան տեղի ազգե-
րը իրենց դէմ սպառերազմի կելէին .

Պ . Աստուած կըգրգուէր զիրենք՝ սիրտը
նին վախ ձգելով որ չըլլայ թէ իրենց մտաս
հասցնեն իսրայէլացիք . անոր համար Ամօթ
հացոց երկիրը հասան աւանցնել կուզէին ,
Սեհն անոնց թագաւորը դէմ գրաւ . ուստի
Իսրայէլացիք ալ սպառերազմ ըրին . անոնց
երկիրներուն տիրեցին : Ետքը Բասանու Ռէզ
թագաւորն ալ դէմ ելաւ , անոր ալ յաղթե-
ցին՝ երկիրները առին : Ան ասէն Մովսէսացոց
Բաղակ թագաւորը վախուն որ չըլլայ թէ ի-
րեն ալ յաղթեն , մարդ խրկեց Բաղամ որ
դի Բեովրայ ըսուած կախարդին՝ որ գայ Իս-
րայէլացիները անիծէ :

Հ. Բաղասամ անիծեց խորայէլացիները .

Պ. Առջի բերան Բաղակայ քովն ալ չգնաց՝
Աստուծոյ հարցընելով : Բայց Բաղակ նորէն
մարդ խրկեց ընծաներով . Բաղասամ մօտիկ
չըրաւ ան գիշեր նորէն Աստուծոյ հարցուց .
« Գնա, ըսաւ Աստուած, բայց ըսածէս դուրս
մի ելլեր » : Ասաւ ասանց էջը հեծած երթա-
լու ասե՛ն միտքը փոխուելուն համար՝ ճամ-
բուն գիմացը երկցաւ հրեշտակ մը թուրը
ձեռքը, էջը սկսաւ ճամբէն դուրս փախչիլ .
Բաղասամ չտեսնելով հրեշտակը՝ զարկաւ
էջին որ շիտակ քալէ, երբոր քիչ մ'ալ առաջ
գնացին, էջը նորէն տեսաւ հրեշտակը ու
մեկդի քաշուելով այգիին սլասին քսուեցաւ
որ Բաղասամու ոտքը ճմլեց ցաւցուց, ան ալ
որդողելով կը զարնէր : Ետքը հրեշտակը նեղ
ճամբու մը վրայ կեցաւ . էջն որ տեսաւ, ալ
ճարը հասնելով նստաւ : Երբոր Բաղասամ
չարաչար կրճեծէր էջը, Աստուած բացաւ է-
ջին բերանը՝ որ ըսաւ : « Ինչո՞ւ իս կրճեծեա » :
Բաղասամ ըսաւ . « Ա՛յսն զի իս ծաղը կրնես,ս,
գանակ մը ըլլոր՝ հիմա անով կը զարնէի » : Պա-
տասխանեց էջը . « Պզտրկուց ՚ի վեր վրաս կը-
հեծնէիր, ասանկ բան ըրած ունիմ » : Բա-
ղասամ Չէ, ըսաւ, ու յանկարծ հրեշտակը
տեսաւ և մեկէն երկրպագութիւն ըրաւ :
Ան ասե՛նը հրեշտակը ըսաւ . « Ի՞նչ անդ թուք
կրճեծեա էջը, թէ որ առջևէս չփախչէր՝ քեզ
կըստաննէի » : Մեղայ ըսաւ Բաղասամ, թէ որ
կամենաս՝ ետ գա՛նաս » : Հրեշտակը, « Գնա
ըսաւ, միայն թէ Աստուած ինչ որ տուն ասոյ՝
ան ըսեա » : Երբոր հասաւ, Բաղակ անոր շատ

պատիւ ըրաւ ու բարձր ակզ մը հանեց որ
Խորայէլացիքը ականէ ու անիծ է: Ան ալ կա-
խարդական բաներով անիծելու ճար մը դրու-
նալ կուզէր՝ Աստուծակ հրաման առնելով,
բայց Աստուած՝ իրեք անգամ ալ որ կրպատ-
րաստուեր անիծելու՝ օրհնել տուաւ: Բա-
զակ սրգողեցաւ վանտեց, « Բեզի տալու
պարգևներուս արժանի չեղար ըսաւ»: Ան ա-
տենը Բաղասամ խորհուրդ տուաւ որ Մովս-
բացոց ու Մազխանացոց ազջիկներուն ձեռ-
քով Խորայէլացիքը գլխէ հանեցին ու Բեզ
փեզովը կուսքը պաշտել տուին:

Հ. Ինչ պատիժ կրեցին Խորայէլացիք Բեզ
փեզովը պաշտելուն համար.

Պ. Աստուծոյ հրամանովը Մովսէս զանոնք
անխնայ մեռցրնէլ տալով քսանուչորս հա-
զար հոգի որ մեռան Փենէհէս Ահարոնի
Թուր՝ Եղիազարին որդին՝ Աստուծային
վրէժխնդրութիւն ցուցրնելով Մազխանա-
ցոց Քաղբի իշխանին ազջիկը մեռցուց, ու ա-
նով Աստուած հաշտեցրնելով զազրեցաւ
մարդիկներուն կտորբախը: Ետքը Աստուծոյ
հրամանով հազարական հոգի ամէն մէկ ցե-
ղէն գնացին Մազխանացոց վրայ՝ Փենէհէսն
ալ հետերնին, ջարդեցին զամէնքը, Բա-
ղասամն ալ մէկ ակզ, ու ամէն ունեցածնին ա-
ւար առին: Եւ Մովսէս ան երկիրները ին-
չուան Յորդանանին քով Ռուբենի, Գադայ
ցեղերուն ու Մանասէին կէս ցեղին տուաւ՝
իրենց ուղերուն համար, խօսք գնելով որ
աներնին հոն թողուն ու իրենք մէկալներուն
հետ աւետեաց երկիրը երթան օգնեն որ

անոնք ալ ակադորուին, ու ետքը դառնան :
Հ . Մովսէս ո՛ւր մեռաւ .

Պ . Յորդանանու քովը Աստուծոյ հրամա-
նով Յեսուն իր ակա տաաջնորդ գրաւ , Իս-
րայէլացոց ալ շատ խրատներ տուաւ օրէնք-
ները ազեկ սրահէ լու . ու ամէն մէկ ցեղը զատ
օրհնէ լէն ետքը՝ Աբարիմ կամ Նաբաւ լեռը
ելաւ , ուսկից Աստուած իրէն ցցուց բոլոր ա-
ւետաց երկիրները , ու ան ակաղը մինակ մե-
ռաւ ու թաղուեցաւ հարիւր քսան տարուան .
ոչ աչուրները ակարացան , ոչ ալ երեսը խոր-
շովեցաւ , Իսրայէլացիք երեսուն օր վրան
սուգ ըրին :

41 .

ՅՐԴՆԻՆԻ ԵՆԻԼԸ -- ԵՂԾ ԴԴԵՐՆԻԵՐԸ :

Հ . Մովսէսի մեռնէ լէն ետքը Իսրայէլա-
ցիք ո՛ւր գնացին .

Պ . Աստուծոյ հրամանովը Յեսու ըսաւ որ
սրատրաստուին Յորդանանէն անցնելու . ու
երկու լրատու խրկեց Արիբով որ խմանայ թէ
ինչ մօտի վրայ են ան ակաղի մարդիկները .
ու անոնց բերած լրովը աւելի սիրտ տաւ ,
կարգով մօտեցան գետին քովը . քահանա-
ները տաջեկն տասպանակը վերցուցած . որոնք
տաւրնին ջրին դարչնէ լուն պէս Յորդա-
նան երկու բաժնուեցաւ . վարի ջրերը Մե-
ռաւալ ծովը գնացին , վերինները գիզուեցան
մնացին : Քահանաները տասպանակով դը-
նացին գետին մէջ ակաղը կեցան , ինչուան որ
ամէնը անցան :

Հ. Յորդանան գետին մէջէն Խորայէլացիք անցնելուն պէս տասանակն ալ դուրս հանեցին .

Պ. Տասանակը դուրս չելած Աստուած հրամայեց որ գետին մէջէն քահանաներուն կեցած տեղէն՝ ամէն ցեղէն մէյմէկ հողի մէյմէկ քար առնեն ու ան գիշերը ուր որ պիտի կենան՝ հոն տանին անկէն . ուրիշ աստուերկու քար ալ գետին մէջ տասանակին կեցած տեղը անկէն . ետքը տասանակը դուրս ելելուն պէս՝ ջուրը նորէն առջինին պէս սկսաւ վազել : Ասով Յեսուէն ալ Մովսէսին պէս սկսան վախնալ :

Հ. Յորդանանէն անցնելէն ետքը ինչնոր գիտուած հանգիստեցաւ Խորայէլացոյ .

Պ. Մէկէն մանանայ իջնալը գազրեցաւ . հոն առջի զատիկը ցորենէ բազարջ կերան : Յեսու ալ Աստուծոյ հրամանով դայլախաղ քարով թըլխառեց անապատը ծնածները, անոր համար ան տեղին անունը Գաղգաղա բտուեցաւ :

Հ. Յեսուայ Երիքով խրկած լրակները ինչ լուր բերին .

Պ. Գնացին Ռախաբ ըստած կնկան մը տուն . թագաւորը իմացաւ, մարդ խրկեց որ բռնեն . Ռախաբ պահեց զանոնք ու ըսաւ թէ գնացին, ետքը լրակներուն իմացուց որ ամէնքը սաստիկ վախի մէջ են, գիանալով որ Աստուած է ձեր առաջնորդը, ու երգուընցուց զիրենք որ քաղաքը առնելու ատեն իր տունը աղաակն, անոնք ալ ապրապրեցին որ պատուհանին վրայ կարմիր չուան կապէ որ ճանչ

ցուի: Ետքը զիրենք չուանով պատուհանէն վար իջեցուց՝ որ գաղաուկ ճամբով գնացին ու աս բաներս պատմեցին:

Հ. Երկրով քաղաքը ինչպէս առնուեցաւ .

Պ. Երբոր մէջի մարդիկը տարտախած՝ դռները դսցած կեցեր էին, Աստուած Յեասուայ ասըսարեց որ վեց որ մէյմէկ անգամ պարսպին չորս դին պարաին, քահանաներն ալ եօթը փող փչելով ասապանակին առջևէն, ու եօթներորդ օրը եօթը հեղ պարտելով, ետքի անգամուն փողերը փչելու ասեն բուրբ մէկէն կանչէն: Աս որ ըրին պարխայները մէկէն կործանեցան. իրենք ալ մասն զամէնքը մեռուցին՝ Ռախարէն զասքաղաքն ալ էրեցին: Ետքը Յեասու ու զէնորէն Արիքովը շինողին վրայ անէծք կարգաց ըսելով թէ «Առջինեկովը հիսը դնէ, վերջինովը դռները շինէ»: Ինչպէս որ հինգ հարիւր տարի ետքը կատարուեցաւ. Ազան կի՛ Աքիէլ Բեթեւային առջինեկ Աքիբոն աղուն հեա սկսաւ շինել, ամէն տղաքը մեռան ու մնացած պզտի աղուն հեա ըմնցուց:

Հ. Երկրովն առնելէն ետքը ՚որ քաղքին վրայ գնացին Իսրայէլացիք .

Պ. Յեասու Գայի քաղքին վրայ երթալ ու զելով ու խմանալով որ տկար քաղաք մըն է, իրեք հազար մարդ խրկեց . բայց գնացին, երեսունուվեց հոգի իրենցմէ ջարդուելով փախան: Ասոր վրայ Յեասու շփոթեցաւ՝ Աստուծոյ առջև ինկաւ կրդանդատեր, ամէնուն սիրան ալ կտարեցաւ:

Հ. Ինչո՞ւ համար Գայիի վրայ գնացող ներքը յաղթուեցան .

Պ. Վասն զի Երիբովը կործանելու ասեն՝ անոր նշոված բաներէն գողցեր պահէր էին : Աստուած , « թէ որ կուզէք , ըսաւ , առ մեզ քէն ազատիլ , վիճակով գտէք գողնուանով էրեցէք » : Աս վիճակը Յուդայի ցեղէն Աքար զննուորին վրայ ելաւ : Յետու հարցուց անոր , իմացաւ որ Երիբովը կողոպտելու ասեն՝ գողցեր է աղուոր բանած վերարկու մը , երկու հարիւր արծըթ է երկդրամեան , և լեզու մը յիսուն ոսկիի , ու վրանին մէջ հօզուն տակը պահէր է : Յետու բերել տուաւ . և Աքարն իր անով տեղովը մէկ ձորի մը մէջ տարին քար կոծեցին ու էրեցին . վրանին ալ քարեր լեցնելով լեռ ձևացաւ , որուն անունը գրին Ե՛-ի Ա՜-ւ-ւ-ւ :

42.

ԱԵՆՆ ԻԵՆԱԼԸ :

Հ. Աքարը մեռցնելէն ետքը Գայիի վրայ նորէն գնացին .

Պ. Աստուած Յետուայ ըսաւ որ բոլոր զօրքով երթայ ու կործանէ : Յետու ալ գիշերով երեսուն հազար զօրք տարաւ քաղքին ետևները պահուեցուց , ու ինքն առասուն քիչ մը զօրքով քաղքին գէմ ելաւ : Գայիի մարդիկն որ տեսան , ամէնքն իրենց թագաւորին հետ Խարայեըցոց գէմ ելան : Յետու առ վախ ցուցնելով ետ քաշուեցաւ , ին-

չուան անոնք աղէկ մը իրենց քաղքէն հեռացան, ան ատենը ետեմններուն նշան տալուն պէս՝ ելան քաղքին կրակ տուին : Գայեցիք տեսան քաղքին ծուխը՝ յուսահատեցան : Անոնք երկու կողմէն ջարդեցին զամէնքը՝ աստուերկու հազար հոգի, և թագաւորը ողջ բռնած, Յեսուէ՛ երկճիւղ փայտի վրայ կախեւ տուաւ՝ ինչուան իրիկուն. ետքը փոս մը ձգեցին՝ վրան քարեր դիզեցին ու աս յաղթուէ յիշատակ ըլլայ :

Հ. Գային առնելէն ետքը ո՛ւր գնացին Իսրայէլացիք .

Պ. Յեսուէ զիրենք Գեբաղ ու Գարիզին լեռները տարաւ. հոն քարերով Ասաու ծոյսեղան շինեց՝ վրան զո՛հ ըրաւ, և աստուածային պատուիրանքները անոր վրայ գրեց ու ամէն օր հնութիւններն ու անէ՛ծքները կարգաց որ չմոռնան :

Հ. Յորդանանէն անցնելէն ետքը ըրած յաղթութիւննին լեւրով ան աղգերը ինչ կրակին .

Պ. Սրտերնին աստօիկ վախ ինկաւ՝ ու ամենը մեկտեղ խօսք գրին ու Իսրայէլացոց գէմ ելին : Բայց Գաբաւոնացիք մտածելով որ անոնց գէմ գնել չըլլար, հեռու տեղացի ձևացան, հին պատրաստած ճամբորդի ըսթեր հագան, ու մաշած կօշիկներով, և կը արբտած գլինի աիկեր՝ չորցած որդնտած հացի կտորուանք ճամբու պաշար առած՝ Յեսուայ առջին ելան ու ըսին՝ թէ «Մեր իշխանները լեւրով Իսրայէլացոց մեծ անունը՝ կուզեն հետերնիդ գալինք գնել» : Յեսու Աս

տուժոյ չհարցուցած հաւատաց անոնց ու իշխաններուն հետ երգութեացաւ իրենց որ հետեւին թարեկամութիւն պահէ : Իրեք օրէն խնայան անոնց բանեցուցած հնարքը, ու ժողովուրդը սրգողած կուզէին ջարդել զանոնք, բայց իշխանները չթողուցին, որ Աստուծոյ անուանը վրայ ըրած երգութիւն գէժ չգործեն որ չպատժուին : Բայց Յեսու կանչեց Քարաւանացիներն ու բարկանալով անոնց՝ պատիժ գրաւ որ գերիի պէս միշտ Իսրայէլացոց և Աստուծոյ խորանին վայտ կուրող՝ ջուր կրող ըլլան : Անոնք ալ սիրով յանձրն առին :

Հ. Քարաւանացոց անձնատուր ըլլալը երբ որ մէկալ թիւրները խնայան, ինչ ըրին .

Պ. Ամէնքը շատ վախի մէջ իյնալով, վասն զի իրենց մէջ Քարաւան մեծ ամուր քաղաք էր, Ագոնիքեղէկ Երուսաղէմայ թիւրն՝ ուրիշ չորս թաղաւոր ալ մէկտեղ Քարաւանացոց վրայ պատերազմի ելան. Քարաւանացիք ալ Իսրայէլացոց գիւմեցին : Ան ատենը Յեսու Աստուծոյ հրամանովը քաջ զօրքերով գիշերանց ճամբայ ելաւ, ու լուսնալու ատենը մէկէն անոնց վրայ վազեց, Աստուած ալ քարէ կարկուտ թափել սկսաւ անոնց վրայ . անանկ որ սուրէն աւելի անով ջարդուեցան :

Հ. Ագոնիքեղէկ ու իր ընկերները Յեսուայ ձեռքէն կրցան խալըսիլ .

Պ. Չէ. վասն զի երբոր Յեսու տեսաւ որ ատենը քիչ է, յաղթութիւնը չմընցած իրիկուն կըլլայ, « Արևն ու լուսինը կենան, ըստ, չքաղեն » . մէկէն հասած անզերնին կե-

ցան, ինչուան որ Խորայեւացիքը զանոնք բոլորովն ջարդեցին ու Գաղղաղայ իրենց բանակը գարձան: Եւ որովհետեւ հինգ թագաւորներն ալ փախեր Մահեոա այրի մը մէջ պահաւանք էին, հրամայեց որ ան այրին բերանը քարերով գոցեն՝ ինչուան որ լմբնայ սպառեալով: Ետքը բանալ տուաւ, ան հինգըն ալ հանեց սրառկեցուց, ու Խորայեւացոց զօրագլուխներուն ըսաւ որ անոնց վրէժնուն վրայ կոխեն, ու սիրտ առնեն, գիանան որ Աստուած բոլոր Խորայեւացոց թշնամիները տասնկ պիտի ջնջէ: Ետքը սպաննեց ու մարմիննին ինչուան իրիկուն կախելէն ետքը՝ վար առին՝ առջի այրին մէջ ձգեցին ու մեծ քարերով գոցեցին: Անկէ գնացին ուրիշ քաղաքներու վրայ ալ, առին ու թագաւորնին վայտի վրայ կախեցին:

45.

Յեւ---այ եք+ի Գործ+երը:

Հ. Երբոր Յեսու շատ քաղաքներ կառնէր, չգանուէցան. աղգ մը որ քիչ մը ու ժով կարենայ գէմ գնել.

Պ. Յարին Սուրայ թագաւորը ոտք ելաւ, չորս գին մարդ խրկեց Ամովհայոց, Քեաացոց, Ֆերեզացոց, Յերուսացոց, Խեաացոց, և ուրիշ բովի աղգերուն, ու ամէնը մէկէն անհամար զորքով ձիերով ու պատերազմական կառքերով ժողկեցան Մառոն ջրին քովը: Անտակն Աստուած ըսաւ Յեսուոյ. « Մի վախ

նար, վաղը պիտի յաղթէք ամենուն, ձիերը
ջարդէք, կառքերը էրէք: Յետու քաջութիւն
ունեն գիէն յանկարծ վրանին վազեց՝ կտարեց
զանոնք, փախչողներուն ալ ետևէն ինկաւ՝
զամենքը մեռցուց ու երկիններնուն տիրեց:
Ասանկով վեց տարուան մէջ երեսունումէկ
թագաւոր ջարդեց ու բոլոր աւետեաց երկի-
րը մաքրեց:

Հ. Յետուայ բրած պատերազմներով ջար-
դուեցան բոլոր թշնամիները.

Պ. Մէկ քանի այլազգի տերութիւններ
թողուց Աստուած Իսրայէլացոց զգուշուն
համար, որ պարտադ կենալով չթու ընան. նաև
պէտք եղած ասանք՝ անոնց ձեռքովք պա-
ժուին խրատուին:

Հ. Յետու ինչ կարգով բաժնեց երկիր-
ները Իսրայէլացոց.

Պ. Ինչպէս որ Մովսէս որտէր էր՝ ինն ու
կէս ցեղին վրայ բաժնեց. երկու ու կէս ցե-
ղին Յորդանէն անդին տուած ըլլալով Աւ-
տացոց բաժինն ալ մասնաւոր տեղ չէր, հա-
պա քառասունևութը քաղաք ցրուած բոլոր
Իսրայէլացոց մէջ. որոնցմէ վեցը Քաշա-
տաբանի կրտսէր, որպէս զի թէ որ մէկը գե-
պուածով մարդ սպաննէ՝ հոն փախչի խալլով:
Ասկէ զատ Քաղէբայալ, բարի վկայութեանը
վարձ՝ ինչպէս որ Աստուած խոստացեր էր,
մասնաւոր տեղ տուաւ, Իսրայէլացիք ալ Աւ-
տուծոյ հրամանովը՝ Եփրեմի ցեղին երկրին
մէջ լեռան մը վրայ թամնաթասրան Յետուայ
տուին, որ հոն քաղաք չինեց ու բնակեցաւ:

Հ. Յորդանանէն անցնելէն ետքը տապա-
նակը ուր կը պահէին.

Պ . Ինչուան որ պատերազմները ընկնաւ՝ երկիրները բաժնեցին՝ Գաղղաղայ էր, ետքը Եփրեմայ ցեղին երկրին մէջ Սելով քաղաքը դրին . թէպէտ անկէ ալ Իսրայէլացիք վերուցին՝ տեղէ տեղ տարին, բայց իր հաստատ տեղը հոն եղաւ՝ ինչուան Սամուէլ մարգարէին ասենը :

Հ . Երկիրները բաժնէն ետե՛ս ամէն կերպով խաղաղացան Իսրայէլացիք .

Պ . Երբոր խաղաղ կեցեր էին՝ յանկարծ շփոթութիւն մը պատահեցաւ : Ան երկու ցեղ ու կէսն որ Յորդանանու անդի ի կողմը գնացին տեղաւորուեցան, հոն մէկ մեծ սեղան մը շինեցին : Մէկալ տասը ցեղը երբոր խմացան՝ ծուռ մտքի գնացին . անոր համար խորհուրդ ըրին որ անոնց վրայ պատերազմի ելեն : Բայց առաջուց աղէկ մը խմանալու համար՝ Փենեհէս քահանան՝ ուրիշ խօսքի տէր մարգիկներու հետ մէկ տեղ անոնց խորհեցին, որ գնաց յանդիմանեց զանոնք թէ կռատաշտութիւն ընել սկսեր են : Անոնք պատասխան տուին թէ անոր համար շինեցինք որ ետեի եկողները խմանան թէ մենք ձեզի հետ եղբայր ենք : Ասով ամենուն սիրտը հանդիւսեցաւ ու փառք տուին Աստուծոյ՝ որ աս մեղքէս ազատ են եղեր : Յետու ալ ան սեղանին անունը դրաւ՝ Այայ-ի-ն, որ ան ցեղերն ալ մէկաշնոնց հետ մէկ Աստուած կրպօղան :

Հ . Յետու Թամնաթսարան երթալէն ետքը յիշատակի արժանի ինչ բան ըրաւ .

Պ . Ահրջի ծերութեան ասենը բոլոր մե-

Տերը քովը կանչեց ու մտքերնին ձգելով Աստուծոյ անհամար բարերարութիւնները, յորդորեց որ չըլլայ թէ կուսքերուն ետեւն երթալով Աստուած վրանին բարկացընեն : Երգում ալ առաւ իրենցմէ որ յաւիտեան իրենց Աստուածը պաշտեն . և աս բանիս յիշատակ՝ խորանին քովը մեծ քար մը անկեց որ որդւոց որդի յիշեն աս Աստուծոյ հետըրած ուխտերնին . իսկ ինքը բարի Տերութեամբ հարիւր տասը տարուան մեռաւ : Վըրան շատ շանցաւ՝ Եղիազար քահանայապետն ալ մեռաւ, և տեղը անցաւ Փենեհէս որդին :

44 .

Ք-շէ՛՛, Գ-Բ-նի՛էլ, Լ-նի՛շ, Ս-նի՛գ-ր :

Հ . Յետուայ մեանեւէն ետե ո՞վ կղաւ առաջնորդ Իսրայէլացոց .

Պ . Աստուծոյ հրամանովը Քաղէք՝ Յուդայի ցեղէն : Ան ատենը Յուդայի ցեղը՝ Շմաւոնի ցեղը հետը առած Քանանացոց ու փերեզացոց գէմ ելլել սկսան . Ադանիրեզէկ թագաւորն ալ բռնեցին ու ձեռուընները ստուընները կտրեցին : Ինքն ալ ան ատենը բսաւ թէ « Ըրածիս հասուցումը գաայ, որ եօթանասուն թագաւոր բռներեմ՝ ու անոնց ձեռուընները կտրած սեղանիս տակը շան պէս ինկած փշտանքները բերնով կառնեին ու կուտէին » :

Հ . Իսրայէլացիք մնացին միշտ իրենց աստուած պաշտութեան մէջ .

Պ. Քանի որ Յեսուայ ասենի ծերերը կային՝ Աստուծոյ օրէնքները կըստահէին. անկէ ետքը սկսան գէշնալ՝ կսւսք ալ պաշտել. անոր համար Աստուած Քուսարսաթէմ Ասորոց թագաւորին մասնեց զիրենք, և ութը տարի չարաչար ծառայելէն ետե՛ կըբորնորէն Աստուծոյ դիմեցին. Գոթոնիէլ Քաղերայ պզտի եղբայրը իրենց առաջնորդ տուաւ, որ Իսրայէլացիները ազատեց՝ ու քառսուն տարիէն մեռաւ :

Հ. Գոթոնիէլէն ետքը ո՛վ իշխեց.

Պ. Նորէն մնացին ինքնագլուխ ու սկսան մեղանչել. ուստի Եգիպտոս Մովարացւոց թագաւորը վրանին օիրեց՝ տասնևութը տարի, ինչուան որ նորէն Աստուծոյ ինկան : Անտենը Աստուած Աւովգը Բենիամինի ցեղէն իրենց առաջնորդ տուաւ որ երկու ձեռքով ալ յաջող էր :

Հ. Աւովգ ինչպէս ազատեց Իսրայէլացիները գերութենէ .

Պ. Անգամ մը Իսրայէլացիք իրեն տուին ընծանին որ տանի Եգիպտոսն. ինքք երկասյրի սուր մը մէկ թիղ երկայն՝ աջ կողմը վերսկուին տակը ստահեց ու գնաց : Ընծաները աալէն ետքը մարդիկը դուրս ճամբեց, ու Եգիպտոս ըսաւ թէ գաղտուկ խօսք մը ունիմ. Եգիպտոս ալ քովի մարդիկը դուրս հանել տրուաւ. անտեն Աւովգ ըսաւ. Աստուծոյ կողմանէ քեզի բան մը պիտի ըսեմ : Եգիպտոս ալ քովը մօտեցաւ, Աւովգ շուտ մը ձախ ձեռքովը գանակը քաշեց՝ Եգիպտոսն կուշար խաթեց թողուց ու արտորնօք դուրս ելաւ՝ գու-

ու վրայէն կղպեց ու գնաց : Թագաւորին ծառաները եկան տեսնն որ կղպած է, կարծեցին թէ ինքը ներսը հարկի համար կուշանայ, խել մը ստատելէն ետեւ, բանալին բերին՝ դուռը բացին տեսնն որ Եգզոմը մեռած գեաինը փռուեր էր : Երբոր Մովսէսացիք շփոթած իրար անցեր էին, Աւովց գնաց շուտով Իսրայէլացիքը ժողովեց՝ դարձաւ մէկ օրուան մէջը առաջ հազար հոգի ջարդեց, ու Իսրայէլացիքը գերութենէն խաշտեց, որ ութսուն տարի չափ ազատ մնացին . ու ինքը Աւովց ինչուան որ մեռաւ՝ անոնց դատարութիւն կրնէր :

Հ . Աւովցէն ետքը ո՞վ եղաւ դատար .

Պ . Սամեգար՝ Անաթայ որդին կարիճ մարդ մը, որ շատ օգնութիւն ըրաւ Իսրայէլացոց . մէկ հեղ մը արօրին մաճովը վեց հարիւր այլազգի մեռցուց, ու շատ կովեր ու ոչխարներ կողոպտեց :

43 .

Դէբօրա և Բաբի :

Հ . Սամեգարին ո՞վ յաջորդեց .

Պ . Երբոր Իսրայէլացիք նորէն ճամբանին փոխեցին, Աստուած զիրենք մատնեց Քանանացոց Յարին Թագաւորին ձեռքը քսան տարի՞ որ շատ ուժով էր, ինը հարիւր երկըթէ կառք ունէր : Աս ատենները Իսրայէլացոց կառաջնորդէր մարգարէ կնիկ մը՝ Դեբորա անուհով : Երբոր Իսրայէլացիք զղու-

մի եկան՝ Դեբորան կանչեց իրեն Բարակը՝
Նեփթաղիմի ցեղէն ու ըսաւ . « Աստուած
կըհրամայէ որ Թաբօր լեռը երթաս՝ Նեփթա-
ղիմի ու Զաբուղոնի ցեղերէն աասը հազար
հոգի հեադ առնես երթաս Ախտնի հեղեղա-
տը՝ Յարին թգրին Սիսարա զորապետին
դէմ » : Բարակ ըսաւ Դեբորայի . « Թէ որ
հեառ դաս՝ կերթամ » : Դեբորան խօսք տը-
ւաւ , բայց գիտնաս ըսաւ՝ որ ան առենը յաղ-
թու թիւնը քուկդ չըջար . ու մէյակը գնա-
ցին : Արբոր իմացաւ Սիսարա՝ բոլոր զօրքե-
րով երկրթէ կառքերով եկաւ Ախտնի հեղե-
ղատը՝ Իսրայէլացոց դէմ : Դեբորայի ըսածին
պէս Բարակն որ Թաբօր լեռնէն ինջաւ պա-
տերազմի՝ Աստուած սասաիկ շիտթու թիւն
ձգեց մէջերնին որ փախչող փախչողի եղան ,
ու Բարակ ետնին ինկած զամէնքը Զարդեց :
Սիսարան ազատելու ճարը փրնտուելով աւ-
քով վազելով Աինեցոց կողմը գնաց :

Հ . Աինեցիք ո՞վ էին , և ինչ օգնութիւն
ըրին Սիսարայի .

Պ . Պզտիկ ազգ մըն էին որ եկեր վրանովան
տեղուանքը կըբնակէին . և Մովսէսի կնկանը
դիէն Իսրայէլացոց ինամի ըլլալով բարեկամ
էին , բայց այլազգիներուն հեա ալ թշնամի
չէին : Յայէլ՝ Քաբեր կինեցիին կնիկը՝ Սի-
սարայի դէմը հանդիպեցաւ ու ներա կանչեց
որ հանգչի . խմելու ջուր ուզեց , Յայէլ
ջրին տեղը իրեն կաթ խմցուց , ու ներա՞նոր
ուզածին պէս գաղտուկ պառկեցուց՝ վրան
ծածկեց որ մարդ չիմանայ , ու ինքը գնաց
վրանին ցիցն առաւ և ուռով զարկաւ Սիսա-

րայի գլուխը գետինը գամեց մեռուց: Բարակը հասաւ Սիսարան կրփնտուէր, Յայէլ ներս կանչեց զինքը՝ ցցուց: Ասանկով Աստուած Իսրայէլացիքը խաչքսեց. Գերորան ալ Բարակայ հետ փառք տալով Աստուծոյ շնորհակալութեան գովասանք մը ըրին:

46.

ԳԵՂԷՆ:

Հ. Բարակայ ձեռքով եղած Իէլացոց ազատութիւնը սրչափ դիմացաւ.

Պ. Քառասուն տարի, ետքը նորէն Աստուծոյ երեսէն իյնալով՝ Մագիանացոց և Ամաղեկացոց ձեռքը մասնուէցան. ետժը տարիէն երբոր Աստուծոյ ինկան, Աստուած մարդարէ մը խրկեց որ ըրած մեղքերնին երեսնին տուաւ՝ խրատեց: Ետքը հրեշտակ մը խրկեց Գեղէոնին՝ Մանասէի ցեղէն. երբոր ասիկայ Մագիանացոց ձեռքէն փախած՝ իր հօրը կալը ցորեն կրճեծէր, հրեշտակն եկաւ ըսաւ՝ թէ « Աստուած քեզ ընտրեք է որ թշնամիները վանտես »: Գեղէոն ըսաւ. « Ես ո՛վ եմ որ Իէլացիքը ազատեմ »: Հրեշտակը պին տուաւ՝ թէ « Աստուած հետրդ է »: Անտան Գեղէոն նշան մը ուղեց. աղաչեց հրեշտակին որ հոն կենայ՝ ինչու ան ինքն Էրթոյ իրեն համար կերակուր բերէ. ու դնաց Գեղէոն շուտով ուլ մը սպարատեց ու բազարջ հաց շինեց, հրեշտակին տուցեր բերաւ. հրեշտակն ըսաւ որ գէ

մայր քարին վրայ դնէ ան բաները , և ձեռքի
գաւազանովը մօտն գպածին պէս՝ քարէն
կրակ ելաւ էրեց կերակուրները , ու հրեշ-
տակն ալ աներևոյթ եղաւ : Գեղէոնն աս
հրաշքովս իմացաւ որ հրեշտակ Աստուծոյ
է եղեր՝ վախցաւ , և սնն անզը Աստուծոյ
սեղան շինեց : Ան գիշերը Աստուած Գե-
ղէոնի հրամայեց որ երթայ իր հօրը Բահաղ
կուռքին սեղանը կործանէ , քովի անտառը
կտրէ , և ան փայտերով՝ իր հօրը եօթը
տարուան գիրցուցած եզը՝ Աստուծոյ ողջա-
կէզ ընէ՝ նոր շինած սեղանին վրայ : Գեղէոնն
վախցաւ ցորեկն ընելու . ուստի գիշերը ելաւ
գաղտուկ տասուկրէք հողի առաւ իր հօրը
ժառանգէն՝ գնաց Աստուծոյ հրամանը կա-
տարեց : Առաւօտանց քաղքին մարգիկը իմա-
ցան որ Գեղէոնն ըրեր է , հօրը եկան , կու-
զէին որ Գեղէոնը տայ որ սպաննեն : Հայ-
րը սլին տուաւ . Բահաղը թէ Աստուած
է ինքը թող վրէժ առնէ : Գեղէոնին անունն
ալ Յէրոֆոլ գրաւ , իրր թէ Բահաղ կուռ-
քին յողթող :

Հ . Երբ գնաց Գեղէոն Մաղխանացայ և
Ամաղեկացոյ գէմ .

Պ . Աստուծոյ իրեն երևնալէն ետքը երբ
որ լսեց թէ անոնք նորէն վրանին կուգան ,
կանչեց Իէլացիքը Ասերի , Զարուղոնի և
Նեփթաղեմի ցեղերէն՝ որ դէմ ելլեն : Բայց
նորէն Աստուծմէ աս նշանս ինգրեց , որ
գզած մը գիշերը գուրս փուէ , ու ան գզա-
թին վրայ միայն անձրե գայ . առաւօտանց
որ ելաւ գզածը քամեց կոնք մը ջուր ելաւ :

Ասոր տեսաւ՝ մէյմ'ալ խնդրեց որ ասոր ներհակը՝ ան դաւածը չոր մնայ . ու բոլոր գեականը թըջի : Աս երկու հրաշքով սիրտ առած , երբոր ելաւ թշնամիներուն գէժ երթալու , Աստուած « Շատ են , ըսաւ , ջորքդ . ետքը կրկարժեն թէ իրենց ուժովը յաղթեցին . ըսէ որ վախկոտները եւս դառնան » : Ան ասենը քսանուերկու հազար հոգի եւս գնացին ու ասոր հազար մնացին : « Աստուած շատ են ըսաւ Աստուած . ուստի ան ա մէնը ջրի քով տար , ու հոն նայէ թէ ո՞վ ջուրը արը առած շան պէս կըլափէ , ու ո՞վ ծնկան վրայ ինկած , ու մէկ մէկէ զատէ » : Ասանկով միայն իրեք հարիւր հոգի շան պէս լափելով խմեցին . և Աստուած ըսաւ Գեղեհոնին . « Մինակ աստնցնով Խորայէ լացիքը պիտի Մազխամու ձեռքէն ազատեմ , մէկալները ճամբէ » :

Հ . Գեղեհոն իրեքհարիւր հոգւով ինչ պէս պատերազմեցաւ Մազխամու հետ .

Պ . Առաջ Աստուած իրեն սիրտ տալու համար հրամայեց որ ինքը իր Փարս աղուն հետ գիշերանց դադաուկ թշնամիներուն բանակը երթայ , ու ըսէ ինչ որ կրխօսին : Գեղեհոն գնաց ըսեց որ զինուորին մէկը մէկալն երազ կըպատմէր , թէ « Տեսայ որ մէկ գարիէ նկանակ մը գլորեցաւ դէպ'ի մեզ , ու զարկաւ կործանեց բոլոր Մազխամու բանակը » : մէկալն ալ ըսաւ , թէ « Աս Գեղեհոնի սուրն է , Աստուած զմեզ անոր ձեռքը տուեր է » : Գեղեհոն Աստուծոյ շնորհակալ ըլլալով բանակը գարձաւ « Ելէք , ըսաւ ,

Աստուած Մաղխամբ մեր ձեռքը մասնեց” .
ու իրեք հարիւրը իրեք դունդ բաժնեց ,
և զէնքի տեղ ամենուն մէկ ձեռքը եղջիւրէ
փող առաւ , ու մէկալ ձեռքը վառած ճրագ՝
սափորի մէջ ծածկած . և ապրասպրեց որ իրեն
նային ու անանկ ընեն : Աէս գիշերուան մօտ
յանկարծ թշնամիներուն բանակը գնացին ,
ու մէկէն փողերնին փչելով սափորնին կո-
արբակցին՝ ճրագները դուրս երեցան , ու
մէկ բերան սկսան կանչել , Ս—ր Տ—ան և
Գէրէնի : Աս բանովս Աստուած Մաղխա-
մու բանակը անանկ վախ մը ձգեց որ մէկ-
զմէկ թշնամի կարծեւով անխնայ կըջար-
գէին , ինչուան հարիւր քսան հազար հոգի
մեռան : Փախածներուն համար ալ մարդ
խրկեց մէկալ Ն՛լլացոց , որ գէմերնին ելէն
չարդէն : Որէք ու Ջէք իշխաններուն ալ
զլուխնին կարեցին , Գեդէոնի բերին :

Հ . Զահեքով վախցրնելով Մաղխամու
զօրքը չարդէլէն զսա Գեդէոն ուրիշ ինչ
սլատերազմ ըրաւ .

Պ . Երկու Մաղխամու թագաւորներ՝
Ջէբէի և Սաղմանա՝ տասնըհինգ հազար
զօրքով փախեր էին ուրիշ տեղ : Եսենուն
գնաց Գեդէոն , բայց հոգնած և անօթի
ըլլալով զօրքը՝ հանգիստեցան Սոկքով թ քա-
ղտքը որ քիչ մը հաց տան . անոնք շտուին՝
ըսելով , « Ո՛ւր են թագաւորները , ջցո՛ւր որ
տանք » : « Երբոր բռնեմ զանոնք , ըսաւ Գե-
դէոն , զձեզ փուշերու վրայ կըտանջեմ » . ու
գնաց փանուէլ քաղտքը . անոնք ալ առա-
ջններուն սէս ըսին . անոնց ալ սպառ-

նացաւ որ կործանէ իրենց աշտարակը: Գնաց ջարդեց զամէնքը . թագաւորներն ալ բռնեց ու գարձաւ, ըրած սպառնալիքները կատարեց ու փանուէլի մարդիկն ալ սպաննեց: Ետքը Չերէի ե Սաղմանա թագաւորներուն համար իրեն Եթեր անդրանիկ տղուն ըսաւ թէ Եւ մեռցուր . սն դեռ սղտիկ ըլլալուն՝ վախցաւ . անոնք ալ ըսին Գեղէոնի թէ Դու զմեզ սպաննէ որ ուժով կարիճ ես . սն ատենը ելաւ ինքը մեռուց, ու անոնց ուղտերուն մանեակներն ալ առաւ:

Հ . Ի՛նչացիք Մագխամու ձեռքէն ազատեւնուն համար Գեղէոնին ինչ փոխարէն ըրին .

Պ . Ուղեցին որ ինքը ու իր տղոքը իրենց առաջնորդ ըլլան . Գեղէոն ըսաւ թէ Չեր իշխանը Աստուած է . ու խնդրեց անոնցմէ որ թշնամիներուն կողոպուտներէն մարդագլուխ իրեն մէյմէկ օղ տան . իրենք ալ սիրով աուին, ու ամենը եղաւ հազար կօթը հարիւր սիկղ սակի, թող ուրիշ սակիէ առած զարդերը:

Հ . Գեղէոն ժողովուրդէն առած զարդերը ինչ ըրաւ .

Պ . Աւելորդապաշտական բաներ չինեց Եփրա քաղքին մէջ, որ ետքը իրեն՝ իր զաւակներուն մեզաց պատճառ եղաւ, նաև Ի՛նչացոց ալ: Ասանկով քառասուն տարի՝ Գեղէոնին ատենը Ի՛նչացիք ազատ մնացին, ու ետքը նորէն սկսան կռապաշտութիւն ընել:

ԱՔԻՄԷԼԷ :

Հ . Գեղեցիկն անզը դասաւոր ս՛վ նըս-
տաւ .

Պ . Գեղեցիկն եօթանասուն զաւակ թո-
ղուցիք էր , Աբիմէլէքն ալ Սիկիմացի կինն էր
եղած : Ասիկայ մօրը ազգականներուն
ձեռքովը Սիկիմացոց սիրաբ իրեն քաշեց՝
որ հօրը անզը Նէլացոց իշխան դնեն . և
ասպահով ըլլալու համար՝ մեկէն Սիկիմա-
ցիներէն առած ստակով սրիկաներ ժողովեց՝
ու գնացիր եղբայրները եօթանասուն հօգի
քարի մը վրայ մօրթեց . միայն սղօտիկը Յո-
վաթամ սպահուրակով ազատեցաւ : Ետքը
Սիկիմացիք ու Մասադոն քաղքին մարդիկը
Աբիմէլէքը թաղաւոր նստեցուցին : Յո-
վաթամ անոնց առակով մը խնացուցոր գէշ
ըրին :

Հ . Յովաթամ Աբիմէլէքին թաղաւորե-
լուն վրայ ինչ առակ բերաւ Սիկիմացոց .

Պ . Գնաց գիմացը Գարիզին լեռը ելաւ
ու սկսաւ կանչել . « Մտիկ ըրէք Սիկիմացիք .
ծառերն ուզեցին իրենց թաղաւոր մը .
գնացին ձիթենիին ըսին , անիկայ սրտաս-
խանեց թէ Ես չեմ թողուր իմեզս , որ անով
Ատուած ու մարդիկ իս կրմեծարեն , ու
չեմ երթար ծառերուն իշխելու . ետքը գնա-
ցին թզենիին որ քայ իրենց թաղաւորի . ան
ալ յանձն չառաւ՝ իր անուշութիւնը յի-

չելով . գնացին որթին , որթն ալ շուգեց ,
իմ գինիս՝ փայտերուն իշխելէն ազէկ է
ըսելով . ան առեն գժնիկը կանչեցին , ու
բախացաւ գժնիկն ու ըսաւ . Եկէք իմ շու-
քիս տակը : Ի՞նչ կըկարծէք , ըսաւ Յովա-
թամ , գժնիկէն կրակ չեւէր ու ջայրեր ե-
ղնափայտերը : Թէ որ արգարուծիւն էր
Գեղէնի տանը վրայ ըրածնիդ , բարով վայ-
լէք մեկզմեկ . թէ չէ՝ սիտի կրակ ելէ Եբի-
մեւէքէն՝ ու զձեզ այրէ : Ասխօսքերէն ետ-
քը փախաւ գնաց :

Հ . Գեղէնի աղուն Եբիմեւէքայ թա-
ղաւորուծիւնը ի՞նչ վերջ ունեցաւ .

Պ . Ինչպէս որ Յովաթամ ըսեր էր , Եբի-
մեւէք իրեք տարի չափ անկարգութեամբ
Իէլացոց իշխելէն ետքը , չգիտացան Սիկի-
մացիներն , ու Գասաղ իշխանին հետ գէմն
եւան : Եբիմեւէք Սիկիմացոց վրայ գնաց՝
ջարդելով ցրուեց . ետքը իմացաւ որ Սիկի-
մի բերդին մէջ շատ մարդ ժողովեր է , ըսաւ
իր զօրքին , « Ինչ որ ես ընեմ՝ դուք ալ ըրէք » .
ետքը առաւ կացին մը՝ բեռ մը փայտ կտա-
րեց՝ ուսը զարկաւ , զօրքն ալ ըրին իրեն
պէս ու գնացին բերդին կրակ տուին , ուր
հազար հողի չափ երեցան : Անկէ Թերէս
քաղքին վրայ գնաց՝ առաւ . ան քաղաքը
ամուր բերդ մը ունէր , մեծամեծները հոն
փախան : Երբոր Եբիմեւէք բերդին դրանը
մտեցաւ՝ վերէն կնիկ մը երկանի քարի կտոր
մը ձգեց գլխուն վրայ ու ջախջախեց . ան ա-
ռեն յուսահատած՝ ըսաւ կապարճակիլին
որ սուրը հանէ՝ զինքն սպաննէ , որ չըլլայ

ուր որ Ինչացիքը ժողովեր էին : Դեպքան խրկեց Ամենացոց թագաւորին թէ « Ինչուն եկեր պատերազմ կրնես » . թագաւորը պատասխան տուաւ թէ « Իմ երկիրներս ետտուէք » : Յեփթայէն նորէն խրկեց ըսաւ թէ « Ինչացոց ճամբայ ընելու ատեն աս անդի մարդիկը մեզի գէմ ելան , մենք ալ անոնց յաղթելով մեր Աստուծոյ օգնութեամբը՝ պատերազմական իրաւունքով աս երկիրները առինք՝ իրեք հարիւր տարի առաջ . հիմա աս քու ըրած անիրաւութեանդ գատաստանը Աստուած անանկ » : Երբոր թագաւորը մտիկ չըրաւ , ան ատենը Յեփթայէն Աստուծմէ շարժած՝ շուտ մը պատրաստուեցաւ պատերազմի , և Աստուծոյ ուխտ ըրաւ որ եթէ Ամենացոց յաղթէ , իր տունը գանահալու ատեն՝ ով որ առաջ իրեն գիտացը գայ , անիկայ Աստուծոյ ողջակէզ ընէ : Եսքը գնաց թշնամիները շարաշար կտարակց , քըսան քաղաք առաւ ու գարձաւ :

Հ . Յեփթայէն ըրած ուխտը ինչպէս կատարեց .

Պ . Երբոր Մասեփա քաղաքն իր տունը կը գառնար՝ իր մէկ հասիկ աղջիկը պար բըռնած թմբուկ զարնելով գիտացը ելաւ : Յեփթայէն ջաւեցաւ՝ « Այնինքի գուտար , ըսաւ , ուխտ ըրեր եմ որ նախ ով որ գիտացաւ ելլէ , անիկայ Աստուծոյ ողջակէզ ընեմ » : Աղջիկը սիրով յանձն տուաւ , միայն երկուամիս ատեն ուղեց որ երթայ լեռները իր ընկերներուն հետ լայ իր կուսութիւնը . երկուամսէն ետե կատարեց Յեփթայէն իր Աս-

առւծոյ բրած ուխտը : Եւ ան առե՛նէն սո-
վորութիւն եղաւ Ինչացոց մէջ՝ տարին չորս
օր աղջիկները մէյտեղ եկած՝ Յեփթայէի
աղջիկանը վրայ ողբ կընէին :

Հ . Յեփթայէն Ամոնացոց պատերազմն
ըստ ինչ պատերազմ բրաւ .

Պ . Եփրեմայ ցեղին հետ մեծ պատերազմ
բրաւ . վասն զի անոնք իրեն նախանձելով
անցան Եորդանան գետը՝ եկան ըսին թէ
« Ինչո՞ւ մեզ չկանչեցիր Ամոնացոց գէմ » , ու
կուղէին իրեն վնաս հասցընել : Յեփթայէն
պատասխան առաւ թէ « Կանչեցի , բայց
դուք չեկաք , Աստուած ալ բանս յաջո-
ղեց » : Երբ տեսաւ որ անոնք չեն հանդարտիր՝
սկսաւ անոնց հետ պատերազմելու ու մեծ
ջարդ տուաւ . ետքը փախչողներն ալ որ
Եորդանանի մէկ նեղուցէ մը պիտի անցնէին՝
բռնել կուտար՝ կըհարցընէր թէ Եփրեմայ
ցեղէն են . երբոր Չէ կըսէին , իրենց ըսել
կուտար սա բաւը՝ շփոթուէին , որ հասի ըսել
է , ու սվ որ շտակ ըսել չկրնալով « Ի՞նչ
կըսեր , ան կըմեռցընէին . և ասանկով
քառասունուերկու հազար հոգի կորուե-
ցան անոնցմէ : Ամենը վեց տարի դատաւո-
րութիւն ընէլէն ետքը մեռաւ :

Հ . Յեփթայէին ո՞վ յաջորդեց .

Պ . Եսեբոն Բեթղէհեմացին՝ եօթը տա-
րի . որ երեսուն մանչ ունէր , երեսուն ալ
աղջիկ , և ամէնն ալ ինքը կարգեց : Ետէն
նստաւ Էլոն Զարուղոնացի տասը տարի :
Ետքը Աբգոն Փարաթոնացի՝ Եփրեմի ցե-
ղէն՝ ութը տարի . քառասուն աղաք ունէր ,
երեսուն ալ թոռ :

49.

Սահման :

Ն . Արդոնէն ետքը Իսրայէլացոց մի կա-
ռաջնորդեր .

Պ . Նորէն աստուած սպաշտութենէ թու-
նալով քառասուն տարի այլազգիներուն
սակը ինկան : Ան ատենները Դանայ ցեղէն
Մանովէ անունով մէկը ամուլ կին ունէր .
որ մը հրեշտակ Աստուծոյ երեցաւ աս կըն-
կան , ու ըսաւ թէ « Դուն աղայ պիտի բե-
րես՝ ուխտաւոր Աստուծոյ . բայց զգուշա-
ցիր գինիէ օղիէ և ուրիշ անսուրբ կերակու-
ներէն ու աղուն ալ մազը ամենեկին պիտի
չկարուի . անիկայ Իէլացիները կազատէ » :
Աինը երբոր սրտամեց Մանովէի , աղաչեց
Աստուծոյ որ ան սուրբ մարդը մէյմըն ալ
խրկէ որ խմացընէ ինչ պիտի ընեն ան աղ-
ղին : Հրեշտակը նորէն երեցաւ կնկանը , ան
ալ շուտ մը վազեց երիկը կանչեց , որ նորէն
հարցուց ան բաները հրեշտակին . ետքը
Մանովէ ուղեց անոր սեղան ընել , հրեշտա-
կըն ալ ըսաւ , « Ես չեմ ուտեր , Աստուծոյ
նուիրէ » . ան ատենը Մանովէն՝ « Անունդ
ինչ է , ըսաւ , որ ըսածներդ ըլլան նէ զքեզ
որհնենք » : Հրեշտակը սրտատախանեց՝ Աբան
չեի է : Մանովէն սկսաւ զոհ ընել Աստու-
ծոյ , հրեշտակն ալ կրակին բոցովն երկինք
ելաւ : Աս որ տեսան՝ սաստիկ վախցան ,
խնամալով որ հրեշտակ է եղեր : Ետև ատե-

նին կնիկը աղան բերաւ , անունը Սամիսոն գրին :

Հ . Սամիսոնին առջի զարմանա լի գործքը որն եղաւ .

Պ . Անգամ մը Թամնաթա գնաց , ու հոն այլազգի ազգիկ մը տեսաւ , եկաւ իր ծնողացը ըսաւ որ ան աղջիկը իրեն առնեն : Ծնողքը չգիտնալով որ աս բանս Աստուծմէ է , չէին ուզեր՝ այլազգի ըլլալուն համար . բայց երբոր ճար չեղաւ՝ մէյակեղ ելան Թամնաթա գնացին խօսելու աղջկան համար : Ըամբան Սամիսոն այդիներու մէջէն մինակ երթալու ատեն , յանկարծ առիւծի ձագ մը վրան վազեց , Սամիսոն բերնէն բռնեց բացաւ երկուք ճղքեց , ու ետքը ծնողացը բան մը չըսաւ :

Հ . Սամիսոնին երկրորդ կործութեան գործքը որն է .

Պ . Քիչ ատենէն նորէն հարսնիք ընելու համար Թամնաթա երթալու ատեն՝ գնաց ան մեռուցած առիւծը նայելու , տեսաւ որ մեղուները բերնին մէջ մեզք շիներ են , առաւ ճամբան ուտելով կերթար , հօրը մօրն ալ տուաւ : Որովհետեւ հարսնիքը եօթն օր կըքշէր , այլազգիք վախցան իրմէն ու երեսուն կարիճ գրին Սամիսոնի քով ընկերութեան համար : Սամիսոն ըսաւ իրենց , « Չեզի հանելուկ մը ըսեմ . թէ որ աս եօթն օրուան մէջ գիտնալու ըլլաք , երեսուն կըտոր բարակ կտաւ ասմ , երեսուն ալ հագնելու լաթ . թէ չէ գուք ինծի տաք » . և հանելուկը աս էր .

Կեր-ի-ու-ր՝ ի-եր-չե-ն

Եւ-ու- ք-ու-ր- ք-ի-ն-ն :

Իրեք օր մտածելով երբոր չկրցան մեկնել, գաղտուկ սկսան աղաչել Սամփասնի հարսին որ խմանայ իրմէն ու իրենց զրուցէ . թէ չէ՛ կայրենք կրսէին զքեզ անովք : Կնիկն ալ աղաչելով այնչափ բան ըրաւ, որ եօթներորդ օրը բերնէն առաւ, ետքը անոնք ալ Սամփասնի ըօին .

Աւ Բնչ Ի-ոյ մեշրէն անոյչ,

Ո՛վ ք-նի ք-ի-ն-ն ք-ի-ն :

Սամփասն խմացաւ խարէու-թիւնը, և ինքն ալ ասանկ պատասխան տուաւ .

Թե ընչեի՛ք իմն երիւնչ,

Գ-ու- ք-ի-ն ք-ի-ն-ն ք-ի-ն-ն ք-ի-ն :

Ու սրբողած շուտ մը Ասկաղոն գնաց, երեսուն այլազգի սպաննեց, ըստ բերնին բերաւ անոնց տուաւ . ետքը կնիկն ալ ձգեց՝ իր հօրը ասնը դարձաւ :

Հ. Սամփասնին երբորգ կարծու-թիւնը ո՛րն է .

Պ. Երբոր բարկու-թիւնը անցաւ, ուլ մը հեօք պարգև առած՝ ուզեց օր կնկանն երթայ . ու երբոր խմացաւ որ ուրիշի մը հետ կարդուեր է, գլուխը տաքցաւ՝ գնաց իր սիրը հանելու այլազգիներէն . իրեք հարիւր աղուէս բանեց, երկերկու աղուէս պոչ պոչի կապեց, և սոչերնուն մեջուկը մէյմէկ ջահ կապեց ու այլազգիներուն արանըրը թողուց որ այրեցին բոլոր ցորենները՝ այգիներն ու ձիւթներն : Տէրերն որ խմացան թէ ո՛վ է ըրեր, և ինչ պատճառաւ, և կան Սամփաս-

նի աներոջը տանը կրակ տուին, որ աղջիկն
ալ հետը անով տեղով այրեցաւ : Ասով
Սամփսոնի սիրտը չիջաւ, ուստի որիչ շատ
մարդիկնեք ալ սպաննեց, ու գնաց Եսեմ
ըսուած այրը նստեցաւ :

30.

Հ. Սամփսոնի չորրորդ կարճաւթիւնը
որն է .

Պ. Այլազգիները զորքով Յուդայի ցե-
ղին վրայ գնացին, ուզեցին որ Սամփսոնը
կտապած ձեռու ընին տան : Յուդայի մարդիկն
իրեք հազար հոգի Սամփսոնի եկան, ըսին
թէ : « Ի՞նչ կրնես, չէ՞ս գիտեր որ ազատ չենք .
ուստի հիմա այլազգիները քեզ կուզեն » :
Սամփսոն առաջ երգուընցուց որ իրենք չու-
պաննեն զինքը, ու թողոց որ իրեք նոր
հաստ չուաններով կապեն զինքը, տանին
այլազգիներուն տան : Երբոր այլազգիները
տեսան՝ սկսան ուրախանալ . ան տեղը
Սամփսոն թօթփելուն պէս կարեց ան չուան-
ները, գեանէն իշու ծնօտ մը գտաւ, ու ա-
նով հազար հոգի մեռուց : Ետքը սաստիկ
ծարուելով Ասաու ժէ ջուր խնդրեց . Աս-
տուած ալ ծնօտէն իրեն ջուր բխեցուց :

Հ. Սամփսոնի հինգերորդ կարճաւթիւնը
որն է .

Պ. Ելաւ Սամփսոն Գազա գնաց . թշնա
միները եկան գիշերանց քաղաքին գոները
առին որ բանէն զինքը : Բայց Սամփսոն կէս
գիշերուն ելաւ քաղաքին գոները չեմբարով

կղպագրներովը փրցուց՝ կռնակը զարկաւ սա-
րաւ զխմացի լէռան գլուխը գրաւ ու գնաց :

Հ . Սամփասնի վեցերորդ կործութիւնը
որն է .

Պ . Այլազգիները տեսնելով որ Սամփասն
իրենց երկիրը Դաշիլա կնկանը բով շատ ան-
գամ կուգայ, անոր հետ խօսք գրին որ՝
եթէ Սամփասնին ուժը ուսկից ըլլալը խմա-
նայ, ամէն մէկը իրեն հազար ու հարիւր
արծաթ ասն : Երբոր ան կնիկը անուշու-
թեամբ կուզէր խմանալ, Սամփասն ըսաւ .
Թէ որ եօթը նոր ջիւով զինքը կապեն, ուժս
կերթայ : Կնիկը կապեց զինքը ան ջիւերովն
ու ետքը փորձելու համար կանչեց . « Սամփ-
ասն, այլազգիները եկան » : Սամփասն մէկէն
ցատքելով թօթվեց կորեց ան ջիւերն ու
ելաւ տեսաւ որ մարդ չկայ, կատակ կար-
ծեց . և նորէն որ աղաչեց կնիկը որ իրաւը
ըսէ, Սամփասն ալ ըսաւ . « Թէ որ եօթը նոր
ամուր՝ չուաններով կապուիմ, ուժս կը-
կարի » : Ան ալ փորձեց, ու երբոր չեղաւ .
նորէն կաղաչէր . Սամփասն ալ « Թէ որ ըսաւ,
գլխիս մազերուն եօթը ոլորքը աղբով հիւ-
սեա ու պատին գամես, ուժս կերթայ » :
Կնիկը ասով ալ խարուելով՝ այնչափ ետեկն
ընկաւ՝ ինչուան որ բերնէն առաւ՝ ինչպէս
ուխաաւոր ըլլալը :

Հ . Սամփասն Դաշիլային շողորթութու-
թենէն խարուելով ինչ փնասի հանգիպե-
ցաւ .

Պ . Ան մարդն որ առիւծը կղպատուեր,
զորաց բանակը կըջնջէր, կնկան մը սա-

տանս թեալք ամենուն խաղալիք եղաւ ու
չարաչար մեռաւ : Ատն զի Գալիլա լամբին
պէս որ սրտանց շնտակը ըսաւ , շուտ մը այ-
լազգիները դադարուկ կանչեց , ու ինքը Սամի-
սոնին հետ անոյշ խօսելով , ծնկանը վրայ
քնացուց , ու գլխուն մազերը ամխլէլ տա-
լուն պէս՝ սկսաւ Սամիսոնը թուշնալ ետքը
կանչեց , « Սամիսոն այլազգիները հասեր
են » . Սամիսոն արժնցաւ՝ կուղեր մէկէն
ցաթքել , բայց աեսաւ որ չկրնար շարժիլ .
շուտ մը եկան այլազգիները բռնեցին՝ աչուը-
ները փորեցին , երկաթներով կապած Գա-
ղա տարին ու հոն ջաղացքը գրին որ աղայ :
Հ . Սամիսոնին եօթներորդ կործու-
թիւնը ո՛րն է .

Պ . Օր մը այլազգիները Գաղան կուռքին
մեծ տօնը կատարեցին՝ Սամիսոնին հմբ .
զինքն ալ բերել տուին որ ծաղը ընեն , վրան
խնտան : Սամիսոնին մազերը չափաւոր եր-
կրնցած ըլլալով՝ գնաց ան պալատին երկու
միջի սիւները բռնեց , որոնց վրայ շինուած
քը հաստատուած էր , ու « Տր դորս թեանց ,
ըսաւ , յիշէ զիս , և աս մէկ հեղս ալ ինծի
ոյժ տուր , որ ես ալ ասոնց հետ մեռնիմ » ,
ըսելով անանկ ուժով թօթվեց որ մէկէն
ոգալատը փլաւ , ու ամէն մէջի եղողները՝
իրէք հազար հօգի տակը մնացին , բոլոր իշ-
խանները՝ կնիկներով ու տղոցմով : Ետքը
իրեն ազգականներն եկան մարմինն առին՝
իր հօրը գերեզմանը թաղեցին . որ քսան
տարի այլազգիները չարչարեց , ու Իսրայէ-
լացիներուն առաջնորդեց :

Մի* : :

Հ . Իտրայէլացոց մէջ դատաւոր չեղած ա-
տեն ի՛նչպէս կրկառաւարուէին .

Պ . Ամէն մարդ ուզածը կրնէր , անոր
համար մէջերնին ամէն անկարգութիւն կրէ-
լար . ինչպէս որ Միքայի պատմութենէն և
Բենիամինի ցեղին դիպուածէն՝ յայտնի
կերևնայ :

Հ . Ի՛նչ կը պատմուի Միքայի վրայ .

Պ . Միքան Եփրեմի ցեղէն աւելորդապաշ-
տութեամբ արժըթէ արձան մը շինեց՝ իր
տունը դրաւ . ան օրերը ղևացի մը կանց-
նէր՝ կանչեց որ իրեն քահանայութիւն ընէ
ու ինքը անոր ապրուստը հոգայ : Ան առնն
ալ Գանայ ցեղը՝ տեղերնին իրենց նեղուածք
ըլլալով՝ հինգ հոգի լրակա խրկեր էին որ
բնակելու տեղ գաննեն . ասոնք ճամբան ան
ղևացիին հանդիպեցան ու անոր ձեռքով
Ասաուծոյ հարցուցին իրենց բանին յաջո-
ղութիւնը : Երբ որ լրակները դարձան , ու
վեց հարիւր հոգի կերթային Լայիսա քա-
ղաքն որ ջարդեն այլազգիներն ու հոն բնա-
կին , Միքայի տանն առջեկն անցնելու ա-
տեննին ան ղևացին իր աւելորդապաշտա-
կան բաներովը Միքայի անէն յափշտակե-
ցին՝ Լայիսա քաղաքը տարին որ հոն իրենց
քահանայութիւն ընէ . քաղքին անունն ալ
Գաւ գրին . հոն երկար առնն ան արձանը
կը պաշտէին :

Հ. Գառաւորաց դարուն մէջ Բենիամինի ցեղին ինչ գիտուած հանդիպեցաւ .

Պ. Ղևտացիի մը կնիկը վախաւ քովէն . անոր հօրը տունը գնաց Ղևտացին որ հաշտուի . աները մէկ քանի օր զղևտացին սեղանի բռնեց . չորրորդ օրը երբոր դարձան՝ գիշերը վրայ դաշտով Բենիամինի ցեղին՝ Գաւրտա քաղաքը հանդիպեցան . տեսաւ զիրենք Եփրեմայ ցեղէն մէկը՝ տուն հրամցուց որ գիշերը ճամբու վրայ չմնան : Բենիամինի անօրէն մարդիկը գիշերը ժողվեցան՝ տանտիրոջէն բռնի կուղէին հիւրն որ չարչարեն . երբոր ճար չեղաւ՝ հարսը ձեռուրնին մատնեցին . առաւօտանց Ղևտացին ելաւ որ երթայ , տեսաւ որ կինը մեռուցեր էն , իշուն վրայ դրաւ գնաց իր քաղաքը , ու մեռելը առատերկու կտոր ըրած՝ առատերկու ցեղին խրկեց : Ասանկ մեծ անիրաւութեան վրայ ամէն Բէլացիք ոտք ելան՝ չորս հարիւր հազար հոգի . առաջ մարդ խրկեցին Բենիամինի ցեղին որ պատժեն յանցաւորները . երբոր անոնք մտիկ չըրին , Բէլացիք երգում ընելով որ ջնջեն , ու անկէ ետքը մէկը խնամութիւն չընէ անոնց հետ , պարզով բացին Բենիամինի ցեղին գէմ , որոնք ունէին քսան ու հինգ հազար եօթը հարիւր կարիճ՝ զինուոր : Առջի օրը քսանուերկու հազար Եւրայեւացի մեռան . Աստուծոյ ազաջեցին՝ հարցուցին , բայց նորէն երկրորդ օրը ութ հազար ջարդուեցան . երրորդ օրը պարտով աղօթքով նորէն հարցուցին , ետքը քաղքին ետեւէն մարդիկ դարանի դրին ու սկսան պա

անբազմիչ . առջի բերանն երեսուն հոգի
ջարդուելով սկսան փախչիլ . ինչուան զա-
նոնք հեռացուցին քաղաքէն . և այնպէս
քսանուհինգ հազար հարիւր հոգի Բենիա-
մինէն ջարդեցին և բոլոր քաղաքներուն
կրակ տուին՝ կնիկներով աղայմով ջնջեցին .
միայն վեց հարիւր հոգի Ռեմսնի այրին մէջ
պահուրտած աղատեցան :

Հ . Բենիամինի ցեղին վեց հարիւր ողջ
մնացած մարդիկը ինչպէս կըրցան տուն անդ
ԸԵՄԼ .

Պ . Ինչպցիք սկսան ճարր մտածել . հար-
ցուցին , խմացան որ Գաղաադու Յարիս քաղ-
քէն մարդ չէ եկած պատերազմի . որովհե-
տե մէջերնին երգում ըրեր էին որ ամենքը
երթան , գնացին ջարդեցին զանոնք , մինակ
կոյսերը թողլով որոնք չորս հարիւր գըա-
նուեցան : Մնացածներուն ալ ըսին որ Սե-
լով քաղաքէն ասին որը յափշտակեն . երբ
որ բողբէն՝ ըսին՝ մենք խօսք կըհասկըցը-
նենք . ասանկով Բենիամինի ցեղը նորէն
հաստատուեցաւ :

ՅԶ .

Հ — — — Բ :

Հ . Սամիսոնէն ետե ո՞վ եղաւ դատաւոր .

Պ . Հեղի որ քահանայապետ էր ու դա-
տաւորութիւն ալ կընէր : Բայց ասկէ առաջ
կըգրէ Աստուածաշունչը Հաութայ պատ-
մութիւնը :

Հ. Ո՞վ է Հառւթ, ու ի՞նչ գործք ըրաւ .

Պ. Յուդայի ցեղէն Ալիմէլէք անունով մէկը սովի պատճառաւ իր 'Նոոմին կնիկովն ու երկու աղոցմով Մովարացոց երկիրը գնաց ու հոն մեռաւ, աղաքն ալ կարգուեցան այլազգիներու հետ . հարսերուն անունն ալ՝ մէկունը Որփա էր, մէկալինը Հառւթ . սաւոր սարիէն աղաքն ալ մեռան : 'Նոոմին ուղեց հարսերը իրենց տունը ճամբել ու ետ դառնալ : Որփան շատ դժուարութեամբ գնաց . բայց Հառւթ ճար չեղաւ՝ իր կեսուրէն չզատուեցաւ . « Մահը միայն զիս քեզ մէկը բաժնէ » կըսէր . անոր համար մէկակող թեթղեհէմ դարձան : Հոն Ալիմէլէքի աղգահանը կար՝ Բոոս անունով, 'Նոոմինին տեղ տուաւ որ բնակին : Երբոր արտերը ցորեն կըհնձէին՝ Հառւթ 'Նոոմինէն ուղեց որ երթայ ինքն ալ արտերը բանի . ու գնաց Բոոսին արտի հնձած ցորենները կըքաղէր : Բոոս երբոր խնացաւ թէ Հառւթ 'Նոոմինին հարսն է, վրան հոգ ցցուց, և ըսաւ որ իր աղջիկներուն հետ մէյտեղ ուտէ . հնձողներուն ալ ապրասպրեց որ զինքն աղէկ նային, և ցորենի հասկերուն մնացածը թողուն որ ժողվէ տանի : 'Նոոմին երբ խնացաւ եղածը, հարսին ճամբայ ցցուց որ զինքը սիրցնէ Բոոսին ու կարգուի : Բոոս երբոր Հառւթայ միտքն խնացաւ՝ չէ չըսաւ . բայց որովհետեւ ուրիշ մօտ աղգահան կար, անոր կէնար կարգուիլ . ունի զի բանը կարգով ըլլայ . քաղաքին ծերերը ժողվեց ու անոնց առջևն ան աղգահանին ըսաւ որ 'Նոոմինը իր երկաւ

նէն մնացած գեօփններուն մէկ կտորը ծախել կուզէ, քեզի կիցնայ առնել, թէ չէ՛ ես կառնեմ՝ բայց աս ալ գիտնաս որ ան տեղին հեա հարսն ալ պիտի առնես, որ անկէջ մեռնողին ժառանգ թողուս : Անի կայ աս բանս յանձ չառաւ : Ան ատենը Բոսս վկայ բռնելով ան ծերերը՝ հռութն իրեն հարօղատ կնիկ առաւ, որ ամէնքն օրհնեցին. ուսկից շատ չանցաւ՝ որդի մը ունեցաւ, անունն Ովբեգ, ու անկէջ եղաւ Յեսսէն՝ Դաւիթ մարգարէին հայրը :

35.

ՀԵՂԻ, ՍՏԻՒԷԼ :

Հ. Հեղի ինչպէս կը կառավարէր խորայեւ լացիները .

Պ. Թեպէտ իր կառավարութիւնը աղէկ էր, բայց երկու որդի ունէր՝ Ոփնի ու Փենէհէս, որոնք ժողովորդեան զոհ մատուցանելու ատեն անիրաւութիւն կընէին . ինքն ալ կիսմանար, բայց ինչպէս որ պէտք է չէր խրատէր, անոր համար զինքն ալ սպառժեց Աստուած իր որդւոցը հեա ու տեղը Սամուէլն ընտրեց :

Հ. Սամուէլ որմն աղան է .

Պ. Եղիանա անունով մէկ զևաացիի մը Արիմաթեմ քաղաքէն . աս մարդս երկու կին ունէր՝ Աննա ու Փեննանա : Տարին հեղ մը ուխտի կերթար Սելով քաղաքը՝ Աստուծոյ տապանակին առջև, անգամ մը Աստուծոյ

զոհ ընեւէն ետե սեղան որ նստաւ՝ Փեննա-
 նային ու անոր աղոցը բաժինները մեկաեղ
 տուաւ . և Աննային աղայ չունենալուն՝ ա-
 նոր մեկ բաժին մը տուաւ : Աննան մինա-
 ւոր նստած՝ իր ամլութեանը վրայ արամած
 կըմտէր . թէպէտ Եղկանան կուզէր զինքը
 մխիթարել, բայց ճար չէր ըլլար : Անգանէն
 ետքը Աննան մինաւոր գնաց ասճարին դրան
 առջէն ինկաւ ու սրտանց հառաչելով մտա-
 քէն սկսաւ աղաչել որ Աստուած իրեն
 ողորմի՝ զուակ մը տայ, և ուխտ ըրաւ
 Աստուծոյ նուիրելու ան աղան : Հեղի հօն
 նստած ըլլալով՝ երբոր տեսաւ որ Աննա եր-
 կայն ատեն անշարժ կեցեր է, կարծեց թէ
 գինով է, աղան խրկեց որ վաճնտէ ան նք
 տեղէն : Աննան սպասասխան տուաւ թէ «Գի-
 նով չեմ, հապա արամութեամբ լեցուած
 կնիկ մըն եմ որ Աստուծոյ առջև սրտիս ցաւը
 կըբանամ» : Ան ատենը Հեղի զինքն օրհնեց,
 ասով խիստ մխիթարուեցաւ : Աննա, ու երբ
 որ տուն դարձաւ, աղայ մը բերաւ՝ որուն
 անունը Սամուէլ գրին, որ ըսել է Աստուծո
 մէ ինդրուած :

Հ. Աննան ինքիրեն կատարեց Աստուծոյ
 ըրած խոսամունքը .

Պ. Տեղնիտեղը կատարեց, նախ ինչուան
 որ կաթէն կարեց Սամուէլը՝ ալ չգնաց Սե-
 լով էրկանը հետ, ետքը ատենը հասածին
 պէս ընծաներով բերաւ Աստուծոյ նուիրեց,
 ու աղան Հեղի քահանայատեալին ձեռքը
 տալու ատեն ըսաւ . «Տէր իմ՝ ես ան կնիկն
 եմ որ քու աչքիդ առջէն Աստուծոյ աղա-

չեցի աս աղիս համար . հիմա ինչպէս որ Առ
տուածոյ ուխտ ըրի՝ ասիկայ իրեն կրնուիլու մ.՝
ու որ հնու թեան աղօթք մին ալ ըրաւ Ան-
նան հոն տեղը . և ետքը թողուցին Սամուէլն
ու գարձան : Աստուած ալ Աննային՝ Սա-
մուէլի տեղն ուրիշ իրեք մանչ ու իրեք աղ-
ջիկ զուակ տուաւ . և ինքն ամէն տարի որ
Սելով քաղաքը կերթար՝ Սամուէլին լաթ
կըշնէր կըտանէր . Սամուէլ ալ հոն աստա-
նակին կըծառայէր :

Հ . Աստուած Հեղին ու աղաքը պատժե-
լէն առաջ խնայուց կերպով մը որ զգուշա-
նան .

Պ . Նախ հրեշտակ մը խրկեց Հեղինն որ
աղոցն ըրած անկարգութիւններն ըսելէն
ետքը պատիժ ալ սպառնացաւ՝ քահա-
նայութիւնը ձեռքէն առնելու . ու աս ըլ-
լալիքներուն նշան՝ ըսաւ , «Նրկու աղաքդ մե-
կէն մեռնին » : Որովհետեւ ասով Հեղին չչար-
ժեցաւ , մեկ գիշեր մը երբոր Սամուէլ տա-
ծարը պատկեր էր , կանչեց Աստուած , Սա-
մուէլ Սամուէլ : Ան կարծեց թէ Հեղին կը
կանչէ , մեկէն գնաց՝ Հրամիկ ըսաւ . Հեղին
Չկանչեցի ըսաւ , գնա՛ պատկեր : Աս բանս
իրեք անգամ եղաւ : Ան ասեներ Հեղին խնա-
ցաւ որ Աստուած կըկանչէ , սպըսպրեց Սա-
մուէլին որ եթէ նորէն կանչէ՝ պատասխա-
նէ , Հրամիկ Տր ծառայիդ : Չորրորդ ան-
գամ ըսածին պէս ըրաւ , ան ասեմն Աս-
տուած նորէն յայանեց թէ գէշ կրնեն հե-
ղինն աղաքը , պիտի պատժուին : Առաւօ-
տանց Սամուէլ վախցաւ պատմելու , բայց

Հեղին երգումով բերնէն առաւ ու անհոգութեամբ ըսաւ . « Ասմբ ան օրհնեալ եղիցի » . աղաքն ալ ամենեկին իրենց ըրածէն ետ չկեցան : Աստուած ալ ան ատենէն սկըսաւ յայանել Սամուէլի իր կամքն՝ ու օրէ օր անուներ ինչացոյ մէջ հաշակուեցաւ , թէ Աստուծոյ սիրելի և հաւատարիմ մարդարէն է :

34.

Տողանալին փերս-իւնը :

Հ . Ի՞նչ կերպով պատմեց Աստուած Ոփնին ու Փենեհէսը .

Պ . Այլազգիները Իսրայէլացոյ վայսպատեցանքն և լան . ու առջի զարնուելուն Իսրայէլացոցմէ չորս հազար հոգի ինկան . ուստի եկան Սելովէն տապանակը մեկտեղ առին որ Աստուած իրենց օգնէ . Ոփնի ու Փենեհէս ալ տապանակին հետը դնացին : Այլազգիները ինչացոյ կանչուըռտէն իմանալով տապանակին գայը . վախցան . « Այ՛ մեզի՛ ըսին , բաներնիս ըննցաւ » . բայց մէկմէկու սիրտ տալով յուսահատութեամբ սկսան կռուիլ , ու երեսուն հազար հոգի կտորեցին՝ Ոփնին ու Փենեհէսն ալ մեկտեղ . Աստուծոյ տապանակն ալ գերի առին : Ան ատենը Յեմէնացի մը վազեց բերաւ աս գէշ լուրը Սելովքաղաքը : Հեղին ալ ծերացած իննսուննու թը տարուան՝ աչքին լոյսն ալ կորսընցուցած՝ տանը գրանը քով ալ թռավ նատեր լուրի կրտսակեր . երբոր լսեց եղած բաները , և թէ

Աստուծոյ տապանակն առնուեր է, սրտին
ցաւէն կանրկին վրայ ինկաւ՝ մէջքը կոտրեցաւ
մեռաւ: Փե՛նեհէսի կնիկն ալ որ ան օրերը
տղաբերքի մօտ էր՝ իր կեսրայրին և երկանը
մեռնիլը լսելով ցաւը բռնեց ու տղաբերքին
ստե՛նը մեռաւ:

Հ. Այլազգիք տապանակն ի՛նչ ըրին .

Պ. Տարին Ազովտոս քաղաքը՝ Դագոն
կուռքին տաճարը գրին: Երբոր մէկալ առա-
ւօտ տաճարը գնացին՝ տեսնէն որ Դագոնը
տապանակին առջև երեսին վրայ ինկեր է,
վերցուցին նորէն կեցուցին: Բայց նորէն մէ-
կալ առաւօտ տեսան որ Դագոնը գետինը
կործանած՝ ու միայն ողնայարը ողջ մնացեր
էր, գլուխն ու երկու ոտաւըները կոտր-
տած մէջ տեղն ինկած, երկու ձեռքն ալ
դրանը շեմքն վրան: Բոլոր այլազգիներն ալ
սկսան պատժուիլ, նստուկ տեղերնին խոց
կելլէր ու կրտանջուէին, շտան ալ կըմեռ-
նէին: Իրենց արտերն ալ մկներ կըվըթ-
տային որ բոլոր վարուցաննին կաւրէին: Ա-
նոր համար տապանակն անկէց վերցուցին՝
Գէթ քաղաքը տարին՝ որ խմանան թէ տա-
պանակն է ընտղը: Հոն ալ որ սկսան ըլլալ ան
պատուհասները, ուզեցին որ Ասկաղոն տա-
նին՝ բայց Ասկաղոնացիները գէժ կեցան:
Ուտտի եօթը ամիս տապանակը քովերնին կե-
նալէն ետև, ուզեցին ետ ճամբել՝ աղատիլ-
ան ստե՛նը քուրմերը խորհուրդ տուին որ ըն-
ծայով խաւրէն . այլազգիներուն հինգ իշ-
խաններուն համբանքովը հինգ ոսկիէ երսու-
տանի սրտուկեր շինեն, ու հինգ ալ ոսկիէ

մուկ, որոնք տապանակին նուիրեն որ ան սպառիժները վրաներնեն վերնայ, և ըսին որ տապանակը ոսկիէ ընծաներով նոր սայլի վրայ դնեն, ու երկու երինջ լծեն՝ զատելով իրենց առջինէկ հորթերնեն, ու տեսնեն որ շտակ Իսրայէլացոց երկիրը կերթան. ասով խնաման թէ ան սպառիժները տապանակէն է: Աս որ ըրին՝ հովերը շտակ դնացին Բեթսամիւս Իսրայէլացոց երկիրը, երբոր անոնք ցորեն կըհնձէին:

Հ. Երբոր տապանակը Բեթսամիւս հասաւ՝ Իսրայէլացիք ինչ ըրին.


Պ. Տապանակն որ մտաւ Յովսեայ Բեթսամիւսացիին արար Իսրայէլացիք խնտալով վրան վաղեցին՝ սայլէն վար առին, ու սայլը ջարդեցին, ան երկու կովերն ալ ողջակէզ ըրին տապանակին առջևը: Ետքը հեաաբրբբութի մէջը նայելնուն համար՝ յիտուն հաղար եօթանասուն հողի Աստուծակ պատժուելով մեռան: Ուստի զարհուրած՝ Կարիաթարիացոց խնացուցին որ իրենց քաղաքը տանին. հոն շատ տարի Ամինագար քահանային աունը կեցաւ:

Հ. Սամուէլ ինչպէս կառաջնորդէր Իսրայէլացոց.

Պ. Երբոր իր վրայ ինկաւ Ժողովրդեան հոգը, սկսաւ կռապաշտութիւնները ջնջել ու աստուածապաշտութի սորվեցընէլ: Եւ ինքը սովորութիւն ըրեր էր որ տարուէ տարի ամէն տեղ կերթար կըհոգար, զատաստաննին կըտեսնէր, և ուրիշ ատեն միշտ Արիմաթէմ կրկէնար:

Հ. Սամուէլի դատաւորութեան ատեն
Իորայէլացիք ամէն կողմանէ խաղաղ էին .

Պ. Անգամ մը Իորայէլացիք Մասեփաթ
ժողոված՝ Սամուէլ իրենց իրատ որ կուտար,
այլազգիներն իմացան, յանկարծ վրանին սա-
տերազմի ելլէլ ուղեցին : Իորայէլացիք վախ-
նալով Սամուէլի գիմեցին որ Ասաուծոյ
սղաչէ . Սամուէլ դառ մը ողջակէզ ըրաւ .
Ա՞՞՞՞ ալ երկինքն անանկ սասափկ գոռացուց
որ բոլոր այլազգիներն իրար անցած՝ վախ-
ցիլ սկսան . Իորայէլացիներն ալ ետևնուն
վազեցին ջարդեցին , ու իրենց ամէն քաղաք-
ները նորէն անոնց ձեռքէն առին : Ասով
այլազգիներուն աչքը վախցաւ ու մէյմ՝ ալ
սպատերազմի չեւան , ինչուան Սաւուղի թա-
գաւորութեան ատենը :



ԳՒՏԵԼԻՔ

Հ . Տասանակն ինչո՞ւ Տաղան-ի կր-իար-
նայ կըսուի .

Պ . Աստուծոյ պատուիրանքներուն տախ-
տակները մէջը գրուած ըլլալուն համար :

Հ . Մովսէսի երեսը ինչո՞ւ լուսաւորուե-
ցաւ .

Պ . Մէյմը որ նշան ըլլայ թէ Աստուծոյ
վառքը տեսած է . երկրորդ որ ժողովուրդը
վախնայ իրմէ ու պատկառի :

Հ . Իտրայէլացիք երբոր միս ուղեցին , Աս-
տուած ինչո՞ւ լորտմարդի տուաւ .

Պ . Վն զի լորտմարդին ան կողմերն ուրիշ
թռչուններէն շատ կըզանուի ու պարարտ
ալ է :

Հ . Ինչո՞ւ Մարիամ բորոտեցաւ ու Ահա-
րոն պատիժ մը չառաւ .

Պ . Վն զի բուն արանջողը Մարիամն էր .
Ահարոն ալ անոր դէմ չդնելովը հաւնիլ
ցցուց . անոր համար իրեն տուած յանգի-
մանու թիւնը Աստուած հերիք սեպեց :

Հ . Թէ որ Բաղասամ կախարդ էր՝ Աս-
տուած ինչպէս հետը կըխօսէր .

Պ . Բաղասամ սատանայի կըհարցընէր , բայց
Աստուած հրեշտակի բերնով իր ուղածը
պատասխան կուտար անոր :

Հ . Մովսէսի գերեզմանն ինչո՞ւ անյայտ
մնաց .

Պ . Որպէս զի չըլայ թէ կատարաւ
թիւն սիրող Խորայեւացիներն իրեն մարմինը
պաշտեն :

Հ . Յետուայ ատեն եղած բաներն ո՛ւր կը
պատմուին .

Պ . Յետուայ գրքին մէջ՝ որ կամ ինքը գրեց,
կամ ետքի մարգարէ մը :

Հ . Ատուած որ հրամայեց Խորայեւացոյ՝
բոլոր Քանանացիները ջարդելու , անոնցմէ
մարդ ազատելու ճար չկար .

Պ . Մովսէսի օրէնքներովն սա ալ սարս-
պրեր էր իրենց , որ ան երկիրներուն բնակիչ
ները թէ որ ճշմարիտ Ատուած ճանչնան
ու իրենց հարկատու ըլլալ յանձն առնուն,
Խորայեւացիք հետերնին գաշինք գնեն ու չը-
մեռչնեն :

Հ . Խորայեւացիք Պարաւոնացոյ ըրած
երդմանը պարտեցան էին .

Պ . Պարտեցան էին . վասն զի ինչպէս որ
Ատուած սարսպրեր էր , անոնց հետ ըրած
գաշինքին մէջ կար թէ Պարաւոնացիք ճշմա-
րիտ Ատուածն անկէ ետքը պիտի պաշտեն ,
անոր համար պարտեցան էին զանոնք չմեռչը-
նելու . բայց որովհետեւ անոնք խաբելով հե-
ռու առ զացի ձեացուցին զիրենք ու հարկա-
տու ըլլալն ազատ մնացին , անոր համար երբ
որ խաբէութիւնը իմացուեցաւ՝ Յետու ա-
նոնց պատիժ գրաւ , որ չէ թէ մինակ հարկա-
տու ըլլան , հասրա գերիի պէս ծառայեն Տո-
ղովբեան :

Հ . Դատաւորաց գործքերը ո՛ւր կը պատ-
մուին .

Պ . Դադարեաց ըստւած գրքին մէջ , քիչ մըն ալ Թ . Թագաւորութեանց գրքին սկիզբը , որ կերենաց թէ Սամուէլ մարգարէն կամ ուրիշ մը գրած է :

Հ . Դատաւորներն ամէնը սուրբ էին .

Պ . Սուրբ վարդապետաց հասարակ կարծիքն է որ սուրբ էին . վասն զի Պօղոս առաքեալն ալ կը գովէ զերենիք . միայն Արիմէլէք անոնց մէջ չսեպուիր , որովհետեւ ինքը բանաւոր էր :

Հ . Յեփթայէին ուխտն աղէկ էր .

Պ . Ինքը բարի սրտով ուխտեց . բայց աստուած աշուհիք վերջը ինչպէս կատարելը յայտնի չստեղծ . կիմացընէ որ խահեմութիւն չէր անանկ ուխտ ընելը :

Հ . Սամիտն ինքզինքը սպաննած չի սեպուիր .

Պ . Չէ . վասն զի ինքը Աստուծոյ ազգամարդ իր ազգին բարւոյն համար գրաւ իր կեանքը . ինչպէս որ պատերազմի մէջ ալ կը սպասահի :

Հ . Բենիամինի ցեղին վրայ պատերազմի գնացողներն ինչո՞ւ երկու անգամ ջարդ կերան .

Պ . Աստուած անանկ կարգաւորեց որ առաջ իրենց ըրած մեղքերուն պատիժը քաշեն , իրենք իրենց մեղքերէն զոջան ու ետքը ուրիշներուն վրէժիմնդ իր ըլլան . մէյմըն ալ որ իրենց ուժին աւրազմութեանը չվրասահին :

Հ . Հառութայ գիրքը ո՞վ գրեց .

Պ . Հառանական կարծիք է որ Սամուէլ

ըլայ ։ Ասանկով երբոր սատանան խող քե-
զաւ՝ սկսաւ Ատառւծոյ գէմ՝ պատճառ քե-
րել թէ « Իրեն չգայ , անոր համար հոգը
չեզաւ . թէ որ իր մարմնոյն ալ զէն հասցընեմ՝
տեսնես թէ ինչպէս զքեզ կանխէ ։ » : Ան ա-
տենն Ատառւած թողուց որ սատանան ինչ
կուզէ ընէ , միայն թէ չմեռցընէ : Մեկէն սա-
տանան Յորայ վրան ստբէն ինչուան գլուխը
խոցեր հանեց . անանկ որ դուրս տեղ մը աղ-
բիւսի մէջ նստած խեցիով ինքն իր թարախ-
ները կըմտքրէր , ու միշտ փառք կուտար Ատ-
առւծոյ : Բայ խորամանկ սատանան Յորայ
կինը միայն աղջ թողուցեր էր , որ տեսնելով աս
խեղճու թիւնները՝ ալ ձանձրացած եկաւ Յո-
րայ ըսաւ . « Ինչուան էրք պիտի համբերես ,
որ ես ալ քու պատճառաւ գանէ տուն բար-
բարական եմ եղեր . Այ գէմ անէծք մը ըրէ
որ մեռնիս , աղատիս » : Յոր պատասխան տը-
ւաւ « Իրաւ անզգամ կնկան մը պէս խօսեցար .
բարիքը վայլեցինք , չարիքին չհամբերե՞նք » :

Հ . Յորայ քաշած փորձու թիւները ինչ
կերպով գաղթեցաւ .

Պ . Լսելով իրեն խեղճու թիւնը իրեք բա-
րեկամ թագաւորները՝ Եղիպատ թեմնացին ,
Բաղգաս սօբեցին , Սովվար մինեցին , եկան
զինքը մտի թարեւու . որոնց հետ էր նաև Ա-
ղիուս բուզային : Առջի բերան չձանչցան ,
բայց ետքն որ խնայան՝ սկսան լալ , ու վրայի
լաթերնին պատուած՝ գլուխնին հողցանած՝
եօթն որ Յորայ առջև պասպանձած կեցան ,
ինչուան որ Յոր սկսաւ ցաւելով պատմել
զլիւն անցածները , խնայընելով թէ Ատառ-

ծոյ կամքն աս է, սրտածոյ համար չէ: Անոնք
ալ սկսան սնդեւ թէ անմեղ մարդը անանկ
բան չքաշեր: Յոր կրտէր թէ Աստուած մար
դուն համբերութիւնը կրփորձէ. անոնք մէկ
բերան գէմ կրխօսելին. ինչուան որ Աս
տուած ամային մէջէն Յորն արգարացուց՝ ու
բարեկամները յանգիմանեց, և սպըսպրեց
իրենց, որ եօթը հորթ և եօթն ոչխար բերեն
Յորայ որ իրենց համար զոհ մատուցանելով
աղօթք ընէ՝ ու իրենց մեղացը թողութիւն
ըլլայ: Ասանկով եօթը տարի քաջասրտութիւն
համբերելէն ետև, նորէն Աստուած տուաւ
իրեն առողջութիւն. և եկան ամէն ճան
չուորները ուրախակից եզան իրեն ու մէյմէկ
ընծաներ տուին: Աստուած ալ օրհնեց զինքն
ու առջինէն աւելի հարստացուց, և նորէն եօ
թը մանչ՝ իրեք ալ աղջիկ տուաւ: Անկէ ետքը
հարիւր եօթանասուն տարի ալ սպրեցաւ՝
ինչուան իրեն թողանը թողը տեսաւ, և եր
կու հարիւր քառասունեութը տարուան
վախճանեցաւ:





ՄԱՍՆ Ե .

ԹԱԳԱՒՈՐԱՅ ԴԱՐԸ

ԽՁՈՒՆՆ ԲԱՐԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ :



37 .

Ս-----ղայ Բագ-----բէլը :

Ը . | ԽՆՁ պատճառաւ Իսրայէլացիք սկսան իրենց Թագաւոր դնել .

Պ . Սամուէլ ծերու թեան ասենը իր երկու որդիքը Յովէլ ու Աբիա իր տեղը դատաւոր դրաւ . ասոնք անիրաւու թիւն ընելով Ժողովուրդը կրնեղէին . անոնք ալ ամէնքը մէկ եղած՝ Թագաւոր ուզել սկսան : Սամուէլ վախնալով որ ասով չըլլայ թէ Աստուծոյ ասկերախտ գանուին, որ ինչուան ան օրը ինքը զանոնք կրկառավարէր՝ դատաւորներու ձեռքով, Աստուծոյ հարցուց . Աստուած հաւանեցաւ , բայց առաջուց խնայուց Թագաւորին իրաւունքները : Երբոր անոնք յանձն առին , Աստուած Սաւուլն ընտրեց :

Հ. Սաւուղին ինչպէս թագաւոր օժեցին.

Պ. Սաւուղայ հայրը կիս' Բենիամինի ցեղէն՝ անգամ մը իր էշերը կորսընցուց, ու Սաւուղը ծառայի մը հետ խրկեց էշերը փնտռելու. երբոր չգտան և յուսահատած ետ կը գառնային, ծառան ըսաւ որ « Երթանք Սամուէլ մարգարէին հարցնենք »: Օրով առաջ Աճ Սամուէլի յայտներ էր թագաւոր օժեցու մարդը: Ուստի Սամուէլ տեսածին պէս՝ ըսաւ Սաւուղին թէ « Գտնուած են էշերը », ու առաւ կերակուրի տարաւ. հոն Սաւուղն ամենէն վեր նստեցուց ու աղէկ կը օրորուանքը, իրեն առջևը գնեւտուաւ. ան գիշերն ալ հոն բռնեց, ու առաւօտանց գլուխն եղ լեցրնելով ըսաւ, « Աճ զքեզ թագաւոր օժեց »: Մեկէն Սաւուղի սիրան ալ փոխուեցաւ: Ետքը Սամուէլ ղինքը հաւատացնելու համար՝ իրեք նշան տուաւ իրեն. մէյմը որ տուն գառնալու ատեն ընդ առաջ գան ըսեն թէ էշերը գտնուէր են. երկրորդ որ ուխտի գնացող իրեք մարդու հանգիստի որ իրեն երկու հաց ընծայ տան. երրորդ որ մարգարէութիւն ընէ: Աս նշանները կատարուեցան՝ ու ետքի նշանէն առակեղաւ՝ կրցածէն գուրս բան ընողին ըսեւ Սաւուղ ի հաշտութիւն:

Հ. Սաւուղին թագաւորի լը ինչպէս հրատարակուեցաւ.

Պ. Սամուէլ ապրտպրեց որ Սաւուղ Գաղգաղայ երթայ՝ իրեն եօթն օր սպասէ. ինքն ալ գնաց բոլոր ժողովուրդը Մասեփաթ ժողվեց՝ թագաւոր ընտրելու համար: Ախճակ որ ձգեւտուաւ, Սաւուղայ վրան ին-

կաւ՝ որ պահոււրաւեր էր. ան ատենը Աստուծոյ հարցուց՝ գտաւ . երբոր բերաւ մէջտեղ՝ թիզ մը հասակով ամենէն բարձր էր. ժողովուրդը ինչէ՞ կանչեցին՝ Սամուէլ ալ սորվեցուց անոնց թագաւորի իրաւունքները: Ետքը կարիճ՝ մարդիկներ Աստուծոյ շարժած Սաւուղին քով ժողովեցան:

Հ. Սաւուղ իր իշխանութիւնը առջի անգամ ինչ բանի մէջ ցցուց .

Պ. Ամոնացոց Նաաա թագաւորն ելաւ Գաղաադու երկրին Յարիս քաղքին վայ: Յարիսացիք վախնալով ուզեցին գաշինք դնել. «Արնգունիմ, ըսաւ, գաշինքը՝ թէ որ ձեր աջ կողմի աչքերնիդ հանէք». անոնք եօթը որ ատեն ուզեցին մտածելու: Սաւուղ երբոր ըսեց՝ վաւուեցաւ աստուածային զօրութիւն, երկու եղ կասր կասր ըրաւ ու ասգին անգին Իսրայէլացոց խրկեց՝ ըսելով. «Ով որ Սաւուղի ու Սամուէլի հետ չգար՝ ատանկ կրլան անոր եղները»: Ասանկով ամենքն սոր ելան վեց հարիւր եօթանասուն հազար հոգի: Սաւուղ զանոնք իրեք խումբ բաժնեց, մտան Ամոնացոց բանակը ուցիր ուցան փախուցին. ասով անանկ ժողովրդեան աչքը մտաւ Սաւուղ՝ որ կուզէին մեռցնել ան մարդիկն որ Սաւուղը բանի տեղ չէին սեպած, բայց Սամուէլ արգելեց. ետքը Իսրայէլացիքը Գաղաադա տարաւ, հոն նորէն Սաւուղը հանդէսով թագաւոր օծեց ու Աստուծոյ շնորհա կալութեան զոհեր ըրին. և Սամուէլ ինչուան ան ատեն արգար կառավարութեան վկայութիւնը ժողովրդոց բերնէն առնելով

և Աստուծոյ իրենց վրայ ըրած բարերարութիւնները յիշելով, խրատեց ու յորդորեց՝ որ իրենց թագաւորին հետ Աստուծմէ վախնան։ Եւ նշան՝ թէ թագաւոր ուղեւիմն աղէկ չէր, աղօթք ըրաւ Սամուէլ ու շուտ մը առանց ամպի երկինքը սասաիկ գոռալով սկսաւ անձրև գալ։ այնչափ որ ժողովուրդը սոսկալով մեղայ ըսին, ու Սամուէլէն աղօթք խնդրեցին։

38.

Սամուէլ, գաբէրաշէնը։

Հ. Սաւուղ հանդէսով թագաւոր օծուէլէն ետև ի՛նչ պատերազմ ըրաւ։

Պ. Իրեք հազար հողի իրեն թիկնապահ ընարեց, ասոնցմէ հազարը իր ազուն Յովնա թանին տուաւ ու Գաբասա խրկեց։ հոն Յովնա թան զարնուեցաւ այլազգիներուն հետ ու սպաննեց Նասիր այլազգին։ անկէ գրբգրաուեցան ֆղշաացիք ու երեսուն հազար կառքով և վեց հազար ձիաւորով և ուրիշ անթիւ մարդիկներով պատերազմի ելան։ Իէլացիք ալ սկսան Սաւուղի քով ժողովիլ։ Սամուէլ խօսք դրաւ որ եօթն օրէն ինքն ալ Գաղգաղա գայ ու զո՛հ մատուցանեն մեկտեղ։ Ըն միջոցին ժողովուրդը վախնալով թշնամուոյն շատուորութենէն, սկսան ջրբուիլ, պահուրաիլ։ Եօթն օր եղաւ՝ Սամուէլ չէրևցաւ։ Սաւուղ ալ ջրսպասեց՝ զո՛հ ինքն ըրաւ ըննցուց։ Սամուէլ վրայ հասաւ ու սրգոյնելով Սաւուղի անհամբերութեան

և յանդգնութեանը վրայ, ըսաւ, « Այսօր
Աստուած հաստատէր սկիախ քու թագաւո-
րութիւնդ, դու չհնազանդեցար կորսն-
ցուցիր »: ու թողուց գնաց: Սաւուղ ալ ու-
ղեւով թշնամեցնէ գէժ երթալ՝ գնաց Գա-
բաս, ու մնացած զօրքը համբեց՝ տեսաւ որ
վեց հարիւր հոգի են, հոն կեցաւ: Անտե-
նը փոշտացիք իրեք խումբ բաժնուած՝ բա-
լըր երկիրնեւուն սկսան ակրել: ու բոլոր
Իւլացոց երկրին մէջ դարբին չթողուցին, ուն
զի սուր ու դեղարդ չլինեն, և որուն որ ման-
գաղ կամ ուրիշ բան պէտք կըլար՝ փոշտացոց
երկիրը կերթար: Անգամ մը այլազգիք Գա-
բասյի քով Մարմաս եկեր էին, օր մը Յով-
նաթան լեռան ժայռերուն մէջ նեղ ճամբէ-
մը գաղտուկ իր կասարճակիրովը գնաց ա-
նոնց վրայ՝ Աստուած քիչով ալ յողթել
կուտայ ըսելով, ու ճամբուն բերանը կե-
ցած՝ քսան հոգի մեռուց. անկէ մէջերնին
չփոթութիւն մը ինկաւ Աստուծմէ, սկսան
փախչալիլ: Սաւուղ բանը խնայու՝ ելաւ ե-
տենուն ինկաւ, ուրիշ պահուրտած մարդիկն
ալ ելան պատերազմելու: Անտենը Սա-
ւուղ ուխտ ըրաւ Աստուծոյ որ ինչուան իրի-
կուն քանի որ պատերազմը չէ լինցած՝ ով որ
բան ուակ՝ մեռնի: Զօրքը մեղուի անտառէն
կանցնէին արանջալով. Յովնաթան չգիտնա-
լով հրամանը՝ դաւաղանին ծայրովը կտոր
մը խորխոս առաւ կերաւ: Քովննեւերն խմա-
ցուցին թէ հօրը հրամանին գէժ ըրաւ. երբ
որ լսեց, « Ախոս ըսաւ, թէ որ աւարէն ու-
տէին զօրքը, բոլոր թշնամիները կըջարդէին »:

Իրիկուան զօրքը անօթի յողնամ՝ սկսան արատրնօք դեանի վրայ մօրթեւ ռջխարններն ու արիւնոս ուտել՝ օրինաց դէմ: Սաւուղ բարկացաւ, քարի վրայ մօրթեւ տուաւ ու անանկ մօքրամ ուտեն ըսաւ: Ետքը ուղեւ լով նորէն գիշերանց այլազգիներուն ետեէն երթալ, քահանային ձեռքօվը հարցուց Աստուծոյ. Աստուած պատասխան չտալով՝ ի մացուց որ մեղք մը եղած է: Սաւուղ վիճակ ձգել տուաւ, Յովնաթանու վրայ ելաւ վիճակը. Սաւուղ մեռչնէլ կուզէր, բայց ժողովուրդը դէմ կեցան՝ ան յաղթութեան պատճառն ինքն ըլլալուն համար. ու Աստուծոյ աղաչելով ան մեղքին թողութիւն խնդրեցին: Ասկէ ետքը ուրիշ շատ յաջող պատերազմներ ըրաւ Սաւուղ չորս կողմի ազգերուն հետ:

Հ. Սաւուղ Աստուծոյ սիրելի մնաց ինչուն ետքը.

Պ. Չէ. անգամ մը Սամուէլ մարգարէն Աստուծոյ անունով հրամայեց Սաւուղին որ երթայ Ամազեկացիները ջարդէ, ամենինն բան մը չապրեցնէ, որովհետեւ անոնք պատերազմ ըրեր էին Իէլացոց հետ Եգիպտոսէ ելլելու ատեննին: Սաւուղ չորս հարիւր երեսուն հազար զօրքով գնաց ջարդեց ու ողջ պահեց անոնց Ագագ թագաւորը, և անոնց կենդանիներուն աղէկները: Անոր համար սաստիկ բարկացաւ Աստուած, ու ըսաւ Սամուէլի, «Չղջացայ, որ Սաւուղը թագաւոր գրի»: Սամուէլ ան գիշերը տըրտմամ կազօթէր Աստուծոյ, ու առաւօտանց

գնաց տեսաւ որ Սաւուղ Ամաղէկացոց կո-
ղոպուաներէն Աստուծոյ զոհ կրմատուցա-
նէր . Սամուէլը տեսածին սէս՝ գիմաւորեց
ու ըսաւ . « Ահա Աստուծոյ հրամանը կատա-
րեցի » : Սամուէլ՝ « Հապա ինչ է, ըսաւ , ան
ոչխարներուն ու կովերուն ձայնն որ ես կը-
լսեմ » : Սաւուղ « Աղէկները սրահեցի, ըսաւ,
որ Աստուծոյ զոհ ընենք » : Սամուէլ աս-
տուածային նախանձով վառուած՝ չարաչար
յանգիմանեց զինքը, ըսաւ . « Զոհէն աւելի
հաճոյ է Աստուծոյ հնազանդութիւնը . ար-
համարհեցիր զԱստուած , արհամարհուիս
Աստուծակ » : « Մեզայ, ըսաւ Սաւուղ, եկու
մէկտեղ Աստուծոյ աղօթք ընենք որ մեզքս
թողու » . Սամուէլ մօտիկ չըրաւ . ան ասէն
Սաւուղ վերարկուէն բռնեց որ չերթայ,
սրառեցաւ կտորը ձեռքը մնաց . դարձաւ
Սամուէլ ըսաւ , « Աստուած պատուեց ու
քեզմէ առաւ թագաւորութիւնդ որ քեզ-
մէ աղէկ մարդու սայ » : Ետքը տեսաւ որ
խիստ շատ կաղաչէ՝ Ժողովրդեան առջև
պատիւը չկորսընցընելու համար , դարձաւ
մէկտեղ աղօթք ըրաւ . ետև Ագագ թագա-
ւորն առջևը բերել տուաւ . երբոր դողա-
լով եկաւ , Սամուէլ զարկաւ մեռուց , ըսե-
լով . « Ինչպէս քու սուրդ անչափ մայրեր
անորդի ըրեր է , այսպէս ալ հիմա քու մայրդ
քեզմէ զրկուի » : Ետքը ելաւ Արիմաթեմ
գնաց , ու մէյնին ալ Սաւուղի հեա չտես-
նուեցաւ :

Դ. — ԲՒՒ ԺԹ. — ԻԼԷ :

Հ. Աստուած զո՛վ ընտրեց Սաւուղայ տեղ :

Պ. Սամուէլի հրամայեց որ Բեթղէհէմ
էրթայ, Յուդայի ցեղէն Յեասէին աղօցք
մէկը թագաւոր օժէ. և Սաւուղէն գաղ-
տուկ ըլլալու համար Աստուած ըսաւ՝ որ
ձայն հանէ թէ զո՛հ ընելու գնացեր է : Հոն
ըսաւ Սամուէլ որ Յեասէն ալ դայ զո՛հին,
ետքը ուղեց որ Յեասէն աղօքը մէկիկ մէկիկ
իր առջևը բերէ որ տեսնէ : Երբոր տեսաւ մեծ
աղան՝ Եղիաբը, Սամուէլ հաւնեցաւ, բայց
Աստուած իրեն ըսաւ թէ « Ատիկայ չէ, վն
զի մարդ երեսին կրնայի, Աստուած սրտին :
Ուրիշ վեցն ալ եկան, չհաւնեցաւ. հար-
ցուց Յեասէին՝ խնայաւ որ սղտիկ մըն ալ
կայ՝ ոչնար կարած է, բերել տուաւ ու տե-
սաւ որ շնորհալի աղայ մըն էր՝ Դաւիթ անու-
նով, որն որ Աստուծոյ ուղեւովը թագա-
ւոր օժեց. և Աստուծոյ հոգին Սաւուղէն
հեռացաւ՝ Դաւիթի եկաւ. Սաւուղ ալ գի-
ւահարեցաւ ու ատեն ատեն կրտանջուէր :

Հ. Դաւիթ օժուելէն վերջը սէր կրկե-
նար :

Պ. Սաւուղի քով. վասն զի Սաւուղին
համար քնար զարնող մը փընտուեցին որ գի-
ւահարած ատենը քնարին ձայնովը հան-
դարտի. խնայան որ Դաւիթ աղէկ քնար
զարնէլ գիտէ, տարին Սաւուղին՝ որ առջի

բերան շատ սիրեց զինքն ու իրեն կասկար-
ճակիր ալ ըրաւ :

Հ . Ի՞նչ պատճառաւ Սաւուղ սկսաւ
ատել Գաւիթը .

Պ . Անոր համար որ երբոր Գաւիթ Գ.ս.
զիւթը մեռուց՝ Ժողովուրդը Սաւուղէն ա-
ւելի Գաւիթը գովեցին :

Հ . Գողիւթն ս՛լ է, ու ի՞նչպէս սպա-
նուեցաւ .

Պ . Հսկայ մարդ մըն էր այլազգիներուն
բանակին մէջ, վեց կանգուն մէկ թիղ եր-
կայն, հադած երկըթէ զբահին ծանրութիւ-
նը հարկւր քսան հօսայ : Երբոր անգամ
մը Սաւուղ այլազգիներուն գէմ պատերազ-
մի գնաց սրնորմը չքսկսած՝ բանակէն դուրսե-
լաւ Գողիւթն ու Ի՛ւլացոց բանակը քամահ-
րելով կրկանչէր, « Հանեցէք դիմացս մէկը
որ մինակ ծեծ կու ինք, և ով որու յաղթէ՝ յաղ-
թութիւնն ան կողմին ըլլայ » : Սարսափեցան
Ի՛ւլացիք ու քառասուն որ կեցան բանակ բա-
նակի դիմաց, և Գողիւթ ամէն որ կեղէր
կրնախառնէր Ի՛ւլացիները . Սաւուղ աս բա-
նիս սիրտ ընողին իր աղջիկը խոստացաւ տա-
լու ու զինքը անուիլն ազատ ընելու : Ան օրե-
րը Յեասէն Գաւիթը բանակը խրկեց որ ի-
րեն իրեք եղբայրներուն հաց ասնի, ու տեռ-
նէ թէ ինչպէս են : Գաւիթ երբոր գնաց
տեսաւ Գողիւթը՝ վառուեցաւ սիրան ու
սկսաւ մէկուն մէկալին հարցընել, ու ար-
համարհել զԳողիւթը : Եղիար իր մեծ
եղբայրը չեխեց զինքը՝ հարարա ըսելով : Բայց
Գաւիթ Աստուծոյ սիրովը վառուած, հոգը

չեղաւ, ինչուան Սաւուղ լսեց՝ ու առջևը
կանչեց, և տեսնելով որ պզտիկ է՝ և Վախ-
նամ թէ չկրնաս ըսաւ ՚' : Գաւիթ պատաս-
խան տուաւ . « Ես իմ հօրս ոչխարներն արա-
ծելու ատեն, երբոր առիւծ կամ արջ վրայ
կուգար ու ոչխար կըցափշտակէր, ես կաղա-
տէի, ու թէ որ վրաս ելէր, վէ՛ն կըբռնէի՝
կըստզաննէի . յուսամ որ Աստուծով հի-
մայ ալ անանկ կրնեմ » : Ան ատեն Սաւուղ
իւր ղէնքերը հագցուց անոր . Գաւիթ սորված
չըլլալով երթալու ատեն երկու իրեք անգամ
սահեցաւ . ուստի հանեց վրայէն, « Աստնցմով
չեմ կրնար երթալ ըսաւ » . ու իր գաւա-
ղանը ձեռքն առած, և սպասատիկը, հինգ
քար ալ մախաղին մէջը դրած Գողիաթին
դիմացն ելաւ . Գողիաթն որ տեսաւ՝ ծի-
ծաղեցաւ՝ ըսելով . « Ես շնն եմ որ գաւա-
ղանով ու քարով կուգաս վրաս » : Գաւիթ
պիտն տուաւ . « Ընէն ալ ցած ես » : Ան ալ
ըսաւ . « Եկու եկու ղքեղ թռչուններու գա-
ղաններու կերակուր ընեմ » : « Դու քու ղէն-
քերուդ վատահացեր ես, ըսաւ Գաւիթ,
բայց ես Աստուծոյ զօրութեանը ապաւի-
ներ եմ, ու կըցուսամ որ հիմա գլուխդ
կառնեմ, և բոլոր այլազգիներուն մարմինն
այսօր թռչուններու գաղաններու կուտամ
որ ուտեն . և ամէնքն իմանան թէ մերն է ճըշ-
մարիտ Աստուածն, որ առանց ղէնքի երբ
կուզէ կըցաղթէ » : Աս խօսքերէն ետքն երբ
որ սկսան մէկմէկու մօտենալ՝ մէկէն Գաւիթ
սպասատիկով քար մը նետեց ու Գողիաթին
ճակափն զարկաւ՝ որ փռուեցաւ ինկաւ . վա-

զէց Դաւիթ վրան ցատքէց, քաշէց Գողիաթին սուրն ու կտրէց առաւ գլուխը : Այլազգիները աւսածնուն սէս՝ փախչող փախչողի էզան . Իէլացիք ալ ետենին ինկան ջարդեցին ու բոլոր բանակն առին :

60.

Ս-----ղայ նախնիք Դաւիթ լըս) :

Հ . Սաւուղ ինչ փոխարէն ըրաւ Դաւթի՝ Գողիաթն սպաննելուն համար .

Պ . Առջի բերան վրան զարմանալով՝ քովը պահէց ու զօրագլուխ ըրաւ . Յովնաթան ալ հեաը սաստիկ սիրով կատուած՝ իր զինուորական հագուստները բոլոր անոր աըւաւ : Բայց ետքը երբոր սրտըմէն կըդառնային՝ Ժողովուրդն սկսան շնորհաւորելով գիւտացնին ելէլ, ու կնիկները պար բռնած՝ ծնծզաններով կերգէին ու կըսէին . «Սաւուղ հազար ջարդէց, Դաւիթ տասը հազար » : Ասոր վրայ Սաւուղ նախանձելով՝ սկսաւ ծուռ աչքով նայիլ Դաւթի վրայ ու մեռցընելու հնարք մտածել : Օր մը գիւտահարութիւնը բռնած՝ երբոր Դաւիթ առջևը քնար կըզարնէր, յանկարծ գեղարդը վրան նետեց . բայց Դաւիթ երկու անգամ՝ փախչելով ազատեցաւ :

Հ . Սաւուղ ինչ հնարք բանեցուց որ Դաւիթն սպաննէ .

Պ . Արովհեակ ինչպէս որ խոստացեր էր՝ Մերովք իր մեծ աղջիկը Դաւթի պիտի տար .

բայց որպէս զի Դաւիթը վասնդի մէջ ձգէ, ուզեց որ առաջ ուրիշ կարճութիւն մ' աւրնէ. Դաւիթ՝ « Արժանի չեմ ըսաւ՝ թի՛րի փեսայ ըլլալու »: Սաւուղին յոյսը պարսպ ելլելով ուրիշի հետ կարգեց Մերովբը. ետքը խնանալով որ իր մէկաւ Մեղքող ազնիկը Դաւիթի հաւանք է՝ նորէն Դաւիթը փորձանքի մէջ ձգել ուզեց որ սպաննուի այլազգիներէն. ու ըսաւ՝ թէ « Մեղքող ազնիկս քեզի տամ, բայց առաջ գնաս հարիւր այլազգի մեռցու »: Առջի բերանը ետ կեցաւ Դաւիթ, բայց ետքը Սաւուղայ մարգիկն ալ որ շատ յորդորեցին՝ գնաց քաջութեամբ Սաւուղին ուզածը կատարեց ու Մեղքողը կին առաւ:

Հ. Դաւիթ Մեղքողը առնելէն ետքը՝ Սաւուղ ինչպէս հետը կը վարուէր.

Պ. Արթուրով Դաւիթ ամենուն սիրելի եղաւ, և Յովնաթանին միջնորդելովը Սաւուղայ հետ ալ բարեկամացաւ: Բայց օր մը նորէն Սաւուղին գիւհաճարութիւնը բռնած՝ Դաւիթ քնար որ կը դարնէր՝ Սաւուղ գեղարդը վրան նեակեց. Դաւիթ անկէ փախաւ իր տունը. Սաւուղ գիշերանց տանը գուռը առնել տուաւ որ առաւօտանց սպաննուի: Մեղքող գաղաւկ պատուհանէն վար իջեցուց Դաւիթն ու ազատեց. ետքը պաճուճապատանք չինեց՝ Դաւիթ պառկած տեղը դրաւ ու մարգիկներուն ըսաւ թէ՛ հիւանդ է: Սաւուղ հրամայեց որ մահճովը բերեն իրեն, ու երբոր խնացաւ Մեղքողին խարէութիւնը՝ Դաւիթ ետեկն իրէք անգամ

մարդ խրկեց՝ Նաւաթ հաւանա Սամուէլի քով՝
ուր որ փախեր էր . ան մարդիկը կերթային
հոն կրմարդարէանային : Բարկացաւ Սա-
ւուղ , ինքն ալ ելաւ գնաց ու մարդարէա-
ցաւ , ինչուան որ Դաւիթ անկէ ալ փա-
խաւ՝ Յովնաթանին գնաց որ աս Սաւուղին
թշնամութեանը համար խօսի : Երկար խօսե-
ցան մէկտեղ , ճար փրնտուեցին աւսան որ չը-
լար . Յովնաթան խորհուրդ տուաւ որ բոլո-
րովին Սաւուղին քովէն հեռանայ . և ա-
սանկ լալով պագտուելով մէկմէկէ բաժնը
ւեցան :

Հ . Դաւիթ Սաւուղէն որ փախաւ մը
գնաց .

Պ . Շիտակ գնաց Նոմբա՝ Աքիմէլէք քա-
հանային հանգիպեցաւ իր մարդիկներովն ,
ու ձեացուց թէ թագաւորական բանի մը
համար ծածուկ խրկուած է : Երբոր հաց
ուղեց անկէ , ուրիշ հաց չդանուելուն՝ հինգ
օրհնած առաջաւորաց հաց առաւ . Գողիա-
թի սուրն ալ որ առաջուց Ասաուծոյ նուի-
րած էր՝ վրան առաւ : Ան միջոցին հոն գրաւ
նուեցաւ Դովեկ ասորին որ Սաւուղայ ջորի-
ները կարած էր : Իսկ Դաւիթ գնաց Գեթա-
ցոց Անքուս թագաւորին քով . հոն ալ երբ
որ ճանչցուեցաւ թէ Գողիաթը մեայը-
նողն է՝ վախցաւ ու սկսաւ առջնինն խենթ
ձեանալ , ինչուան որ թագաւորը վաճնակ
զինքը : Դաւիթ Մովաբացոց երկիրը գնաց ,
հոն եկան նաև հայրը՝ մայրը՝ եղբարքը և
ուրիշ չորս հարիւրի չափ փախստական մար-
դիկ , որոնց Դաւիթ զօրապետութիւն կը-
նէր :

Հ. Երբոր Դաւիթ Սաւուղէն բոլորովն բաժնուեցաւ՝ Սաւուղ ինչ ըրաւ .

Պ. Սասիկ կառուեցաւ . նախ Դովեկ ասորիէն իմանալով որ Աբիմեէէք Դաւիթ սառչապանութիւն է ըրեր՝ առջևը կանչեց զինքն ու բոլոր քահանաները իրեք հարիւր հոգի , ու հրամայեց որ աչքին առջև սպաննեն զանոնք : Մարդիկը վախցան քահանաներուն ձեռք վերցընելու , ան ասեն Դովեկ ասորիին ըսաւ . անիկայ մէկէն զամէնքը ջարդեց : Ետքը մարդ իրկեց Նոմքա քահանաներուն քաղաքն ու զամէնքը թրէ անցընել տուաւ , մինակ Աբիմեէէքին մէկ արզան Աբիմեէէքը Դաւիթ քով փախաւ : Անկէ ետև Սաւուղ ալ զօրքով սկսաւ Դաւիթ ետևէն իյնալ , Դաւիթ ալ փախչելով ամէն վաանգներէն Աստուծով կազտաւեր : Երկու հեղ ալ այնպէս յաջողեց Աստուած , որ Սաւուղ Դաւիթ ձեռքն ինկաւ , բայց Դաւիթ անյիշաչարութեամբ թողուց :

Հ. Առջի անգամ ինչպէս եղաւ որ Սաւուղ Դաւիթ ձեռքն ինկաւ .

Պ. Անգամ մը Անձուկ Գաթթայ ըստած այրին մէջ կեցեր էր Դաւիթ . Սաւուղ իրեք հազար զօրքով երբոր բռնելու կերթար , մտա տեղ ճամբուն վրայ այրի մը մէջ մտաւ հանգչելու . Դաւիթ մարդիկն իմացան , սկսան ըսել թէ Աստուած մտանեց որ սխա սունես : Դաւիթ գիտեց որ կըքնանար , սիրտ ըրաւ՝ Սաւուղի քով գնաց . թէպէտ քովինները շատ վրայ կուտային որ սպաննէ , բայց ինքն Աստուծմէ օժուած

է ըսելով չգառ, միայն վերարկուին ծայրէն կարեց առաւ : Երբոր Սաւուղ չիմանալով ելաւ կերթար, Դաւիթ ետեկն կանչեց, «Տէր իմ արքայ՝ ինչո՞ւ կըհաւատաս Դաւիթ քեզ մեռցրնեւ կուզէ ըսողներուն» : ու ցուցրնելով կտորը՝ յայանեց իր միտքն ու ըսաւ . Աստուած մեր դատաստանը կըտարէ : Աս խօսքերէս Սաւուղայ սիրան ելաւ, ու լալով սկսաւ ըսել . «Առ քու ձայնդ է՝ որդեակ իմ Դաւիթ, գուն արգարես որ բարիք հասուցիր իմ քեզի ըրած չարութեանս, կըհաւատամ որ թագաւորութիւնս քուկդ պիտի ըլլայ . միայն թէ, ըսաւ, կըխնդրեմ որ զաւակներուս խնայես, ե իմ անունս աշխարհքէս չջնջես» : Դաւիթ ալ երգում ըրաւ, ու բաժնուեցան :

Հ . Երկրորդ անգամ Սաւուղայ Դաւիթին ձեռք իյնալը ի՞նչպէս եղաւ .

Պ . Քիչ մը ստե՛նէն նորէն Սաւուղ Դաւիթի ետեկն իյնալով, Զիփայիք եկան մտանեցին թէ Դաւիթ իրենց կողմնն է . Սաւուղ շուտ մը իրեք հազար զօրքով գնաց՝ Եփեղատի բլրոյն վրայ նստաւ : Դաւիթ լրրատես իրկեց խնայաւ . ետքը գիշեր ստեն երբոր սակնքը քնոյ մէջ էին, Դաւիթ Եփեսային հետ Սաւուղի բանակը մտաւ . ան ստենն Եփեսան տեսնելով Սաւուղի քով գեղարդը անկամ, Դաւիթ ըսաւ . «Ահա Աստուած թշնամիք քու ձեռքդ առաւ, թողաս գեղարդովս մեկէն սպաննեմ» : Դաւիթ՝ «Մի ըներ ըսաւ, թողունք որ Աստուած ինքը խրատէ, միայն գեղարդն ու ջրին փարջը

ան երթանք” : Աղէկ մը հեռանալէն ետեւ ,
կանչեց Դաւիթ զԱրեւններ Սաւուղայ զօ-
րավարը՝ « Մահապարտ էք ըսաւ՝ որ աղէկ
չէք պաշտպաններ ձեր թիւրը , թշնամի մտաւ
բանակը՝ գեղարգն ու ջրին ամանը վերուց” :
Սաւուղ երբոր լսեց՝ գուժը նորէն շարժե-
ցաւ , « Մեղայ ըսաւ Դաւիթի , քովս դարձիր՝
բան չեմ ընէր” : Բայց Դաւիթ չգնաց , « Մէ-
կը գայ գեղարգն առնէ” ըսաւ : Սաւուղ նո-
րէն Դաւիթն օրհնելով գարձաւ իր տեղը :

61.

Ն-Բ-Պ-2 :

Հ . Դաւիթ Սաւուղէն հալածուելու ա-
տեն ուրիշ մարդ ալ եղան որ զինքը նախատէ .

Պ . Երբոր վեց հարիւր մարդով կարմեղոս
ընդ կրկենար , հոն ազահ ու հարուստ
մարդ մը՝ Նարաղ անունով զԴաւիթն ար-
համարհեց նախատեց , ու վաճառեց անոր
մարդիկը , երբոր իրեն սցխարներուն խու-
ղելու օրը տասը հոգի իրկեր էր որ իր կող-
մանէ բարեկէն Նարաղն ու իրեն ըրած բա-
րեացը տեղը քիչ մը բան ուղեն , որովհետեւ
անոր հովիւներն ան լեռանը վրայ արածե-
լու ատեն իրենք վնաս մը չեն հասուցած ,
ու թշնամիի ձեռքէ ալ պահէր են :

Հ . Դաւիթ Նարաղայ ըրած նախատա-
նացն ինչ հատուցմունք ըրաւ .

Պ . Երբոր լսեց՝ կրակ կտրեցաւ , ու շուտ
մը չորս հարիւր հոգւով ճամբայ ելաւ որ

Երթայ Նաբաղը անով անդով շարդէ :
Բայց Արիգեա Նաբաղի կինը՝ Երբոր ծա-
ւաներէն խնայաւ եղածը , շուտ մը գաղ-
աուկ գնաց երկու . հարիւր հաց ճարեց , եր-
կու աման գինի , հինգ եփած սլխար , և
ուրիշ ուտելիքներ առաւ գնաց Գաւիթը
գինաւորեց ու խոնարհութեամբ խնայաւ
անոյշ խօսքերով սիրան առաւ : Ան ատեն
Գաւիթ շնորհակալ եղաւ իրեն որ զինքն
ազատեց արիւն ընելէն : Արիգեան ան իրի-
կունն երկանը բան չըսաւ՝ որովհետեւ զի-
նովցած ուրախութեան մէջ էր : Առաւօ-
տանց Երբոր ստամեց , Նաբաղը վախէն հի-
ւանդցաւ ու տասը օրէն մեռաւ : Երբոր լսեց
Գաւիթ , փառք տուաւ Աստուծոյ որ ար-
գարութեամբ Նաբաղը դատեց , ու Արի-
գեան իրեն կին առաւ :

Հ . Գաւիթ Արիգեան առնելէն ետքը
նէր կըրնակէր .

Պ . Աշինաչով որ օր մը Սաւուղայ ձեռ-
քը կէյնայ , վեց հարիւր հողւով , անով ան-
դով գնաց Անքուս Գեթացոց թագաւորին
քով , և Անքուս իրեն բնակելու համար Սի-
կելակը տուաւ : Հոն կեցաւ Գաւիթ չորս
տարի . ու ամէն օր ասգիս անդին թշնամեաց
վրայ կերթար , աւար կառնէր կըրգառնար :

Հ . Գաւիթ Սիկելակ կեցած ատեն ին-
չուան ետքը հանգիստ անցուց .

Պ . Անգամ մը մեծ փորձանքի մը հանգի-
սեցաւ . բայց Աստուած շուտով մխիթարեց
զինքը : Ան օրերը մեծ սպասերազմ բացին
այլազգիք Իելացոց դեմ . և Անքուս թագա-

ւորը Դաւիթն ալ մէկտեղ առաւ, բայց իշխանները երբոր գէժ կեցան՝ Անբուն ըսաւ Դաւիթին որ եա գառնայ: Իրեք օրէն եկաւ դասա Սիկէլակն այրած ու կողոպտած Ամադէկացիներէն: Աս որ եղաւ, իր մարդիկն ալ իրենց կընկառոյր տղոցը վրայ սրտերնին այրած՝ կուզէին Դաւիթը քարկոծել: Ան առնէն Դաւիթ Աստուծոյ զիմելով հրաման առաւ ու գնաց ան Ամադէկացիներուն վրայ չորս հարիւր հոգւով. մէկալ երկու հարիւրը յուսահատած կեցան: Ճամբան Եգիպտոսցիի մը հանդիպեցան որ իրեք օր անօթի մնացած էր, կերակուր առին՝ հարցուցին իմացան որ Սիկէլակը կողոպտողներուն մէկուն ծառան է եղեր, իրենց ճամբայցցուց: Մասն քաղաքը՝ երբոր անոնք ըրած կողոպուանին կուտէին՝ կուրախանային, սուսուտանց ինչուան իրիկուն ջարդեցին, ու ողջ առ ողջ բոլոր գերի գնացողներն ազատեցին: Երբոր դարձան՝ Դաւիթի հեա գնացողները՝ պատերազմի շեկողներուն իրենց կնկառոյցմէն ուրիշ բան տալ չէին ուզեր: Բայց Դաւիթ ամենուն հաւասար բաժնեց. և աս օրէնքը միշտ մնաց Իէլացոյ մէջ որ կողոպուալը՝ քաղաքը պահողին և պորզմի գնացողին հաւասար բաժնուի:

Սառուղայ ճակը:

Հ. Անքուսայ Իսրայէլացոց գէմ ըրած սրասերազմը ինչ վերջ ունեցաւ .

Պ. Սառուղ անոր գէմ ելաւ Գեղարուա լեռը: Հարցուց Աստուծոյ, պատասխան չառաւ, անոր համար վախը սիրտը տիրեց. և որովհետեւ ինքը գիւթերը՝ կախարդները բռնոր ջնջեր էր, հագուստը փոխեց ու գլխը թանց կախարդ կնկան մը գնաց՝ ուղեց որ Սամուէլը իրեն ցուցնէ: որ նոր մեռած էր: Ահուկը չճանչնալով առջի բերանը յանձն չառաւ՝ Սառուղ արդիւնէն ըսելով: Բայց ետքը երեցուց Սամուէլն որ սրդողելով Սառուղին ըսաւ, « Ինչո՞ւ զիս աշխատացուցիր, Աստուած քեզ երեսէ ձգեր է, վաղը պիտի ջարդուիք այլազգիներէն՝ անհնազանդ ըլլալնուդ համար»: Սառուղ սարսափած գետինն ինկաւ: Կինը երբոր խնայաւ թէ Սառուղն է՝ վախցաւ. ետքը հորթ մը ունէր՝ մորթեց, ուրիշ բաներ ալ պատրաստեց, որ Սառուղ շատ գոռարուք նստաւ կերաւ ու բանակը գարձաւ: Առաւօտանց պորզմ սկըսաւ Իսրայէլացիք ջարդուեցան, Սառուղին իրէք աղաքն ալ ինկան, և ինչը նետով զարնուելով յուսահատած ըսաւ կապարձակիքն որ իր սրովը մեռցնէ, որ չըլլայ թէ այլազգիներէն մեռած սեպուի. կապարձակիքն որ ետ քաշուեցաւ, Սառուղ իր սրոյն վրայ ինկաւ

մեռաւ : Կապարճակիրն ալ ցաւէն ինքզինքը
մեռաւց : Երկրորդ օրն այլազգիները գասն
Սաւուղին ու իրեն սղոցը մարմինը . Սաւուղի
գլուխը կարեցին առին , զէնքերը Գաղտնի
տաճարը տարին . մարմիններն ալ Բեթսան
քաղքին պարսպէն կախեցին : Ետքը գիշե-
րանց Գաղաազու Յարխա քաղքին կարիճ-
ները գողցան թաղեցին . քաղաքացիներն ալ
վրանին եօթն օր սուգ կատարեցին , որով
հետեւ իրենը ալ Բենիամինի ցեղէն էին :

Հ . Դաւիթ շատ ուրախացաւ Սաւուղայ
մահուանը վրայ .

Պ . Մեծ ցաւ ցցուց . և երբոր երկու օրէն
ետեւ մէկ Ամաղեկայի մը Սիկեւակ Դաւթի
առջին ելաւ , իբր թէ Իսրայէլացոց բանակէն
ազատած , Դաւիթ հարցուց անոր պատե-
րազմին համար . անիկայ պատասխան տուաւ
թէ « Ես աեւայ որ Սաւուղ իր նիզակին վրայ
կրթընած՝ ինքզինքը մեռցընել կուզէր . զիս
աեւաւ , ինձի աղաչեց , ես ալ մեռուցի , և
զլիսու թաղն ու ապարանջանները հրամա-
նոցդ բերի » : Ըս բանս լսելուն պէս Դա-
ւիթ՝ սրտին ցաւէն վրայի լաթը պատուեց ,
և ինչուան իրիկուն իր մարդիկներուն հետ
սուգ կեցաւ՝ բոցաւ՝ ծով՝ պահեց , ու Սա-
ւուղայ և Յովնաթանու վրայ ցաւալից ողբ
մը ըրաւ : Իրիկուան սն մարդը կանչեց ,
ըսաւ . « Ի՞նչպէս դու չվախցար Աստուծակ
օժուած մարդուն ձեռք վերուցիր » . և հոն
մէկէն զինքն սպաննել տուաւ ու ըսաւ . « Ա-
րիւնդ քու գլուխդ , դու անանկ ըսիր » : Ետքը
ինքն Աստուծոյ հարցընելով գնաց Քերթան
Յուդայի երկիրը :

Դաւթի Բագաւորութեան Վիճակը:

Հ. Սաւուղէն ետև սիլ եղաւ թագաւոր .

Պ. Յուդայի ցեղը Դաւթի իրենց թագաւոր օժեցին, որ եօթը տարի ու կէս միայն անոնց իշխեց . մէկալ ցեղերուն վրայ Աբեններ Սաւուղի զօրապետն անոր Յերուսթէ տղան թագաւոր դրաւ : Անոր համար միշտ կախ պակաս չէր մէջերնէն, և Դաւթի օրէ օր առաջ կերթար :

Հ. Ի՞նչ ճամբով տիրեց Դաւթի բոլոր Իսրայէլացոց .

Պ. Աբեններ պատճառով մը Յերուսթէին հետ աւրուելով ետևէ էր որ բոլոր թագաւորութիւնը Դաւթի գարձընէ . բայց Յովաբ Դաւթի զօրապետը վախնալով որ Աբեններ իր տեղը կանցնի, երբոր անխիայ Դաւթի քովէն հրաժարեր կերթար իշխանները համոզելու որ Դաւթի հնազանդին, ճամբէն ետ կանչել տուաւ իբրև թէ իրեն գաղտուկ հարկաւոր խօսք մը ունի ըսելու, և պագտուելու ասեն յանկարծ զարկաւ մեռուց : Հասցաւեցաւ Դաւթի ու Յովաբայ սասախ սրգողեցաւ : Երբոր լսեցին ինչպիսիք, ամենուն սիրաբ կոտորեցաւ յուսահատեցան . ան ասեն երկու զօրապետ գնացին գաղտուկ Յերուսթէն քնոյն մէջ մտրթեցին ու գլուխը Դաւթի ընծայ բերին : Դաւթ շնորհակալ ըլլալու տեղ՝ բարկացաւ ու մէ-

կէն երկուքն ալ սպաննել տուաւ, և Յերուս. թէին գլուխը պատուով թաղեց : Ետքը որովհետև Սաուզայ որդիքներէն մինակ Մեմփիբոսթէն մնացեր էր՝ Յովնաթամու աղան՝ օտքը կաղ, անիկայ Դաւիթ քովն առաւ, իր սեղանէն կրկերցրնէր : Իսրայէլացիք ալ տեսնելով՝ Դաւթի աղէկութիւննէրը՝ անոնցմէ մեծամեծները Քերբոն քաղաքը Դաւթի քով եկան, և զինքը նորէն բուր իսրայէլացոց վրայ թագաւոր օժեցին :

Հ. Դաւիթ բուր իսրայէլացոց տիրէլէն կտփն առջի գործքը ո՞րն եղաւ .

Պ. Մէկէն գնաց Երուսաղէմ քաղաքը պաշարեց . մէջի Յերուսացիքը ծաղր կրնէին՝ ըսելով թէ « Քաղքիս մինակ կոյրերն և կաղերը բաւական են քեզի գէմ գնելու » : Դաւիթ իր զորապետներուն ըսաւ . « Ով որ առաջ բեր գին վրայ վաղէ՛ տանէ, անիկայ իմ զորապետս ըլլայ » : Վաղէց Յովաբ՝ ելաւ բերդին վրայ . և զորապետութեանը մէջ հաստատուեցաւ : Դաւիթ ալ հոն նորէն քաղաք շինեց, մէջն ալ թագաւորական պալատ, ու հոն գնաց նստաւ : Ըսկէ ետե սկսաւ Փղտացոց գէմ քաջութեամբ պատերազմելու մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, և զանոնք որ հարկ կառնէին իսրայէլացոցմէ՝ իրեն հարկատու ըրաւ, ու շատ ոսկի՝ արծաթ՝ սղինձ՝ ձեռք ձգեց անոնցմէ .

Հ. Փղտացոց գէմ պատերազմելու ատեն ինչ երևելի գործք ըրաւ Դաւիթ .

Պ. Այլապիսիները Բեթղէհէմ ժողովր էին, Դաւիթ սաստիկ պատերազմին մէջ

Թշնամիներուն յաղթելու ասուն՝ աւելի մեծ
քաջութեամբ իրեն անձին ալ յաղթեց :
Ասան զի սաստիկ ծարուելով « Ո՛ր էր թէ,
ըսաւ, մէկը Բեթզէն հէմի գրան քովի հորէն
ինձի ջուր մը բերէր » : Աս որ լսեցին իրեք
քաջ զինուորներ՝ վաղեցին Թշնամիներուն
բանակը ձեզքեցին ու ջուրը բերին : Դաւիթ
երբոր աւտաւ՝ չիմեց, « Քաւ լիցի որ ուրիշի
արիւնը խմեմ » ըսաւ, ու Ատուծոյ նուիրեց :

64.

S-T-Ն-ԻՆ Ժ-Ի-ԴԻ-Ն-ԻԼԸ :

Հ. Դաւիթի ասուն աստղանակը ո՞ր քաղա-
քը կրկենար .

Պ. Երբոր Ատուած ամէն կողմանէ կը
յաջողէր Դաւիթի դործքերը, ուղեց Դաւիթ
որ աստղանակն ալ Կարիաթարիմէն Երու-
սաղէմ բերէ : Ուստի եօթանասուն հազար
հոգևով գնաց հանեց Ամինադարին անէն՝
նոր սայլի վրայ դրած՝ առջևէն կերպ կերպ
նուագարաններ զարնելով ինքն ալ հա-
գուած կապուած առջևէն սլար կըցատէր :
Երբոր հասան Քելան ըսուած աեզը, կովե-
րուն մէկը թօթուելով սայլը ծռեց, ան ասուն
Ողա զևաացին՝ Ամինադարի տղան որ տա-
ստղանակին քովէն կերթար, ձեռքովը բռնեց
աստղանակն որ շիյնայ, ու մէկէն ինքն ինկաւ
մեռաւ : Ասկէ Դաւիթ վախնալով աստղա-
նակն իր աունը տանելու՝ Աբեդգար Գե-
թացինն աունը տանել տուաւ : Իրեք ամսն

լսեց որ տասականին պատճառովն օրհնէր է Աստուած Արեգգարին տունն ամէն բարիքներով, ինքն ալ սիրա առաւ, ու առջինէն աւելի հանգեսով բերաւ՝ անոր համար շինած նոր խորանին մէջ գրաւ :

Հ. Դաւիթի կրկայլէր օր տասականին առջև պար բռնէ.

Պ. Կրկայլէր. վասն զի անով ժողովուրդը կրցորդորուէին ձեռքերնէն եկած պատիւն ընկելու Աստուծոյ : Բայց Մեղքող իր կինը պատուհանէն տեսնելով իրեն անշնորհք երեցաւ. ու երբոր Դաւիթ տուն գարձաւ, առջին ելաւ՝ ըսաւ. « Ի՞նչպէս փառաւոր կերևնար Իսրայէլացոց թագաւորը՝ որ իր ծառաներուն առջև սօթաւած կաքաւ չի մը պէս կրցատքէր » : Դաւիթ՝ « Անանկ է, ըսաւ, թող քու առջևդ նախատուիս՝ բայց Աստուծոյ առջև քու հօրդ անէն աւելի ընդունելի կրցամ » : Աստուած ալ Մեղքողին ըրաւ ծին պատիժ՝ աղայ չտուաւ իրեն : Ետքը Դաւիթ կուզէր՝ որ փառաւոր տաճար մըն ալ շինէ. բայց Աստուած Նաթան մարգարէին ձեռքով իմացուց թէ իր ազան սլախի շինէ :

Հ. Դաւիթ ինչ պատճառաւ Ամնացոց գէմ պատերազմ բացաւ .

Պ. Նոսա Ամնացոց թագաւորն որ մեռաւ՝ Դաւիթ անոր Աննաղուն երկու գեւպան խրիկեց որ ցաւակից ըլլան : Անն իր իշխաններուն խորհրդով ան գեւապանները խայտառակեց, մօրուքնին ամիլէլ տուաւ, և լաթերնին ինչուան կէս մէջքը կտրած՝ նախատինքով վաճակեց քովէն, կարծելով

Թէ Դաւիթ զանոնք լրակուածեան համար
խրկեր է : Դաւիթ երբոր լսեց՝ իրենց իմա-
ցուց որ Երեքով կենան ինչուան մօրուքնին
բուանի, և ինքն ուղեւով Ամնացոց հասաւ-
ցումն ընելու՝ Յովար զօրսպեալ վրանին
խրկեց : Ասոնք առաջուց կատկածելով՝ շա-
ղօք իրենց օգնութիւն բերեր էին . Յովար
զարնուեցաւ ու եօթը հարիւր պատերազ-
մական կառք, և քառաձուն հազար ձիաւոր
զօրք ան պատերազմին մէջը կոտրեց, մնա-
ցողներն ալ Դաւիթի հարկատու ըրաւ : Եւ-
քը Ամնացիք նորէն շարժեցան . Դաւիթ
մէյմ՝ ալ խրկեց Յովարն որ ինչուան Ռարաթ
անոնց թագաւորական քաղաքը հասաւ պա-
շարեց՝ և կանչեց Դաւիթն որ եկաւ քաղաքը
մտաւ . շարաշար տանջանքով սպաննեցին
մէջիններն ու շատ կողոպոււա առին, և թա-
գաւորական գահը որ տաղանդ մը ոսկիի
ծանրութիւն ունէր՝ իբր ասանըհինգ հօխա՝
սուղ քարերով զարգարուած, Դաւիթ սկը-
տաւ բանեցընել :

63.

Դաւիթի ձեռն առաւելութիւնը :

Հ . Դաւիթ իր կենացը մէջ ամենեկին Աս-
տուծոյ դէմ բան չըրաւ .

Պ . Ինչպէս որ յայտնի է, աշխարհքիս
մէջ հանգստութիւնը Աստուծոմէ կըհեռա-
ցընէ զմարդ : Երբոր Դաւիթ ալ ամէն կող-
մանէ հանգիստ թագաւորութիւն կըբռնէր .

որ մը իրիկուան գեմ տանիքին վայ հանգ-
չելու ասեն յանկարծ ասաւ կին մը որ
գիտացը աւագանին քովը կըլուացուէր. Գաւ-
թի կըրքը շարժեցաւ ու խմանալով որ իր զօ-
րասի տներէն մէկուն՝ Ուրիա Քետայիին
կինն է Բերասբէն, իրեն կանչեց. և մեզքը
կատարէնն ետև անիրաւութեամբ Ուրիա
Քետային ալ մեռցնել տուաւ, Յովորայ
դազատեկ թուղթ գրելով որ կամօք պատե-
րազմին վտանգաւոր կողմը գնէ զինքն որ
մեռնի: Բերասբէն երբոր խնացաւ իր էր-
կանը մեռնիլը՝ սուգ մտաւ, ու ետքը Գաւթի
զաննիկայ իրեն կին առաւ:

Հ. Գաւթի թնչպէս ապաշխարեց իր
մեղքը.

Պ. Ատուած իրկեց՝ Նաթան մարդարէն
որ առաւելով մը անոր ըրած մեղքերն երեսը
տուաւ. « Քաջքի մը մէջ ըսաւ՝ հարուստ
մարդ մը ու աղքատ մը կար. հարուստը շատ
ոչխարներու տէր էր, իսկ աղքատը մինակ
զառնուկ մը ունէր որ վրան կըգողար: Ան-
գամ մը հիւր մը եկաւ հարուստին. աս
մարդս կսկծալով իր ոչխարներուն՝ դնաց
ան խեղճ աղքատին զառնուկն առաւ ու
հիւրին կերակուր ըրաւ »: Աս որ ըսեց Գա-
ւթի՝ բարկացաւ, Նաթանայ խօսքը բերնէն
առնելով Ատուած վկայ որ ըսաւ՝ մեռնե-
լու արժանի է աս մարդը, պէտք է որ եօթը
հեղ վճարէ ան զառնուկին ախրոջը: Ան
ասեն Նաթան՝ « Դուն ևս, ըսաւ, ան մար-
դը. Ատուած քեզի կրակ. այսչափ բարիք
ընելէս ետև՝ դու հերիք չսեպեցիր, Ուրիա

Քեռացիին կինը յափշտակեցիր, և անմեղ մարդը անդ թու թեամբ սպաննեցիր. ուստի գիանաս, քու ուրիշի ըրածներդ քու գլուխդ պիտի դարձնեն : Դաւիթ մէկէն խոնարհութեամբ «Մեղայ՝ Տն՝ ըսաւ : Եւ թանաղ սպաստիանեց . «Աստուած ալ մեղացի թողութիւն տուաւ » : Բայց անոր սրտի՞ Բերսաբէէն եղած առջի տղան մեռաւ : Եւ քը Դաւիթ Բերսաբէէն ուրիշ տղայ մըն ալ ունեցաւ՝ Սողոմոն անունով . որուն Աստուած Յէտէտի կանչեց, որ սիրելի Աստուծոյ ըսէլէ :

Հ. Դաւիթ իր ծերութիւնն ինչպէս անցուց .

Պ. Աստուծոյ թոյլ տալովք մէկ քանի ծանր նեղութիւններ քաշեց իր մեղացը համար . թէպէտ ինքն Աստուծմէ թողութիւն առերէր : Առջի վիշտն եղաւ Ամոնի անդրանիկ որդւոյն մահը՝ Աբիսողոմին ձեռքէն . վնջի Ամոն անկարգութիւն մը ըրաւ, Աբիսողոմ ալ վրան սաստիկ ռիսպահելով փառաւոր կոչունք մը ըրաւ Քերրան քաղաքը . հոն իր մեկալ եղբայրներուն հետ Ամոնն ալ կանչեց . ու երբոր սեղանէն ելելու վրայ էին՝ ծառաներուն ձեռքովն Ամոնը մեռուց ու ինքն այլազգիներուն Գեաւոր երկիրը փախաւ : Աս ըսելով Դաւիթ շատ ցաւեցաւ, ու սաստիկ բարկացաւ Աբիսողոմայ վրայ . բայց իրէք սարիէն Յովսէփ վարպետ կերպով մը Դաւիթն հրաման տուաւ ու Աբիսողոմը Ե՛ւմ դարձուց :

ԱՔԻՆՆԵՐԻ ՊԵՐՏԻՆԸ :

Հ . Դաւթին ծերութեան ատեն քաշած երկրորդ վիշան ո՞րն եղաւ .

Պ . Աբխաղումին ապստամբութիւնը . վն զի Գեառեղէն զառնալէն ետքը Յովարի ձեռքովը գնաց հօրը հետ հաշտուեցաւ , ու սկսաւ ապստամբութեան մտքով ժողովրդոց սիրտը վաստակիլ : Ամէն որ ձիով ծառաներն առջնէն՝ կանուխ գուռը կերթար , ու ամէն եկողին առջեր կեւէր՝ սիրով կըհարցընէր , Ուստի՞ ես , ի՞նչ կուզես . ու թէ որ պէտք մը ունէին՝ կըհոգար . և թէ որ մէկը իրեն ծառայէր , չուս մը Աբխաղում կըզրկէր զինքը կըպագնէր : Չորս տարի ասանկ ընելով ժողովրդեան սիրան իրեն քաշեց , ետքը հօրմէն հրաման ուղեց որ Քեբրոն երթայ՝ իր ուխտը կատարէ , որ փախելու ատեն ըրէր էր : Եւ երկու հարիւր հօգի մեծերէն հեան առած գնաց , ու հոն խնայուց իր միտքը . մէկէն ամէնքը հաւանեցան . Աբխաղումիչ Դաւթի մեծ խորհրդականն ալ իրեն կանչեց Աբխաղում : Դաւթ իմ երբոր խնայաւ , զինքն Աստուծոյ յանձնելով իր քովն եղած քիչ մը զօրքովն Եէմէն ելաւ որ փախչի : Ան ատեն Սաղովկ քահանայապետն ալ բոլոր քահանաները մէկտեղ՝ տասանակն ալ վերցուցին որ ասնին . Դաւթ չուղեց , թէ որ Աստուած ուզէ՝ ես նորէն

կըգտանամ ըսելով . և Սաղօմիայ ապրասպրեց որ իր ազոցը ձեռքով Աբխաղումն ընէ լէք . ներք գաղտուկ իրեն խնացրնէ : Քուսի Աբաքացւոյն ալ ըսաւ Դաւիթ որ Աբխաղումի քովն երթայ , գրասւանց բարեկամութիւն ցուցրնելով Աբխաղումի լին խորհուրդը փճացրնէ , և ինչ որ Աբխաղում պիտի ընէ՝ իրեն խնացրնէ : Իսկ ինքը լալով ու բողիկ սաքով երբոր կերթար , գիմացն ելաւ Սեմէին՝ Սաւուղի ազգականն ու սկսաւ նախատելով քարեր նեակել վրան , ըսելով . « Աստուած քու գլուխդ դարձուց Սաւուղի տանն արիւնը » : Ան ատեն Աբխաս զօրապետը՝ Յովսէփեղբայրն ալ չդիմացաւ . « Աս ինչ է որ ըսաւ , մէկ սատկած շուն մը կը հայհոյէ իմ տէրս . հիմա կերթամ գլուխը կաննեմ » : Դաւիթ « Թող ըսաւ , Աստուած կուզէ որ Դաւիթն անիծուի . ահա իմ որդիս իմ ետեւէս ինկեր է , հասցաւ ինչ պիտի չընէ Սաւուղի ազգականը , կարելի է որ Աստուած տեսնէ ու ինձի ողորմի » : Ետքը հոգնած հասան Բաւուրիմ ըսուած տեղը :

Հ . Դաւիթի Երուսաղէմէն փախչելէն ետեւ Աբխաղում ինչ ըրաւ .

Պ . Մտաւ Երուսաղէմ փրասպետեց . Աբխաղումէն իրեն ըսաւ որ « Տասուերկու հազար մարդ առնեմ , շուտը Դաւիթի ետեւն երթամ , քանի որ հոգնած են , զինքը միայն մեռցրնելով ամենքը քու կողմդ դարձրնեմ » : Աբխաղում աս բանս Քուսիին ալ հարցուց . Քուսին չհաւնելով սկսաւ Աբխաղումն աչքը վախցրնել . « Խոհեմութեամբ

սէտք է վարուիլ ըստ, քիչ զօրքով Դաւթի զօրաւոր մարդիկներուն դէմ գնելը վասն-
դաւոր է” : Աբխազում Աստուծոյ կուրցած
հաւնեցաւ աս խորհրդին : Քուսիին միտքն
ան էր որ Դաւթի փախչելու ատեն ունե-
նայ, անոր համար շուտ մը Դաւթի խնա-
ցուց եղածը : Բայց Աբխազիէլ յայտնի
տեսնելով Աբխազոմի կործանումը՝ յուսա-
հատութենէն գնաց իր տունն ինքզինքը կա-
խեց : Դաւթի խնամալով Յորդանանէն ան-
ցաւ, ու քովիններն իրեք բաժնեց, և ինքն
ալ հեռերնին Աբխազոմին վրայ ելլել կու-
ղէր, բայց զօրասպետները չթողուցին, ան
ատեն ապրսպրեց անոնց որ Աբխազոմայ
խնայեն : Հասաւ Աբխազոմ իր զօրքովն
սկսաւ սրտեբազմիլ, ու քսան հազար մարդ
կորսնցրնելէն ետքը՝ ցիրուցան Եփրեմի ան-
տառին մէջէն փախչելու ատեննին շատ մարդ
ալ հոն մեռան : Աբխազոմ իր ջորիովն ան
անտառէն երբոր կանցներ՝ գլխուն մաղերը
կաղնիի մը ծառին ճիւղերուն պլուեցան, ջո-
րին ալ տակէն ելլելով ինքն անանկ կախուած
մնաց : Չինուոր մը եկաւ Յովաբայ պա-
մեց, ան ալ ըսաւ՝ « Ինչո՞ւ չսպաննեցիր. հիմա
քեզի յիտուն սիկղ արծաթ ու թուր մը
կուտայի” : Չինուորը պատասխան տուաւ .
« Հի՞ր ալ տայիր՝ ես թագաւորիա աղուն ձեռք
չէի վերցրնէր, որովհետեւ ապրսպրեց” : Ան
ատեն Յովաբ՝ « Ուրեմն կեցի” ըսաւ՝ ու
գնաց իրեք նետով Աբխազոմի սրտին զար-
կաւ . ասոր հոգի ալ Յովաբի մարդիկը վրայ
հասան՝ մեռուցին, ու մարմինը խորունկ
փոսի մը մէջ ձգեցին :

Դ. — Բի վերջի գործերը :

Հ. Յովար Աբխազումը մեռցրնեւէն ետև
լինչ ըրաւ .

Պ. Պատերազմը դադրեցրնեւէլ աուաւ , ու
խրկեց Քուսին որ Դաւթի աւեախս տայ :
Դաւթիմ երբոր խմացաւ՝ սասախկ արամու-
թենէն առանձնացած սկսաւ սղբ ընեւ ու
ըսեւ . « Իմ Աբխազում աղաս , Աբխազում իմ
աղաս , ես քու սեղգ ըլլայի Աբխազում իմ
աղաս » : Ետքը Յովար աւ գարձած երբոր
խմացաւ՝ գնաց յորգորեց որ ելէ զօրացն
երկնայ որ սիրտ առնեն՝ իրեն համար քա-
շած աշխատանայք վրայ , որ սրտերնին կոտ-
րեր էր՝ խմանալով իրեն ըրած ողբը : Բայց
ասով և առջի ըրած մէկ քանի գործքերով
Յովար Դաւթի աչքէն ելաւ . անոր համար
Ամեաայինն որ Աբխազումի զօրապետն էր՝
խօսք աուաւ՝ զինքը Յովարին սեղբ դնելու :
Յովար խմանալով որ մը կեղծաւորութեամբ
Ամեաային բարևեւաւ ասեն՝ գանակը փորը
խոթեց՝ մեռուց :

Հ. Դաւթիմ ինչպէս գարձաւ Երուսա-
ղէմ իր աթոռը .

Պ. Բոլոր Իելլայիք առջնն ելան՝ թողու-
թիւն խնդրեցին ու մեծարանքով բերին :
Ան ստեն զինքն անիծող Սեմէին աւ հա-
զար հոգի Բենիամինի ցեղէն հեան առած՝
Դաւթի առջնն ելաւ՝ Մեղայ ըսաւ : Աբեռ .

աս զինքը առաւելին պէ՛ս՝ « Աստուծոյ օժեալը հայհոյեր է, պէտք է մեռցնենք » ըսաւ . Դաւիթ երգում ըսաւ Մեմէիին չմեռցնելու, և ըսաւ . « Այսօր ամենն ին մարդ պիտի չմեռնի » : Մեմէիբոսթէն ալ սղաւորի կերպարանքով առջնն ելաւ :

Հ . Մեմէիբոսթէն ինչո՞ւ Դաւիթի հետ չէր գնացած .

Պ . Իբ Սիրա ծառային ապրասպրեր էր Մեմէիբոսթէն որ էջը պատրաստէ՝ երթալու համար . սն առեր է երկու էջ՝ շատ մըն ալ ուտելիքներ, մինակ գնացեր է Դաւիթի տակէն, ըսելով թէ Մեմէիբոսթէն կըսպասէ որ զինքը թագաւոր ընեն . Դաւիթ ալ մէկէն հաւատարմով բոլոր Մեմէիբոսթէին երկիրները Սիրայի տուեր է : Երբոր Դաւիթի առջնն ելաւ, Դաւիթ հարցուց՝ խնայաւ, ու ըսաւ որ կէսուտակէս մէջերնին բաժնեն երկիրները :

Հ . Դաւիթ Աբխաղոմէն փախչելէն ետքը երբոր Ե՛ւմ գարձաւ ամենն ին իրեն գէմ կեցող մը չեղան .

Պ . Բենիամինի ցեղէն մէկը Սարէէ անունով գլուխ քաշեց, որուն հետեւեցան շատ մարդ : Մէկէն Յովար ու Աբեսան զօրքերով վրան գնացին, սն ալ Աբէլ քաղաքը փախաւ . անոնք գնացին՝ սկսան պարիսպը կործանել : Ան տակնը վերէն կնիկ մը խելացի խօսքերով Յովարը հանդարանեցուց ու բերնէն խօսք առաւ որ եթէ Սարէէին գլուխը տան՝ կաղատին : Աստի գնաց քաղաքացիներն ալ համոզեց որ գլուխը կարեցին՝

պարսպէն վար նեակցին, և պատերազմը
գաղթեցաւ :

Հ. Դաւիթի ծերութեան ստե՛ն քաշած
էրրորդ վիշտն ո՛րն եղաւ .

Պ. Ան ստե՛նները սով մը կզաւ իրեք տա-
րի : Դաւիթ հարցուց Աստուծոյ ու խմա-
ցաւ որ Սաւուղայ Գարաւոնացիները ջար-
դելուն համար է կղեր : Ուստի Դաւիթ
Գարաւոնացիներուն հարցուց թէ : « Ի՞նչ հա-
տուցում ընել կուզէք » : Անոնք ալ եօթը
հոգի ուղեցին Սաւուղի աղաքներէն որ կա-
խեն մեռցնեն : Դաւիթ ալ տաւա Սա-
ւուղի երկու մնացած խորթ աղաքն ու անոր
Մերովբ աղճկանը հինգ աղաքը , որ ողջ ողջ
արևը կախած մեռցին , ու սովը գաղթե-
ցաւ : Ասկէ ետքն ալ Դաւիթ երևելի պա-
տերազմներ ըրաւ այլազգիներուն գէժ . և
անգամ մը քիչ մնաց որ կըզարնէր զինքը
կորիճ այլազգի մը , բայց Աբեսսան աղա-
տեց անոր ձեռքէն . ու անկէ ետքն ալ թող
չտուին որ Դաւիթ պատերազմի երթայ :

Հ. Դաւիթի ծերութեան ստե՛նը քաշած
չորրորդ վիշտն ո՛րն եղաւ .

Պ. Ինչացոյ վրայ Աստուած բարկանա-
լով Դաւիթի թոյլ տաւա որ հպարտութեան
մտքով համրէ զանոնք . ուստի Յովաբայ
հրամայեց Դաւիթ որ ծայրէ ծայր բոլոր
Ժողովրդոց համրանքն իրեն բերէ : Յովաբ
չկրնալով գէժ գնել՝ գնաց պարտեցաւ՝
համրանքը բերաւ . միայն կորիճ պատերազ-
մի մարդիկն ու թը հարիւր հազար , Յու-
գայի ցեղինն ալ զստ՝ հինգ հարիւր հա-

զար : Բայց ետքը Գաւիթ զըջացաւ ըրա-
ծին վրայ . Ատառած ալ Գաղ մարդարէ-
ին բերնով անոր պատիժ՝ կամ իրէք ասորի
սով ըլլայ ըսաւ, կամ իրէք ամիս պատերազմ,
և կամ իրէք օր մահատարածամ . որը կուզէ՝
ընարէ : Ան ասեկնը Գաւիթ շատ ցաւելով ը-
սաւ . « Լաւ է որ Ատառ ծոյ ձեռքն իյնամ՝
որոյ սղորմութիւնը շատ է » . ուստի մահատա-
րածամն ընարէց : Եւ առաւօտանց մահն
սկսաւ, ու ինչուան կէսօր ետժանատուն հա-
զար հոգի մեռան : Գաւիթ տեսաւ հրէշտակը
Ռանա Երբուսացիին կալին վրայ, որ ձեռքը
սուր առած կը ջարդէր զամենքը, ինկաւ Ատ-
առ ծոյ առջև . « Ես հովիւնին ըրի մեղքը,
պէտք է որ զիս պատժես » ըսաւ : Ան ասեկն
Ատառ ծոյ հրամանաւն եկաւ Գաղ մարդա-
րէն ու ըսաւ որ ան կալին մէջ սեղան չինէ,
ու Ատառ ծոյ զոհ մատուցանէ : Գաւիթ
չուա մը գնաց, ան կալին տեղը գնեց իրեն
եզներովն ու սայլերովը . հոն սեղան չինեց՝
ու եզներն Ատառ ծոյ ողջակէզ ըրաւ . սսով
մահուան պատիժը դադրեցուց Ատառած :
Եւ Գաւիթ ուզեց որ ետքը տաճարը հոն
չինուի :

68.

Ս-ը-ն-ն-ին Բ-գ-ո-ո-ր-է-ւ-ւ :

Հ . Գաւիթ երբոր ծերացաւ՝ իրեն յա-
ջորդ զո՞վ ընարէց .

Պ . Ինքը գեռ չնտրած՝ Ազոնիա իր մեծ
սպան ուզեց որ հօրն ետեկն ինքը նստի, և

զՅովարն ու Արիաթար քահանայապետն
ալ իրեն գին առած՝ Ողբ թայ վիմին քով
մեծ սեղան ըրաւ, թագաւոր օծուելու հա-
մար: Ան առեն Նաթան մարգարէն գնաց
Բերսաբէին ըսաւ որ երթայ Դաւիթի միտքը
ձգէ, որովհետեւ Սողոմոն աղուն խոստացեր
էր թիգրուածիւնը: Բերսաբէն գնաց Դաւիթի
սրահակց Ազոնիային ըրածը, միտքը ձգելով
Սողոմոնին համար ըրած երգումը. Նաթան
ալ վրայ եկաւ ու սկսաւ Դաւիթի հարցը-
նել թէ իրեն հրամանովն է Ազոնիային թա-
գաւորելն որ միայն զինքն ու Սաղոմկ քա-
հանան ու Բանեա որդի Յովիդայեայ զօրա-
պետն ու իր Սողոմոն աղան չէ կանչած: Ան
առենը Դաւիթ շուտ մը հրամայեց որ Սողո-
մոնն իր թագաւորական ջորին հեծցնեն,
Գեհոն տանին, և բոլոր Իէլացոց վրայ թա-
գաւոր օծեն: Սողոմոն ան առենը տասու եր-
կու տարուան էր: Երբոր Ազոնիայի հեան
եղողները ըսեցին որ Դաւիթ Սողոմոնն իր
աթոռը նսակցուցեր է, ցրուեցան. Ազո-
նիան ալ Աստուծոյ խորանը փախաւ, ին-
չուան որ Սողոմոն իրեն խօսք տուաւ չմեռ-
ցնելու՝ թէ որ չարութեամբ չէր ըրածը,
ու թէ որ նորէն բան չխառնէ:

Հ. Դաւիթ մեռնելէն առաջ ինչ կտակ
ըրաւ Սողոմոնին.

Պ. Աստուծոյ սրատուիրանքներուն ու
օրինացը վրայօք շատ խրատներ տալէն ետքը,
Յովարայ ու Սեմէիին համար ալ ասլրասլրեց
որ արդար հասուցումն ընէ: Եւ իր առա-
ջուց սրատրատած ոսկին՝ արծաթը և ուրիշ

բաներն անոր յանձնելով՝ հրամայեց որ Աստուծոյ աստուծոյ աստուծոյ շինէ : Ետքը օրհնելով զինքը՝ կօթանասուն տարուան վախճանեցաւ, քառասուն տարի թագաւորութիւն ընելէն ետեւ :

Հ. Դաւթի մեռնելէն ետքը Սողոմոնի եղբարցմէ թագաւորութեան աչք ձգող եղան .

Պ. Ադոնիան կուզէր նորէն սօք ելլել . անոր համար գնաց Բերսարէին աղաչեց որ Սողոմոնի ըսէ՝ իրէն կին առնելու համար Աբիսակ Սոմնային որ Դաւթի ծերութեան ատենը քոյն առեր էր : Սողոմոն մօրմէն աս բանս լսածին պէս՝ ստատիկ բարկացաւ, իմանալով Ադոնիային միտքը . ու շուտ մը Բանեա որդի Յովիգայեայ զօրապետը խըրկեց՝ սպաննել սուաւ . Աբիսակին ալ որ անոր կողմն էր՝ քահանայապետութենէ ձգեց, իր Անաթոթ գեղը աքսորեց, աեղը Սագովկը գնելով : Ան ատեն Յովար վախնալով Աստուծոյ խորանը ապաւինեցաւ . Սողոմոն անոր ալ Բանեա որդի Յովիգայեան խրկեց ըսաւ որ գուրս ելլէ, բայց չեւաւ . ուստի Սողոմոն ալ հոն սպաննել արւաւ, և անոր տեղը զօրապետ Բանեան գրաւ :

69 .

Սողոմոնի իմաստութիւնը :

Հ. Սողոմոն Սեմէիին դատաստանն ինչպէս կարեց .

Պ . Աբրահան պարտք գրաւ որ Երուսաղեմէն դուրս չելէ , թէ չէ՛ կրասպաննուի . Սեմէին ալ կեցաւ իրեք տարի : Ետե անգամ մը անոր ծառաները Գեթացոց երկիրը վախան . Սեմէին ալ գնաց՝ բռնեց ու Երուսաղէմ բերաւ . ան ասէն Սողոմոն մէկէն զինքն սպաննել տուաւ :

Հ . Սողոմոն ինչ բանով աւելի Աստուծոյ սիրելի եղաւ .

Պ . Թագաւորութիւնը հասաստուելէն ետե ելաւ Գարաւոն լեռը , և հոն Աստուծոյ հազար ողջակէզ մասուց : Աստուած ալ ան գիշերը քնոյն մէջն իրեն երկնալով ըսաւ թէ « Խնդրէ ինչ որ կուզես » : Սողոմոն ալ շնորհակալ ըլլալով Աստուծակ՝ « Միայն իմաստուի կուզեմ » ըսաւ՝ որ այսչափ ժողովուրդը կառավարեմ : Աստուած ալ ըսաւ . « Արովհետեւ դուն ոչ երկայն կեանք՝ ոչ հարստութի՝ ոչ թշնամիներու գէմ յաղթութիւն խնդրեցիր , անոր համար այնչափ իմաստուն ըլլաս՝ որ քեզի պէս մարդ չէ եղած և պիտի չըլլայ . և ասկէ զատ ջննգրած գ ալ քեզի կուտամ . անանկ հարուստ ըլլաս որ քու օրերդ թագաւորներուն մէջ քեզի պէս չգանուի . ու թէ որ քու հօրդ Գաւթի շիտակ ճամբէն դուրս չելէս , քեզի երկայն կեանք ալ կուտամ » : Առաւօտանց Երուսաղէմ դարձաւ ու հոն ալ նորէն Աստուծոյ ողջակէզ ընելէն ետե , մէկէն յայանըլեցաւ իր իմաստութիւնը՝ առջի ըրած դասաստանովը :

Հ . Սողոմոնի իմաստութեանն առջի նշանը ո՞րն եղաւ .

Պ. Երկու կնիկ՝ գատաստանի եկան, որոնք երկուքն ալ իրեք օր ետև առաջ մէյակ տղայ բերեր են. մէկ գիշեր մը մէկը իրենին վրան պատկած մեռուցեր է, ու գաղտուկ գնացեր մէկալինին հետ փոխեր է, ուստի երկուքն ալ կրպնդեն թէ ողջն իրենն է: Սողոմոն ասանկ կարեց գատաստանն որ ողջ տղան երկու կտոր ընեն ու կէսը մէկուն՝ կէսը մէկալին տան: Ասով մէկէն խմացուեցաւ տղուն բուն մայրն՝ որ գութը շարժելով կազաչէր թէ տղան մէկալին տան ու չսպաննեն. խի մէկալը կուզէր որ կէսկէս բաժնուի: Սողոմոն լուեցուց զանոնք ու ըսաւ. « Աստղան ան կնոջն է, որն որ ասոր մեռնիլը չուզեր, անոր տուէք »: Աս գատաստանը զամենքը զարմացուց ու Սողոմոնն ամենուն պատկառելի ըրաւ:

Հ. Սողոմոն թագաւորելուն պէս ասաւ ճարը շինեց.

Պ. Ամէն գիէն խաղաղութիւն ըլլալով՝ հարստութիւն օրէ օր կաւելնար. ուստի թագաւորութեանը չորրորդ տարին մեծ պատրաստութեամբ շինելու ձեռք զարկաւ: Ութսուն հազար հոգի էին քար կըտրողները, եօթանասուն հազար հոգի՝ քար կրող, իրեք հազար հինգ հարիւր վերակացու, ու շատ վարպետարհեստաւորներ ալ որ Ֆիլիստինի թագաւորն ու փարաւոն Եգիպտոսի թագաւորը՝ Սողոմոնին խրկեցին: Ասանկով ասաւորը եօթը տարուան մէջ շինուեցաւ՝ անանկ փառաւոր, որ աշխարհքիս վրայ նմանը չէ եղած, մէջը բոլոր սակաւով ծեփած:

Հ. Երբոր տաճարը շինելը ընդհատ՝ ինչ
հանգէս ըրաւ Սողոմոնն .

Պ. Նախ Աստուծոյ տապանակը մեծ փառ-
քով բերաւ ան տաճարին մէջը, ետքը տասն-
ուչորս օր բոլոր խորայեւացիք ժողոված՝ մեծ
ածն կատարեց. և քսանուերկու հազար կով
ու հարիւր քսան հազար սլխար զո՛հ ըրաւ
Աստուծոյ. հոն ինքն ալ շնորհակալութեան
ազօթք մը ընելով խնդրեց Աստուծմէ որ
ան անցը ժողովուրդը ինչ խնդրուածք որ
ընէ, Աստուած կատարէ : Ան ատեն լուսա-
ւոր ամպով մը տաճարը ընցուեցաւ ու եր-
կրնքէն կրակ իջնալով ըրած ողջակէշնէրը
այրեց : Ժողովուրդը սոսկալով երեսի վրայ
ինկած՝ Աստուծոյ փառք կուտային : Ան գի-
շերն Աստուած նորէն ըսաւ Սողոմոնի թէ
« Խնդիրներդ կը կատարեմ , առ տաճարն
ալ իմ առնա կըսեպեմ , միայն թէ Դաւթի
ճամբէն չխտուրխ որ որդւոց որդի թագա-
ւորութիւնդ ալ հաստատեմ » :

Հ. Սողոմոնն տաճարէն զատ ինչ շինու-
թիւններ ըրաւ .

Պ. Տաճարը ընննալէն ետե՛ իրեն թա-
գաւորական պաշտար շինեց, որուն մէջ ամե-
նէն փառաւոր իր թագաւորական աթոռն
էր փղտակէ՛ և ոսկի զարդերով, վեց ասալճան
ունէր, որոնց վրայ երկու կողմէն աստուեր
կու առիւծ շինած : Փառաւոր պաշտա մըն
ալ շինեց Փարաւոն թագաւորին աղջկանը
համար, որ իրեն կինն էր : Ասանցմէ զատ քա-
ղաքներ ալ շինեց, և բոլորը քսան տարուան
մէջ եղաւ . նաւեր ալ շինել տուաւ Սողոմոնն՝

ու Սովբեր իրկեց, որ իրեք տարին հեղ մը անկէ շատ ոսկի, ազնիւ քարեր և ուրիշ շատ բարեք կըբերէին: Ասոնցմով անանկ եղաւ որ ամէնքը Սողոմոնին խնաստուածեանն ու հարստուածեանը վրայ զարմացած, զինքը տեսնել կուզէին:

Հ. Ո՞վ եղաւ որ Սողոմոնը տեսնելու հմբ աշխարհքէ աշխարհք քալէց.

Պ. Սարայ թագուհին՝ իր զօրքերովը և ուղտերովն ընծաներ հեալ առած եկաւ որ Սողոմոնին խնաստուածիւնը փորձէ: Բայց Սողոմոնի հեա խօսելէն ետքը, ամէն բանին կարգը կանոնն ալ տեսնելով, ըսաւ. « Լսած ներս տեսածիս կէտը չէր, Աստուած սիրեր է աս ազգն որ զքեզ իրենց թագաւոր գրեր է »: Սողոմոն ալ անոր տուած ընծաներուն տեղ ինչ որ անոր սիրան ուզէց՝ տուաւ ու ճամբէց:

70.

Յէրեմի-

Հ. Սողոմոն ինչուան մահը Աստուծոյ հաւատարիմ մնաց.

Պ. Տարիքն առնելով սկսաւ Աստուծմէ հեռանալ. վասն զի Աստուծոյ արդեւած ազգերէն կին առաւ, ու անոնց սիրոյն համար կռատուններ չինեց. իր խնաստուածեամբն Աստուծոյ ըրած ամէն բանը քննեց խնայաւ, կնոջը սէրէն խաբուած՝ ինքը զինքն ալ իր Աստուածն ալ մոռցաւ. անոր համար Աստուած ալ սասաիկ բարկացաւ Սողոմոն.

նի, և ուղեց որ թագաւորութիւնն իրմէն առնէ ծառային տայ: Բայց Դաւթի սիրոյն համար երկու բան կըշնորհեմ ըսաւ. մէյմը որ քու օրդ չեմ ընէր, երկրորդ որ միայն երկու ցեղը Դաւթի տանը կըթողում: Ան ստե՛ննէրն երկու այլազգիք՝ Ագեր ու Ռասն սկսան Սողոմոնի դէմ ելլել:

Հ. Աստուած ի՞նչ կերպով հանեց տասը ցեղը Սողոմոնին ձեռքէն .

Պ. Երբոր Սողոմոնին ծառան Յերոբոամ հաբասայ որդին Եփրեմի ցեղէն՝ բանի մը համար Երուսաղէմէն ելէր կերթար, Աբիա Սիլոնացի մարգարէն նոր լաթ մը հագած եկաւ Յերոբոամին, ան լաթը տասուերկու կտոր ըրաւ ու տասն անոր տուաւ, ըսելով. « Աստուած Սողոմոնի թագաւորութեանը տասը ցեղը քեզի սկիախ տայ՝ անոր ապերախ տութեանը համար . դուն ալ, ըսաւ, թէ որ Աստուծոյ սլասու իրանքները սրահես, որ դուց որդի թագաւորութիւն կընես»: Երբոր իմացաւ Սողոմոն, Յերոբոամը մեռցնել ուղեց. ան ալ փախաւ Եգիպտացոց թագաւորին քովը ինչուան որ Սողոմոնը մեռաւ՝ քառասուն տարի թագաւորութիւն քշելէն ետքը:

Հ. Իսրայէլացոց տասը ցեղին թագաւորութիւնն ի՞նչ կերպով Յերոբոամայ ձեռքն անցաւ .

Պ. Սողոմոնի մեռնելէն ետեւ Ռորովամ անոր տղան Սիկիւմ քաղաքը գնաց՝ հօրը տեղը թագաւոր օծուելու. Յերոբոամն ալ որ Սողոմոնի մահը ըսելով գարձեր էր Եգիպտ.

տոսէն՝ հոն կանչեցին, խնդրեցին Ռորովա-
մէն որ տուրքերը թեթեցնէ։ Ռորովամ ալ
« Երեք օրէն եկէք, ըսաւ, որ սրատախան
տամ »։ ու գնաց առաջ Սողոմոնին տակնի
ծեր խորհրդականներուն հարցուց. անոնք
ըսին որ առջի բերանն անուշութի վարուելով
սրտերնին վատըկի։ Բայց Ռորովամ գնաց
իրեն հասակակից տղոցն ալ հարցուց, ու
անոնց առած խորհրդին հաւնելով. գնաց
ըսաւ ժողովրդեան. « Իմ ձկոյթ մասս
հօրս մէջքէն հաստ է. հայրս ձեր վիզն անուր
գրաւ, ես ան անուրը պիտի ծանրացնեմ.
հայրս ձեզ դաւազանով կըծեծէր, ես զձեզ
քուքով պիտի ծեծեմ »։ Ան տակնը Իսրայէ-
լացոց տասը ցեղը մէկ եղած « Մենք քեզի
հետ բան չունինք, ըսին, գնա՛ք ու ցեղիդ թա-
գաւորէ »։ ու իրենք Յերոբօվամն իրենց թա-
գաւոր գրին։ Ետքը Ռորովամ ետնուոն Ա
գոնիրամ իշխանը խրկեց հաշտեցնելու հա-
մար, անոնք բռնեցին՝ քարկոծեցին. Ռորո-
վամ ալ վախնալով Երուսաղէմ փախաւ։

Հ. Ռորովամէն բաժնուելուն համար
Իսրայէլացոց մէջ ամենեկին կռիւ չեղաւ.

Պ. Ռորովամ հարիւր ութսուն հազար
մարդ ժողովեց Յուդայի ու Բենիամինի ցե-
ղէն, կռուի գուռ բանալ կուզէր. բայց
Ասաուած Սամէէ մարդարէն խրկեց, որ ը-
սաւ. « Աս բաժանումս Ասաուած ըրաւ,
պարագա անգը մի՛ կռուիք »։ Ասանկով մէ-
ջերնին խաղաղութիւն եղաւ։

Յէրոնիմոսի խաղաղութիւնը :

Հ . Յերոբոսովամ հաւատարիմ մնաց Աստուծոյ ինչուան ետքը .

Պ . Չէ . վասն զի վախնալով որ չըլլայ թէ Իսրայէլացիք աստուած պաշտուածեան համար Երուսաղէ մի տաճարն երթալով կամաց կամաց Ռոբոսովամի կողմն ելլեն, երկու սակիէ հորթ շինեց, ու մէկը Դան՝ մէկալն ալ Բեթէլ քաղաքը դրաւ, ու հրամայեց ամենուն որ անկէ ետե զո՛հ ընելու համար Բեթէլ կամ Դան երթան, ըսելով թէ « Զձեզ Եղիաթուէ հանող աստուածները ան հորթերն են » : Ետզովորեան մէջէն մէկ քանին քուրմ ըրաւ, տանի օրեր ալ որոշեց, ու յոյանի կապաղաշտուածիւն խոթեց Իսրայէլացոց մէջ :

Հ . Երբոր Յերոբոսովամ սկսաւ կապաղաշտուածիւն ընել, մէկ կերպով մը Աստուած զինքը չխրատեց որ դարձի գայ .

Պ . Առջի անգամն որ Յերոբոսովամ Բեթէլ, սեղանին առջևը գնաց զո՛հ ընելու, Յուդայի երկրէն մարգարէ մը եկաւ, սկսաւ կանչել . « Ո՛վ սեղան, գիտնաս որ Դաւթի ցեղէն Յովսիա անունով մէկը քու վրագ քուրմերդ զո՛հ պիտի ընէ : Նշան ըլլայ ըսածիս որ սեղանը հիմա ճղքուի ու վրայի բաները վար թափին » : Յերոբոսովամ ձեռքն երկնցուց, ըսաւ . « Բանեցեք աս մարդը » . մէկէն ձեռ-

քը չորցաւ՝ երկնցուցած մնաց . սեղանն ալ մարդարեւին ըսածին պէս ճոքուեցաւ : Ան ստեւը Յերոբոսովամ սարսափած աղաչեց մարդարեւին . ու անոր աղօթքովը բժշկուեցաւ : Ետքն ուղեց որ մարդարէն իրեն քովը կերակուր ուտէ . ան յանձն շառաւ ու գնաց :

Հ . Յերոբոսովամ զՋալէն ու ձեռքը բժըշկուելէն ետքն որ ան նշանները տուող մարդարեւին աղաչեց՝ իրեն հետ կերակուր ուտելու , մարդարէն ինչո՞ւ յանձն շառաւ .

Պ . Ինչպէս որ ինքը մարդարէն սուտ պատճառը , Աստուած անոր ապրասպրեր էր որ դուրս աեղ հաց չուտէ , ու նոյն գնացած ճամբէն ետ չգառնայ . անոր համար ալ ուրիշ ճամբով ետ դարձաւ . բայց չկրրցաւ ինչու ան կտորք օրահէլ աս հրամանը . վասն զի սուտ մարդարէ մը իրեն տղոցմէ իմանալով անոր ըրածները , մէկէն գնաց ճամբան՝ գիմացն սուտ , սուտ ըսաւ թէ : Աստուած ինձի ապրասպրեց որ զքեզ կերակուրի հրամայրնեմ : Երբոր անկէ խաբուած նստաւ ուտելու . Աստուած յայտնեց որ իր անհնազանդութեանը պատիժ՝ օտար աեղ պիտի մեռնի : Ետքը նորէն ճամբան երթալու աւան առիւժը զինքը պատուեց . որ սուտ մարդարէն երբոր իմացաւ , առաւ թաղեց , ու տղոցն ալ յանձնեց որ զինքն ալ անոր քովը թաղեն :

Հ . Յերոբոսովամայ ձեռքին բժշկութեանը համար ըրած զՋոււմը սրասնց էր .

Պ . Չէ . անոր համար Աստուած ալ բար-

կացեր էր անոր : Եւ երբոր իր Աբիա տղան
ծանր հիւանդութեան մէջ ինկաւ , ու Յե-
րոբովամ իր կնկանը լաթերը փոխել տա-
լով գաղտուկ՝ ընծաներով Սեւով խոր-
կեց զինքն Աբիա մարգարէին որ աղին հա-
մար հարցընէ , Աճ յայտնեց Աբիային որ Յե-
րոբովամի ըրած ասկերախառութիւնը կնկանն
երեսը զարնելով ըտաւ . : Աստուած զձեզ
անով տեղով պիտի ջնջէ . և հիմա գուն
տուն գառնալուգ սէս՝ Աբիան պիտի մեռ-
նի , ու գերեզման մանէ , բոլոր տանը
մէջ միայն անիկայ արդար գանուելուն հա-
մար : Իսկ մէկաշնոնք թէ որ քաղքին մէջ
մեռնին՝ շները պիտի ուտեն , թէ գուրսը
մեռնին՝ թաշունները : Եւ անանկ եղաւ :

72 .

Նաբաբ , Բաասա , Էլա , Ջաբբի , Ասաբ :

Հ . Աբիային ըսած պատիժը Յերոբովա-
մայ վրայ էր կատարուեցաւ .

Պ . Քաանուերկու տարի թագաւորելէն
ետե կրք չարաչար մեռաւ , իրեն Նաբատ
կաապաշտ որդին տեղը նստաւ . բայց երկու
տարիէն Բաասա զօրապետը դուրս քաշեց ,
ու զինքն սպաննեց , թագաւորութիւնը ձեռ-
քէն տաւ , ու բոլոր Յերոբովամայ ցեղն
ալ թրէ անցուց :

Հ . Բաասա ինչպէս թագաւորութիւն
քշեց .

Պ . Յերոբովամայ սէս կաապաշտութիւն

ըրաւ . անոր համար Աստուած Յէու մար-
դարէին բերնովն իմացուց որ Յերոբոավմայ
սէս սխախ ըլլայ իրեն ալ : Եւ քանուիրէք
տարի թագաւորելէն ետքը երբոր մեռաւ ,
ու իր որդին Էլլա սկսաւ թագաւորել . զան
ալ Չամբրի զօրապետը սպաննեց կերուխու-
մի մէջ եղած ասեներ՝ թագաւորութեան
երկրորդ տարին , ու ինքը թագաւորելով
ջնջեց բոլոր Բասասային ցեղը :

Հ . Չամբրի ո՞րչափ ասեներ թագաւորեց .

Պ . Եօթն օր . վասն զի բանակն ուրիշ տեղ
ըլլալով , երբոր զօրքը իմացան , իրենց Ամրի
զօրապետը թագաւոր դրին , ու եկան Թերսա
թագաւորական քաղաքը սաշարեցին : Չամ-
բրի երբոր նեղը մտաւ , իր սպառափն կրակ
տուաւ , ու ինքն ալ մէջն այրեցաւ :

Հ . Չամբրին սպաննուելէն ետքը՝ Ժողո-
վուրդը Ամրին ընդունեցան .

Պ . Ոմանք ընդունեցան , ուրիշներն ալ
Թամնի անունով մէկը կուղէին . բայց յաղ-
թեց Ամրին ու թագաւորեց տասուերկու
տարի՝ կռատաշատութիւն ընելով . և շինեց
Սամարիա քաղաքը :

Հ . Ամրիէն ետև ո՞վ թագաւորեց Իսրայէ-
լացոց .

Պ . Աքաաբ՝ որ առջիններէն աւելի չար
եղաւ՝ Յեղաբէլ իր կինն այլազգի աղջիկ
ըլլալուն համար : Աստուած ալ սաստիկ բար-
կանալով , Եղիա մարդարէն խրկեց անոնց ի
մացուց որ Իսրայէլացոց երկիրը տարիներով
անձրև սխախ չգայ ու սաստիկ սով սխախ
ըլլայ : Երբոր ըսածին սէս սովը սաստիկ .

ցաւ, Աքաաբ ու Յեզաբէլ կատաղած՝ Եղիան կրփրնառէին որ սպաննեն, կարծելով թէ անոր ուղեւիցն եղեր է առ սովը . և Եղիան չբանեւով ուրիշ մարդարէնեբէն ձեռուրնին ինկածը կրմեացրնէին :

Հ . Եղիա սովին ասենն ինչպէս ասրեցաւ .
Պ . Աստուած հրաւայեց իրեն որ երթայ անապատը՝ Քոռաթու ջրին քովը բնակի, ու հոն ազոաւներն առաւօտ իրիկուն իրեն հայ ու միս բերեն: Ետքան ջուրն ալ երբոր ցամքեցաւ, Աստուած Եղիային ըսաւ որ Սեղոնացոց Սարեփթա քաղաքն երթայ, հոն իրեն որբեարի կին մը կերպակուր ասոյ: Գնաց, ու երբոր կտոր մը հաց ուղեց, կինն ըսաւ՝ թէ « Միայն քիչ մը ալուր ու եղ մնացեր է որ ուտենք ու մեռնինք սկիտի . « Ալիւրդ ու եղդ չպակսին, ըսաւ Եղիա, ինչուան որ անձրե գայ » :

75.

ՔՐԻՍՏՈՍ ԸՐԵՇ:

Հ . Սովին ասենն Աքաաբ զԵղիան փրնառելով կրցաւ գանեւ .

Պ . Սովին երբորդ տարին Աստուծոյ հրամանաւ Եղիա ինքիրեն գնաց որ երկնայ Աքաաբու . և նախ հանգիստեցաւ անոր Աբգիու հազարապետին որ ձիերուն համար խոտ փրնառելու կերթար . « Գնա՛ ըսաւ Եղիա, խնայուր Աքաաբին թէ հոս եմ » . Աբգիու յանձն շառաւ, ըսելով, « Չըլլայ թէ Աստուծոյ հոգին զքեզ արիչ անդ մը

տանի, ետքը զիս կըմեացընէ Ա. քաաբ. վն զի ես ալ երկիւզած մարդ եմ ու ան սովին ատենն Ա. քաաբին ձեռքէն փախուցած հարիւր մարդարէ գաղտուկ այրի մէջ սրահեր եմ ու հացով ջրով կրկերակրեմ ” :
« Մի վախեր, ըսաւ Եղիա, այսօր պիտի երենամ ես անոր ” : Ան ատենը գնաց Աբգիու իմացուց : Ա. քաաբ զԵղիան տեսածին պէս՝
« Ի՛նչացոյ մէջ խռովութիւն ձգող ” կանչեց իրեն. Եղիան ալ ըսաւ, « Դուք էք՝ որ Աստուծոյ տեղ Բահայը կըպաշտէք ” : Ետքը սալըսպրեց Ա. քաաբին որ Կարմեղոս լեռը ժողովէ ամէն ժողովուրդը և ուժը հարիւր յիսուն քուրմերը. երկու եզ ալ բերեն մութեն, մէկը ինքը մէկաւն ալ քուրմերը, և Աստուծոյ մատուցանեն. որուն Աստուածն որ երկնքէն կրակ իջեցընէ ու այրէ պատարադը, ան է իրաւ Աստուածը : Ժողովուրդն աս բանիս հաւնեցաւ. ուստի առաջ քուրմերն իրենց եզը չոր փայտերու վրայ գրին և առաւօտէն ինչուան իրիկուան անոր չորս գին կըպարտէին ու կրկանչէին Բահայը : Եղիան ալ ծաղք ընելով կըսէր, « Ամուր կանչեցէք, թէ որ քուն է՝ արթըննայ ” : Անոնք ալ սկսան ալ ամուր կանչուընտել : մարմիննին ալ կըճեղքուտէին, բայց ձայն մը չելաւ : Ան ատեն « Մէկգի կեցէք ըսաւ Եղիա ”. ու ինքը տասուերկու քարերով սեղան մը շինեց և ամէն բան սրտարաստէն Ետքը վրան տասուերկու սափոր ջուր լեցընել արւաւ, անանկ որ միտը կըլողար ջրին մէջը. ու խնդրեց Աստուծմէ որ ինքզինքը ժողովը-

դեան խնայրնէ : Մէկէն երկնքէն կրակ իջաւ՝ այրեց սղջակէզը՝ ջուրը՝ սեղանն ալ մէկակեղ . ժողովուրդը ապշած երեսի վրայ ինկան՝ ըսելով, « Իրաւի աս է ճշմարիտ Աստուածը » : Ան ասէն Եղիա հրամայեց ժողովրդեան որ Բահաղի քուրմերը բռնեն, ու զամէնն ալ ջարդեն : Ետև Ա. քաարին ըսաւ, թէ « Անձրևի չբռնուած՝ գնա՛ կերակուրդ կեր » . Ա. քաար տուն հասաւ չհասաւ՝ անձրևն ալ առաւ :

Հ . Եղիայի քուրմերը ջարդելը երբոր ըսեց Յեզարէլ ինչ ըրաւ .

Պ . Սաստիկ սրգողելով Եղիայի, խրկեց ըսաւ, թէ « Աւազը զքեզ ալ քուրմերուն պէս պիտի ընեմ » . Եղիա վախցաւ ու գէտ ի Յուգայի երկիրն անապատը փախաւ : Ճամբան հոգնած անօթի ծառի մը տակ նստած՝ քուրմը տարաւ . հրեշտակ Աստուծոյ եկաւ արթնցուց, « Ելի կեր ըսաւ » : Աչքը բացաւ՝ տեսաւ որ քովը հաց ջուր կայ, կերաւ ու նորէն քնացաւ : Հրեշտակը նորէն ըսաւ որ ելէ ուտէ, վն զի շատ ճամբայ պիտի ընէ : Նորէն կերաւ ու անոր ուժովը քառասուն որ ճամբայ ընելով Քորեբ լեռը հասաւ :

Հ . Եղիա Քորեբ լեռը ինչ ըրաւ .

Պ . Հոն այրին մէջ երբ կըգանդատէր, Աստուած խնայուց թէ Իէլացոց մէջ ան գէշ կռապաշտութեան ասէնը կօթը հազար աստուած ապաշտ մարդ կայ . ու ապրասիրեց որ երթայ Ազայէն Ասորոց թիրօժէ, ու Յեու զօրապեան ալ Իէլացոց, Եղիան ալ իրեն տեղը մարդարէ գնէ, որ անոնց

ձեռքով Աքաարն ու Յեզարէլը պատժը
ւին : Գնաց Եղիա հանդիպեցաւ Եղիսէին
որ տասուերկու եղով երկիր կը հերկէր, կան-
ջեց . ան ալ թողուց ամէն բան ու սկսաւ
խրեն հեա պաշտիլ :

74.

ԱՊՐԻԻ ԴՊԵՐՄԷՆԵՐԸ :

Հ . Աքաարին առջի ըրած պատերազմը
որն եղաւ .

Պ . Որդի Ազերայ Ասորոց թիւրն ուրիշ
այլազգի թագաւորներու հեա եկաւ Սա-
մարիան պաշարեց ու Աքաարի գետպան
խրկեց՝ ըսելով « Բու ունեցած արծաթ-
ներդ՝ ժսկիներդ՝ կնիկներդ ու զաւակներդ
բոլորն ալ խնւ են » : Աքաար վախէն պախն
տուաւ թէ անանկ է : Ան ալ նորէն խրկեց
ըսաւ թէ « Աչաղը բոլորն ալ ինձի խրկես » :
Աքաար խորհուրդ ըրաւ ու պին խրկեց
թէ Չըլար : Երբոր անոնք սկսան խրոխ-
տալ, « Ալ հերիք է՝ ըսաւ Աքաար, չար-
ծի կորն իբրև ուղի » : Ետքը երբոր անոնք
ուտելու խմելու հեա էին՝ մարդարէի մը
խօսքով անոնց վրայ վազեց ջարդեց փախուց
զամէնքը : Ասորիք կարծելով որ Իէլացոց
Ասաուածը լեռներու Ասաուած է, անոր
համար մեկալ տարի նորէն պատերազմ բա-
ցին Յափեկա գաշտին վրայ : Ասաուած նո-
րէն ան մարդարէին բերնով խմացուց Աքաա-
րին որ անանկ ծուռ կարծիք երթանուն

Համար սխախ յաղթուին . ուստի մեկ օրուան մէջ անոնցմէ հարիւր հազար հոգի կտարեցին Նէշայիք . մնացածներուն վրայ ալ քաղքին պարիսպը փշաւ՝ քսանուէօթը հազար ալ հոն մեռան : Ան ասէնը թագաւորնին ալ գաղտուկ տեղ մը փախած՝ իշխանները խրկեց որ յաղթուածի զգէտտով եկան Աքաաբէն թողութիւն ուղեցին : Աքաաբ ալ խղճաց վրանին՝ ու մեծարեց անոնց թագաւորը , իր կառքին մէջ քոյն առաւ , հեռը բարեկամութեան գաղինք դրաւ . ասոր համար Աստուած նեղացաւ , մարդարէի ձեռքով առակով մը խնայուց որ անոնց տեղն ինքն ու իր ժողովուրդը սխախ ջարդուին :

Հ . Աքաաբ՝ որդի Ագերայ թիբլին գէմըրած պաաերազմէն ետե յիշատակի արժանի ինչ գործք ըրաւ .

Պ . Մեծ անիրաւութիւն մը ըրաւ աս կերպով : Նաբովթայ սյդին Աքաաբի պալատին քով ըլլալով , Աքաաբ կուզէր գնել բայց Նաբովթ չէր տար՝ իր հօրը ժառանգութիւն ըլլալուն համար : Աքաաբ ասոր վրայ արամած՝ մեկ օր մը հոց չկերած պաակեցաւ . Յեզարէլ կինը հարցուց խնայաւ , մէկէն հրովարտակ մը գրեց անոր քաղաքացիներուն մեծերուն որ դասաստան ընեն ու երկու սուտ վկայով հաստատեն թէ Նաբովթ Աստուծոյ ու թիբլին գէմ խօսեր է . ու ասանկով քարկոծեն զինքը : Ատքը երբոր Աքաաբ Յեզարէլէն խնայաւ Նաբովթայ մահը , աս ջի բերան քիչ մը ցաւ ցցուց , բայց

ետքը գնաց առաւ այգին : Ան առենն Աստուած խրկեց զԵղիան Աբաարին՝ տասնկ ըսեւով . « Ուր որ անմեղ Նարովթին արիւնը շները լափեցին, հոն քուկդ ալ լափեն, ու Եղրայէլ քաղքին պատին տակը Յեզարեղի մարմինն ալ շներն ուտեն, և քու ցեղդ ալ բոլոր ջնջուի » : Բայց որովհետեւ ինքը Նարովթայ մահուանը վրայ ցաւ ցցուց՝ անոր համար « Քու օրդ չբլան աս բաներս » ըսաւ :

Հ . Աբաար ինչպէս մեռաւ .

Պ . Որդի Ագերան աղատելէն իրեք տարի ետե նորէն Աբաար ուղեց պատերազմ բանալ Ասորոց դէմ՝ որ Ռամաթ Գաղաազն անոնց ձեռքէն առնէ : Յովսափատ Յուդայի թագաւորն ալ ան օրերը հոն գանուելով խորհուրդ տուաւ որ մարգարէներուն հարցնեն . ուստի չորս հարիւր սուտ մարգարէ ժողոված՝ յաջողութիւն կրխտատանային : Ան առենը Յովսափատ ըսաւ . « Չկայ մէկ Աստուծոյ մարգարէ մըն ալ որ անոր հարցնենք » : Աբաար ըսաւ, « Կայ մէկն որ միշտ իմ վրաս գէշ կրխտի » : Յովսափատ աղաչեց՝ բերել տուաւ, որ Միքիա մարգարէն էր, ու համարձակ եկաւ ամենուն դէմ ըսաւ, թէ « Աբաար ան սրտրդին մէջ պիտի մեռնի » : Բարկացաւ Աբաար ու բանտ դնել տուաւ, որ եթէ ողջ գառնայ ինքը սրտրդմէն մեռցնել տայ : Եւ գնաց ան պատերազմին մէջ նետով զարնուեցաւ, ու ինչուան իրիկուն արիւնը վաղելով մեռաւ . և նստած կառքն ալ արիւնով լցուած՝ Սամարիա քաղաքը

Նաբովթայ այգիին տեղը բերած լուանա-
լու ատեն՝ շներն արիւնը կըլափէին :

75.

Ուսուցիչ , Յուլիան , Եւրիպիլ Վերանալ :

Հ . Աբասաբին տեղն ո՞վ յաջորդեց .

Պ . Աբողիա իրեն տղան որ կուսապաշտու-
թիւն ընկելով երկու տարիէն ետքը որ մը
տանը պատուհանէն իյնալով չարաչար հի-
ւանդացաւ , ու մարդիկ խրկեց Ահկարոն
քաղաքն որ ճանձիկ կուռքին հարցնէ թէ
պիտի բժըշկուի : Ան ատենն Աստուծոյ
հրամանովն Եղիա հանգիստեցաւ անոնց ու
ըսաւ . « Ի՛նչացեք Աստուած չունի՛ն՝ որ դուք
ճանձիկ կուռքին կերթաք հարցնելու .
դնացեք խմացուցեք իրեն որ Ի՛նչացոյ Աս-
տուածը կրտէ թէ պառկած տեղէդ մէյ
մ'ալ պիտի չելես » : Աբողիան երբոր նշաննե-
րէն խմացաւ թէ Եղիան է ան ըսողը , վրան
յիմնապէտ մը խրկեց զօրքով ան ատենն որ
Եղիա լեռան մը վրայ նստեր էր : Յիմնապէ-
տը վարէն ըսաւ . « Մարդ Աստուծոյ , թա-
գաւորը քեզ կուզէ » . Պատասխանեց Եղիա .
« Թէ որ էս մարդ Աստուծոյ եմ , հիմա կրտսկ
իջնայ երկնքէն ու զքեզ քու մարդիկներովդ
այրէ » : Մեկէն կրտսկ իջաւ՝ զամենքն այրեց :
Աբողիա նորէն յիսուն մըն ալ խրկեց , ա-
նոնք ալ առջինին պէս այրեցան : Երբորդ
անգամն որ խրկեց , յիմնապէտը ծունկի
վրայ եկաւ , ու աղաչեց Եղիային որ իրենց

խնայէ՛ չայրէ, ու ելլէ գոյ : Ան ատենը
Եղիա Աստուծոյ հրամանովը գնաց, յան-
դիմանեց թագաւորին կռատաշատութիւնն,
ու « Գիտի մեռնիս ըսաւ » : Ասանկով Աքո-
ղիան ալ մեռաւ :

Հ . Աքողիայէն ետե ո՛վ եղաւ թագաւոր
Իսրայէլացոց .

Պ . Ինքն որդի չունենալով, Յովթամ իր
եղբայրը նստաւ՝ տասուերկու տարի . որ
թէպէտ հօրը չափ գէշ չէր, բայց կռատաշ-
ատութիւնը բոլորովին ձեռքէ չթողուց : Ասոր
օրերը Մովարացիք ապստամբեցան :

Հ . Յովթամայ թագաւորութեան ատենը
ինչ նոր գործք ըրաւ Եղիա .

Պ . Աստուած ուզեց որ զինքն ողջ ողջ եր-
կինքը վերացընէ . ուստի ինքն ալ կուզէր
որ մինակ տեղ մը երթայ՝ վերանալու հա-
մար . բայց Եղիսէն խնացաւ ու քովէն չէր
զատուէր . ինքն ալ տեսաւ որ չըլար, մեկտեղ
Յօրգանանին քովը գնաց՝ իր կաշիէ վերար-
կուով ջրին զարկաւ երկու ձեղքեց ու մե-
ջէն անցան : Հան յայանեց Եղիսէի՝ թէ
« Ես պիտի աշխարհքէս վերանամ . ուստի
խնդրէ, ըսաւ, ինձ մէինչ որ կուզես » . Եղի-
սէն ալ ըսաւ . « Քու երկու զօրութիւնդ
ալ՝ հրաշք ընելու և մարգարէանալու՝ ինձի
գան » : « Գժուար բան խնդրեցիր ըսաւ
Եղիան, բայց թէ որ զիս տեսնես երկինք ել-
լելու աստենս, ուզածդ ըլլայ » : Մէյսին ալ
յանկարծ կրակէ կտոքով և ձիերով սկսաւ
վեր ելլել . Եղիսէն ալ սկսաւ կանչել,
« Հայր հայր, ո՛ր կերթաս՝ Իսրայէլացոց

կառքն ու կառավարը : Ետքը արամու-
թեամբ իր լաթերը ստատուեց՝ ու Եղիայի
վերարկունն ձեռք առած՝ որ վեր ելլելու
ստեն վրան ձգեց՝ նշան թէ խնդիրքը կը-
կատարէ, եկաւ Յորդանան գետին զարնե-
լով երկու բաժնեց ջուրն, ու նորէն ասդիս
անցաւ :

76.

Եւթիւնի հրաշքները :

Հ. Եղիսէն Եղիայէն առած զօրութիւնն
ինչ բաներու մէջ երեցուց .

Պ. Երբոր Երեքով գնաց, քաղաքացիքն
խմանալով թէ Եղիայի զօրութիւնն անոր
անցեր է, աղաչեցին որ քաղաքին ջուրն աղէկ
ցընէ որ լեղի էր ու վնասակար : Եղիսէն ալ
գնաց օրհնեց. մէջն աղ ցանեց ու անուշ
ցուց : Ետքը ճամբան աղաքներ ելան դի-
մացն ու սկսան զինքը ծաղր ընել՝ կունտ
գլուխ կանչելով . Եղիսէն ալ զանոնք անի-
ծելուն սէս՝ անտառէն երկու արջ վրանին
վազեցին ու քառսունուերկու հոգի մեռու-
ցին : Անգամ մըն ալ որբեւորի կնոջ մը սարա-
քընտէրները սարտքի տեղ երկու աղաքը
կուղէին առնել . եկաւ Եղիսէին ոտքն ին-
կաւ . հարցուց Եղիսէն՝ իմացաւ որ Քիչ մը
եղ ունի, « Գնա՛ ըսաւ գրացիներէդ փախ
առ սարտաղ ամաններ ու ան եղն ամենուն
մէջ լեցու » : Ասանկով որչափ աման որ
գտաւ կինը՝ ամէնն ալ լեցուեցաւ ու անով
սարտքը վճարեց : Ետտ անգամ Եղիսէ

Սոմնա քաղաքը կերթար . հոն բարեպաշտ
ամուլ կին մը իր տունն անոր խուց մը պատ-
րաստեր էր որ միշտ հոն կիջնար . մարդա-
բէն ուղեւորվանոր բարի սրտին հասուցմունք
մը ընեւ, Աստուծմէ խնդրեց , որ անոր զա-
ւակ մը եղաւ . աս աղան մեծնալէն ետքը
երբոր մեռաւ, Եղիսէն աղօթքով նորէն ողջա-
ցուց զինքը : Սովի ստեն իր աշկերտին ըսա-
որ երթայ քիչ մը կանաչեղէն ժողովէ ու մար-
դարէններուն կերակուր ընէ . աշկերտը գնաց
չաս ազօխ դասա՝ շալկեց բերաւ , ու չգիտ-
նալով՝ սանին մէջը դրաւ եփեց . մարդիկն
ուտելու ատեն խնացան որ ժանգը զարկեր
է . Եղիսէ քիչ մը ալիւր մէջը ցանել տուաւ
ու կերցուց , մէկու մըն ալ միաս շեղաւ :
Անգամ մը մէկը իրեն հաց ու թուղ ընծայ
բերաւ . ան մէկ երկու հացը ժողովրդեան
բաժնել տուաւ . ամէնքն ալ կերան ու
աւելցուցին ալ : Ուրիշ հրաչքներէն զաս
Ասորոց թագաւորին՝ Նէեման զօրապետն
ալ բժշկեց բորտութի :

Հ . Նէեման ինչպէս բժշկուեցաւ .

Պ . Նէեմանայ տունը գերի առնուած
Իսրայէլացի աղջիկ մը կար , անիկայ խնա-
ցուց թէ Սամարիա մէկը կայ որ կը բժշկէ՝
ուստի Նէեման իր թագաւորէն յանձնա-
րարական թուղթ մը առած Յովթամ թա-
գաւորին՝ շատ պարգէններով եկաւ Սամա-
րիա : Յովթամ երբոր խնացաւ անոր դալուն
պատճառը, խարդախութիւն կարծեց ու
վախցաւ՝ ըսելով « Ես Աստուած եմ որ
մարդ բժշկեմ » : Աս բանիս լուրը երբոր

Եղիսէին հասաւ , իրկեց թագաւորին ըսաւ
որ թող քովս գայ որ իմանայ Աստուծոյ զօ-
րութիւնը : Գնաց Նէեման Եղիսէին . Եղի-
սէն ինքը չէրկցած՝ մարդ իրկեց ըսաւ թէ
երթայ Յորդանան եօթն անգամ լուացուի
ու բժշկուի : Բարկացաւ Նէեման . « Ես
կարծէի թէ ըսաւ՝ գայ օրհնէ պիտի զիս ու
բժշկէ . ալ աղէկ չեն Գամասկոսի ջրերը » .
որ սկսաւ ետ գառնալ : Ան ասեանն իր ծա-
ւաները յորդորեցին զինքն որ մարգարէին
ըսածը դիւրին բան մըն է՝ չարհամարհէ ,
մէյմը փորձէ : Ասանկով Նէեման գնաց Յոր-
դանան ու լուացուելուն պէս՝ բժշկուեցաւ .
ուստի ուրախութեամբ լցուած դարձաւ Ե-
ղիսէին շնորհակալ եղաւ , ըսելով թէ « Հիմա
իմացայ որ մինակ Խարայէլացոց Աստուածն
է ճշմարիտ . անոր համար երկու ջորի բեռ
հող առնեմ ասանիմ որ ան հողին վրայ՝ միայն
աս Աստուծոյն առջև ողջակէզ ընեմ » : Ինքն
ալ Եղիսէի տալ կուզէր իր բերած ընծանե-
րէն , բայց Եղիսէ բան մը չառաւ : Իսկ երբ
որ մէկմէկէ բաժնուեցան , Եղիսէին աչ-
կերօր Գեէզի՝ Նէեմանին ընծաներուն աչք
անկելով գաղտուկ գնաց անոր ետեէն , ու
ըսաւ թէ « Իմ տերս զիս իրկեց որ տաղանդ
մը արծաթ ու երկու ձեռք հագուստ սաս ,
երկու աղքատ մարդիկներու համար » . Նէե-
ման ալ սիրով հանկեց իրեք տաղանդ ար-
ծաթ՝ ան հագուստներն ալ՝ ծառաներուն
տուաւ , Գեէզիին հետք ճամբեց , որ մութ
ասեան՝ մարդ չտեսած՝ տունն առաւ սա-
հեց , և ասեանին Եղիսէին առջևն երաւ : Ե-

ղիսէն հարցուց, թէ « Ուսկից կուգաս » :
Պատասխանն առաւ, « Ծառադ տեղ մը
չեմ գնացեր » : Ըն ստեն Եղիսէն ալ բաւ .
« Եզահու թիւնն ընել տուաւ քեզի ատրա-
ները . անոր համար Նէեմանին ստակին հեա-
բորն ալ քեզի ու զաւկընէրու գանցնի » : Հոն
մէկէն միւսի պէս բորոտեցաւ Գեէզին :

Հ . Երբոր Մովսրացիք ապստամբեցան
Խորայէլացոցմէ՝ Յովրամ կըրցաւ զիրենք նս-
րէն հարկառու ընել .

Պ . Բ՛լրաւ՝ Եղիսէին հրաշքովը : Ա՛յան զի
երբոր Յովրամ սպաւերազմ բացաւ անոնց
դէմ, և զՅովսափաա Յուդայի թագաւորն ու
Եզոմայ թագաւորն իրեն օգնական առած՝
Էօթն օր անապատին մէջէն կերթար, ջրեր
նին պակտեցաւ և յուսահատեցան . և Յով-
սափաաայ խորհրդով կանչեց Յովրամ զԵ-
ղիսէն ու հարցուց : Եղիսէն չէր ուզեր պա-
տասխանել, բայց Յովսափաաայ սիրուն
համար քնար զարնող մը բերել տուաւ ու
քնարին ձայնովը զուարթացած՝ ըսաւ որ
հեղեղատին մէջ փոսեր բանան, ինքիրեն ա-
նոնք ջրով լեցուին, և ետքը թշնամեաց ալ
յաղթեն : Առաւօտանց կարսիր արեն ան
ջրերուն զարնելով կըփայլէր . Մովսրացիք
հեռուէն տեսան՝ արիւն կարծեցին ու ըսին
թէ « Ուրեմն իրեք թագաւոր մէկմէկու հեա
կառեր՝ մէկգմէկ ջարդեր են » . ուստի փաղե-
ցին որ կողոպուտ առնեն : Խորայէլացիք
պատրաստ ըլլալով զանոնք աղէկ մը ջարդե-
ցին, ու ինչուան թագաւորական քաղաքը
փախուցին . հոն Մովսրացոց թագաւորը

յուսահասած՝ իրեն անգրանիկ տղան պարսպին վրայ մորթեց ողջակեզ ըրաւ . և աս բանս քառմնեցուց Իսրայէլացիներն որ թողուցին եւ գարձան :

77 .

Եղիէի խորհրէս-ի-նէր :

Հ . Եղիսէն հրաշագործութենէն զամ իր մարգարէութիւնն աւելի ինչ բաներու մէջ ցցուց .

Պ . Ինչ վարպետութիւն որ կըբանեցընէին Ասորիք պատերազմի մէջ՝ բոլոր Յովրամայ կիմացընէր : Անգամ մը Ասորիք գարան ըրին , Եղիսէն Յովրամայ խմացուց որ ան տեղէն չանցնի . ասանկով ուրիշ քանի մը անգամ ալ պարսպն ելան Ասորիք : Բարկացաւ թագաւորնին , կըհարցընէր թէ ո՞վ կիմացընէ Իսրայէլացոց իրենց ըրածը : Ըսին իրեն թէ . « Եղիսէ մարգարէ մը աւնին որ գաղտուկ խուցի մէջը խօսած գալ կիմանայ » . շուտ մը վրան զօրք խրկեց որ գնացին պաշարեցին Դովթայիս քաղաքը : Եղիսէն առաւօտանց քաղքէն դուրս ելլել կուզէր , աշկերան սկսաւ վախնալ . Եղիսէն անոր սիրտ առաւ , ու Աստուծոյ ազաչեց՝ անոր ալ ցուցընելու իրենց քովի զօրքերն որ լեռանը վրայ Եղիսէին չորս դին ձիաւորներ՝ կրակէ կառքեր շարուած էին : Ետքը իր վրայ եկողներուն աչքն ալ կուրցուց ու ըսաւ . « Եկեք ցուցընեմ ուզածնիդ » , և Սամարիա տարաւ .

Հոն երբոր աչուընին բացաւ, տեսան որ բըն-
նուան եծ : Գովրամ հարցուց Եղիսէի զա-
նոնք ջարդելու համար . Եղիսէն ալ ըսաւ .
« Մեռցրնելու իրաւունք չունիս , կերակուր
տուր իրենց ու թող որ երթան » : Աւրիշ ան-
գամ ալ սաստիկ սովի ատենն՝ ըլլալու առա-
տու թիւնը մարդարէացաւ :

Հ . Եղիսէի ատենն մեծ սովն ինչպէս ե-
լաւ .

Պ . Ըստրուոց թագաւորն եկաւ պաշարեց
Սամարիա քաղաքն , որ ամենեկին ուտելիք
չմնաց մէջը : Օր մը Գովրամ յուսահատած՝
պարսպին վրայ պաշտելու ատենն՝ վարէն
կին մը սկսաւ հանջել թէ ուրիշ կնկան մը
հետ առջի օրն իր աղան կերեր են , ու եր-
կրորդ օրը մեկալ կինն իրը պահեր է՝ դուրս
չհաներ որ ուտեն : Թագաւորին սիրաբ
խշխշաց սա բանիս . երգում ըրաւ Եղիսէին
գլուխն առնելու՝ հրաջք մը չընելուն հա-
մար , ու դնաց որ խօսի հետը : Եղիսէն զինքը
հանգարտեցուց ու ըսաւ . « Աչոր առ ա-
տենս մէկ գրիւ բարակ ալիւրը՝ մէկ սիկղ պի-
տի ծախուի » . իշխանին մէկը զարմանալով
պատասխանեց . « Երկնքէն ալիւրէ անձրև
պիտի գայ » . Եղիսէն ալ անոր անհաւատու-
թեք համար ըսաւ , « Տեսնես՝ ու չուտես » :
Հոն քաղաքին գրանը քով չորս բորսա կային .
ասոնք յուսահատած՝ ան գիշերը թշնամի-
ներուն բանակը դնացին որ կամ սպաննուին,
կամ ուտելու բան գանեն՝ ապրին : Նոյն
գիշերն Ըստուած Ըստրուոց մէջ սաստիկ
վախ ձգեր էր՝ զօրքերու ձիաւորներու ձայ-

ներ լսել տալով արտորնօք փախուցեր էր զամէնքը : Ուստի ան բորտաները տեսան որ ձայն չկայ՝ նստան կերան խմեցին , ու սկսան ոսկի արծաթ փախցնել պահել . բայց տեսնելով որ գլուխ չէլուիր ասանկով և խմանալով որ հոս Աստուծոյ բանը սխալի ըլլայ . գնացին քաղցին պահապաններուն աւեախա տունն : Թագաւորն ալ լսելով սկսաւ ըսել թէ « Թշնամիներուն խաբէութիւնն է » . բայց մարդ խրկեց խնայաւ որ իրաւ փախեր են , ճամբուն վայ ալ լաթեր նին և ուրիշ բաներնին թողուցեր են : Ուստի ամէնքը մտան բանակին մէջը , Ժողվող Ժողվողի . անանկ որ Եղիսէին ըսածին պէս ցորենն ու գարին ոչինչ գնով կրճախուէր : Ան չհաւտացող իշխանն ալ որ թագաւորին հրամանովը քաղցին դրանը վերակացու դրուած էր , ան տեղն ոտքի տակ ինկաւ կօխ կրճատուեցաւ մեռաւ :

73 .

Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն , Յէ՞ն :

Հ . Յովսափ ինչպէս մեռաւ .

Պ . Եղիան Եղիսէին յանձնած ըլլալով որ Ազայէն ու Յէուն թագաւոր օժէ , անոր համար Գամասիոս դնաց Եղիսէն , Ասորւոց թագաւորը երբոր լսեց , ինքը հիւանդ ըլլալուն՝ խրկեց Ազայէլ իշխանն որ հարցնէ Եղիսէին՝ իր հիւանդութեանը համար : Ան ասունը Եղիսէ ցաւելով ըսաւ Ազայէին թէ

« Թագաւորը կըմեռնի, դու տեղը կանցնին, ու Խորայէլացոց շատ վիշա պիտի հապընես: Ինչպէս որ ըսաւ՝ քիչ ատենէն Ազայէլ թագաւոր եղաւ ու Յովրամին գէժ պատերազմ բացաւ. հոն վիրաւորուեցաւ Յովրամն ու Եզրայէլ գնաց բժշկուելու: Ետքը Եզրայէլ իր աշկերաններուն մէկը Ռամամ Վաղաադ խրիկեց, ու Յէուէն ալ թագաւոր օծել տուաւ որ Աքաաբու տանը վրայ Ասաուծոյ սպառնալէքը կատարէ: Ան ատենը Յէու զօրքն առաւ գնաց Եզրայէլ քաղաքը Յովրամ թագաւորին վրայ, ու երբոր անիկայ սկսաւ փախչիլ՝ հասաւ ու նետով սպաննեց, մարմինն ալ Նաբոզիմայ այգին ձգեց:

Հ. Եզրայի մարդարեւ թիւնը Յեզաբելայ վրայ ինչպէս կատարուեցաւ.

Պ. Յէու Եզրայէլ քաղաքը մտնելու ատեն՝ Յեզաբել հագուած կապուած՝ պատուհանէն խօսք կընեատէր, « Բարի եկար, ըսելով Չամբրի աիրասպան», իբր թէ Չամբրիին պէս իր տէրն սպաննեց: Յէու հրամայեց Յեզաբելի քովն ներքիններուն որ զինքը վար ձգեն, ու ձգածնուն պէս ջախջախեցաւ և ձիերէն կոխկրճաուեցաւ ու շները կերան, անանկ որ թաղելու համար միայն գանկն ու ձեռաց թաթերը մնացեր էին: Ետքը Յէու ջարդեց Աքաաբի մնացած եօթանասուն որդիքն ալ. Բահազու քորմերն ալ՝ հանգէս պիտի ընեմ ըսելով զամէնքը կաատան մէջը ժողովեց թրէ անցուց. կաատունն ալ կործանեց՝ սաից ճամբայ ցնեց:

Հ. Յէու որչափ ատեն թագաւորեց .

Պ. Քսանեւթը տարի . և թէպէտ Քա-
հաղը ջնջեց , իսկ հորթ պաշտելէն ետ չկե-
ցաւ : Քայց Աստուած իրեն ըրած առջի ա-
ղէկութեանը համար ինչուան չորրորդ պոր-
տը թագաւոր նստին ըսաւ : Աս ատեններս
Ազայէլ Ասորոց թագաւորը շատ կըչար-
չարէր Իսրայէլացիները :

Հ. Յէուէն ետքն ո՞վ թագաւորեց .

Պ. Յովաքազ իր որդին՝ հօրը նման կա-
պաշտ , ատանեւթը տարի . անոր ետեւէն
Յովաս իր որդին , ան ալ կապաշտ :

Հ. Յովաս ինչ երևելի դործք ըրած ունի .

Պ. Եղիսէին մեռնելու ատեն որ մտա-
ցաւ , գնաց Յովաս սկսաւ լալ՝ ըսելով թէ
« Առանցքեղի Ինքնայեք ինչ պիտի ընեն » :
Եղիսէն հրամայեց որ աղեղն ատնէ ու սր-
տաւ հանեն գէպ ՚ի Ասորոց երկիրը նեա նե-
տէ . թագաւորն իրեք հեղ նետելէն ետե
գաղբեցաւ . ան ատենը Եղիսէն՝ « Ափսոս ը-
սաւ , միայն իրեք անգամ Ասորիները պիտի
ջարգես . թէ որ հինգ կամ վեց հեղ նե-
տէիր՝ բոլոր զանոնք կըջնջէիր » : Աւստի Յո-
վաս իրեք անգամով Իսրայէլացոց կորսն-
ցուցած քաղքերները բոլոր նորէն ետ առաւ :
Ետքը Ամասիա Յուզայի թագաւորն երբոր
հաբարտութեամբ Իսրայէլացոց վրայ պատե-
րազմ բացաւ , Յովաս անոր ալ յաղթեց՝
ղինքն ալ բռնեց , Երուսաղէմ ալ առաւ ,
և անկէ շատ կողոպուտ Սամարիա բերաւ ,
և տասուերկու տարի թագաւորելէն ետե մե-
ռաւ :

Հ . Եղիսէին վերջին հրաշքն ո՞րն եղաւ .

Պ . Անգամ մը երբոր Իսրայէլացիք մե-
ռեւ կը կրտանէին՝ յանկարծ աւազակներ վրա
նին վազէցին , անոնք ալ զխալուածով մեռելը
Եղիսէին դերեզմանին վրայ ձգեցին փա-
խան . ան տեղը մեռելը մէկէն յարութիւն
ստաւ :

Հ . Յովտակն ետև ո՞վ նստաւ .

Պ . Իր աղան Յերորովամ երկրորդ , քա-
ռասուն տարի : Ետէն անոր որդին Զա-
քարիա՝ Յեուի ցեղին ետքինը՝ վեց ամիս .
Սեղզում անունով մէկը զինքը սպաննեց , ու
ինքը Թագաւոր նստաւ ամիս մը : Աս չորսն
ալ կռատաշատ ըլլալուն , պատիժն ալ
իրենցմէ պակաս չէր :

Հ . Սեղզումին ո՞վ յաջորդեց .

Պ . Մանայեմ Սեղզումն սպաննեց ու
ինքը նստաւ : Երբոր փուա Ասորուց Թագա-
ւորը վրան պատերազմ բացաւ , Մանայեմ
ժողովուրդը բոլոր կեղեքեց ու փուային
շատ տասկ տալով զինքը հանգարտեցուց :
Տասը տարիէն մեռաւ ու տեղը նստաւ իր
աղան ֆակիա . որուն տասներորդ տարին
ֆակէէ որդի Ռովմեշայ իր իշխանը զինքը
մեռուց ու տեղն անցաւ : Ասոր օրը Թագ-
ղաթիֆաղասար Ասորուց Թագաւորն եկաւ
շատ տեղերու տիրեց ու շատ ալ դերի Աս-
րեստան տարաւ : Վասն զի ամենն ալ կռա-
պաշտութիւն կրնէին :

Հ . Իսրայէլացոց Թագաւորութիւնն ինչ
պէս վերջացաւ .

Պ . Փակէին քսաներորդ տարին՝ Ռվակէ

որդի Եւրան սպաննեց զինքն ու տեղը անցաւ .
և Ասորւոց ձեռքէն ազատելու համար գաղ-
տուկ Եգիպտոսոց աղաչեց որ գան օգնեն :
Երբոր խնայու Սաղմանասար Ասորւոց թա-
գաւորը , անոր թագաւորու թեան Էօթնե-
րորդ տարին Էկաւ իրեք տարի սրաշարեց
Սամարիան՝ առաւ , ու Ովսէէն շղթայով
կապած շատ Իսրայէլացիներ ալ մեկտեղ
Ասորեաւան գերի տարաւ : Ասանկով բո-
լորովին սրաաժեց Աստուած իրենց կռասպաշ-
տու թիւնը . թագաւորու թիւննին առաւ ու
զիրենք գերի ըրաւ անոնց՝ որոնց որ կուռ-
քէր կըսիրէին : Ետքը Սաղմանասար Սա-
մարիային կողմերն ասգիէն անգիէն ուրիշ
մարդիկներ բնակեցուց , որոնք Սամարացի
ըսուեցան :

Հ . Սամարացիք ինչ կըսպաշտէին .

Պ . Առջի բերանը կուռք կըսպաշտէին .
անոր համար Աստուած վրանին առիւծներ
խրկեց որ շատ մարդ կուտէին : Երբոր խնա-
ցաւ Ասորւոց թագաւորը , Իսրայէլացոցմէ
քահանայ մը խրկեց իրենց որ սկսաւ Մով-
սէսի օրէնքներն անոնց սորվեցընել : Ան-
կէ ետքը Սամարացիք Աստուծմէ ալ իրենց
կուռքերէն ալ կըվախէին :

Հ . Իսրայէլացոց տասը ցեղն կռասպաշտ
Թագաւորներուն հետ բողոքաւորով Յու .

դայի Թագաւորներն ինչպէս կը դանանք .

Պ . Շատ տարբեր : Թէպէտ ասոնց մէջն ալ կուսպաշտ Թագաւորներ եղան , բայց շատ աստուածապաշտներ ալ իրենց գործքովը զԱստուած կը հաշտեցնէին . անոր համար Յուդայի Թագաւորութիւնը Իսրայէլացոց Թագաւորութենէն շատ դիմացաւ , որոնց առջինը Ռոբովամն էր՝ Սողոմոնին որդին :

Հ . Ռոբովամ ինչպէս Թագաւորութիւն քշէց .

Պ . Առջի իրեք տարին աստուածապաշտութեամբ անցուց , անկէ ետքն սկսաւ գէշնալ : Անոր համար Աստուած Թագաւորութեանը հինգերորդ տարին Թող տուաւ որ Եզիպտացոց Սոսակիմ Թագաւորն անհամար զօրքով եկաւ ինչուան Եղէմ ու բոլոր տաճարին և Թագաւորական սպառախին օսկեղէն ու արծաթեղէն բաներն առաւ . վրանին ալ ծանր տուրք դրաւ : Ետև Սամիաս մարգարէին իրաատիւն որ քիչ մը զգաստացան , Աստուած ալ սպառիժը դադրեցուց : Բայց Ռոբովամ նորէն իր առջի չար ճամբան բռնեց , և Յերոբովամայ հետ ալ միշտ պատե բազմ կընէր :

Հ . Ռոբովամին ետևէն Յուդայի Թագաւոր ո՞վ նստաւ .

Պ . Աբիա կամ Աբիու՝ Ռոբովամի քանկութիւնը որդւոց մէջ աւելի սիրելի աղան որ կուսպաշտութեան գիէն իր հօրմէն վար չէր մնար : Անգամ մը մեծ պտորով բացաւ Յերոբովամայ գէմ . իր զօրքը չորս հարիւր հա-

զար էին . ու Յերոբոամի զբքը ութը հարիւր հազար : Պորզիը ջրակամ՝ Արիան Իւրայէլացոց յորդորանք մը ըրաւ որ նորէն հնազանգին Դաւթի թագաւորութեանն ու ճշմարիտ Աստուածը պաշտեն՝ իր սաւառին մէջը : Հինա ալ փուճ՝ աւզը մի պատերազմիք ըսաւ . վն զի գուք Յերոբոամին աշնկամ հորթին ապաւինեք էք . խոկ մենք ճըշմարիտ Աստուծոյ վրայ գրեք ենք յոյսերնիս : Յերոբոամ սա միջոցիս իր բանակին կէտը գաղտուկ անոնց ետեն անցուց : Երբ որ աեսաւ Արիան որ ետեկն առջեկն պաշարուեր է՝ Աստուծոյ ապաւինելով սաստիկ զարնուեցան , հազարաւոր մարդ ջարդեցին ու շատ տեղուանք ալ առին : Արիան իրեք տարի թագաւորեկն ետքը մեռաւ :

Հ . Արիայի տեղն ո՛վ յաջորդեց .

Պ . Իր որդին Ասա , որ շատ բարեպաշտ ըլլալով կառապաշտութեան բաները բոլոր վերուց , և իր Մաաքա մայրը կառապաշտութիւն սիրելուն համար թագուհիութենէ ձգեց . անոր համար Աստուած ալ իր բաները յաջողեց : Եթովպացոց Ջարեհ թագաւորը հազարաւոր զոբքով և իրեք հարիւր կառքով վրան ելաւ . Ասան իրեք հարիւր հազար Յուդայի՝ երկու հարիւր վաթսուն հազար ալ Բենիամինի զոբքով գէմն ելաւ , ու Աստուծմէ օգնութիւն ինդրելով անանցմէ շատը ջարդեց , մնացածը փախուց , ու շատ կողոստուա առաւ , ոսկիով արծաթով նորէն սաւառը զարդարեց : Աւրիշ ցեղերն ալ ըրածնէին խանալով շատ մարդ եկան

իրեն հնազանդեցան :

Հ . Ասան իր բարեպաշտութեանը մէջ
ինչուան ետքը հաստատ կեցաւ .

Պ . Չէ . անոր համար իրեն թագաւորու-
թեանն երեսունեութերորդ տարին երբոր
Բասասան իրեն գէմ պարզմ բացաւ , ինքը
չատ օսկի արծաթ ժողկեց տաճարին մէջէն ,
ու Ասորաց թագաւորին խրկեց՝ որ իրեն
օգնեց ու Բասասան փախցընել տուաւ . բայց
ետքը Անանիա մարգարէն եկաւ զինքը յան-
դիմանեց թէ ինչո՞ւ Աստուծոյ չտաւինն
ցաւ . ինքն ալ մարգարէն բանտ դրաւ : Ծե-
րութեան ատենն ալ որ օտքիցաւով պառկեր
էր , յայտը Աստուծոյ վրայ գնելու աեզ՝
բժիշկներուն վրայ դրաւ ու անանկով մե-
ռաւ՝ քառասունումէկ տարի թագաւորե-
լէն ետեւ : Շատ մեծ հանգէսով թաղեցին
զինքը :

30.

Յ՝Լ՝-ԳԳ , Յ՝Լ՝-Ժ :

Հ . Ասայէն ետեւ մի թագաւորեց .

Պ . Յովսափատ Ասային որդին որ իր չօր-
մէն աւելի բարեպաշտութիւն ընել կըջա-
նար . անոր համար քահանաներ ու բարե-
պաշտ իշխաններ խրկեց քաղաքներն ու գե-
ղերն՝ որ Աստուծոյ օրէնքներն աղէկ մը սոր-
վեցընեն ամէնուէն : Աստուած ալ օրհնեց
զինքն ամէն կողմանէ , հարիւր վաթսուն
հազար զօրք ունեցաւ , բերդերն ու քաղքե-
ներն ամրացուց . ուստի սահմանակից տէրու-

Թիւններն իրմէ կըլտախնային ու սուրբ կուտային :

Տ . Իսրայէլացոյ Թագաւորը Յովսափատայ հետ ինչպէս էր .

Պ . Իսրայէլացոյ Թագաւորն ան սակն Աքաաբն էր , ու Յովսափատ անոր հետ ինամուծիւն ըրաւ . անոր համար երբոր տարեգարձին Յովսափատ իրեն գնացեր էր , Աքաաբ մեծ պատուով ընդունեցաւ զինքը . և ան օրերը Ասորուոց գէմ պտրզմ ունեւարով հետը կանչեց , ինքն ալ սիրով գնաց , թէպէտ մարգարէի հարցուցին ու խնայան որ Աստուած իրենց հետ չէ : Պտրզմին սակնը Աքաաբ իր լաթերը Յովսափատայ հագցուց որ ինքը շնանցուէլով կարենայ հանգիստ պատերազմիլ . անոր համար թշնամիք Յովսափատայ վրան վաղեցին՝ Աքաաբը կարծելով ու մեռցրնել կուզէին . բայց Աստուած հրաշքով փրկեց զինքը սիրելուն համար , ու ետքն որ Արուսաղէմ գործաւ՝ Յէռ մարգարէն Աստուծոյ կարմանէ զինքը յանդիմանեց թէ ինչո՞ւ Աստուծոյ թշնամուցին հետ բարեկամուծիւն կրնէ : Յովսափատ զգլուծի գալով նորէն ետեւ էր որ աստուած պաշտուծիւնը ծաղկեցրնէ :

Տ . Յովսափատ ինչ երևեւի պատերազմ ըրաւ .

Պ . Անգամ մը Ամնայիք ու Մովարայիք՝ Մինեցիք ալ մեկտեղ Յովսափատայ վրայ էլան : Յովսափատ աղօթքով ու պաքով երբոր Աստուծոյ օգնուծիւնը կրխրնդրէր , Ողիէլ զեաացին Աստուծմէ շար-

Ժամ՝ « Գնացեք ըսաւ , չէ թէ պտտերազմե-
լու , հասցա տեանելու թէ Աստուած ձեր
տեղը ինչպէս կըստտերազմի անոնց հեա » :
Ասով յորդորուած գնացին մօտեցան , տես-
նեն որ ան իրեք ազգը մեկզմեկ կըջարդեն ,
ինչուան որ հատան : Ետքը իրենք մտան
պատերազմին տեղն ու իրեք օրուան մէջ հա-
զիւ կրցան ժողվէլ անոնց կողոպուաները :

Հ . Յովսափաա ամենեկին Ասաւ ծոյ դէմ
բան չբաւ .

Պ . Յովսափաատայ յանցանքն եղաւ միայն
աս ինամու թիւնն ու բարեկամու թիւնը որ
ըրաւ առաջ Աբաաբու հեա , ետքն ալ ա-
նոր ազուն Ռբողիայի հեա . անոր համար
կորսընցուց ան նաւերն որ Ռբողիային նա-
ւերուն հեա մեկտեղ Սովիեր իրիեր էր՝
սակի բերելու համար : Քսանուհինգ տարի
թագաւորելէն ետքը մեռաւ :

Հ . Յովսափաաէն ետե ո՞վ նստաւ .

Պ . Յովսամ անոր անգրանիկը : Ասոր կի-
նը Գոգողիա՝ Աբաաբին ազջիկն ըլլալուն՝
ինքն ալ Իարայեւացոց թագաւորներուն
ճամբան բռնեց : Նախ իր վեց եղբայրը մե-
ռուց ու կնոջը յորդորանքովն սկսաւ կաա-
պաշտութիւն ընել : Անոր համար Աճ ալ թո-
ղուց հարկատու ազգերն իրմէ գլուխ քաշեն .
և երբոր վրանին պատերազմի ելաւ , յաղ-
թուեցաւ ու շատ տեղեր կորսընցուց : Ետքը
Եղիա մարգարէէն ալ իրեն թուղթ մը եկաւ
որ ըրած գեշութիւններն երեսը կըզարնէր
ու կըսպառնար որ ինքը փորհարութեամբ
չարաչար տանջուելով մեռնի , և իր ընտա-

նիքն այլազգիները՝ յափշտակեն : Արև-
սուններկու տարուան էր երբոր թագաւոր
նստաւ, ու քառասուն տարուան՝ ամէն խոս-
տացուած պատիժները վրան գալէն ետքը՝
բոլոր ազիքը դուրս թափելով մեռաւ . և ա-
նարգանքով թաղեցին զինքը թագաւորնե-
րուն գերեզմանէն դուրս տեղ մը :

81.

ՈՒՆԻՒՄ , ՅԵՆՈՒՄ :

Հ . Յովրամին յաջորդն ո՞վ եղաւ .

Պ . Ոքոզիա՝ որ մինակ ազաւեր էր թնա-
մեաց ձեռքէն . քսանուերկու տարուան էր՝
երբոր հայրը մեռաւ : Ասիկայ իր մօրը Գո-
գոզիայի խրատով սասափելի դատապաշտու թեան
եակէ եղաւ . անոր համար՝ մէկ տարիէն երբ-
որ Խորայէլացոց Յովրամ թագաւորին հետ
Ասորուոց դէմ պայտերազմի գնացեր էր, ու
գարձեր Յովրամին քովը կեցեր էր՝ Յովրամ
վերաւորուած հիւանդ ըլլալուն համար ,
ան ասենն որ Յէու Աքաաբի տունը կը ջըն-
ջէր՝ զինքն ալ հոն գտաւ՝ սպաննեց : Գոգո-
զիան խմանալուն պէս՝ ինքն ալ ջարդել ալ-
ւաւ բոլոր թագաւորու թեան ժառանգներն
ու տեղն ինքը նստաւ , բայց Յովսափէթ Աբո-
զիայի քոյրը՝ Յովիգայէ քահանայապետին
կինը՝ Աբազիայի պզտի աղան Յովսան որ մէկ
տարուան էր՝ սահեց տաճարին մէջը վեց
տարի :

Հ . Յովսան ինչ կերպով նստաւ իր հօրը
աթոսը .

Պ. Երբոր եօթը տարուան եղաւ՝ Յովի-
գայէ ծածուկ կերպով խնացուց բոլոր Յու-
գայի մեծերուն. և որ մը մեկանդ աաճարը
ժողվեց զիրենք ու հոն Յովասին գլուխը
Թագ գրաւ՝ օժեց. և ամենքն ալ ծափ զար-
նելով ցնձումով սկսան Վեռնէ աշտոյ կանչել :
Գողողիա լսելով ժողովոցոց իրար անցնելը,
իր մարդիկներովը աաճարը վազեց, աեսաւ
Թագաւորն ու անոր քովը շարուած իշխան-
ները, բոլոր ժողովուրդն ալ խնաուծի մեջ,
կատղեցաւ՝ վրայի լաթերը սլաաւեց, սկսաւ
կանչուրուակել թէ « Գաւաճանու թիւն է գա-
ւաճանու թիւն » : Ան ասան Յովիգայէն հրա-
մայեց որ մեկէն աաճարէն գուրս հանեն
Գողողիան ու մեաքնեն : Ետև Թագաւո-
րին ու իշխաններուն Աստուծոյ հեա գա-
չինք ընել տուաւ որ Աստուծոյ օրինացը
յարմարցընեն ամէն բան, ուստի շուա մը
բոլոր Յուգայի երկրէն կաապաշտական բա-
ները վերուցին : Ետքը Յովաս Աստուծոյ
աաճարն ալ նորոգեց՝ գանձանակով ստակ
ժողվելով, ու ամէն բան նորոգուելէն ետքը,
աւելցած ստակով ալ հարկաւոր զգեսաներ՝
գործ իքներ ու զարդեր շինեցին :

Հ. Յովաս ինչուան վերջը մնաց աստուա-
ճապաշտ .

Պ. Երբոր Յովիգայէ հարիւր երեսուն
տարուան մեաաւ, Յովաս ալ իր իշխաննե-
րուն խորհրդով կաապաշտութիւն սկսաւ .
Աստուած մարգարէներ խրկեց, մօտիկ չը-
րին : Զաքարիա Յովիգայեայ որդին՝ Աս-
տուծոյ հոգւով վառուած երբոր զիրենք

յանդինանեց, Յովասի հրամանաւը քար-
կածեցին զինքը, որ մեռնելու առնն՝ «Աս-
տուած տեսնէ ըստ գատաստանդ» : Անոր
համար երկրորդ տարին թոյլ առաւ Աս-
տուած որ Ասորիները քիչ զօրքով եկան՝
յաղթեցին, թագաւորական գանձը կողոսկ-
ակցին տարին : Ետքը Յովաս սո բանե-
րուս վրայնեղանալով հիւանդացած սպա-
կեր էր . իրեն ծառաներէն քանի մը հոգի
մէկ եղած՝ մահճին մէջը մարթեցին զինքը՝
քառասուն տարի թագաւորելէն ետե :

82.

ԱՄՈՒՄ :

Հ . Յովասէն ետքը ո՛վ նստաւ .

Պ . Ամասիա իր որդին քաննահինգ տա-
րուան . իր հայրը մեռցնողներն սպան-
նեց . և ինքն ալ առջի բերանը բարեպաշտու-
թիւն ցցուց : Եգոմայեցիք որ սպասամբեր
էին՝ ուղեց նորէն իր աակն առնել, և իրեն
զօրքը հերիք շեղելով Իսրայէլացոյ՝ մէ հա-
րիւր հազար զօրք վարձեց՝ հարիւր տաղանդ
արծաթով : Ան առնն մարգարէ մը Աստու-
ծոյ կողմանէ ըսաւ իրեն . « Թէ որ կուղես
յաղթութիւն ընել՝ ան Իսրայէլացիքը
եւ ճամբէ » : Ամասիան ալ « Հապա աը-
ւած ստակս մեղք չէ ըսաւ » . մարգարէն՝
« Մի վախեր ըսաւ, Աստուած անոր տեղը
քեզի ալ շատը կուտայ » : Երբոր Ամասիան
հնազանդեցաւ ու մինակ իրեն իրեք հարիւր

հազար զօրքովը գնաց, Եգոմայեցոյն, ասոր
հազարը ջարգեց, ասոր հազար ալ գերի
առաւ ու զամենքն ալ բարձր ժայռէ մը վար
ձգեւ լով սպաննեց :

Հ. Ամասիան ինչ պատճառով իր ասջի
աստուածագաշառ թեկնէն ետ կեցաւ .

Պ. Եգոմայեցոյ յաղթելէն ետքը՝ կուս-
քերնին Երուսաղէմ բերաւ ու սկսաւ սաշ-
տել . և երբոր Աստուծոյ կողմանէ մարդա-
րէն զինքը խրատեց՝ Ամասիա սրդողելով
«Թէ որ, ըսաւ, մէյմ՝ ալ բերանդ բանաս կը-
մեռցնեմ» : Անոր համար Աստուծոյ երեսէն
եյնալով երբոր հպարտութեամբ Խորայե-
լացոյ Յովաս թագաւորին գէմ ելաւ, Յո-
վաս զինքը բանեց, ու Երուսաղէմի սարխապ-
ները փլուց, բոլոր ոսկին արծաթն ալ կո-
ղտաւեց տարաւ : Ետև Ամասիայի զօրքն ալ
գլուխ քաշեցին, ինքն ալ Լաքիս քաղաքը
փախաւ, գնացին սպաննեցին զինքը՝ քսան-
եկնը տարի թագաւորելէն վերջը, ու բերին
Երուսաղէմ թաղեցին :

Հ. Ամասիային ետեկն ո՞վ թագաւորեց .

Պ. Ողիս կամ Ազարիս անոր որդին տասն-
ու վեց տարուան : Աստուածագաշառ թեամբ
թագաւորեց յիսունուերկու տարի, ամէն
թշնամիներու յաղթեց, Երուսաղէմի սա-
րխապները նորոգեց, ուրիշ քաղաքներ ալ
շինեց, երկրագործութիւնը ծաղկեցուց,
զօրքերուն կարգ կանոն գրաւ. անանկ որ
ինչուան հեռու աշխարհքներ իր անունէն
կըլփախէին. անոր համար հպարտացաւ՝ ուղեց
որ ինքը քահանայութիւն ալ ընէ : Ուստի

որ մը բուրվառն առած տաճարն որ մտաւ ,
քահանաներն արգիլեցին « Քեզն չվայլեր »
ըսելով : Երբոր Ողիա արգողելով արհամար-
հեց զանոնք , հոն մեկէն բորտեցաւ ու
ահով գողով դուրս ելաւ , և գնաց քաշուե-
ցաւ իր տունն ինչուան մահը , իր ակըր
Յովաթամ որդին թագաւոր դնելով :

Հ . Ողիային մեռնելէն ետե Յովաթամ
մնաց իր թագաւորութեանը մէջ .

Պ . Ատուած պաշտութեան և թագա-
ւորութեան մէջ հաստատուած՝ խաղաղու-
թեամբ առաջնորդեց ինչուան մահը : Ամս-
նացոց հետ պատերազմեցաւ ու զանոնք հար-
կատու ըրաւ : Ատուած գրգռեց Փակէէ որ
դի Ռովմէլան՝ Իսրայէլացոց թագաւորը՝
ու Ռասոն Ասորեոց թագաւորն որ Յուդայի
տէրութեան վրայ ելէն՝ Ժողովրդեան ան-
կարգութեանը համար , բայց պատերազ մը
չըսկսած՝ Յովաթամ մեռաւ՝ քառսունուեր-
կու տարուան , տասնուվեց տարի թագա-
ւորելէն ետե :

Հ . Յովաթամէն ետքն ո՞վ թագաւորեց .

Պ . Աքազ անոր ազան՝ քսան տարուան :
Նստեւուն պէս սկսաւ կռապաշտութիւն
ընել , ինչուան իր ազաքն ալ կուռքերու կը-
ղոհէր : Ուտաինախ Ասորեոց Ռասոն թագա-
ւորն եկաւ աղէկ մը ջարդեց , շատ մարդ գերի
տարաւ . ետքը Իէլացոց Փակէէ թագաւորը
մեկ օրուան մէջ հարիւր քսան հազար մարդ
ջարդեց , ու իրեք հարիւր հազար կին գերի
տարաւ : Բայց Աքազ ասանցմով չղգաստա-
ցաւ ու թշնամիներէն շատնեղանալով , ամէն

տաճարին հարստութիւնն ու իր գանձը Աստ-
րեւոտանի Թագազաթիփաղասար թագաւորին
խրկեց որ իրեն օգնէ : Ան ալ եկաւ յայլձեց
մէկաշնոնց , ու Ա. քաղն իրեն հարկատու ք-
րաւ . Ա. քաղ գնաց Դամասկոս՝ զինքը բա-
րեւելու . և կարծեւով թէ Աստրիք որ կը յաղ-
թէն՝ անոնց Աստուածն է զօրաւոր , անոնց
կուռքին սեղանին նմանը տաճարին մէջ շի-
նէլ տուաւ ու վրան ողջակէզ կրնէր : տա-
ճարին շատ բաներն ալ փոխեց , ետքը բո-
լորովին ալ գոցեց տաճարը , ուրիշ ամէն աւել
կատուածներ շինեւ տալով . տասնուվեց տա-
րիէն մեռաւ :

85.

Եւէիւ , Մանուէ :

Հ . Ա. քաղէն ետքը թագաւորութիւնը
որո՞ւ անցաւ .

Պ . Եզեկիային՝ որ քսանու հինգ տարուան
էր , Դաւթի պէս բարեպաշտ ու աստուա-
ծասէր . ամէն աստուածապաշտութեան կար-
գերը նորէն հաստատեց , և մարդիկ խրկեց՝
բոլոր Իսրայէլացիքը յորդորելու , որով
շատերն սկսան կատապաշտութենէ ետ կե-
նալ ու տօնախմբութեան համար զատկին
Երուսաղէմ եկան . թէպէտ շատն ալ ծաղր
կրնէին զանոնք : Ասանկով առջի տարին մեծ
զատկի տօնախմբութիւն ըրաւ , երկու հա-
զար կով տասնեւութը հազար ալ ոչխար զոհ
ընելով : Սողոմոնէն ետքը ատանկ մեծ հան-
գէս չէր եղած : Աստուած ալ իրեն յովո-

ղութիւն առաւ որ բոլոր թշնամիներուն
յաղթեց ու տերութեան սահմանը մեծցուց :

Հ . Եզեկիան Ասորեստանցոց ինչպէս
կրրցաւ յաղթել ու աւերք չտալ .

Պ . Ամէն քովի ազգերուն յաղթելէն ետքը
Ասորեստանցոց տուրք տալն ալ դադարեցուց :
Անոր համար թագաւորութեանը տասնը-
չորրորդ տարին Սենեքերիմ թագաւորը
սասաիկ ուժով քաղաքներ առնելով եկաւ
ինչուան Լաբիս քաղաքը : Եզեկիա վախցաւ
ու շատ ոսկի արծաթ խրկեց իրեն որ հաշ-
տուի ու ետ դառնայ . բայց Սենեքերիմ մտիկ
չընելով Երուսաղէմ խրկեց Ռափսակ զօրա-
պեան որ եկաւ պաշարեց քաղաքն ու Սե-
նեքերիմին բերնէն Այ դէմ հայհոյութիւն-
ներ խօսեցաւ , « Ես ամէն աստուած-
ներուն կրչաղթեմ » ըսելով : Եզեկիա
քուրձ հագած գնաց տաճարը , ինկաւ Աս-
տուծոյ առջին սկսաւ աղօթք ընել . Եսայի
մարգարէին ալ մարգ խրկեց ըսաւ որ ինքն
ալ Այ աղաչէ Երուսաղէմին համար : Եսայի
մարգարէն պատասխան տուաւ որ չվախէ ,
վն զի Աստուած Սենեքերիմը ամօթով իր
տեղը դարձրնէ պիտի : Եւ ան գիշերը հրեշ-
տակ մը Սենեքերիմին բանակին մէջէն հա-
րիւր ութսունուհինգ հազար հոգի սպան-
նեց : Սենեքերիմ առաւօտանց սարսափելով
թողուց փախաւ՝ Նինուէ գնաց : Հոն ալ իր
երկու որդիքն խնամալով որ կուգըր հաշտե-
ցնելու համար՝ զիրենք զոհ ընել կուզէ ,
զինքն սպաննելցին ու իրենք Հայաստան փա-
խան :

Հ . Եղեկիա միշտ մնաց իր ազեկութեանը մէջ .

Պ . Անգամ մը սաստիկ հիւանդացաւ , անանկ որ Եսայի մարգարէն ալ ըսաւ թէ « Պիտի մեռնիս » . բայց աղաչանքովք Աստուած տասնուհինգ տարի ալ կեանքն երկրնցուց ու ամէն յաջողութիւն խոստացաւ իրեն : Աս բաներուս նշան ալ տուաւ որ Աքաղու ըսուած արևի ժամացուցին շուքը հրաշքով տասր աստիճան ետ շարժի : Ասանկով Եղեկիա առողջանալէն ետե Աստուծոյ շնորհակալ եղաւ . բայց ետքը անանկով իրեն եղած յաջողութիւնները՝ հապարտացաւ , ու Բաբելոնացոց թագաւորին աչքիլուսի համար խրկած մարդկանցը պարծենալով ցցուց բոլոր իր հարատուութիւնները : Անոր համար Աստուած ալ իրեն բարկացաւ , ու ազգն ալ իրենց անկարգութիւններուն համար կուղէր սպառժեւ . բայց Եղեկիա նորէն զըջալուն համար , թողուց Աստուած սր ինքը հանդիսաւ մեռնի : Անոր ալ շնորհակալ եղաւ Եղեկիա , ու քսանութնը տարի թագաւորելէն ետքը մեռաւ , և մեծ հանգէսով թաղուեցաւ :

Հ . Եղեկիայէն ետե ո՞վ նստաւ .

Պ . Մանասէ իր որդին՝ տասուերկու տարուան . մէկէն կուսք պաշտել սկսաւ . ինչուան Աստուծոյ տաճարն ալ կռատուն ըրաւ , ու իր աղաքն ալ կըզոհէր , և ամէն տեսակ կախարգութիւններու գէշութիւններու ետեէ եղաւ . և ով որ իրեն խրատ տար՝ կըսպաննէր . անոր համար զԵսայի մարգարէն ալ փայտէ սղոցով մէջքէն երկու

կարճընելով սպաննեց : Աստուած ալ սարա-
նացաւ որ Իսրայէլացոց պէս Յուդայի թա-
գաւորութիւնն ալ ջնջէ . ուստի Ասորես-
տանի թագաւորն եկաւ առաւ Երուսա-
ղէմը , ու Մանասէն շղթայի զարկաւ Բաբել-
լոն տարաւ :

Հ . Մանասէն Բաբելոն դերի երթալէն
ետքն ինչ ըրաւ .

Պ . Հոն բանալին մէջը խեղքը դուրսը ժող-
ովեց՝ զըջուծի եկաւ ու Տէր - Ան - Ի - ւ զըջ-
ման տղօթքն ըրաւ : Աստուած ալ իրեն ո-
ղորմեցաւ ու նորէն դարցոյց իր աթոռն , որ
բոլոր նորոգեց առջի աստուածաբաշտու-
թեան կարգերն , ու յիտունուհինգ տարի
թագաւորեւէն ետքը մեռաւ :

84.

Ա՛ն , Յ-ւ-ի- , Յ-ւ-ի-ա-ւ , Եւի-ի՛ :

Հ . Մանասէին յաջորդն ո՛վ է .

Պ . Ամն իրեն տղան քանուերկու տարի
թագաւոր նստաւ , ու նորէն կռատաշ-
տութիւն ընել սկսաւ : Աստուած ալ թա-
ղուց որ թագաւորութեանը տատուերկու-
երորդ տարին՝ ծառաները զինքը տանը մէջ
սպաննեցին :

Հ . Ամնէն ետե ո՛վ նստաւ .

Պ . Ժողովուրդը զինքը մեացնողներն
սպաննեցին , ու անոր Յովսիա որդին ութը
տարուան թագաւոր դրին . որ իր բարեպաշ-
տութեանը ամէն կռատաշտական բաները

վերայ մարդից . ստղանցաւ չորս գին Իս-
րայելացոց երկիրները, հուսքերը կործանեց,
քուրմերուն ոսկորները հանեց այլեց իրենց
սեղանին վրայ, ու Յերոբոամայ ասէն ե-
ղած մարգարէութիւնը կատարեց : Տաճարը
նորոգելու ասէն օրինաց գիրք մը գասն .
երբոր ընց թագաւորը մէջն օրէնքներն ու
չպահողներուն պատիժները, սրտին կսկի-
ծէն ըթերը պատուեց, ու մարգ խրկեց
Ողգան անունով կին մարգարէի մը հարցուց,
թէ իրենց բանը ինչպէս պիտի ըլլայ : Մար-
գարէն ըսաւ թէ . « Պիտի դան ան պատիժ-
ները, բայց թագաւորին բարեպաշտու-
թեանը համար իր օրը պիտի չըլլայ » : Ասոր
վրայ Յովսիա նորէն ժողովուրդը յորդորեց
ու ամէն կարելի եղած ջանքն ըրաւ որ Աս-
տուծոյ բարկութիւնը դադրեցնէ . փառա-
ւոր զատիկ մըն ալ ըրաւ՝ ամէն օրէնքներուն
սպըսպրածին պէս, որուն նմանը չէր ե-
ղած :

Հ. Յովսիան իր բարեպաշտութեամբը
կրցաւ Աստուծոյ բարկութիւնն իջեցնել :

Պ. Չէ. վասն զի ալ Իսրայելացոց մեզայ չա-
փը լցուած էր. անոր համար Աստուած Յով-
սիայի թող տուաւ որ ինքիրեն պատերազմ
բանայ Եդիստացոյ՝ Նեքաւով թագաւորին
դէմ, երբոր անիկայ Ասրեւստանցոց վրայ
պատերազմի կերթար . ու հոն պատերազմին
մէջ Յովսիա նեատվ մը շարաչար զար-
նուեցաւ՝ ու մեռաւ : Եւ իրեն մահուանը
վրայ սաստիկ սուգ մասն ամենքը . Երեմիա
մարգարէն ալ ողբ լինեց :

Հ . Յովսիային ետեւէն ո՞վ նստաւ .

Պ . Յովաքազ իրեն որդին քանուիրեք տարուան , որ նստելուն պէս նորէն սկսաւ կռատաշտութիւն ընել . բայց իրեք ամիսէն Նեքաւով թագաւորը՝ Ասորոց սպանեալ մէն դառնալու ատեն Երուսաղէմ եկաւ՝ զինքը շղթաներով կապած Եդիսատու տաբաւ , որ հոն մնաւ . և տեղը թագաւոր դրաւ անոր մեծ եղբայրն Եղիակիմը՝ տասնը հինգ տարուան , վրան ծանր տուրքեր դնելով . որուն անունն ալ փոխեց Յովակիմ դրաւ :

Հ . Եղիակիմի կռաւախարութիւնը ինչպէս էր .

Պ . Իր Յովաքազ եղբորմէն ալ գէշ էր բռնած ճամբան . թէպէտ Երեմիա մարգարէն զինքը միշտ կրխրատէր : Ուստի չորս տարիէն Բաբելոնացոց Նաբուգոդոնոսոր թագաւորն եկաւ նորէն Երուսաղէմն առաւ , ու Յովակիմ թագաւորը շղթաներով կապած՝ Բաբելոն տարաւ , և քիչ ատենէն վրան ծանր տուրք դրած՝ անանկ թող աղւաւ : Յովակիմ մէկ քանի տարիէն ետքը Նաբուգոդոնոսորէն դարձեալ աստամբեցաւ . ան ատենը նորէն վրան եկան Բաբելոնացիքն ու երկար ատեն սրտերով ընելով , Երուսաղէմն առին կողոպտեցին , ու Յովակիմ թագաւորն ալ տասնըմէկ տարի թագաւորելէն ետքը՝ չարաչար սպաննեցին :

ՅԵՒԵՒԻՄ, ՍԵՏԵՒԻՄ :

Հ . Եղիակիմին յաջորգն ո՞վ եղաւ .

Պ . Իրեն որդին Յեքոնիա՝ որ Յովակիմ ալ կըսուէր՝ տասնևութը տարուան, հօրը նման գէշ : Աւստի իրեք ամսէն նորէն եկաւ Նարուգոգոնոսոր՝ Երուսաղէմը պաշարեց առաւ, մնացած ոսկին ու արծաթը կողոպտեց . և թագաւորն ալ իր իշխաններովն և ուրիշ հազարաւոր գերիներով Բաբելոն տարաւ, մնացածներուն վրայ ալ իրեն ձեռքին տակը թագաւոր գրաւ Սեզեկիան՝ Յովսիա թագաւորին սղախ տղան քսանուձեկ տարուան :

Հ . Սեզեկիան ի՞նչ ճամբայ բռնեց .

Պ . Սեզեկիան իր եղբայրներէն ալ գէշ եղաւ . Ժողովուրդը բոլորովին վարժեցուց կռտպաշտութեան, որ մարգարէները համարձակ ծաղր ընել սկսան : Աւստի Աստուծոյ թոյլ տալովը Նարուգոգոնոսորէն գլուխ քաշեցին . ան ալ անհամար զօրքով նորէն Հրէաստան եկաւ, առաջ Եղիսպտացոց յաղթեց՝ որ Հրէից օգնութի եկեր էին, ետքը գնաց Երուսաղէմի վրայ և երկու տարի պաշարելով զիրենք չարչարեւէն ետև պարսպին մէկ կողմը փլուց՝ ներս մտաւ, մեծ ջարդ տուաւ . Սեզեկիա թագն ալ քաղցէն դուրս փախչելու տանն՝ զինուորները բռնեցին, Նարուգոգոնոսորի առջևը տարին,

որ ան ալ իրեն ըրած երգմնազանցութիւնն
երեսը զարնելով հոն իրեն տղայն ու մեծ ա-
մեծ իշխաններն աչքին առջին սպաննել աը-
ւաւ . ետքը իրեն երկու աչքն ալ հանեց ու
զինքը շղթաներով Բարեւոն տարաւ :

Հ . Աեգեկիայի գերուելէն ետև Երուսա-
ղեմին ո՞վ իշխեց .

Պ . Նաբուզարդան Նաբուգոգոնասորի
գահճապեան եկաւ . Աստուծոյ տաճարն ու
Թագաւորին պալատը կողոտակց ու կրակի
տուաւ . քաղքին պարիսպներն ալ փլուց ,
ու բոլոր մեծամեծները Բարեւոն գերի տա-
րաւ , Թողով միայն աղքատներն ու երկրա-
գործները . և անոնց վրայ Նաբուգոգոնա-
սորի հրամանովը Հրէից աղգէն Գոգոպիա
որդի Աքիկամայ իշխանը վերահայցու գրաւ :

Հ . Գոգոպիայի իշխանութիւնը որչափ ա-
տեն քշեց .

Պ . Խիսաքիչ . վասն զի Իսմայէլ որդի Նա-
թանայ Յուդայի Թագաւորական ցեղէն մե-
կը , խաբէութեամբ սպաննեց զինքն ու փա-
խաւ Ամնացոց Թագաւորին քով՝ որդի
Կարէի Յովնաթանայ ձեռքէն՝ որ զօրքով
ետեկն ինկեր էր զինքը մեռցնելու համար :

Հ . Գոգոպիայէն ետև մնացած Երուսա-
ղեմի Ժողովրդեան ո՞վ իշխեց .

Պ . Յովնաթան Կարէի որդին . բայց վախ-
նալով Քաղգէացիներէն՝ Ժուլուրդը հէան
առած Եգիպտոս փախաւ , և հոն Աստուած
պատժեց զիրենք . վասն զի Երեմիա մարգա-
րէն Աստուծոյ կողմանէ ըսեր էր որ չվախէ
Քաղգէացիներէն ու չերթայ :

Հ . Բողոքովին Հրէից իշխանութիւնը վերնալէն ետքը չկրցան նորէն վրայ գալ ու առջի վառքը պատիւն ունենալ .

Պ . Եօթանասուն տարի անանկ երեսի վրայ մնալէն ետքը , նորէն ողորմեցաւ Աստուած . բայց առջինին պէս բողոքովին ազատ չկրցան ըլլալ :

Հ . Երբոր Հրէայք բողոքովին իշխանութիւնը կորուսին ու ասդիս անդին ցրուեցան մէջերնին չհանդիպեցան յիշատակի արժանի գործքեր .

Պ . Հանդիպեցաւ . որոնք տեղն 'ի տեղ Բաբելոնացոց գերութեան մասին մէջ գրած է . և են ասոնք . Պատմութիւն Տօբիթայ , Յուդիթայ , Եսթերայ , և Երեք մանկանց . ասոնցմէ զատ կայ նաև առանձին մարգարէներուն պատմութիւնը :



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Սամուէլ արդէն զնտացի ըլլալովք՝ տապանակին պէտք էր ծառայէր . հապա մայրն ինչո՞ւ մասնաւոր ուխտ ըրաւ որ զինքն Ասաուծոյ նուիրէ .

Պ. Ղևտացիներուն Ասաուծոյ ծառայելու պարտքը կրօնէր քսան ու հինգ տարուան եղած ատեննին . և երբոր յիսուն տարեկան կըլլային՝ պարտքէն կազատէին . իսկ Սամուէլ սղտկուց ինչուան մահն ուխտաւոր Ասաուծոյ եղաւ :

Հ. Աստուած ինչպէս առաջ Սաւուղին երդումն ընդունեցաւ՝ յաղթութիւն տուաւ, ու ետքն որ նորէն հարցուց՝ պատասխան չտուաւ .

Պ. Առջի յաղթութիւնը տուաւ՝ միտքը չիտակ ըլլալուն համար . և թէպէտ ան հրամանը գիտնալով արհամարող մը չէր եղած, բայց ետքը Աստուած սրգողելովն ու պատասխան չտալովն ուղեց ինացընէլ թէ անխոհեմ հրամանը՝ թէպէտ անմեղութեամբ եղած՝ զգուշանալի է . վասն զի ինքն պատճառ եղաւ որ բոլոր զօրքն իրեն հրամանին գէժ արանջացին, և իր աղան զինքը արհամարհեց . ետքը օրինաց գէժ ալ ընէլ սկսան՝ ոչխարները գետնի վրայ մորթած արիւնտ ուտելով :

Հ . Յովնասթանին մեզք ուտեւք յանցանք չէր .

Պ . Չէ . բայց իր հօրը հրամանին չհաւնիլ ցուցնեւն աղէկ բան չէր :

Հ . Երբոր Սաւուզ մեզայ ըսաւ Սամուէլ ինչո՞ւ մտիկ չըբաւ .

Պ . Վասն զի սրտանց չէր զըջումը , հասրա մինակ վախէն՝ որ չըլլայ թէ թագաւորութենէն զրկուի , և ժողովրդեան աչքէն ելլէ :

Հ . Ի՞նչպէս կըլլար որ Դաւթի քնար զարնելովք Սաւուզայ գիււահարութիւնը կը հանգարտէր .

Պ . Որովհետեւ սատանան մարդուն սիրտը նոր կիրք չկրնար խօթել , հապա բնական ունեցած կիրքը Աստուծոյ թոյլտալովք կը սաստկացնէ . անոր համար սատանան Սաւուզայ վրայ տիրելէն ետքը՝ երբոր Սաւուզ բնութեամբ քիչ մը այլայլութիւն կիմանար , նոյն այլայլութիւնը սատանան ուղածին պէս կըսաստկացնէր . ուստի գրտուանց ալ բնական հիւանդութիւն կերկնար . և երբոր քնար կըզարնէին՝ բնական կիրքը կիջնէր , սատանան ալ կըթողուր զինքը :

Հ . Սաւուզին Դաւթիթը բռնելու համար Աւաթհաւամա խրկած մարդիկն , և ինքը ինչպէս կըմարգարէանային .

Պ . Մարգարէանալ բառը կընշանակէ երբեմն երգել , զԱ՛ճ օրհնել : Երբոր անոնք մարգարէներուն քովք կերթային , Աստուած մտքերնին անանկ կըփոխէր որ ամէն բան կը մտնային՝ կըսկսէին անոնց հետ երգել : Անով Աստուած Դաւթի վախճելու ատեն տուաւ :

Հ. Դաւիթ իրաւունք ունէր Նաբաղը անով սպաննելու .

Պ. Մինակ զինքն ալ սպաննելու իրաւունք չունէր . վասն զի գեա իրեն թագաւոր ըլլալը չէր հրատարակուած , և Նաբաղը սարսփ չունէր իրեն բան տալու . միայն թէ Դաւիթ ըրած և զբայրսիրութեանը պէտք էր շնորհակալ ըլլալ ու քիչ մը բան տալ . չէ թէ անարգել զինքը : Բայց Դաւիթ զինուորական տաքութեամբ սխալեցաւ , անոր համար կիրքն իջածին պէս ճանչցաւ որ աղէկ չէր ըրածն , ու փառք տուաւ Աստուծոյ :

Հ. Դաւիթ ինչպէս յանձն առաւ Անբուսայ հետ Իսրայէլացոց վրայ սպաներազմի երթալ .

Պ. Թէպէտ աստուածաշունչը յայանի պատճառը չըսեր , բայց Դաւիթ ուրիշ գործքերէն յայանի է որ Աստուծոյ հարցուց , Աստուած՝ գնա ըսաւ , իմացընելով թէ ինքն ուզեր է որ այլազգիք Իսրայէլացոց վրայ ել ընն . և թէ որ թողուն իշխանները , Դաւիթ Աստուծոյ հրամանին հնազանդելով սլախ սպաներազմեր Իսրայէլացոց գէմ :

Հ. Վհուկ կնոջ կախարգութեամբն ինչպէս երեցաւ Սամուէլ Սաւուղին .

Պ. Վհուկն իր արհեստը չբանեցուցած Աստուած ցցուց Սամուէլն որ Սաւուղը յանգիմանէ . և վհուկը ականնելով որ գեա ինքը բան մը չըրած՝ երեցաւ , շատ վախցաւ : Իսկ Սամուէլ « Ինչո՞ւ զիս անհանդիստ ըրիր » ըսելովն , իմացընել կուզեր թէ Աստուծոյ

ոտքն իյնալու ասպաշխարհելու տեղ՝ ատանկ վհուկի ձեռքովը զինքը փրնտուելը Սաւու- ղին օգուտ մը չբնեւէն ետքը մնաս աւրբաւ:

Հ. Գաւիթ ինչո՞ւ այնչափ լացաւ Աբիսո- զովին մահուանը վրայ .

Պ. Հոգւոյն կորսուելուն համար . գիտ- նալով թէ իր մեղքը պատժելու համար Աստուած թողուց որ Աբիսոզով իրմէ ա- սըստամբի . անոր համար Գաւիթ կուզէր որ զինքը յորդորելով դարձի բերէր:

Հ. Սաղմոսը ե՞րբ գրեց Գաւիթ .

Պ. Այլ և այլ ասե՛ն կտոր կտոր . վասն զի երևելի զխառած մը ըլլալուն պէս՝ Աստուծոյ դսվասանք կըշինէր ու քնալովը կերգէր . թէպէտ Սաղմոսին մէջ ետքի մար- դարէներուն և երգիչներուն շարագրած- ներն ալ կան :

87 .

Հ. Ի՞նչպէս կրնար ըլլալ որ Սողոմոնին պէս խնաստուն մարդ աշխարհք դէռ չէ ե- կած և պիտի չգայ .

Պ. Սողոմոնին խնաստութիւնը որովհե- տե գերբնական չէր՝ բնական էր, անոր հա- մար սովորական մարդկանց հեռ բաղգատե- լով իրեն նմանը պիտի չըլլայ . բայց Ազամայ՝ մարդարէից՝ առաքելոց և ուրիշ սուրբերու, ևս առաւել Յիսուսի և Աստուածածնայ խնաստութիւնը բնականէն վեր է . անոնց հետ չբաղգատուիր:

Հ. Սողոմոն խնաստունն ի՞նչ գիրք չինեց .

Պ . Առական գիրքը՝ որ կարճ կարճ խրատներ են , ժողովողը՝ աշխարհքիս ունայնութեանն ու մարդուս ճշմարիտ վախճանին վրայ , երգ երգոց ըսուած խորհրդաւոր գիրքը և Իմաստութիւն : Ուրիշ գրքեր ալ գրեր էր՝ բնական գիտութիւններու վրայ , բայց հիմա չեն գանուիր . ու կարծիք է որ Եզեկիա թագաւորն այրած ըլլայ զանոնք՝ ժողովրդեան վնասակար սեպելով :

Հ . Սողոմոն իր մեղքերն ապաշխարեց .

Պ . Ապաշխարած ըլլալուն մեծ նշան է ժողովողին գիրքը . բայց սուրբ գրքին անոր փրկութիւնն անորոշ թողուլը՝ յայանի կըցուցնէ : Ատուծոյ դատաստանին ահաւորութիւնը :

Հ . Յերոբոավամին միտքն ուսկից ինկաւ հորթ պաշտելը .

Պ . Մէյմը որ լսեր էր թէ Իսրայէլացիք անատատին մէջը հորթ պաշտեր էին , մէյմին ալ՝ ինքն առաջ Եգիպտոս վախած ըլլալով տեսեր էր Եգիպտացոց կովպաշտելն ու անոնց կարգերը :

Հ . Եղիան ինչո՞ւ կրակով պատժեց երկու յիմնապեաները .

Պ . Վասն զի ծաղր ընելով Մարգ անջ կրսէին իրենն , ու հպարտ կերպով մը կըհրամայէին որ ելլէ գայ :

Հ . Երբոր Յովթամ պատերազմին համար Եղիսէին հարցուց , ինչո՞ւ Եղիսէ քնար զարնել տուաւ՝ պատասխան տալէն առաջ .

Պ . Վասն զի հողին սուրբ խաղաղ սիրտ կուզէ : Եղիսէն ան ատենը նեղացած ըլլա-

լով Յովրամայ ըրած գէշութիւններուն համար, քնար ուղեց որ հանգարա սրտով կարենայ Ասաուծոյ խորհուրդները մտածել:

Հ. Եղիան որ դեռ Յովսափատ չմեռած վերացեր էր, ինչպէս թուղթ գրեց անոր սրգւոյն Յովրամ թագաւորին.

Պ. Կերենայ որ գրախառն գրեց ու մարգարէի մը կամ ուրիշ բարեպաշտ մարդու մը յայանուէլով աուաւ թուղթը՝ Յովրամին խրկեց:

Հ. Հրէից թագաւորներուն պատմութիւնն ուր կը պատմուի.

Պ. Թագաւորութեանց ըսուած չորսկտոր գրքերուն, ու երկու Մնացորդաց գրքերուն մէջ, որ ասեն ասեն այլ և այլ մարգարէներէ գրուած են:





Մ Ա Մ Ն Զ

Գ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Տ Ե Ն Ը

Ի Ն Չ Ո Ւ Ա Ն Ք Բ Ի Ս Տ Ո Ս



88.

Տ Բ Ի Թ :

Հ . Տ Ո Ւ Թ Ի Թ . ս զ է .

Պ . Ն ե փ թ ա ղ ի թ ի ց ե ղ է ն ' Թ ե զ ր ու է ք ա ղ ք է ն բ ա ր ե պ ա շ ա մ ա ր գ մ ը ն է ր Ի ա ր ա յ է լ ա ջ ո ջ տ ա ս ր ց ե ղ ի ն վ ե ր ջ ի կ ո ա պ ա շ ա թ ա գ աւ ո ր ն ե ր ու ն ա ս ե ն , որ ա մ է ն օ ր է ն ք ն ե ր ը կ ր ա պ ա չ է ր , ու ա ս ե ն ի ն Ա ր ու ս ա ղ է մ ի ա ա ճ ա ր ը կ ե ր թ ա ր : Ե ր ր որ Ս ա ղ մ ա ն ա ս ա ր Ի ա ր ա յ է լ ա ջ ո ջ տ ա ս ր ց ե ղ ը գ ե ր ի տ ա ր աւ , Տ օ ր թ թ ա լ մ է կ տ ե ղ գ ն ա ջ ի ր Ա ն ն ա կ ի ն ո ի ն ու Տ ու ր թ ա ա ղ ու ն չ է տ : Հ ո ն Ա ս ա ու ծ ո յ օ ր չ ն ու թ ե ա մ ր ը ա ն ա ն կ ս ի ր ե լ ի ե ղ աւ Ս ա ղ մ ա ն ա ս ա ր թ ա գ աւ ո ր ի ն ' որ ի ր ն վ ա ճ ա ո ա կ ա ն ն ը ր աւ , և Մ ա ր ա ջ ե ր կ ի ր ը կ ե ր թ ա ր կ ու գ ա ր , ի ն չ ու ա ն որ մ ե ա տ Ս ա ղ մ ա ն ա ս ա ր :

Հ . Ս ա ղ մ ա ն ա ս ա ր ա յ մ ե ա ն ե լ է ն ե տ ք ը Տ օ ր թ թ ի ն չ գ օ ր ծ ք ի չ է տ է ր .

Պ. Երբոր Սաղմանասարայ տեղը Սէնե-
քերիսմ թագաւորեց ու Եղեկիայի պատե-
րազմէն յաղթուած դարձաւ, սիրան այրած
ըլլալով շատ Իսրայէլացի կրօսպաններ • Տո-
բիթ ալ գիշերանց ան մեռելները կը թա-
ղէր : Թագաւորն իմացաւ ու Տօբիթն ալ
սպաննել կուղէր • ան ալ որ փախաւ, բոլոր
ունեցածները յափշտակեցին : Ետքը քիչ
օրէն սպաննուեցաւ Սէնեքերիսմ, և Տօբիթ
նորէն դարձաւ : Օր մը երբոր իր ազգական-
ներուն սեղան ըրէր էր՝ Տօբիթն խրկեց
որ եթէ իր ազգէն աղքատ մը գանել, սեղա-
նի կանչէ : Տղան շուտ մը դարձաւ պատմեց
թէ Իսրայէլացի մը մեռուցած՝ փոզոյք
ձգած է : Տօբիթ կերակուրը թողուց՝ գնաց
ան մեռելը տուն բերաւ ու ետքը գիշերանց
թաղեց • և օրինաց ըսածին պէս պիղծ սե-
պուկով, դուրսը պատին տակը հողնած
կանրկի վրայ ինկած քնացաւ՝ աչքը բաց • վերէն
ճնճգուկները ծրտելու աստէն Տօբիթի ա-
չուրներուն երթալով կուրցաւ • բայց ինքը՝
եղբայրսիրութեան համար ըլլալուն՝ սիրով
կը համբերէր, և կնկանը մանածով խեղճու-
թեամբ կապրէր :

Հ. Աննային մանածին տակը թէ որ չօգ-
տէր ապրելու, ինչ կրնէին •

Պ. Իրենք Աստուծոյ սպաւինած էին,
Աստուած ալ զիրենք կը հօգար, ուստի Տօ-
բիթ ան յուսով մեռնելու վիճակ ալ հասներ
չէր ուղեր որ ապրուստ գանելու համար
անիրաւութիւն ընեն : Անոր համար, ան-
գամ մը մանած գնողներուն մէկը այժու

ձագ մը պարգև տուաւ Աննային . Տորիթ
կարծելով թէ գաղտուկ տեղէ մը ձեռք
ձգեր է՝ սկսաւ հեռը վիճել որ ետ աայ .
ինչուան որ իրան իմացաւ : Ետքը ասանկ բա-
ներով սիրան ելած՝ խնդրեց Աստուծմէ որ
ազգին մեղացը թողու թիւն աայ ու իր հո-
գին ալ առնէ : Անոր համար սկսաւ Տու-
բիային կտակ ընել՝ աստուած պաշտութեան
խրատներով . և միտքը գալով ասար քանքար
տասկն որ Մարաց երկիրը Պարայէլ ըսուած
մարդուն փոխ աուեր էր , ապրասիրեց որդւոյն
որ առնէ բերէ :

Հ . Տուբիան ուստի գիտէր Մարաց եր-
կրին ճամբան և Պարայէլին տունը .

Պ . Չէր գիտէր . անոր համար երբ հօ-
րը հրամանաւ կերթար ընկեր մը գանկու .
Ռափայէլ հրեշտակը կարիճ՝ մարդու մը կեր-
պարանքով գիմացն ելաւ ու ըսաւ թէ ինքը
կրտանի : Երբոր Տորիթի առջևն ելան , հար-
ցուց որուն ազան ըլլալը . ան ալ ըսաւ թէ
« Քու Անանիա բարեկամիդ ազան եմ՝ Ազա-
րիան » : Աս որ լսեց՝ սիրով անոր յանձնեց
Տուբիան որ երթան , խոստանալով իրեն
վարձք օրը գրամ մը ու կերակուր :

Հ . Տուբիան Ռափայէլ հրեշտակին հետ
ինչ յաջողութեամբ ըրաւ իր ճամբորդու-
թիւնը .

Պ . Մտքէ շանցած բարիքներու հանդի-
պելով : Նախ երբոր Եփրատ գետին քով
հասան , ու Տուբիան քիչ մը լուացուիլ կու-
ղէր , մեծ ձուկ մը վրան վաղեց « Մի վա-
խեր , ըսաւ հրեշտակը , բռնէ գուրս հանէ » .

ան ալ գուրս քաշեց . ու հրեշտակը « Հանե
ըսաւ սիրաք՝ լերգն ու լեղին պահէ » . ու
ձուկն եփեցին կերան : Ետքը Եկրատան որ
հասան , հրեշտակին խորհրդովն ան գի-
շերը Տուրխայի աղցականին Հաագուէլին
տունն իջան , որ անոր Սառա աղջիկը Տու-
րխան իրեն առնէ . թէպէտ Տուրխան վախ
կը ցուցնէր՝ ըսելով որ եօթը հոգի ան աղ-
ջիկն առնելու եղեր են , ու եօթն ալ առջի
գիշերը մէկ գե մը մեռուցեր է . չքայ թէ
ինձի ալ անանկ պատահի : Բայց հրեշտա-
կը սիրա տուաւ և ապրասպրեց որ առջի գի-
շերը քիչ մը կրակով ան ձկան սիրան ու լերդը
ծխէ , և հարսին հեռ մեկտեղ աղօթք ընեն
Ատուծոյ . ան համէն ըսաւ՝ գեր կը փախցի :
Ետքը Հաագուէլին հրեշտակը խօսք բացաւ
աղջկանը համար . անոնք ալ սիրով յանձն
առին , ու հարսնիքին գիշերը Տուրխա հրեշ-
տակին ապրասպրածն ընելով երբոր մնաս
մը չեղաւ , ամէնքը փառք տալով Ատուծոյ
տաանուշորս որ հարսնիք ըրին : Եւ ան օրերը
հրեշտակը գնաց Պարսոյէլի քովէն սասկն ալ
բերաւ . ետքը Տուրխան ու հարսը մեկտեղ
էտ դարձան : Ասանկով մէկ քանի օր ուշա-
նալուն համար Տուրխայի ծնողքը մտմտու-
քի մէջ ինկան , և Աննան հաց չէր ուտէր ,
կուլար ու կըսէր , « Ո՛հ , մեռաւ աղաս , ին-
ձի սասկ ինչ պէտք էր » : Օր մըն ալ յան-
կարձ երկցան . մէկէն գնաց Տուրխան հրեշ-
տակին ըսածին պէս ձկան լեղին հօրը աչ-
քը քսեց՝ որ մէկէն բացուէցան . ան ատե-
նը ուրախութեամբ մէկմէկու պլուէլով

փառք կուտային Աստուծոյ՝ լսելով ու
տեսնելով եղած յաջողութիւնները . ու
եօթն օր ալ Տօբիթ նորէն հարմելք ըրաւ :
Ետքը Տօբիթ ուզեց որ սարկին կէսը ճամ-
բայ ցուցնողին վարձք ասն . ան ասէնը
հրեշտակն ինքզինքը յայտնեց անոնց . անոնք
սկսան վախնալ . հրեշտակն ըսաւ , « Մի
վախեք , հապա փառք տուէք Աստուծոյ ,
որ ձեր ողորմութիւններն ու բարեգործու-
թիւնները կը վարձաարէ » . և մէկէն անե-
րևոյթ եղաւ :

Հ . Տօբիթ Աստուծմէ մխիթարուելէն
ետքը որչափ ապրեցաւ .

Պ . Անկէ ետքը շատ տարիներ հանգիստ
անցուց՝ Աստուծոյ փառք տալով և շնոր-
հակալութեան աղօթքներ ընելով . մարգա-
րեացաւ ալ Երուսաղէմի կործանիլն ու նո-
րոգուիլը , և հարիւր յիսուն տարուան մե-
ռաւ , Տուբիային կտակ ընելով որ Նինուէ-
էն ելէ , վասն զի պիտի կործանի : Տու-
բիան ալ իր ծնողքը թաղելէն ետե գնաց
Մարաց երկիրը . և միշտ բարեպաշտութեամբ
ապրելով հարիւր քսանուեօթը տարուան
մեռաւ :

89.

Յ--ԴԻԻ :

Հ . Յուդիթոյ պատմութեան նիւթն
ինչ է .

Պ . Աստուծոյ գթութեան ու սիրոյ նշանն
իրեն ապաւինածներուն վրայ , որով Իս-

բայէլայիք ազատեցան Նարուքոգոնոսորոյ բարկութենէն, և արդար պատուհանն որ չկարծուած առեն կը հասնի հոգարտ ու ինքնահաւան մարդկանց վրայ, որով հողեփեռնէս պատժուեցաւ :

Հ . Ո՞վ է հողեփեռնէս, և ի՞նչ գործք ըրաւ .

Պ . Ասորեստանի Նարուքոգոնոսոր թագաւորին զօրապետը : Աս թագաւորը Մարայ Արփաքսազ թագաւորին յաղթեցէն ետքը, ու զեց որ բոլոր աշխարհքիս ալ ակրէ ու Ասսուծոյ պէս պաշտուի : Անոր համար հողեփեռնէս իր զօրապետը խրկեց՝ հարիւր քսան հազար հեռակէ՛ նոյնչափ ալ ձիաւոր զօրքով, որ ամէն աշխարհք երթայ իրեն հնազանդեցնէ : Աս հրամանով սկսաւ հողեփեռնէս առաջ շարժիլ, ու անխնայ զամէնքը ջարդելով՝ հասաւ ինչուան հրէաստան :

Հ . Հրեայք ի՞նչպէս կրցան դէմ դնել հողեփեռնէսին .

Պ . Սրտանց Ասսուծոյ դիմեցին որ զիրենք ազատէ, և սկսան բերդերն ալ ամրացնելու ելի Ռեաիդուա քաղաքն որ հրէաստանի գուռը կրսեցուէր :

Հ . Հողեփեռնէս երբոր խնայաւ հրէից իրեն դէմ պատրաստուիլն, ի՞նչ ըրաւ .

Պ . Զարմացաւ անոնց յանդգնութեանը վրայ . կանչեց Իսրայէլացոց քովի ազգերուն իշխանները՝ հարցուց : Ան առեն Աքիսովը Ամոնացոց իշխանն ըսաւ թէ « Անոնց Ասսուածը զօրաւոր է, մէկէ մը չյաղթուիր .

պէտք է սպասել որ իրենք իրենց Աստուծոյն դէմ յանցանք ընեն որ յաղթուին ” : Հոգեփեռնէս կրակ կտրեցաւ , ևՆարուբոդոսն սորին ո՞վ կրնայ յաղթել ” ըսելով . Աքիովին ալ զԱստուած իր թագաւորէն զօրաւոր սեպելուն համար՝ ձեռքը ոտքը կապած՝ Բեափղուայի բերդին տակը ձգել տուաւ , որ երբոր քաղաքն առնէ՝ զինքն ալ Հրէից հեռ պատժէ : Բեափղուացիք ներս առին Աքիովը , պատմել տուին . ու երբոր իմացան Հոգեփեռնէսին պատրաստութիւն տարապիեցան , սկսան աղօթք ընել : Հոգեփեռնէս ալ իրեն իշխաններուն խորհրդով պաշարեց քաղաքն ու ջուրն ալ կտրեց :

Հ . Բեափղուացիք ինչպէս կրցան դիմանալ Հոգեփեռնէսի պաշարմանը .

Պ . Երեսունուչորս օրէն ետքը՝ սասափկ ծարաւէննեղացած՝ իշխաններն որոշեցին որ եթէ հինգ օրէն ալ Աճ չողորմի՝ քաղաքը տան : Ան սակն Յուդիթ որբեարի կինը՝ Շմաւոնի ցեղէն՝ պարկեշտ , շնորհալի , որ պարով աղօթքով կանցընէր կեանքը , Աստուծմէ լուսաւորուած՝ կանչեց իշխանները յանդիմանեց զանոնք անանկ ծուռ խորհուրդներնուն համար , ու ըսաւ թէ՝ «Աղօթք ըրէք , կը յուսամ որ Աստուած իմ ձեռքովս բարիք մը ընէ ” :

Հ . Յուդիթ ինչպէս ազատեց Բեափղուան Հոգեփեռնէսին ձեռքէն .

Պ . Գնաց բուրձով ու մոխրով ինկաւ Աստուծոյ առջև , շատ աղաչելէն ետքը՝ հաղուեցաւ , զարդարուեցաւ ու իր աղափի-

նին հետ քաղքէն գուրս ելաւ գնաց : Հողե-
փեռնեւսի զինուորներն երբոր տեսան , վրան
զարմանալով թէ ինչո՞ւ գուրս ելեր է՝ զին-
քը Հողեփեռնեւսի տարին : Հողեփեռնէս
հարցուց թէ ո՞վ է , ուսկից կուգայ . Յու-
դիթ խելացի կերպով պատասխան տուաւ .
« Տէր իմ , տեսայ որ Աստուած բարկացեր է
մեր ազգին , ու իրենց բանը գէշ պիտի ըլ-
լայ . անոր համար փախայ եկայ քեզի ազա-
խին ըլլալու » : Բայց գիշերները բանակէն
գուրս ելելու հրաման ինդրեց որ իր Աս-
տուածը պաշտէ , որ զՀողեփեռնէսն ալ ա-
ռանց մնասի մը Աստուծոյ հրաման տուած
օրն Երուսաղէմ ասնի : Հողեփեռնէս Յու-
դիթայ ըսածներուն հաւատալով հրամայեց
որ իր վրանը բերեն զինքն ու իր աղէկ կե-
րակուրներէն ասն անոր . բայց Յուդիթ ու
զաչեց որ ինքն իր հետը բերած կերակուրն
ուտէ : Ասանկ իրեք օր հոն կեցաւ , ու գի-
շերները մինակ բանակէն գուրս կեցեր՝ ա-
զօթք կրնէր որ Աստուած իր բանը յաջողէ :
Չորրորդ իրիկունը Հողեփեռնէս փառա-
ւոր սեղան մը ըրաւ իր զօրասպեաններուն ,
Յուդիթն ալ կանչեց , որ եկաւ նստաւ ու
իւր հետը բերածներէն կուտէր . կերան խը-
մեցին , Հողեփեռնէս ալ աղէկ մը գինովցաւ :
Ետքը ամէնքն որ գնացին , ու մինակ Յու-
դիթ ու Հողեփեռնէս մնացին , Յուդիթ տե-
սաւ որ Հողեփեռնէս խորունկ կըքնանայ ,
գնաց քովը , հանեց անոր թուրը , բռնեց
մազերէն , « Տէր Աստուած , ըսաւ , օգնէ
ինձի » , ու երկու հեղ զարկաւ՝ գլուխը

կրօնեց առաւ, դուրս ելաւ՝ իր աղօթիսինն
առւաւ որ կերակրին մախաղին մէջը գնէ :
Եւ ասանկով մարդ չմտացած՝ գիշերանց ետ
գարձաւ . Բնախղուայի սարսաղին ասկն որ
հասաւ, սկսաւ կանչել սրահապաններուն
Թէ « Բացէք դռները, Ա՛ճ մեր հեան է » :
Ժողովեցան ամէնքը ջահերով ճրագներով
տեսան Հողեփեռնեօսին գլուխը Յուգիթայ
ձեռքը, փառք տուին Աստուծոյ . Ա. քիովը
Ամնացոց իջխանն ալ տեսնելուն պէս՝ ին.
կաւ մարեցաւ . ու ետքը զարմանալով Ա՛ճ
զորութեանը վրայ՝ գարձաւ աստուածա-
պաշտ եղաւ :

Հ . Հողեփեռնեօսին մարդիկն ինչ կեր-
պով խմացան իրեն մահը, և ինչ ըրին .

Պ . Հրեայք առաւօտանց Հողեփեռնեօսի
գլուխը բերդին վրայ կախեցին, ետքը վա-
ղեցին Թշնամիներուն վրայ . անոնք ալ շուտ
մը գնացին Հողեփեռնեօսի ձայն սալու որ
պատերազմ սկսին : Մտաւ սենեկապետը
տեսաւ մարմինն արիւնշուայ գեալնը փը-
ռուած, « Այն կանչեց, Երրայեցի կին մը
խաղք ըսաւ զմեզ » : Աս որ լսեցին զօրքը՝
փախչող փախչողի եղան : Ան ասեմը Հրեայք
աղէկ ջարդ մը տուին անոնց, ու երեսուն
օրուան մէջ հազիւ կրցան կողոպուաները
Ժողվել :

Հ . Յուգիթայ յաղթութեանը համար
Հրեայք իրեն ինչ փոխարէն ըրին .

Պ . Ամէնքը չորս գիէն կուգային զինքը
կօրհնէին . ինչուան Երուսաղէմէն քահա-
նաներ եկան զինքը տեսնելու և օրհնելու :

Հողեփեռնեօսի վրանն ալ բողոք արծ թեզէն
ու սսկեզէն բաներովք Յուդիթայ տուին ,
որ ինքն ալ ետքը տաճարին ընծայեց : Իսկ
Յուդիթ ուրախու թեամբ լցուած օրհնու-
թիւն մը երգեց Աստուծոյ , ու նորէն գնաց
իր առւնը՝ բարի վարքով ապրեցաւ ինչուան
հարիւր հինգ տարի :

90.

Ե-ԹԵՂ :

Հ . Ես թերայ պատմութեան մէջ գլխաւոր
գիտելու գիպուածներն որոնք են .

Պ . Արտաշէս թագաւորին փոփոխա-
մտութիւնը , Համանայ հպարտութիւնը ,
Մուրգբէին աստուածապաշտութիւնը , և
Ես թերայ եղբայրսիրութիւնը :

Հ . Արտաշէսն ո՞վ է .

Պ . Պարսից զօրաւոր թագաւոր մը . որ
թագաւորութեանը երրորդ տարին մեծ յաղ-
թութիւններ ընելով փառաւոր կոչուեց մը
ըրաւ իր իշխաններուն՝ Սիսիս թագաւորա-
կան քաղքին մէջ՝ վեց ամիս . ետքը վեց օր
ալ առանձին իր պալատին մէջ չարամուկու
մեծ հանգեսով : Ետքի օրը Արտաշէս բողո-
քովն զուարճացած՝ ուզեց որ Աս թինէ մեծ
թագուհին գայ , իշխաններուն երկնայ ու
իրեն հեա մէկտեղ փառաւորուի . բայց Աս-
թինէն չեկաւ . անոր համար Արտաշէս ալ
սասափկ բարկացաւ , իշխաններուն խորհրդ-
ովք զինքը թագուհիութիւնէ ձգեց՝ որ ուրիշ

կնիկներն իրմէն չար օրինակ չառնեն . որուն տեղը Եսթեր ընտրուեցաւ :

Հ . Ի՞նչ կերպով Եսթեր թագուհիութեան հասաւ .

Պ . Հրաման եղաւ որ ուրիշ մը փնտռեն , որ Եսթինեի տեղ թագուհի ընտրուի : Եսթեր Մուրդաբէի հօրեղբորն աղջիկն էր՝ որք մնացած՝ որ Մուրդաբէն զինքը կըստահէր , ու երբոր լսեց թագուհի ընտրելու հրամանը , զԵսթերն աւխրիկեց՝ ապրտարելով որ չյայտնէ ինչ ազգ ըլլայը : Թագաւորն Եսթերին հաւնեցաւ ու թագուհի ըրաւ . Եսթեր ալ Մուրդաբէի խրատովն աստուածապաշտութիւնը գաղտուկ կընէր :

Հ . Մուրդաբէն ի՞նչ պաշտօնի մէջ էր .

Պ . Թագաւորին ծառայութեանը մէջ մտած էր . անոր համար անդամ մը իմանալով որ երկու ներքինի մէջերնին խօսք գրեր են թագաւորը մեռցնելու , մէկէն Եսթերայ ձեռքովն իմացուց թագաւորին . Արտաշէս կախել առաւ ան ներքինիներն ու Մուրդաբէին հաւատարմութիւնը յիշատակարանին մէջ գրել տուաւ : Եւ աս Մուրդաբէին գործքը պատճառ եղաւ որ համանին ձեռքէն ազատեցաւ :

Հ . Համան ո՞վ էր , ու ի՞նչ բանի համար Մուրդաբէի հետ թշնամացաւ .

Պ . Արտաշէսին մեծ իշխաններէն մէկն էր . վարպետութեամբ մը հրաման հանել տուաւ որ ինքը թագաւորին երկրորդ սեպուի , ու պաշտօնն մարդիկն ամենքն ալ իրեն երկրպագութիւն ընեն : Մուրդաբէն

աս հրամանը չէր պահէր՝ Համանն Ամաղե-
կացի՝ Աստուծոյ անխժած ազգէն ըլլալուն
համար : Համան կատողեցաւ աս բանիս վրայ,
ու սխր բոլոր Հրեաներէն ուղեց հանել .
ու սաի հասկըցուց Աբասաշեսի թէ Պարսից
տէրութեան խաղաղութիւն գանկու հա-
մար՝ ան խռովարար Հրեից ազգը պէտք է
ջնջել . և հրովարտակ հանել աուաւ որ ա-
գար ամսուն սասնուիրեքին ամէն Հրեանե-
րը մեծ ու պղտիկ՝ թրե անցուին, և անոնց
ունեցածները թագաւորին գանձն երթան :
Հրեաները յուսահատած՝ Աստուծոյ աղա-
ւինեցան :

Հ . Հրեայք ինչպէս կրցան ազատիլ Հա-
մանին բարկութենէն .

Պ . Մուրդբէ Ասթերին հասկըցուց որ
ինքը պարտրկան է աս բանիս համար ձեռքէն
եկածն ընելու . Ասթեր Մուրդբէին պա-
տասխան խրկեց թէ « Ինչպէս որ գիտես՝
թագաւորը շնորհած, առջնն ելլողը կը մնա-
նի . երեսուն որ է որ ես ալ թագաւորին չեմ
գնացեր » : Մուրդբէ նորէն խրկեց իմացուց
թէ պէտք է որ ինքը աս բանիս ճարը տես-
նէ : Ասթեր տակնու վրայ եղաւ , սպրսպրեց
որ ամէն Հրեաներն աղօթք ընեն՝ պար պա-
հեն որ Աստուած իրեն ոյժ տայ . ինքն ալ
քուրձ մը հագած՝ հանդատութեան բանե-
րը մեկգի թողած՝ աղօթքի նստաւ իրեք օր :
Ետքը փառաւոր լսթեր հագաւ զարգա-
րուեցաւ ու երկու ազախինով թագաւորին
առջնն ելաւ . բայց սրտին վախէն հոն մա-
րեցաւ ինկաւ : Ասթերին անանկ խեղճ կեր-

սը թագաւորին դուժը շարժեց որ շուտ մը ելաւ աթոռէն քօյն եկաւ, անոյշ խօսքերով սիրտ կուտար որ չվախէ : Եսթեր ասով քիչ մը սիրտ առաւ . բայց երբոր նորէն մարեցաւ, թագաւորը նորէն վրայ տուաւ, « Ինչուան կէս թագաւորութիւնս ալ ուզես՝ կուտամ » ըսելով : Եսթեր ան ատենը համարձակեցաւ «, Արժնգրեմ որ ըսաւ՝ Համանը հեազ հրամես իմ սեղանս դաս », թագաւորն ալ յանձն առաւ : Յեղանին վրայ նորէն ըսաւ թագաւորը Եսթերին որ խնդրէ ինչ որ կուզէ . Եսթեր ալ խնդրեց որ երկրորդ օրը նորէն հրամեն : Համանն ուրախութեամբ լցուած երբոր տուն կրգառնար, ճամբան Մուրգքէին հանգիստեցաւ, որ իրեն երկրագագութիւն չըրաւ, բարկացաւ վրան, ու անցաւ տուն դնայ . պարծելով պատմեց իր կնկանն ու բարեկամներուն թէ մինակ ինքը կանչուեցաւ Եսթերայ սեղանին . բայց ցաւելով ալ ըսաւ Մուրգքէին իրեն ըրած անարգանքը : Անոնք ալ ըսին թէ « Աչազը երկայն փայտ մը անկէլ տուր, ու ըսէ որ կախեն զինքը » : Համան մէկէն հրամայեց որ յիտուն կանգուն երկայն փայտ մը պատրաստեն :

Հ . Համան կրցաւ առաջ տանիլ Մուրգքէն կախելու խորհուրդը .

Պ . Աստուած բանը անանկ գարձուց որ ինքը կախուի ան փայտէն : Ան իրիկունն Արտաշեսի քունը չտանելով ատեն անցընելու համար ուզեց յիշատակարաններն աչքէ անցընել կարգալ . ու գիպուածով

բարցուեցաւ երկու ներքինիներուն կախուե-
լուն պատճառն ու Մուրդփէին հաւատար-
մութիւն . ան ասէն հարցուց թէ « Մուրդ-
փէին ի՞նչ փոխարէն ըրիք » . ծառաներն
ըսին որ « Բան մը չըրինք » : Երբոր առա-
ւօտ եղաւ՝ հարցուց թէ « Ո՞վ կայ դուք » .
և խմանալով որ Համանը հոն է , որ եկեր
էր՝ Մուրդփէն կախելու հրամանը առնելու
համար , ներս կանչեց՝ հարցուց . « Թէ որ ,
ըսաւ , ես մէկը ուղեմ փառաւորել ի՞նչ պէտք
է ընեմ » : Համանն ալ մտքէն անցընելով
թէ « Ինձմէ զտա մ՞վ պիտի փառաւորէ » .
ըսաւ . « Արվայլէ որ զան մարդը թագաւորի
հագուստով ու ձիով թագաւորին խիստ
սիրելին ասնի բոլոր քաղաքը պարտցնէ .
առջևէն ալ կանչեն թէ « Թագաւորին փա-
ռաւորած մարդն է ասիկայ » : Թագաւորը
հաւնեցաւ ըսածին ու հրամայեց իրեն որ
երթայ Մուրդփէին ընէ ան պատիւները :
Համան ալ չկրնալով ձայն հանել՝ գնաց
զՄուրդփէն պատուեց , ու սիրտը աստիկ
կտարած՝ տուն դարձաւ : Ետքը Եսթերայ
սեղանը գնաց : Թագաւորը հարցուց նորէն
Եսթերին թէ « Ի՞նչ է խնդիրդ . գիանաս
ըսաւ՝ թագաւորութեանս կէսն ալ ուղես՝
կուտամ » : Ան ասէն Եսթերն ըսաւ . « Տէր
խմ , կրխնդրեմ քեզմէ իմ ազգիս կեանքն
որ խարերայ Համանը աշխարհքէս վերջնել
ուղեց » : Թագաւորը ըսածին պէս՝ այլայ-
լած ելաւ սեղանէն . Համանը մինակ մնա-
լով սարսափած Եսթերի ոտքն ինկաւ՝ կա-
ղաչէր : Ան որ տեսաւ գիպուածով թագա-

ւորը՝ բարկացաւ թէ ինչո՞ւ Եսթերայ քով
կեցեր է . հսն մէկն ալ խմացուց թագաւորին
թէ Համան զՄուրդբէն կախելու համար
փայտ անկեր է . մէկէն ըսաւ . « Չի՞նքն ան
փայտէն կախեցէք » : Ետքը Համանին ու-
նեցածներն ալ Եսթերի պարգևեց . և խմա-
նալով որ Մուրդբէն Եսթերին ազգականն
է , Համանին իշխանութիւն ալ Մուրդբէն
տուաւ :

Հ . Հրէից վրայ եղած հրովարտակն ի՞նչ
կերպով ետ դարձուեցաւ .

Պ . Երբ հրովարտակ մը ելաւ առջինին
ներհակ հրամաններով . ան օրն որ իրենք
պիտի ջարդուէին՝ իրենք զուրիշները ջար-
դեն : Ուստի ան օրը շատ մարդ ջարդեցին .
բոլոր Համանայ առնն ալ ջնջեցին : Ետքը
Աստուծոյ շնորհակալութեան համար Հը-
րեաները ածն հաստատեցին ազար ամսուն
տասնըչորսին , և ինչուան հիմա կըստահեն ,
որ Փօրթի կըսուի :

94 .

Ե֊֊Դ , ԵԴԵԴ , ԵՆԻԻԷ :

Հ . Մարգարէներուն վրայ հարկաւոր
դիտնալու ի՞նչ բան կայ .

Պ . Մասնաւոր դիտուածներ՝ թէ Քրիս-
տոսի անօրէնութեանը վրայ և թէ խրայե-
լացոց մեղաց պատիժներուն վրայ , որ եր-
բեմն տեսիլքով և երբեմն խօսքով մարդա-
րէացան :

Հ. Եսայեայ գլխաւոր տեսիլքը սրն է.

Պ. Եսայի մարգարէն որդի Անուայ՝ որ Ողիա թագաւորին տանէն ինչուան Եղեկիայի տանը մարգարէացաւ. անգամ մը տեսաւ աաճարին մէջ զԱստուած բարձր փառաւոր աթոռ նստած, հրեշտակներ շորս գին պատած՝ վեց վեց թևերով, որ երկու թևով երեսնին կը դոցէին, երկուքովը ռաւընին, մէկաւ երկուքովն մը կը թռտէին, ու կըսէին. «Աբ, սբ, սբ, տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօքնորա »: Մարգարէն՝ « Այն ինձի կըսէր, որ տէր զօրութեանց կրտսնեմ ու լուս կեցեր եմ պիտը բերանով ըլլալուս համար »: Ան տանն սերտէնէրէն մէկը ունեւիքով սեղանէն կայծ մը բերաւ՝ մարգարէին բերնին դպուց ու ըսաւ, « Ասիկայ սրբէ զքեզ բու պահաւ թիւններէդ »: Ետքը լսեց որ Աստուած կը հարցընէր, « Ո՞վ խրկեմ ան ժողովրդեանը »: Ինքն ալ պատասխան տուաւ թէ « Ահա զիս խրկէ »: Աստուած ալ խրկեց որ անկէ ետքն սկսաւ քարոզել:

Հ. Եսայեայ մարգարէութիւններուն մէջ նշանաւոր ինչ բան կայ.

Պ. Քրիստոսի հրաշալի ծնունդն ու խաչուիլը՝ մեանիլը՝ աւետարանչի պէս տեղնի տեղը կը ստանայ:

Հ. Երեմիա մարգարէին գլխաւոր տեսիլքներն որոնք են.

Պ. Երեմիա մարգարէն որ Յովսիա թագաւորին տանէն ինչուան բոլորովն հրէից կործանուելու մարգարէացաւ, շատ տեսիլք-

նէր աւսաւ . որոնց մէջ գլխաւոր կրնայ ըսուիլ ան'որ անգամ մը երկինքը հիւսիսային դիէն կաթմայ մը կրակի վրայ կէփէր, որով կիսացրնէր Աստուած թէ ան կողմէն Քաղ գէայիք Հրէից վրայ պիտի խրկէ :

Հ . Երեմիայի մարգարէութիւններն աւելի ինչ բանի վրայ էին .

Պ . Ի՞նչ ազգին անօրէնութիւնները կուլար . որ ետքը յուսահատած' ողբ աւըսաւ վրանին :

Հ . Երեմիան ինչպէս անցուց իր օրերը .

Պ . Հրեայք տեսնելով որ զերէնք շատ կը յանդիմանէ, զըջալու տեղ կառէին ու կը հալածէին զինքը . և ըսելով թէ ժողովրդէ ան ձեռքը կը թուլցրնէ որ չկարենան թշու միներուն դէմ դնել, տարին մահապարաներուն գուրը ձգեցին որ մեռնի : Բայց Աքգամէլէք Եթովպացին մէջ մտաւ, « Ասանկ սուրբ մարդ մեզի հարկաւոր է » ըսելով թագաւորին . ուստի գուրէն հանեցին ու բանագրին : Ետքը երբոր Նաբուզարդան գահճապետը Հրեաները Բաբելոն գերի տարաւ, Երեմիան ինզրեց որ ինքն իր Բաբուք աչկերտին հետ Երուսաղէմ մնան : Բայց ետքը Յոննաթան որդի Կարէին երբոր զժողովորդը Եգիպտոս փախուց, Երեմիան ալ տարաւ . և հոն Հրեաները չգիմանալով իրեն քարոզութիւններուն, քարկոծեցին զինքը :

Հ . Եզեկիէլէ տեսիլքները որոնք են .

Պ . Նաբուքոզոնոսոր երբոր եկաւ, Յեքոնիա թագաւորը Բաբելոն տարաւ, Եզեկիէլ ալ մեկալ գերիներուն հետը գնաց, ու տե-

սիւլքնէրը հոն յայտնուեցան իրեն : Առջինն
աս էր . անգամ մը Քորսոր գեաին քովը կե-
ցած՝ յանկարծ ամպերուն մէջը մեծ կառք
մը տեսաւ՝ ամէն դիէն աչուքնէրով , որ
չորս կենդանի կրքաշէին , ու անոնց կերպա-
րանքը՝ մարդու՝ առիւծի , կովու և արծւոյ ,
որոնք չորս չորս ալ թեռուէին . անանկ լուսա-
ւոր էին որ վրանին նայելու աչք չէր գիմա-
նար : Տեսաւ մէջակի կրկինքն ալ բաց ,
ուր աթուսով փառաւ որ մարդ մը ճառա-
գայթնէրով կրփայլէր արևու պէս : Ասով
Աստուած յայտնեց Հրէից որ իրենց երկրա-
ւոր տաճարին կարօտ չէ . փուճ՝ սեղը
անով չգարծին : Եղեկիէլ երբոր վախնալով
կրնայէր , Աստուած սկսաւ դանդաւալի իս-
րայէլացոց ըրած ասկերախառութեանը վրայ-
ետքը գէտի իրեն ձեռք մը երկնցաւ ու գիրք
մը առաւ որ ուտէ , որուն ներսը դուրսը
ուր ու վայ գրած էր . ան ուտելուն պէս
բերանն անուշցաւ , Աստուած ալ հրամայեց
որ երթայ սկսի քարոզել :

Մէկ ուրիշ ուրախահան տեսիլք մըն ալ
տեսաւ . որ մը Աստուած Եղեկիէլը գաշա մը
տարաւ՝ որ մեռելներու շորցած ոսկորնե-
րով լեցուած էր . ու ըսաւ անոր . « Հրա-
մայէ որ ողջանան » . և բոլոր գաշան ան-
համար մարդով լեցուեցաւ , որ յարու-
թեան նշան էր : Ուրիշ անգամ ալ Երուսա-
ղեմի տաճարը նոր ձևով մը տեսաւ :

Հ . Եղեկիէլի մարդարէութիւններն ինչ
բանի վրայ էին .

Պ . Իսրայէլացոց վրայ եկած ու գալու

Թշուառութիւնները յըջարողէր առակե-
րով :

92 .

Դ-նիէք :

Հ . Դանիէլ ո՞վ էր և ինչպէս առաջ ե-
կաւ .

Պ . Նարուքոդոնոսոր Բաբելոնացոց թագա-
ւորը երբոր Արուսազէմն առաւ ու շատ
մարդ գերի աարաւ , իր Ասփանէզ իշխանին
ապրսպրեց որ Հրէից մէջէն շնորհալի խելա-
ցի աղաքն ընտրէ ու կրթէ : Անոնցմէ էր Դա-
նիէլ Յուդայի ցեղէն , որուն անունը Բաղ-
ասասոր գրին , և իրէք ընկերները՝ Անանիա ,
Միսայէլ ու Աղարիա , որոնց անունը փո-
խեցին՝ Սեղբաք , Միսաք , Աբեղնագ ու գրին .
ու երբոր թագրին հրամանովն իրենց աղէկ
կերակուրներ կը բերուէր , անոնք վերակա-
ցուին աղաչեցին որ միայն ընդեզէն աայ ,
խմելու ալ լոկ ջուր : Անիկայ առջի բերան
թող չտուաւ , վախնալով որ կը վատուէնան
աղաքը . բայց ետքը փորձեց որ ան չորսը ըն-
դեզէն ուտելով թագաւորին կերակուրն
ուտողներէն աւելի գէր ու կայտառ կը լլան :
Ետքը երբոր թագաւորն ասոնց սորված ի-
մաստութիւնը փորձեց՝ ահաւ որ բաբել-
ոնացոց կարգացողներէն ալ շատ բան գիտեն ,
մանաւանդ Դանիէլը , անոր համար զերեւիք
կարգացողներուն կարգն անցուց :

Հ . Դանիէլ ինչպէս առաջ եկաւ որոնք
էն .

Պ. Երբոր տասուերկու տարուան էր՝ Շուշանին անմեղութիւնը յայանեց : Ետքը Նաբուքոդոնոսորին երկու երազին մեկնութիւնը տուաւ . Բաղտասարին պատին վերայի գրերը կարգաց, առիւծներուն գուրն ողջ աղատեցաւ . Կիւրոսի ատեն Բեշայ սուա աստուած ըլլալը յայանեց , բարեւայոց պաշտած վիշապը ճաթեցուց . երկրորդ անգամ վեց օր առիւծներուն գուրը կեցաւ . և Բրիստոսի գալստեան ժամանակը յայանի մարգարեացաւ :

Հ. Շուշանն ո՞վ է , և ի՞նչ բանի մէջ յայտնեց Գանիէլ անոր անմեղութիւնը .

Պ. Շուշանն էր Յովակիմին կինը : Ես Յովակիմը Բաբելոն գերի գնացած մեծատուններուն մէկն ըլլալով , Հրէից ծերերն իրեն տունը կը ժողվէին խորհրդի : Եննցմէ երկու ծեր շատ գալով Յովակիմի տունը՝ սկսան չոր մաքի երթալ Շուշանին վրայ , ու ատեն կը փրնտակին որ մաքի շարութիւնին կասարեն : Օր մը Շուշանը ելաւ պարտեղը՝ գնաց աւազանին քովը լուացուելու , և ազախինները խրկեց որ երթան օճառ բերեն : Են ատենը ան երկու ծերերն որ հոն պահուրակը էին՝ եկան Շուշանին վրայ . Շուշան նեղը մտած հաւաքեց , ու ակտաւ որ ուրիշ ճար չկայ , սկսաւ կանչուրատել : Եննք երբոր ակտան որ բանը գէշի գնաց , իրենք ալ կանչուրատեցին , ու երբոր մարգիկ հասան՝ ծերերն սկսան Շուշանայ վրայ սուա զրպարտութիւն ընել : Ուստի երկրորդ օրը գաստաստանի հանեցին զինքը , ու ան երկու ծերե-

բուն հաւատալով վճռեցին որ մեանի. Շու-
շան զԱստուած իրեն վկայ կանչելով մեռ-
նելու կերթար : Ճամբան Գանիէլ սկսաւ
կանչել թէ « Աստուծոյ անուամբ աստուծոյ ան-
ունն » : Ժողովուրդը կեցան, հարցուցին թէ
ինչ կրսէ : Ան ալ ըսաւ . « Աստուծոյ քննելու
անմեղն ինչպէս կրդատասպարակք . դարձիք
նորէն դատաստանի նստեք » : Երբոր գար-
ձան, ըսին Գանիէլի . « Աստուած դքեղ լու-
սաւորեց, գու եկո՞ տես աս դատաստանը »,
ան ատենը Գանիէլ՝ « Զատեցէք ըսաւ՝ աս
երկու ձերբը մեկմեկէ » . ետքը առանձին
երկուքին ալ հարցուց թէ ո՞ր անսան Շու-
շանը . անոնք ուրիշ ուրիշ անց ըսելով խաղբ
եզան, ու Շուշանին անց սպաննուեցան :
Ասով ու ետքն ալ Նարուբոգոնոսորին ե-
րազը մեկնելով Գանիէլին անունը խիստ
հաշակուեցաւ :

Հ . Նարուբոգոնոսորին առջի անսած
երանն ինչ էր .

Պ . Ինքն ալ մտացեր էր երազը . անոր հա-
մար կանչեց Բարեւունի խնաստունները, հար-
ցուց թէ ինչ է երազը և մեկնութիւնը, ու
չգիտնալնուն համար բարկացաւ, սպաննել
առաւ զամէնքը : Երբոր Գանիէլ ըսեց,
ինդրեց որ իրեն որ մը ատեն ասն, ինքը
կըզրուցէ : Ան գիշերն Աստուծոյ դիմեց իր
ընկերներուն հետ որ Աստուած յայանէ՞ ու
առաւօտանց դնաց թագաւորին ըսաւ . « Ե-
րազիդ մէջն ահաւոր արձան մը տեսար .
գլուխն ոսկիէ, ձեռքերն՝ կարծքն ու
թեւերը արծրթէ, մեջքէն ինչուան ծունկ՝ ըը

պզնձէ, սրունքներն երկրթէ, և ոտուրնե-
րուն կէան երկրթէ ու կէսը հողէ: Ետքը
լեռնէն ինքիրմէ քար մը փրթաւ՝ գլորեցաւ,
արձանին զարկաւ ու փոշի դարցուց, հոն
ալ փչեց տարաւ. ու ան քարն աճեցաւ՝ մեկ
մեծ լեռ մը եղաւ և բոլոր աշխարհքս լե-
ցուց: Ասոր մեկնութիւնն ալ սա է ըսաւ.
ան արձանին ոսկի գլուխը գու ես՝ թագա-
ւորներուն թագաւորը. ետեւէդ ուրիշ թա-
գաւորութիւն մը պիտի գայ, որ ան արծաթը
կրցուցնէ. անոր ետեւէն աւելի տկար մը.
ու անկէ ետքը չորրորդը երկաթ՝ որ ըսել է
ամենէն ուժով, բայց անոր ալ կէսը հողէ է՝
որ ետքը տկարանայ պիտի: Ետեւէն նոր թա-
գաւորութիւն մը պիտի ելլէ որ զամենքը
կործանէ՝ իր սակն առնէ պիտի, որ է ան
քարն որ յաւիտեան պիտի մնայ”:

Հ. Նարուբոգոնասոր Դանիէլն երազ
սրտամեղուն համար ինչ փոխարէն ըրաւ.

Պ. Ելաւ Դանիէլն երկրաբազութիւն
ըրաւ, ու հրամայեց որ անոր, խանկ ու
զոհ մտաուցանեն. և ըսաւ թէ « Հիմայ
իմացայ որ ձեր Աստուածն է ճշմարիտ”:
Ըստ պարգևներ ալ աուաւ անոր, ետե Բա-
բելոնացոց իշխաններուն ու կարգացողներուն
գլուխ ըրաւ զինքը, և անոր խնդրելովը՝ իրեն
իրէք ընկերներն ալ թագաւորական գործ-
քերու վրայ դրաւ:

Երեւոյ ճանկաւն :

Հ . Դանիէլի իրեք ընկերներն ինչով
երկե լի եղան .

Պ . Ճշմարիտ աստուած պաշտուածեամբ .
վասն զի 'Նաբուքոդոնոսոր թագաւորու-
թեան ասանեալ թերորդ տարին ասկիկ ար-
ձան մը անկեց' վաթսուն կանգուն ելկայն,
վեց կանգուն լայն' Դեկրայ դաշտին մէջ, ու
հրաման հանեց որ ամէն տեղէն մեծամեծ-
ները թողովն ու հանդէսով ան արձանը պաշ-
տեն . անոր քովն ալ հնոց մը շինեւ առաւ
որ չհնազանդողը հոն ձգեն : Աս բանս Դա-
նիէլն իրեք ընկերները յանձն շտաին . ոչ
յորդորանք մտիկ ըրին , ոչ խրատ : Սաստիկ
կատակեցաւ Նաբուքոդոնոսոր ու հրամայ որ
մէկէն զանոնք հնոցը ձգեն :

Հ . Երեք մանկունքն ինչպէս կրցան 'Նա-
բուքոդոնոսորայ բարկութենէն ազատել .

Պ . Բանաւոր թագաւորին բարկութիւնը
բարեգութ Աստուծոյ խնամոցը չկրցաւ
յազթել : Նաբուքոդոնոսորայ մարդիկը վա-
ռեցին հնոցը , իրեքը մէկէն մէջը ձգեցին . ա-
նոնք հնոցին մէջը զԱստուած օրհնել սկսան .
մարդիկը մէկ կողմանէ կրակը կրսաստակացը-
նէին որ քառասունութն կանգուն վեր կել
լէր բոցն , ու շորս զին կեցողներն ալ կայ-
րեր : Իսկ անոնց քովը հրեշտակ մը խնա-
ղովացուց փռան մէջն' որ հանդիստ կրտոր-

աւելին ու զԱստուած կօրհնէին : Թագաւորն
եկաւ՝ աւեսաւ որ մէջը չորս հոգի կան, զար-
մացաւ, կանչեց, « Սեդրայք Միսայք Աբեդ-
նադով ծառայք Այբարձրելոյ, գուրս ե-
կէք » : և երբոր եկան, երեցան որ ըսթեր-
նին ալբան մը չէր եղած . 'Նարուբոգոնոս-
սոր զարմացած « Մեծ է ըսաւ ձեր Աստուա-
ծը . սակէ ետքը ով որ անոր գէմ խօսի
կըմեսցնենեմ » : Իրենց իշխանութիւնն ալ
առջնէն աւելի մեծցուց : Բայց ինքն ասով
չկրցաւ ճանչնալ զԱստուած ինչպէս որ
պէտք է, ու սուտ հպարտութենէն գաղթել :

Հ . Նարուբոգոնոսորայ հպարտութեանը
պատճառն ինչ էր .

Պ . Ըբած յաղթութիւններն ու գիզած
հարստութիւնները : Բայց Աստուած մէկ
երազով մը յայտնեց իրեն գլխուն գալիքը .
որ իմանայ իր ակարութիւնը :

Հ . Նարուբոգոնոսորայ երկրորդ աւեսած
երազն ինչ բան էր .

Պ . Տեսաւ երկրիս մէջ աւելը տնկուած
մեծ ծառ մը բարձր ինչուան երկինք ու բո-
լոր աշխարհքիս վրայ տարածուած՝ տերե-
նեքով պողով լեցուն, շտրին տակը գա-
զաններ կրցնակէին, և ճիւղերուն վրայ գա-
ռեր էին թռչունները : Ետև երկնքէն հրեշ-
տակ մը իջաւ ու կանչեց . « Կարեցէք աս
ծառը, ջնջեցէք, միայն արմատը թողէք՝ եր-
կըթէ ու պղնձէ շղթայով կապած, խոտե-
րուն մէջ՝ գազաններուն հետ . մարդկային
սիրտը վերցուի, գազանի սիրտ արշուի իրնն
ինչուան եօթը ժամանակ » :

Հ . Նաբուքոդոնոսորին տեսած ծառը
Դանիէլ ինչպէս մեկնեց .

Պ . Երբոր ամէն կարգացողները շկրոյան
մեկնել, Դանիէլ մեկէն մեկնուածիւնը ար-
ւաւ՝ ըսելով որ Ա՛յն ծառը դուն ես, մարդիկ
ներուն մէջէն պիտի վարնաուիս ու անբան
անտաններուն հետ խոս ուտես եօթը
տարիի շափ, ինչուան որ խելքդ գլուխդ
գայ . և արմատդ պիտի թողուի որ նորէն
գառնաս թագաւորես : Դանիէլ աս մեկ-
նուածիւնը տալէն ետև խրատ ալ տուաւ թէ
չաս ողորմուածիւն տայ աղքատներուն որ
Աստուած իրեն մեղքին թողուածիւն ընէ :

Հ . Նաբուքոդոնոսոր Դանիէլի խրատը
պահէ՞ց՝ գլխուն գալու պատժէն ազատե-
լու համար .

Պ . Չէ . անոր համար տարիէ մը ետքը որ
մը իր պաշտօնին վրայ քաշելով հպարտու-
ածեամբ Բաբելոնին գեղեցիկութեանը վրայ
պարծեհալով որ կրխօսէր, յանկարծ երկըն-
քէն ձայն եկաւ, թէ « Նաբուքոդոնոսոր՝
քեզի կըսեմ, թողուս թագաւորութիւնդ
ու դուրս տեղ գազաններու հետ բնակիս » :
Ուստի հոն անոնց հետ խոս կուտէր : Եօթը
տարիէն ետև իմացաւ Աստուծոյ կարողու-
թիւնն, ու դարձաւ եկաւ իր աթոռը
նստաւ :

Հ . Բաղտասարայ պատին վրայ տեսած
գիրն ինչ բան էր .

Պ . Բաղտասար Նաբուքոդոնոսորին յա-
ջորդն անգամ մը սեղան ըրաւ իր իշխաննե-
րուն՝ հազար հոգւոյ . և իր հրամանովը սե-

զանին վրայ սկսան գործածել Երուսաղէմի
տաճարէն կողոպտած ոսկիէ ու արծըթէ ա-
մանները, ու անոնցմով գինի կրիմէին իրենց
կուռքերուն կենացը : Ան ատենը յանկարծ
ձեռք մը երեցաւ որ ճրագին լուսոյն առջևը
պատին վրայ բան մը գրեց : Թագաւորը
սարսափած՝ դողալ սկսաւ, ու շուտ մը կան-
չեց բոլոր բարեբացոց մոգերն որ ան գիրը
կարդան ու մեկնեն, բայց երբոր չկրցան,
Թագաւորին միտքն ինկաւ Դանիէլը. ուստի
մեկէն կանչեցին, ու Թագաւորն ալ խոս-
տացաւ անոր ինչուան կէս Թագաւորու-
թիւնը՝ թէ որ կարգայ ան գիրը : Դանիէլ
պատասխան տուաւ . « Ընծաներդ քե-
զի ըլլայ, և պատիւդ ուրելի տուր » : Ետքը
յանգիմանեց զԹագաւորն որ Կարաբոգո-
նոսորին պատիժներէն ինքը չէ խրատուած,
ու Աստուծոյ տաճարին սուրբ ամանները
արժեք է : Իսկ գրածն աս է ըսաւ . « Մե՛ն,
Թագաւորութեանդ վերջը հասաւ . Թե՛նէ,
Աստուած գքեզ քննեց՝ յանցաւոր գանուե-
ցար . Փոքէ՛, Թագաւորութեանդ կէսը Մա-
րայ՝ կէսն ալ Պարսից արուեցաւ : Թագա-
ւորը շուտ մը իշխանութեանն երբորդ մասին
տէր գրաւ զԴանիէլը, և ան գիշերն ինքն
ալ տպաննուեցաւ Մարայ Դարէ՛ Թագաւո-
րէն որ զինքը պաշարեր էր, ու ներս մտաւ
Բարեւոնն տուաւ :

Գ. Ինչպէս իմ քրոջ քրոջսն :

Ն . Գարեհ զԳանիէն իգչո՞ւ ձգեց առ իւծներուն գուրը .

Պ . Գանիէլ անոր շատ սիրելի ըլլալուն՝ իշխաններուն գլուխ երեզեր, ուստի ամենքը նախանձեւով կուզէին փորձանքի բերել, վրան յանցանք չէին գաներ : Անոր համար հրաման հանել առին որ երեսուն օր միայն թագաւորէն խնդիրք ըլլուի . և ով որ աս հրամանին գէժ ընէ, առ իւծներուն գուրը ձգուի : Գանիէլ իր սովորութիւնը չթողուցօրը իրէք անգամ իր առնը պատուհանին առջև գէտ 'ի Արուսազէ՛մ աղօթք կրնէր Աստուծոյ : Թշնամիներն խնայան, սախլեցին զթագաւորն, ու Գանիէլը առ իւծներուն գուրը ձգեցին : Ան առնն թագաւորն յուսահատած ըսաւ . « Աստուածդ քեզ կազաւէ » : Մեծ քարով մըն ալ գուրին բերանը գոցեցին ու թագաւորին մասնիակը կնքեցին : Ան իրիկունը մեծ արամութեամբ անցուց թագաւորն ու առաւօտանց կանուխ գրին բերանը բանալ առաւ, և երբոր Գանիէլն ողջ հանեցին՝ ուրախացաւ, և հրամայեց որ անոր անդը թշնամիները ձգեն առ իւծներուն գուրը . և անոնք գեա վար չհասած՝ առ իւծները բղբ քակցին զիրենք : Իսկ Գանիէլ մնաց իր պատուոյն մէջ՝ նաև Պարսից Վերոս թագաւորին առննն որ եկաւ Բաբելոնն առաւ ու ամբից :

Հ. Բէլլին սուտ աստուած ըլլալը Գանիէլ ինչպէս յայանկէց .

Պ. Աս Բէլլ աստուած ին ամէն օր կուտայ ին տասուերկու արգու բարակ ալիւր, քու աասուն ոչխար, ու վեց մար գինի: Թագաւորն օր մը Գանիէլի հարցուց թէ « Գուն ինչո՞ւ չես պաշտեր Բէլլը »: Գանիէլ ըսաւ . « Ես միայն ճշմարիտ կենդանի Աստուածը կը պաշտեմ »: Ան ասեն թագաւորը պատասխանեց . « Բէլլը կենդանի չէ որ ամէն օր կուտէ կը խմէ »: Գանիէլ խնայալով ըսաւ . « Մի խաբուիր թագաւոր, Բէլլն ներսի գին հող է՝ գրտի գին պղինձ . ոչ կուտէ, ոչ կը խմէ »: Թագաւորը քուրմերը կանչեց՝ հարցուց ու ըսաւ . « Թէ որ խաբէու թիւն է ըրածնիդ՝ ալիւրի մեռնիք . թէ չէ՝ Գանիէլը մեռնի որ հայհոյեց զԲէլլը »: Ետքը գնացին կատաւներ, գրին կերակուրները Բէլլին առջեւ ու քուրմերն ըսին . « Ահա մենք գուրս կը ընէք . գուն թագաւոր գաները կնքէ, ու վաղը կամ մենք կամ Գանիէլը մեռնի »: Աւերբոր քուրմերը գուրս ելան, Գանիէլ մոխիր բերել տուաւ, բոլոր գեալները ցանել տուաւ . ու գուրս ելան, գուրս կնքեցին: Առաւօտանց կանուխ թագաւորը Գանիէլին հետ եկան տեսան որ կնիքը կեցած է, ու երբ որ գուրս բացին տեսան որ կերակուրները հասեր են, թագաւորն ուրախու թեամբ ահաւ կանչել . « Աստուած է Բէլլ ճշմարիտ »: Ան ասենը Գանիէլն ըսաւ թագաւորին . « Մէյ մը գեալներ նայէ »: Թագաւորը նայեցաւ, « Մարդու՝ կընկաոց ու

աղոց օտքի նշաններ կան : Մկասն
փրննաեւ թէ ուսկից սկսած է. և տեսան որ
սեղանին տակէն դադար կ գուռ մը շինած
կայ . ուսկից կեւնն քուրմերը աղոցմով և օ
թանասուն հոգի կուտեն կրխմեն եղեր :
Ստապեցաւ թագաւորը, ջարդել տուաւ զա
մէնքը , ու կառանունը կործանել տուաւ :

Հ . Դանիէլ Բաբելոնացոց պաշտած վեշապն
ինչպէս ճաթեցուց .

Պ . Թագաւորն երբոր Բէլին սուտ ըլլալն
խնայաւ , վեշապին համար ալ որ կը պաշտէին՝
հարցուց Դանիէլի : Պատասխանեց Դանիէլ
թէ « Աստուած անմահ պիտի ըլլայ . իսկ ես
ստ վեշապն առանց թրի կըլնամ մեռչը
նեւ » : Թագաւորն ալ հրաման տուաւ : Ան
տաննը Դանիէլ եղ ձիւթ ճարպ ու մաղ
մեկանդ եփեց , գունտ մը շինեց , ան վեշա
պին կերուց , որ մեկէն ճաթեցաւ : Բաբել
ոցիք ալ աւելի կատակցան , ըսելով թէ
« Հրեայ եղաւ թագաւորը . Բէլը՝ քուրմերը,
վեշապը ջնշեց » . ուստի բռնեցին Դանիէլն
տախտներուն գուրը ձգեցին , ուր որ եւ թը
տախտ կային որ օրը երկու մարդու մարմին
ու երկու ոչխար կուտէին : Բայց երբոր Դա
նիէլը ձգեցին՝ ուրիշ բան չտուին , ու վեց
օր հոն թողուցին :

Հ . Դանիէլ վեց օր ինչով ապրեցաւ գու
րին մէջ .

Պ . Անգամ մը Ամրակում մարդարէն ա
պուր եփեր էր ու մէջը հաց բրդած իր բա
նուորներուն կրտաններ . հրեշտակ մը երե
ցաւ « Դանիէլն ստը » ըսաւ : Երբոր մար

գարէն՝ « Տեղը չեմ գիտեր » ըսաւ, հրեշ-
տակն անոր գլխուն մազերէն բանեց ու շուտ
մը Բարեւընի առիւծներուն գուրն իջեցուց,
որ ձեռքի կերակուրը Դանիէլի տուաւ. ու
նորէն իր տեղը գարձուց : Եօթներորդ օրը
Թագաւորը գուրին բերանը գնաց, ակտաւ
որ Դանիէլն ողջ է, սկսաւ կանչել. « Մեծ
ես տէր Աստուած Դանիէլի » . և շուտ մը
հանել տուաւ . ու տեղը Թշնամիները ձգե-
ցին որ մէկէն բղիկ բղիկ եզան առիւծներէն :

93.

Յ. Թ. Գ. :

Հ. Յովնանու մարգարէութիւնը ի՞նչ բա-
նի վրայ է .

Պ. Արկրորդ Յերորոպմի Կարայէլացոյ
Թագաւորին ասեմն էր . Աստուած իրեն
հրամայեց որ Նինուէ քաղաքն երթայ՝ ու
խմացրնէ որ եթէ չապաշխարեն, իրեք օրէն
Նինուէն պիտի կործանի : Յովնան վախնա-
լով որ եթէ Նինուէացիքն ապաշխարեն ու
չպատժուին, ան ասեմն ինքը սուտ ըսող կե-
րնայ, ելաւ Յոպպէ գնաց, ու նաւ մը մտաւ՝
Թարսիս վախճելու համար : Բայց Աս-
տուած սասաթիկ աշկեռութիւն մը ըրաւ որ
նաւը մօտ էր ընկղմելու : Նաւավարներն
իրենց աստուածները օգնութիւն կրկան-
չէին ու բեռերնին ծովը կրճգէին . իսկ Յով-
նան մէկ կողմը քաշուած կրխուկար : Ար-
թընցուցին զինքն ալ որ ազօթք ընէ իր Աս-

առւժոյն : Բայց ճար չըլլալով ըսին որ վի-
ճակ ձգեն , իմանան թէ որուն մեղացը հա-
մար է առ փութորիկը : Երբոր վիճակը Յով-
նանու վրայ ելաւ , հարցուցին իրեն թէ
ո՞վ է ինքը , ո՞ւր կերթայ . և իմանալով իր-
մէն որ Աստուծոյ կրօնախօս , սկսան տարա-
կուսիլ թէ ինչ ընեն : Յովնան ըսաւ որ զինքը
ծովը ձգեն . բայց անոնք կըջանային ցամա-
քին մօտենալ . և չկրնալով բռնեցին զՅով-
նան ծովը ձգեցին . հոյն ալ մեկէն գաղ-
բեցաւ :

Հ . Յովնան ծովը ձգուելէն ետե ինչպէս
կըրցաւ քարոզութիւն ընել .

Պ . Մեծ ձուկ մը կլէց զինքը , և իրէք
որ անոր փորուն մէջն ողջ կեցած Ինչո՞ւ-
նէն Ինչո՞ւ սկսած աղօթքն ընելով ապաշ-
խարկց : Ետքը ձուկը զինքը ցամաքը տարաւ
գուրս ձգեց . ինքն ալ նորէն Աստուծոյ հրա-
մանն անկելով գնաց Նինուէ ու քարոզեց
թէ իրէք օրէն Նինուէն պիտի կործանի :
Հուս մը հաւատացին , ու թագաւորին հրա-
մանով մեծ ու սլափիկ՝ ինչուան անբան ա-
նասուններն ալ ծամ պահեցին , ապաշխարե-
ցին . Աստուած ալ պատիժը չխորհեց : Յով-
նան արամած ըսաւ Աստուծոյ . « Ես գի-
տեի որ զջնացողին թողութիւն կուտաս ,
անոր համար փախչիլ կուզէի . ուստի հիմա
առաջըրուց երեցայ . գոնէ մեռցու զիս որ
աղատիմ » : Ետքը գնաց քաղքին գիմացը տեղ
մը նստաւ որ տեսնէ թէ քաղաքը կըկործա-
նի : Աստուած ալ հոն գողմենի մը բուսցուց ,
որ շուտ մը մեծցաւ՝ տերևներովը շուք ըրաւ

Յեռու Յովսէփեկեանց ան սառնի քահա-
նայապետը, Արուսազէ՛մ եկան ու սկսան
քաղաքը նորոգել, և սաճարը շինել:

Հ. Երբոր Հրեայք Բարեւոնէն դարձան,
սաճարին շինելն ինչ կերպով առաջ դնաց.

Պ. Հրէից քովի ազգերը նախանձելով
կարգիւէին, ինչուան որ Ախւրոս մեռաւ:
Ետքը Արաաշէս Թագաւորին սակնը բո-
ւորովին արգիւէլ տաւին, ինչուան Գարեհ
Թագաւորին երկրորդ տարին:

Հ. Գարեհի սակն սաճարն ինչպէ՛ս նո-
րէն կրցան շինել Հրեայք.

Պ. Գարեհ փառաւոր սեղան մը ըրաւ
իշխաններուն. ետքը երբոր դնաց քուն ըլ-
լողու՛ իրեք սենեկապանները, որոնց մէկն
էր Զօրաբարեւն որ Արուսազեմէն նոր դար-
ձեց էր ու հրաման տանելու կըջանար,
խորհուրդ ըրին՝ որ ամէն մէկը զսա մէյմէկ
խելոցի բան գրեն, ու որուն որ Թագա-
ւորն հաւնի, անիկայ մեծամեծ պատիւնե-
րու հասնի. ուստի կարծիքնին գրած կըն-
քած՝ Թագաւորին բարձին տակը գրին:
Առջինը գրեր էր գինին յաղթող է ամէն բա-
նի: Արկրորդը՝ ամենուն յաղթող՝ Թագա-
ւոր. և երրորդն որ Զօրաբարեւն էր, գրեր
էր թէ՛ կիներն են ամենուն յաղթող, և
անոնցմէ ալ զօրաւոր ճշմարտութիւնն է:
Թագաւորն երբոր ան թղթերը կարդաց,
հրամայեց որ ամէն մէկը իր գրածը պատ-
ճառներով հաստատէ մեծամեծներուն առ-
ջի: Երբոր անոնք ըսեցին՝ Զօրաբարեւն
ըսածին հաւնեցան, ու սկսան կանչել.

«Մեծ է ճշմարտութիւնը» : Անտանը Գարեհի ըսաւ իրեն, թէ « Խնդրէ ինչ որ կուզես » : Զօրաբարէն ալ ըսաւ . « Միայն այս կրիանդրեմ որ Երուսաղէմի տաճարը շինուի » . Թագաւորն ալ հրաման տուաւ որ իր գանձէն վճարուի պէտք եղածը : Ասանկով Զօրաբարէնն առաջնորդելովը՝ շրտարուան մէջ լմբնցաւ տաճարը , ու ետքը Աստուծոյ նուիրեցին : Սեղանին կրակն ալ գտան բերին ու սկսան ողջակէզ ընել . զսմատուցանել :

Հ . Զօրաբարէլ տաճարը շինելէն ետե խորայելացոյ սով կիլիսէր .

Պ . Եզրաս քահանան . Գարեհի յաջորդ Երտաշեսին հրամանովն եկաւ Երուսաղէմ , ու Հրէից օրէնքները սորվեցուց , և ուրիշ կարգեր կանոններ ալ դրաւ : Ետքը՝ Աէեմին որ Թագաւորին կըծառայէր , և իրեն շատ սիրելի եղաւ , հրաման տուաւ , ու գնաց Երուսաղէմին պալիսայները շինել տուաւ : Թէպէտ շատ Զանացին քովի ազգերուն իշխաններն արգիլէլ , բայց չկրցան :

Հ . Սեղանին կրակն ինչպէս և ուստի գտան .

Պ . Հրէից Բարեւոն գերի երթալու ատեննին Երեմիա մարգարէն ողջակիզաց սեղանին սուրբ կրակն որ միշտ վտռ կըսա . հուէր , Երուսաղէմին արևելեան կողմը ցամաք հորի մը մէջ պահէլ տուաւ : Աէեմին աս բանիս սեղեկանալով՝ մարգ խրկեց որ երթան հանեն . գնացին , թանձր պղտոր ջրէն զատ ուրիշ բան չգտան : Աէեմի հրա-

մայնց որ ան պղտոր ջուրը բերեն . ու երբ որ պատրաստած ողջակեզին վրայ լեցուցին , արևը սեղանին վրայ ծածկուն պէս՝ սկսաւ վառիլ , ու ողջակեզը շուտ մը երեցաւ : Ետքը Նեեմի ան հորուն մէջի բոլոր ջուրը հոն քարերու վրայ թափել տուաւ որ նորէն բարնկեցաւ ու ողջակեզը բոլորովին լինցաւ : Արտաշէս երբոր ըսեց առ հրաշքը , հրաման հանեց որ ան հորուն չորս գին պատ քաշեցին ու կըպատուէին ան տեղը :

97.

Հրէից աշտիւն Պաշտեալի Բարձր-Թեմին :

Հ . Ազրասէն ետքը ով եղաւ Հրէից իշխեցող .

Պ . Արկու հարիւր երեսուն տարիի չափ քահանայապետներ կառաջնորդէին . ետքը մեծն Ազեքսանդր տիրեց բոլոր աշխարհքիս . ու երբոր չորս բաժին եղաւ Ազեքսանդրի տերութիւնը , Հրէաստանը Պաղտմէոս Ստաներ Ազխաթայոց թագաւորին տակն ինկաւ , և անոր յաջորդները կիշխէին . և Պաղտմէոս Փիղոսպատոր թշնամութիւն կապելով Հրէից հետ , հրաման հանեց որ իր տերութեան տակն եղած Հրէաներէն ով որ կուսք չպաշտէ , Ազեքսանդրիս Ժողովէն՝ ջարդելու համար :

Հ . Պաղտմէոս Փիղոսպատոր ինչ պատճառաւ Հրէից հետ թշնամացաւ .

Պ . Անգամ մը երբոր Արուսազէմ եկաւ ,

Աստուծոյ զոհ մատուցանելէն ետքը՝ հե-
տաքրքրութեամբ սրբութիւն սրբոցն ալ
ուղեց տեսնել. թէպէտ շատ գեմ կեցան,
բայց ճար չեղաւ՝ մտաւ. և մէկէն սագին
անգին զարնուելով անդամալոյժ ինկաւ
գեախնը. հասան ծառաները, դուրս քա-
շեցին, խել մը առնէն հաղիւ վրայ եկաւ:
Երբոր ետ դարձաւ, բարկացած՝ հրաման
հանեց որ իր տերութեան տակն եղած հը-
րեաներն ամէնքն ալ կուօք պաշտեն, և
յանձն շառնոյր կապած Աղէքսանդրիա
տանին: Ասանկով շատ հրեաներ մեծ ու
պզտիկ տարին Աղէքսանդրիա հրապարակի
մը մէջ, ու եօթը հարիւր փիղ պատրաս-
տեցին՝ որ կատղեցուցած վրանին թողուն,
ու իրենք տեսնելով անոնց ջարդը զուարճա-
նան: Հրեայք սկսան ազօթքի ու պաղատան
քի. և Աստուած երկու իրեք որ թագա-
ւորին քունը ծանրաշընելով անոնց ջարդը
արգիլեց. ետքը նոյն օրն ալ որ փիղերը
թողուցին, երկու հրեշտակ՝ որ միայն Հրէից
կերենային, մէկ խռովութիւն մը ձգեցին
զօրքին ու փղերուն մէջ, որ փղերն սկսան
զիրենք ջարդել, և զօրքը փախչող փախչոյն
եղան: Թագաւորին ալ միայր փոխուելով՝
սկսաւ վրանին ցաւիլ ու հրաման տուաւ որ
հոն մեռնելու տեղերնին եօթն որ իր ստա-
կով Հրեայք ուտեն խմեն. և ամենուն սփ-
տոյքը հողալով տեղերնին խրկեց զամէնքը.
ու անկէ ետքը հանդիսաւ ուրախ կապրէին:

Հ. Պաղտմէոս Փիղուպատարին Հրէից հեա
հաշտուելէն ետքը, որչափ առնէն Հրեայք
հանդիսաւ մնացին.

Պ. Անոր մեանե լինեալը մեծն Անտիոքոս
Ասորոց թագաւորը տիրեց Եգիպտոսոց . և
անոր որդւոյն Սեւեկիոս Փիլոպատորին ասեւն
Հրէից խաղաղութիւն տակնու վրայ ըրաւ Սի-
մոն անունով Հրէայ մը, որ անկարգութեան
համար Ոնիա քահանայապետէն յանդիմա-
նուէ լով, նեղացաւ, գնաց Ազոզոնիտոսի՝
ան կողմերուն վերահացութիւն մասնեց թէ
Երոս սաղեմի սաճարը շատ գանձ կայ : Սե-
ւեկիոս իմանալուն պէս՝ Հեղիոգորոս իշ-
խանը Երուսաղէմ խրկեց որ ան գանձն իրեն
բերէ : Ոնիա քահանայապետն ըսաւ . « Իբրաւ
չորս հարիւր քանքար արծաթ ու երկու
հարիւր քանքար ոսկի կայ, բայց որբերուն
ու որբեայրիներուն անըրուսանէն » : Հե-
ղիոգորոս ոտք կը կոխէր թէ « Պէտք է որ
թագաւորին տանիմ » : Ուստի որ մը բունի
սաճարը մտաւ որ ասնէ . բոլոր քաղաքը
կուլային կաղօթէին որ Աստուած որբերուն
ողորմի : Ան ասանը երկնքէն ձիաւոր մը
հասաւ՝ երկու փառաւոր կարիճներով,
աղէկ մը ծեծեցին Հեղիոգորոսը՝ մեանելու
մտա : Անանկ խեղճութեամբ քաշքշէ լով
գորս հանեցին զինքը մեռելի պէս . ու քո-
վններն աղաչեցին Ոնիային որ աղօթք ընէ,
առողջացնէ : Երբոր քահանայապետը զոհ
մատուց, նորէն ան փառաւոր կարիճներն
երևան՝ ըսին Հեղիոգորոսի . « Ընորհակալ
եղիւր Ոնիա քահանայապետին որ Աստուած
անոր աղօթքովը քեզի ողորմեցաւ, և գնա՛ ա-
մենուն պատմէ Աստուծոյ կարողութիւնը » :
Ելաւ Հեղիոգորոս ինքն ալ զոհ մատուց,

ու շնորհակալ ըլլալով՝ սարգէններ տուաւ
Ոնիա քահանայապետին, և դարձաւ ու
մենուն կըստամէր . թագաւորին ալ իմա-
ցուց թէ Աստուած սաշտապան է ան ակզին,
թէ որ կուզես՝ ըսաւ՝ սլաածէլ զմէկը, հոն
խրկէ :

98.

ԱՊՐԻԻԻՆ ԵՊԻՓՈՒՆԻ ԺՆԱՆԱԿԸ :

Հ . Սիմոնէն ուրիշ ո՞վ եղաւ որ Ոնիայի
քահանայապետութեանն աչք անկէ :

Պ . Երբոր Սեւեկիստէն ետքը Անտիոքոս
Եպիփան ըսուած եզբայրը թագաւորեց,
որ հրեական օրէնքին թշնամի էր, Յասոն
Ոնիային եզբայրը շատ ատրք տալ խոստա-
ցաւ թագաւորին, թէ որ ինքն ըլլոյ քա-
հանայապետ . խօսք ալ տուաւ՝ Հրէից կու
սաշտութիւն սորվեցընելու : Անանկով աս
չոր Յասոնն իրեք տարի Հրէից աստուած-
սաշտութիւնն արեւէն ետքը, երբոր Մե-
նեղաւոսին ձեռքովը տարեկան ատրքը Ան-
տիոքոսին խրկեց, Մենեղաւոս զնաց՝ թա-
գաւորին ալ շատ ատրք խոստանալով Յա-
սոնին ակզը ինքն անցաւ :

Հ . Մենեղաւոս Յասոնէն յափշտակած
քահանայապետութիւնը կըրցաւ առաջ տա-
նել .

Պ . Խոստացած ատրքը հասուցանել
չկրնալով, տաճարին արձըթեղէններէն
կաշառք տուաւ Անտիոքոսին թագաւորին
մեծ իշխանին, կէս մըն ալ ծախեց : Երբոր

Ոնիան Մենեղաւոսի գողութիւնը յայանեց,
ան ալ Անդրոնիկոս իշխանին ձեռքովը մօր-
թելառուաւ զՈնիան : Ասոր վրայ ժողովուր-
դը սասաթիկ ցաւելով գանդառեցան թագա-
ւորին . ան ալ շուտ մը Անդրոնիկոսը իշխա-
նական լաթերը հանած բոլոր քաղաքը սը-
արայցնել աաւէն ետև , Ոնիայի սպաննուած
ակզը գլուխը կտրել առուա :

Հ . Անդրոնիկոս իշխանը մեռնելէն ետև
Մենեղաւոս իր քահանայութեան մէջ մնաց .

Պ . Երբոր չէր կրնար աուրքը հասու-
ցանել գնացինքը թագաւորին , Ալուսիմաքոս
եղբօրը յանձնելով որ տաճարէն ոսկի ար-
ծաթ վերցնէ գաղտուկ իրեն իրկէ : Ժողո-
վուրդն իմացան ու կուղէին ձգել Ալուսի-
մաքոսը . ան ալ իրեք հազար հոգի հանեց
անոնց գէմ , կուռեցան ու շատ մարդ ջար-
դուեցան : Ետքը թագաւորին առջև դատաս-
տանի ելան' ու Մենեղաւոս սրտաւորեցաւ ,
բայց ինքը թագաւորին մէկ բարեկամը կա-
շառելով , ամբաստանողները մեռցնել ար-
ւաւ : Եւ աս օրերս քառասուն օր երկինքը
ձիաւոր մօրգիկ կերննային և զէնքերու ձայ-
ներ կըլսուէին :

Հ . Երկինքն երեցած սպաւերազմի նշան-
ներն ինչ վերջ ունեցան .

Պ . Ան օրերն Անախոքոս Եգիպտացոց
վրայ սպաւերազմի երթալով , երբոր ուշա-
ցաւ , ձայն ելաւ թէ մեռեր է : Յատն որ
փախեր էր , շուտ մը քսան հազար հոգւով
եկաւ Երուսաղէմ , շատ մարդ ջարդեց որ
իշխանութեան հասնի Մենեղաւոսը ձգէ .

բայց խնամալով Անտիոքումն ողջ ըլլալը, նո-
բէն փախաւ, և ամենունի ստակի եղած՝ օ-
տար երկիր շարաշար մեռաւ: Անտիոքոս սո-
բաներս խնամալով, կարծեց թէ Հրեայքն
կրմէ կապտամարին, անոր համար կառաղած
բոլոր զօրքով եկաւ, իրեք օրուան մէջ ութ-
սուն հազար մարդ ջարդեց, քառսուն հա-
զար ալ գերի առաւ ծախեց: Ատրը Մենե-
ղաւոսի մտանութեամբը տաճարը մտաւ,
արծաթ՝ օսկի և ուրիշ պահճու բաներ ալ
մեկտեղ հազար եօթը հարիւր քանքարի չափ
ժողովեց տարաւ. մնացած Հրեից ալ վերա-
կացու գրաւ Փիլիպոսոս Փախուցացին շար-
մարդը: Ետև Ապողոնիոսը քսան հազարով
խրկեց որ չափահաս մարդիկը ջարդէ, և
կանայք ու տղայք գերի ծախէ: Ապողոնիոս
գիտնալով թէ Հրեայք շարաթ օրը սուրբ
պահելու համար՝ դէմ չեն գներ, սպասեց
քանի մը օր, ու շարաթ օրը յանկարծ վրա-
նին ելաւ, շատ մարդ ջարդեց:

99.

Ե՞՞նչ է շար-ը և Կ-Պ-ի-ն-ի-ն-ը:

Հ. Անտիոքոս Հրեից սոււած ջարդովը
կշառցան.

Պ. Աւղեց որ մնացածներն ալ ամենքը
կուռք պաշտեն. ուստի Աթենոսիոս ծերու-
նին խրկեց, որ եկաւ կռասպաշտութիւն
կըստովըցնէր, ու մտիկ չընողը սաստիկ
սանջանքներով կըսպաննէր: Անգամ մըն

ալ երկու կին՝ աղաքնին թլխասեղնուն համար տարաւ բարձր պարխապէն վար նեռեւ առաւ : Ասոր համար շատ մարդ առ զինան զին լեռները փախան :

Հ . Անտիոքոսի հալածանքին մեջ ինչ երևեւի գիտուած կըլիշատակուի .

Պ . Եղիազար քահանային քաջութիւնը , Եօթն եղբարց նահատակութիւնը և Մակարայեցոց կարրձութիւնը :

Հ . Եղիազար քահանան ինչ քաջութիւնըրաւ .

Պ . Ասոր բերանը դայլ գրած՝ կուղէին բանիխոզի միս կերցընել որ օրինաց գէմ ընէ . և թէպէտ բարեկամները կըյորգօրէին թէ գաղտուկ ուրիշ միս տան ուտելու , որ դատաւորը խարէ ու տանջանքէն ազատի . բայց ինքն ամենին յանձն չառաւ . « Իննսուն տարուան ծեր եմ , կրտեր , ինչպէս իմ խիզճըս մաքուր պահելու համար՝ ուրիշները դայթակղէցընեմ . գիտնամ որ իննսուն տարի ալ պիտի ապրիմ , չեմ ըներ » . ասանկով ինք զինքն Աստուծոյ յանձնելով հոգին աւանդեց :

Հ . Եօթն եղբարքն իրենց մօրը հետ ինչպէս նահատակուեցան .

Պ . Երբոր զասոնք բանեցին , կրասխպէին որ խոզի միս ուտեն . մեծ եղբայրնին առաջ անցաւ , ըսելով . « Ինչ պարասպ տեղը կըհարցընէք . կրմեռնինք , օրէնքը չեմք թողուր » : Թագաւորը հրամայեց որ շուտ մը անոր լեզուն ու ստուրներուն ձեռուրներուն ծայրերը կորրտեն , գլխուն կաշին ալ

քերդեն՝ երեսին վրայ դարձրենն : Ասոնց մով երբ չմեռաւ , հրամայեց որ կրակին վրայ գնեն , տապկեն : Մէկաւ եղբարքը մօրերնուն հետ սկսան մէկմէկաւ սիրտ տալ որ մեռնին ՚ի փառս Աստուծոյ : Ասեկն երկրորդին գլխուն կաշին քերդեցին՝ երեսին վրայ ձգեցին ըսելով . « Հնազանդէ , խողի միս կեր » . ու մէկաւին սէս տանջեցին . և ինքը հողին տալու տակնը Թագաւորին ըսաւ . « Ո՛վ հստարտ , գուն զմեզ կրմեացընես , բայց Աստուած կրկենդանացընէ » : Երրորդին հրամայեցին որ լեզուն գուրս հանէ , շուտ մը հանեց , առանց վախնալու ձեռուրներն ալ երկնցուց , որ Թագաւորն ալ զարմացաւ մնաց : Ետքը չորրորդը մեռնելու տակնն ըսաւ . « Երանի՛ մեզի որ սխախ յարութիւն առնենք , վայ՛ քեզի որ զրկուած ես անկէց » : Հինգերորդը՝ վեցերորդն ալ նոյն տանջանքով մեռան : Ուզեց Թագաւորն որ գոնէ եօթներորդն անոջը խօսքերով պարգևներ խոստանալով խաբէբայց երբոր ճար չեղաւ , իր մօրը տուաւ որ զինքը խրատէ : Մայրն ալ անոր գէմ սկսաւ յորդորել որ չըլլայ Թէ պատկէն զրկուի , որ երկինքը մէկտեղ ուրախանան : Ան տակնը տղան ալ աւելի սիրտ առած սկսաւ նախատել զԹագաւորը . « Աստուած քեզ սխախ պատժէ՛ ըսելով : Թագաւորն ալ կատաղեցաւ , ալ աւելի տասափի տանջանքով զինքն ալ մայրն ալ մեռուց :

Մ-Ի-Բ-Ե-ՅԻ :

Հ . Մակարայեցիք որոնք են , և ինչ կարըճութիւն ըրին .

Պ . Աստուծոյն էր Մատթիա քահանան որ գնաց Մովսիսի քաղաքը քաշուեցաւ հինգ տղոցմով , անուանին՝ Յովհաննէս , Շմաւոն , Յուդա Մակարէ , Եղիազար , Յովնատան : Անտիոքոս հօն ալ մարդ խրկեց՝ գարձընելու համար , և շատը կըդառնային . բայց Մատթիան համարձակ կըսէր թէ « Մենք կուռք չենք պաշտեր » : Աս ըսելու ատեն ատեսաւ որ անդիէն ուրացող Հրեայ մը եկաւ , կուռքին զոհ կըմատուցանէր , մէկէն վրան վազեց ու ստքով զարկաւ , կուռքին առջևը սատկեցուց : Ան թփրական մարդն ալ որ զինքը կըյորդորէր՝ մեռուց , կուռքը կործանեց , և սկսաւ կանչել . « Ով որ աստուածային օրէնքը կուզէ պաշտպանել՝ քովս գայ » : Ասանկով տղաքն և ուրիշ բարեպաշա մարդիկ ալ մեկտեղ ելան լեւ մը գնացին ու այրերու մէջ կըբնակէին : Թշնամիներն իմացան , շաբաթ օր վրանին եկան , համարձակ հազար հոգի ջարդեցին : Ասոր վրայ Մատթիա շատ ցաւելով , խորհուրդ ըրաւ որ անկէց ետքը շաբաթ օրն ալ աստուածային օրինացը համար պատերազմին : Եւ երբոր աւելի շատցան , սկսան կռապաշտից հետ պատերազմիլ կուռքերը կոր-

ծանկէ, ուրացողները ջարդէլ: Ետքը Մասաթիայի մահը մօտենալով յորդորեց որ դիքն որ քաջութեամբ աստուածապաշտութիւնը նորէն հաստատեն, ու մեռաւ, Շմաւոն եղբայրնին իրենց հօր աեղ գնեւով, Յուդա Մակարէն ալ զօրասպեա, որուն անունովը կոչուեցան Մակարայեցիք:

Հ. Յուդա Մակարէն ինչպէս յաջողութեամբ առաջ կերթար.

Պ. Առջի բերանը վեց հազար հոգւով սկսաւ քաղաքներ գեղեր առնել. Ապողոնիստին գէմալ ելաւ, յաղթեց, շաա կողմուտ առաւ, զինքն ալ սպաննեց ու անոր թուրը ինքը բանեցրնել սկսաւ: Ան սոսկը Ասորեստանի Նրէն զօրասպեան ալ աւելի զօրքով գէմն ելաւ. Յուդա իր քիչ զօրքը յորդորելով որ Աստուծոյ ապաւինին, վրանին վաղեց, և ութը հարիւր հոգի ջարդելով ցրուեց անոնց բանակը:

Հ. Անախոքոս ինչպսա՞ւ՝ երբոր լսեց Յուդա Մակարէին քաջութիւնները.

Պ. Մտածեց որ բոլոր ուժովը գէմեցէ ու Հրէից ազգը ջնջէ. ուստի առաջ գնաց Պարսից վրայ՝ սասկ ձեռք ձգելու համար. Ալուսիաս իշխանին և իր Անախոքոս որդւոյն յանձնելով Հրէից պատերազմին բաները: Ալուսիաս իրեք զօրասպեա ընտրեց՝ Պաղոմեոսը, Նիկանովըն ու Գորգիասը. և քառասուն հազար հեռակա՞ ու եօթը հազար ձիաւոր զօրքով խրկեց որ Անախոքոսին մտածածը կատարեն: Նիկանովը վաճառականներուն հետ խօսք գրաւ, որ բռնեւոր գերիներուն

իննսունը՝ մէկ քանքարի ծախէ իրենց, և կրկարժէր որ միայն ան Հրէից գնովը՝ Հոռոմայեցոց արուելու տարեկան աուրքն կելլէ : Յուգա իրեններն որ սաստիկ վախի մէջ էին՝ յորդորեց նախահարց օրինակներովն ու Աստուծոյ հրաշքներովն : Ետքը բոլոր Հրէից աղօթք ու պար տալըսպրեւով, զօրքը կարգի դրած, Աստուծոյ օգնութեամբը թշնամիներէն տասնումէկ հազար հոգի ջարդեց, և ամբարտաւան Նիկանովը զօրապեան ալ աղքատի հազուստով որ շնանցուի՝ Անախոք փախաւ : Իսկ Հրեայք խել մը կողոսուտ ձեռք ձգելէն ետե՛ գերի գնելու եկող վաճառականներն ալ բռնեցին ու ստակնին առին, և աս կողոսուաններէն՝ Յուգայի հրամանովը շատ բան աղքատաց ու որոց բաժնեցին : Անկէ ետե Յուգա յաղթութիւն մըն ալ ըրաւ Տիմոթէասի և Բաբելոնի դէմ, քան հազար ալ անոնցմէ ջարդեց ու շատ կողոսուտ ալ առաւ :

101.

ԱՅԻՆՈՒՄԻ ԺՆԷ :

Հ. Միւսիասայ խորհուրդն երբոր առաջ չգնաց ինչ ըրաւ .

Պ. Տարիէ մը վաթսուն հազար հեռեակ ու հինգ հազար միաւոր զօրքով Հրեաստան եկաւ : Յուգա տասնումէկ հազարով դէմ էլաւ, ու հինգ հազար հոգի ջարդեց, և բանակը ջրուեց :

Հ . Յուզա Մակարէ Երուսաղէմն ալ չազատեց Մեծօրոսի ձեռքէն .

Պ . Լիւսիասայ յաղթելէն ետև բոլոր Հրէից իշխան ըլլալով Երուսաղէմ գնաց , որ իրեք տարի կաապաշտութեան մէջ մնացած էր , ու բոլոր կուռքերը վերուց կործանեց , և սկսաւ նորոգելու Աստուծոյ սաճարն ամէն բանով . քահանաները զատեց , և Աստուծոյ շնորհակալութեան համար եօթն օր տօն կատարեցին : Ետքը ամէն սահմանակից կաապաշտ ազգերուն ալ յաղթեց Յուզա՝ յայանի Աստուծոյ օգնականութեամբը . անանկ որ անգամ մը հինգ ձիաւոր կորիճներ երեցան որ Յուզան մէջերնին առած կըպահէին , ու թշնամիներուն նեա նեա ելով կըշփոթէին զանոնք՝ որ իրար անցած կըյաղթուէին :

Հ . Անտիոքոս որ Պարսկաստան գնացեր էր՝ երբոր լսեց իր զօրապետներուն յաղթուիլը , ինչ ըրաւ .

Պ . Երբոր խաղք եղած գարձաւ անկէ , սաստիկ կատուեցաւ , ճամբայ ելաւ արտօրնօք Հրէաստանի վրայ սկսաւ գալ որ օր մը առաջ ջնջէ Հրէաները : Ան ատեն Աստուծոյ պատուհասելովը սաստիկ ցաւ մը եկաւ վրան : Երբոր ինքը ցաւին մտիկ ջնեւելով կըքշէր կառքը , յանկարծ ինկաւ , ջարդուբուրդ եղաւ բոլոր մարմինը , և ըսկըսաւ փախ ներսի գին , վրան օրդեր կըվթտային ու կըհոտէր : Ասանկով երբոր ալ մահուան դուռը հասաւ , իմացաւ քաշածներուն պատճառը , անոր համար առա-

Ջադրեց որ եթէ առողջանայ, Հրեայ ըլլայ ու ամէն Աստուծոյ ուղածներն ընէ : Բայց Աստուծոյ ողորմութեան չափը լըցուած ըլլալով թողուց որ չարաչար սատկի :

Հ . Անտիոքոսի մեռնելէն ետեւ Յուդա Մակաբէն հանգստութիւն գտաւ .

Պ . Չէ . վասն զի Վիւսիաս մէկէն անոր որդին՝ Եւպատոր կամ Հօրամոյն ըսուած Անտիոքոսը թագաւոր դրաւ, որ նորէն պատերազմ բացաւ, ու շատ անգամ Յուդայէն յաղթուելէն ետքը՝ հաշտութիւն խօսեցաւ . բայց խիստ քիչ քէց . որովհետեւ Գեմեարիոս իրեն հօրեղբորը որդին եկաւ Անտիոք, սպաննեց Անտիոքոսն ու Վիւսիասը և ինքը տիրապետեց : Ան ատենը Աղկիմոս անունով Հրեայ մը՝ որ ատենով քահանայապետութենէ վերնաուած էր, գնաց թգրին ըսաւ, թէ « Քանի որ Յուդա Մակաբէն ողջ է, Հրէաստան խաղաղութիւն չըլլար » . և ուրիշներուն ալ վրայ տալովը թագաւորը զՎղկիմոսը Բաբելոն զօրապետին հետ խրկեց որ պէտք եղածն ընեն : Անոնք ալ եկան խաբէութեամբ խել մը մարդ Յուդայի բարեկամներէն սպաննեցին . և տեսնելով որ Յուդան պատերազմի կը պատրաստուի, գարձան նորէն թագաւորը գրգռեցին . ան ալ Արկիմոսը շատ զօրքով խրկեց որ զՅուդան բռնէ, ու Աղկիմոսը քահանայապետ դնէ :

Յո՛ր՝ի Կ՛ն՛ը :

Հ. Նիկանովը զՅուզան բռնելու հրա-
մանը կրօցան առաջ տանիլ .

Պ. Նիկանովը տեսաւ որ Յուզա կտրիճ
զօրքով ստարաստուած կեցեր է, սիրա ջը-
րաւ, ուղեց որ հաշտութիւն ընէ . ուստի
Նշուածաղէմ մտաւ և Յուզայի հետ խնա-
մութիւն ալ ըրաւ : Աղիկմոս Նիկանովաց
ըրածները տեսնելով, գնաց թագաւորին
ամրաստանեց . ան ալ սրգողեցաւ, գրեց
Նիկանովին թէ Յուզան կարած ինծի
խրկես : Յուզա լսեց, սահուրտեցաւ .
Նիկանովը փրճառելով զինքը՝ քահանանե-
րուն գնաց, ձեռքը գէտի տաճարն եր-
կրնցրնելով և թէ որ, ըսաւ, Յուզան
ձեռքս չտաք, աս տաճարը կրկործանեմ, մե-
հեան կրչինեմ » : Քահանաները լաքով
սկսան աղաչել Աստուծոյ որ սահէ իր տա-
ճարը :

Հ. Նիկանովը երբոր զՅուզա Մակարէն
չկրօցաւ բռնել, ինչ ըրաւ .

Պ. Նախ քաղքին գլխաւոր ծերը Հաւքս
բռնելու համար հինգ հարիւր զինուոր խըր-
կեց . բայց Հաւքս չուղեւով կուսորաչաներու
ձեռք իյնալ, թուրով ինքնիրեն զարկաւ
ու ինք զինքը սարխապէն վար ձգեց . և չմե-
ռած՝ արիւնլուայ սոքի վրայ ելաւ, գուրս
ինկած փորձախը ձեռքն առաւ, ըսաւ .

« Տէր, այսպէս իրեն հասուցանեա » . ու ինչ
կառ մեռաւ : Ետքը 'Նիկանովը իմանալով
որ Յուդա Մակարէն Սամարիայի կողմերը
զօրքով կեցեր է , կամօք շաբաթ օր իր բո-
լոր ուժովը վրան վազեց : Յուդայ Մակա-
րէն ալ իր զօրքը յորդորելով , տեսիլք մըն
ալ պատմեց թէ Ռիա քահանայապետը
հրէից համար աղօթք կընէր , և ուրիշ
ծերունի մէն ալ կը ցուցնէր , ըսելով թէ՝
« Երեմիա մարգարէն է , որ միշտ ձեզի հա-
մար Աստուծոյ կողաչէ » : Ան ստեն Երե-
միան ոսկիէ թուր մը Յուդայի կուտայ ու
կըսէ . « Առ ու բոլոր թշնամիներդ սպան-
նէ » : Աս տեսիլքով քաջալերուած իրենք
քիչ հոգի ըլլալով , երեսուցուհինդ հազար
հոգի մեռուցին՝ 'Նիկանովին ալ մեկտեղ :
Յուդա հրամայեց որ 'Նիկանովիայ գլուխը
և աջ ձեռքը կտրեն , որ բերին տաճարին
առջեւը կախեցին :

Հ . 'Նիկանովը մեռնելէն ետև Յուդան
խաղաղութիւն գտաւ .

Պ . Մօտերն ուրիշ զօրաւոր թշնամի մը
չգանուէլով , քիչ մը ստեն գազրեցաւ պա-
տերազմը . և ինքն ալ լսելով հասմայեցոց
մեծ անունը , դեսպան խրկեց , հետերնին
դաշինք գրաւ : Բայց Դեմեար լսելով 'Նի-
կանովիայ մահը , նորէն Բաբելոն Ազկիմոսի
հետ խրկեց : Ան ստեն Յուդայի քով միայն
իրեք հազար զօրք դանուէլով վախճան ցրուե-
ցան , և միայն ութը հարիւր ձիաւոր մնաց .
անոնք ալ կըսէին թէ « Աս անգամ ետ կե-
նանք » : Յուդա ըսաւ . « Աս փախչիլ չեմ

դիտեր ” . և ան ութը հարիւրով առաւօ-
տանց ինչուան իրիկուն պատերազմեցաւ ու
բանակին աջ թևին յաղթեց : Բայց ձախ
թևին զօրքը եկան զիրենք մեջ առին , հոն
ինկաւ Յուզան ու զօրքը ցրուեցան : Ետքը
Շմաւոն ու Յովնաթան եղբարքը անոր մար-
մինը տարին հայրենական գերեզմանը թա-
ղեցին , հրեայք ալ վրան մեծ սուգ ըրին :

105.

Յ-Ն-Թ-ԱՆ , Շ-Տ-ԱՆ :

Հ . Յուզա Մակարէին տեղ ո՞վ եղաւ
առաջնորդ հրեից .

Պ . Առջի բերանը անտէր մնալով , Բաբի-
գէն շատ նեղութիւն քաշեցին . անոր հա-
մար Յովնաթան անոր եղբայրը քահանայա-
պետ ու առաջնորդ դրին : Բաբիգ զան ալ
կուզէր սպաննել . բայց Յովնաթան զօրքով
անապատ տեղ մը քաշուեցան : Բաբիգ
գնաց՝ շարած օր պատերազմ բացաւ . Յով-
նաթան հազար հոգի զարկաւ փախուց :
Երկրորդ անգամ ալ Բաբիգ յաղթուելով
հաշտութիւն ըրաւ ու Անտիոք դարձաւ ,
որովհետեւ Դեմետր թագաւորն ալ Ազեք-
սանգր Եպիփանին ձեռքէն կրփտանար :
Ասանկով Յովնաթան Մաքսիաս նստած ըս-
կրտաւ Ժզվթղը կառավարել . վասն զի Երու-
սաղեմի բերդը գեռ Դեմետրին ձեռքն էր :

Հ . Յովնաթան կրրցա՞ն խաղաղութեամբ
բշէլ իր իշխանութիւնը .

Պ. Իրեն քաջութիւնը հաշակուելով, ուրիշները չէ թէ միայն գէմ չէին ելլեր, հապանակ երկու թագաւոր Գեմեար ու Աղէքսանդր՝ մէկմէկու գէմ Յովնաթանու բարեկամ ըլլալ կը ջանային : Բայց Յովնաթան Գեմեարի անօրէնութիւնները յիշելով, անոր բարեկամական խոսամունքներուն այնչափ չէր հաւատար. մանաւանդ որ Աղէքսանդր զինքն քահանայապետ ճանչնալով ոսկի թագ ու ծիրանի խրկեց իրեն. թէպէտ Գեմեար ալ նորէն բարեկամութեամբ թուղթ գրեց Հրէից, շատ աղաաութիւններ տալով, բայց անոնք հաստատ կեցան Աղէքսանդրի հետ : Ետքը Աղէքսանդր զԳեմեարն սպաննեց. ու Եգիպտոսացոց Պաղոմէոս թագաւորին հետն ալ բարեկամանալ ուղեւով, անոր Աղէոսպատրա աղջիկն իրեն կին առաւ. և երբոր երկու թագաւոր մէկ տեղ Պաղոմայիգ քաղաքը հարանիք կրնէին, Աղէքսանդր զՅովնաթանն ալ հրաւիրեց, ու շատ սրտախ առաւ իրեն. թէպէտ հոն Յովնաթանի վրայ շատ ամբաստանութիւն ընտղներ ալ եղան :

Հ. Յովնաթան ինչուան ետքը խաղաղութեամբ իշխեց Հրէից .

Պ. Քիչ ատենէն՝ մեռած Գեմեար թագաւորին մեծ որդին Գեմեար Նիկանովց՝ իր հօրը տեղը Անտիոք քաղաքն եկաւ նրատաւ. ու Յովնաթանի վրայ բարկացած՝ իր հօրմէն զատուելուն համար, Ապողոնիոս զօրապետն խրկեց վրան ու թը հաղար հետևակով և իրեք հաղար ձիաւորով : Յովնա-

Թան Շմաւոն եղբօրը հետ ասոր հազար զօրքով գէմ ելաւ, ու թը հազարը ջարդեց, և Դադոն կուսքին տաճարը՝ հոն փախչող ներուն վրայ այրեց, ու շատ կողոպուտով Երուսաղէմ գարձաւ: Ազէքսանդրն ալ Յովնաթանի քաջութեանը համար իրեն թագաւորական նշան պարգև խրկեց ու իշխանութիւնը մեծցուց: Բայց Ազէքսանդր սպաննուելէն ետքն որ Դեմեար աւելի զօրացաւ, ինքն ալ Յովնաթանը մեծարեց, ազատութեան գիր տուաւ:

Հ. Յովնաթան ինչպէս մեռաւ.

Պ. Տրիփոն զօրասպետը կուզէր Ազէքսանդրի սղան թագաւոր դնել. Յովնաթան Դեմեարին օգնեց, յաղթել տուաւ. բայց Դեմեար անոր փոխարէն չընելով, ետքը իր զօրքն ալ թշնամանալով փախուցին զինքն ու Անտիոքոսը թագաւոր ճանչցան, որ Յովնաթանին պատիւ ըրաւ: Բայց Տրիփոն Անտիոքոսին ալ թշնամի գարձած, երբոր Յովնաթան անոր օգնելու կերթար, Տրիփոն խաբէութեամբ զօրքը բովէն հեռացրնել տուաւ ու հազար հողւով Պրադոնայիս քաղքին մէջ գոցեց զՅովնաթան, հետը եղած զօրքը ջարդեց, ու ինքն սկսաւ Հրէաստանի վրայ երթալ: Հրէայք եղածին վրայ շատ ցաւելով, Շմաւոնը Յովնաթանի ակզ նստուցին: Տրիփոն խմանալուն պէս՝ Շմաւոնի խրկեց ըսաւ թէ, « Յովնաթան պարտք ունի, վճարեցէք, և իրեն երկու որդիքն ինձի պատանդ տուէք որ զինքը թողում »: Շմաւոն իմացաւ խարդախութիւնը.

բայց ժողովրդէան բերանը չյնալու հա-
մար՝ անոր ուզածնէրը առաւ : Տրիփոն անոնք
առնելէն ետե , Յովնաթանը մեռուց ու ետ
գարձաւ . գնաց Անտիոքոսն ալ գաղտուկ
սպաննել տուաւ ու ինքը թաղաւորեց : Իսկ
Շմաւոն Յովնաթանի մարմինն առաւ , Մով-
զիիմ քաղաքն՝ իր հօրը գերեզմանը գրաւ ,
և վրանին փառաւոր քարէ շինուածք շինեց :

Հ . Շմաւոն ինչպէս քշեց իր իշխանու-
թիւնը .

Պ . Արովհեակ Դեմեար ան առեներ ու-
ժովցեր էր , ընծանէր իրկեց անոր ու աղա-
տութիւններ առաւ , և երկար առեն խաղա-
ղութեամբ կառավարեց : Ետքերը Անտիո-
քոս անուճով մէկը Տրիփոնին յաղթեց , ու
Շմաւոնին հետ սկսաւ թշնամութիւն ընել ,
իւր Աթենքոսիս քարեկամը իրկեց , շատ բա-
նէր կըպահանջէր Շմաւոնէն : Շմաւոն պա-
տասխանեց թէ « Միայն հարիւր քանբար
կուտանք Յուպէ ու Գաղարոս քաղաքնե-
րուն տեղը . ուրիշ պարտք չունինք տալու » :
Անտիոքոս բարկայած՝ շատ զօրքով իրկեց
վրան Կենդերոս զօրապետը , Շմաւոն ալ
իւր երկու որդիքը Յուդա և Յոհան քսան
հազար զօրքով անոնց դէմ իրկեց , որ զա-
մէկքը ջարդեցին ու փախուցին :

Հ . Շմաւոն իր մահուամբ մեռաւ .

Պ . Չէ . Պաղտմոս Աբուբեանց Շմաւո-
նի փեամն վրան նախանձելով , որ մը սեղան
ըրաւ անոր իր քաղաքը , և ուտել խմելէն
ետե՝ Շմաւոնը և երկու որդիքը Յուդա ու
Մատթաթիա սպաննել տուաւ . Անտիոքոսէն

ալ իրեն օգնութիւն ուզեց. և Շմաւոնին մեկալ տղուն վրայ ալ Գաղարա քաղաքը մարդ խրկեց որ սպաննեն. բայց անիկայ առաջուց դաղտուկ խմանալով, ան մարդիկը բռնեց մեռուց ու իր հօրը տեղը նստաւ :

104.

Յ--էլ--ծ :

Հ . Յոհանի կառավարութիւնը ինչպէս եղաւ .

Պ . Ասոր վրայ կըլմըննայ Մակարայեցոց պատմութիւնը . բայց Յովսէպոսին մէջէն գիտենք թէ Յոհան որ Հիւրկանիա գաւառին յաղթելուն համար Հիւրկանոս ալ կըսուի, Պաղտմէսին յաղթելէն ետե՛ հօրը տեղը անցաւ : Եւ Անտիոքոս երբոր բոլոր ուժօժի եկաւ Երուսաղէմ պաշարեց, Յոհան անանկ քաջութեամբ դէմ դրաւ որ անոր ճարը հատած՝ հետը հաշտուեցաւ : Ետքը Անտիոքոս Պարսից դէմ պատերազմի ելլելու ատենը Յոհանն ալ հեան առաւ՝ անոր քաջութեանը համար : Բայց Անտիոքոս երբոր ինքզինքն սպաննեց, Յոհան Հրեաստան դարձաւ, ու իր տերութիւնը ուղածին տէս մեծցուց : Բայց իր ատենը Սաղուկեցոց ու Փարիսեցոց աղանդները տարածուած ըլլալով, Յոհան ետքելը Սաղուկեցոց կողմը բռնեց, և Հրէից ատելի եղաւ :

Հ . Յոհանին ո՞վ յաջորդեց .

Պ . Հինգ տղոցը մէջէն նստաւ Ալիստո-

բուզօսը, և ինքզինքը Հրէաստանի Թագաւոր անուանեց . իր մայրն որ իշխանութեան ետեւէ էր՝ մեռուց, ու իրեք եղբայրները բանտ դնել տուաւ . և մէկաւ Անտիգոնոս եղբայրն՝ որ իրեն Թագաւորութեան ընկեր էր առեր, անգամ մը երբոր պատերազմէն յաղթութեամբ դարձաւ, վրան կարծիք երթալով թէ կուզէ Թագաւորութիւնը յափըշտակել, անողորմօրօք մորթել տուաւ : Բայց տարիէ մը աւելի չքշեց իր իշխանութիւնն ալ . և ուր որ իր եղբօրն անմեղ արիւնք թափեց, հոն հոգին փչեց :

Հ . Արխատորուզոս որն Թողուց իր Թագաւորութիւնը .

Պ . Ինքը զաւակ չունենալով, իր կինը՝ ՂԱղէքսանդրոս Զաննէոս տագրը բանակէն հանել տուաւ, ու հետը կարգուէլով զինքը Թագաւոր դրաւ . որ թէպէտ քաջութեամբ Հրէաստանի սահմանը շատ մեծցուց, բայց իր անգթութեամբը խիստ ատելի եղաւ ամենուն . ուստի զինքը մեռցրնել կրնայէին : Աղէքսանդրոս իմանալով կատակցաւ, և ինչպէս որ կրտսն, վեց տարուան մէջ յետուն հաղար հոգւոյ գլուխ կարեց . մէկ հեղ մ' ալ ութը հարիւր հոգի մեծամեծներէն որ իր ըրած բռնակալութիւններուն վրայ կրխօսէին, բռնել տուաւ, ու ինքը սեղան նստած ուրախութեան ատենը՝ զանոնք խաչի վրայ կախել տուաւ, ու իրենց կնիկները՝ զակրները բերաւ անոնց առջև մօրթել տուաւ : Աղէքսանդրոս ետքերը զինքը գինիի տալով, անոր համար իրեք տարի ալ հի-

ւանգութիւն քաշելէն ետև , իր իշխանութեանը քսանուկ օթներորդ տարին մեռաւ :

Հ . Ազէքսանգրոսին ո՞վ յաջորդեց .

Պ . Իրեն ազաքը Հիւրկանոսս և Արիատորուզոս պղախիկ ըլլալնուն , թագաւորութեան ժառանգութիւնը յանձնեց իր Ազէքսանգրա կնկանը որ Սողոմէ աչկըսուէր . ան աչքահանայապետութիւնը Հիւրկանոսի աւուաւ , և ինքը միայն կառավարութիւնը կրնէր . ինը տարիէն երբոր մեռաւ , իշխանութիւնը բոլորովն Հիւրկանոսի մնաց :

Հ . Հիւրկանոսի կառավարութիւնը ի՞նչ պէս եղաւ .

Պ . Ինքը տկար ըլլալով և իր Արիատորուզոս եղբայրը տաքարիւն , Հիւրկանոսի վրայ պատերազմի ելաւ , յաղթեց , ինքը անցաւ աթոռը : Իրեք տարիէն Հիւրկանոս՝ Արաբացոց Արեւտաս թագաւորին օգնութեամբը փախուց Արիատորուզոսն ու ինքը նստաւ . ինչուան որ Սկաւրոս Հառմայեցոց զորապետն Արիատորուզոսէն չորս հարիւր քանքար առաւ ու Արեւտաս թագաւորն Արուսասողեմէ փախչընելով , նորէն տէրութիւնը Արիատորուզոսի տուաւ : Բայց ետքը Պոմպէոս Հառմայեցոց զորապետն Արուսասողեմն առաւ՝ նորէն Հիւրկանոսի գարձուց , և Արիատորուզոսն իր զաւկընէրովը Հառմբերաւ . և բոլոր Հրեաստան Հառմայեցոց հարկատու ըլլաւ , Անգխաարոսի յանձնելով որ Հրէից տուրքերը ժողովու Հառմայեցոց խրկէ :

Հ . Մտկարայեցոց ցեղէն վերջի թագաւորն ո՞վ եղաւ .

Պ. Անտիգոնոս Արխաորուզոսին որդին, որ ութը տարի Հասկմբանար կենալէն ետև, հօրը հեաբանակն փախաւ, ու Հրէաստան գարձաւ: Բայց ետքը Անգիպարոսի որդւոյն Հերովդէոսի խօսքովն որ կըսէր թէ Անտիգոնոս թշնամի է Հասմայեցոյ, կատարծ Անտիոք քաղաքը տարին վնքն ու գլուխը կտրեցին: Ասով բոլորովն Հրէից իշխանութիւնը վերջացաւ:

Հ. Հրէից ազգը Մակարայեցոցմէ ետև ո՞վ կառավարեց:

Պ. Հերովդէոս, որ Հրէից ազգէն շէր, և խարդախութեամբ Հասմայեցոց ծերակուսին ութը հարիւր տաղանգ ստակ խոստանալով, Օգոստոս կայսեր ձեռքէն բոլոր Հրէաստանի թագաւորութիւնը ինքն առաւ: որուն ասեմը Վրխատոս աշխարհք եկաւ:



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ . Հրեայք երբոր գերութեան գնացին , տապանակն ինչ եղաւ .

Պ . Երեմիա մարգարէն՝ տաճարը չկործանուած՝ գեանի տակ գաղտուկ պահեց տապանակն ու սեղան խնկոցը . ետքը տարաւ Նորաւ լեռը՝ Մովսէսի թաղուած տեղը . և ուր գնելը անյայտ պիտի մնայ ինչուան վերջը :

Հ . Եսթեր ինչու համար թագաւորը և Համանն ալ մեկտեղ երկու անգամ սեղանի հրամցուց .

Պ . Որպէս զի թագաւորին սերը իր վրայ ալ աւելի շարժէ . և Համանն ալ կանչուելով և փառաւորուելով , թէ որ յանկարծ իր ըրած անիրաւութիւնը ըսէ , շփոթի ու չկարենայ խարէութիւն մտածել : Մէյ մըն ալ , որ ըսած ատենը Համանը քովն ըլլալով , թագաւորն ամենեկին կասկածի մը չերթայ :

Հ . Համանը կախուելէն ետքը , Հրեաներն ինչու իրենց թշնամիները ջարդեցին .

Պ . Վասն զի անոնք Հրէից վրայ թշնամութիւն պահելով , միշտ զիրենք ջնջելու ետեւ կը լլային . ուստի Հրեաներն ալ ատեն գտնելով անոնց առաջքը առին , որ իրենց կեանքը ազատեն . անոր համար ալ թշնա-

միներուն հարստութեանը ամենևին չտեսնան :

Հ . Դանիէլ ու իր ընկերներն ինչո՞ւ թագաւորական սեղանէն ուտել չուզեցին .

Պ . Մէյ մը որ թագաւորական սեղանը շատ անգամ Մովսէսի օրինացը դէմ կերակուրներ կը դրուէին . և երկրորդ՝ շատ անգամ Բաբելացիք ան կերակուրներն իրենց կուռքերուն նուիրած կըլլային :

Հ . Տասնուերկու փոքր մարդարէներն ո՞ր ատեն և ինչ բանի վրայ մարդարէացան .

Պ . Շատը հրէից թագաւորներուն ատենը մարդարէացան , Իսրայէլացոց կռապաշտութիւնը յանդիմանելով և Քրիստոսի գալուստը գուշակելով . միայն Յովնան ու Նաւուսթիմոնուէացոց վրայ մարդարէացան . իսկ ետքի իրեքը Բաբելացոց գերութենէ ետքն սկսան մարդարէանալ :

Հ . Հռաքսին ինքզինքն ազաննէն աղէկ բան էր .

Պ . Չէ . թէպէտ և ինքը բարեմտութեամբ ըրաւ որ անհաւատներուն ձեռքը չէյնայ , իր ազգին ալ կարճութեան օրինակ ապա : Անոր համար շատերը զինքն անմեղագիր կընեն :

Հ . Ռափայէլ հրէշտակն ինչպէս իր անունը Աշաբա ըսաւ .

Պ . Վասն զի ան Ազարիային կերպարանքովն երեցաւ՝ որն որ Տօբիթ կըճանչնար . մէյ մըն ալ որ հրէշտակները որովհետեւ մասնաւոր անուն չունին , մարդկանց առջև ինչ անուն որ ուզեն՝ կրնան ըսել :

Հ . Սեղանին սուրբ կրակն որ Արեմիա պահեց , ուսկից եկած էր .


Պ . Ան կրակն էր որ առջի անգամն անապատին մէջ՝ Ահարոնին ողջակեզ ընելու ատենն երկնքէն յանկարծ իջնելով , այրեց ողջակեզը . Ա՞՞՞հ հրամայեց որ ան կրակը միշտ վառ պահեն քահանաներն ողջակիզաց սեղանին վրայ . ուստի ինչուան Բարեւալացոց գերութիւնը վառ մնաց : Ետքը Արեմիայի պահած տեղէն հրաշքով հանեցին , ու անկէ ետե ինչուան տաճարին կործանիրը գիտացաւ :

Հ . Յակոբ նահապետին խոստմունքը թէ Յուդայի ցեղէն իշխան չպակախ ինչուան Քրիստոս , ի՞նչ կերպով կատարուեցաւ .

Պ . Յուդայի ցեղին իշխանութիւնը Գաւթէն սկսելով , ինչուան Սեղեկիա շարունակեց . ետքը Բարեւալացոց գերութեան ատենը՝ Նաբուքոդոնոսոր զՅեքոնիան թագաւորական պատուով կրողահէր . և անոր որդին և Զօրարարէլ թողը՝ ան գերութեան ատենն ալ ամէն Հրէից մէջ առջի պատիւն ունէին և իշխանութեան մէջ էին՝ Նաբուքոդոնոսորայ քովը , և թագաւորութեան իրաւունքով կրվարուէին : Երբոր նորէն Երուսաղէմ գարձան և սկսան տիրել , ան ալ Յուդայի իշխանութիւն էր , որովհետե կրկիրը Յուդայի էր , Ժղճոզը բոլոր Յուդայի . և միայն մէկ քանի հողի ուրիշ ցեղերէն կը գանուէին մէջերնին . և թէպէտ եպիբուն իշխանը Ղևեայ ցեղէն էր , բայց յայտն է որ Յուդայի ցեղին անուամբը . որովհետե

Ատուած Ղևեայ ցեղը տասնուերկու ցեղին
մէջէն ընտրե՛ր՝ իրեն առեր էր, անոր հա-
մար Ղևեայ ցեղը Թագաւորութիւն չէր
կրնար ունենալ, հրաման ալ չունէր քաղաք-
ներ երկիրներ ստանալու . բայց Յուդայի
ցեղին մէջ Թագաւորելու յարմար մարդ
չգտնուելով, Ատուած իր մարդիկներէն
անոնց առաւ որ իշխանութիւննին հաստատ
պահեն . ասանկով Յուդայի Թագաւորու-
թիւնը ինչուան Քրիստոս գիմացաւ :





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԸԿԸՐԸՆԻՆ



ՄԱՄՆ Ա

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵՆԷՆ

ԽՁՈՒԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ



106.

Ա-ե-դ-մ, ա-յ-ե-լ-բ-ի-ն :

Հ . Ո՞վ փրկեց զմեզ սատանային գերութենէն .

Պ . Աստուած իր անհուն գթութեամբն ու անչափ սիրովը լսեց մարդկանց աղաղակն՝ որ չորս հազար տարի իր ընտրեալնահապետներուն և մարդարէներուն բերնով սոքն ինկած՝ իր սիրոյն գէժըրած յանցանքներնուն թողութիւն կրիսնգրէին : Եւ ուզեց որ եթէ մարդիկ ստեղծման ատեն իր ցուցած սէրը չճանչցան , ուզեց որ փրկելու ատենն իր մեր վրայ ունեցած սիրոյն մեծութիւնը

խիստ յայանի փորձով ցուցրնէ : Անոր հա-
մար ինքն Աստուած մարմին տուաւ , մարդ
եղաւ , ու իր նախատական մահուանին ըզ-
մեզ մահուանէ ազատեց :

Հ . Երբոր Քրիստոսի աշխարհք գալը մե-
տեցաւ , առաջուց նշան մը տուաւ .

Պ . Հերովդէսի թագաւորութեանը երե-
սունուհինգերորդ տարին՝ Եղիսարէթի եր-
կանը Չաքարիա քահանային՝ որ ծերացեր
էր ու աղայ չունէր , որ մը երբոր տաճարը
խունկ կրնատուցանէր , հրեշտակ մը երեցաւ
ու ըսաւ . « Աղօթքդ լսեց Աստուած , Ե-
ղիսարէթ քեզի որդի մը պիտի ծնանի , անու-
նը Յովհաննէս գնես , որ շատերուն ուրա-
խութեան պատճառ ըլլայ , չծնած՝ հոգւով
սրբով լեցուի , և Աստուծոյ առջևէն ել թա-
լով Տողոփրդեան սիրան անոր դարձրնէ .
ուխաւար ըլլալուն համար ալ զգուշացիր
որ գինի և օղի չիմէ » : Չաքարիա երբոր
տարակուսեցաւ ծեր ըլլալուն համար , հրեշ-
տակն ըսաւ . « Ես Գարրիէլ հրեշտակն եմ
որ Աստուած զիս իրկեց . հիմա ինձի շնա-
տալուդ համար համր ըլլաս ինչուան ան
օրը » : Մեկէն Չաքարիային լեզուն կապուե-
ցաւ . ետքը երբոր տուն գնաց , Եղիսարէթ
յղացաւ , ու փառք կուտար Աստուծոյ :

Հ . Յիսուսի ծնունդը Յովհաննէսի ծնըն-
դէնէն սրչափ ետքը պիտի ըլլար .

Պ . Հինգ ամիսէն ետե Գալիլեայի Նա-
զարէթ քաղաքը՝ ուր էր կոյնի Մարիամ
նշանած Յովսէփայ արդարոյն հեար՝ եկաւ
Գարրիէլ հրեշտակը Մարիամու ըսաւ .

կրօնին : Եսև հօրը հարցուցին , ան ալ տախ-
տակի մը վրայ գրեց , թէ Յովհաննէս է ա-
նուներ . ան ասէն լեզուն ալ արձակուեցաւ .
ու հոգւով սրբով լեցուած սկսաւ Օրհնեալ
Գէշ Աստուծոյ Իւրայեւէի օրհնութիւնը ըսել :
Իսկ Յովհաննէս սրբակուց անասաւ քա-
շուեցաւ ինչուան քարոզութեան ատենը :

107.

Ծնունդ :

Հ . Սուրբ Յովսէփ ինչպէս իմացաւ Մա-
րիամու հրաշալի յղութիւնը .

Պ . Դրսի նշաններէն տեսնելով , և չգիտ-
նալով թէ հոգւով սրբով է , շատ շփոթե-
ցաւ , բայց ինքն արդար ըլլալով , ուզեց
գաղտուկ քովէն ճամբել : Ասանկ մտածե-
լով երբոր քունը տարաւ , հրեշտակ մը ի-
մացուց ինչ ըլլալը , և անունը Յիսուս դնես
ըսաւ , յիշելով Ասայի մարգարէին ըսածը
թէ « Ահա կոյս յղասցի և ծնցի որդի , և
կոչեացեն զանուն նորա Կամանուէլ , որ
թարգմանի՝ ընդ մեզ Աստուած » : Ասոր
վրայ Յովսէփ շատ ուրախացաւ :

Հ . Յիսուսի ծնունդն ինչպէս եղաւ .

Պ . Արովհեան մարգարէներն ըսեր էին
որ Բեթղէճեմ քաղաքը պիտի ծնանի Քրիս-
տոս , Հռոմայեցոց Օգոստոս կայսրը հրա-
ման հանեց որ ամէն մարդու ցեղն ու քա-
ղաքը գիր անցուի : Յովսէփ ալ Բեթղէճեմ-
ցի ըլլալով եկաւ Բեթղէճեմին գրսի դին

ախոսի մը մէջ իջաւ . հոն ծնաւ Յիսուս
գիշեր ատեն . Աստուածածինն ալ զինքը
խանձարբով պատեց ու մտերի մէջ գրաւ :
Մն կողմերը հովիւներ կային , ոչխարներ կը
պահէին . անոնց ալ յանկարծ հրեշտակ երև-
ցաւ ու ըսաւ . « Մի վախէք , ուրախացէք ,
այսօր ծնաւ ձեր փրկիչը , գնացէք անսէք
մտերին մէջ » : Աս ըսելու ատեն ուրիշ ան-
համար հրեշտակներ ալ երևցան ու սկսան
օրհնել զԱստուած՝ ըսելով . « Փառք 'ի բար-
ձունս Աստուծոյ , և յերկիր խաղաղութիւն ,
'ի մարգիկ հաճութիւն » : Ասքը հովիւնե-
րը վազէցին եկան , գասն . Յիսուսը մտե-
րին մէջը , երկրպագութիւն ըրին . և ով որ
անոնցմէ կըսէր , կըզարմանար : Իսկ ութե-
րորդ օրը թլփասակցին ու անունը Յիսուս
դրին :

Հ . Հովիւներէն ուրիշ մարդ չգանուե-
ցաւ որ գայ Յիսուսը անսնելու .

Պ . Աստուած Հրէից անհոգութիւնն ե-
րեսնին տալու համար՝ հեռու աշխարհքէ
խրկեց իրեք մտերն որ աստղի երեւալէն
գուշակելով Յիսուսի ծնունդը , եկան ու
սկսան Նբուսաղեմի մէջ հարցնել թէ « Ա՛ր
է՛նօր ծնած թագաւորը » : Հերովդէս անոնց-
մէ լսելով շփոթեցաւ . կանչեց Հրէից կար-
գացողները , հարցուց . անոնք ալ ըսին .
« Միքիս մարդարէն կըգրէ թէ Բեթղեհէմ
քաղաքը պիտի ծնանի » : Մն ատեն Հերով-
դէս դադառակ կանչեց մտերը , ասքս-
պրեց իրենց որ եթէ գանեն աղան , իրեն ալ
խնայրենն որ ինքն ալ երթայ անոր երկրաւա-

դու թիւն ընէ : Ետքը ան աստղը նորէն երե-
ցաւ իրենց ու ինչուան Յիսուսին բնակած
տեղին վրայ դեպք կեցաւ : Անոնք ալ մտան,
երկրպագութիւն ըսին Յիսուսին ու պար-
գեւ տուին, ոսկի՝ կնդրուկ ու զմուռս :

Հ . Մտքերը դարձան Հերովդեսին՝ Յի-
սուսի ծննդեան տեղը ցուցնելու համար .

Պ . Չէ . վասն զի հրեշտակ երեցաւ ա-
նոնց, ապրասպրեց որ ուրիշ ճամբով երթան
իրենց տեղը :

Հ . Հերովդէս երբոր մտքերէն խարուե-
ցաւ, ինչ ըրաւ .

Պ . Սաստիկ սրգողեցաւ, ու ջարգել աը-
ւաւ բաշոր Բեթղէհէմի և մտա տեղերուն
երկու տարուրնէ վար եղած աղաքը :

Հ . Բեթղէհէմի մանկանց կտտորածէն
Յիսուս ինչպէս ազատեցաւ .

Պ . Առաջուց հրեշտակին խնայընելովը
Յովսէփի զՅիսուս մօրը հետ Եգիպտոս վա-
խուց, ինչուան որ Հերովդէս մեռաւ : Ետքը
նորէն հրեշտակին ըսելովը դարձաւ եկաւ .
տեսաւ որ Արքեղայոսը Հերովդէսի չար
աղան նստեր էր՝ վախցաւ, ու հրեշտակին
առաջնորդելովը՝ Նազարէթ քաղաքը գնաց,
որ Անգիպաս Հերովդէսին իշխանութեանը
տակն էր :

Հ . Յիսուսի ընծայումն ինչպէս եղաւ .

Պ . Յիսուս երբոր քառասուն օրուան ե-
ղաւ, ինչպէս որ օրէնքը կապրասպրէր . տա-
ճարը տարին զինքը՝ երկու տասրակ հետեր-
նին առած, Աստուծոյ ընծայելու համար :
Ան ասենը հոն էր ծերունին Սիմէոն, որուն

Հողին սուրբ յայաներ էր՝ թէ ինչուան որ
փրկիչը շահանէ, պիտի չմեանի. ուրախու-
թեամբ գիրկը առաւ Յիսուան ու ըսաւ .
«Տէր, ինձի ըրած խոստմունքդ կատարեցիր,
ալ թող որ մեանիմ” : Ետքը Աստուածած-
նայ ըսաւ թէ « Ասիկայ շատերուն փրկու-
թեան և շատերուն կորստեան պատճառ պի-
տի ըլլայ, և քու սիրտդ ալ պիտի խոցուի ” :
Աննա մարգարէն ալ, որ եօթը տարի միայն
էրկանը հեռ կեցեր էր, և ութսունու չորս
տարի որբևարի տաճարը կրքնակէր պաքով
և ազօթքով, սկսաւ փառք տալ Աստուծոյ
ու քարոզել Յիսուսին Մեօխա ըլլալը : Ա-
սանկով նորէն Նազարէթ գարձան :

Հ . Հրէից մէջ կարգ էր որ բարեպաշտ
մարդիկ տարին մէյմը տաճար երթան, զո՛հ
մատուցանեն, աս կարգն ալ կրօրահէր Աս-
տուածածին .

Պ . Ամէն տարի Յիսուան ալ մեկտեղ ա-
ռած կերթային . անգամ մը երբոր Յիսուս
տասնուերկու տարուան էր՝ գնացին, ու ետ
գառնալու ատեն՝ առանց իրենց գիտնալուն՝
Յիսուս տաճարը մնաց : Իրենք կարծելով
թէ ուրիշ ճամբորդներու հետ կուգայ՝ հող
չբրին : Օրուան մը ճամբայ ընելէն ետե
փրնառեցին, ու երբոր չգտան, նորէն Երու-
սաղէմ գարձան . իրեք օր չորս դին պարտե-
լէն ետքը՝ տաճարին մէջը գտան որ վարդա-
պեաներուն հետ կրխօսէր ու զամենքը կը-
ղարմացընէր : Սուրբ կոյսը երբոր տեսաւ .
« Արդեակ, ըսաւ, աս ի՞նչ ըրիր մեզի ” .
Յիսուս ալ ըսաւ . « Չե՛ք գիտեր որ ես իմ

հօրս տանը յիջ պիտի ըլլամ” : Ետքը Նա-
ղարէթ գնացին , ու Յիսուս հնազանդու-
թեամբ տունը ապրեցաւ երեսուն տարի ին-
չուն քարոզութեան ատենը , և ամենուն
սիրելի էր :



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Արքայ Յուդայի ցեղին խնամու-
թիւնը վերջացաւ, Հրեայք չէին սպասեր
Քրիստոսի գալուն :

Պ. Կրօնատէրն . բայց կարծէին որ թա-
գաւորական փառքով պիտի գայ ու Հե-
րովգեսի բռնաւորութենէն ազատէ զիրենք,
և բոլոր աշխարհքիս արէ : Ինչպէս որ
Հերովգեսին ալ մեկնեցին կարգացողները,
մտանալով այնչափ մարգարէութիւններն որ
Քրիստոսի խոնարհութեամբ գալուօրը կը
գուշակէին :

Հ. Մտերն սով էին ու ինչպէս աստղով
խնայան Քրիստոսի ծնունդն ու եկան :

Պ. Արարացի կամ Սարայ երկրին իրեք
խնատուն թագաւորներն էին, որ աւան-
դութեամբ գիտէին թէ ասենով աստղ մը
պիտի երևնայ՝ Հրէից մեծ թագաւոր մը
ծնանելու նշան . և երբոր տեսան ան մեծ
աստղը որ երկրիս մօտիկ անշարժ կեցած է,
մեկէն ճանցան որ անիկայ բնական աստղ
չէ . և ՄԴ մամաւոր արգամամբք եկան Արու-
սաղէմ : Երբոր Արուսաղեմէն նորէն ճամ-
բայ ելան, հոն նորէն երեցաւ ան աստղը
որ արևեք տեսեր էին, անոր համար խնա-
շտաւ ու բախացան տեսնելով թէ յոյսերնին

սպարապը շեշաւ : Եւ ինչպէս որ հաւանա-
կան կերևնայ , միայն իրենք կըտեսնեն զայն
աստղը :

Հ . Հերովդէս ինչո՞ւ գաղտուկ ասըստքեց
մտղերուն Քրիստոսի համար .

Պ . Որպէս զի յըլայ թէ բոլոր Հրեա-
ներն ալ իմանան Քրիստոսի ծնունդը :

Հ . Յիսուս երեսուն տարի ի՞նչ ըրաւ .

Պ . Աստուածածնայ և սրբոյն Յովսե-
փայ հնազանդելով կաշխատէր պէտք եղած
գործքերուն մէջ՝ ու հիւսնութիւն կընէր :

Հ . Յիսուս ի՞նչպէս շատերուն կորսուելու
պատճառ պիտի ըլլար .

Պ . Մեր վրայ ունեցած անհուն սիրովք
չափէ գուրս խոնարհութիւն ընելուն հա-
մար , շատերը պիտի արհամարհէին Աստու-
ծոյ անբաւ իմաստութիւնն , ու չարանալով
պիտի չհաւատային իրեն մարդեղութեանը .
ինչպէս որ եղաւ :



մկրտէ Հոգւով սրբով” : Ան օրերը Յն ալ երեսուն տարուան Յորդանան գետը գնաց՝ մկրտուելու համար : Յովհաննէս յանձն չէր առնէր , « Ես քեզմէ պէտք է որ մկրտուիմ ” ըսելով : Յիսուս պի՛ն տուաւ . « Հիմա թող որ արդարութե՛ս պարտքը կատարենք ” : Ասանկով մկրտուեցու Յիսուս , ու ջրէն դուրս ելելուն պէս՝ երկինքը բացուեցաւ , Հոգին սուրբ ազաւնիի կերպարանքով Յնի գլխուն վերայ իջաւ , երկինքէն ալ ահաւոր ձայն մը եկաւ , թէ « Գու՛ ես իմ սիրելի որդիս , քեզի հաւնէր եմ ” :

Հ . Յիսուս մկրտուելէն ետե ի՛նչ ըրաւ .

Պ . Գնաց անապատը , և քառասուն օր ծով պահեւէն ետե անօթեցաւ . ան ատենը սատանան եկաւ զինքը փորձելու : ‘Նախ՝ « Թէ որ Աստուծոյ որդին ես , ըսաւ , հրամայէ որ աս քարերը հաց ըլլան ” . Յիսուս պատասխան տուաւ . « Գրուած է , միայն հացով մարդ չսպրիւր , հասպա Աստուծոյ պատուիրանքներովը ” : Ետքը սատանան զՅիսուս տաճարին աշտարակին վրայ հանեց , ըսաւ . « Թէ որ Աստուծոյ որդի ես , ինքզինքդ վար ձգէ . դրամ է թէ հրեշտակները ձեռքի վրայ բռնած են զքեզ ” : Յիսուս ալ ըսաւ . « Գրած է թէ զԱ՛ճ մի փորձեր ” : Անկէ ետքը լեռան մը վրայ հանեց զՅիսուս , ու բոլոր աշխարհքիս փառքը ցուցնելով ըսաւ . « Ասո՛նք քեզի կուտամ , թէ որ ինձի երկրպագութիւն ընես ” : Ան ատենը Յիսուս ըսաւ անոր . « Կորսուէ քովէս՝ սատանայ . միայն Աստուծոյ պէտք է երկիր .

պողանել ” : Ետև հրեշտակներն եկան
Յիսուսի կրծառայէին :

Հ . Յիսուս սատանայէն փորձուէլէն ետ
քը ինչ բրաւ .

Պ . Անապատէն դարձաւ որ քարոզէ , ա-
շակերաններ ժողովէ . և Յովհաննէս մկրտիչք
հեռուէն ղինքը տեսնելով , իր աշակերանե-
րուն ըսաւ . « Ահա աս է իմ ձեզի քարոզած
դառն Աստուծոյ Քրիստոսը ” : Աս որ լսե-
ցին անսնցմէ երկուքը Յիսուսի ետեկն գնա-
ցին . որոնց մէկը Անդրէասն էր՝ Պետրոսի եղ-
բայրը :

Հ . Յիսուսի քարոզութեանը մէջ գլխա-
ւոր խրատ անեւ լու դործքերն որոնք են .

Պ . Ասիս գործած հրաշքները , երկրորդ
խօսած առակաները , երրորդ ըրած վարդա-
պետութիւնները , և չորրորդ երկայնամիտ
համբերութիւնը :

110 .

Հ . Յիսուսին առջե ըրած հրաշքն որն
եղաւ .

Պ . Ան օրերը հանդիպելով Վանա Ղալի-
լեացոց հարսնիքը , և հոն Աստուածամայրը
հրաւիրուած ըլլալով , Յիսուս ալ կանչուե-
ցաւ իր աշակերաներովը : Երբոր գինին
պակակցաւ , Աստուածամայրն ըսաւ իրեն՝
Թէ « Գինի չունին ” . Յիսուս պատասխան
տուաւ , « Ատեն չէ եկած ” : Բայց Աս-
տուածամայրը գիանալով Թէ Յիսուս իր
խօսքը զսնց չառներ , ծառաներուն ստղա-

պրեց որ Յիսուս ինչ որ ըսէ՝ ընեն : Ես հարա
նիքին տունը վեց թակոյիկ կար . Յիսուս հրա
մայեց որ ջրով լեցընեն զանոնք ու տաճա
րապետին տանին : Երբոր համբ նայեցաւ
տաճարապետը , չգիտնալով թէ ուսկից է ,
ըսաւ փետային՝ թէ « Սովորութիւնը չէ՞ս գի
տեր որ առաջ աղէկ գինին կրբաճնեն , և
երբոր ալ խմած կըլան , գէշը կրբերեն ,
գուն աղէկը պահեցիր ու վերջը բերիր » :

Հ . Յիսուս ջուրը գինի ընելէն ետքը ո՞ւր
գնաց .

Պ . Կափառնաում քաղաքն եկաւ . անկէ
ալ քանի մը օրէն զատկին Երուսաղէմ տա
ճարը գնաց , տեսաւ որ կով ոչխար՝ աղաւթի
կրծախէին մէջը , և լոմայափոփներն առու
տուր կընէին , խարազան մը շինեց ու զու
մէկքը ծեծելով դուրս վարնաեց , ըսելով
թէ « Իմ հօրս տունն առուտուրի տուն մի
ընէք » : Հրեաները նեղացան թէ ի՞նչ իրա
ւունք ունի տասնկ բան ընելու . Յիսուս ալ
իրենց ըսաւ . « Քակեցէք ատ տաճարը , ու
ես իրեք օրուան մէջ նորէն շինեմ » : Հրեա
ներն ալ ըսին թէ « Քառասունու վեց տարի
քշեց ասոր շինուածքը , դու ի՞նչ կըխօսիս » :
Չխնայան որ ինքն իր մարմնոյն համար կըսէր :
Ես զատկին շատ մարդիկ իրեն հաւատացին ,
տեսնելով իրեն ըրած հրաշքերը . որոնց
մէջն էր՝ Եփեզեմսն ալ : Ետքը գեղ ՚ի Յոր
դանան սկսաւ երթալ , ու իրեն աշկերանե
րուն հեա մկրտութիւն ընել . և աս բանիս
նախանձեցան Յովհաննու աշկերաները :
Բայց Յովհաննէս անոնց խնայուց թէ ան է

Ճշմարիտ Մեսիան, անոր համար իրեն աշա-
կերաներն ալ սկսան Յիսուսին ետեկն եր-
թալ, և Հերովդէան ալ Յովհաննէս մկրտիչը
բանա դրաւ՝ զինքը խրատելուն համար :

Հ. Յիսուս երբոր լսեց Յովհաննէս մը-
կրտչին բռնուիլը, ինչ ըրաւ .

Պ. Ինքն ալ ան կողմերը թողուց, նորէն
Գալիլէա եկաւ: Ճամբան երբոր Սամարացոց
երկրէն կանցնէր, կէս օրուան գէմ հոգնած՝
հօրու մը քով նստաւ որ քիչ մը հանգստի: Ան
տաները Սամարիա քաղաքէն կին մը եկաւ ջուր
տանելու. Յիսուս ալ անոր ձեռքէն խմելու
ջուր ուզեց. անկէ խօսք բացուելով, կինը
Յիսուսի հաւատաց, ու վաղեց քաղաքը քա-
րողեց զինքը: Սամարացիք ալ եկան զՅիսուս
քաղաքը տարին, հաւատացին իրեն ու աղա-
ջեցին որ երկու օր ալ կենայ քովէրնին. և
ան տաները տուած խրատներուն համար
սկսան ըսել, թէ «Աս է աշխարհքիս ճշմարիտ
փրկիչը»:

111.

Հ. Յիսուսի երկրորդ հրաշքը ո՞րն է .

Պ. Երբոր ՍամարիայէնՆազարէթ իր քա-
ղաքը գնաց, ու հոն Հրէից ժողովարանը մը
տաւ, առաւ որ կարգայ Ասայեայ մարգա-
րետութիւնը, երբ ան խօսքը հանգիստեցաւ
որ կըսէ « Հոգի տեսան ՚ի վերայ իմ », իր
վրայ մեկնեց, ու Հրէից կուրուծեանը վրայ
խօսեցաւ: Ասոր վրայ Հրէայք անանկ սրը-
գողեցան, որ բանեցին քաղաքէն դուրս լե-
ռան գլուխը հանեցին, և անկէ վար ձգել

ու մեռցնել կուզէին . բայց Յիսուս մէջեր
նէն ելաւ գնաց Գալիլեա :

Հ . Յիսուսի երբորդ հրաշքը սրն է .

Պ . Գալիլեայի մէջ իշխանի մը տղան
հիւանդ ըլլալով , հայրը եկաւ՝ կաղաչէր
Յիսուսին որ կափառնաում գայ , իր որդին՝
որ մեռնելու վրայ է՝ բժշկէ : Երբոր Յիսուս
հանգարտ սկսաւ երթալ , անիկայ կարտոր-
ցնէր որ տղան չմեռած՝ հասնի : Յիսուս
գարձաւ ըսաւ իրեն . « Գնա՛ , որդիդ ողջ է » .
մտրդն ալ հաւտաց ու ելաւ գնաց : Ճամբան
ծառաները գիմացն ելան՝ աւեախ տալով
թէ « Որդիդ աղէկցաւ » : Անտոնը հարցուց
խնայաւ որ Յիսուս՝ ողջ է ըսելուն սէս՝
բժշկուեր է . անոր համար անով տեղով
հաւտաց Յիսուսի : Ետքը Յիսուս ալ կա-
փառնաում գնաց , քարոզելով շատ հիւանդ-
ներ ու գիւհարներ բժշկեց :

Հ . Յիսուսի չորրորդ հրաշքը սրն է .

Պ . Անգամ մը Գալիլեա Գեննեսաբէթ
ծովուն քով ժողովուրդը խիտաշատ ըլլալուն ,
հոն որ երկու սարսապ ձկնորսի նաւեր կայ-
ին , մէկը Սիմոն Պետրոսին , մէկալը Յակո-
բոսի և Յովհաննոս՝ Զերեգէոսին որդ-
ւոցը , Յիսուս Պետրոսին նաւը մտաւ ու ան-
կէ քարոզ խօսեցաւ : Ետքը Սիմոնին ըսաւ
որ թիչ մը բացը ելէ , ուսկանը ձգէ ձուկի
համար . ան ալ ըսաւ թէ « Արդատեա՛ս աս
գիշեր բոլոր աշխատեր ենք՝ բան չենք կրրցած
բռնել . բայց հիմա քեզի կը հնազանդինք » :
Ետքը երբոր ձգեցին , ձուկին շատութենէն
ուսկանը կըստարուտեր թէ որ մէկալ նաւը

չօգնէր . երկու նաւն ալ ընկղմելու չափ ձուկով լեցուեցան : Պետրոս ու մէկաշնոնք առ տեսնելով երբոր սկսան վախնալ, Յիսուս իրենց սիրտ տուաւ, « Ասկէ ետքը պիտի մարդիկ որսաք » ըսելով : Անոնք ալ ամէն բաներնին թողուցին ու Յիսուսին ետեէն գնացին :

Հ . Յիսուսին հինգերորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Գալիլէայի ծովէն Գերգեսացոց երկիրն անցնելու ատեն նաւուէն մէջն սկսաւ քնանալ : Յանկարծ սաստիկ ալէկոծութիւն ելաւ . աշակերտները վախցած՝ արթնցուցին, « Ազատէ մեզ » ըսելով : Յիսուս ալ արթնցաւ « Թերահաւատներ՝ ըսաւ, ինչո՞ւ այդչափ կը վախեք » : Ետքը ծովուն Գադրէ ըսաւ . մէկէն հանդարտեցաւ : Ամէնքն սկըսան զարմանալ թէ « Աս ո՞վ է որ ծովուն կը հրամէ » :

Հ . Յիսուսի վեցերորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Գերգեսացոց երկիրը հասածին պէս՝ գերեզմանէն երկու կտաղած մերկ գիւահարներ գիմացն ելան ու կրկանչուրուտէին, « Յիսուս որդի Ասաուծոյ, ինչո՞ւ զմեզ կը տանջես » : Ասան զի Յիսուս կը հրամէր որ ելլեն սատանաներն ան մարդիկներէն : Անուննին որ հարցուց, Ալեգէոն է ըսին . ետքը Յիսուսի աղաչեցին որ զիրենք գժտիք չխրկէ, հապա հրաման տայ որ ան կողմերը արծող խոզերուն փորը մանեն : Հրամայելուն պէս գնացին . ու խոզերն որ երկու հազարի չափ կային՝ գիւահարեցան ու վազելով ծովը թափեցան՝ խոզուեցան : Պահապանները

վախան գնացին քաղաքը պատմեցին . քաղաքացիք ալ եկան աեսան , ու վախնալով Յնի աղաչեցին որ ելէ երթայ : Գիւահարներուն մէկը կուզէր Յիսուսի հետ երթալ . բայց Յիսուս՝ « Տունդ դարձիր , ըսաւ , ու պատմէ Աստուծոյ ողորմութիւնը » :

112 .

Հ . Յիսուսի եօթներորդ հրաչքը ո՞րն է .

Պ . Գերդեասացոց գիւահարները բժշկելէն ետեւ Վափառնաում գնաց . և երբոր տան մը մէջ կըքարոզէր , անդամալոյծ մը բերին , աեսան որ այնչափ բազմութենէն շէն կըրնար ներս խտթել , տանը ծածքը քակեցին ու անկէ անդամալոյծը Յնի առջին իջուցին : Յիսուս աեսնելով ասոնց հաւատքը , « Արդեակ , ըսաւ անդամալուծին , թողութիւն ըլլայ մեզքերուդ » : Հոն գանուած կարգացողներն սկսան դատել Յիսուսը « Հայհոյութիւն ըրաւ » ըսելով . Յիսուս ալ անոնց միտքն իմանալով , հարցուց իրենց . « Ա՞րք գիւրին է , մեզքերուդ թողութիւն ըլլայ ըսելք , թէ ելի մահի՞՞դ առ ու գնա ըսելք » : Ետքը դարձաւ հիւանդին « Ելի ըսաւ , առ մահի՞՞դ ու աուն գնա » : Անդամալոյծը մէկէն ելաւ , շաղկեց մահի՞՞՞ն ու աուն գնաց : Ասով իմացրնել ուզեց որ անդամալոյծ բժշկողը թողութիւն ալ կըրնայ տալ : Ամէնքն ալ զարմացան մնացին :

Հ . Յիսուս ամէն օր կերակուրն ո՞ւր կուտէր .

Պ. Ուր որ հանդիպէր : Անդամ մըն ալ մաքսատան առջևէն անցնելու տակն, տեսաւ Մատթէոս մաքսաւորը , « Եկո՛ ըսաւ ետեւէս » . ան ալ մեկէն ելաւ գնաց : Ետքը Մատթէոս իր սունը Յիսուսին փառաւոր սեղան ըրաւ , ուր որ ուրիշ մաքսաւորներ ալ կանչուած էին : Փարիսեցիներն ու կարգացողները երբոր լսեցին, սկսան գայթակղել : Յիսուս ալ պատասխան տուաւ թէ բժիշկը հիւանդներուն համար է . ես ալ մեղաւորներուն համար եկեր եմ :

Հ. Յո՞ր ութերորդ և իններորդ հրաշքները որո՞նք են .

Պ. Յայրոս Հրէից իշխանն եկաւ , Յիսուսի ոտքն ինկաւ , ու իր մէկ հատիկ տաննուերկու տարուան աղջկանը համար կաղաչէր որ շուտով գայ՝ ձեռքը վրան դնէ՝ ու բժշկէ , որ մեռնելու վրայ էր : Յո՛ մեկէն ճամբայ ելաւ . երթալու տակն տեսաւս կին մը որ տաննուերկու տարի բոլոր ունեցածը բժիշկներու տալով օգուտ մը չէր տեսած , եկաւ գաղտուկ Յիսուսի լաթերուն գպաւ ու շուտմբ բժշկուեցաւ : Յիսուս գարձաւ հարցուց թէ « Ո՞վ ինձի գպաւ » . Աշակերտներն սկսան զարմանալով ըսել թէ « Բազմաւթիւնը քեզ կրնեղէ » . Յիսուս նորէն չորս գին կրնայէր : Աինը տեսաւ որ չճած կուիր , վախնալով Յիսուսի ոտքն ինկաւ ու պատմեց . Յիսուս ալ իրէն սիրտ տուաւ ու ճամբեց : Անդիէն Յայրոսի անէն մարդիկ հասան՝ ըսին թէ « Աղջկից մեռաւ , վարդապետը մի աշխատեցնէր » : Յիսուս

Յայրութիւն « Դու մի վախեր ըսաւ . միայն
հաւատա » : Երբոր տունը հասան , լալկան
ներն ու գոռում գոչումը տեսնելով , « Ի՞նչ
չփոթեր էք ըսաւ . աղջիկը մեռած չէ , բուն
է » : Անոնք աս խօսքիս վրայ սկսան խնայալ :
Յիսուս միայն իրեք աշակերտներն ու ծնող
քը հեան առած՝ գնաց աղջկանը ձեռքէն
բռնեց , « Ելի ըսաւ » . մեկէն ելաւ աղջիկը :
Յիսուս հրամայեց ծնողացն որ կերակուր
տան որ ուտէ :

Հ . Յիսուսի տասներորդ հրաշքը զորն է .

Պ . Զատկի տօնին Յիսուս Երուսաղէմ
որ գնաց , հոն Պրոպատիկէ կամ Բեթ հեզդա
աւազանին քովը շատ հիւանդներ կրասպանին
որ տարին անգամ մը երբոր հրեշտակ Աս-
տուծոյ իջնայ ջուրը խառնէ , իրենք մէջը
նեւտուին . և ով որ ամենէն առաջ կիյնար ,
ան միայն կրթչիուէր : Մէկը կար որ երե-
սունեւթը տարուրնէ՝ ի վեր ան ջրին քով
կրասպանէր . Յիսուս հարցուց իրեն թէ
« Կուզէս ողջըննալ » : Ան ալ ըսաւ , « Տէր ,
զիս աւազանը ձգող մը չունիմ » : Պատաս-
խան տուաւ Յիսուս . « Ելի , մահիճդ առ
ու գնա » : Ան ալ մահիճը շալկեց ու գնաց :
Հրեաներն սկսան սրդողիլ թէ ինչու շարած
որ մահիճը վերցուցեր կրտանի : Պատասխան
տուաւ թէ « Իսրթչիոզն ըսաւ ինձի » : Անոնք
հարցուցին թէ « Ո՞վ է անիկայ » . բժշկուողը
չէր գիտէր : Ետքը տաճարին մէջը Յիսուս
իրեն հանգիստեցաւ ու ըսաւ . « Մէյմըն ալ
մեղք մի ըներ որ ալ գէշ հիւանդութիւն
չգայ վրագ » : Մարդը գնաց Հրեաներուն

պատմեց թէ Յիսուս էր զինքը բժշկողը : Անոր համար Հրեաներն ալ սկսան Յիսուսը հալածել . Յիսուս փախչելու տեղը՝ իրենց սկսաւ խնայրնել թէ ինքն որդի Աստուծոյ է . անով աւելի կատղեցան Հրեաներն ու զինքը մեռցրնել կուզէին :

Հ . Յիսուսի մետասաներորդ հրաշքը որն է .

Պ . Շարաթ օր մը արաւերուն մէջէն կանցնէր . աչակերաներն անօթեցած՝ ցօրենի հասկեր փրցրնելով ափերնուն մէջը կը շփէին ու կուտէին : Երբոր փարիսեցիքն խանաչով նեղացան, Յիսուս Գառիթ մարգարէին առաջուորաց հայէն ուտելուն ու քահանաներուն շարաթ չպահելուն օրինակներով զիրենք պատանձեցուց . բայց մեկալ շարաթը Յիսուս ժողովարանին մէջ բարոզելու ստեն՝ փարիսեցիք չար մարով հարցուցին իրեն թէ « Շարաթ օր բժշկութիւն ընել կըլլայ » : Հոն աջ ձեռքը շորցած մարդ մը կար . Յիսուս առջևը կանչեց զինքն ու փարիսեցոց հարցուց թէ « Շարաթ օրը բարիք ընելն ազէկ է՝ թէ չարիք . թէ որ ոչխար մը շարաթ օր փսն խնայ , չէք հաներ . ուրեմն շարաթ օրը մարդ բժշկել ալ կըլլայ » : Ետքը ան մարդուն « Ձեռքդ երկրնցու » ըսաւ . ան ալ երկրնցուց ու բժշկուեցաւ :

Հ . Յիսուսի երկուսասաներորդ հրաշքը որն է .

Պ . Անգամ մըն ալ Յիսուս շարաթ օր ժողովարանին մէջ կին մը բժշկեց՝ ձեռքը վրան դնելով որ տանեւութը տարի սասանայէն

բանուած՝ մէջքը ծռած մնացեր էր: Անտան-
նը ժողովարանին գլխաւորը սրգողեցաւ ժո-
ղովրդեան, ըսելով. « Շարաթը վեց օր բանի
օր է. ան օրերն եկէք բժշկուեցէք, չէ թէ շա-
րաթ օր »: Յիսուս պատասխան տուաւ թէ
« Շարաթ օր անասունը կարծրկէք. հապա
Արբահամու զաւակն որ տասնեութը տարի
ստտանայէն կասուած էր, սէտք չէր արձա-
կել շարաթ օրը »:

Հ. Ով որ ուզէր կրնա՞ր Յիսուսի աշա-
կերտ ըլլալ.

Պ. Թէպէտ ամէն ուզող կրնար Յիսուսի
էտակէն երթալ, բայց ինքն անոնցմէ ընտրեց
տասնուերկու հոգի ու առաքեալ անուա-
նեց. որոնց անունը՝ Սիմոն, որ Յիսուս
Պետրոս անուանեց. Յակովբոս և Յովհան-
նէս՝ Չեբեգեայ որդիքը, որ Բաներեգէս ա-
նուանեց՝ այսինքն Որդիք որտանան. Անդ-
րէաս՝ Պետրոսին եղբայրը. Փիլիպպոս,
Բարթաղիմէոս, Մաաթէոս մաքսաւորը,
Թովմաս, Յակոբոս՝ Ալփէոսի որդին. Թա-
դէոս, որ Յուզայ ալ կըսուէր. Սիմոն կա-
նանացի կամ նախանձայոյզ, Յուզա իսկա-
րիովաացի: Ասոնցմէ զատ եօթանասուն ալ
աշակերտ ընտրեց: Եսև Յիսուս իրենց խրատ
տուաւ, և ինը երանութիւնը իրենց ըսաւ:

115.

Հ. Յիսուսի երեքտասաներորդ հրաշքը
որն է.

Պ. Երբոր առաքեալներն ընտրելէն ետքը

ըննցուց ժողովրդեան տուած խրատներն՝
ու ընանէն վար իջաւ, բորոտ մընկաւ, երկրը
պագուծիւն ընկալի կըսէր. « Տէր, թէ որ
կամիս, կարող ես զիս բժշկել » : Յիսուս ալ՝
կուզեմ ըսելուն պէս՝ բժշկուեցաւ : Ապրա
պրեցիրեն Յիսուս որ մարդու չքսած՝ երթայ
օրէնքին ասպրապրած կարգերը կատարէ :

Հ. Յիսուսի ԺԴ, հրաչքը ո՞րն է .

Պ. Յիսուս կախառնաում գնաց. հոն
հարիւրապետին սիրական ծառան մեռնելու
վրայ էր. բայց ինքն այլազգի ըլլալով, չհա
մարձակեցաւ Յիսուսին գալու ազաչելու .
անոր համար մարդ խրկեց : Յիսուս ելաւ
որ տունը երթայ. հարիւրապետը նորէն
խրկեց ազաչեց որ չաշխատի չդայ : Բայց երբ
որ մտեցաւ, ան ասե՛նը վազեց առջնն ե
լաւ, « Արժանի չեմ որ իմ տունս մանկս,
ըսաւ, հապա մէկ խօսքդ հերիք է բժշկե
լու » : Յիսուս դարձաւ՝ ժողովրդեան ըսաւ,
« Իրաւ կըսեմ որ Իսրայէլացոց մէջ ասանկ
հաւատք չեմ տեսած » : Ետքը հարիւրապե
տին « Գնա, հաւատացածիդ պէս ըլլայ,
ըսաւ » : Ասանկով հիւանդը բժշկուեցաւ :

Հ. Յիսուսի ԺԵ, հրաչքը ո՞րն է .

Պ. Յիսուս աշակերտներովը Նային եր
թալու ասե՛ն՝ գրանը քով տեսնէն որ որ
բեարի կնիկան մը մէկ հատիկ աղան մեռեր էր,
կըտանէին : Յիսուսի գուծը շարժեցաւ,
գնաց գագաղին մօտ, ըսաւ մեռելին. « Ար
դեակ ելի » : Եւստ մը մեռելն ելաւ նստաւ
ու խօսիչ սկսաւ :

Աս Յիսուսի ըրած հրաչքներուն ձայնը

ամէն տեղ տարածուեցաւ : Յովհաննէս մկրտչին ալ քանտին մէջը պատմեցին . ան ալ իր աշակերտներէն երկուքը խրկեց Յիսուսի հարցընելու թէ « Դուն դալու Մեսիան ես » : Յիսուս անոնց առջին ամէն տեսակ բժշկութիւններ ընելով , ապրասպրեց որ երթան Յովհաննէս մկրտչին պատմին : Ետքը Յիսուս Ժողովրդեան առջև Յովհաննէս մկրտիցը գովեց . ու վայ տուաւ Հրէից որ անոր քարոզութեամբը չգարձան :

Հ . Յիսուսի քարոզութեան ատեն առջի խօսած առակը սրն է .

Պ . Օր մը Սիմոն փարիսեցին՝ Յիսուսը հացի հրամցուց : Մեղաւոր կին մը խմանալով որ Յիսուս հոն է , եկաւ ոտքն ինկաւ , կուլար ու արցունքով ոտուրները կը թրջէր , մազերովն ալ կը սրբէր , և ոտուրները համբուրելով , ազնիւ եղով կօծէր : Սիմոնն սկսաւ կասկած երթալ թէ Յնր կնոջն ո՞վ ըլլալը չգիտէր , մարգարէ չէ : Յիսուս անոր մտքն խմանալով , « Սիմոն՝ ըսաւ , մարգու մը երկու հոգի պարտք ունեկին , մէկը հինգ հարիւր գահեկան , մէկալը յիսուն . պարտքին տէրը երկուքին ալ թողուց . հիմա աս երկուքէն ո՞րն աւելի կը սիրէ զպարտքին տէրը » : Սիմոնն ըսաւ . « Արն որ շատ պարտք ունէր » : Յիսուս ալ իրեն պատասխանեց . « Ես քու տունդ եկայ , դուն ջրով ալ չյուսցիր ոտքս , աս կինն արցունքովը թրջեց ու մազերովը սրբեց . դուն ինձի համբոյր մը չաուիր , ասիկայ ոտուրներս համբուրելէն չգաղբիր . եղով գլուխս չօժեցիր , աս անոյշ

եղով օճեց : Ուստի իս շատ սիրելուն համար
Թողութիւն տուի իր շատ մեղքերուն :
Դարձաւ կնկանն ալ ըսաւ . « Հաւատքդ
քեզ փրկեց . գնա՛ ուրախացիր » :

114 .

Հ . Յիսուսի երկրորդ առակն ինչ էր .

Պ . Քաղքէ քաղաք պարտելով ժողո-
վրդեան խրատ խօսելու ասէն . « Սերմանա-
ցանին մէկը , ըսաւ , իր արան որ կըցանէր , ան
հունտերէն որը ձամբու վրայ լէյնալով Թըռ-
չունները կերան , որն ապառաժ տեղուանք
ինկած՝ առանց արմատի տաքէն չորցան , որն
ալ փշէրու մէջն՝ խղզուած մնացին պատու
չտուին : Բայց աղէկ տեղ ինկածներն առատ
պատու տուին , մէկին տեղ երեսուն կամ
վաթսուն կամ հարիւր » : Աս առակս ետքը
աշակերաններուն մեկնեց , թէ « Հունտերը
Ա Մ խօսքերն են , ու ցանած տեղուանքը
մարդկանց սիրան է . աղէկ սիրա ունեցողը
սիրով կընդունի ու համբերութեամբ առատ
պատու կուտայ » :

Հ . Յովհաննէս մկրտիչ ո՞րչափ ասէն բան
ար կեցաւ .

Պ . Երկու տարիի չափ . և թեպէտ Հե-
րովդէս կուղէր զինքն սպաննել , ձանձրա-
ցած անոր խրատներէն , բայց գիտնալով
թէ անիկայ սուրբ մարդ է , կըքաշուէր :
Իսկ երբոր իր ծննդեան օրն իշխաննե-
րուն սեղան ըրաւ , ու առջնին Հերով-
դիայի աղջիկը խաղաց , Հերովդէս այնչափ

հաւնեցաւ որ երգում ըրաւ տալու անոր
ինչուան նաև իր Թագաւորութեան կէտը :
Աղջիկն իր մօրմէն խրատուած՝ Յովհաննէս
մկրտչին գլուխն ուղեց : Հերովդէսի գժարն
եկաւ . բայց չէ ըսելու ամբշնալով, խրկեց
գլուխը կարելքերէլ առաւ : Ետքը իր աշա-
կերաները մարմինը Թաղեցին, ու եկան Յի-
սուսի պատմեցին :

Հ . Յիսուսի ժիւ, հրաշքը ո՞րն եղաւ .

Պ . Գիտնալով թէ Հերովդէս իր ետեւն
ալ ինկեր կըհարցընէ, ելաւ անոր իշխանու-
թեան տեղէն նաւով գէտ ՚ի Բէթսայիգա
գնաց . Ժողովուրդն իմացան, ետեւն գնա-
ցին . ինքն ալ անապատ լեռ մը ելաւ, քա-
րոզ կուտար ու բժշկութիւններ կընէր : Հոն
երկուէն որ եղաւ, աշակերաններն սկսան ը-
սել թէ հրաման տայ Ժողովրդեանն որ եր-
թան կերակուր ուտեն : Յիսուս « Անոնց
ուտելիքը գո՞ւք առէք » ըսաւ : Անորէս
ալ ըսաւ թէ « Հոս մանչ մը կայ, հինգ հաց
ու երկու ձուկ ունի, բայց ան որո՞ւ կըբաւէ » :
Փիլիպպոս ալ ըսաւ թէ « Անոնց երկու հա-
րիւր դահեկանի հաց պէտք է » : Յիսուս
հրամայեց որ Ժողովուրդը ասդին անդին
խտտերուն վրայ նստեցընեն . և ան հինգ
հացը՝ երկու ձուկն օրհնելով ու բաժ-
նելով, հինգ հազարի չափ մարդիկը կշտա-
ցան . ետքը կտորուանքն ալ Ժողովել առաւ,
տասնուերկու սակառի ելաւ, խել մըն ալ
ձուկ : Ասով Ժողովուրդը վրան այնչափ սեր
ձգեցին որ մէջերնին խորհուրդ ըրին զինքը
Թագաւոր գնելու :

Հ. Յիսուսի ՃԷ և ՃԸ հրաշքը սրն է .

Պ. Երբոր հացին շապցնելու հրաշքն ըրաւ ու ժողովուրդն արձակեց, ինքը լեւը քաշուեցաւ ու աշակերաններուն ըսաւ որ նաւով երթան, ինքն ալ ետնէն կուգայ : Երբոր կէս ճամբան հասան, դիչերն ալ կոխեց, սկսաւ սասափիկ ալէկոծութիւն. ան վախին մէջ մէյմալ տեսնեն որ ծովուն վրայէն մէկը կուգայ, սկսան կանչուըսուել : Ան ասեն Յիսուս « Մի վախէք ըսաւ, Ես եմ » . Պետրոս, « Եթէ դուն Ես, ըսաւ, հրամայէ որ քոզք գամ » : Յիսուս Եկո ըսաւ . Պետրոս իջաւ ու ծովուն վրայէն երբոր կըքաշէր, յանկարծ ընկզմելու սէս եզաւ և սկսաւ Յիսուսը կանչել . Յիսուս ալ ձեռքէն բռնեց ու « Թերահաւատ ըսաւ՝ ինչո՞ւ տարակուսեցար » : Ետքը երբոր ինքը նաւը մը տաւ, ծովը հանգարուեցաւ . ու շուտ մը ցումայքը հասան . ան ասեն ամենքն ըսին, « Յիրաւի դուն որդի Աստուծոյ Ես » : Աւրիչ անգամ մըն ալ անաստափն մէջ իրէք որ քարոզ տալէն ետև ժողովրդեան վրայ գութը շարժեցաւ, ու աշակերտացը քով դըսնուած եօթը հացովն ու քիչ մը ձուկովը չորս հազար հոգի կշտացուց . եօթը զամբիղ կատրուանք ալ աւելցաւ :

115 .

Հ. Յիսուսին ՃԹ հրաշքը սրն է .

Պ. Անգամ մը Տիւրոս ու Սիդոն այլապէս քաղցնելուն կողմերը գնաց . բանանա-

ցի կին մը հանգիպեցաւ, սկսաւ կանչել.
«Տէր որդի Դաւթի՛ ողորմէ ինձի» . Յի-
սուս պատասխան չտուաւ . աշակերտները
աղաչեցին որ ճամբէ ան կինը . Յիսուս
ալ ըսաւ, «Ես Իսրայէլացոց կորսուած ոչ
խարներուն համար խրկուած եմ » : Կինը
ինկաւ Յիսուսի ոտքը, կաղաղակէր, «Տէր՝
օգնէ » : Յիսուս՝ « Թող ըսաւ, չվայլեր աը-
ղոցն առջևի հացը շներու տալ » : «Տէր, ըսաւ
կինը, շներն ալ տիրոջը սեղանին փշրանք,
ները կուտեն » : Ան ասեն Յիսուս՝ « Ո՛վ
կին, ըսաւ, հաւատքդ մեծ է, ըլլայ ուղածդ » .
մէկէն անոր գիւհար աղջիկը բժշկուե-
ցաւ :

Հ . Յիսուսի ի ու ին հրաշքը օրն է .

Պ . Առջևը բերին մէկ խուլ ու համր մարդ
մը . Յիսուս բժշկեց ու ասլըսայրեց որ մար-
դու չքուէ . բայց որչափ որ կասլըսայրէր, ճար-
չէր ըլլար, կըզաամէին : Ետքը երբոր Բեթ-
սայիգա եկաւ առջևը կոյր մը բերին, որ
բժշկեց :

Հ . Առաքեալներն ինչ կարծիք ունեին
Յիսուսի աստուածութեանը վրայ .

Պ . Պաղեստինի մէջ Աեսարիայի քովի քա-
ղաքները պտըտելու ասեննին Յն հարցուց
առաքելոց թէ « Եղովուրդը օ՛վ կարծեն
ղիս » . պատասխան տուին թէ « Որը Յովհան-
նէս մկրտիչն է կըսեն, որը Եղիան, որը Ե-
րեմիան, կամ ուրիշ մարդարէներէն մէկը » :
« Իսկ ինչ կարծիքի վրայ էք » ըսաւ Յի-
սուս : Ան ասենը մէկէն պատասխանեց Պես-
րոս . « Իսկ ես քրիստոս Աստուծոյ որ .

գինն ։ Յիսուս ալ ան ասե՛ն երանի տալով Պետրոսին ըսաւ . « Իմ Եկեղեցիս քու վրայ պիտի շինեմ որ հիմանը քարն էս , ու գժոխ քէն ալ չյաղթուիս . արքայութեան բանալիքն ալ քեզի կուտամ » . անկէ ետքն սկսաւ պատմել անոնց Յիսուս իր քաշելու շարչարանքները :

Հ . Յիսուս քարոզութեան ասե՛ն իր աստուածութիւնն ալ յայանի՛նչանով մը չերկեցնուց .

Պ . Քարոզութեան երրորդ տարին Պետրոս՝ Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հեան առած՝ Թափոս լեռն ելաւ : Հոն Յիսուսի կերպարանքը բոլորովին փոխուեցաւ , երեսն արեւու պէս ու հագուստը ձիւնի պէս ձերմակ փայլուն : Մովսէսն ու Եղիան ալ երեցան ու Յնի հեռ խօսեցան իր շարչարանացն ու մահուանը վրայ . իսկ առաքեալները զարմացած կրնայէին : Երբոր Մովսէս ու Եղիա գնացին , Պետրոս սկսաւ Յիսուսի ազաչել որ հոն մնան : Ան ասե՛նը լուտաւոր ամոլ մը ծածկեց զիրենք , ու մէջէն ասանկ ձայն մը եկաւ թէ « Աս իմ սիրական որդիս է , իրեն մօտիկ ըլլէք » : Առաքեալները վախցան , ինկան . Յիսուս զիրենք օտք հանեց ու ասորսպրեց որ չպատմեն ուրիշի՛ ինչուան իր յարութիւնը :

Հ . Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է .

Պ . Երբոր լեռնէն վար իջան , տեսան բազմութիւն աշակերտներուն քով Ժողուած . և անոնցմէ մէկը Յնի առջևն ինկաւ , « Մէկ հաւիտի տղաս , ըսաւ , գիւահարեր է , աշակերտ ,

ներուդ բերի, յերբցան գեր հանել: Յիսուս սրգողելով առջեր բերել առաւ. գիւհահարն սկսաւ կատարել: Յիսուս ըսաւ. « Պիղծ սատանայ, ելի »: Ան առեն արան սատակ տանջուելով ինկաւ, անանկ որ ամենքը մեռաւ ըսին: Յիսուս ձեռքէն բռնեց վերցուց ու ողջ առողջ հօրը առաւ: Ետքը աշակերաններն առանձին Յիսուսի հարցուցին թէ « Մենք ինչու յերբցանք բժշկել ». Յիսուս ալ ըսաւ. « Հաւատք չունենալնուդ համար, և թէ որ մանանեխի չափ հաւատք ունենաք ու լեռանը փոխուէ ըսէք, ակզէն կրփոխուի: Աս ալ գիտնաք որ աս տեսակ գեր միայն պարով ու աղօթքով կելէ »:

Հ. Յիսուս տերութեան տուրք կուտայ.

Պ. Ինչպէս ուրիշ բաները հասարակ մարգու մը պէս կրնէր, ասանկ տուրք ալ կուտար: Եւ անգամ մը երբոր Պեարոսի հարցուցին թէ « Յիսուս աս տարուան տուրքը չիտար ». Պեարոս « Կուտայ ըսաւ ». ու ասն որ մտաւ, Յիսուս Պեարոսի հարցուց թէ « Թագաւորներն իրենց զաւկրներէն կանենն տուրքը թէ օտարներէն »: Պեարոս ըսաւ, օտարներէն. Յիսուս պատասխանեց. « Ուրեմն աշառ են որդիքը. բայց զերենք չգայ թակղէ ցրնելու համար, գնա՛ ծովէն ձուկ բռնելու, և առջի բռնած ձկանդ բերանը բաց ու մէջէն սատեր մը կրգանաւ, աս և իմ ու քու տեղդ տուր ». Պեարոս ալ անանկ ըրաւ:

Հ. Յիսուսի աշակերաններուն տուած խրատներուն մէջ գլխաւորը սրն է.

Պ. Խոնարհութիւնն է : Անգամ մը ճամբան երթալու ատեն աշակերաններուն մէջ խօսք եղաւ թէ Յիսուս երբոր թագաւորէ իրենցմէ ո՞վ մեծ պիտի ըլլայ : Ետքը Յիսուս հարցուց թէ ճամբան ինչ կրխօսէին : Երբոր լսեց իրենցմէ , ըսաւ . « Մեծ ըլլալ ուզողք պզտիկ պիտի ըլլայ » : Պզտի աղայ մըն ալ առաւ գիրկն ու ըսաւ . « Թէ որ աս աղուն պէս խոնարհ ու անմեղ չըլլաք , արքայութիւն չէք երթար » : Աւրիշ անգամ մըն ալ Յիսուսի առջևը մանր աղաք բերին որ օրհնէ . ու երբոր աշակերանները թող չէին տար որ Յիսուսի նեղութիւն չըլլայ . Յիսուս՝ « Թողէք որ գան ըսաւ . արքայութիւնը ստանկ պզտիկներունն է » . ու զանանք գիրկն առաւ , օրհնեց :

116 .

Հ . Յիսուսի ըսած երբորդ առակն ինչ է .

Պ . Անգամ մը եղբայրսիրութեան վրայ խրատ տալով ըսաւ . « Թէ որ եօթն անգամ եղբայրդ քեզի դէմ ընէ ու մեղայ ըսէ , իրեն թողութիւն տաս » : Պետրոս ասոր վրայ տարակուսելով հարցուց թէ « Միայն եօթն անգամ » : Յիսուս ալ ըսաւ թէ « Եօթնանասուն անգամ եօթը » . այսինքն միշտ : Ետքը առակով մըն ալ խմայուց , « Թագաւոր մը քննեց . ըսաւ , թէ ծառաներն իրեն ինչ պարտք ունին . ու մէկուն պարտքը գտաւ տասը հազար քանքար : Ապրտպրեց որ զննքը անով ակզով ծախեն որ պարտքը վճարուի :

Ծառան թագաւորին սոքն ինկաւ, կազա-
չէր որ իրեն ատեն տայ. թագաւորին ալ
գուժը շարժեցաւ, ու բոլոր սարսափն ազատ
ըրաւ զինքը: Ատ ծառան ուրիշէ մը միայն
հարիւր գահեկան առնելիք ունէր. ելաւ
գնաց, սկսաւ ուզել. ան ալ աղաչեց իրեն
որ քիչ մը համբերէ: Անիկայ « Չէ կըսէր, չը-
լար » . ու բռնեց բանա գնել աուաւ: Ուրիշ
ծառաները խղճացին ան մարդուն վրայ, դը-
նացին թիւրին ըսին: Ան ատեն թագաւորը
կանչեց զանիկայ, « Չար ծառայ՝ ըսաւ,
քեզի աղաչելուդ համար տասը հազար քան-
քար սարսափ թողուցի. սէտք չէր որ դուն
ալ հարիւր գահեկան առնելիք թողուիր,
ուստի զինքն ալ կտակեցեք ըսաւ, ինչուան
որ բոլորը հատուցանէ »:

Հ. Յիսուսի ըսած չորրորդ առակն ինչէ.

Պ. Օր մը օրինաց վարդապետ մը հարցուց
Յիսուսի թէ « Ի՞նչպէս կերթըցուի արքայու-
թիւն »: Յն « Պատուիրամքները գիտես, ը-
սաւ, անոնք սոսնէ »: Ան ալ պատասխան
աուաւ թէ « Պատուիրամքին մէջ՝ ընկերդ
սիրէ կըսէ. իմ ընկերս ո՞վ է »: Մտնիկ ըրէ
ըսաւ Յիսուս. « Մարդ մը Երուսաղէմէն
Երիբով կրթալու ատեն աւազակները զար-
կին. անոր ինկած տեղէն քահանայ մը ան-
ցաւ, ետքը զետացի մըն ալ անցաւ, ամենևին
օգնութիւն մը չըրին. ետեկն սամարացի մը
հանդիպեցաւ, մէկէն վերուց, վերքերը կա-
պեց, իր ձիուն վրայ գրած՝ տարաւ պանդոկի
մը յանձնեց. երկու գահեկան ալ աուաւ
պանդոկապետին որ հոգայ զինքը. և ըսաւ

Թէ դարձած ատենս ինչ ստակ ալ որ երթայ՝ կրճարեմ: Գնա՛ ըսաւ Յիսուս, դուն ալ ան սամարացիին տէս ըրէ՛: :

Հ. Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է .

Պ. Երբոր Յիսուս Գալիլեայի ու Սամարիայի մէջ տեղէն կանցնէր, տասը բորոս հեռուէն սկսան կանչել Թէ « Յն, ողորմէ՛ մեզի»: Յն պատասխանեց, « Գնացէք, ձեզ քահանաներուն ցցուցէք ». անոնք ալ բժրահուած գնացին: Ետքը անոնցմէ մէկն որ սամարացի էր՝ եկաւ շնորհակալ եղաւ . Յիսուս զարմանալով հարցուց . « Մէկալնոնք չբժշկուեցան որ չեկան փառք տալու Աստուծոյ ». ու դարձաւ սամարացիին ըսաւ . « Գնա՛, քու հաւատքդ քեզ փրկեց »:

Հ. Յիսուսի աշակերտները միշտ իրեն հետ կրպարակին .

Պ. Երբեմն առանձին ալ կրկնակեր քարոզութիւն ընելու . անգամ մըն ալ երկ երկու խրկեց զսա զսա, որ երբոր դարձան, սկսան ուրախութեամբ ըսել Յիսուսի Թէ « Տէր, քու անունդ որ կուտանք, սասանաներն ալ կը հնազանդին »: Յիսուս ալ պատասխան տուաւ . « Գուք անոր վրայ ուրախացէք որ անուննիդ երկինքը դրուած է »:

117 .

Հ. Յիսուսին սովորական կերակուէն ինչ էր .

Պ. Եղած տեղը ինչ որ դանուէր՝ ան կուտէր . Թէ որ շատ բաներ պատգուստեին՝ չէր

արգիլէր. և թէ որ իրեն հարցնէին, քիչ
հերիք է կրսեր: Ինչպէս անգամ մը Բեթանիա
դեզը Մարթա ու Մարիամ Ղազարի քոյ-
րերուն տունը գնաց: Մարթան կերակուր-
ներ պատրաստել սկսաւ, ու Մարիամ Յի-
սուսի քովն եկաւ, խօսածը մտիկ կրնէր:
Մարթան եկաւ Յիսուսի ըսաւ թէ: « Մա-
րիամն ինձի չօգնէր որ մեկտեղ ըննցընենք
ու էս ալ գամ մտիկ ընեմ»: Յիսուս « Մար-
թա, ըսաւ, գիտցիր որ պարսպ տեղը կաշ-
խաախ, մեզի քիչ մը բան կօզակ. Մարիամի
խրատ մտիկ ընելն ալ աղէկ է »:

Հ. Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է.

Պ. Շարաթ օր մը Երուսաղէմի ճամբած
կոյր մուրացկանի մը հանդիպեցաւ. աշա-
կերանները հարցուցին թէ « Ասոր կուրս-
թիւնը ի՞ր մեղքին պատիժն է թէ ծնողացը
Յիսուս ալ ըսաւ թէ « Մէկունն ալ չէ »: Ե-
բքը Յիսուս գետինը թքաւ, անով կաւ ջ-
նեց, կուրին աչուրներուն քսեց ու հրամայ-
եց որ Սեղովամի աղբիւրն երթայ լուացախ:
Ասանկով կոյրը բժշկուեցաւ: Ճանչուոր-
ները տեսնելով զարմացան, ու կրտարակու-
սեին թէ արդեօք ան է: Փարիսեցիք երբոր
խնացան որ շարաթ օրը բժշկեց, սկսան կու-
րին ըսել թէ « Ան մեղաւոր մարդ է »:
Վոյնն ալ կրսեր. « Թէ որ Աստուծակ չըլլար
անիկայ, չէր կրնար կոյր ծնած մարդ մը բժշ-
կել »: Փարիսեցիք բարկացան վրան ու վալը-
տեցին: Եբքը Յիսուս անոր հանդիպեցաւ.
զինքն անոր ճանչցուց. ան ալ Յիսուսի եր-
կրուագութիւնն ըրաւ:

Հ. Ինչո՞ւ Հրեայք Յիսուսի չէին հաւսար :

Պ. Աստիանձատ ու չարասիրտ ըլլալնուհ համար : Անգամ մը տաճարին սրահին մէջ՝ «Թէ որ մեսիան ես կրուէին Յիսուսի, յայտնէ մեզի » . Յիսուս ալ պատասխան տուաւ, թէ «Աս յայտներ եմ, բայց դուք չէք ուզել ըմանալ որովհետեւ իմ ոչխարներէս չէք, վասն զի ես ու իմ հայրս մէկ ենք » : Հրեաները մէկէն զինքը քարկոծել ուզեցին . Յիսուս աւմնելով որ խօսք չեն հասկընար, մէջերնէն հեռացաւ :

Հ. Յիսուսին հինգերորդ ու վեցերորդ, խօսած առակն ի՞նչ է .

Պ. Արովհետեւ Հրեայք խիստ կրնեղանային որ Յիսուս ցած մարդիկնէ բուն հեա կը վարուէր, Յիսուս ալ անոնց բաս . « Մարդ մը որ հարիւր ոչխարներէն մէկը կորսունցընէ, ան իննսուսուինը կը թողու, ու մէկ կորսուածին ետեւէն կը թայ . և թէ որ գանայ, կու բախանայ » : Ասոր ետեւէն անասակին պատմութիւնն ալ բաս :

Հ. Անասակին պատմութիւնը ի՞նչպէս է .

Պ. Մարդ մը երկու սրգի ունէր . որ մը պզտիկ տղան հօրմէն ուզեց՝ առաւ իրեն ինկած Ժառանդութիւնը, գնաց հեաու քաղաք մը, բոլոր մտեց ու մէկու մը քով ծառայութեան մտաւ՝ խոզ կարածէր, ու անոնց կերած եղջիւրէն կուղէր, ու չէին տար որ ուտէ : Ասանկ խեղճութեան մէջ միայն կու իր հօրը տանը ծառաները որ հանգիստ կապրին . ու սիրա ըբաս երթալ հօրն աղա-

չել որ ծառայի տեղ զինքը տուն առնէ: Երբ որ հայրը զինքը հեռուէն տեսաւ, վազեց վիզը սլլուեցաւ. աղան ամբշնալով « Մեզայ կրտէք, զիս ծառայի տեղ ընդունէ »: Հայրը՝ « Բերէք, ըսաւ, ասոր առջի աղուոր լաթերը հագուցէք » . ու փառաւոր սեղան ըսաւ, գիրցուցած եզը մտրթել տուաւ, որ կորսուած աղան գանուեցաւ: Ան միջոցին մեծ աղան տուն որ կուգար, հարցուց ծառային թէ ինչ ուրախութեան ձայն է. երբ իմացաւ, հորը նեղացաւ, ըսելով. « Այսչափ ատեն քեզի հնազանդեր եմ ու մէկ բան մը ինձի չես տուած, ու դէշ եղբորս այնչափ պատիւ կրնես »: Հայրն ալ ըսաւ « Որդեակ, ամէն ունեցածներս բուկդ են. բայց ասիկայ կորսուած էր ու գանուեցաւ. անոր համար պէտք է ուրախանալ »:

113.

Հ. Յիսուսին եօթներորդ առակն ինչ է.

Պ. Հարուստ մարդ մը լսեց որ իր անասը մտխոզութիւն կրնէ, քովէն հանեւ ուզեց: Տեսեւ որ մամաւալով որ ետքը ապրուստ պիտի չգանէ, կանչեց իր տիրոջը պարտք ունեցողներն ու պարտքերնուն մէկ մասն աւրել տուաւ: Տէրը երբոր լսեց անոր ասանկ խելք բանեցրնելը, գովեց: Ետքը Յիսուս « Դուք ալ, ըսաւ, անոր պէս մէկուն մէկալին թողութիւն տուէք, որ ձեզի օգնեն արքայութիւն երթալու համար »: Բայց ետքը ալ աւելի հաստատելու համար թէ ուրիշ թող

զուլ և ողորմութիւն ընելը խիստ հարկաւոր է, մեծատան առակն ալ ըսաւ :

Հ. Յիսուսին ութերորդ առակն ինչ է .

Պ. Հարուստ մարդ մը հագուած կապուած՝ ամէն օր ուտել խմելու հետ էր . աւնոր դրանը քով կրկենար աղքատ մը Ղազար անունով փշրանքի կարօտ , շներն ալ անոր վերքերը կըլզէին : Մեռան երկուքն ալ մեծատունը դժօխքէն տեսաւ Ղազարը Աբրահամու գիրկը , սկսաւ աղաչել թէ խրկէ իրեն Ղազարն որ մասին ծայրուին իրեն ջուր տայ , որ քիչ մը պապակը իջեցնէ : Աբրահամ ալ « Չըլար ըսաւ . մէյմը միաքդ բեր աշխարհքին մէջ ըրածներդ , և ասոր քաշածները » : Ան տակնը աղաչեց որ գտնէ իրեն եղբարցը խրկէ խմացնէ դժօխքին տանջանքը : Աբրահամ ըսաւ , « Թէ որ անոնք լսած ու կարդացած խրատները չեն պահէր , մարդ մըն ալ յարութիւն առնէ , երթայ իրենց ըսէ , մտիկ չեն ըներ » :

Հ. Յիսուսին իններորդ առակն ինչ բանի վրայ է .

Պ. Աղօթքին հարկաւորութեանը վրայ : Դատաւոր մը կար որ Աստուծմէ չէր վախեր , մէկէ մ' ալ չէր ամաչէր . որբւարի կին մըն ալ կուգար ամէն օր կաղաչէր որ իրեն գասաստանը կտրէ : Օր մը ինքնիրեն ըսաւ գասաստորը . « Ես թէպէտ ոչ վախ ունիմ և ոչ ամօթ , բայց աս որբւարիին գասաստանը տեսնեմ ու ազատիմ ձեռքէն » : « Թէ որ , ըսաւ Յիսուս , անիրաւ գասաստորը շատ աղաչելուն չկրցաւ գէմ դնել , հասցաւ Աստուծ ինչպէս չողորմի աղաչողին » :

Հ. Յիսուսի տասներորդ առակն ի՞նչ է .

Պ. Անգամ մը փարիսեցին ու մաքսաւորը տաճար գնացին. փարիսեցին սկսաւ ազօթել թէ « փառք Աստուծոյ որ գէշ մարդ չեմ, կամ սա մաքսաւորին պէս չարադորժ չեմ, ամէն օրէնքները կը պահեմ » : Իսկ մաքսաւորն աչքն ալ չէր ուզեր վեր վերցընել, ու կուրծքը զարնելով Մեղայ կըսէր : Ետքը ըսաւ Յիսուս. « Ալ աւելի հաճոյ եղաւ Այ մաքսաւորը, այսինքն մեղաւոր մը իր խոնարհութեամբը, քան թէ փարիսեցին, այսինքն հպարտ արդարը » :

Հ. Յիսուս հարուստ մարդն աւելի կըսիր թէ աղքատը .

Պ. Ինքը զան մարդը կըսիրէր որ սրտով աղքատ է . բայց հարուստ մարդու մը գիւտուածով խնայուց, թէ շատ գժուար է որ մէկը հարուստ ըլլայ ու սիրտը ստակի կարած չըլլայ : Անգամ մը հարուստ երկտասարդ մը հարցուց Յիսուսի թէ « Արքայութիւն երթալու համար ի՞նչ պէտք է ընել » : Յիսուս ըսաւ. « Պատուիրանքները պահէ » : Հարուստն ալ « Պղտիկուց ՚ի վեր պահէր եմ » ըսաւ : Յիսուս պատասխանեց . « Աւրեմն թէ որ կուզես կատարեալ ըլլալ, բոլոր հարստութից թող ու ետեւէս եկո՞ւ » : Հարուստը սա ըսածին պէս՝ գլուխը կախեց գնաց : Դարձաւ Յիսուս կսկծալով ըսաւ. « Շատ գիւրին է որ մէկ հասա չուան մը ասեղի ծակէն անցնի, քան թէ հարուստ մարդ մը արքայութի երթայ » : Աշակերտները զարմացան, սկսան հարցընել թէ « Աւրեմն ո՞վ կըր

նայ փրկուիլ” : «Յիսուս ալ ըսաւ” . «Եւ ոչ մէկը . բայց ուզողին Աստուած ոյժ կուտայ” : Ան ասե՛նք Պետրոս ըսաւ . « Մենք ամեն բաներնիս թողուցինք , քու ետեկդ եկանք , մեզի ինչ պիտի ըլլայ” : Յիսուս ալ պատասխանեց . «Դուք գատաստանին օրը ինծի հետ տանուերկու աթոռ պիտի նստիք” :

119 .

Հ . Յիսուսին տանու մէկերորդ առակն նշէ .

Պ . Ուղեւորվ խնայքնեւ թէ շատ մարդիկ թէպէտ ուշ , բայց սրտանց Աստուծոյ մօտե նալով ուրիշներէն առաջ կանցնին : « Աստուած՝ տանաիրտջ մը կրնամանի , ըսաւ , որ առաւօտանց ելաւ իր այգիին մշակնէր բոնեց՝ դահեկանի մը խօսք կապելով : Ետքը ժամը իրեքին նորէն մարդ գտաւ , իրկեց այգին , վեցին ալ , իննին ալ , ինչուան տանու մէկին մարդ գտաւ՝ ինչո՞ւ պարտոյ կեցեր էք ըսաւ՝ ու իրկեց այգին . իրիկուան վերջի եկողնե ներէն սկսաւ վարձքերնին տալ մէյմէկ դահեկան : Առջի եկողները աեանեւով , կարծեցին թէ իրենց աւելի պիտի տայ . երբոր յոյսերնին պարտայն ելաւ , սկսան արանջալ : Ան ասե՛նք տանուաերն ըսաւ . ձեզի հետ ինչ որ խօսք կապեցի , աուի . հիմա ինչո՞ւ կըտրանջաք՝ ուրիշ խեղճերուն բարիք բնելուս համար” :

Հ . Յիսուսին քսանեհինգերորդ հրաշքը նրն է .

Պ. Երբոր Ղազարոս ծանր հիւանդացաւ, քոյրերը Յնի խրկեցին խմացուցին. Յիսուս երկու օր ալ ուշացաւ ու ետքը աշկերանէրուն ըսաւ թէ երթանք Հրէաստան օր Ղազարոսն արթնցընեմ: Անոնք չհասկըցան ու սկսան զարմանալ. ան առեն յայնի ըսաւ թէ « Ղազարոս մեռաւ, բայց ես ուրախ եմ որ ասով ձեր հաւատքն ալ կը հաստատուի »: Ետքը երբոր Բեթանիա հասաւ, Ղազարոս չորս օրուան մեռած ու թաղուած էր. Մարթա՝ Ղազարոսին քոյրը երբոր լսեց, գիմացը վազեց, « Տէր ըսաւ եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ, բայց հիմայ ալ կը հաւատամ որ եթէ ուզես, կըրնայ ողջըննալ »: Յիսուս պատասխանեց. « Աողջըննայ, թէ որ հաւատաս »: Գնաց Մարթա կանչեց ՂՄարիամ քոյրը, հեռը եկան սգաւոր բարեկամներն ալ լալով: Յիսուսին ալ սիրան ելաւ, լացաւ. հարցուց թէ « Ո՞ւր թաղեցիք »: տարին ցցուցին: Յիսուս վրայի քարը վերցընել տուաւ ու ամուր ձայնով կանչեց. « Ղազարոս, գնա եկ »: Մէկէն մեռելը պատանքովն ելաւ կեցաւ. և Յիսուս հրամայեց որ պատանքը քակեն: Ասով շատ մարդ Յիսուսի հաւատացին. ոմանք ալ գնացին փարիսեցիներուն խմացուցին. անոնք ալ քահանայապետներուն հետ խորհուրդըրին որ Յիսուսը մեռցընեն, « Չըլլայ թէ ասանկով Ժողովուրդը ապստամբեցընէ ու Հըսոսմայեցիք գան զմեզ ջարդեն » ըսելով: Յիսուս ալ խմանալով նորէն երեսը ծածկեց. Եփրայիմ գեղը գնաց:

Հ. Երբոր Յիսուսի չարչարանքներուն
օրը մօտեցաւ, առաջուց խնացուց աշակերա-
ներուն.

Պ. Մօտիկ ան զատկին որ ինքը պիտի չար-
չարուէր, Եփրայիմէն ելաւ Արուսազէ՛մ
գալու համար, ու ճամբան սկսաւ ըսել թէ
« Մարգարէներուն ըսածն աս զատկին իմ
վրաս պիտի կատարուի »: Ան ատենը Յակո-
բոս ու Յովհաննէս Չեբեգեայ որդիքն՝ ի-
րենց մօրը բերնով ինդրեցին որ Յիսուս երբոր
Թագաւոր նստի, զիրենք քովն առնէ: Յի-
սուս ալ իրենց խնացուց թէ խոնարհու-
թեամբ միայն կըլլայ աս բանը: Երբոր Յն
Երկբովին մօտեցաւ, ճամբուն վրայ մուրաց-
կան կոյր մը բժշկեց: Եւ բազմութիւնը չորս
գին լցուած ըլլալով. Չաբէոս մաքսապետն
ալ որ կը վաճառէր զՅիսուս տեսնելու՝
կարճ հասակով ըլլալուն չէր կրնար, ելաւ
ծառի մը վրայ. Յիսուս ալ զինքը կանչեց
ու ըսաւ. « Քու տունդ այսօր պիտի ուտեմ
կերակուր »: Ան ալ ուրախացաւ ու խոստա-
ցաւ ունեցածին կէսն ազքատի տալ, ու
անիրաւութիւններուն տեղ չորեքսպտիկ
հատուցանել. Յիսուս ալ ըսաւ թէ « Այսօր
փրկութիւն եղաւ աս տանս »:

Հ. Յիսուսի տանուերկուերորդ առակն
ինչ է.

Պ. Աստուծոյ արգարութիւնը յայանելու
համար պատմեց թէ Թագաւոր մը երբոր հե-

առ. անդ պիտի երթար, կանչեց իր ծառաներն ու մէյմէկ քիչ ստակ տուաւ որ ինչուան որ դառնայ՝ շտայրնեն: Երթալէն ետև խըրկեցին քաղաքացիք ըսելու իրեն թէ « Չենք ուզեր զքեզ մեզի թագաւոր »: Ետքը երբոր դարձաւ, կանչեց ծառաները հարցուց թէ ինչ վաստիկեցաք: Տասը քսակ առնողը տասն ալ վաստակ բերաւ, և հինգ առնողն ալ՝ հինգ բերաւ. թագաւորը երկուքն ալ պատուեց գովելով: Երբոր մեկալին ալ հարցուց, բերաւ ետ տուաւ առած քսակը ըսելով, թէ « Չկորսընցնելու հմբ պահեցի, գիանալով թէ խիստ բարկացող ես », ան ասենը տէրը բարկացաւ ու ըսաւ. « Թէ որ ստանկէ, ինչո՞ւ շահու չդրիր որ հիմա ամօթով չմնայիր »: Ասանկ ըսելով պատժեց ան ծոյլ մարդն ու ան ստակն ալ մեկալնոնց տուաւ: Եւ իրեն գէմ խօսողներն ալ սպաննել տուաւ:

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ լցուիլ Յիսուսի վրայ եղած մարդարեւթիւնները.


Պ. Երբոր Երիքովէն նորէն բեթանիա գնաց Սիմոն բորձալին տունը սեղանի նստաւ, Ղազար ալ հոն էր. ան ասեն Մարիամ անոր քոյրն՝ ազնիւ եղով եկաւ Յիսուսի գլուխը և ոտուրններն օժեց. Յունգայ ստակին մեղքընալով, ագահ ըլլալուն « Մեղք ըսաւ, աղքատներուն համար որչափ ստակ կեղէր ան եղէն »: Յիսուս գովեց զՄարիամ, « Ա՞յ ըրածն իմ թաղուիլս կրնշանակէ » ըսելով. և երկրորդ օրը հանդէսով Չաքարիա մարգարէին ըսածին պէս՝ Արուսազէմ գնաց չորչարուելու:



Մ Ա Մ Ն Գ

ՅԻՍՈՒՍԻ ԵՐՈՒՍԱԴԷՄ

ՄՏՆԵԼԷՆ ԻՆՉՈՒԱՆ ՀՈԳԵԳՅԱԼՈՒՍ



Ծ-Վ-Ն-Ն-Դ :

Հ . ՅԻՍՈՒՍ ինչ հանգեցող Երուսաղէմ մտաւ .

Պ . Երբոր Բեթանիայէն ելաւ ու ձիթե նեաց լեռը մտակցաւ , աշակերտներէն երկուքը խրկեց զխնացի գեղն որ հոն կայած էշ մը կայ՝ իր քուսակովը բերեն . և թէ որ հարցնող ըլլայ , « Իր տիրոջը պէտք է » ըսեն : Աշակերտները գնացին բերին , ու լաթերնին անոնց վրայ ձգած՝ Յիսուսը հեծուցին ու սկսան Երուսաղէմ մտնել : Ժողովուրդն արմաւենիի ու ձիթենիի ճիւղեր առած առջնն ելան ու հաղուսանին գետինը փռելով ամէնքը մէկտեղ մեծ ու պզտիկ սկսան աղաղակել . « Օրհնութիւն որդւոյ Դաւթի , որհնեալ եկեալ յանուն տեաան , որհնութիւն ի բարձունս » : Փարիսեցիներն ու կարգացողները սաստիկ նախանձելով սկսան Յնի ըսել թէ « Աղբասրէ

որ չկանչեն” : Յիսուս ստատասխանեց . « Թէ որ ատենք լուեն , քարերը կըկանչվըռտեն ” : Ետքը Երուսաղէմին մօտենալով Յիսուս լացաւ քաղքին վրայ . « Ասյ քեզի ըսելով որ չճանչցար քեզի եղած բարեքը , անոր համար պիտի կորսուիս ” :

Հ . Երբոր Յիսուս հանգէսով Երուսաղէմ մտաւ , ինչըրաւ .

Պ . Մտաւ տաճարն ու տեսաւ որ հոն առուտուր կընէին , զամէնքը գուրս վաընտեց , ըսելով թէ « Իմ հօրս տունը աւազակի այր մի ընէք ” : Ետքը շատ կոյրեր ու կաղեր բժշկեց , ու իրիկուան գէմ Բեթանիա գնաց :

Հ . Յիսուսի քսաննվեցերորդ հրաշքը սրն է .

Պ . Ծաղկազարդին երկրորդ առաւօան Երուսաղէմ դառնալու տակն անօթեցաւ , թղենիի մը քով գնաց ու սրտուղ չգանկելով , ըսաւ անոր թէ « Քեզմէ մէյ մ’ալ մարդ սրտուղ չուտէ ” : Երկրորդ օրն որնորէն անկէ կանցնէին , տեսան որ բոլորովին չորցեր է : Աշակերտները Յիսուսի ցցուցին . ան ալ ըսաւ որ « Հաւատքով եւ աղօթքով ամէն բան կըրնաք ընել ” :

Հ . Յիսուսին տասնուիրեքերորդ ու տասնուչորսերորդ առակն ինչ է .

Պ . Փարիսեցիներն որ կըպարծէին թէ իրենք են Աստուծոյ հնազանդ որդիքը , զիրենք յանգիստանկու համար ըսաւ . « Մարդ մը երկու աղաք ունէր . մէկուն ըսաւ , թէ գնա՛ այսօր այգին բանէ : Տղան՝ կերթամ ը-

տաւ ու չգնաց . հայրն ալ մէկալին ապրա-
պրեց, անիկայ չեմ երթար ըսաւ, բայց զը-
ջաց ու գնաց : Ասանկ ահա մեղաւորները
հնազանդելով ձեզ պիտի անցնին : Ետքը
« Աս առակս ալ լեցէք, ըսաւ . Մարդ մը
այդի անկեց ու մշակներու ձեռք յանձնեց՝
գնաց : Ատենին ծառաներ խրկեց որ պտուղը
ժողվեն . մշակները զանոնք բռնեցին սպան-
նեցին : Տերը նորէն ուրիշները խրկեց . մշակ-
ները զանոնք ալ մեռուցին . սասանկ քանի մը
անդամ : Ետքը տերը իր աղան խրկեց, գու-
ցէ տղէս ամբշնան ըսելով . անոնք զան ալ
սպաննեցին որ այդին իրենք ժառանգեն » :
Ետէն ըսաւ Յիսուս . ան մշակներուն տերն
ինչ պիտի ընէ : Մտիկ ընողները պատասխան
տուին թէ պէտք է սպաննէ : Իսկ չարերն
խմանալով թէ իրենց համար է ըսածը, ՉԸԸ
լար ըսին սասանկ բան :

Հ . Յիսուսի սասանուհինդերորդ առակն
ինչ է .

Պ . Աւելի հաստատելու հմբ թէ Հրեայք
զինքն արհամարհելով իրենց գէշ կրնեն, ը-
սաւ . « Ա՞՞ թագաւորի մը կրնմանի որ
հարսանիք ըրաւ, ու ծառաները խրկեց՝ կան-
չեց բարեկամները . անոնք մէյմէկ պտածա-
ռաւ չեկան . ոմանք ծառաներն ալ սպաննե-
ցին : Թողը լսելով, սաստիկ բարկացաւ, զի
նուորներ խրկեց, զանոնք սպաննել տաւաւ .
և անոնց տեղը փողոցներէն մարգիկ բերել
տաւաւ : Ետքը թագաւորը քովերնին եկաւ .
տեսաւ որ մէկն աղտոտ լաթերով նստեր է .
հարցուց թէ ինչպէս հարսանիքի լաթ չհա-

դած եկեր ես . ան ալ պատանձեցաւ : Անոր համար թագաւորը հրաման տուաւ որ օտքը ձեռքը կատրած՝ դուրս ձգեն զինքը” :

122 .

Հ . Յիսուսի վարդապետութեանը գլխաւոր գէմ՝ զնոյնները որոնք էին .

Պ . Փարիսեցիներն ու սադուկեցիները : Անգամ մը Փարիսեցիք խօսք դրին որ զՅիսուս տերութեան գէմ յանցաւոր ցուցնենն ու բռնել տան . անոր համար եկան գովելով հարցուցին իրեն թէ « Պէտք է որ հըրեայք հստակեցոյ կայսեր հարկ տան” : Յիսուսն ալով անոնցմօքին շարութիւնը . « Բերէք ըսաւ դահեկան մը որ տեսնեմ” . երբոր բերին , « Ասոր վրայ որոնն պտտիւնը տպած է” ըսաւ . պատասխանեցին թէ Վայսեր : « Ուրեմն , ըսաւ Յիսուս , արեւք կայսեր բանը իրեն տուէք , Աստուծոյ բանն ալ Աստուծոյ” . Փարիսեցիք ստանկով պատանձեցան մնացին : Սադուկեցիք ալ տեսան որ միշտ առակով զիրենք կը բռնէ , իրենք ալ առակով մը ուզեցին Յիսուսը խաղք ընել :

Հ . Սադուկեցիք զՅիսուս խաղք ընելու համար ինչ առակ ըսին .

Պ . Որովհետեւ իրենք յարութիւն չեն ընդունիր , « Աչրդապետ՝ ըսին , Մովսէս օրենք դրեր է որ երբ կարգուած մարդ մը մեռնի առանց զաւկի , անոր կինը եղբայրն առնէ , որ եղբորն անունով զաւակ բերէ : Անգամ մը մէկ կինը՝ եօթն եղբայրք կարգաւ

առին ու ամենքն ալ առանց զաւկի մեռան ,
եւթէն կինն ալ մեռաւ . յարութեան ատենն
ան կինը որուն սխաի ըլլայ ։ Յիսուս ըսաւ .
« Դուք մօլորած էք . չէք գիտեր թէ անգիի
աշխարհք կարգուիլ չկայ : Իսկ յարութիւն
ըլլալուն նշանն ալ ան է որ Աստուած ինք
զինքը Արրասամու , Իսահակայ , Յակոբայ
Աստուած կրկանչէ . թէ որ անոնք ոչնչա-
ցած ըլլային , Աստուած՝ ոչնչութեան Աս-
տուած կրլար ։ » :

Հ . Յիսուս աղքատ մարդու ինչ ճամբայ
սորվեցուց որ հարուստէն շատ ողորմութիւն
ըրած ըլլայ .

Պ . Դիպուածով մը խնայուց որ Աս-
տուած մարդուն սիրար կրնայի , ստակին շա-
տութեւը չնայիր : Արրորտաճարը գանձանա-
կին գիմացը կեցեր կրնայէր , շատ մարդիկ
շատ ստակ կրձգէին . որբևարի աղքատ կին
մին ալ եկաւ երկու լումայ ձգեց : Յիսուս
ըսաւ իր աշկերաներուն թէ « Ան կինն ամե-
նէն շատ ձգեց . վասն զի ըսաւ՝ մեկաշնմբ
աւելորդ ստակնին ձգեցին , բայց անիկայ իր
բոլոր ունեցածը տուաւ ։ » :

Հ . Յիսուսի տանուվեցերորդ առակն
ի՞նչ է .

Պ . Արովհետեւ առաջ առակ մը ըսաւ թէ
երբեմն ուշ դարձած մեղաւորներ սխաի ու-
րիշներէն վեր անցնին , եւթը տասը կուսանայ
առակոյն ալ խնայուց որ ապաշխարութիւն
անհոգութիւն կաք ձգողը չխրկուիր : « Տասն
կուսանք կային , ըսաւ , հինգը յիմար , հինգն
ալ իմաստուն . ասոնք ըսպանին վառած՝

փեային գիմացը ելան : Փեսան երբոր ուշա
ցաւ, իրենք ալ քնացան . կէս գիշերուն ձայն
եղաւ թէ Փեսան կուգայ . ելան լապտերին
պատրաստեցին : Յիմարներն ուրիշ պատ-
րաստ եղ չունենալով, իմաստուններէն ու-
ղեցին . անոնք ալ չառին վախնալով որ չը-
լայ թէ իրենց ալ չքաւէ . Գնացէք ձեզի գնե-
ցէք, ըսին : Երբոր անոնք գնացին, փեսան ե-
կաւ, իմաստունները ներս մտան : Ետքը ե-
կան յիմարներն սկսան աղաչել որ գուռը բա-
նայ . բայց ճոր չեղաւ, դուրսը մնացին, ա-
ռաջուց եղ չպատրաստելուն համար :
Աս առակէն ետև Յիսուս յայանեց աչկերա-
ներուն որ երկու օրէն պիտի խաչուի :

125 .

Հ . Երբոր Յիսուսի չարչարանաց օրերը
մտակցան, վարիսեցիք ինչ կերպեր բանե-
ցուցին զինքը բռնելու համար .

Պ . Զատակէն երկու օր առաջ ամէնքը ժող-
վեցան Կայիափա քահանայապետին քովն
ու խօսք գրին որ Յնք կերպով մը սպաննեն .
բայց տնի օրերը չէին ուղեր ընել որ չըլայ
թէ խռովութիւն մը ելլէ : Ան ատենն ալ
Յուդա Իսկարիովացիին փորը սատանայ
մտաւ որ գնաց անոնցըսաւ . « Յիսուսը ես կը-
մտանեմ . ինձի ինչ կուտայ » : Անոնք ուրա-
խացան ու երեսուն արծաթ տալ խոստացան :

Հ . Յուդա երբ մտանեց զՅիսուս .

Պ . Բաղարջակերաց առջի գիշերը, Յի-
սուսին մարմնոյ և արեան պատարագին խօր-

հուրդը տեսաւ, ճաշակեց սուրբ մարմինն
ու գնաց մասնեց զՅիսուս:

Հ. Յիսուս զատկական գառն ուր կերաւ .

Պ. Երուսաղէմին մէջ՝ որ տուն որ ինքը
հաճեցաւ, առաջ խրկեց Պետրոսն և Յով-
հաննէսն ու ըսաւ. « Քաղաքը մանկչուդ
պէս՝ մարդու մը կը հանդիպիք, սափոր կռնա
կը գնացէք ետե՛ն ու անոր մտած տանը օխ-
րոջը ըսէք. Վարդապետին ատենը հասեր
է, կուզէ որ զատկը քու տունդ ընէ: Ա՛ն ալ
զձեզ զարդարած վերնատուն մը կը հանէ,
հոն սեղանը պատրաստեցէք: Իրիկուան
դէմ ինքն ալ հոն գնաց. ու երբոր նստան
ուտելու, Յիսուս « Խիստ կըրաղձայի ըսաւ
աս ժամին հասնելու: Մէկ քանի սիրոյ
խօսքեր ըսելէն ետե, « Չեզմէ մէկը զիս
պիտի մասնէ ըսաւ: Աս խօսքիս վրայ ամէն
մէկը խռոված՝ սկսան հարցընել թէ « Ար-
դեօք ե՛ս եմ: Յիսուս ըսաւ, « Ա՛ն է որ իր
ձեռքը ինձի հետ սկաւառակին երկնցընէ: Ա՛ն
ատենը Յուդան ալ հարցուց թէ « Ե՛ս
եմ: » Յն ըսաւ « Դուն ըսիր: » Կերակուրը
ընննալու ատեն Յիսուս հաց մը առաւ օրհ-
նեց, ու աշակերտացը բաժնէ լով Ա՛նէ՛ + Ի՛նչէ՛
ըսաւ: Ետե՛ն գինիով գաւաթն առաւ օրհ-
նեց ու առաւ աշակերտներուն՝ Ա՛նէ՛ + Ի՛նչ-
նէ ըսելով: Ասով պատարագը հաստատեց
ու ասըստրեց որ անով զինքը միշտ յիշեն:

Հ. Չարչարանաց ընթրիքէն ետե Յիսուս
ի՛նչ ըրաւ .

Պ. Աշակերտներուն ստուրները լուաց .
բայց Պետրոս չէր ուզէր թողուլ Յիսուսը .

սաւ . « Թէ որ չլուամ , ինձի հետ մասն չես ունենար » : Ետքը ամենուն մէկէն ըսաւ , « Ինչպէս ես ձեզի ըրի , դուք ալ մէկմէկու ըրէք » :

Հ . Չարչարանաց ընթրիքին գիշերը Յիսուս ուր կեցաւ .

Պ . Աշակերտաց ոտքը լուանալէն ետքը նախ նստաւ քիչ մը խօսեցաւ , ետև դարձաւ Յուդայի ըսաւ . « Ինչ որ պիտի ընես , դնօ ըրէ » : Յուդա մէկէն ելաւ դնաց Յիսուսը մասնէլու՝ բոլորովն սատանայէն միտքը բռնուած : Ուրիշները կարծեցին թէ Յիսուս զինքը բանի մը կրխրկէ : Անկէ ետև իր մեր վրայ ունեցած սէրը շատ կերպ խօսքերով խնայուց Յիսուս . և թէ պիտի իրենցմէ բաժնուի : Երբոր ամէնքը սիրահրնին ելած մտիկ կրնէին , իրենց ըսաւ թէ « Դուք ալ զիս պիտի թողուք երեսի վրայ » . անոնք Չէ կրսէին : Ամենէն աւելի Պետրոս « Արմեանիմ քեզի հետ ու չեմ բաժնուիր » կրսէր . Յիսուս ըսաւ . « Գիտնաս որ աս իրիկուն իրեք անգամ զիս պիտի ուրանաս » : Ան ալ աւելի կրպնդէր թէ անկարելի է : Ետև գիշերանց ելան , Յիսուս ձիթէնեաց լեռը դնաց աղօթք ընելու :

124 .

Հ . Մասնութեան գիշերը Յիսուս երբոր լեռը դնաց աղօթք ընելու , առաքեալներն ուր թողուց .

Պ . Գեթսեմանի գեղը թողուց , ու միայն Պետրոսը՝ Յակոբոսն ու Յովհաննէսը հետն

տաւած՝ պարտեզ մը գնաց, և անոնց ալ ըսաւ թէ « Ըստ արամութեան մէջ եմ, հոս ազօթքի կեցէք »: Քիչմ՝ ալ առաջ գնաց, ու սկսաւ ազօթք ընել. և մեր ըրած մեղքերուն մեծութիւնը մտածելով՝ արիւն քրտնիլ սկսաւ: Երկու անգամ ալ եկաւ ու արեւոյններն արթնցուց ազօթքի՝ որ փորձութեան մէջ չիյնան: Երրորդ անգամ եկաւ « Ելէք ըսաւ՝ երթանք, հիմա կուգան զիս փրկառայնները »: Ան ատեն մեկէն հասան Հրեաները զինքը բռնեցին:

Հ. Յուդա ինչ կերպով մասնեց Յիսուսը, և Յիսուս ինչպէս բռնուեցաւ .

Պ. Յուդա նշան տուեր էր անոնց թէ որուն որ պագնելով բարե տայ՝ ան է . ուստի երրորդ զինուորներով զէնքերով եկան. Յուդայի բարե տալու ատենն ըսաւ Յիսուս, թէ « Ես ինչ է Յուդա, համբուրելով զիս կը մասնեւ »: Ետքը անոնց առջեւ ելաւ « Զով կուզէք ըսաւ » . զՅիսուս ըսին: Երրորդ պատասխանեց թէ « Ես եմ » ամենքը կրօնը կի վրայ ինկան: Ետքը նորէն հարցուց, ու ըսաւ որ աչկերաներուն ձեռք չգայցընեն: Երրորդ մտակցան զինքը բռնելու, աշակերտները սուր հանեցին որ կուսին: Սուրերը տեղը գրէք ըսելու չմնաց, Պետրոս քաշեց Մաղքոսի ահանջը կարեց: Յիսուս « Մի ընէք ըսաւ, ես թէ որ ուզէի հիմա հաղարաւոր հրեշտակ կուգային » . ու ծռուեցաւ ահանջը առաւ տեղը կայուց: Ասանկով բռնեցին Յիսուսն Աննա քահանայապետին տարին:

Հ. Յիսուս Աննա քահանայապետին առջև ինչ ըրաւ .

Պ. Քահանայապետն սկսաւ հարցընել Յնի ըրած գործքերը . Յն պատասխանեց թէ « խմբած բաներս ամենքը գիտեն » : Ասանկ համարձակ ըսելուն համար՝ մէկը Յիսուսի ապասկ մը զարկաւ « Ասանկ պատասխան կուտաս ըսելով » : Յիսուս ալ ըսաւ . « Թէ որ ծուռ խօսք ըսի , ինձի խնայու . իսկ թէ որ շիտակ , ինչո՞ւ կը զարնես » : Ետքը Վայխափա քահանայապետին տարին :

Հ. Վայխափայի առջև Յիսուսի ինչ ըրին .

Պ. Սկսան սուս վկայ փրնառել , և հաղիւ երկու հողի գանուեցան որ կըսէին թէ « Մենք ըսեցինք որ իրեք օրուան մէջ տաճարը կըրնամ քակել ու շինել կըսեր » . բայց ինչ որ ալ կըսէին , մէկմէկու նման չէր ըլլօր : Վայխափա հարցուց թէ « Ինչո՞ւ պատասխան չես տար » . երբոր տեսաւ որ ճար չըլլօր խօսեցընելու , ըսաւ . « Յանուն Աստուծոյ կերդուընցընեմ որ ըսես թէ որդի Աստուծոյ ես » . ան ասեն պատասխանեց Յիսուս . « Դուն կըսես . և վերջի գատաստանին օրն իմ փառքս պիտի տեսնէք » : Աս խօսքիս վերայ Վայխափա կատղեցաւ , լաթը պատուեց , ըսելով « Հայհոյեց , ալ վկայ ինչ պէտք է » : Աւրիշներուն հարցուց , ամենքը ըսին թէ պէտք է մեռցընել . ու սկսան նախատել , թքնել , զարնել . գլուխը լաթ մը ձգեցին ու կըհարցընէին թէ « Ո՞վ է զարնողը , գիտցիր » :

Հ. Երբոր Յիսուս Վայխափային քօլն

էր, առաքեալներն ո՞ւր էին .

Պ . Ամենքը ցրուեցան գնացին . միայն Յովհաննէս քահանայապետին ծանօթ ըլլալով պաշտան եկեր էր . և Պետրոս ալ որ Յիսուսի սիրոյն չէր կրնար հեռանալ, ու եկեր էր ինչուան գուռը, Յովհաննէսին խօսքովը ներս աւնուեցաւ :

Հ . Յիսուս ինչպէս որ ըսեր էր, Պետրոս զինքն ուրացաւ .

Պ . Երբոր սրահը նստած կրտաքնար ուրիշներուն հետ, ազախին մը իրեն ըսաւ որ « Դուն ալ Յիսուսի հեան էիր » . Պետրոս մէկէն ուրացաւ թէ « Չեմ ճանչնար ան մարդը » : Քիչ մը ետքը ուրիշ մըն ալ տեսաւ ու առջինին պէս ըսաւ, ան ալ նորէն ուրացաւ : Քիչ մը անցաւ՝ ուրիշ ծառայ մըն ալ « Ես զքեզ պարտեզին մէջ տեսայ ըսաւ Յիսուսին հետ . լեզուէդ ալ կխմացուի որ Գալիլեացի ես » : Պետրոս սկսաւ երգուըննալ՝ ուրանալ, « Չեմ ճանչնար » ըսելով : Ան ատենը Յիսուս ներսէն դարձաւ Պետրոսին նայեցաւ . անով Պետրոսին մտքը վերան եկաւ, զզջաց, ելաւ գուրս ու լալ սկսաւ :

123 .

Հ . Երբոր Կայիափային առջեր զՅիսուս մահապարտ դատեցին, մէկէն սպաննեցին .

Պ . Ուղեւով Յիսուսը նախատահան մահուամբ մեռցընեւ, որովհետեւ իրենք օրինաց ըսածին պէս՝ միայն քարկոծելու հրաման ունէին կայսերէն ալ, անոր համար առաւօ-

տանց կանուխ Յիսուսը Պիղատոսի տանեանք տարին ու ամբաստանեցին թէ կայսերէն կապըտամբեցրնէ զՀրեաներն ինքզինքը թաղաւոր անուանելով :

Հ . Երբոր զՅիսուս Պիղատոսի տարին , սպաննելու հրաման առաւ .

Պ . Չէ . առաւ Յիսուսը քննեց . ու երբ որ խնայաւ թէ անմեղ է , ելաւ Հրեից ալ ըսաւ իր կարծիքը : Անոնք նոր նոր ամբաստանութիւններ ընել սկսան : Յիսուս ամենին պատասխան չտալովը զարմացուց զՊիղատոս . որ իմանալով թէ Յիսուս Գալիլեացի է , Հերովդէսի խրկեց , որ ան օրերը Երուսաղէմ եկեր էր :

Հ . Հերովդէս Յիսուսին վրայ ինչ դատաստան կարեց .

Պ . Շատոնց փափայելով որ Յիսուսը տեսնէ , ուրախացաւ , ուղեց որ իր առջև հրաշք մը ընէ . ու շատ բաներ սկսաւ հարցրնել : Երբոր Յիսուս ամենևին պատասխան չտուաւ , Հերովդէս բարկացաւ նախատեց զՅիսուս , ու վրան ճերմակ լաթ մը ձգած՝ նորէն Պիղատոսին խրկեց որ դատաստանը տեսնէ :

Հ . Երկրորդ անգամ երբոր Յիսուսը Պիղատոսի տարին , Պիղատոս ինչ վճիռ առաւ .

Պ . Մեռնելու արժանի յանցանք չունի ըսաւ , ուստի քիչ մը պատիժ տանք . ու ինչպէս որ սովորութիւն սւնիք՝ զատկին մէկ յանցաւոր մը արձրկելու , ասիկայ արձրկենք : Ան տոտն ամէնքը մէկէն սկսան աղաղակել որ Բարաբբան արձրկէ , որ արիւնկը

զակ մարդ մըն էր, ու զՅիսուս խաչ հանէ .
Պիղատոս շատ ջանաց որ մտքերնին փոխէ
բայց երբոր ճար չեղաւ, անոնց առջև ձեռ-
քը լուաց, « Ես անսպարա եմ » ըսելով : Ա-
նոնք մէկ բերան սկսան կանչուըռաւել թէ « Ա-
րիւնը մեր ու զաւկընէրնուս գլխուն . թող
խաչուի » : Անտան Պիղատոս դեռ յուսալով
չահիլ անոնց սիրտը, զինուորնետուն ձեռքը
տուաւ զՅիսուս, որ լաթերը հանած՝ չա-
րաչար ծեծեցին, գլուխը փշէ պսակ դրած՝
ձեռքը եղէգ մը կուտային, ծաղր ընելով
կրչոքէին առջևն, ու « Ողջ լեր թագաւոր »
ըսելով կառնէին եղէգը ձեռքէն ու գլխուն
կրզարնէին . ասանկով Յիսուսին բովանդակ
վրան գլուխն արիւնլուայ բրին : Ետքը ա-
նանկ խեղճութեան մէջ Պիղատոս հանեց
զինքը հրէից ցցուց . բայց անոնք գթալու-
տեղ ալ աւելի կատուեցան . « Ինքզինքը Աս-
տուծոյ որդի կանուանէ » կըսէին : Աս որ
ըսեց Պիղատոս, սիրտը դող ելաւ, գնաց նս-
րէն սկսաւ հարցընել, ըսելով թէ « Իշխա-
նութիւն ունիմ զքեզ արձըկելու » : Յիսուս
ալ պատասխանեց . « Թէ որ Աճ չթողուր,
գու բան չէիր կըրնար ընել » : Աս խօսքիս
վրայ աւելի վախնալով, կուզէր արձըկել :
Անտան հրեայք, սկսան կանչուըռաւել,
ըսելով . « Թէ որ ասիկայ արձըկես, կայսեր
բարեկամ չես » : Տեսաւ Պիղատոս որ ու-
րիշ ճար չկայ, և վախնալով անոնց կամքին
դէմ ընելու որ ջրլայ թէ իր վրայ կայսեր
ամբաստանութիւն ընեն, « Չեր թագա-
ւորն ըսաւ՝ կուզէք որ խաչ հանեմ » : Անոնք

ալ ըսին . « Վայսրէն ուրիշ թագաւոր չունինք մենք » : Ան ասեն Պիղատոս ալ վճիռը գրեց որ խաչին վրայ գնեն , թէ « Աս խաչուողը Յիսուան է՝ Հրեկոյ թիւորը » . ու Յիսուսը մատնեց անոնց ձեռքը : Հրեայք աս վճռոյն չհաւանեցան , ուզեցին որ գրէ՝ թէ « Ինքզինքը թագաւոր անուանեց » . բայց Պիղատոս մտիկ չբրաւ , չխոչեց վճիռը :

Հ . Յուգան զՅնմատնեւէնեայք ինչ ըրաւ .

Պ . Տեսնեւո՞վ որ Յիսուսը մեռցրնեւու հրատանին , սաստիկ սրտին ցաւ եկաւ . գնաց առած ստակը ետ առաւ « Մեղայ ըսաւ՝ որ անմեղ մարդուն արիւնը մտայ » : Հրեաներն « Ան դու գնա՞ մտած է » ըսին : Ինքն ալ յուսահատած գնաց ինքզինքը կախեց : Իսկ ան ստակով Հրեայք գեափն մը գնեցին , օտար մարդիկներու գերեզմաննոց ըրին . տեղին անունն ալ գրին Աճաբա՛ի աբէան :

126.

Հ . Երբոր Հրեայք Յիսուսի մահուանը վճիռն ասին , ինչ ըրին .

Պ . Նախատեւո՞վ զարնեւո՞վ խաչն ուսը տուին , եւան Պողոտթա լեռն երթալու : Ամէն տեսնողներուն դուժը կը շարժէր , կուլային . Յիսուս գարձաւ ըսաւ անոնց , թէ « Իմ վրաս մի լաք , ձեր վրայ լացէք , որ չճանչնալով իմ ձեր վրայ ցցուցած սէրս , ետ պիտի չկենաք ձեր անկարգութիւններէն ու յուխտեան պիտի տանջուիք » : Հրեաները վախնալով որ Յիսուս ճամբան կը մեռնի , գտան Սիմոն կիւրենացին ու Յիսուսին խաչն

անոր կանակը տուին, ինչուան հասան Գողգոթա լեւը : Հոն Յիսուսին լեզիով խառնած քացախ տուին . Յիսուս համն առաւ ու խմել չուզեց : Ետքը Յիսուսը գամեցին խաչին վրայ . երկու զին ալ երկու ուրիշ աւազակներ խաչեցին : Յիսուսի լաթերն ալ զինուորները մէջերնին բաժնեցին . Յիսուս պատմութեան մը ունէր առանց կարի վերէն վար հիւսած , ան ալ վիճակով մէկու մը տուին :

Հ . Յիսուս խաչուելու ատեն ինչ կըստամէր .

Պ . Մէկ կողմանէ սիրով կըճամբերէր որ անով մենք պիտի փրկուէինք , մէկ կողմանէ ալ կըցուէր որ շատերնիս ալ իրեն անանկ մեծ սէրը պիտի արճամարտէինք . անոր համար սկսաւ ձայնով ալ աղօթել Հօր Աստուծոյ . « Հայր , ըսաւ , թողութիւն տուր ասոնց ըրածներուն , վասն զի իրենք ալ չեն գիտեր ինչ կընեն » :

Հ . Հրեայք Յիսուսը խաչելով հանգրտացան .

Պ . Չէ . ամէն կերպով կըջանային որ քանի որ ողջ է , սիրաբ կսկըծցնեն , հայհոյելով , ծաղրելով . « Թէ որ Աստուծոյ որդի ես՝ կըսէին , ինչ կեցեր ես , խաչէն վար իջիր որ քեզի հաւատանք » : Մէկն ալ անդիէն « Տեսէք կըսէր , ինքն որ ուրիշները կազատէր , ինքզինքն ինչո՞ւ չազատէր » . ուրիշ մըն ալ կըսէր . « Թէ որ Աստուած զքեզ կըսիրէ , շուտ ընէ թող զքեզ փրկէ » : Չինուորներն ալ մէկ զիէն սիրա ծակելու բա-

ներ կրթօսելին . իր հետ խաչուած աւազակներուն մէկն ալ զինքը կրնախաատէր :

Հ . Յիսուս թէ որ զինքը նախատողներուն համար աղօթք կրնէր որ թողու թիւն գանեն , հասցա սրտանց իրեն ցաւակից եղողին համար ինչ կրնէր .

Պ . Անանկ մարդը մէկէն շնորհքով կըլէջրնէր որ ճշմարիտ զըջուամով արքայութեան որդի ըլլայ . ինչպէս որ աջ կողմի աւազակը Յիսուսի ըրած հրաշքները լսած ըլլալով , և ան օրուան համբերութիւնը տեսնելով՝ կսկըծաց վրան ու սկսու մէկալ աւազակը յանդիմանել , ըսելով թէ « Անմեղ Յիսուսն ինչո՞ւ կրնախաատես . մենք արժանի պատիժնիս առեր ենք , բայց անիկայ յանցանք մը չէ ըրած » : Յիսուս ալ իր շնորհքովն անոր սիրտը լեցուց որ դարձաւ Յիսուսի « Տէր , ըսաւ , զիս մի մոռնար » : Յիսուս ալ իրեն ըսաւ . « Այսօր ինձի հետ արքայութիւն պիտի երթաս » :

Հ . Յիսուսի խաչելութեան ատենը Աստուածամայրն ո՞ր էր .

Պ . Եկեր խաչին գիմացը կեցեր էր , ուրիշ կանայք ալ և Յովհաննէս աւետարանիչն ալ մէկտեղ : Յիսուս զմեզ իրեն յանձնելով , և Յովհաննէսը ցուցրնելով , ըսաւ իր մօրը թէ « Ահա քու որդիդ » : Ետքը Յովհաննէսին ալ ըսաւ . « Ահա քու մայրդ » , անոր համար անկէ ետքը Յովհաննէս միշտ Աստուածամանին հետը բնակեցաւ :

127.

Հ . Յիսուս մեռնելու ատեն յայանի նը-
շան ցցոնց իր աստուածութեանը .

Պ . Առջինն որ աւաղակը՝ զՅիսուս թէ-
պէտ խաչուած սլառժուած տեսաւ , բայց
Աստուած դաւանեցաւ : Երկրորդ՝ խաչուե-
լէն ետքը իրեք ժամ , վեցէն ինչուան ինը՝
արևը խաւարեցաւ : Երրորդ՝ ասճարին մեծ
վարագոյրը վերէն վար պատուեցաւ : Չոր-
րորդ՝ գեանաշարժ եղաւ . ապառաժ քարեր
ինքիրեննուն ճեղքուեցան : Հինգերորդ՝
գերեզմաններէն մեռելներ ողջընցան ելան :
Վեցերորդ՝ Յիսուս ինքը մեռնելու ատեն
ուժով Հօր Աստուծոյ սկսաւ աղաչել թէ
ինչու զինքը թողուց : Ետքը « Հոգիս բեղի
կուտամ » ըսելով մեռաւ . անանկ որ խա-
չին քովն եղողները վախնալով , սկսան ըսել
թէ « Իրաւ աս Աստուծոյ որդի էր » : Եօթ-
ներորդ , երրոր մեռնելէն ետքը փորձի հա-
մար նիզակով կողը խոցեցին , կողէն արիւն
ու ջուր ելաւ :

Հ . Յիսուս սրչափ ատեն խաչին վրայ
կեցաւ .

Պ . Մեռած օրը ուրբաթ իրիկուն ըլլա-
լով , որ երկրորդ օրը մեծ ասն էր , մեկէն
գնացին Հրեաները Պիղատոսէն հրաման
առին որ խաչուողներուն ծունկերը ջարդեն
որ շուտ մեռնին : Բայց Յիսուսինը ջար-
դեցին , ինքիրեն մեռած ըլլալուն համար .
և ետքը մեկէն մարմինը վար առին :

Հ. Յիսուսին մարմինը խաչէն սլ վար առաւ, և ուր թաղուեցաւ .

Պ. Յովսէփ Արեմաթացին և Նիկողեմոս որ Յիսուսի կրհաւասային, Պիղատոսէն հրաման առնելով՝ եկան վար առին, զամուսեցին սրատեցին ու մէկ նոր քարէ փորած գերեզմանի մը մէջ գրին, մեծ քարով մըն ալ գոցեցին :

Հ. Հրեայք Յիսուսը մեռցնելով հանդարտեցան .

Պ. Խղճերնին զարնելով սրտերնին վախի մէջ էր որ չըլլայ թէ նոր խառվուածիւն ելլէ ու իրենց գլուխը փորձանք մը գայ . անոր համար Պիղատոսին հարցնելով, գերեզմանը գնացին կնքեցին ու քովը սահասպաններ ալ գրին իրեք օրուան համար՝ որ մարմինը չգողանն աշակերտները :

Հ. Յիսուսի յարուածիւնն ինչպէս եղաւ .

Պ. Քանի մը բարեպաշտ կանայք շարած իրիկուընէ խօսք գրին ու կիրակի առաւօտանց կանուխ տեսակ տեսակ խուճկեր ու անուշահոտ եղեր մեկտեղ առած՝ գերեզմանը կուգային : Ճամբան սկսան տարակուսիլ թէ ինչպէս վրայի մեծ քարը պիտի շարժեն. բայց առաջուց մեծ շարժմունքով հրեշտակ մը իջաւ՝ քարը մեկգլի գլորեց որուն վախէն զինուորները մեռելի պէս ինկան, ոմանք ալ փախան քահանայապետներուն պատմեցին : Իսկ անոնք շատ սոսակ առին զինուորներուն որ ձայն հանեն թէ՛ « Քիչերանց աշկերտները գողցեր են զՅիսուս » : Ետքը երբոր խղարէր կանայք գե-

րեզմանին դուռը բաց գտան , և մտան ներս ,
մարմինը չգտան . կարծելով թէ գողցեր
են , լալ սկսան : Մարիամ Մագդաղենացին
վազեց գնաց՝ ըսաւ Պետրոսի և Յովհանն
նու . անոնք ալ հետը մեկտեղ ելան եկան :
Բայց դեռ անոնք չհասած , մեկալ կանայքը
նորէն երբոր լալով գերեզմանը նայեցան ,
տեսան երկու հրեշտակ , վախցան : Անոնք
ալ ըսին թէ « Մի վախէք , Յիսուս յարու
թիւն առաւ . գնացէք ուրիշներուն պատ
մեցէք » : Բայց անոնք վախնալով գնացին
ու մեկու մը բան չըսին : Ետքը Պետրոս ու
Յովհաննէս եկան նայեցան որ չկայ , գնա
ցին մեկալնոնց ըսելու . բայց Մարիամ կե
ցաւ հոն ու հուլար : Ան ասենը հրեշտակ
ներն իրեն ալ երեցան , հարցուցին թէ ին
չու հուլայ . Մարիամ պատասխան տալու
ատեն ետը նայեցաւ տեսաւ Յիսուսը , պար
տիզպան կարծեց , սկսաւ աղաչել որ եթէ
ինքը վերուցեր է , ըսէ ո՞ր գրեր է : Ան ա
տեն Յիսուս իր ձայնովը կանչեց՝ Մարիամ .
ան ալ մեկէն ճանչցաւ , վազեց որ ոտքը պըլ
լուի . Բիսուս թող չտուաւ . « Գնա՛ ըսաւ ,
պատմէ ուրիշներուն » :

128.

Հ . Յիսուս յարութենէն ետքը քանի՛ ան
գամ երեցաւ .

Պ . Շատ անգամ երեցեր է ու շատ բան
սորվեցուցեր է աշակերաններուն ինչուան
քառասուն որ . բայց մտանաւ որ կըլիշուի մէյ

մի Եմմաւուսի ճամբան երկնայք, մի մ' ալ ծովուն եզերքը . ուրիշ երկու անգամ ալ :

Հ . Յիսուս յարութենէն ետքը Եմմաւուսի ճամբան ինչպէս երևցաւ .

Պ . Յարութեան օրը աշակերաններէն երկու հոգի Եմմաւուս գեղը կերթային . Յիսուս քովերին մտակցաւ ճամբորդի մը պէս, սկսաւ հարցնել թէ ինչ բանի վրայ կրխոսին արտաւած : Անոնց մէկը Աղէոսպաս՝ և Չէս գիտեր ըսաւ սա օրերս ինչ բաներ եղան, որ սուրբ մարգր իշխանները խաչել տուին . մենք յոյս ունեկնք թէ անիկայ զմեզ փրկէ . և այսօր կրտեն թէ երևցեր է մեկուն մեկալին » : Ան ասեն Յիսուս սկսաւ մարգարեկից խօսքերով ցուցնել թէ պէտք է որ ըլլային ան բաները : Իրիկուան գէմ երբոր Եմմաւուս հասան, Յիսուս կրձեացնէր թէ հեռու անդ պիտի երթայ . անոնք սախակցին որ ան գիշերը հոն կենայ . և երբոր սեղանի նստան, Յիսուս հացն օրհնեց բաժնեց . ան ասենն աչուքնին բացուեցաւ որ ճանչցան, ու մէկէն աներևոյթ եղաւ : Իրենք ալ շուտ մը ելան Երուսաղէմ եկան գտան ուրիշները Ժողոված, որ կրտէին թէ Յիսուս Պետրոսին երևցեր է : Հոն անղը երբոր գոցուած հրեաներուն վախէն՝ կրխօսէին, յանկարծ Յիսուս մէջերնին երևցաւ, ցցուց վերքերը . ետքը կերակուր ալ ուղեց ուտելու : Քիչ մը խորոված ձուկ և խորիսի բերին, կերաւ, օրհնեց զիրենք ու աներևոյթ եղաւ :

Հ . Յիսուսի երկրորդ անգամ ամենուն մէկէն երկնայն ինչպէս եղաւ .

Պ . Առջի օրն որ երեցաւ , Թովմաս հոն
չէր . երբոր եկաւ , պատմեցին : Ան սկսաւ
լսել թէ « Ինչուան ես չտեսնեմ ու մասս
իրեն կողմ շնորհեմ , չեմ հաւատար » : Աւտի
ու թը օրէն նորէն երեցաւ Յիսուս բոլոր աշ-
կերաներուն մէկէն , և Թովմասին ըսաւ .
« Եկո՛ նայէ ու անհաւատ մի ըլլար » : Ան ա-
տեն Թովմաս կանչեց « Տէր իմ և Աստուած
իմ » . Յիսուս ալ ըսաւ . « Երանի՛ անոնց
որ զիս չտեսած կը հաւատան » :

Հ . Յիսուս ծովեզերքն ինչպէս յայտնեց
զինքն աշակերաներուն .

Պ . Երբոր Տիրերեայ ծովուն քով աշկերաւ
ները ձուկ բանելու գնացեր էին , ու ձուկ
չէին գտած , Յիսուս եկաւ . երեցաւ ու ըսաւ .
որ նախն աջ կողմը ձգեն ուսկանը : Անտե-
կով հարիւր յիսուն հաս խոշոր ձկներ բըռ-
նուեցան . քիչ մնաց որ կը պատուէր ուս-
կանը : Աս հրաշքէս աշակերաններն իմացան
որ Յիսուան է , քովը Ժողովեցան , նստան
մէյակդ ան ձկներէն եփեցին կերան : Ետքը
Յիսուս Պետրոսի հարցուց իրեք հեղ թէ
« Զիս ուրիշներէն աւելի կը սիրես » . Պե-
րոս՝ « Սրտանց կը սիրեմ ըսաւ » . Յիսուս ալ
պատասխանեց . « Իմ գառներս ու ոչխար-
ներս արած է » : Ետե իրեն Յիսուս ըսաւ
թէ ատենով դու ալ սխաի խաչուիս ու մար-
տիրոս ըլլաս :

Հ . Յիսուսին վերջի երևնալն ինչպէս
եղաւ .

Պ . Շատ անգամ երևնալէն՝ խրատ տա-
լէն վերջը , քառասներորդ օրը նորէն երև-

ցաւ, ապրսպրեց որ սպասեն Նոպւոյն սրբոյ գալատեան, որ շնորհքով լցուած՝ բոլոր աշխարհքիս քարոզեն: Ետև զամենքն առաւ հեանն ու ձիթենեաց լեռք գնաց. հոն օրհնելով զանոնք՝ երկինք ելաւ: Երբոր ամ սերունն հասաւ ու ծածկուեցաւ աչուրներնէն, երկու հրեշտակ երևցան՝ ըսին թէ « Ի՞նչ զարմացած երկինք կընայիք. գիացէք թէ ինչպէս որ հիմա գնաց, անանկ օր մը փառքով նորէն պիտի գայ »: Աշակերտներն ալ ուրախութեամբ Աստուծոյ փառք տալով Երուսաղէմ գարձան:



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

129.

Հ . Քրիստոս իր վարդապետութեամբը գլխաւոր քանի՜ տեսակ բան մեզի սորվեցուց .

Պ . Իրեք . անհին օրէնքներուն տեղ որ աւետեաց երկիրը ժառանգելու համար եր նոր օրէնքներ ու պատուիրանքներ գրաւ՝ արքայութիւն վաստակելու համար . ք խըրատներ՝ Աստուծոյ սիրելի ըլլալու համար . ք խորհուրդներ՝ մեր բնութեան տկարութեան տեղը լեցնելու համար :

Հ . Քրիստոսի նոր օրէնքներն ու պատուիրանքները որո՞նք են .

Պ . Նոյն առջի տառը պատուիրանքներն են . բայց որովհետեւ հին օրէնքին ամէն խոստմունքները մարմնաւոր էին , պատուիրանքներն ալ նիւթական կերպով կը պահուէին . ինչուան որ մեկը արձան մը չպաշտէր , կու պաշտութիւն ըրած չէր սեպուէր . ինչուան որ մարդ մը չսպաննէր , մարդասպանութիւն ըրած չէր . ասանկ մեկալ ամէն պատուիրանքներն ալ : Քրիստոսի մեզի ըրած խոստմունքը հոգևոր ըլլալուն , պատուիրանքներն ալ ասլըսարեց որ հոգևոր կերպով պահենք : Վասպաշտութիւն է ըսաւ հպարտանալը , փառքի՛ հարստութեան ետեւ ըլլալը , աշխարհքիս՝ մարմնոյ ուղածներն ընե-

լը, լայն ճամբէն երթալ ուզելը, ապրելու աւելորդ հոգ ունենալը : Աւր որ միայն այս կամ ոչ ըսելով ճշմարտութիւնը կըրնայ իմացուիլ, հոն Աստուծոյ անունը յիշելը աւելորդ սեպեց : Միայն շաբաթ օրը սուրբ պահեցէք ըսուած էր, անոր տեղը ամէն օր ըսաւ աղօթք ըրէք . Հայ Բէն աւսորվեցուց . և մտքով միշտ սուրբ եղիք ըսաւ : Սպաննեւ է ըսաւ՝ մտքով զուրիշը գաաեւ, բամբասեւ, ռիս պահեւ, ողորմութիւն չընեւ, բարկանաւ, չար օրինակ տաւ, գայթակղեցընեւ զուրիշ : Մէկ խօսքով . ամէն մեղք որ հին օրէնքին առենն ինչուան գործքով չընէին՝ մեղք չէր սեպուէր, Քրիստոս սորվեցուց որ ինչ և իցէ մեղք ընելու երբոր մէկը փափաքի մտքով, թէպէտ մարդ ալ չիմանայ, ան մեղքն ըրած կըսեպուի : Հին օրէնքը մեղքին մեծութիւնը եղած գործքէն կըչափէր . Քրիստոս սորվեցուց որ պղտիկ մեղքն ալ չարութեամբ ըրած՝ քան զբիւրաւոր տկարութեամբ ըրած մեղքերէն մեծ է, և հոգւոյն սրբոյ գէմ է :

Հ . Յիսուսի խրատները որո՞նք են .

Պ . Հոգւով աղքատութիւն, հեղութիւն, սգաւոր ըլլալ, արդարութեան քաղց ու ծարաւ ունենալ, ողորմածութիւն, սուրբ սիրտ ունենալ, խաղաղարար ըլլալ . արդարութեան համար հաշտմանք ու նախաախնք քաշել : Ասոնց ամէն մէկն ընողին երանի տուաւ Յիսուս : Ետքը ետեխններն ալ ըսաւ . « Աջ ծնօաք զարնողին՝ մէկալն ալ

գարձընել, բաճկոնն ուզողին՝ շապիկն ալ թողուլ, անկարիայի բռնողին ետեկն սիրով երթալ, ուզողին սալ, մեզն շտուողին շափուկէլ. կատարեալ ըլլալու ջանք ունենալ, աշխարհք և ամէն բան թողուլ, խաչք առնել իր ետեկն երթալ. պատուոյ անուններ չուզել, ամենուն հետ հաւասար ըլլալ. մեծ ըլլալով պղտիկներուն ծառայել. միշտ աղօթք ընել ու չձանձրանալ. մաքրութիւն պահել, հոգևոր կենաց հետ ըլլալ. պաք պահելու ատեն ուրախ ըլլալ. ուրիշներուն հոգւոյ՝ համար կեանքը դնել. փոխ տալ՝ առանց յոյս ունենալու որ ետ առնէ. թշնամեաց ու հալածողաց համար աղօթք ընել. սուրբ գրքին ըսածները մըտածել. ձրի քարոզել : Բայց աս աւետարանական խրատներուն գլխաւորներն աս իրեքն են. կամաւոր աղքատութիւն, ողջախոհութիւն, և անձնուրացութիւն՝ որ է կրօնաւորական հնազանդութիւն :

Հ. Աւետարանին պատուիրանքներն ու խրատները պահողին ինչ խոստացու Քրիստոս .

Պ. Աս աշխարհքիս մէջը շնորհք, և անդին յաւիտենական արքայութիւնք . ինչ պէս որ չպահողներուն ալ՝ հոս անհանգըստութիւն սրտի, և անդին դժոխքն ու ամենջանք յաւիտենական :

Հ. Յիսուսի մեր տկարութեանը օգնելու համար տուած խորհուրդները որո՞նք են .

Պ. Մկրտութիւնք, Արօշմը ապրասպրեց առաքելոց որ քրիստոնէութիւն գարձող-

ները մկրտեն՝ սկզբնական մեղքէն սրբու-
լու համար, և ձեռք ալ դնեն՝ գրոշմէն,
հոգւոյն սրբոյ շնորհքով լեցնելու համար
որ կարենանք գէժ գնել սաստանային: Ա-
սպաշխարութե՛ն խորհուրդն ալ հաստատեց՝
իրեն կատարեալ սերը ցուցնելու համար,
որ մեղայ ըստլին չկրնար չնեղել. վասն զի
ճշմարիտ սերն արհամարհել չգիտեր: Հա-
ղորդութեան խորհուրդը հաստատեց որ
զինքը սրտերնուս մէջն առնելով, ուրիշ
բանի սեր չկապենք: Ա երջին օժումն ապրու-
սպրեց որ հիւանդներն օժեն ու հոգւոյն
սրբոյ կրակը մեղքերնուս վերքերը այրե-
լով բժշկելով, հոգինիս գեղեցկանայ զօրա-
նայ՝ Աստուծոյ սիրելի և սաստանային զօրա-
ւոր յաղթող թշնամի ըլլայ: Քահանայու-
թիւն հաստատեց որ անով մասնակից ըլլան
հաւատացեալները աս խորհուրդներուն:
Եւ Պսակն անլուծամեղի հաստատեց որ
սրբութեամբ ու Աստուծոյ օրհնութեամբ
Աստուծոյ ծառայքը շտանան:

150.

Հ. Յիսուս առաքելոց մասնաւոր բան
ապրասպրեց .

Պ. Իր չարչարանքէն առաջ քարոզու-
թեան խրկելու ատեն միայն ան միջոցին
համար մէկ քանի մասնաւոր բան ապրասպրեց,
ինչպէս, « Մախաղ և գաւազան չառնեն
հեռերնին. ամենեկին ստակ չունենան . ուր
որ կերթան ինչ որ իրենց տան՝ ան ուտեն .

երկու հագուստ՝ երկու հողածափ չունենան . հիւանդները բժշկեն , մեռելները ողջացնեն : Ասոնցմէ զատ ուրիշ բաներ ալ ապրասպրեց ամէն քարոզչի համար , այս ինքն « Չրի քարոզէն . որ քաղաքն որ զիրենք ջնդուենին ելլելու ասեն սաուրնին թօթուեն անոնց առջևն՝ որ իմանան թէ իրենք անպարտ են . դայլերուն մէջ գաան ըլլան , օձի պէս խորագէտ խոհեմ՝ ու ազաւնիի պէս միամիտ ըլլան . մարդիկներէն զգուշանան . թէ որ հալածեն , փախչին , բայց չվախնան . թագաւորաց ու գառաւորաց առջև որ տարուին , Հոգւոյն սրբոյ աուն տուածը միայն խօսին . իրարու հետ խոնարհութեամբ վարուին . ամենայն ազգաց քարոզէն ու դարձողները մկրտեն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Հ . Յիսուս աշխարհքիս մէջ ինչ տեսակ կեանք անցուց .

Պ . Ծննդենէն ինչուան երեսուն տարի առանձին հասարակ մարդու մը պէս ամենուն հետ անուշութեամբ կենցաղավարեցաւ : Ետքը քառասուն օր և ուրիշ անգամ ալ անապատը քաշուած՝ պաքի աղօթքի հետ եղաւ Ճգնաւորի պէս : Հարսնիքի գընաց , մէկուն մէկալին սեղանը հրաւիրուեցաւ ու հոգևոր խրատներով զանոնք որ բախացուց՝ Ժողովրդեան մէջ բնակող վարդապետի մը պէս : Պէտք եղած սեղը թշնամիները պապանձեցուց , բարկացաւ , յանդիմանեց , պատժեց , գէշերուն առանց ակնսառութեան վայ աուաւ՝ արգար գառաւ .

ւորի պէս : Սասկ ժողովելով աղքատներուն բաժնեց՝ ողորմած մեծատան պէս : Երբեմն ժողովորդեան պատիւը սիրով ընդունելով՝ փոխարէնը առատութեամբ տուաւ, խեղճ մարդկանց հետ սիրով վարուեցաւ ու իրենց պիտոյքը հոգաց՝ հեղ ու գթած իշխանի պէս : Անմեղ աղաքը սիրեց՝ գիրկն առաւ օրհնեց . անոնց չար օրինակ տուողին պատիժ սպառնացաւ, գութ ունեցող ծնողաց պէս : Թշնամիներէն երբեմն փախաւ, հաւածուեցաւ, Աստուծոյ անուանը համար նախատուղի պէս : Աղքատութեամբ գտածը կերաւ, հագուեցաւ, հօր Աստուծոյ ինչուան մահը հնազանդեցաւ, և միշտ սրբութեամբ ապրեցաւ : Անպարտ տեղը անարգական մահուամբ մեռաւ : Աս ամէն բան պէտք է դաժին պէս ընելով, և ասոնցմէ զատ հրաշքներ ընելով սասանաները վախցընելով յայտնի ցցուց որ ինքն Աստուած է՝ մարդ եղած, և կուղէ որ ամէն վիճակի մարդիկ իրեն նմանելով Աստուծոյ նման ըլլան :

Հ. Յիսուսի քարոզութեան ատենն ըրած հրաշքներն և ուրիշ գործքերը բոլոր գրած են աւետարանին մէջ .

Պ. Չէ . հասկա ինչպէս որ աւետարանիչն ալ կրսէ, այնչափը գրուեցաւ որ լսողը չկարենայ տարակուսիլ Քրիստոսի աստուածութեանը վրայ .

լեզուներ երեցան, իրենք ալ սկսան տեսակ տեսակ լեզուներ խօսիլ: Ան ատենը ամէն աշխարհքէ բարեպաշտ Հրեաներ որ զատկին Երուսաղէմ եկեր էին՝ իմացան, եկան սկսան զարմանալ որ իրենց երկիրներուն լեզուովք կըխօսէին առաքեալները: Ամանք ալ սկսան ծաղր ընել՝ գինով են ըսելով: Ան ատենը Պետրոս ուրիշներուն հետ Յովէլ մարգարէին խօսքովն անոնց իմացուց ու զեզջի բերաւ, անանկ որ ամէնքն սկսան հարցնել թէ ինչ ընենք: Պետրոս՝ զըջացէք ըսաւ. և ասանկով ան օրը իրեք հազար հոգի Յիսուսի հաւատացին ու մկրտուեցան:

Հ. Հոգին սուրբ առնելէն ետքը առաքելոց սովորական դորձքն ինչ էր.

Պ. Ամէն օր տաճար կերթային աղօթք ընելու, և ամենուն համարձակ կըբարոզէին. տեսակ տեսակ հրաշքներով ալ ըսածնին կըհաստատէին: Ինչպէս օր մը Պետրոս և Յովհաննէս մէյտեղ տաճար մանելու ատեն, կազմնած մարդ մը որ միշտ գրան քով կըբերէին կըդնէին ողորմութիւն մուրալու համար, իրենցմէ ողորմութիւն ուզեց. Պետրոս ալ ըսաւ. « Բեզի ահա ունեցածս տամ. Յնի անունով ելիք քալէ » ըսելով ձեռքէն բռնեց վերուց: Ան ալ մէկէն ցաաքեց գնաց տաճարն Աստուծոյ փառք տուաւ: Աս պատճառով եկան Պետրոսի քարոզութիւնը մտիկ ըրին ու հինգ հազար հոգի ալ դարձան:

Հ. Յիսուսի թշնամի եղող Հրեաները երբ որ առաքելոց ըրածներն իմացան, ինչ ըրին.

Պ. Վրանին բարկանալով թէ ժողովուր-

գը կըխօռովեն, բռնեցին զանոնք բանա գրին.
առաւօտանց հանեցին բանակն որ քննեն զի-
րենք: Առաքեալներն ալ խմացուցին անոնց
ճշմարտութիւնը: Անոնք վախնալով առա-
քեւոց մնաս մը հասցրնելու, սպառնալիք ը-
րին որ մէյմ՝ ալ չխօսին Յիսուսի վրայ: Անոնք
ալ ըսին. « Մենք մարդու հնազանդելու հա-
մար՝ Այ հրամանն ոտքի տակ չենք կրնար
առնել »: Հրեայք նորէն բարկացան ու թու-
ղուցին: Առաքեալները գնացին մեկտանոց
պատակցին, և ամէնքը մեկէն աղօթք ըրին որ
Աստուած շնորհքն աւելցրնէ որ չվախեն:
Մեկէն կեցած ակղերնին շարժեցաւ ու
նորէն հոգին սուրբ իրենց եկաւ:

152.

Հ. Երբոր հաւատացեալք սկսան շառ-
նալ, մէջերնին ինչ կարգ կանոն գրին.

Պ. Յիսուսի խրատներուն հեռեկեղծ ա-
մէնքը մէկ սիրտ մէկ հոգի, ունեցածնին կը-
ծախէին ու ստակնին կըբերէին մեկտեղ կը-
գնէին որ հաւասար ամենուն բաժնուի. կե-
րակուրն ալ մեկտեղ կուտէին: Անանիան ու
Սափիրայ իր կինը աս կարգիս գէմ խարդա-
խութիւն ընելով պատժուեցան:

Հ. Անանիայ և Սափիրայի ըրած խարդա-
խութիւնը ինչ բան էր.

Պ. Ասոնք ծախեցին երկիրնին ու ստակին
միայն մէկ մասը տարաւ Անանիան Պետրոս
առաքեւոյն տուաւ. « Անանիա, ըսաւ առա-
քեալը, գիանաս որ ատ գործքովց զԱս-

առւած խաբեցիր” : Անանիան մեկէն հոն ինկաւ մեռաւ : Ետեւէն Սափիրան եկաւ . հարցուց Պետրոս թէ այնչափ էր ազարակին գինը : « Հրամեր ես ըսաւ » : « Աս ինչ է , ըսաւ Պետրոս , խօսք դրեր էք որ զԱճ խաբէք . դուն ալ երկանդ քով թաղուիս » : Ան ալ հոն ինկաւ մեռաւ , տարին երկանը քով թաղեցին : Ասով ամենուն սիրտը սասափկ վաս ինկաւ որ կեղծաւորութիւն չընեն :

Հ . Առաքեալներուն ըրած հրաշքները՝ Յիսուսին ըրածներուն շատու թեանը կը հասնին :

Պ . Ամենեկին Յիսուսին պէտանթիւ հրաշք կընէին , և զամենքը կը հաւտացընէին . այնչափ որ Պետրոսի անցնելու ճամբուն վրայ կը դնէին հիւանդներն որ իրեն շուքը վրանին զարնէ ու բժշկուին . շատն ալ առաքելոց թաշկինաիր կամ ուրիշ լաթը կը տանէին ու հիւանդին վրայ կը դնէին կբժշկուէր . թշնամիներն ալ կը վախէին դէմ խօսելու : Իսկ Պետրոս առաքելոյն ըրած հրաշքներէն մասնաւոր կը լինուի Ենեա անգամաւոյձն որ բժշկեց , և Տարիթա բարեպաշտ կինն որ երբոր մեռաւ՝ ողջնցուց :

Հ . Առաքեալները միշտ հանգիստ կըրցան իրենց քարոզութիւնը ընելու .

Պ . Չէ . վասն զի չգիտնալով քահանայապետներն ու Փարիսեցիք , զառաքեալները բանտ դնել տուին : Բայց գիշերը հրեշտակ մը եկաւ զիրենք ազատեց . գնացին աաճարին մէջ սկսան քարոզել : Առաւօտանց հրեայք մարդ խրկեցին բանտն որ դատաստանի բե-

բին զանոնք : Գնացին որ բանառ գոյ է ու մէջը մարդ չկայ : Ետքը ուրիշներն եկան ըսին որ տաճարին մէջն են : Զարմացան . բայց կանչեցին որդաղեցան : Անոնք համարձակ առաստիանեցին թէ « Մենք մարդու ըսածին չենք նայիր . Աստուծոյ կը նազանդինք » : Ետքը սկսան երեսներն զարնել անոնց Յիսուսի գէմը բրած անօրէնութիւնները . Հրեաներն ալ կատաղեցան , գուրս հանեցին զիրենք ու խորհուրդ ըրին որ սպաննեն : Ան տակեր Գամաղիէլ խեղացի մարդ մը իրենց խորհուրդ տուաւ որ անոնց ձեռք չդըպցնեն . թէ որ տանք ըսաւ՝ « Թեղասին և Յուզային պէս են որ ելան ժողովուրդն ապաստանեցնելու համար ու կորսուեցան , ասոնք ալ կը կորսուին . իսկ թէ որ Աստուծակ է ըրածնին , Աստուծոյ գէմ կռիւ բրած կըլլաք , ու զիրենք ալ չէք կըրնար ջնջել » : Աս բանիս իրենց խեղքն ալ պառկեցաւ . բայց նախ աղէկ ձեռք մը առին առաքելոց ու արգիլեցով որ չխօսին , թողուցին : Անոնք ալ ուրախանալով որ Յիսուսի անուանը համար նախատուեցան . գնացին՝ ալ աւելի սկսան քարոզել :

155.

Հ . Երբոր հաւատացեալները շացան , աղքատներուն հոգն ալ միշտ առաքելոց վրայ էր .

Պ . Առաքեալները անանելով որ չեն կըրնար հասնիլ ժողովրդեան հոգևոր և մարմնաւոր պիտայքը մեկտեղ հոգալու , խորհուրդ

ըրին, եօթը հոգի ընտրեցին ու սարկաւազ
օրհնեցին որ դրսի բաները հոգան. և էին ա-
սնէք. Ստեփանոս, Փիլիպպոս, Պրոխորոն,
Նիկանոր, Տիմոթէոս, Պարմենա, Նիկողայոս.
որոնց մէջէն Ստեփանոսը հոգւոյն սրբոյ
չնօրհփով լցուած՝ հրաշքներ կրներ, թշնա-
միները կրօզասպանձեցրներ :

Հ. Հրեայք Ստեփանոսի թշնամանալով
կորցան իրեն վնաս մը հասցրնել :

Պ. Բանեցին քահանայապետին առջև
դատաստանի տարին, ըսելով թէ զԱստուած
ու զՍովսէս կրհայհոյէ : Քահանայապետն
իրեն հարցուց. Ստեփանոս անդն ՚ի անդը
ցոյց հրեից խստատու թիւնը և իր ըսած
ներուն ճշմարտութիւնը : Ասով սաստիկ
բարկացան վրան : Նայեցաւ Ստեփանոս եր-
կինքն ու ըսաւ, « Ահա կրտսնեմ Յիսուան
Աստուծոյ աջ կողմը նստած » : Ամենքն ա-
կանջնին գոցեցին, բանեցին տարին քարկո-
ծեցին. որ մեռնելու ատեն կանչեց, « Տէր
Յիսուս առ իմին հոգիս » : Ետև ծունկի վրայ
եկաւ, « Աստուած՝ ըսաւ՝ ասոնց բրածը մեզք
մի սեպեր » : ու մեռաւ : Ետքը եկան հաւա-
տացեալները լալով արցունքով մարմինը վե-
րուցին : Աս սուրբն Ստեփանոս Քրիստոսի
համար առջի արիւն թափողն ըլլալուն՝ Նա-
խավկայ ըսուեցաւ :

Հ. Սրբոյն Ստեփանոսի մահուան ատեն
ներն ուրիշ հաւատացեալները հանդիսաւէին :

Պ. Հրեայք բոլոր քրիստոսնէից դէմ հա-
լածմունք հանեցին, ան պատճառաւ բոլոր
աշակերտներն Երուսաղեմէն ցրուեցան ու

գացած տեղերնին կըքարոզէին :

Հ . Հողեգալսանէ կաքը առաքելոյ ըրած գործքերը նոր կտակարանին մէջ բոլոր կըպատմուին .

Պ . Չէ . միայն Պեարոսին մէկ երկու գործքերը , Փիլիպպոսին զնեբբինին մկրտելը , Անանիային ձեռքով Պողոս առաքելոյն գարծը , և կաքը Պողոս առաքելոյն Բառնաբասի հետ ըրած քարոզութիւնները : Այնչափ որ ասոնց մէ մակարերենք ու բիշներուն ըրածներն ալ :

Հ . Պեարոս առաքելոյն վրայ պատմուած գործքերը որոնք են .

Պ . Սիմոն մոզին տուած յանդիմանութիւնը , հեթանոսներուն՝ եկեղեցւոյ անգամ ըլլալնին իրեն յայանուելը , բանակն հրեշաակին ձեռքով աղատիլը :

Հ . Սիմոն մոզն ո՞վ է , և Պեարոս առաքելալ զինքն ինչո՞ւ յանդիմանեց .

Պ . Սիմոն կախարդ մարդ մըն էր Սամարիայի մէջ որ իր գործքերով զամենքը զարմացուցած էր : Արբոր Փիլիպպոս հոն գնաց , ինքն ալ եկաւ մկրտուեցաւ ու քովէն չէր զատուէր , և ըրած հրաշքներուն վրայ կըզարմանար : Ետքը երբոր Պեարոս առաքելալն ալ հոն եկաւ որ մկրտուածներուն վրայ ձեռք դնելով Հողին սուրբ տանել կուտար , Սիմոն հանեց առաքելալներուն ստակառու որ իրեն ալ տան ան իշխանութիւնը : Ան առան Պեարոս՝ « Սասկիդ հեա կորսուէ ըսաւ . սիրող շիտակ չէ , անոր համար Հողւոյն սրբոյ շնորհքէն զրկուած ես . ապա խարէ որ թողութիւն ըլլայ քեզի » :

Հ. Փիլիպպոս ինչպէս մկրտեց Եթովպացի ներքինին .

Պ. Անգամ մը հրեշտակ Աստուծոյ Փիլիպպոսի հրամայեց որ Երուսաղեմէն դէպ ՚ի Գազա հանող ճամբէն երթայ . հոն ճամբուն վրայ հանդիպեցաւ Եթովպացոց թագուհւոյն ներքինի գանձապետին որ ուխտն ըրած՝ կառքով կրդառնար Երուսաղեմէն . Փիլիպպոս Հոգւոյն սրբոյ ազգամամբը քովը գնաց , տեսաւ որ Եսայի մարգարէին գիրքը կրկարդար . հարցուց թէ « Կըհասկընաս » : Ներքինին չէ ըսաւ , ու աղաչեց զինքն որ ելլէ քովը նստի ու իրեն մեկնէ : Կարգացած տեղն ալ հանդիպեցաւ Քրիստոսի վրայ գրածը՝ թէ « Ոչխարի պէս առանց ձայնի մեռցընէ լուտարին » : Ներքինին հարցուց թէ « Ըսորուն համար կըսէ » : Ան ասէն Փիլիպպոս տեղն իստեղը Քրիստոսի հաւատքը անոր սրվեցուց : Արքոր ջրի մը քով մտնեցան , ներքինին ուղեց ու մկրտուեցաւ , և Հոգին սուրբ ալ եկաւ վրան . ետքը հրեշտակը յանկարծ Փիլիպպոսը քովէն վերուց՝ ուրիշ քաղաք տարաւ . ներքինին ալ ուրախութիւն լցուած՝ գնաց իր տեղը :

Հ. Պօղոս առաքեալն ո՞վ էր , և ինչպէս դարձաւ .

Պ. Սաւուղ անունով օրինաց սաստիկ վրէժխնդիր հրեայ մըն էր , որ Ստեփանոսի քարկոծման ասէն քարկոծողներուն լսածէ .

ըր պահէր էր : Իմանալով թէ հաւատացեալները Դամասկոսի մէջ կըշտանան , քահանայապետէն թուղթ առաւ ճամբայ ելլելու , որ երթայ զանոնք բռնել տայ : Երբոր Դամասկոս մտեցաւ , յանկարծ երկնքէն չորս գին լոյս փայլաատակեց , ինքն ալ գեափնն ինկաւ , ու ձայն լսեց՝ թէ « Սաւուղ Սաւուղ , ինչո՞ւ զիս կըհալածես » : Պօղոս ըսաւ . « Տէր , դուն ո՞վ ես » : Նորէն ձայն եկաւ՝ թէ « Ես Յիսուս՝ Նազովքեցին եմ » : « Տէր ի՞նչ կուզես որ ընեմ » ըսաւ Պօղոս : Ըն ալ պատասխանեց . « Ելլի քաղաքը գնա ու ինչ որ քեզի կըսեն՝ ըրէ » . Պօղոսին քովի մարդիկն ալ զօրհուրած՝ բան չէին տեսներ , միայն ձայն կըլսէին : Ետքը աչուրները կուրցած՝ Դամասկոս տարին . հոն իրեք օր անանկ անօթի կեցաւ , ինչուան Աստուծոյ հրամանով Անանիան եկաւ , ձեռքը վրան դնելով բժշկեց ու մկրտեց :

Հ . Պօղոս մկրտուելէն ետե ինչ ըրաւ .

Պ . Մէկէն սկսաւ քարոզել զՅիսուս ու վիճել հրէից հետ . անոնք կըզարմանային թէ ինքն էր որ զքրիստոնեաները հալածելու եկեր էր ու իրենց դէմ կընէր . ուստի իրենք ալ ետևէ եղան որ զինքն սպաննեն : Աշտկերաներն ալ զինքն գիշերանց սպրտակն կախելով փախուցին , որ Երուսաղէմ գնաց , սկսաւ քարոզել : Երբոր հան ալ խմացան հրեայք , ետևէն ինկան բռնելու : Անկէ ալ Տարսոն փախուցին :

Հ . Պետրոս առաքելոյն ինչպէս յայտնուեցաւ թէ հեթանոսներն ալ եկեղեցւոյ անդամ են .

Պ . Կուռնեւելիոս հարիւրապետ հեթանոս՝ բայց բարեգաշա մարդ մը՝ միշտ ողորմութիւն կուտար ու աղօթքի հետ էր : Հրեշտակ Աստուծոյ երեցաւ իրեն ըսաւ՝ թէ : « Աղօթքդ Աստուած ընդունեցաւ , ուստի Յօսպէքաղաքը մարդ խրկէ ու Պետրոս առաքելալը կանչէ որ քեզի սորվեցրնէ փրկութեան ճամբան » : Կուռնեւելիոս շուտ մը իրեք հոգի խըրկեց . ան ասին Պետրոս կէս օրուան դէմ ասանկին ելեր աղօթք կրնէր , յանկարծ տեսաւ որ երկինքը բացուեցաւ , ու մէկ կտաւ մը չորս ծայրէն կախած , մէջը ամէն տեսակ կենդանիներով լցուած առջն իջաւ : Պետրոս երբոր զարմացած կրնայէր , ձայն մը լսեց՝ թէ « Պետրոս , ելիր մօրթէ ու կերասանք » . Պետրոս ըսաւ . « Քաւ լիցի տէր , պիղծ բան չեմ ուտեր » : Կորէն ձայն եկաւ թէ « Մի ըսեր պիղծ , վասն զի Աստուած օրբեց զասանք » . ասանկ իրեք հեղ լսելէն ետև անյայտ եղաւ : Ասոր վրայ երբոր Պետրոս սկսաւ մտմտալ , նոյն ասէնը Կուռնեւելիոսի խրկած մարդիկն ալ հասան . ու զինքը կանչեցին խօսեցան , պատմեցին Կուռնեւելիոսին հանդիպածը : Երկրորդ օրը Հոգւոյն սրբոյ ազգելովը՝ հետը մէկ քանի Հրեայ առած՝ Կուռնեւելիոսի քով եկաւ , որ բոլոր

բարեկամները ժողոված՝ իրեն կրօնասէր :
Երբոր Պեարոս տունը մտաւ, Կուռնեղիոս
եղաւ ոտքն ինկաւ : Պեարոս « Ելի ըսաւ՝
ինչ կրնես, ես ալ քեզի պէս մարդ եմ » : ու
ետքը անոր խմայուց թէ անսիւքով Աճ ի-
րեն յայտներ է որ անկէց ետև օրինաց խըա-
րութիւն պիտի չըլայ : Հիմա ինչ կապէք ը-
սաւ . Կուռնեղիոս ալ « Կուզէնք որ ըսաւ
Աստուծոյ հրամանը մեզի ըսես » : Պեարոս
անանց սորվեցուց ամէն բան ու մկրտեց : Բայց
մէկ երկու օրէն որ Երուսաղէմ գնաց, Հրէից
հաւատացեալները վրան դայթակղիլ ցցու-
ցին, ինչուան որ լսեցին Աստուծոյ կամին ու
փառք տուին Աստուծոյ :

Հ . Պեարոս առաքեալն ինչ պատճառաւ
բանա գնաց, և ինչպէս ազատեցաւ .

Պ . Հերովդէս Ազրիպպոս Հրեաստանի
Թագաւորը՝ Հրէից աչքը մանկէլ ուղեւով,
հալածանք հանեց, ու Յակոբոս առաքելոյն
գլուխը կտրել տուաւ . ետէն Պեարոս
առաքեալն ալ բանա գրաւ, որ զտակէն ետև
ան ալ սպաննէ : Երուսաղէմի մէջ ամէն հա-
ւատացեալք իրեն համար աղօթք կրնէին :
Ետքի գիշերը Պեարոս շղթաներով կապուած՝
պահապաններու մէջ քնանալու տակն, հրէշ
տակ մը եկաւ, Պեարոսը արթննաց և ըսաւ,
« Շուտ ըրէ ել » : Ան տակնը յանկարծ բա-
լոր շղթաները արձրկուեցան՝ ինկան : « Գ.օ.
տիգ կապէ, ըսաւ հրէշտակը, հողածափ-
ներդ հագիր, լաթդ վրագ առ ու ետևէս ե-
կո » : Պեարոս երազ կրկարծ էր . բայց երբոր
բանաին երկրթէ գուռն ալ ինքիւրեն բացուե-

ցաւ, ու գուրս ելած ին պէս՝ հրեշտակն ալ
չերեցաւ, ան առե՛նը խնացաւ թէ հրաշք է,
ու Աստուծոյ փառք տալով՝ Մարկոսի առ-
նը գնաց ուր որ շատ հաւատացեալք ժողո-
ված իրեն համար ազօթք կրնէին: Գուռն
որ զարկաւ, ազախին մը նայեցաւ, ու ձայ-
նէն ճանչնալով՝ ուրախութենէն գուռը
չքացած ներս վազեց խնացուց. անոնք չհա-
ւատացին. Պետրոս ալ գուռը շարունակ կը
զարնէր. երբոր բային ու զինքը աեսան՝ զար-
մացան: Պետրոս ալ եղածը սպասեւէն ետքը՝
Կեսարիա գնաց: Բայց առաւօտանց երբոր
հերովդէս Պետրոսը չգտաւ, պահապան-
ներն սպաննել առւաւ:

136 .

Հ. Պօղոս առաքեալն առջի քարոզու-
թիւնները ո՞ր քաղաքն ըրաւ .

Պ. Բառնարաս երբոր Անտիոք կը քարոզէր,
գնաց՝ Տարսոնէն Պօղոսն ալ հանեց ու տա-
րիի մը չափ հոն շատ պատու ըրին. և ամենէն
առաջ Անտիոքացիք Քլէոբոսէոյ ըսուեցան:
Անկէ հոգւոյն սրբոյ յայտնելովն որ զկա-
տաշաներն երթան դարձնեն, երկուքը մեկ
տեղ Կիպրոս գնացին, շատ հոգի վաստակե-
ցան:

Հ. Կիպրոսի մէջ Պօղոս առաքելոյն ի՞նչ
նոր գիտուած հանգիսեցաւ .

Պ. Պափոս քաղաքը Բարեյեսու կախար-
դը տեսէ էր որ Սերգիոս Պօղոս ըսուած իշխա-
նը հաւատքէ հանէ: Անոր համար Պօղոս առաւ .

քեալը յանդիմանեց կախարդն ու ըսաւ՝
: Ո՛վ խաբեբայ սասանայի որդի, Աստուծոյ
պատիժը վրագը ըլլայ որ կուրնաս տակն մը :
Սերգիոս աս որ տեսաւ, հաւատքին վրայ
աւելի հաստատուեցաւ :

Հ. Պօղոս առաքեալ Վիպրոսէն մէր գնաց.

Պ. Բառնարասին հետ Անտիոք Պիսիգեայ
գնաց ու մտաւ Հրէից ժողովարանը քարոզե-
լու : Երբոր հոն չընդունեցան, անոնք ալ ե-
լան իկոնիոն եկան. հոնկէ ալ հալածուելով,
Լիւսարա գնացին : Հոն կաղ ծնած մարդ մը
բժշկեց Պօղոս կասպաշաներուն առջև,
անոնք աս հրաշքս տեսնելով, կարծեցին թէ
կուռքերն երկինքէն իջեր են. ուստի կովեր
բերին որ իրենց առջևը զոհ ընեն : Ան ասէն
Պօղոս ու Բառնարաս լաթերնին պատուե-
ցին, սկսան կանչել. « Մենք ձեզի նման
ենք, ճշմարիտ Աստուածը ձեզի կը բարո-
զենք » . ասանկով հազիւ արգիլեցին զոհե-
լէն. Բայց ուրիշ քաղաքներուն Հրեաներն
խնայալով թէ ասոնք շատ ժողովուրդ կը գար-
ձընեն, գրգռեցին զամէնքն ու զՊօղոս չար-
չարելով վաճառեցին. ան ալ Բառնարասին
հետ Յունաստանի ուրիշ քաղաքները գնաց
ու շատ մարդ գարձուց :

Հ. Հեթանոսներէն գարձած քրիստոնեա-
ներուն ու Հրեաներէն եկածներուն մէջ
ամենեկին կախ չէր ըլլար .

Պ. Գրեթէ միշտ մէջերնին հակառակու-
թիւն կար Մովսէսի օրէնքներուն համար. ա-
ւելի թլխատութեան վրայ : Հրեայք կը սլն-
դէին թէ ամէնը պէտք է թլխատուին որ

փրկուին: Անոր համար Պօղոս ու Բառնա-
բան Երուսաղէմ խրկուեցան որ առաքե-
լոց հետ խորհուրդ ըրին՝ որոշեցին որ չթը-
փատուին:

Հ. Պօղոս առաքեալ հեթանոսներուն քա-
րոզելու ատեն ամենեկին թնամի չունեցաւ:

Պ. Իրեն շատ նեղութիւն հասցնողները
հրեաներն եղան. Թէպէտև հեթանոսներէ-
ալ երբեմն շարշարուեցաւ: Ինչպէս անգամ
մը երբոր Մակեդոնիա կը քարոզէր, գիւաճար
աղախին մը ամէն հանգիստըն կը կանչէր
Թէ « Ասոնք Աստուծոյ ծառաներն են »: Օր
մը Պօղոս դարձաւ սասանային ըսաւ. « Յի-
սուսի Քրիստոսի անունովը ելի աակից »:
ու շուտ մը կինը բժշկուեցաւ: Ասոր վրայ
գիւաճարին տէրերը շատ սրգողեցան որ ա-
նոր իրենց գաղտուկ բաներ յայանելովը շատ
փաստակ կրնէին: Անոր հմբ Պօղոսն ու Շիզան
կը ընկերը բանտ դնել առին, Բողոզուրդը կը
խառովեն ըսելով: Բայց կէս գիշերուն աղօթքի
ատեն՝ յանկարծ բանար շարժ մը եղաւ՝ բոլոր
դռները բացուեցան, ու իրենց ալ կապերն
արձրկուեցաւ: Բանտին վերակացուն ձայնեն
արթնցաւ, ու կարծելով Թէ փախեր են,
յուսահատութենէն թուրը քաշեց որ ինք-
զինքն սպաննէ. Պօղոս շուտ մը կանչեց Թէ
« Մի վախեր, հոս ենք »: Ան ատեն պաճա-
պանը զարմանալով եղած հրաշքին վրայ,
բանտէն զիրենք հանեց տուն աարաւ. ու
ինքն ալ ան գիշերը մկրտուեցաւ: Ասաւ
տանց երբոր գառաւորներէն հրաման եկաւ
ազատ ըլլալու, Պօղոս պատասխան տուաւ:

Թէ « Ազատ Հռոմայեցի մարդիկ ծեծելով
բանա դրին . ու հիմա գաղտնիկ կըհանեն » :
Դատաւորները երբոր իմացան ասոնց Հռո-
մայեցի ըլլաւին , շատ վախցան , ու եկան
Թողութիւն խնդրելով ազատեցին : Ասկէ
ետե Պողոս աագիս անդին շատ քարոզու-
թիւններ շատ հրաշքներ ընելով Ափեսոս
գնաց : Հոն ալ այնչափ եղաւ որ իրեն Թաշ-
կինակը հիւանդներուն կըտանէին ու անով
կըբժշկուէին :

157 .

Հ . Եփեսոսի մէջ Պողոսի ինչ նոր գի-
տուած պատահեցաւ .

Պ . Եփեսոս Սկևի քահանայի մը եօթը
ազաք կային , որ երգմենեցուցիչ կըսուէին , ե
գիւահարներ բժշկել կըջանային . տեսան որ
Պողոս առաքեալ Յիսուսի անունովը գե կը
հանէ , իրենք ալ մէկ հեղ մը գիւահարի մը
ըսին . « Քեզ կերդուընցընենք Յնի անու-
նովը՝ որ Պողոսը կըքարոզէ » : Էուա մը գիւա-
հարը՝ « Յնը գիտեմ ու Պողոսը կըճանչնամ ,
բայց գուք ո՞վ էք » ըսելով վրանին վաղեց ու
անոնցմէ երկուքը անանկ չարչարեց որ ճորով
մերկ ու վիրաւորուած ազատեցան ձեռքէն :
Ասով Թողովրդեան սիրար վախ ինկաւ , սկը-
սան կախարդական գրքերն այրել , խոստո-
վանիլ ու գառնալ : Ան ատեն Դեմիարիոս
արծաթադործ մը որ կուռքեր կըշինէր , երբ
որ տեսաւ որ կուռքերը գնողները կըքիչ-
նան , գրդուց իր արհեստակիցնէ ըն ու սկսաւ
խոսվութիւն հանել : Պողոս տեսաւ որ ձեռ-

քերնէն ազատիլ չըլար, ելաւ անկէ առջի
քարոզած տեղուանքը պաշտելով նաւ մտաւ
որ Երուսաղէմ երթայ :

Հ. Երբոր Պօղոս Եփեսոսէն Երուսաղէմ
գնաց, ինչ նոր բան պատահեցաւ .

Պ. Ճամբան երբոր կեսարիա հանգիպե-
ցաւ, հոն Ագարոս աշակերտ մը մարդարեւ
ցաւ թէ՛ Երուսաղէմ զՊօղոս կապեն պիտի
ու կապալաշաներուն մասնենն : Ուստի Պօղոս
երբոր գնաց Երուսաղէմ, Հրեայք վրան
շատ բարկացած ըլլալով, բռնեցին զինքը,
կուզէին մեռցնել, բայց դատաւորներու
ձեռք մասնուեցաւ . որոնք Հրէից հաճոյս
նալու հմբ չէին արձրկեր . արդարութեան
գէմ չընելու համար ալ չէին մեռցնել :
Ասանկ մէկ երկու տարի կապուած կեցաւ
Պօղոս . բայց տեսնելով որ ուրիշ ճար չկայ,
կայսեր գիմացն ելլել ուզեց . ուստի Փես-
տոս դատաւորը զինքը հռոմ խրկեց :

Հ. Պօղոս հռոմ երթալու ստեն՝ ճամ-
բան ինչ նեղութիւն քաշեց .

Պ. Շատ խառնակ օգերու հանգիպելով
քանի մը հեղ նաւակոծութիւն եղաւ : Ան-
գամ մը որ ամէնքը յուսահատած՝ ոչ կու-
տէին և ոչ կրիամէին, Պօղոս անոնց սիրա-
տուաւ որ ուտեն, բտելով «Ա՛՞՞ ինձի յայտ-
նեց որ մարդ պիտի չկորսուի» : Եւ ետքը
երբոր ցամաքի զարկաւ ու սկսաւ նաը
քայքայիլ, ուզեցին զինուորներն որ հռոմ
տանելու մահապարաներն սպաննեն որ
չփախչին . բայց հարիւրապետը չթողուց,
« Ո՛վ որ ինչ կերպով կըրնայ՝ թող ցամաքն

ելէն ՚՛ ըսաւ . վասն զի զՊօղոսն ապրեցընէլ
կուզէր : Ասանկով մէյմէկ տախտակի կտո-
րով ամէնքն ազատեցան ելան Մեւհափնէ
կղզին : Հոն կղզեցիք զիրենք սիրով ընդունե-
ցան ու կրակ վառեցին որ տաքնան , վրանին
գլուխնին չորցընեն : Պօղոս կրակին մէջ խախ-
նէր ձգելու ատեն մէջէն օձ մը ելաւ՝ ու իր
թևին պլուեցաւ . ամէն տեսնող սկսան ըսել
թէ « Գեշ մարգ է եղեր որ օձը զարկաւ
զինքը » : Բայց երբոր Պօղոս թօթուեց օձը կրա-
կին մէջ ու իրեն բան մը չեղաւ . « Ուրեմն ըսին
ասիկայ աստուածներէն մէկն է » : Երեք ամիս
հոն կեցաւ Պօղոս , շատ մարգ բժշկեց : Ետքը
գնաց Հռոմ , և տեսնելով որ իրեն գէմ
գատաստանի էլլող չկայ , մէկ տուն մը քա-
րոզութիւն կրնէր : Քանի մը տարիէն ետև
Ներոն կայսրը մէկ օրուան մէջ Պեարոսը գլխ-
իվար խաչեց և Պօղոսը գլխատեց :



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Նոր կտակարանին պատմութիւնը ս՛վ գրեց .

Պ . Յիսուսի վարքը գրեցին չորս աւետարանիչները , Մատթէոս , Մարկոս , Ղուկաս և Յովհաննէս : Մատթէոս հրեարէն գրեց Երուսաղեմի մէջ՝ Քրիստոսի մեռնելէն վեց տարիի չափ ետքը : Մարկոս Պետրոսի առն տալովը հռոմ գրեց աւետարանը՝ Քրիստոսի մահուանէն տասը տարի ետև : Մարկոս և Ղուկաս՝ առաքելոց աշակերտներէն էին : Ղուկաս Պողոսէն ու մէկաւ առաքեալներէն ըսելով գրեց աւետարանը՝ Քրիստոսի համբարձմանէն քսան տարիի չափ ետքը : Յովհաննէս ալ՝ Քրիստոսի չարչարուելէն վաթսունուհինգ տարի ետև : Իսկ Քրիստոսի համբարձմանէն ինչուան Պողոսի հռոմ երթալուն պատմութիւնը զատ գրեց Ղուկաս աւետարանիչը , որ Գործք առաքելոց կրտսի :

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Երուսաղէմի կործանումը :

Հ . Հրեայք իրենց խտասարտութեամբը Քրիստոսի և քրիստոնէից դէմ կռուելով ո՞րչափ ասէն գիտացան .

Պ . Աստուած իր երկայնամիտ համբերութեամբը Քրիստոսի մահուանէն ետև քասուն տարի ալ իրենց միջոց տուաւ որ խելունին գլուխնին Տողլէն ու դառնան որ Աստուծոյ սպառնալիքէն ազատին : Բայց երբոր ճար չեղաւ , թողուց Աստուած որ հռոմայեցի իշխաններն սկսան զիրենք չափէն աւելի չարչարկել . որոնց վերջինն եղաւ Փլորոս դատաւորն որ սասաիկ անողորմութեամբ կրտանջէր Հրեաները : Անոնք ալ չգիմանալով , խօսք դրին , սպասամբեցան Հռոմայեցոցմէ . և իրենց չորս իշխան առաջնորդ գնելով ամբոցուցին Երուսաղէմն ու Հրեաստանի ուրիշ քաղաքները , և սկըսան սպատերազմիլ : Եկաւ ասոնց դէմ Ալեքսանտրիանոս և Տիտոս իր տղան , կռուեցան զարկին զարնուեցան , ինչուան որ բոլոր Հրեաստան և Երուսաղէմ հիմնայատակ կործանեցաւ :

Հ . Երուսաղէմի կործանումն ինչ կերպով սկսաւ .

Պ . Երբոր լսեցին Երուսաղէմացիք թէ Հռոմայեցիք եկան բոլոր Հրեաստանի քաղաքներն առին , մեծ խռովութիւն ինկաւ

մջերնին . ոմանք նորէն Հռոմայեցոց հնա-
զանգիլ կուղէին , ուրիշներն ալ ինչուանեա-
քը պատերազմիլ : Աս պատճառաւ սրի-
կայ մարդիկ մէկ եղած՝ սկսան կռիւ ընել
մէկալ Հրեաներուն հետ . և քաղաքին գրո-
ները գոց , մէջն ամէն օր վայնասուն , մէկ-
զմէկ կըջարգէին : Տաճարն եզեր էր իրենց
պատերազմին տեղը . որչափ որ ուտելու
պաշար ունէին , բոլոր կրակի տուին . ա-
նանկ որ գեւ թշնամիք վրանին չեկած՝ մէ-
ջերնէն խելացիներն խմացան որ աս մասնա-
ւոր Աստուծոյ պատիժն է , ասանկով ուղեն
չուղեն՝ պիտի ջնջուին . մանաւանդ որ Ա-
տուած ալ մէկ քանի յայանի նշաններով
խմացուց իրենց գլխուն գալէքը :

Հ . Աստուած Երուսաղէմի կործանելուն
ինչ նշաններ տուաւ .

Պ . Նախ՝ տաճարին պղնձէ գուռն որ
քսան հողի հազիւ կըրնային գոցել , կէս
գիշերանց ինքիրեն բացուեցաւ , և տաճա-
րին մէջ հրեշտակներու ահաւոր ձայն կը-
լսուեր որ կըսէր . « Աս տեղէն փախչինք ,
փախչինք » : Ի կրակի պէս վառած կառքեր
ու խուճք խուճք զօրքեր կերևային օդուն
մէջ երկինքը : Ի՞նչեաւ անունով մարդ մը
Երուսաղէմին մէջ եօթը տարի գիշեր ցորեկ
անդադար մէկ դիէն մէկալ դին վազվրուտե-
լով կաղաղակեր . Այն , վայ , վայ Երուսա-
ղէմի : Ի՞նչ Երկինքը սասաիկ մեծ լոյս մը երև-
ցաւ՝ տաճարին չորս դին պատած՝ կէս ժամի
չափ . ահաւոր տեսքով պոչաւոր աստղ մըն
ալ երևցաւ քաղաքին վրայք տարի մը չափ :

Հ. Երուսաղէմ ինչպէս պաշարուեցաւ .

Պ. Տխոտս շատ զօրքով եկաւ քաղքին չորս կողմը բանակը դրաւ ու սկսան երկու կողմէն սաստիկ պատերազմիլ : Տխոտս շատ անգամ կը յորդորէր Հրեաներն որ խաղաղութիւն ընեն , բայց ամենեկին օգուտ չէր ըլլար : Ետքը հողաբլուրներ՝ աշտարակներ շինեց , ու բարաններով պարխասներն սկսաւ ծեծել : Անոնք հողաբլուրը կայրէին՝ յոստահատած սաստիկ քաջութիւն ցուցնելով . բայց սովը ղերեմք խիստ կըտանջէր , և շատ մարդ կը մեռնէին անօթութենէ , շատն ալ կը փախչէին քաղքէն : Ասանկ պատերազմելով , Հառմայեցիք առջի պարսպին մէկ կողմը փլուցին ու ղՀրեաներն երկրորդ պարխասը փախուցին :

Հ. Հառմայեցիք ձեռք ինկած Հրեաներն ինչ կընէին .

Պ. Ինքիրեննու՛ն անձնատուր եղողները կը թողուն որ երթան ուր որ կուզեն : Բայց պատերազմի մէջ բռնածնին քաղքին գիմացը խաշ կը հանէին՝ օրը հինգ հարիւր մարդէն աւելի . թէպէտ ինքիրեննու՛ն գնացողներէն ալ շատը շարաշար տանջանքներով կը սպաննէին Հառմայեցոց զինուորներն որ պահած ստակնին քովերնէն աւնեն :

Հ. Տխոտս ինչ կերպով առաջ տարաւ Երուսաղէմին յաղթութիւնը .

Պ. Արովհէակ ինքը քաղքին աղուորութեանը և ամբու թեանը վրայ զարմացած կուզէր ազատել , անոր համար իրեք օրուան մէջ բոլոր քաղքին չորս դին հեռուէն նոր

պատ մը քաշել տուաւ որ ոչ ջուր ունենան
խմելու , ոչ գաղտուկ ճամբայ մը՝ քաղաքը
կերակուր տանելու , և ոչ յոյս փախչելու
ազատելու , և անձնատուր ըլլան : Աւստի
Երուսաղեմի մէջ չպատմուելու սով տիրեց :
Թէ որ մէկը չոր խոտ գաներ ուտելու , եր-
ջանիկ կրսեպուէր : Մայր մը իր դրկի աը-
դան եփեց՝ կերաւ : Տներն ու փողոցները
մեռելներով լեցուեցան , մարդ չէր հասներ
Թաղելու , և մեռելները պարօսի պէս վար
փոսերուն մէջ կրնեակին : Տիտոս աս խեղ-
ճու թիւնները տեսնելով ու չկրնալով ճար
մը ընել , Աստուած է կրսէր աս բաներս
ընողը : Իսկ Երուսաղեմին մէջի խռովարար-
ները բոլորովին յուսահատած ու կատաղած՝
խելքէ մտքէ չանցած չարիքը կը գործէին .
մէկու մը չէին գթար , որուն բերնէն որ
անձնատուր ըլլալու խօսք մը լըսուէր՝ մէ-
կէն կրտսաննէին : Պաշարման չորրորդ ամ-
սուն մէջ Հռոմայեցիք Անտոնեան աշտա-
րակն առին ու հիմնայատակ փլուցին : Ետքը
ասճարն ալ առին ու Տիտոսի կամքին դէմ
կրակի տուին : Անկէ ետեւ երրորդ պարիսպն
ալ առին ու քաղքին բոլորովին տիրելով
Թաղեցին :

Հ . Երուսաղեմի կործանման ատեն սր-
չափ մարդ կար մէջը .

Պ . Զասկի տանին հանգիստելով , ուրիշ
քաղքներէն շատ մարդիկ հոն ժողվեր էին ,
չասն ալ ամբու թեանը համար հոն ապաւի-
ներ էին . ուստի իրենց բազմութիւնը պա-
տերազմին ատեն մեռածներուն համբանքէն

կըրնայ խմացուիլ . մէկ միլիոն հարիւր հազար մեռան , կրտէ Յովսէպոս , իննսուն հազար ալ գերի կըլան . թող փախածներն ու ասգիս անգին ցրուածները :

Հ . Երուսաղէմի պաշարման ատեն մէջը քրիստոնեայք չկային .

Պ . Պաշարմանէն առաջ երբոր նշաններէն խմացան թէ պիտի կատարուի Քրիստոսի սպառնալիքը , ամէնքն ելան փախան :



Ծագլիսփառ իմաստներ

սուրբ փրոյ գափման իւրաքանչիւր գաւէն
միտ անելու համար :

1 . Հրեշտակը հպարտութեամբ սատանայ եղաւ : Մարմնով անասուն և հոգւով սատանայ դարձած մարդն ալ խոնարհութեամբ հրեշտակ կըլլայ :

2 . Մեծ էր Ազամայ մեղքը՝ Աստուծոյ սիրոյն դէմ, անոր համար սաստիկ պատժուեցաւ . ալ մեծ եղաւ Քրիստոսի սէրը՝ մեր ըրած անիրաւութիւններուն դէմ : Անոր համար վայ անոր որ Քրիստոսի մեծ սիրոյն մեծ անիրաւութեամբ յաղթել կըջանայ :

Սուրբ գիրքը կըսէ թէ Ազամ մեղանչեց . բայց ապաշխարութիւնը ուշացրնելուն համար արժան չսեպեց ըսել թէ ապաշխարեց : Մեղանչելէն ետև մարդ որչափ ուշացրնէ ապաշխարելը , այնչափ դժուար կըլլայ մեղքերէն սրբուիլը :

3 . Աբելի նման ըլլալու համար՝ ուրիշներէն եկած նեղութեան համբերելու է . բայց Կայենի նման ըլլալու համար՝ միայն սրտով զուրիշն ատելը հերիք է :

4 . Մեղաւոր մարդիկ որչափ շատ ըլլան , այնչափ անհոգութեամբ մեղք կընեն՝ մէկմէկէ սիրտ առնելով . բայց Աստուած՝ որչափ մեղաւորները շատ ըլլան այնչափ շուտ և սաստիկ կըպատժէ զանոնք :

Նոյայ հետ ամէն տեսակ կենդանիներէն ալ փրկուեցան , բայց անոնք միայն որ

տապանք մասն ու տապանով ջրոյն մէջ պը-
տըակեցան, և նեղուածք տեղ չարչարուելով
կեցան: Ամէն ազգէ մարդիկ արքայութիւն
պիտի երթան, բայց անոնք միայն՝ որ Քրիս-
տոսի խաչին կապաւինին, ու խաչին հետ
մէկտեղ կրմկրաւին, և ինչուան ետքը խա-
չին պըտուած՝ չարչարանք կը բաշին:

5. Եթիւածանը որչափ աւելի մարդկանց
նշանի կարօտ եղած ատեննին երևնայ՝ մութ
ամպերու մէջ, այնչափ աւելի գոյնը գոյն ա-
ղուօր կը փայլի: Սուրբ եկեղեցին ալ Աստու-
ծոյ շնորհքներովը զարգարուած՝ որչափ
սասափիկ թշնամիներու մէջ իյնայ ու որչափ
հալածուի, այնչափ աւելի փառաւոր կը
տեսնուի, և զմարդիկ Աստուծոյ հետ կը
հաշակեցնէ:

6. Ինչ օգուտ որ կը պարծինք գրախ-
տին Հայաստանու մէջ ըլլալուն համար,
երբոր Աստուած ան գրախտին մէջ չէ: Այ
անոր որ հպարտութեամբ կը պարծի իր ի-
մաստութեամբ զարգարուած խեղճին վրայ,
բայց Աստուծոյ երեսէն ինկած է:

7. Ով որ իր ծնողացը վրայ կը ծիծաղի,
Քամայ հետ ինքն ալ բոլոր աշխարհքիս
առջև ծիծաղ կը լայ, և ծնողացն անէծքին
տակը կ'իյնայ:

Հպարտութեամբ կարծեն մարդիկ թէ
իրենց խեղճով բաղձանքնուն կը հասնին, կը-
սկսին մեծ մեծ աշտարակներ շինել մօքեր-
նուն մէջ. բայց Աստուած յանկարծ կը-
չփոթէ զիրենք ու կը սորվեցընէ՝ թէ որչափ
բարձր բաներու ձեռք զարնել ուզեն առանց

Աստուծոյ, այնչափ խոնարհ պէտք է ըլլան
Աստուծոյ առջև :

8. Երանի՛ր աստուածաւեր ծնողաց զա-
կին . վասն զի անոնց օրհնութիւնը ինքն ալ
կրկայելէ . բայց որչափ որ բարի ըլլալն է-
րեն՝ զիւրին է, այնչափ ալ երբոր գէշնայ՝
պատժէն ազատիլը գժուար է :

9. Ի՞նչ շահ խանութը շատ կենալէն,
երբոր ստակ պիտի չվասարկիս որ երթաս
զուարճանաս : Ի՞նչ օգուտ երկար ասրե-
լէն, երբոր աւաքինութիւն պիտի չվասար-
կիս որ արբայութիւն երթաս ուրախանաս :

10. Որչափ որ յայանի է թէ լեզունիս
Ագամայ լեզուն է, այնչափ աւելի ստոյգ
է թէ խօսածնիս Ագամայ խօսքերը չեն* :

11. Մեծ հաւատք ունեցողներուն մեծ
ու գժուար բաներ կատրուարէ Աստուած .
բայց երբոր մեծ նեղութիւններու մէջ կկո-
նան, մեծ ստշտարանութիւն ալ կընէ անոնց :

12. Արբահամ որչափ իրեն հիւր գար՝
կրնգունէր, անոր համար զԱստուած ալ
ընգունեցաւ : Ով որ ամէն աղքատին ողոր-
մութիւն կընէ, երբոր Աստուած ալ գաղ-
տակ դայ չկարծած ասկէնը զինքը գատե-
լու, Աստուծոյ ալ սէր ցուցնելովն ինքը
զԱստուած կըստիպէ որ գատելու տեղ ո.
զորմի :

13. Չարերը երբոր Աստուծմէ կըկուր-
նան՝ Սողոմոնոյ պէս արգարներուն ետեւէն

* Ասան զի Արամ Բուք Բեզին Գեւոր-Բեմեւ
Էրայ Իւլ-Օուէր -- Իւււր :

կիյնան որ ինասէն, բայց դուռը չեն դաներ, անոնց յաղթելու գիւրին ճամբայ մը չեն գաներ, ու ետքն ալ սաստիկ կը պատժուին Աստուծմէ :

2է թէ միայն չար չըլլալու է, հասցաբարի ըլլալէն ետքն ալ չարերուն մէջէն հեռանալու է որ չարութենէն ու գալու պատիժէն կարենանք ազատիլ :

14. Միայն Աբրահամն է արդեօք որ իր տղան խիստ սիրելուն համար Աստուծոյ ընծայեց : Աս տարակոյս մըն է : Բայց ողբալի ճշմարտութիւն մը աս է որ շատը զաւկընին չարաչար սիրելով սատանային կընծայեն, ազէկ չկը թելով, բռնի աշխարհքի հեռ կապելով ու չար օրինակներով :

15. Ճամբորդը ճամբայ կընէ՝ քաղաքը հասնելու համար. սուրբերն ալ կապրին՝ արքայութիւն հասնելու համար : Թէպէտ Աստուած Աբրահամու բոլոր Քանանու երկիրը տալ խոստացաւ, բայց ինքն իր կողմանէ գերեզման մը միայն գնեց հոն. գիանալով որ մարմնոյն միայն է ան խոստմունքը :

16. Երբոր մեկուն ջրհորը գոյեն, ջուր ուսկից խմէ : Իսահակայ ջրհորները գոյեցին, բայց ջուրը չկըրցան պակսեցընել. վասն զի աշխատանքէ չէր փախչէր, միշտ նոր ջրհոր կը բանար : Ով որ կուզէ Այ շնորհքին մէջ միշտ ապրիլ, թէ որ սատանան իրեն մեղք ընել տալով շնորհքն արգիլէ, պէտք է միշտ աշխատի ու մեղքերը դուրս ընէ որ միշտ նոր շնորհք ընգունի :

17. Եսաւ է չարագործ մարդն որ անցա-

ւոր զուարթութեան համար արքայութեան
փառքը կարհամարհէ, ու ետքը իր խելքովն
ըրած բաներուն վրայ կը պարծի, կարծելով
թէ հպարտութեամբ խոնարհին պիտի յաղ-
թէ. բայց վերջը ինքիւրեն խաղք եղած՝ խո-
նարհին փառքին կընախանծի :

18. Յակորայ Աստուած մեծամեծ խոստ-
մունքներ ըրաւ ու Եսաւէն ալ մեծ ըլլաւ
ըսաւ . բայց Յակոր Եսաւէն շատ տկար կը
տեսներ զինքը : Աստուած սանգուխով իմա-
ցուց իրեն՝ նաև ուրիշներուն, որ Աստուծոյ
ծառանները թէ և անարգութիւն մարդկանց
առջև, բայց ինքը կիջնայ՝ անոնց հետ կըրնա-
կի :

Աստուած Յակորայ իշխանութիւն ու
փառք խոստացաւ, Յակոր գացեր Աշարանու
ծառայութեան մէջ կաշխատի : Ով որ կուզէ
Աստուծոյ փառաւորութիւն, պիտի աշխատի
անարգութի՝ ուրիշներուն ծառայէ :

19. Ստասնան մահուան ատեն մարդուն
կուգայ կամբաստանէ թէ իմ բաներս գոր-
ծածեցիր ու վայելեցիր, և հիմա իմ գործ-
քերս քու քովդ է : Երանի՛ ան մարդուն
որ կարենայ Յակորայ պէտքս չստանային-
ա՛հայէ, թէ որ քովս քու բանդ գանաս՝ ա՛ռ :

20. Եսաւ թուր էր սրուած . անիրաւ հը-
պարտ . Յակոր ջուր էր յստակ տարածուած,
արդար խոնարհ . Եսաւ զարկաւ ջրին մէջն ու
փաշիրլէլով հպարտացաւ որ ուզածին պէս
կըշարժի ջրին մէջ, բայց անոր չկրրցաւ փա-
սել, ինքն ժանգոտեցաւ : Իսկ Յակոր գեա-
նին հաւատար առջևը խոնարհելով արևուն

զորու թեամբն ինչուան երկինք բարձրացաւ :
Աւր որ պարաբերնիս է խոնարհիլ , վայ թէ
որ չխոնարհինք . բայց հազար անգամ երանի՛
թէ որ իրաւունքնիս թողունք ու անիրաւին
առջև խոնարհինք :

21 . Յակոբ աղէկ տղան սիրեց և ուրիշնե-
րուն առջև գգուեց . անոր համար ինքն ալ
ցաւեցաւ՝ տղան ալ : Աստուած աղէկ մարգը
կրտիրէ ու նեղութեան մէջ կաշխատոցընէ .
անոր համար ինքն ալ կուրախանայ մարդն
ալ : Ծառին աղէկ պատուը թէպէտ կրտիրեն
մարդիկ , բայց կը թողուն որ արևուն մէջ ե-
փի ու հասնի :

22 . Յովսէփ գերի ծախուեցաւ , գնողնե-
րուն չամբաստանեց եղբարցը վրայ . Յով-
սէփ թագաւոր եղաւ , վրէժ չմնգրեց անոնց
մէ : Աստուած է ամեն բան առաջ տանողը ,
ո՞վ չհաւար . Աստուծոյ ըրածին վրայ ո՞վ
կրած գոհայ : Բայց ամենքը կրած գոհան ի-
րենց գլխուն եկած նեղութիւններուն վրայ :

23 . Ա՛րչափ մարդիկ Աստուծմէ կը պատ-
ժուին՝ Այ ուզածն ընելուն համար . վասն
զի իրենք Աստուծոյ գէտ ընելու մտքով կը-
նեն : Յովսէփայ եղբարքն իրեն վրայ նա-
խանձեր էին . Աստուած իրենց խնայուց որ
փուճ տեղը շնախանձին , վասն զի ինքն անանկ
կարգաւորեր է որ ամենքն անոր երկրպագու
թիւն պիտի ընեն : Մտքով չհաւնեցան աս
բանիս , բայց գործքով տեղն ի տեղը կատարե-
ցին Աստուծոյ ուզածը :

24 . Մեղաւոր մը իր մեղքերէն որչափ ա-
ւելի ետ կենայ , Աստուած ալ այնչափ աւե-

լի զինքը ասանջէլ կըսկսի . բայց ետքը յանկարծ կըմխիթարէ . վասն զի ան ասեանի ասանջանքովը կիմանայ մարդ առջի մեղքերուն մեծութիւնը . և զինքը ասանջելուն համար ինքն ալ կըսկսի զԱճ սիրել : Յովսէփայ եղբարքն երբոր իրեն օտքը գիմեցին , ինքն ալ ան ասեն սկսաւ զիրենք փորձել՝ նեղը խօթել . և քանի որ նոր վիշտ կըհասցընէր իրենց , այնչափ աւելի կըճաննային յանցանքնուն մեծութիւնն ու կըղղջային : Բայց քիչ ասեանէն զինքը բոլորովին յայանեց ու զանտեք մխիթարեց :

25 . Յակոբ թէ որ զՅովսէփի զկորսունցընէր ու չցաւէր , ետքն ալ չէր գաներ ու չէր ուրախանար . վիշտը՝ միայն կորանցընէլուն համար էր , իսկ ուրախութիւնը՝ աղուն հեա շատ բարիքներ ալ գանալուն համար :

Աստուած զՅովսէփին առաւ Յակոբայ ձեռքէն , գործածեց , ու ետքը առաաշահով նորէն իրեն գարծուց : Աստուած ինչ հանգըստութեանէ որ կըզրկէ զմարդ , ան հանգստութիւնը շահովը մեկտեղ եա կըգարծընէ :

26 . Սովի համար Եդիպոսս սէտք չէ երթալ . առջի բերանը կըհանդէցընէ , բայց ետքը կընախանձի ու կըչարչարէ : Ավ որ նեղութե մէջ աշխարհքիս հանդիսաը կըփընտէ , ետքն ալ մեծ նեղութիւններու մէջ կ'ընայ :

27 . Փարսաւոն Հրէից աղաքը ջնջել ուզած ասեանն որ չըլլայ թէ իրմէ ապստամբին , իր պալատին մէջ կըմեծցընէր ան աղան , որ ասեանով բոլոր Հրէաները պիտի ապստամբեցընէր , և զինքն ու իր զօրքը պիտի ջնջէր : Աստուծոյ

գէմ կռուիլ ուղողին շինել կուտայ Աստուած ան գործիքներն՝ որ ինքն անոր գէմ պիտի բանեցնէ :

28. Ո՛ւր ըսուած է որ խախնէրու մէջ կրակ վառի ու չայրէ : Բայց Աստուծոյ կամքովը մտրեմնի կրքոճնկի ու չայրիր : Այ՛ստպաւնեամ մարդիկ ինչ փորձութիւններու մէջ ալ իյնան՝ չեն այրիր, հապա կըյաղթեն՝ թէպէտ ակար ու խեղճ ալ բլլան :

29. Ա՛՞՞՞ որչափ որ իր գթութեան գիրկը բացաւ Փարաւոնին, անիկայ այնչափ զգուշացաւ որ չիյնայ մէջը . անոր համար արդարութիւն վճին մէջ ինկաւ կորսուեցաւ : Անզեղջ մեղաւորը չէ թէ Աստուծոյ գթութեանը կրցաղթէ, հապա ինքն Աստուծոյ արգարութենէն կըյաղթուի :

30. Ինչ՞ու համար խստացած մեղաւորը մեծամեծ հրաշքներով ալ դարձի չգար : Թէ որ Աստուած չայտնէր, ինչպէս կըրնայինք իմանալ : Ասան զի չարագործներուն հոգւոյն աչքը խաւարած է, չեն տեսներ . պէտք է նախ ճրագ վառեն, շնորհք խնդրեն . Փարաւոնին սիրար շոշափելի մութ պատած էր, ինչ և իցէ մեծ ջահերու կըյաղթէր : Անջի ութը պատիւները չարագործներուն համար էին, իններորդը խստասրտին . անկէ ետե ալ մահ է եկածը :

31. Ի՛նչպցիք Եդիպտոսէն ազատեցան՝ գառնը բազարջով ուտելով . մենք սասանային բանութենէն ազատեցանք՝ ճշմարիտ գառնը զԲրիտոս ճաշակելով : Բայց անոնք ամենքն ալ գառնը կերածնուն պէս ելան

ժախան Եզխարտոսէն՝ հիմա որչափ մարգիկ
դառնը կը ճաշակեն, բայց Եզխարտոսէն զա-
բաւոնին հեա կեըլեն, այսինքն հպարտու-
թեամբ իրենք իրենց հաւնելով, անոր հա-
մար կընկղմին :

Թէ որ մեծամեծ հրաշքներ պէտք եղան
Իսրայէլացոց Եզխարտոսէն խաղտելու հա-
մար, հապա որչափ աւելի հրաշքի կարօտ է
մէկ հոգի մը սասանային ձեռքէն ելլելու
համար: Աս ըսելով թէ որ մէկը յուսահատի
իր փրկութենէն, ես աս ըսելով կը վտասահիմ
անտարակոյս փրկուելու: Թէ որ Աստուած
հին օրինաց սակնն որ ամէն բան արգարու-
թեամբ կը գատեր՝ Իսրայէլացոց արցուն-
քովն ստիպուեցաւ հրաշք ընելու, հիմա որ
ամէն բան ողորմութեամբ կը գատէ, որչափ
դիւրին է քանի մը կաթիլ արցունքով մեծա-
մեծ հրաշքներ Աստուծոյ ընել տալու :

32. Անիպաւ մարդն ամէն բանէն աւելի
պէտք է վախնայ տկար ու խեղճ մարդէն :
Եզխարտացիք Իսրայէլացոց անիրաւութիւն
ըրին, բայց ըրած զրկումնին վճարելէն ետե-
ակն 'ի տեղ պատիժն ալ առին :

33. Մանանայէն համ չառնող Իսրայէ-
լացիք՝ մանանային ինկած տեղուանքն իրենք
ալ ինկան մնացին, ու աւետեաց երկրէն
զրկուեցան: Հաղորդութենէն համ չառնող
քրիստոնեայք ինչպէս որ սասանային բնա-
կարանին մէջ կընդունին հաղորդութիւն¹, ի-
րենք ալ սասանային ձեռքը պիտի մասնուին:

1. Վնն շի աշէ շի մեղաորին փրքը ԴԺ-ԻԴ է :

34. Մարդիկ զԱստուած սիրելու համար եղեր են: Երբոր զայնսարհ սիրելով Աստուած մէ պաղած կըլլան, Աստուած իր սիրոյն կրակն անոնց սրտին գայլընեւուն պէս կարծեն թէ պիտի այրին: Աս ճշմարտութիւնը ճանչցողը չէ թէ Իսրայէլացոց պէս կըսէ թէ « Չիտսի մեղի հետ Աստուած », հապա մէկէն իր սիրան աշխարհքէս կըբաժնէ: Աստուծոյ սիրոյն մէջ կըձգէ կըբռնեցընէ:

35. Կարծեն մարդիկ որ իրենց խիստ մօտ ազգականը ծնողքն են, բայց կըսխալին. անոնք մարմնոյ ծնողքն են. իսկ հոգւոյն՝ Աստուած: Ղևաացիք իրենց հոգւոյն ազգականին հրամանովը մարմնոյ ազգականներուն ջննայեցին: Արչափ մարդիկ իրենց աղաքը չարբամեցընելու համար թող կուտան որ Աստուծոյ գէմ ուղածնին ընեն, ու ասով զԱստուած կըարամեցընեն:

Երբոր մարդ մեղքերով Աստուծոյ պատուիրանքին տախտակները գետին կըզարնէ կըկոտրէ, ետքը թէ որ խելքը գլուխը գայ՝ նորէն գրեւ ուզէ, Աճ կըհաճի, բայց անտան Աստուած կուզէ որ աշխատի՝ տախտակներն ինքը ջնէ. այսինքն աղէկ մը ասպաշխարէ ըրածին վրայ:

36. Թէ որ Նարադ ու Երիուգ բուրվառին կրակը գրսէն առնելով Աստուծոյ կրակէն այրեցան, որ միայն օրինակն էր Քրիստոսի սիրոյն, հիմա սրչափ աւելի թէ որ ուրիշ սիրով Քրիստոսի մօտենանք: Քրիստոսի սէրը զմեզ պիտի այրէ ու գատապարտէ:

37. Ի՞նչ մեծ անխելքութիւն է Իսրայէլ

լացոց ըրածը . Աստուած երկնքէն անոնց
ամէն տեսակ համ ունեցող կերակուր կը-
խրկէ, ու անոնք միտի կըկարօտին ու կըտարն-
ջան : Բայց ալ մեծ է մեր ըրածը . Աստուած
ինք զինքը մեզի կուտայ որ ճաշակէնք ու
յաւխտեան իրեն հետ ապրինք, բայց մենք
համ չենք տաներ՝ աշխարհքիս սիրով կա-
պուած ըլլալնուս համար : Ըրածնիս թէ չենք
ճանչնար, գէթ օրինակովն զգաստանանք :

38 . Միշտ շատին պէտք է հեանել : Արտես-
ները տասուերկուք էին . Իտրայէլացիք քա-
նիին հեանեցան : Տասը շատ չէ երկուքէն :
Ահա սա թիւերուն սխալ երևնալովը՝ ին-
չուան հիմա շատը Իտրայէլացոց հետ կըմոլը-
րին : Այսն զի անոնք՝ միայն տասն էին . իսկ
մէկալ երկուքին հետ Ա՛ժ ալ կըվկայէր .
չէ թէ Աստուած բազմութեան, հապա
բազմութիւնն Աստուծոյ ըսածին պէտք է
հեանի :

Մեծ պաշտօններու հասնելու փափաք
պէտք է ունենալ . առանց փափաքի չհաս-
նուիր : Կորիս փափաքեցաւ քահանայ ըլլա-
լու, պատժուեցաւ : Ամէն մարդ ալ կուզէ
փրկուիլ, բայց դժոխք կերթայ : Այսն զի
փափաքիլը գործքով պէտք է ընել, չէ թէ
խօսքով :

39 . Մովսէս տարակուսած չէր դիտեր
Զուր ուսկից գամայ . մտքէն չանցաւ թէ ա-
պառաժ քարն ալ, երբոր Աստուած ուզէ՝
իրեն Զուր կըրնայ տալ : Անպիտան մարգն
ալ երբոր կամօքն Աստուծոյ աշխատի, իսկ-
լացի ու սուրբ մարդիկներէն աւելի օգտակար

կըլլայ աշխարհքիս : Աս բանիս վրայ ստորակուտիլը մեզի իրաւունք կերենայ , բայց Մովսէսի վրայ պատժոյ արժանի յանցանք սեպուեցաւ :

Քանի որ հին օձէն՝ այսինքն սատանայէն վերաւորուինք՝ մեր խաչէն փախչելուն արըտընջալուն պատիժ , պէտք է Քրիստոսի խաչելութեանը նայինք որ բժշկուինք :

40 . Բաղաստայ շահասիրութիւնն իրեն շուտ մեռնելու պատճառ եղաւ , Իսրայէլացոց ալ շատ ջարիք հասուց . բայց Փենեհէս Աստուծոյ բարկութիւնն իջեցուց : Ավոր Աստուծոյ ծառայութեան մէջ շահու համար կաշխատի , սէր էր թէ միայն իրեն փաստէր : Բայց աս է փափաքելին , որ Բաղաստ եղած տեղը Փենեհէս ալ դանուի : Այն ան ազգին որուն մէջը Բաղասամներ կը ծաղկին :

Մովսէս սքանչելի է , չէ թէ Աստուծմէ պատիւ առնելուն համար , հասլա նեղութիւններու համբերող՝ անոյ՛՛ հեղ՛ նախանձաւոր և հաւատարիմ ըլլալուն համար : Ուստի անոնք միայն պէտք է ուրախանան , որոնք որ կարողութիւն ունին աս բաները ձեռք ձգելու . վասն զի իւենք ալ իրենց վիճակին մէջ կըրնան ըլլալ սքանչելի :

41 . Քահանաներուն ձայնովը Երիբով կործանեցաւ . քահանաներուն ձայնով մարդկանց սրտին մէջ սատանային աները կը կործանին : Երիբովին ամէն բանը նշովեցին . սատանայինը առաջուց նշոված է :

Այն ան մարդուն որ սատանային նշոված խորհուրդին կը հաւնի ու գաղտուկ սրտին

մէջ կը թաղէ ու կը սպասէ . թէ պէտք գըր-
սուանց չիմացուիր , բայց որ մը Աճ ամե-
նուն առջև պիտի յայանէ , ու զինքը Աքարին
պէս անով աեզով՝ այսինքն հոգւով և մար-
մնով կը ակի պիտի մասնէ , ու ասնջանքները
վրան լեռան պէս պիտի դիդէ :

42 . Աստուած արևն սաեղծեց՝ ու ըսաւ ,
անգագար պարտէ . Յեսուն ս՛վ է որ կարգիլէ :
Բայց անգգայ արարածը ինչպէս առաջ Աս-
տուծոյ , ասանկ ալ հիմա Յեսուայ հնազան-
դեցաւ : Ամբնան ան մարդիկն որ իրենց սո-
վորութիւնը պատճառ բերելով՝ մեծերուն
հրամանին չեն հնազանդիր :

43 . Քառսուն տարի աշխատելով հաղիւ
մտան Խորայէլացիք աւետեաց երկիրը . բայց
երկրին տէր ըլլալու համար շատ պատերազմ-
ներ ընել պէտք է դաւ : Մեզաւորը շատ զըզ-
ջումով Աստուծոյ գիրկը կը մտնէ . բայց հոն
հասաաա մնալու համար շատ փորձութիւններ
պիտի քաշէ ու շատ կռիւներ պիտի ընէ :

44 . Աւովցայ երկու ձեռքով յաջող ըլլալն
ինչ օգուտ ունէր : Ստանան իր ուժին վըս-
տահացած է . թէ ուժով գէմ՝ չէս գներ ,
խարելով պէտք է յաղթես : Թէ նա աջով
բարե կուտայ , գու ձախդ գաղաուկ բանե-
ցուր . թէ որ յաջողութեամբ բարե տայ՝
հպարտացընելու համար , խոնարհութեամբ
թուրը սիրար պէտք է խոթես . ձախարդու-
թեամբ թէ աժգոհալ ստիպէ , վստահու-
թեամբ գէմն առնելով պէտք է յաղթես :

45 . Դեբորա մարգարէացաւ՝ սիրա ար-
ւաւ . Բարակ շօքքով քաջութիւններ ըրաւ ,

Յայէլ յաղթուածիւնը ըննցուց : Մէկ հոգի յաղթեց , իրեք հոգի փառք կուտան Մյ : Թէ Մյ փառացն համար մէկը կաշխատի , ինչով խմանամ , թէ որ իր աշխատանաց վարձքն ուրիշն առնէ ու ինքն ուրախանայ :

46 . Երեսունուերկու հազարէն իրեք հարիւր հոգի մնացին Գեդէոնին քովը . վասն զի ընտրեալքը քիչ են : Շատերը գէշ ըլլաւնուն ցրուեցան . բայց ան քիչն ալ մինակ մնացին , խեղքը կրցուցրնէր թէ իրենք ալ ետքաշուին սրատերազմէն : Ով որ աշխարհքիս մէջ Աստուծով չգործեր , սասնկ կրմտածէ . բայց անոնց հետ Աստուած կար՛ ամենուն յաղթող :

47 . Թէ որ արևը կը խրեա , արևուն շատ մի նայիր որ իր լոյսը վայելեա : Աբիմէլէքը փառք կը խրէր , սփանս իրեն որ անդադար փառքին կը նայէր , կուրցաւ շարաշար . եղբայրներն որ իրեն փառք սխալ ըլլային՝ թըշնամի կարծեց , սպաննեց . անոր համար անարդ մահուամբ շարաշար կորսուեցաւ :

48 . Ուխտ ընելն Աստուծոյ փառացը եմեր օգտին համար է . ուխտը կատարելու ասեն ով չուրախանար . Յեփթայէ արամեցաւ ու ցաւեցաւ : Վասն զի Աստուած խեղք ատեր է որ մտածենք ու գործենք . թէ որ մէկն առանց մտածելու ուխտ կընէ , ետքը կատարելու ասեն որ կրմտած է՝ սէտք է որ ցաւի , չէ թէ ուխտ ընելը գէշ ըլլալուն համար , հապա ինքն Աստուծոյ գրած կարգը չպահելով՝ առանց մտածելու գործելուն համար :

49 . Ո՛րչափ մարդիկ մինակ ըլլալով՝ առիւծէն տկար գաղաններէն ալ կը յաղթուին : Երանի անոնց որ Սամփաոնին պէս Աստուծոյ ապաւինած՝ առիւծները կը պատռեն : Ո՛րչափ որ մեծ փորձութիւններու յաղթենք , այնչափ աւելի անուշութիւն անոնցմէ կը քաղենք : Թէ որ առիւծին տեսքը նայիս , կը թուշնաս կը յաղթուիս . իսկ թէ որ Աստուծոյ ապաւինիս կը յաղթես ու կը յազիս :

50 . Ամենեին խառնակ ճամբաներ կը թալ պէտք չէ . կամ թէ որ դացեր է մէկը , նորէն պէտք է ետ դառնայ որ չկորսուի : Սամփաոնին հետ շարք կերթան աշխարհք սիրելով կրկուրնան , կրկապուին , խաղաղք կը լան աստանային . բայց ո՛ւր էր թէ նորէն դառնային Սամփաոնին հետ ճանչնալով իրենց խեղճութիւնն ու յաղթեին աշխարհքին՝ աստանային և իրենց մարմնոյն ալ մէկտեղ :

51 . Ով որ ճշմարիտ Աստուծոյ կապաւինի , Աստուած միշտ անոր հետ կը բնակի ու յաւիտեան զան մարդը կը միտի թարէ : Միքան իր աստուածը կորսնցուց , միտի թարութենէն զրկուեցաւ : Ո՛րչափ մարդիկ աշխարհքիս մէջ իրենց մէկ յոժարութիւնն սրաշունչով կարծեն թէ անով միշտ հանդիսապիտի ըլլան . բայց քիչ ատենէն ուղեն չուղեն կը զրկուին ան անկարգ յոժարութենէն ու բոլորովին թշուառութեան մէջ կիյնան :

52 . Ըստ մարդիկ աշխարհքիս փառքը սրախւր թողուլ հեռանալ կուզեն . բայց

կարծեւոյժ թէ Աստուած զիրենք կարգիլէ, կրմանն ու ետքը չարաչար կըկորսուին : Հսուծ և Արփա ուղեցին իրենց հայրենիքէն ելլել գալ Իսրայէլացոց մէջ բնակիլ : Բայց Արփան ետ դարձաւ . իսկ Հըսուծն եկաւ՝ Յիսուսի նախնեաց կարգն անցաւ : Յայանի է ստամառը . Արփան բերնով ուղեց, Հսուծը սրտով :

53 . Ի՞նչ օգուտ ծնողաց իրենց բարի ըլլալը՝ երբոր զաւակնին չեն կրթուած՝ բարի չեն : Աւագ քեզ Հեզի քահանայապետ, որ տղոցդ համար դու ալ պատժոյ տակ ինկար :

54 . Աստուած սուրբ հոգի է, աղտոտ հոգւոյ մէջ չբնակիր : Իսրայէլացիք չարութեամբ լցուած՝ Աստուծոյ տապանակը հեռերնին կըստըտընեն որ ուղածնին առաջ տանին : Ի՞նչ օգուտ կընէ տապանակը երբ որ տապանակին տէրը հեռերնին չէ, որ տապանակին ալ իրենց ալ պաշտպանէ . մանաւանդ թէ ան տակն Աստուած աւելի զիրենք կըստաւժէ որ իր տապանակն ալ ձեռքերնէն առնէ : Հատրա ի՞նչ մեծ պիտի ըլլայ անարժան հաղորդուողներուն պատիժն որ Աստուծոյ սուրբ հոգին կառնեն իրենց չար հոգւոյն հետ կուզեն միացընել :

55 . Աշխարհքիս մէջ որ մարդն է որ ամէն բանի մէջ իր ուղածը կարենայ առաջ տանիլ, և ամէն տեսակ մարդկանց գիւրաւ խօսք հասկըցընէ : Ահեղ սաստկութիւնն ունեցողն է : Աւ ի՞նչպէս կըլլայ աս բանիս մէջ աղէկ կրթուիլ : Մովսէսին հարցաւ որ աղէկ

աս բանիս մէջ Աստուած զինքը կրթեր էր ,
ու ամենքը կրտսակառէին իր լուսաւոր գէմ
քէն ու ահաւոր կերպէն . բայց իր հեղու
թեամբն ինքը չգիտցող կրձեանայ . և Աս
տուած կրվկայէ թէ հեղ էր Մովսէս : Ու
բեմն ահա քեզի ճամբան : Եւ ո՞վ չգիտեր
թէ ինքիբեմնուն ահեղութիւն ունեցող մար
դիկ ասե լի են , չէ թէ պատկառելի սիրելի :

56 . Թշնամիէն պէտք է վախնալ՝ թէ
ազգականէն : Ամէն մարդ թշնամիէն կրվա
խե ու կրզգուշանայ . բայց ով որ կուզէ Յո
բայ առաքինութիւնն ունենալ , թշնամիէն
պէտք է զգուշանայ միայն . իսկ ազգականէն
և զգուշանայ և վախնայ : Թշնամին զՅոր
կրչարչարէր , մեռցրնէլ կուզէր . իսկ իր կինն
իրեն զԱստուած հայհոյէլ կրստիպէր , Ո՛ր
չափ մարդիկ թշնամիի ձեռքէ մարմնով մեռ
նե լին կրզգուշանան կազատին , ու ազգա
կանի ձեռքով գժոխքը կրթաղուին հոգւով
և մարմնով :

57 . Սաւուզը Աստուած ընտրեց , Աս
տուած անարգեց : Չգիտցողին զարմանալի
կերենայ . բայց զամենքն ալ իրենց պաշտո
նին մէջ Աստուած կրգնէ , մէկը յայանի
կանչելով մէկալը ծածուկ . ամենքն ալ կրբ
նան գէշ ըլլալ կամ աղէկ , ինչպէս որ իրենք
կուզեն :

58 . Յովնաթան մեծամեծ յաղթութիւն
ներ ըրաւ , բայց անհոգութեամբ կտոր մըն
ալ մեզը կերաւ . ո՞վ կարծէր թէ այնչափ
կարծութիւնները մտացութիւն ու մեռնելու
գտտապարտուի : Բարի ծառայք Աստու

ծոյ, թէ որ մէկ սղաթի աշխարհային յօժարութիւննիդ կատարէք, քարի գործքերնիդ մտցէք՝ մեռնելու պատրաստուեցէք :

59 . Իտրայելի բանաօկը Սաւուղ թագաւորին հետ զարհուրած՝ Գողթաթին ուժէն կրվախեն . և ո՛վ ըլլայ չվախեր : Մէկ տղայ մը Աստուծոյ ապաւինած՝ քար մը նետեց, անյաղթ թշնամին սպաննեց : Սասանան խիստ ուժով է, մենք ինչպէս յաղթենք . Աստուծոյ ապաւինինք, քարով մը զինքը խաղք կրնենք :

60 . Նախանձը կրակ է՝ կայրէ, ո՛վ չգիտեր : Թէ որ կրակին բարկանաս ու աւելի բռննկցընես, ինքն արդէն կայրի, աւելի դու կրօանջուխ : Սաւուղ Դաւթի նախանձող թշնամի, Դաւթի անոր կրկրակծայ և միշտ բարին կրկամի . ահա ասանկ երկուքն ալ իրենց սրտին հատուցումն առին : Ասան զի նախանձողին բարիք ուզողը կրակին վրայ ջուր կըլէցընէ : Նախանձողը այրածներուն վնասը սխտի հատուցանէ . ուրիշի բարին ուզողը իր վնասը կ'ածն անոր կրակէն ազատ կըստահէ :

61 . Դաւթի իր թշնամիներուն կը յաղթէ, աւարը սրատերազմի չգացողներուն ալ կը բաժնէ, վասն զի անոնք ալ սրատերազմելու փափաք ունեին : Դաւթի իր զօրացն աս օրէնքը դրաւ . ետքը Քրիստոս ալ իր զօրացն աս ապրսպրեց՝ սասանային դէմ սրատերազմընողներուն :

62 . Մարդ աւելի պէտք է ջանայ որ շնորհքը չկորսընցընէ քան խեղքը : Շնորհքին

խրատովը Սաւուղ կախարդները ջնջեց .
ետքը խելքին հեռակէտով գնաց կախարդ փրն-
տուեց որ Աստուծոյ կամքն իմանայ : Ենորհ-
քով առաջ Աստուծոյ սիրելի եղաւ Սա-
ւուղ , ետքը խելքով ատելի : Խելքը յու-
սահասու թիւն կրրերէ , շնորհքը զղջում :

63 . Անիւր գարձած ատեն վրան անշարժ
նով կրնայ նստիլ : Հիմա ինչ սպասասիտ-
նեմ : Խելք ունեցողը : — Գլուխը տարցած
ատեն նով կրնայ առաքինութիւն գործել :
Աստուծոյ շնորհքին մէջ եղողը : Թէ որ աս-
բաներս գժուար կերննան , մէկին վկայ ըլ-
լայ կառք հնարողը , մէկալին Գաւթի՛ն որ
սպատերազմին տարցած ատենը ծարաւն ան-
ցրնելու տեղ ջուրն Աստուծոյ նուիրեց :

64 . Աստուծոյ առջև կտքաւելը լաւ է ,
թէ սասանային : Ամէն մարդ սասանային
դիմացը կրկտքաւէ ու շարհամարհուիր . և
թէ որ մէկը Գաւթի հեռ սասանիկ ջերմե-
ռանգութիւն մը ցուցրձէ , ամենքը Մեղ-
քողի հեռ ծաղր ընել կրսկտին : Թէ որ ամե-
նուն ըրածին հաւտանք , վերջի դատաս-
տանին ամենուն առջև սիտի ծաղր ըլլանք :
Բայց չէ թէ ընողներուն , հապա քննողնե-
րուն սէտք է հաւտանք : Քննողն Աստուած
է , իր առջև կտքաւողն իրեն կրնարէ :

65 . Մարդս անմիաս չկրնար քալել աս-
իրէք տեղս . իմ օգուն մէջէն , ջրին երեսը , և
կրակին մէջ : Արդարը ոչ երբէք կրմեղանչէ .
բայց աս իրէք տեղին մէջ քալելէն շատ սէտք
է զգուշանայ . մեղքերուն կրակին մէջ , յան-
ձնապատանութե օգուն մէջ , և հանգրս .

առ թէ ջրին մէջ : Դաւ թի կրակէն կըզգու-
շանար , օգուն մէջ չէր պարտէր , բայց ջրին
մէջ մտաւ ու ընկզմեցաւ : Կրակին մէջ սը-
արտողը շատ դժուար է որ ըսընանայ . օ-
գուն մէջ պարտիւ ուզողը կիյնայ՝ կըջախ-
ջախի . բայց ջրին մէջ իյնողը որչափ շուտ
ելէ , այնչափ աղէկ կըբժշկուի :

66 . Արչափ մէկը սաստիկ հալածուի
մարդիկներէն , այնչափ Աստուծոյ կրմտե-
նայ : Դաւ թի քանի որ կըհալածուէր՝ Աս-
տուծոյ սիրելի էր . գաղբեցաւ հալածուե-
լէն , սկսաւ պաղկ Աստուծոյ սիրոյն : Բայց
իրեն առջի բարի գործքերուն համար Աս-
տուած նորէն իր աղուն ձեռքով սաստիկ
զինքը հալածեց ու առջի սիրոյն մէջ հաս-
տատեց :

67 . Աւազանին որ կողմէն որ ծակ բա-
նաս , բոլոր ջուրը դէպ ՚ի հոն կըվազէ : Ա-
ռաջնորդն ինչ ճամբայ որ ցուցնէ , ժողո-
վուրդն ան ճամբէն կերթայ , Դաւ թի օրի-
նակը ասանկ մեզի կըսորվեցընէ :

68 . Տանակերը թէ որ գրան տեղ պատու-
հանէն կըմտնէ , ինքզինքը դողի տեղ գատա-
ւորի կըմտանէ : Ազոնիան անգրանիկ էր ,
իրաւունք ունէր թագաւորութեան . բայց
կասկածելով ուզեց որ անիրաւ ճամբով
ձեռք ձգէ , չկրցաւ , չկրատուեցաւ . թա-
գաւորութենէն արդէն զրկուած , կեանքէն
ալ զրկուեցաւ : Ար բանին որ արգարու-
թեամբ չես համնիր , ալ լաւ է որ համբե-
րութեամբ կենաս , քան թէ ծուռ ճամբով
մէկ փոսէն մէկալ փոսն իյնաս :

69. Թէ որ շուքին տեքին կրզմայլիս ,
հապա թէ զինքը տեսնես՝ ինչպէս պիտի
ապշիս : Սողոմոնի պատարագը՝ հաղորդու-
թեան շուքն էր . տաճարը մեր եկեղեցւոյն
օրինակն էր : Աստուած արև ծագեցաւ . շու-
քը կորսուեցաւ . բուն տաճարը մեր առջին
երկցաւ : Հրեշտակներ երկնքէն մեր տա-
ճարն ու պատարագը տեսնել կրփափաքին ,
մենք , աւանդ , կրցաւինք որ անոր շուքին կա-
րօտ մնացինք . աս ինչ անխեղքութիւն :

Սարայ թագուհին որ Սողոմոնի ծառա-
ներուն երանի տուաւ , թէ որ հիմա գար
ըՖրիստոս տեսնելու , Քրիստոսի ծառա-
ներուն վայ կուտար , զարմանալով Քրիս-
տոսի խնասաութեանն ու գրած կարգերուն
վրայ : Իմաստուններն ասոր պատճառը գի-
տեն , ազէաները պէտք չէ որ գիտնան : Այսան
զի ով որ քիչ մը խեղք ունի՝ մէկէն կիմանայ
թէ Քրիստոսի կանոններովը կարգի չեկողին
քանի վայ պիտի ըլլայ . ազէաները թող նախ
սորվին թէ զՍողոմոն Քրիստոսին բաղգա-
տել կրըսյ :

70. Արքայութեւն աղուորութեանը խեղք
չհասնիր . բայց գոնէրը ծածուկ տեղուանք
բացուած են : Ես կըլայանեմ , ուղողը
թող երթայ : Յորայ աղբիւսին մէջէն ար-
քայութեան գուռ բաց կայ . Սողոմոնին
պաշտար մ՝ երթար , ան կողմը պատ հիւ-
սած կայ :

Ռորովամ որչափ տղայամիս է եղեր . մեր
ամենուս առջև ծիծաղ կըլած է : Բայց Ռո-
րովամ ինչ պիտի չընէր՝ թէ որ մեր ըրածը

լակեր : Աստուած մեզի կրտէ , ճշմարտութիւնը կը բարոզէ , խիղճերնիս կը վկայէ . առ մէն բաները կարհամարհենք ու մեր կիրքերուն կը հեռանանք , և ուրիշը ծիծաղելի կը համարինք :

71 . Թագաւորութիւնը Աստուած որու առջեւ քերթովանայ . անոր համար անաշխատեալ ՂԱստուած թողուց՝ ուրացաւ , որ չըլլայ թէ Աստուած նորէն իրմէն ուզէ տուածը ետ առնէ : Ի՞նչ մեծ անմատութիւն : Բայց թէ որ մեր ըրածը մտածես՝ ի՞նչ պիտի ըսես : Աստուած մեզի տուաւ առ աշխարհքս . ով որ աղէկ բանեցրնէ , անոր յաւիանեանքն արիքը խոստացաւ տալ : Մենք հիմա ՂԱստուած գործքով կուրանանք , խոստմունքն ոտքի տակ կ'առնենք որ չըլլայ թէ երբ մեռնինք զաշխարհք թողունք՝ անոր առջեւ նորէն ուրիշ բարիքներ առնենք :

72 . Թէ որ Աստուծմէ պարզե կը խորնորէս , խնդիրքներուդ կատարուելուն ի՞նչ բան յայանի նշան կը սեպես . ան որ ուզածներդ սկսիս առնել , թէ ան որ ունեցածեդ ալ զրկուիս : Աս հարցմունքս ծիծաղելի կերևնայ . բայց սրբոց առջև ասիկայ տարակոյս չէ , հապա հասարակ մարդկանց մտքին գէմ ճշմարտութիւն : Եղիս գնաց սարեւթի մացոյն տարուաւ հոգալու . բայց առջի բերանն անոր մնացած կերակուրն ալ ինքն ուզեց . անիկայ ճանչցաւ թէ Աստուծոյ ծառայ է , չտարակուսեցաւ , տուաւ ունեցածն ալ որ ուտէ : Աստուած նախ մարդուն սերը կը բիրտնէ , և սիրոյն չա-

փով պէտք եղածը սիրով կը հաստուցանէ :

73 . Թշնամւոյն յաղթելու զօր՝ շատ և զօրաւոր մարդիկ պէտք է ունենայ հետը : Եղիա կուզէր հարիւրաւոր քուրմերուն յաղթել . երբ տեսաւ որ իր հետը կարիճ զինուորներ չկան , զԱստուած հեան աւաւ : Տեսնողը զինքը մինակ կը կարծէր . բայց զարհուրած՝ յաղթել անոր չէր կարծէր , վասն զի Աստուծոյ դէմ ուժ կայ որ բաւէ : Ով որ Աստուծոյ կասպաւինի , անոր ուժն անբաւ է :

74 . Աստուած մարդու ան բանը կուտայ , ինչ որ մարդ Աստուծմէ կը յուսայ : Մարդն Աստուծոյ նման է . բայց երբ որ չարանայ , կարծէ թէ Աստուած ալ իրեն պէս չար է . չարէն սով բարի կը յուսայ : Աքաաբ չար էր , զզջալու տեղ Աստուծմէ չարիք յուսալով , կուզէր որ Աստուած իրեն չխառնուի . Աստուած ալ կատարէր էր անոր ուղածը . բայց երբոր Աքաաբ ստիպեց Աստուծոյ հարցուց , Աստուած ստել չգիտեր , անոր համար Աստուած ան ալ իմացուց իրեն : Ով չգիտեր թէ Աստուծոյ երեսէն ինկած մարդը կորսուած է : Ես շատ մարդ գիտեմ որ Աստուծմէ աւելի աշխարհք կը սիրեն , ուստի կուզեն որ Աստուած իրենց չխառնուի , ազատ ըլլան . բայց չեն գիտեր որ Աստուծոյ ձեռքէն ելողը սատանային կը մատնուի . աշխարհքիս մէջ ինքնիշխան մարդ չգրտուիր :

75 . Զերմեռանդներուն վրայ ծիծաղողին Աստուած ինչ պատիժ կուտայ : Թէ որ

մինակ է, կըթողու որ զգջումքի գայ. իսկ
էթէ շատուոր աւանէ, յիսուն յիսուն զա-
նոնք կըջնջէ :

76. Տղաքք՝ երկու կերպով կըկրթէ Աս-
տուած . թէ որ ազէկ ծնողաց պատասէր
են՝ կօրհնէ ու շնորհքը կաճեցնէ . բայց
թէ երեսի վրայ մնացած՝ չարը բարիէն ըն-
արեւ չեն սորված, արջի առիւծի բերան
ղերենք կըմասնէ : Արչափ աղաք երեսի
վրայ մնացած են, որ չար գործքեր ընել
աալով կտոր կտոր կընէ զղերենք սասանան,
թող մտածեն ծնողքնին թէ Աստուծոյ ինչ
պատասխան տան :

77. Թշնամիներուն մէջը կեցած Եղիսէն՝
աներևոյթ զօրքերը կըպաշտպանեն : Արչափ
փորձութիւնը զօրաւոր ըլլայ, Աստուծոյ
ապաւինողը կըյաղթէ անոր : Սատանային
զէնքերը քանի՛ տեսակ են : Թէ որ յաղթել
ուզես անոր, աւանց զէնքի մը իր զէնքե-
րուն ամենն ալ կաւրես, թէ որ աչքդ գէպ ՚ի
երկինք դարձնես :

78. Շատ մարդիկ որոնք իրենք զղերենք
բարեգործ կըսեպեն՝ Աստուծմէ չարիք կըն-
դունին . անոր համար շատն ալ զԱստուած
անիրաւ կըհամարին : Բայց Յէոնն արդեօք
անիրաւեցաւ Աստուծոյ, թէ Աստուած
Յէուին : Ալ լաւ է զԱստուած չճանչնալ,
քան թէ ճանչնալ, ու կէս մը Աստուծոյ
ծառայել՝ կէս մըն ալ իր կամքին :

79. Ավ որ կուզէ բան մը չմոռնալ, նշանը
վրան կառնէ՝ աչքին առջև կըպահէ . Իս-
րայէլացոյ տասուերկու ցեղն ալ Յակոբայ

որդիքն էին . ինչո՞ւ տասը ցեղը կռատաշա-
կեղան , ու մնացած երկուքը՝ շատ անգամ
աստուածասպաշա : Ասոնց քաղբին մէջ Աս-
տուծոյ տաճարը կար որ անարգելէն կըզ-
գուշանային . մեկաշնոնք իբրև թէ մինակ
մնացած ուզածնին անվախ կընէին : Ով որ
Քրիստոսի կամ սուրբերուն նշանը քովը
միշտ կըսպահէ , անոնց յիշատակովը շատ
չարիքներէ ազատ կըմնայ . թէպէտ իրեն
անողուա բան երևնայ :

80 . Չարը բարիէն՝ կրակը ջրէն նոյնչափ
տարբեր են : Թէ որ ջուրը երկար ատեն
կրակին քով սպահէս , կըյնդի կըկորսուի .
ամենեկին չմտեցընելն է սպահով ճամբայ :
Յովսափատ Ա. քաարին հետ բարեկամու-
թիւն րբու , Ա. քաար զգեսաներն անոր
տուաւ . Յովսափատ թէ որ առջի բարեգոր-
ծութիւնները չունենար , ան ատեն կայրէր
կըկորսուէր : Չար մարդու հետ ընտանու-
թիւն պէտք չէ ունենալ :

81 . Աստուած կըբարկանայ երկու տեսակ
մարդկանց , մէյմը իր թշնամւոյն՝ մէյմ՝ ալ իր
ծառային . բայց իր ծառան կըխրատէ թշնա-
մւոյն ձեռքով , իսկ թշնամին կըսպառօթէ ինքն
իր ձեռքով : Չգիտցողը կարծէ թէ Աս-
տուած իր ծառան քան զթշնամին աստիկ
կըսպառօթէ . բայց ասով Աստուած մեր վրայ
ունեցած դուրսը մեզի կըսորվեցընէ : Իր ծա-
ռաներուն քաշած սրտիժը՝ սպառօղին
կենացը հետ կըլնիննայ . բայց քաշած ատե-
ջանքներուն վարձքը՝ Աստուծոյ հետ ան-
վախճան կըմնայ : Գողոզիայի ձեռքով զՅու-

դան իրատեց Աստուած, բայց պահեց Յովանն ու անով նորէն զազգը միսիթարեց, իսկ զԳողոթիան յաւիտեան տանջանքի մատնեց:

82. Ամէն մարդու ինչ որ կիյնայ՝ անկէ դուրս բանի պէտք չէ խառնուի: Ազիա թագաւորը շատ բարեպաշտ էր. կարծեց թէ բարեպաշտ մարդը կրնայ խառնուիլ ամէն բանի, գնաց բուրվառը ձեռք առաւ ու մէկէն բորոտեցաւ:

83. Շատ բարիք ընող մարդիկ Աստուած մէ պատիժ կրնգունին. Մանասէն չարիք ըրաւ ու բարիք ընդունեցաւ: Չարն ալ բարին ալ երբոր իրենց դորձքին մէջ անհաստատ կըլլան, բարին իր վարձքը կըկորսուենցընէ, չարն ալ իր պատիժը:

84. Յովսիա որչափ որ բարեպաշտ էր, այնչափ շուտ ու ցաւալի մահուամբ մեռաւ: Աշխարհասէր մարգիկ ասոր վայ կըզարմանան ու զԱստուած կարհամարհեն. իսկ աստուածասէրն ասով Աստուծոյ անհուն բարութիւնը կիմանայ ու կըգովէ: Այսան զի աշխարհասիրաց բարի երկցածը՝ Աստուծոյ առջև չար է, և իր ծառաներն անկէ կըզգուշացընէ որ ճշմարիտ բարին ապ իրենց: Աշխարհքիս ամէն գէշ փորձանքները մեծամեծ վարձքերու պատճառ են՝ Աստուծոյ սիրուն համար քաշողին:

85. Աճ ինչու կուշացնէ խտայեալ մեղաւորներուն պատիժը, ողորմած ու արդար ըլլալուն համար: Աղորմութեամբ կուշացընէ որ գառնան, արդարութեամբ կը-

ստատի որ խմանան. ողորմութեամբը ակա-
րութեամբ սխալող մեղաւորներուն յոյս կու-
տայ փրկուելու, իսկ արգարութեամբը ան-
զեղջ մեղաւորները կըյուսահատցընէ, խմա-
ցընելով թէ սրատիժը կուշացընէ, բայց ետքը
ամէն սրատիժ մէկէն վրանին կըթափէ: Յու-
դայի թագաւորներուն սրատիժ որչափ ու-
շացաւ. բայց երբոր անոնք իրենց չարու-
թենէն ետ չկեցան, Աստուծոյ արգարու-
թեան ձեռքը մտանուեցան:

86. Թէ որ ուրիշի կորստեանը սրատճառ
ես, սէտք է լաս՝ սէտք է ցաւիս չէ թէ հան-
գիստդ նայիս: Արխտղոմին գէշ ըլլալուն
Դաւիթ զինքը սրատճառ կարծելով այնչափ
կըցաւեր, որ ճար չէր ըլլար անոր լալուն
ողբալուն:

87. Ի՞նչ կըզարմանաս Սողոմոնին վրայ
թէ այնչափ շնորհք առաւ ու ինչպէս Այլ
դէմ ելաւ: Շնորհքը զէնք է որ Աստուած
մեզի կուտայ. մենք որուն դէմ ուզենք՝ կը-
բանեցընենք: Թէ որ Սողոմոնի կարողու-
թիւնը շատ էր, Աստուծոյ դէմ սրտե-
րազմներ շատ կընէր. թէ որ ալ շատ յօժա-
րութիւն դու ունիս, Սողոմոնէն շատ աւելի
ապերախաւ և չար կըգտնուիս: Սողոմոն իր
շնորհքներն Աստուծմէ առաւ. մեզի ալ
կեանք և ոյժ Աստուած տուաւ, հէտն ալ
անթիւ վարձք խոստացաւ. աս ամէն բան
կըմոռնանք ու կըսենք թէ կիրքերնուս չենք
կըրնար յաղթել. վայ մեզի: Աստուծոյ կըր-
նանք յաղթել: Բայց ան դարձեալ կընէրէ,
միայն թէ ճանչնանք ու զըջանք:

88 . Ծառը դեանէն կրբունի , դեանէն
ոյժ կաանէ ու կաճի . դեօինը թէ որ ցամբի,
ինքն ալ կըդեղնի կըվշտանայ . բայց թէ որ
հանեա տեղէն՝ բոլորովին կըչորնայ : Տօբիթ
շատ նեղութիւններ քաշեց , բայց իր յոյսը
միշտ Աստուծոյ վրայ էր . ինք զինքը կըճանչ
նար Աստուծմէ , նեղութիւններն ալ ընդու-
նեցաւ Աստուծմէ , ետքը նորէն մխիթարուե-
ցաւ Աստուծմէ : Մենք երբոր Աստուծմէ
նեղութիւն մը կընդունինք , արմատով կը-
բաժնուինք իրմէ ու դժօրիքի նիւթ կըըանք :

89 . Յուգիթոյ ո՞ր բանին պէտք է զար-
մանալ : Հողեփեանէսը յաղթելուն : Թէ որ
խեղբով մտածես , աս է նիւթ տարակուսի-
վան զի մտքէ չանցած խոնարհութեամբ
մը յաղթեց :

Հոգարար Այ թշնամին է , խոնարհը՝
հոգարաին դէմ կռուելու՝ Աստուծոյ ձեռքի
գործիքն է . խսկ հոգարաին գործիքը՝ երկըթէ
շինած զէնքերն են . Հողեփեանէս զէնքերը
ձեռք առաւ , Աստուած զՅուգիթը : Հողե-
փեանէս քաղաքները պաշարեց , Աստուած
Յուգիթոյ ձեռքովն անոր միտքը պաշարեց :
Հողեփեանէս քաղքին ջուրը կտրեց որ մէջին-
ները մեռնին , Աստուած իրեն գլուխը կը-
տրեց ու պատերազմը ըննցուց :

90 . Ի՞նչ է պատճառն որ նոյն գործքը՝
մեկուն վրայ խոնարհութիւն կըսեպուի ,
մեկային վրայ հոգարտութիւն : Երկուքին ալ
դիտմունքն է : Մութթէն Աստուծոյ փա-
ռայքը անարդանք սեպեց՝ Աստուծոյ անի-
ծած ազգին երկրպագութիւն ընելը , իրեն

Թէ անոնց ծախը կուգք պաշտել՝ Աստուծոյ
Թշնամին սատուել է . Աստուած ալ անոր
պաշտարանեց : Բայց թէ Մուրթքէն մեղի
պէս իրեն սատուոյն նախատինք սեպեր ծը-
ռիլն ու Աստուծոյ փառքը իրեն սատուակ
առնէր, Աստուած զան ալ չէր ծածկէր,
կըցայանէր :

91 . Աստուած մարգը մէկ սեռակ սակղ
ձեց , բայց մեղաւորները երկու տեսակ կս-
րոշեն . մէյմը իրենք՝ որ ամէն չարիք կըզոր-
ձեն , մէյմ՝ ալ Այծառանները՝ որ ամէն մեղքէ
կըզգուշանան : Թէպէտ բերնով աս տար-
բերութիւնը չեն խոստովանիր, բայց մտուը-
նին հաստատ գրած ըլլալնան գործքով կը-
վկայեն : Իրենք ամէն անկարգութիւն ան-
խիղճ կընեն՝ ակար մարգիկ ենք բտելով . իսկ
թէ որ Աստուծոյ ծառաներէն մէկը արգա-
րութեան ճամբէն ծած սեանեն, կըզատեն
ու կըբամբասեն . բայց չեն գիտեր որ ասով
իրենք զիրենք կըզատասպարտեն : Երգարը
բարին ճանչցեր է՝ գործելու համար, մեղա-
ւորը բարին ճանչցեր է՝ արգարները դատե-
լու համար : Արգարները իրենց պակաս-
թեանը համար մեղաւորներէն կըզատուին .
բայց մեղաւորները Աստուծմէ պիտի դատա-
սպարտուին : Անոր համար շատ աշխատեցան
մարգարէները, Խորայէլացիքը դարձի բերել
չկրցան :

92 . Թէ երկիրդ պարարտ է , բոյսերը կըլ-
լան զօրաւոր . բայց թէ երկիրդ է գէշ , փուճ
սակղը մի աշխատիր հարիւրաւոր պտուղ առ-
նելու : Դանիէլի ընկերներովը պարարտ եր-

կրի մէջ, այսինքն Այ սիրոյն մէջ ծլած ծաղկած՝ միայն հնաեղէն ուտելով գիրցան հոգւով և մարմնով քան զամէն խելացի ու փափկասուն Քաղղէացիները : Ինաստուծին թէ կուզես սորվիլ, վառէ սրտիդ մէջ Աստուծոյ սէրը, անով ամէն բանի վրայ շտակ դաստաստան կրնես՝ քան ամէն աշխարհքիս խելացիները :

93. Կրակը ամէն բան կայրէ, բայց զոսկին կրմաքրէ ու կրփայլեցրնէ : Աոյն կրակով իրէք մանկունքը փայլեցան, անով հնոց վառողներն այրեցան : Աեղուծիւնը արդարներուն հանդատան պատճառ կըլլայ, չարերուն յախտե՛նական տանջանքին համը առնել կուտայ :

94. Ճշմարտութիւնը սիրողին գէժ՝ աստութիւնը փուճ աեղ ահռաները կըսրէ : Դանիէլ գուքը կըձգուի, առիւծներն իրմէ կըզարհուրին. գուբէն գուբս կըհանուի, անզգամ մարդիկ անկէ յաղթուած կըսպասժուին : Շխտակ խօսողէն աս աշխարհքիս մէջ առիւծի պէս զօրաւոր մարդիկ կըվախեն, անգին ալ սատանաները կուզեն զնիքը խաղքընել ու իրենք կըտանջին :

95. Արևուն վրան ամպերը գանգատ ունին. երբեմն զիրենք կըպաշտպանէ՝ բարձր աեղուանք կըսպահէ, երբեմն ալ կըթողուոր վար թափին կորսուին. բայց անիրաւ է գանգատանին : Արենք երբոր կըթանձրանան՝ արևուն ուժը չեն սեպեր կըծանրանան կըթափին : Այսպէս անիրաւ գանգատ կընեն մարդիկ Աստուծոյ ու իր քարոզիչնէ :

բուն վրայ՝ թէ զիրենք աղէկ խրատներով գէ-
շութենէ չեն զգուշացրներ: Երբոր մարգիկ
խրատի կարօտ ըլլան, Աստուած զՅովնան
բանի կրբերէ քարոզելու որ զըջան. բայց
երբոր իրենք չարիքներով թանձրանան, Աս-
տուած ինչ բնէ անոնց: Չէ թէ քարոզիչնե-
րուն պակասութեանը համար մարգիկ գէշ
կըլլան, հապա մարգիկանց գէշութեանը հա-
մար քարոզիչները կըսակոսին:

96. Աստուած ասէր մարգիկ թէ որ սատա-
նայէն խաբուեր գէշցեր են, թող ճուսա-
հատին, դառնան, որակրնուն մէջ կործանած
Աստուծոյ տաճարը շինեն: Աստուծոյ յիշա-
տակը՝ իրենց պղտորած մտքերնուն մէջ
պահուած է, հանեն բարնկայրնեն Երուսա-
ղէմայ տաճարին նորոգութեամբը Աստու-
ած մեզի աս կըսորվեցրնէ:

Թէ երկինք ելլե՞ս թէ գժոխք իջնաս, ճըշ
մարտութիւնը անյաղթելի կըգանաս: Չարե-
րը ամէն չարիք կընեն անվախ անամօթ. բայց
երբոր խղճմտանքնին կըբողոքէ որ պիտի
դատէ զիրենք ճշմարտութիւնը, ամէն ուժէ
կիշնան կըյուսահատին: Բարակ մտածող
մարգիկներու, զորաւոր ու շատուր մարգիկ-
ներու, միամիտ խեղճ մինակ մարգ մը ճշմար-
տութեամբ կըյաղթէ և ամէն խորհուրդնին
կըկործանէ: Թէ որ ինձի չես հաւատար, Զօ-
րաբարէլ պատճառներով զքեզ կըհամոզէ:

97. Թէ Աստուծոյ յուսացեր ես, մի վա-
խեր, բան չկայ որ ճաղթես: Շատ մարգիկ
Աստուծմէ բարիք կըյուսան, բայց քիչ կան
որ ընդունին: Վասն զի Աստուած ամենուն

վրայ ձախորդութիւն կրխրիկէ որ յոյսերնին
փորձէ, և յոյսին վրայ հաստատ մնացողները
միայն՝ առատ պարգևներով կը վարձատրէ :
Պատժուածս Հրեաները բռնեց, կասկեց, անոնք
մեռնելու պատրաստուեցան . բայց որով
հետև յոյսերնին Աստուծմէ չկտրեցին, ա-
մէն փորձանքէ յանկարծ ազատուցան :

98 . Չափ մը երբոր իր մօրմէն հեռանայ,
ամենեկին չհանգչիր ինչուան մեռնի կամ
մօրը քով մօտենայ : Հրեայք Աստուծմէ հե-
ռացան, այլազգեաց մտանուեցան . փոր-
ձանք չպակտիր իրենց՝ ինչուան նորէն Աս-
տուծոյ երթան մօտենան : Թագաւորը իր
զօրքը պատերազմի կրտանի, քաջութիւնը
նողներուն պարգև ալ կրբաժնէ . բայց ոչ եր-
բէք փորձի համար թշնամեաց ձեռքը զանոնք
գերի կրմաննէ : Աստուած իր ծառաները
միշտ կը փորձէ . բայց երբոր սրբութիւնն
այլազգեաց ձեռքը կրմաննէ, անիկայ փորձ
չէ, պատիժ է . զզջում կուզէ որ դարձնէ .
հոն քաջութիւն չբանիր :

99 . Ամէնքը կարծեն որ միշտ աղէկ բանի
կը փափաքին . բայց ճշմարիտ աղէկին ո՞վ կը
փափաքի : Շատ մարդիկ Շամունէին պատ-
մութիւնը կը լսեն . բայց մտքերնէն չէ ան-
ցած որ ըսեն թէ « Մեիք ալ աղոցմով Աս-
տուծոյ սիրոյն համար ջարդուէիւք մեռնե-
լիւք » : Ուրիշ կարիճ տղաքներ ալ տեսնելով
անանկ տղաքներ ունենալ կը փափաքին .
բայց ո՞ւր են ան կարիճները . Շամունէն
իւր որդիքներովը բոլոր աշխարհքիս ու եր
կընքին առջև փառաւորուած կեցեր է :

Ահա ատանկ էն մարդիկ . ազէկը կըճանչնան ու գէշին կըփափաքին : Արանի ան ծնողոց որ ազէկը կըճանչնան . թէ որ չեն կըրնար ունենալ գէթ գէշէն կըզգուշանան . ազաքնին արքայութեան որդիք ընել կըջանան , և Աստուծոյ կամքովը անոնցմէ բաժնուիլն ալ բոլոր սրտանց յանձ կառնեն . զանոնք յաւիտեան պիտի վայելեն :

100 . Աշխարհքիս բնակիչները Աստուծոյ հպատակներն են . և հպարտ մարդիկ Աստուծոյ գէժ գէնք կըվերջընեն . Աստուած կուզէ մէկէն ջնջել հպարտ ու ասպտամբ մարդը , բայց որովհետեւ մէկալ հպատակներն ալ ասպտամբներ կան որ իր օրէնքին չեն հնազանդիր , թող կուտայ որ հպարտը զանոնք չարչարիէ որ խրատուին՝ իրեն գիմեն , հըպարտն ալ սաստիկ բարձրեն իյնալով ալ սաստիկ պատժուի , ուրիշներուն ալ զգուշութեան օրինակ ըլլայ : Աւստի թէ որ կուզես հպարտ մարդու մը յողթել քու ուժիդ մի վստահիր , թէ չէ՛ կըյաղթուիս . վասն զի Աստուած է որ զքեզ կուզէ պատժել : Ազա հովճամբայ կուզես . Աստուծոյ ասպաւնէ , զԱստուած հեազ հաշտեցուր : Մատաթիա բահանան իր սղոյմով քեզի ըլլայ օրինակ :

101 . Աստուծոյ երկայնմտութիւնը չափ չունի . բայց ով որ կարհամարհէ՝ անիկայ պատիժը մէկէն կընդունի : Անտոքոս Աստուծոյ երկայնմտութեան այնչափ գէժ գրաւ որ Աստուած ալ բարկացաւ պատժեց զինքը . խնայուց թէ Աստուած երկայնմտութեամբը ջաղթուիր ու անգարձ կեցողը կըպատժէ :

102. Առաջնորդն իր կենաց մէջ աս և օթը բանս գիտէ . ան միշտ Աստուծոյ ասպարհնի . քի ամէն աշխատանք յանձն առնէ , չքանի . քի մեռնելէն չլախէ . քի վախճանը աչքին առջև ունենայ՝ Աստուծոյ փառքը՝ ժողովրդը դեան օգուար , անկէ գուրս բանի չխառնուի . Եւ Աստուծոյ և իր գրած օրէնքին մէջ՝ մէկ կերպով մը զանցառութիւն չընէ . քի կիրքով մէկու մը բան չհրամայէ , յանցաւորնէրն ալ անուշութեամբ իրենց վճիռը իրենց բերնէն առնելով ու կակրոյցնելով դասէ . Եւ ինչ և իցէ խեղճ մարդու կարծիքն իր կառավարութեանը վրայ առանձին լսելու ջանայ , և առանց կրքի կամ նախապաշարման քննել լսածն ու անոր յարմարցնէ զինքը . խօսքին շտակ ըլլալը նայի , չէ թէ ըսողին խօսքի տէր մարդ ըլլալը : Յուգա Մակարէն ասանց մէ առջինին ու ետքինին մէջ թուլցաւ , հոն մէկէն ինկաւ մեռաւ : Ավ որ ուզէ՝ կրճանչ նայ թէ ամենէն դժուար ան երկուքն է :

103. Բարին ոչ երբէք չարէք կրնդունի . չարը՝ բարեաց ոչ երբէք կրճանդիպի . Թէ որ չարն զբարին մեռուց , ուրիշ բան չբաւ՝ բայց և թէ անոր երթալու ճամբան կարծրցուց . բայց ինքն անոր մարմնոյն վնասելով իր հոգին վերաւորեց ու չարաչար տանջանքնէրու մէջ ինկաւ . հոգւով անդին պիտի տանջուի , մարմնով ալ ասդիս քանի որ ասպի՛ խռոված սրտով միշտ կը շարշարուի :

104. Աստուած որ կուզէ մէկու մը վիշտ հասցնել՝ կամ փորձելու համար և կամ պատժելու , երբ կրականէ որ անխրաւ մարդ

գիկ նոյն ուզածը՝ իրենց չարութեանը համար կուզեն կատարել, թող կուտայ որքնեն. ասով Աստուած իր ուզածը առաջ կրտանի, և ետքը անոնց չար սրտին փոխարէնն ալ տեղն ՚ի տեղը կըհասուցանէ : Աճ Հրէից իշխանութիւնը կուզէր վերջացնել. Հերով գէս խարդախութեամբ և տէ ինկաւ որ ինքն իշխէ. կարծեց թէ իր խելքով ուզածն առաջ կրտանի : Արջափ մարդիկ անխրաութեամբ ուրիշի յաղթել կըջանան. ու երբոր ուզածնին յաջողի՝ իրենց խելքը արդարութեանէն վեր կըսեպեն. բայց որ կուգայ՝ կիմանան որ ինչ սխալ բան մտքերնին դրեր են :

105. Թէ և սեղանի վրայ շատ կերակուր հանուի, նստողները իրենց չափովը կուտեն : Աստուած աշունչին սլամու թիւնները խիստ շատ գիտելիք մեղի կըհանեն, բայց կարգացողները իրենց չափովը պիտի քաղեն, ուրեմն քիչն ալ մեզի բաւական սեպենք : Աստուած թիւնը անոնց առջև կըզօրէ, որոնց մարմնոյն ախորժակը քան զհոգիներունը խիստ շատ է : Թէ որ քիչ մը խելք ունիս՝ եկու ասանկ մտածէ. մարմիննիս մեծնալու համար ամէն որ ապրուստ կուզէ, բայց պիտի աշխատի որ գտնէ : Թէ որ տաս ամէն որ ալ՝ նոր տեսակ համով բաներ, կըզուարճանայ կախորժի. իսկ թէ չտաս հարկաւորն ալ, ինքը կարօտ մնալուն համար կըսկսի ուտել ինչ որ գտնէ, ու կըլնասուի կըմեռնի : Հոգւոյն կերակուրն է ճշմարտութիւնը, ուստի պէտք է որ միշտ ճշմարտութիւնը քննես. թէ չէ՝ հոգիդ չկրնալով համբերել

տառութիւնները ճշմարտութիւն տեղ կրնդ ունի ու քիչ ասեմնէն Աստուծակ կըզգուի կըմեանի : Անոր համար ամէն օր ամէն ասեմն սուրբ գիրքը քննելով հոգւոյն միշտ ճշմարտութիւնը յիշել տալու է, ինչուան մարմնէն բաժնուի, ու ճշմարտութեան աղբիւրին մէջ ընկղմի և ապրի յաւիտեան :

Աս պատճառաւ նոր կտակարանէն ալ մասնաւոր խրատ չհանեցինք . վասն զի Յիսուսին և առաքելոց ամէն մէկ խօսքը ու դործքը՝ բարի քրիստոսնէին մէյմէկ մտածութեանց նիւթ են՝ թէ որ սրտանց ու մտազբուժեամբ կարգայ :



ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ

ՅԱՆԿԸ

ԻՐԵՆՅ ԺԱՄԱՆԱԿՈՎԸ

ԳՒՄ Ա.	ԱՄՔ	ԷՐ
Արամ արեղծողացու .	0	14
Կարէն ծնուն .	1	18
Աբել ծն .	30	18
— Մեհաբ 69 արդասն .	99	18
Սեբ ծն .	131	19
Ենն ծն .	236	19
Կարէն շինեց Ենն արդասն .	515	19
Ենն ծն .	623	19
Մեհաբ արդասն ծն .	688	19
Արամ մեհ . 930 արդասն .	930	
Ենն շին շինարդասն 364 արդասն .	987	19
Սեբ մեհ . 912 արդասն .	1042	
Նայ ծն .	1057	
Ենն մեհ . 905 արդասն .	1140	
Յաբել ծն .	1557	
Սեբ ծն . *	1559	
Մեհաբ արդասն մեհ . 969 արդասն .	1655	

* Քառասն և չորս հարյուր հինգսուն արդասն . Բայ ծն .
 հասնին անյայտ է .

ԳԱՐ Բ .

	Աճ Տի	Եր'
Ջրհեղեղ .	1656	20
Ապարտիաշինութիւն .	1771	28
Ապարտիկն խրժանանձ .	1812	28
'Նոյ ձեռ . 900 փրձն .	2006	
Աբրահամ ծն .	2039	30

ԳԱՐ Գ .

Աբրահամն իւլանձ .	2114	35
Իսայել ծն .	2124	38
Սարս խրժանեցաւ .	2137	39
Իսահակ ծն .	2138	41
Իսայելը ճամբեց Աբրահամ .	2143	42
Սէմ ձեռ . 600 փրձն .	2158	
Իսահակ շնդ ղիտի շաւր .	2163	43
Սառն ձեռ . 127 փրձն .	2175	44
Եսաւ և Յակոբ ծն .	2198	48
Աբրահամ ձեռ . 175 փրձն .	2213	46
Յակոբ Լաբանին փնայ .	2275	
— Վանան արձաւ .	2290	55
Յակոբի ծախսեցաւ .	2305	60
— Բանա արձաւ .	2316	60
Իսահակ ձեռ . 180 փրձն .	2318	58
Յակոբի պարտեցաւ .	2319	62
Յակոբ Եգիպտոս փնայ .	2328	69
— ձեռ . 147 փրձն .	2345	70
Յակոբի ձեռ . 110 փրձն .	2399	72
Մակեա ծն .	2464	73
— Մարտիանայոց երկրո խաւս .	2503	74
— Եգիպտոսեան հանեց շինարար .	2543	75

ԳՒՄ Գ .	Աճ Տի	Էր''
Ինչո՞րի՜ Կարճի Ժ-վե՞ն անցան .	2543	85
Մանանա Իջնալ սխառ .	2543	90
Ամառեկոյոց ջարդը .	2543	91
Տասը պարս-իրանիք .	2543	93
Խորանին շինութիւնը .	2543	96
Նախագայ պարիծը .	2543	98
Լորամարգին .	2544	100
Լրաբեաները .	2544	102
Կարխայ պարիծը .	2545	104
Մարիամ Տեա . 126 քառ .	2546	106
Յոբայ պարսա-թին առ Տիգրաներառ եղած կերանայ .		154
Ահարան Տեա . 123 քառ .	2546	107
Պշննե օջ .	2546	108
Բաղաման շարս-թինը .	2583	109
Մովսէս Տեա . 120 քառ . որ ի վեց 40 քառի .	2583	111
Յորդանանէն անցան Իսրայելացիք .	2583	111
Երէքով առ Գայի առնուելոյն .	2584	113
Անեպեայ երկիրը Բաժնեց Յեռառ .	2589	118
Յեռառ Տեառառ 110 քառ . որ ի վեց 18 քառի .	2600	120
Գ.Ռ.Ն.Ի.Ե.Լ ի վեց 40 քառի .	2640	121
Առ-վր . 80 .	2720	121
Ս-Տ.Գ-Ր Առ-վրայ վերջի քառի .	2720	122
Դեբ-վրա և Բարսի 49 .	2769	122
Գեդեան . 40 .	2809	124
ԱբիՏեւէք . 3 .	2812	129
Թ-վրա . 23 .	2835	131

ԴԱՐ Գ .	Ա՛+	Տ՛	Ե՛
Յայիր . 22 .	2857	131	
Յեթմայե . 6 .	2863	131	
Եսեբան . 7 .	2870	133	
Եղան . 10 .	2880	133	
Աբդան . 8 .	2888	133	
Աստղոյիս եղան Հասնայ պատմութիւնը .	2889	142	
Սամիան . 20 .	2908	134	
Հեղի . 40 .	2948	144	
Սամանել . 22 .	2970	144	

ԴԱՐ Ե .

Սասունը ընդհանրապես .	2962	159	
Դասիկ ընդհանրապես .	2964	166	
Սասունը մեռ .	2979	177	
Դասիկ աղալիսարեց .	2996	183	
Դասիկ աքեկին ճանապարհածառ .	3017	191	
Սողանն թագաւորեց .	3017	192	
Դասիկ մեռ . 70 քաղ . 40 քաղի թագաւորելէն ետեւ .	3019	193	
Սողաննի քաճարը .	3023	196	
Սողանն մեռ . 40 քաղի թագաւորել լէն ետեւ . թագաւորութիւնն ու երկու քաճիւնեցաւ .	3059	199	

ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	ክፍል	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	ጠቅላይ ቅጽ	ክፍል
ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	217	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3059	109
ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	245	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3077	
ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	245	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3079	
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3080	203
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3081	203
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3104	204
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3105	204
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3105	204
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3106	204
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ		204
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3120	
	247	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ		
	247	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3136	210
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3138	211
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ		
	249	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3142	
	250	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3149	
	250	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3150	219
	250	ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3156	
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3178	221
		ጠቅላይ ቅጽ ለ ገንዘብ ጥያቄ	3193	221

	Աճ Տի
Թագաւորի Յարայի և Բէ րլաի Բժիշկոյն	
Սահարիան առնուեցաւ Սաղմնասա- րեն. և Ինչի Բժիշկ-Բիշ Էկե- ղոցաւ, 254 քարի շէնէնէն էք- քը.	3313 223
Տաթիլայ գաղմ-Բիւնը աւ Բիւրոյի էլաւ Նիւնուէ.	249
Եւեիիայի հիւանդոս-Բիւնը.	3321 236
Նասան սկսաւ ճարգարէանալ աւ Բ- ըոյն.	307
Սենեկերի Բիւրոցաւ.	3325 235
Մանասէ 55. սկսաւ Բժիշկը.	3336 236
Մանասէն շըսայի զըոյն. գերի գնաց աւ դարձաւ.	3357 236
Յարիլայ գաղմ-Բիշ աւ Բիւրոյի հանդիպեցաւ.	253
Անն 2.	3391 237
Յուի 31.	3393 237
Յուի Ենի իսպառաւ-Բիշ ճա- րեց.	3404 237
Աւ Բիւրոյի Երեմի ճարգարէացաւ 45 քարի Բարոսքը, Սի- նիան ալ աւ ապենեկըն էն.	264
Այնիսան սկսաւ ճարգարէանալ.	3405 307
Յուի Բարոսքը զարիի ըրաւ.	3411 238
Յուի 3 ախ, և գերի գնաց.	3424 239
Եւիիի Գերի գնաց Բարեկան ա- նընէն դարձաւ Ենի.	3428 239
Գանիէլ ճարգարէացաւ աւ Բիւրոյի 72 քարի լաի.	268

ԹՊՐԻ Եւրոպայի և Ռուսիայի ԲՊՐԵՆԻ	Աճ	Տի	Էր"
Յեռանի 3-րդ . ու գերի գնաց . սխալ ԲՊՐԵՆԻ .	3435	240	
Սելեիկե և սխալ ճարգարեանու 22 րորի .	3439	265	
Սելեիկե 11 րորի ԲՊՐԵՆԻ և Էրզրումի գերի գնաց Ռուսիան Բար ժողովուրդու .	3446	241	

ԴԱՐ Զ .

Կիւրուի հրամանու 70 րորուան գերու և Էրզրումի 2-րդ րորու և Էրզրումի 2-րդ րորու սխալ .	3516	280	
Ագիտու և Զարուի սխալ ճարգարեանու .	3517	307	
Սելեիկե և Էրզրումի սխալ .	3536	258	
Սելեիկե և Էրզրումի րորուան սխալ սխալ .	3669	282	
Ա Գիւրուի Մարուի ճարգարեանու .	3707	307	
Սելեիկեի և Էրզրումի սխալ .	3749	10	
Սելեիկե և Էրզրումի սխալ .	3877	288	
Մարուի և Էրզրումի րորուան և Էրզրումի 1 րորի .	3878	291	
Յուրու Մարուի 6 .	3879	292	
Յուրուի 18 .	3894	298	
— Էրզրումի րորուան և Էրզրումի .	3902	299	

ԴԱՐ Ը .

	Բ-ի	Եր''
Ղախառն ասեփարանը .	56	398
Պօղոսի Հասն Երևալը .	60	396
Պէփրոսի և Պօղոսի նահափախութիւնը .	67	397
Ե՛նի իւրժանանը .	70	399



D.

Handwritten text, possibly a signature or name, appearing as a large, faint scribble in the center of the page.

M. d.

